ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ
և
ՔԱՐԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐ

ՀՍՍՌ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

С. БАРХУДАРЯН

СРЕДНЕВЕКОВЫЕ АРМЯНСКИЕ АРХИТЕКТОРЫ И МАСТЕРА ПО КАМНЮ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԸՆԹԵՐՑԱ

72(47.925)(09)

A III/2034

Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ ԵՎ ՔԱՐԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1963

Աշխատության հեղինակը հուշարձանների վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությամբ վեր է հանում մինչև այժմ անհայտ 70 ճարտարապետների, 130 քանդակազարդող վարպետների և 49 վիմագիր գրիչների դերը հայ ճարտարապետության պատմության մեջ։

Աշխատությանը կցված են արվեստագետների անունները կրող բազմաթիվ արձանագրություններ ու հուշարձանների լուսանկարներ։

362 *1962*

Զոն երախտագիտության
Հայ ոգու հավերժական ճարտարապետ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻՆ

ՈՂՋԵՐՁ ՄԵՐ ՀԱՆՃԱՐԵՂ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

Աշխարհի ծայրերում բոլոր մենք գտնում ենք հիմա բեկորներ,
Որ տաշած կողերի վրա աստղաձև խազեր են կրում.—
Այդ՝ կորած անուններն են ձեր, ո՜վ անանուն վարպետներ,
Որ կերտել եք լուռ ու անցել — և ձեր շունչը թողել դարերում.
Չի հաջողվում մեզ թեկուզ ձեր անունները գտնել.
Բայց գիտենք, որ ապրել եք դուք — գետնաքարշ, խարխուլ խուղերում:

Ե. ՉԱՐԵՆՑ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Միջնադարյան Հայաստանի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության բնագավառում մինչև այժմ, իրավացի կերպով, ուշադրություն է դարձվել նյութի գիտական հավաքման և նրա ակունքների որոնման ու զարգացման վրա: Սակայն մի շարք խնդիրներ, որոնք նույնպես մեծ կարևորություն ունեն մեր ճարտարապետության պատմության ամբողջական պատկերը գծելու համար, դեռևս բերևակի ու թռուցիկ կերպով են շոշափված, օրինակ, տեխնիկայի և տեխնոլոգիայի, աշխատանքի տեխնիկական և հասարակական կազմակերպության, կառուցողական աշխատանքների վարձատրության, կառուցող ճարտարապետների և ընդհանրապես քարգործ վարպետների երևան բերելու խնդիրները և բազմաթիվ այս կարգի «ներքին» հարցեր, առանց որոնց լուսաբանման պատմական հայ ճարտարապետության զարգացման պատկերը լրիվ չի լինի:

Ներկա աշխատությունը հիմնականում նվիրված է այդ հարցերից մեկին՝ հայ միջնադարյան ճարտարապետներին և ընդհանրապես քարգործ վարպետներին երևան բերելու խնդրին՝ նյութի ընձեռած հնարավորությունների և մեր ուժերի սահմաններում:

Միջնադարի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունների մեջ միայն թռուցիկ հիշատակություններ կան այս ու այն հուշարձանը կառուցող մի քանի ճարտարապետի մասին (գլխավորապես անվան հիշատակություն միայն): Հատուկ ուսումնասիրողներից կարելի է հիշատակել չորս հեղինակ՝ Կ. Բասմաջյանին, որը համառոտակի թվարկում է մի քանի ճարտարապետների և գրիչների անուններ[1], Գ. Լևոնյանին, որը մի հոդված է նվիրել Տրդատ ճարտարապետի կյանքին ու գործունեությանը[2], Թ. Թորամանյանին, որն իր մեծածավալ աշխատության մեջ երկու հատված է նվիրել նույն Տրդատ ճարտարապետին[3], և Կ. Հովհաննիսյանին, որը մենագրություն է հրատարակել նույնպես Տրդատի մասին (ռուսերեն)[4]:

Բնությունը Հայաստանին պարգևել է քարի անսահման պաշարներ, բազմատեսակ ու բազմերանգ: Հայաստանի բնակիչը նախապատմական դարերից

1 Կ. Հ. Բասմաջեան, *Հայոց հին դեղարվեստի վարպետները*, Փարիզ, 1926:

2 Գ. Լևոնյան, *Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը*, «Էջմիածին», 1949, № 1—2, էջ 56—66:

3 Թ. Թորամանյան, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության*, Բ, Երևան, 1948, էջ 42—44:

4 *К. Оганесян*, Зодчий Трдат, Ереван, 1951.

սկսած ապրելով ու գործելով այդ միջավայրում, արժանի կերպով կարողացավ գնահատել նրա առավելությունները և օգտագործել այն իր կյանքի բազմատեսակ կարիքների համար: Հազարամյակների ընթացքում, անընդհատ զարգացնելով քարի վրա իր վարպետությունը՝ նա հասավ բարձր կատարելության: Քարի օգտագործումը և, հետևաբար, քարգործ վարպետների գործունեության սկիզբը հասնում է մինչև պատմության խոր անցյալը, հնաքարի և նորաքարի դարաշրջանները: Այդ նախնական հասարակություններից մեզ հասել են գերազանցապես քարե գործիքներ, քարաշեն բնակարանների մնացորդներ, գերեզմաններ, ժայռերի վրա փորագրված մարդկանց և կենդանիների պրիմիտիվ քանդակներ ու սիմվոլիկ նշաններ: Այդ հնագույն դարաշրջաններում քանդակազարդ վարպետները մեծագույն հմտության հասան զենքերի՝ կացինների և հատկապես նետերի քարե սլաքների պատրաստման բնագավառում: Քարի այն կարծր, բյուրեղանման տեսակները, ինչպես վանակատն (օբսիդիան) ու կայծքարը այդ վարպետների ձեռքի տակից դուրս են եկել ոչ միայն հարմար իրենց նպատակին, այլև նուրբ ու համաչափ՝ որպես մի կատարյալ գեղարվեստական գործ:

Քարե զենքերի ու կենցաղային իրերի դերը պահպանվում և նրա գործածման բնագավառներն է՛լ ավելի ընդլայնվում են մետաղների մշակման գյուտի շրջանում: Երբ քարե զենքերն աստիճանաբար տեղի են տվել մետաղներին, ապա կենցաղային իրերի մեջ, հասարակության տնտեսական բնագավառների լայնացման հետ զուգընթաց, երևան են գալիս կենցաղային նոր իրեր, քարե աղորիքներ, բնակարանների ավելի բարդ, ծավալուն կառուցումներ և այլն, որոնցից հազարավոր օրինակներ են պահպանվել:

Ուրարտական ժամանակաշրջանում քարկոփության արվեստը հասավ բարձր կատարելության: Այստեղ արդեն վերջնականապես ձևավորվեց Հայաստանի քարգործ վարպետի հմտությունը և տարածվեց շատ ավելի լայն բնագավառների վրա: Այդ դարաշրջանում արդեն քարն օգտագործվում է ժողովրդական կյանքի այն բոլոր բնագավառներում, որտեղ միայն հնարավոր է և որի վրա հետագա դարերը կարծես թե քարի կիրառման նոր տեղամասեր այլևս չեն ավելացնում:

Ուրարտական շրջանում քարի կարծր տեսակները և մեծ բեկորներն են գերադասվել, բայց վարպետները հիացմունքի արժանի հմտությամբ են տաշել-ճղկել այդ կարծր բեկորները: Այդ շրջանից մեզ հասած հուշարձանները բազմազան են. մոնումենտալ շենքեր և տասնյակ կիլոմետրերով ջրանցքներ՝ երեսպատված տաշած քարերով, արձաններ (մեծ և փոքր), սյուների հիմքեր, ժայռափոր բնակարաններ, ժայռափոր քանդակներ, մարդկանց ու կենդանիների արդեն ռեալիստական (և ոչ սխեմատիկ) պատկերացմամբ (Հին Բայազետ) և, նույնիսկ, մոզայիկ հատակներ ու բազմազան կենցաղային մանր ու մեծ առարկաներ, ի վերջո նաև մեջը փորված պատվանդաններ, որոնց վրա կանգնեցրած են քարե տախտակաձև կոթողներ, ճիշտ այն ձևով, ինչպես հետագայում երևան եկած հայկական կոթողներն ու խաչքարերը:

Երբ նախնադարյան էպոխաներում քարգործ վարպետը իր աշխատանքով բավարարում էր միայն տոհմի ու ցեղի փոքր միավորների պրիմիտիվ պահանջները և կարող էր մասնագետ չլինել, ապա ուրարտական պետական սիստեմի ժամանակ նա պետք է արդեն կտրվեր իր առօրյա բոլոր աշխատանքներից և գործեր որպես մասնագետ-քարգործ վարպետ: Շինարարության պետական, տեխնիկական աշխատանքների ընթացքում քարգործը այլևս չէր կարող համատեղել իր մասնագիտության հետ կողմնակի, ասենք, գյուղատնտեսական աշխատանքները: Ուրարտական էպոխայում կառուցվել են այնպիսի մոնումենտալ հուշարձաններ՝ պալատներ, տաճարներ և ամբողջական քաղաք-

ներ, որոնց վրա վարպետի կյանքի տևողությունն անգամ չէր բավականանա:

Հայկական պետականության հենց սկզբից քարգործ վարպետի դերն է՛լ ավելի բարձրացավ: Ուրարտուի հետ համեմատած՝ պետական կյանքն ավելի կայուն էր ու ակտիվ, կյանքի ընդհանուր զարգացման հետևանքով, պահանջները ավելի բազմազան էին, ժողովուրդների ու պետությունների միջև հարաբերությունները ավելի ընդարձակ, փոխազդեցությունները ավելի իրական, հատկապես հելլենիստական, ավելի բարձր կուլտուրական աշխարհի հետ շփումն ավելի սերտ:

Շինվում էին մեծամեծ քաղաքներ (Արտաշատ, Տիգրանակերտ և այլն) նոր պալատներով ու տաճարներով, ստեղծվում էր հատկապես քաղաքային ազգաբնակչություն իր ավելի բարձր պահանջներով: Այս բոլորը նախադրյալներ էին ոչ միայն քարգործ վարպետի բվական, այլև որակական բարձրացման համար: Մենք հատկապես ենք շեշտում քարգործ վարպետի, որովհետև սկզբից մինչև մեր օրերն էլ Հայաստանում շինարարական հիմնական նյութը մնաց քարը: Երբ Հայաստանի հարևան հարավային երկրներում (Ասորա-Բաբելոն, Պարսկաստան) քարի պակասության հետևանքով՝ աղյուսը դարձավ հիմնական շինանյութ, և այդ երկրների վարպետները կատարելագործվեցին աղյուսաշեն շինարարության ասպարեզում, ապա Հայաստանի վարպետը մնաց ընդմիշտ կապված իր երկրի առատ քարի հետ և կատարելագործվեց այդ բնագավառում: Ուրարտական շրջանում աղյուսն համեմատաբար ավելի լայն չափով էր կիրառվում, իսկ հայկական պետականության սկզբից աղյուսով միայն հասարակ շենքերն էին կառուցվում, իսկ մոնումենտալ շինությունների հիմնական նյութը քարն էր:

Բայց հազարամյակ աշխատած ու կատարելագործված քարգործական արվեստի այս տաղանդավոր վարպետների անունները ընդմիշտ կմնան անհայտության մեջ: Միայն միջնադարից սկսած, երբ Հայաստանում ստեղծվում է գիր ու գրականություն և այն քիչ-շատ մասսայական բնույթ է ստանում, վարպետները սկսում են իրենց անունների հիշատակությունը թողնել ձեռակերտների վրա: Հիշատակված այդպիսի առաջին վարպետներից են Իսրայել Գոռաղնեցին, Բագրևանդի ս. Հովհաննու վանքի ճարտարապետը՝ 639 թ., Սամիղ գրիչը Ավանում՝ 633 թ. և ուրիշներ:

* * *

«Քարգործ վարպետներ» ընդհանուր անվան տակ հասկանում ենք այն բոլոր վարպետներին, որոնց աշխատանքի շնորհիվ կերտվել են քարաշեն մեծ և փոքր հայ միջնադարյան հուշարձանները: Այդ իմաստով բոլոր այդ քարգործ վարպետներին բաժանել ենք չորս հիմնական խմբերի.

1. Ճարտարապետներ
2. Քանդակազարդող վարպետներ
3. Արձանագիր վարպետներ—գրիչներ
4. Քարտաշ, որմնադիր և այս կարգի օժանդակ այլ վարպետներ:

Վարպետների այս չորս խմբերից յուրաքանչյուրին աշխատության մեջ հատկացված է առանձին գլուխ:

«Ճարտարապետներ» գլխում բաց ենք թողել մի քանի հայ ճարտարապետների անուններ, որոնք պատմական Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքներում ու Կ. Պոլսում կերտել են, այսպես կոչված, «սելջուկյան» կամ «մուսուլմանական» ճարտարապետական կոթողներ. դրանց մեջ են, օրինակ, հռչակավոր Սինանը, Դալուստը, Թագավորը և ուրիշներ:

Կարծում ենք, որ այդ վարպետների մասին գրելն այն դեպքում կարող է արժեք ունենալ, երբ մանրամասն վերլուծվի նրանց կառուցած հուշարձանների արվեստը և երևան բերվեն հայ արվեստի այն տարրերը, որ նրանք մուծել են «օտար» արվեստի մեջ: Քանի որ ներկա աշխատության նպատակների մեջ չի մտնում այդ խնդրի լուծումը, ուստի և դրանք տեղ չեն գտել մեր աշխատության մեջ:

«Ճարտարապետներ» բաժնի մեջ են մտել արդեն հայտնի և նոր հայտնաբերված բոլոր ճարտարապետների անունները, հնագույն շրջանից մինչև XVII դարը ներառյալ: Մեզ հայտնի են նաև դրանից հետո բազմաթիվ ճարտարապետների անուններ և նրանց գործերը, սակայն ամեն աշխատություն պետք է որ մի սահման ունենա, և մենք նշված սահմանն ամենից հարմարն ենք համարել:

«Քանդակագործող վարպետներ» բաժնում տեղ են գտել մեզ ծանոթ բոլոր անունները, հնագույն ժամանակներից մինչև վերջինը. այդ դեպքում խախտել ենք ժամանակագրական մեր ընդունած սահմանը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հետագա շրջանի համար քիչ վարպետներ են հայտնի և այն էլ միայն խաչքարեր կերտողներ, որոնց մասին շատ կարճ, գրեթե միայն անունների հիշատակություններն է հնարավոր մեջ բերել, ուստի և նրանց ցանկը լրիվ լինելու համար՝ բոլորին հիշատակել ենք: Միաժամանակ նկատի ունենալով, որ քանդակագործող վարպետների անունները ու գործերը հայտնաբերվել են, մեծ մասամբ մեր՝ տարիների ընթացքում հավաքած վիմական արձանագրությունների շնորհիվ, և որ այդ վարպետների անունները պարունակող արձանագրությունների մեծ մասը հրատարակված չեն, ուստի այդ գլխին կցել ենք մի «Հավելված», որտեղ ամբողջությամբ մեջ ենք բերել այն արձանագրությունները, որոնք վերաբերում են քանդակագործող վարպետներին: Կարծում ենք, որ «Հավելվածը» օգտակար կլինի հետագա ուսումնասիրողների համար՝ ամբողջ Հայաստանում ցրված այդ նյութերը ի մի հավաքած, իր ձեռքի տակ ունենալը: Արձանագրական նոր նյութերի հրատարակությունը, ինքնըստինքյան, օգտակար է բոլոր տեսակի հետազոտությունների համար:

Համեմատաբար փոքր են վարպետների վերջին երկու խմբերին՝ քարտաշ և արձանագիր գրողներին հատկացված գլուխները, մանավանդ քարտաշ վարպետներինը: Դա պայմանավորված է եղել գոյություն ունեցող նյութի ընձեռած հնարավորություններով:

Ի վերջո, հավատացած ենք, որ աշխատության մեջ մշակված մեթոդներով և մանրակրկիտ հետազոտությունների միջոցով թե՛ մեզ, և թե՛ ուրիշներին կհաջողվի ժամանակի ընթացքում հարստացնել ու լրացնել մեր տաղանդավոր քարգործների անունների և նրանց գործերի ցանկերը:

ԴԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ

Հայ ժողովրդի միջնադարյան կուլտուրական ստեղծագործության ամենափայլուն բնագավառներից մեկը ճարտարապետությունն է: Ճարտարապետական արվեստի կոթողների հնությունը պատմական Հայաստանի հողի վրա հազարամյակների անցյալ ունի և իր ստեղծագործական բազմազանությամբ, ձևերի ու ոճերի հղացմամբ, շինարարական տեխնիկայի ու կառուցողական արվեստի կատարելությամբ, վաղուց ի վեր դուրս է եկել մեր երկրի սահմաններից և մտել համամարդկային կուլտուրայի գանձարանը՝ գրավելով իր պատվավոր և արժանի տեղը:

Այդ հազարավոր, ընդհանուր հիացմունք առաջացնող կոթողներից մեկի առաջ կանգնած դիտողը, սակայն, եթե հարցնի այն հանճարեղ վարպետի անունը, որի ստեղծագործության արդյունքն է այդ կոթողը, մենք ստիպված կլինենք լռելու, որովհետև այդ մասին ոչինչ չգիտենք. միջնադարյան մեր աղբյուրները լռում են այդ մասին:

Երկու հիմնական աղբյուրներ կան, որտեղ հիշատակվում են մեր պատմական ճարտարապետները: Դրանք հայ մատենագրությունն ու վիմական արձանագրություններն են:

Միջնադարյան մատենագրությունը, ինչպես հայտնի է, մենաշնորհ է եղել կրոնականների համար: Մեր մատենագիրները կյանքի բոլոր խնդիրներին մոտեցել են իրենց կղերա-ֆեոդալական աշխարհայացքի տեսանկյունից: Նրանց մոտ պահպանվել են բազմաթիվ հարուստ փաստեր ու նկարագրություններ ճարտարապետական խոշոր կառուցումների, հատկապես վանքերի ու եկեղեցիների շինարարության մասին: Հիշատակվում են նաև հուշարձաններ կառուցող բազմաթիվ մարդկանց անուններ, որոնք եղել են աշխարհիկ ու հոգևոր իշխողներ, մեկենասներ: Մեր մատենագիրները բառեր չեն խնայում գովաբանելու այդ ֆեոդալ իշխանների ջանքն ու եռանդը՝ և շինված հուշարձանը նրանց փառքի կոթող համարելու համար. բայց այն ստեղծագործ ճարտարապետը, որի մտքի ու ձեռքի հանճարով է ստեղծվել տվյալ հուշարձանը՝ մնում է անհայտության մեջ:

Մատենագիրների այս միակողմանի մոտեցման պատճառով հազարավոր ճարտարապետական կոթողների դիմաց ունենք միայն երկու-երեք ճարտարապետների անուններ, ինչպիսիք են հանրածանոթ Տրդատն ու Մանվելը: Ճարտարապետական հուշարձանների ճնշող մեծամասնությունը մնում են որպես «անհայտ հեղինակի» գործեր:

Ճարտարապետներ երևան հանելու գործում մեր միջնադարյան մատենագրությունը շատ չնչին օգնություն կարող է ընձեռել ուսումնասիրողին:

Այդ տեսակետից երկրորդ և ավելի հիմնական աղբյուր են վիմական արձանագրու-

թյունները։ Սակայն այստեղ էլ կղերա-ֆեոդալական աշխարհայացքն իր հանցավոր դերն է կատարել մինչև վերջերս։ Ինչպես հայտնի է, վիմական արձանագրությունների հավաքված ու հրատարակված մասի հեղինակներն են դարձել հոգևորականները կամ կղերա-ֆեոդալական աշխարհայացքի տեր աշխարհականներ, որոնք շատ դեպքերում արձանագրությունների իմաստն աղավաղել են՝ չունենալով գիտական ճիշտ մեթոդ, իրենց վերծանումների ընթացքում չեն պահպանել արձանագրությունների հնագրական և լեզվական առանձնահատկությունները, որով և, ինչպես հետագայում կտեսնենք, կորել են արձանագրությունների մեջ հիշատակված ճարտարապետների անունները։

Մի երրորդ պատճառ էլ պետք է հիշատակել. դա այն է, որ իրենք՝ ճարտարապետներն էլ միշտ չէ, որ կերտած կոթողի վրա հիշատակել են իրենց անունը։ Նրանք այդ սովորությունն ընդհանրապես չեն ունեցել (ցավալի սովորություն, որը շարունակվում է մեր օրերում էլ)։ Անցյալի ճարտարապետների մոտ անհատականության գաղափարը զարգացած չի եղել։ Ճարտարապետական կոթողների վրա հարյուրավոր բանվոր վարպետներ են աշխատել, ճարտարապետն իրեն չի առանձնացրել կոլեկտիվից և իր ձեռագործը համարել է բոլոր «աշխատավորների» կերտածը, ինչպես հաճախ հիշատակվում է արձանագրությունների մեջ։ Նույնիսկ այնպիսի խոշոր ճարտարապետներ, ինչպես Մանվելն ու Տրդատը, որոնք բազմաթիվ կոթողներ են կերտել, ոչ մի անգամ իրենց ձեռակերտներից թեկուզ մեկի վրա չեն թողել իրենց անվան հիշատակությունը (գոնե մեր ձեռքը չեն հասել)։

Անգամ այն դեպքում, երբ ճարտարապետը հիշատակել է իր անունը, այն XIX դարի ճամփորդ-ուսումնասիրողների կողմից աղավաղվել է, և արվեստի այդ փայլուն գործիչը կրկին մնացել է անհայտության մեջ։

Մինչև այժմ ջանք չի թափվել հնարավորության սահմաններում մեր վարպետներին երևան բերելու ուղղությամբ. մինչդեռ եթե մանրակրկիտ ուսումնասիրվեն մատենագրական աղբյուրները և մանավանդ արձանագրական նյութը, հնարավոր կլինի գոնե մասամբ երևան հանել մեր ճարտարապետական կոթողների ստեղծագործողներից ոմանց. իսկ դա կարևոր է թե հուշարձանների կատարյալ և ամբողջական ուսումնասիրության և թե միջնադարյան կուլտուրայի կերտողներին ընդհանրապես ճանաչելու տեսակետից։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԿՈՉՄԱՆ ՀԱՐՑԸ

Միջնադարում ճարտարապետի համար որևէ հաստատուն, մասնագիտությանը հատուկ կոչում գոյություն չի ունեցել։ Մատենագրության մեջ գոյություն ունեն բազմաթիվ բառեր-տերմիններ, մեծ մասամբ ընդհանուր իմաստի, որոնց տակ մտել է նաև ճարտարապետը, օրինակ, որմնադիր, քարտաշ, քարգործ, գաղատոս, արվեստավոր, ճարտարապետ, վարդապետ, վարդպետ, վարպետ, ուստա, մեյմար։

Կոչումների այս բազմազանությունը կարող է առաջին հայացքից այն սխալ տպավորությունն ստեղծել, որ ճարտարապետը, այժմյան հասկացողությամբ, այսինքն մասնագետը, որը թղթի վրա կամ այլ կերպ նախօրոք գծագրում է կամ մտքով կառուցում-պատկերացնում կառուցվելիք շենքն իր ամբողջությամբ և ապա միայն այդ օրինակով կառուցում իրականում, գոյություն չի ունեցել։ Դա միանգամայն սխալ է, նախ որ, մեզ են հասել բազմաթիվ շենքերի կաղապար-մոդելներ՝ շինված քարից, որոնք պատկերացնում են իրական շենքերի մանրանկարը. հիշենք թեկուզ մեկենասների քանդակները, որոնք իրենց ձեռքում բռնած ունեն շինված եկեղեցիների կաղապարները ինչպես Գագկաշենի վրա՝ Անիում, Սանահնում, Հաղբատում, Հառիճում և բազմաթիվ առանձնակի մոդելներ, որոնք պահվում են ներկայումս Հայաստանի Պետական Պատմական թանգարանում։ Ս. Սոֆիայի գմբեթի նորոգման առնչությամբ Ասողիկը պարզորեն գրում է Տրդատի մասին.

«Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ տա զօրինակ շինուածոյն իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելն, որ գեղեցկագոյն շինեցաւ, պայծառ քան զառաջինն»[1]։

1 Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 51։

Սակայն տեսականորեն անկարելի է պատկերացնել ճարտարապետական այնպիսի բարդ ու հսկայական կառուցվածքներ, ինչպիսիք են, ասենք, Տեկորի, Զվարթնոցի, Հռիփսիմեի և հազարավոր ուրիշներ, որոնք հնարավոր լինեին կառուցել առանց նախնական և խիստ ծրագրված, իր բոլոր մանրամասնություններով ու ճիշտ հաշվումներով պարզված նախագծի:

Ճարտարապետի համար կայուն ու հըստակ կոչումի բացակայության խնդիրն ավելի պարզ կլինի, եթե պատկերացնենք ներկայիս և միջնադարյան ճարտարապետի մասնագիտական ուսումնառության ընթացքը: Ժամանակակից ճարտարապետն իր մասնագիտական կրթությունը ձեռք է բերում հատուկ տեխնիկական դպրոցում կամ ինստիտուտում, այդ մասնագիտության հետ կապված բազմազան գիտելիքների ուսման ընթացքում և, միայն ուսումն ավարտելիս, կամ վերջին տարիներում աշխատում է որպես պրակտիկանտ շինարարության վրա: Ուսման այդ ձևը թող որ պայմանականորեն անվանենք «տեսական»:

Միջնադարում պատանին լավագույն դեպքում տարրական գրագիտություն և հաշվումներ իմանալով՝ մտնում էր անմիջապես գործնական աշխատանքի մեջ որպես քարտաշի, որմնադրի կամ քանդակազարդողի աշակերտ: Նա իր մասնագիտության հետ կապված բոլոր գիտելիքները ձեռք էր բերում գործնական աշխատանքում՝ կատարելով որևէ արհեստի կամ արվեստի վերաբերող բոլոր աշխատանքները աստիճանաբար և հմտանում էր բոլորի մեջ հավասար չափով:

Ճարտարապետությունը այդ տեսակետից միջնադարի ամենաբարդ արվեստներից էր. քարհատ, քարտաշ, որմնադիր, քանդակազարդող և այլ բազմաթիվ մասնագիտությունների մի ամբողջ շարան, իրար հետ սերտորեն կապված, համակցված գործում էին մի փոքրիկ տեղամասում՝ կերտելու համար ճարտարների պետի մտահղացած կոթողը: Պատանի աշակերտը այդ բոլոր աշխատանքների ոչ միայն ամենօրյա ականատեսն էր, այլև մասնակիցը: Նա իր ուսումն սկսում էր այդ աշխատանքների ամենապարզից և աստիճանաբար հասնում մինչև ամենաբարդը՝ ճարտարանալով *կամ հմտանալով բոլորի մեջ մինչև այն աստիճան, երբ վերջապես իր հմտությունը, բնածին տաղանդն ու ունակությունները՝ կուտակված հարուստ փորձի հետ՝ թույլատրում էին նըրան կոչել վարպետների պետ, ճարտարապետ կամ ճիշտ իմաստով՝ պետն ճարտարաց: Դարերով, բազմաթիվ սերունդների մեջ կուտակված փորձը տրվում էր նոր մարդուն միանգամայն գործնական եղանակով և մեծ մասամբ նույն ընտանիքի մեջ՝ հորից որդուն փոխանցվելով: Միջնադարի համար գործնական նշանակություն ունեցող այս փաստը ձևակերպված ենք տեսնում դեռևս Ղազար Փարպեցու մոտ.*

«Յայտնի է, զի ամէնայն արուեստաւոր, որ զիւր արուեստն ինքն գիտէ և օգտեալ է յարուեստէն՝ զնոյն և որդւոց իւրոց կամի ուսուցանել, զի կեցցեն»[1]:

Ուսուցման այդ եղանակն էլ կարելի է պայմանականորեն անվանել «փորձառական» կամ գործնական: Թված այս պայմանների շնորհիվ էլ, կարծում ենք, ճարտարապետի համար անխտիր գործ են ածվել շինարարության հետ կապված բոլոր կոչումները, որովհետև նա իրոք որ, իր կյանքի ընթացքում այդ բոլորն էլ որոշ ժամանակ կրել էր և թե շրջապատը, ու թե ինքն անձամբ վարժվել էր կոչվելու դրանցից յուրաքանչյուրով անխտիր՝ նրա աշխատանքային գործունեության տարբեր ժամանակներում:

Վիմական արձանագրությունների մեջ կոչումների թիվը համեմատաբար ավելի քիչ է վարդպետ, վարդապետ, ճարտարապետ, քարգործ, վարպետ, ուստա և մեյմար: Դրանցից նախավերջինը՝ ուստա, պարսկերեն ծագում ունի, և ինչպես հայտնի է տարածված է ամբողջ Արևելքում, իսկ վերջինը՝ մեյմար, արաբերեն է և տաճկերենի միջոցով անցել է Հայաստանի արևմտյան մասերը՝ վերջին դարերում:

Մնացած կոչումները թեև առաջին հայացքից հասկանալի են, բայց իրենց իմաստով անցյալում այլ նշանակություններ են ունեցել, դրանցից հատկապես երկուսի՝ ճարտարապետ և վարդապետ բառերի իմաստաբանական ստուգումն անհրաժեշտ է մեր հիմ-

---

1 Ղազարայ Փարպեցւոյ *Պատմութիւն Հայոց*, *Թիֆլիզ, 1907, էջ 369:*

նական նպատակի՝ ճարտարապետներին երևան հանելու տեսակետից:

1. Ճարտարապետ բառը մեր մատենագրության մեջ շատ է գործածված: Ասողիկն ու Թ. Արծրունին Տրդատի և Մանվելի համար այդ կոչումն են գործ ածել: Միջնադարում այդ բառի իմաստը շատ ավելի ընդհանուր և ընդարձակ էր, քան հիմա մենք ենք ըմբռնում, և կապված չէր որևէ հատուկ մասնագիտության հետ: Բառարաններն այդ բառի համար տալիս են հետևյալ բացատրությունները:

Ճարտարապետ—ճարտարների պետ, ավագ վարպետ, հմուտ վարպետ զանազան արհեստների (հյուսնության, երկաթագործության, որմնադրության և այլն). հմուտ զանազան արվեստների և այլն[1]:

Ճարտարապետ բառը կազմված է ճարտար արմատից, որն ընդհանրապես նշանակում է հմուտ, վարժ արհեստավոր կամ արվեստավոր: Այդ նույն արմատից ունենք բազմապիսի բարդություններ, ինչպես, օրինակ, **ճարտարախոս**, **ճարտարաբան**, **ճարտարամիտ**, **ճարտարարվեստ**, **ճարտարապետ** և այլն: Ճարտարապետ ձևի առաջին ու հիմնական իմաստն է ճարտարների, հմուտների պետ, այսինքն՝ միայն գերադրական աստիճան որևէ արհեստավորի կամ արվեստավորի, նրան իր կոլեգաներից տարբերելու համար: Միջնադարում որևէ արհեստավոր կամ արվեստավոր իրեն ճարտարապետ կոչել չէր կարող, դա կլիներ խիստ անհամեստություն. այդպես կարող էին կոչել նրան միայն ուրիշները. ինչպես, օրինակ, Տրդատին և Մանվելին կոչում են պատմագիրները: Տեսանք, որ Ասողիկը Տրդատին ճարտարապետ է կոչում, բայց որպես բացահայտիչ այդ կոչմանն ավելացնում է «քարագործ» բառը, իսկ Թ. Արծրունին Մանվելի մասին գրում է՝ «Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանվելն...», այս դեպքում էլ Մանվելը արվեստի ճարտարների պետ է: Նույնիսկ միջնադարյան այդ երկու մեծագույն վարպետների համար, ինչպես տեսնում ենք, ճարտարապետ կոչումը ոչ թե մեր հասկացողությամբ ճարտարապետ է նշանակում, այլ իրենց արվեստի հմուտ պետ:

[1] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, 3, Երևան, 1944, էջ 204:

Այդ իսկ պատճառով էլ, նույնիսկ շինարարական բնույթ կրող վիմական արձանագրություններում, երբ վարպետ ճարտարապետի անունն է հիշատակված, ճարտարապետ կոչումը չի գործածված: Ճարտարապետ կոչման հիշատակությունը հանդիպում ենք միայն Շիրակի Կարմիր վանք (Գզըլքիլիսե) գյուղի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ՝ 985 թվականից: Այդ ընդարձակ արձանագրությունն ավարտվում է կառուցող վարպետների հետևյալ հիշատակագրությամբ.

«...Եւ զաշխատողս սոմա. և տէր Քրիստոս հասարակաց ողոր(մի), ի ձեռն Սամէհանի ճարտարապետի աբեղայի...»[1]:

Անցնենք այժմ մեր նյութի համար առավել կարևորություն ունեցող և արձանագրությունների մեջ հաճախ գործածված մի երկրորդ կոչումի—տերմինի իմաստաբանական քննությանը. դա է՝ **վարդապետ**=վարդպետ կոչումը:

Վարդապետ բառի իմաստը, ինչպես ներկայիս, այնպես էլ ուշ միջնադարի մարդու հասկացողությամբ սերտորեն կապված էր կրոնի սպասավորների մի հատուկ դասի հետ, բայց վաղ միջնադարում և մինչև XII դարը այդ բառը հասկացվել է տարբեր իմաստներով: Վարդապետ բառը՝ ուրիշ շատ բառերի նման՝ իր իմաստի ըմբռնման տարբեր ձևափոխություններն է ունեցել և հենց այդ բառի իմաստավորումները չտարբերելու հետևանքով է, որ վիմական արձանագրություններ հավաքողները շատ դեպքերում իրական ճարտարապետների փոխարեն երեվան են հանել վանական վարդապետների:

Վարդապետ բառը Հայաստանում գործածության մեջ է եղել քրիստոնեությունից առաջ էլ և բոլորովին կապ չի ունեցել կրոնի և նրա

[1] Ալիշան, Շիրակ, 169: Մենք այս միակ դեպքն էլ կասկածելի ենք համարում: Մինչև այժմ գրականության մեջ հիշատակված կար մի երկրորդ դեպք ևս ճարտարապետ բառի գործածության, դա երբ Սանահին գյուղի աղբյուրի շինարարական արձանագրության մեջ էր, սակայն վերջին ստույգ վերծանումը ապացուցեց, որ դա արտագրողների սխալմունքի հետևանք է. տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 185, համեմատիր՝ Քաջբերունի, «Արձագանք», № 43, էջ 190, 1884, Ի. Յարութիւնեան, Ազգ. Հանդէս, Գ, 308. Ջալալեանց, Ա., 15: Հ. Եղիազարյան, Ալավերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները, 1952, էջ 18:

նպաստավորների հետ։ Մեր բառարաններն այդ բառի ծագման և իմաստի համար տալիս են հետևյալ բացատրությունը։

Վարդապետ (պահլավերեն Varda, գործ, վարժություն, ուսում և պետ)։

1. Ուսման՝ վարժության պետ. աշակերտապետ, վարժապետ։

2. Ուսուցիչ (հին մաքով), որը շուրջը հավաքում էր աշակերտներ, հետևողներ կամ վանքերում ուսուցանում էր միաբաններին։

3. (Եկեղ.) գիտական աստիճան, որ մի ժամանակ, հատուկ քննությունից հետո, տալիս էին հոգևորականներին առանձին օրհնությամբ և վարդապետական գավազանով։ Ինչպես տեսնում ենք այս բացատրություններից, մանավանդ նրա նախնական իմաստները բոլորովին էլ կապված չեն կրոնի հետ և հենց այդպիսի գործարար իմաստով էլ գործ է ածվել մեր հնագույն մատենագրական և արձանագրական աղբյուրներում[1]։

Ինչպես հայտնի է, պատմահայր Մովսես Խորենացին ուրարտական շրջանում Հայաստանում կառուցված մի շարք հուշարձաններ վերագրում է Ասորեստանի Շամիրամ թագուհուն և հատկապես Վան քաղաքի, նրա բերդի, ժայռափոր դահլիճների և ջրանցքի շինարարությունը, նաև Վանի բերդի ժայռերի վրայի սեպաձև արձանագրությունները փորագրել տալը։ Այդ հսկայական աշխատանքների համար, ըստ Խորենացու նկարագրության, Շամիրամը հավաքել է տալիս քառասուն երկու հազար «անարուեստից գործաւորաց» և վեց հազար «յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենևին կատարեալք իցէն յարուեստագիտութեան». ըստ պատմագրի առաջին հերթին շինվում է նշանավոր «Շամիրամի» ջրանցքը, դրանից հետո ձեռնարկվում են քաղաքի հիմնադրման և կառուցման աշխատանքները, որի առթիվ պատմահայրը գրում է.

«Եւ անդ հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել, և ի վերայ իւրաքանչիւր դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել»[2]։

Խորենացին իր ժամանակ, հարկավ, ուրարտացիների և նրանց կուլտուրայի մասին տեղեկություններ ունենալ չէր կարող, բայց չնայած դրան, իրեն հայտնի առասպելական և ավանդական նյութերի և սեփական դիտողությունների հիման վրա զարմանալի ճշտությամբ տվել է այդ հուշարձանների նկարագրությունը։

Այժմ գիտականորեն ճշտված է, որ այդ բոլոր կառուցումները տեղի են ունեցել ուրարտական պետականության շրջանում, IX—VI դարերում. սակայն մեզ հետաքրքրում է ոչ այդ, այլ պատմագրի նկարագրությունը շինարարական աշխատանքների և շինարարների դասդասման և մանավանդ դրանցից յուրաքանչյուրին տրված անունների և կոչումների հարցը։ Իսկ այս բոլորի համար պատմագիրը հարկ չուներ ավանդություններին դիմելու, դրանք երևույթներ ու կոչումներ էին իր ապրած իրականության ժամանակի և ծանոթ ամեն մարդու, հետևաբար միանգամայն ստույգ։

Խորենացին ըստ իր ժամանակի հասկանալի և գործոն սովորությամբ գիտե շինարարների երեք խմբեր.

1. Անարվեստ գործավորներ, որոնք ամենամեծ թիվն են կազմում (42 հազար), դրանք արհեստ կամ մասնագիտություն չունեցող, ներկայիս իմաստով, սևագործ բանվորներ են.

2. Արվեստավոր գործավորներ, որոնց քանակը միջին տեղն է բռնում (երկու հազար), դրանք փայտի, քարի, պղնձի և երկաթի մշակման վարպետներ են «կատարել ի յարուեստագիտութեան», ներկայիս իմաստով հմուտ վարպետ-արհեստավորներ՝ յուրաքանչյուրն իր բնագավառի մեջ։

3. Վարդապետներ, որոնք ամենաընտիրներն էին ճարտարների (վարժ արհեստավորների) մեջ. (դրանց թիվը պատմագիրը չի հիշատակում և հասկանալի է, որ ամենափոքրը պիտի լիներ)։ Դրանք կարգվում են յուրաքանչյուր դասի (խմբի) ղեկավարներ ներկայիս իմաստով՝ ինժեներներ և ճարտարապետներ։

---

1 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, I, Երևան, 1945, էջ 309։

2 Մովսեսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց, գիրք Ա, գլուխ ԺԶ, 1913։ Ս. Ստեփանյան և Մալխասյանցը Խորենացու պատմության այս հատվածի մեջ վարդապետը թարգմանել են վարպետ, իսկ ռուսերեն թարգմանության մեջ՝ Ն. Էմինը мастер = վարպետ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Խորենացին իր ժամանակ, հարկավ, ու-կրոնի հարցերին գիտակ, այլև ինքն էլ կրոնավոր-վարդապետ էր և եթե վարդապետ կոչումը միայն կրոնավորներին հատուկ լիներ՝ նա հեթանոսական շրջանի շինարարության պետ ինժեներ-ճարտարապետներին այդ կոչումը չէր շնորհի։ Հինգերորդ դարում, Խորենացու ժամանակ, վարդապետ կոչումի հին, գործարար իմաստը կենդանի ու հասկանալի էր Հայաստանում և Խորենացին ազատ կերպով այն գործածում է, սակայն պիտի ենթադրել, որ պատմագրից շատ ավելի հետո էլ այն հասկանալի էր, որովհետև Խորենացու պատմության արտագրողները, որոնք մեծ մասամբ հոգևորականներ էին, հեթանոս վարպետների համար Խորենացու գործածած վարդապետ կոչումի մեջ կրոնի դոգմաներին հակասող երևույթ չեն գտել և այդ բառը մի ուրիշով չեն փոխարինել[1]։

Վիմական արձանագրություններից մի հնագույնի մեջ վարդապետ կոչումի ճարտարապետ իմաստով գործածությունը մատնացույց են արել Ալիշանն ու ակադ. Հ. Օրբելին։

Բագրևանդի նշանավոր ս. Հովհաննու վանքի շինարարական արձանագրությունը, գրված 639 թ. վերջանում է հետևյալ նախադասությամբ։

Վարդապետութեամբ Իսրայելի
Գոռաղնեցւոյ։

Մեջ բերելով շենքի շատ համառոտ նկարագրությունը և արձանագրության պակասավոր բնագիրը, հմուտ Ալիշանն ավելացնում է. «Ճարտարապետն եղեալ է Իսրայէլ», և ապա՝ «իսկ շինուածն արժանի արդարև կայսերն (Հերակլի—Ս. Բ.) և արժանացուցիչ վարդապետին իւրում, այսինքն ճարտարապետին»[2]։

Ակադ. Հ. Օրբելին, որը հրատարակել է շենքի նկարագրությունը և արձանագրության գիտական ու վերակազմած լրիվ բնագիրը, ռուսերեն թարգմանության մեջ այդ նախադասությանը տվել է, «При зодчем Исраеле Горакчском»» ձևով և ծանոթագրել է. «Իհարկե ներկա դեպքում, այս տերմինը չունի գիտունի, ղեկավարի իմաստ. այլ ավելի նախնական՝ վարպետի, որպիսի նշանակությամբ նա պահպանվել է մինչև այժմ էլ, կորցնելով միջին դա վանկը=վարպետ»[2]։

ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՌԻ ՆՈՐ ՁԵՎԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Վարդպետ.— Ուշ միջնադարում, երբ վարդապետ բառն արդեն բոլորովին կորցրել էր նախկին գործարար իմաստը և հասարակության կողմից ըմբռնվում էր միայն կրոնի սպասավորների հետ կապված իմաստով, մեր ճարտարապետները կրոնական վարդապետներից տարբերվելու համար մացրին իրենց կոչումը նշող մի այլ ձև։ XIII դարից հասել են շինարարական բավականաչափ արձանագրություններ, որոնց մեջ վարպետ-ճարտարապետներն իրենց նախկին վարդապետ կոչման փոխարեն ստորագրում են վարդպետ ձևով։

Բազմաթիվ փաստեր ունենք այն մասին, որ վարդպետ ձևը տառերի սովորական սղման հետևանքով չի գրվել, այլ գիտակցված ու հատկապես, որպես վարդապետից տարբեր բովանդակություն ունեցող կոչում։ Վարդպետ ձևին հանդիպում ենք այնպիսի արձանագրություններում, որտեղ կամ ընդհանրապես սղումներ չեն արվել և կամ բոլոր դեպքերում սղումների վրա հորիզոնական գծիկ-պատիվ է գրված։ Բերենք մի քանի օրինակներ։

Սիսիանի շրջանի Բնունիս գյուղի գերեզմանատան մեջ որպես գերեզմանի քար օգտագործված է հարևան շենքից վերցրած երեսպատման մի քար, որի վրա չափազանց գեղեցիկ և խորը տառերով գրված է.

---

[1] Հետաքրքիր է այս առթիվ հետևյալ փաստը. Հ. Շահխաթունյանց եպիսկոպոսը իր հայտնի աշխատության մեջ Կեչառիսի հուշարձանի բակում կանգնած խաչքարի վրա կարդացել է «Վեցիկ վարդապետ»։ Սմբատյանը «Վեցիկ վարդպետ» է վերծանել և այդ առթիվ նրբորեն կշտամբում է իր նախորդին հետևյալ խոսքերով. «Գ. Յով. եպիսկոպոսն Շահխաթունեան այս Վեցիկ վարդպետին վարդապետի պատիւ էր տվել», տե՛ս Սմբատեան, Գեղարքունիք, էջ 355։

[2] «Այրարատ», էջ 529։

[1] „Багаванская надпись 639 г.", „Христианский Восток", т. II, вып. 1, 1913, стр. 122.

ՁԳՐԳՈՐԻԿ ՔԱՋ ՎԱՐԴՊԵՏ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ Ա[1]...

Այս արձանագրության մեջ Քրիստոս բառն է միայն սղված և վրան պատիվ ունի. եթե գրիչը ԳՐԳՈՐԻԿ և ՎԱՐԴՊԵՏ բառերը նույնպես սղում համարեր՝ պատիվ կդներ դրանց վրա, մանավանդ որ տողամիջին շատ ազատ տեղեր կան և արձանագրությունը մեծ խնամքով է փորագրված։ Գրգորիկ ձեը Գրիգորիկի գավառականն է, իսկ վարդպետ ձևը՝ հատկապես այն վարդապետից տարբերելու իմաստով է գրված։

Սակայն այս կարգի ձևական ապացույցներ չունենք միայն։

Վայոց ձորի նշանավոր Նորավանքի արձանագրություններից մեկը, որը վերաբերում է Տարսայիճ Օրբելյանի կողմից Սիրանես ճարտարապետին եկեղեցի շինել տալու և նրան նվերներ ու վարձատրություն անելու խնդրին, ունի հետևյալ նախադասությունը.

...ԵԿԵՂԵՑԻ ՏՎԻ ՇԻՆԵԼ ՍԻՐԱՆԷՍ ՎԱՐԴՊԵՏԻՆ...

Այս նախադասության մեջ ՎԱՐԴՊԵՏ բառը բոլոր հրատարակիչների մոտ դարձել է ՎԱՐԴԱՊԵՏ։ Սակայն այստեղ վարդպետ-ը վարդապետ վերծանելու ոչ մի հիմք չկա. նախ ձևականորեն, գրչության արվեստի տեսակետից, որովհետև ամբողջ արձանագրության մեջ տառերի սղման ոչ մի դեպք չկա, կան միայն միացումների բազմաթիվ դեպքեր։ Եթե գրիչին պետք լիներ վարդպետ գրելու, ապա նրա համար դժվար չէր լինի վարդպետ բառի միջի Ա-ն միացնել աջ կամ ձախ կողմի Դ և Պ տառերից որևէ մեկի հետ, իսկ այդպիսի միացումներ շատ սովորական են։ Այս նույն նյութի մասին գոյություն ունի մի այլ արձանագրություն ևս Գորիսի Շնհեր գյուղի մոտ, մի խաչքարի պատվանդանի վրա, որտեղ նույն Սիրանեսը կոչված է ոչ վարդապետ և ոչ էլ վարդպետ, այլ պարզապես քարգործ[2]։ Այս երկու արձանագրությունների բովանդակությունից երևում է, որ Սիրանեսը քարգործ-ճարտարապետ է, իր աշխատանքի համար նվեր և վարձատրություն է ստացել դրամով, որը փոխարինվել է ճորտով և հողային կալվածներով։ Մի բան, որ կարող էր տրվել միայն աշխարհական մարդու, բայց երբեք մի վարդապետի անվամբ։

Կեչառիսի հուշարձանների բակում կանգնած է մի գեղեցիկ խաչքար, որի պատվանդանի արևմտյան երեսին գրված է Վեցիկ վարդպետ, իսկ նույն խաչքարի թիկունքի մեծ արձանագրության մեջ նույն Վեցիկն անվանված է Վեցիկ քարգործ[1]։

Վայոց ձորի (Եղեգնաձորի շրջան) Հերհեր գյուղի մոտ գտնվող ս. Սիոն կոչվող վանքի արևելյան պատի տակ, անդունդի եզրին, կա մի տապանաքար՝ հետևյալ արձանագրությամբ.

ԵՍ ՎԱՐԴՊԵՏ ԿԱՋՄԵՑԻ ՏԱՊԱՆԱՆԻՍ Ա-ՄՈՒՍՆՈՅ/ ՍԹԵՐՈՅՍ ՈՉ ՈՐԴԻ ՈՒՆԷՐ ՈՉ ԱՂԲԷՐ. ՈՎ ԿԱՐԴԷՔ/ՅԱՂԱԻԹ[Ս] ՅԻՇԵՑԷՔ Ի Թ(ՎԻՆ) ։ՉԽԵ։ (1296)։/

Այս արձանագրությունից պարզ երևում է, որ անանուն վարդպետ-ճարտարապետը աշխարհական մարդ է, որն իր կնոջ համար տապանաքար է շինում։ Միաժամանակ նրա համար վարդպետ կոչումն այնքան ընդհանրացած է և ինքն էլ այնպես է վարժված դրան, որ նույնիսկ իր անունը չի հիշատակում արձանագրության մեջ, այլ միայն կոչումը—վարդպետ։

Մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ փաստերից բերենք շատ բնորոշ մի փաստ, դա հայտնի Սահմադինի դարաբասի-պալատի շինարարության արձանագրությունն է Մրենում, գրված 1261—1276 թթ.։ Այդ արձանագրությունը գրված է պարոն Սահմադինի և նրա գործակատարներից մեկի՝ Սամդինի անունից. մեր նյութի համար շատ կարևոր լինելու պատճառով բերում ենք ամբողջությամբ։

1. ԹՎ. ՉԺ Ի ՏԻԵԶԵՐԱԿԱԼՈՒԹ Ի ՀՈՒԼԱՒՈՒ ՂԱՆԻՆ ԵՍ/ ՍԱՀՄԱԴԻՆ ՈՐԴԻ [ԱԻԵՏԵԱՑ/Գ] ՆԵՑԻ ՁԹԱԳԱՒՈՐԱՆԻՍՏ/ [Տ]ԵՂԻ[Ս] ՁՄՐԷՆ Ի ՅԱՐՏԱՇՐԷ ՈՐԴՈ ՇԱՀՆՇԱՀԻ ՀԱԼԱԼ/ ԸՆՁ/ ԻՑ ԻՄ/ՈՅ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԻՆՁ ԵՒ ՈՐԴ/

1 Վերջին Ա տառից հետո քարի անկյունը կոտրված է, այնտեղ միայն մի տառի տեղ կա, որը պիտի լիներ Ծ և որը նախորդի հետ վրան պատիվ ունենալով՝ պիտի կարդացվեր Աստուած։

2 Արձանագրությունների պատճենները տե՛ս «Սիրանես ճարտարապետ» բաժնում։

1 Արձանագրության պատճենը տե՛ս «Վեցիկ ճարտարապետ» բաժնում։

2. ՈՑ ԽՄՈՑ. ԱԾ ՇՆԱՀԱՒՈՐ ԱՐ[Ա]ՍՑԷ ՅԱՒԻՏԵԱՆՍ ԺԱՄԱՆԱԿԱՑ: ([Ի ԹՎ] ՉԻԵ ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ ԱՊԱՂԱ ՂԱՆԻՆ/ ԵՍ ՍԱՄՏԻՆ, ՈՐ ՊԱՐՈՆԻ ՆՍՏՈՑ ՈՒ ԴԱՐԱՊԱՍ ՉԿԱՅՐ ՉԱՍ ԱՅԳԻՍ ԵՒ ՋԴՐԱ/

3. ԽՏՍ, ՈՐ ԿՈՉԻ ԱՐՔԱՅՈՒԹԻ, ԳՆԵՑԻ՝ ՁԱՄԷՆ ՄԷԿ ՅԻՒՐ ՏԻՐՈՋԷՆ, ԵՒ ՅԻՄ ՄՏԱՑ ԴՈՒՍ՝ ԱՌԱՆՑ (˚) ՎԱՐԴՊԵՏԻ ՁԵՒԵՑԻ ՈՒ ՀԻՄՆ ՁԳԵՑԻ ԴԱՐԱՊԱՍԻՍ ՈՒ ԴՐԱԽ[Տ]ԻՍ Ի [Ժ] ՏԱՐԻՆ ԿԱՏԱՐԵՑԻ. ԱԾ ՇՆԱՀԱՒՈՐ ԱՐԱՍՑԷ ՊԱՐՈՆ ՍԱՀՄԱԴԻՆԻՆ ՈՐԴԻՑ Ի ՅՈՐԴԻՔ. ՈՒ ԽԱՐԺ, ՈՐ ԵՂԱՒ ԴԱՐԱՊԱՍԻՍ: Խ: Ռ: ԴՈՒԿԱՍ ԴԱՀԵԿԱՆ[1]:/

Այս շատ կարևոր արձանագրության մեջ պարոն Սահմադինի գործակատար Սամդինը պարծանքով հայտնում է, որ առանց վարդպետի *ձևել և հիմն է ձգել դարապասին-պալատին. ամեն կասկածից վեր է, որ այս դեպքում* վարդպետ *բառը միմիայն ճարտարապետ իմաստով պիտի հասկանալ, քանի որ պարզված է նաև, թե նրա դերը—այն է՝* ձևել և հիմն ձգել,*—այսինքն պլանը գծել և հիմնարկել, դրանք աշխատանքներ են, որոնք բացարձակապես ոչ մի կապ չունեն կրոնի և կրոնավորի հետ։*

Այս կարևոր արձանագրությունը հրատարակել է միմիայն Մառը, այն էլ երկու անգամ, մեկ 1893 թ. որպես նորագյուտ արձանագրություն և մեկ էլ 1934 թ. իր մեծածավալ «АНИ» *աշխատության մեջ*[2] *(պարոն Սահմադինի, իր խոսքերով՝ այդ տիպիկ «բուրժուայի» տնտեսական ու քաղաքական դեմքը բնորոշելու համար)։ Մառը երկու դեպքում էլ վարդպետ բառի դիմաց դրել է* мастер *բառը, որը մեր կարծիքով ճիշտ չէ, կամ առնվազն թերի է. վարդպետ բառը Մառին հիշեցնելով հայերեն վարպետ բառը, լոկ ձևական այդ նմանության հիման վրա թարգմանել է ռուսերեն համանիշ* мастер *բառով։ Սոսկ ձևական այդ նմանությունն էլ հենց այլ վերծանողների մտապատկերի մեջ առաջ է բերել վարդապետ բառի հիշողությունը և առիթ տվել վարդպետին վարդապետ դարձնելու։ Արձանագրության շատ պարզ ու որոշակի բովանդակությունից երևում է, որ գործակատար Սամդինը ոչ թե առանց որևէ, ընդհանուր իմաստով, վարպետի—*мастер*-ի է իր գործը տեսել, այլ ճարտարապետ-վարպետի, որը պետք է գծագրեր ու պալատի հիմքը ձգեր, այսինքն՝ մասնագետ ճարտարապետի։ Սամդինը շրջանցել է ճարտարապետին միայն, և ոչ թե կառուցող, քարտաշ վարպետներին, առանց որոնց անհնարին էր պալատ կառուցելը*[1]*։*

[1] Н. Марр, Записки Восточного отделения Российского археологического общества, т. VIII, вып. I, II, 1893, стр. 82—83.

[2] Его же, „Ани“, стр. 42.

ՎԱՐԴՊԵՏ=ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մինչև այժմ վարդպետ=ճարտարապետ կոչումի մեջ բերած բոլոր փաստերը վիմական արձանագրություններից էին։

Արդյոք այդ նույն երևույթը մատենագրության մեջ ևս հանդիպո՞ւմ է, թե՞ ոչ։

Ասողիկի «Պատմության» Կ. Եզյանցին պատկանող ձեռագիր օրինակը, որը հիմք է ծառայել Ստ. Մալխասյանցի հրատարակությանը 1895 թ. երրորդ հանդեսի ԽԷ գլխում ունեցել է հետևյալ վերնագիրը.

Յաղագս շինելոյն Գագկա արքայի ի քաղաքն Անւոյ զեկեղեցին մեծ որ անուամբ սրբոյն Միդատ (ընթերցիր՝ Տրդատ)[2] վարպետ եկեղեցւոյն:

Ստ. Մալխասյանցը խմբագրել և կրճատել է այս վերնագիրը թողնելով միմիայն՝

Յաղագս շինելոյն Գագկա արքայի ի քաղաքն Անւոյ զեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի:

Խմբագրական ու սրբագրական հմուտ աշխատանքի կողքին, Մալխասյանցը միանգամայն անիրավացի դուրս է թողել վերնագրի վերջին նախադասությունը՝ համարելով

[1] *Երկրորդ հրատարակության մեջ Մառը արձանագրության մեջ ճշտումներ է մտցրել, ընդունելով արձանագրության վերծանման առթիվ Միհրանի (Գ. Տեր-Մկրտչյան) դիտողությունները, բայց ոչ վարդպետի վերաբերյալ. տե՛ս «Արարատ», Ը, 1893, էջ 765, «Նստոց», դիտողություն ուսուցչապետ Ն. Մառի մի նոր աշխատության առթիվ։*

[2] *Փակագծերում եղած ծանոթությունը Ստ. Մալխասյանցինն է։ Տե՛ս* Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, *Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1895, էջ 282 և ծանոթ.։*

այն հետագա ներմուծում՝ տեղավորելով միայն ծանոթության մեջ։ Վերնագրի այդ վերջին նախադասությունը՝ Տրդատ վարպետ եկեղեցւոյն, ոչ մի դեպքում չպետք է գրիչների հետագա ներմուծում համարել, ինչպես կտեսնենք քիչ հետո, այդ նախադասությունը կա Անողիկի մի քանի ուրիշ ձեռագրերում էլ։ Միակ բանը, որ կարելի է այդ նախադասության մեջ սրբագրել դա վարպետ բառի վարդպետ-ով փոխարինելը պիտի լինի։

Խնդիրն այն է, որ Կ. Եզյանցի ձեռագիրը ըստ հրատարակչի տված տեղեկությունների, արտագրված է 1668 թ. Տիգրանակերտում, Աբրահամ գրչի կողմից[1]։ XVII դարի գրիչը ճիշտ ըմբռնելով վարդպետ բառի անհարիրությունը վարդապետի հետ, սրբագրել է XVII դարին հատուկ վարպետ ձևով. XVII դարում վարդպետ ձևի գործածությունը չկար այլևս։ Եթե իր ձեռքի տակ եղած օրինակում չլիներ այդ նախադասությունը, գրիչ Աբրահամը XVII դարում չէր կարող այն աստիճան նախաձեռնողություն ցույց տալ Տրդատի հանդեպ, որ նրա անունը մուծեր Անողիկի գրքի մեջ, այն էլ մի գլխի վերնագրում։ Այդ նախադասությունն անպայման եղել է գրչի օգտագործած ձեռագրում, և այդ ձեռագիրն էլ շատ հին պետք է եղած լինի, առնվազն XIII դարի, երբ վարդպետ կոչումը ճարտարապետ իմաստով գործածական էր։

Իր առաջաբանում Ստ. Մալխասյանցը հետևյալ կերպ է բնորոշում այդ ձեռագիրը.

Որպէս ի վերոյ յիշատակեցաք՝ պատմութիւն յայսմ մասենի՝ է մին յընտրելագունիցն յամենայն ձեռագիրս, որք ծանօթքն են մեզ, ըստ յուրեանն և ըստ ուղղագրութեանն։ Զի բէպէտ և ժէ դարու է գրչութիւն՝ այլ գաղափարեալ երևի ի վաղեմի օրինակէ, ի ձեռն ճարտար գրչի[2]։

Ավելի ուշ, Գագկաշեն տաճարի կառուցող-ճարտարապետի խնդիրը պարզելու առընչությամբ, Կ. Ղաֆադարյանը մատնացույց արեց, որ 1567 թ. գրված Անողիկի մի ձեռագիր նույնպես այդ լրիվ վերնագիրն ունի համապատասխան գլխում, այսինքն վերջանում է—«Տրդատ վարդպետ եկեղեցւոյն» նախադասությամբ, և ավելացնում է, որ իր կարծիքով Տրդատի անունը գրչի հավելում չպետք է համարել, որովհետև դա կեղծարարություն կլիներ, այլ որ ավելի հին օրինակներում հենց այդպես էլ եղել է[1]։

Ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը Տրդատ ճարտարապետի կյանքին և ստեղծագործությանը նվիրված իր ռուսերեն աշխատության մեջ հայտնում է, որ Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանի հետ ստուգել են Անողիկի ևս երեք ձեռագիր, որոնց մեջ համապատասխան գլուխները նույն լրիվ վերնագիրն են ունեցել։

Ստուգված ձեռագրերը թեև ուշ ժամանակի արտագրություններ են, բայց հմուտ ձեռագրագետ Լ. Խաչիկյանի կարծիքով Անողիկի ձեռագրերում հանդիպող վարդպետ Տրդատին նշող այդ մասը XVII դարի արտագրող գրիչների հավելումներ չպետք է համարել, այլ որ դրանք եղել են հին օրինակներում էլ։ Այդ ձեռագրերից հատկապես № 4584-ի մասին Լ. Խաչիկյանն այն կարծիքն է հայտնել, որ նա իր առանձնահատկություններով հատուկ է այնպիսի մի ձեռագրից արտագրված լինելուն, որը կվերաբերեր առնվազն XII դարին[2]։

Այդ կարծիքներին ի հաստատություն կարող ենք ավելացնել նաև, որ այս աշխատության մեջ վիմական արձանագրություններից հավաքած բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ վարդպետ=ճարտարապետ կոչումի գործածությունը հասնում է մինչև XIV դարի կեսերը միայն, հետևաբար այն բնագրերը, որոնցից արտագրել են 17-րդ դարի գրիչները Անողիկի «Պատմությունը», անպայման իրենց հնությամբ XIV դարից առաջ պետք է համարել և երկրորդ՝ այդ ամբողջ նախադասությունը իր կառուցվածքով՝ Տրդատ վարպետ եկեղեցւոյս—սոսկ արձանագրական բնույթ ունի, որը գրչագիր մատյանների մեջ թափանցել է իր պատրաստի ձևով և որի բազմաթիվ օրինակները վերաբերում են XIII—XIV դարերին։

1 Անդ, առաջաբան, էջ ԼԴ։

2 Անդ, առաջաբան, էջ ԼԸ։

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության, Ա, Երևան, 1942, էջ 276, Գ. Լեոնյանը, հակառակ Կ. Ղաֆադարյանի, կասկածում է այդ նախադասության հնության մասին, բայց իզուր։ Տե՛ս նրա՝ «Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը», «Էջմիածին», 1949, հունվար-փետրվար, էջ 56։

2 *К. Оганесян*, Зодчий Трдат. Ереван, 1951, стр. 62—63.

Պարզվում է այսպիսով, որ վարդպետ կոչումը ճարտարապետ իմաստով, սովորական է եղել որոշ դարերում և իրավունք ունենք սպասելու, որ թե արձանագրություններում և թե գրչագիր մատյանների մեջ կառուցումներին վերաբերող հատվածներում հոգևորական վարդապետի փոխարեն կհայտնաբերվեն վարդպետ-ճարտարապետներ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

1. Հուշարձանների վրա եղած կառուցողական արձանագրությունների մեջ շենքի կառուցումը նշող մի քանի տերմիններ գոյություն ունեն՝ հիմնարկել, կառուցել և շինել, դրանցից առաջիններն ավելի վաղ շրջաններում են գործածվել մեծ մասամբ և համեմատաբար սահմանափակ քանակով։ Ամենից շատ գործածական ձևը «շինել» բայն է։ Իրենց հուշարձանի «շինող» են անվանում և՛ թագավորներն ու իշխանները, և՛ վանահայրերն ու առաջնորդները, և՛ ճարտարապետները։

Այդ կարգի արձանագրությունները բաժանվում են երկու խմբի, առաջին՝ այնպիսիները, որտեղ արձանագրության ընդհանուր բովանդակությունից և նրա մեջ հիշատակված անուններից հատուկ կերպով հասկացվում է «շինողի» դերը, այսինքն նա շինել տվող մեկենաս է (աշխարհական և կամ հոգևորական), կամ շինող ճարտարապետը։ Բայց դրա կողքին կա արձանագրությունների մի մեծ խումբ, ուր դժվար է լինում որոշել, թե ո՞վ է այդ «շինողը», մեկենա՞ս, թե ճարտարապետ։ Այդ կարգի արձանագրությունները սովորաբար ընդարձակ բնագիր ունեն. մեկից ավելի անուններ են պարունակում՝ թագավորի կամ իշխանի, կաթողիկոսի, վանահոր և այլն, ունեն հանդիսավոր հրովարտակային բովանդակություն, նշված են լինում շինության թվականը և նպատակները ի բարեխոսություն իր տոհմի անդամներից մեկի, հոգու փրկության կամ տապանատուն իր տոհմի համար և այլն։ Այս տիպի արձանագրություններում պատահում են դեպքեր, երբ «շինել» բայը հստակ կերպով վերաբերում է միայն մեկենասներին, և արձանագրությունն էլ իր բովանդակությամբ սպառված է, հանկարծ երևան է գալիս մի հավելյալ նախադասություն, թույլ կերպով, կամ բոլորովին չշաղկապված նախորդների հետ և այդ նոր նախադասության մեջ մի նոր անուն, որը նույնպես կապ չունի մեկենասների հետ։ Բերենք երկու օրինակ.

Բագրևանդի ս. Հովհաննես եկեղեցու կառուցողական արձանագրության մեջ, գրված 639 թ., որպես ժամանակի որոշիչ հիշատակված է Բյուզանդիայի կայսր Հերակլի անունը, եկեղեցին հիմնարկող—«Հայոց կաթողիկոս և սբ. վանաց երէց» Եզրի անունը, շենքի հիմնադրման և ավարտման մանրամասն թվականները, ապա այդ լրացած մտքից հետո մի կարճ և նախորդի հետ կարծեք կապ չունեցող նախադասություն և մի նոր անուն. Վարդապետութեամբ Իսրաէղի Գոռաղնեցւոյ. դրանից էլ ավելի բնորոշ օրինակ է Անիի բուրգերի շինարարությանը վերաբերող մի արձանագրություն, գրված 1160 թ., որը և մեջ ենք բերում ամբողջությամբ.

Ի ՈԹ (=1160 թ.) թւ. ի թագաւորութեան Փատլնոյ և հայրապետութեան տէր Բարսղի

Ես Աբրահամ շինեցի զբուրջս ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ և ծնողաց իմոց. ո՜վ կարդայք զիս և ծնողս իմ և զԱռաքեալ վարդապետ յաղաւթս յիշեսջիք[1].

Այսպիսի դեպքերում, երբ արձանագրության ընդհանուր բովանդակությունից և նրա մեջ հիշատակված մեկենասներից անջատ, մի նոր անուն է երևան գալիս, իրավունք ունենք նրան ճարտարապետ համարելու, այլ կերպ նրա դերը և անվան հիշատակությունը կմնան անհասկանալի։

2. Գոյություն ունի շինարարական արձանագրությունների մի սովոր խումբ, որտեղ մեկենասը կամ մեկենասները (կարող են նույն ընտանիքի անդամներ կամ շինությունը նյութապես նպաստող մի քանի մարդիկ լինել) իրենց հիշատակությունից հետո հայտարարում են, որ իրենց «շինածը» կատարվել է—«ի ձեռն» կամ «ձեռամբ» այս կամ այն մարդու, օրինակ.

---

1 Սարգսեան, Տեղագրութիւնք, էջ 111։ Շիրակ, 40։

բիւ ՈԱ (=1152 թ.) ես Արտաւազ և Սարգիս
շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննիսի[1]:

կամ՝

... Կատարեցի զեկեղեցիս, զոր շինեցի ի ձեռն
տեառն Յովհանու...[2]:

Քննելով նման արձանագրությունները, դժվար չէ եզրակացնել՝ առաջին, որ եթե «ձեռամբ» և «ի ձեռն» բառերից հետո տրված անունը կրող մարդը առանց կրոնական աստիճանի է (տէր, վարդապետ, վանահայր, հայր, առաջնորդ և այլն), ապա ուրեմն անպայման շենքի ճարտարապետն է՝ ինչպես մեջ բերված առաջին օրինակում: Երկրորդ՝ եթե այդ անունին կցած է որևէ կրոնական կոչում, ապա այդ դեպքում արձանագրության հիման վրա կամ կողմնակի կերպով պետք է ստուգել նրա հարաբերությունը վանքի հետ, եթե պարզվի, որ նա վանքի վանահայրն ու առաջնորդը չէ, որը միշտ նման դեպքերում շինարարության ընդհանուր կազմակերպիչն ու ղեկավարն է համարվում և իրավասուն ու պատասխանատուն մեկենասի հանդեպ, կարող է և շենքի ճարտարապետը լինել, անկախ իր հոգևորական աստիճանից:

Այն դեպքերում, երբ «ի ձեռն» կամ «ձեռամբ» բառերից հետո եկող անունն ունի հատկապես վարդապետ կոչումը և արձանագրության բովանդակությունից կամ կողմնակի աղբյուրներով պարզվում է, որ այդ ժամանակում վանքի առաջնորդն այլ մարդ է, այդպիսի դեպքերում իրավունք ունենք հիշված վարդապետին շենքի ճարտարապետը համարելու, ըստ որում, մինչև XII դարը հենց վարդապետ ձևով էլ կարող է գրված լինել, անկախ նրա հոգևորական կամ աշխարհական լինելու հանգամանքից. իսկ XII դարից հետո՝ բնագրերում այդ բառը վարդպետ ձևով է գրված, անպայման ճարտարապետ իմաստով և գերազանցապես աշխարհական: Միայն XIX դարի բանասերները, որոնք հավաքել և հրատարակել են արձանագրությունները, գիտակցաբար թե անգիտակցաբար վարդպետ ձևը համարել են սղում վարդապետի և լրացրել այն, չհասկանալով, որ այդ ձևական կողմից բացի վարդպետն ստացել է բոլորովին նոր բովանդակություն և նշանակում է պարզապես վարպետ-ճարտարապետ:

3. Վերջապես կա արձանագրությունների մի խումբ ևս, որն արդեն միայն ճարտարապետներին է վերաբերում: Դրանք կարճ հիշատակարաններ են՝ գրված ճարտարապետների կողմից, որով նրանք նշում են հուշարձանը իրենց կողմից կառուցված լինելու հանգամանքը և կամ, ամենաշատը, խնդրում հիշել իրենց: Արձանագրությունների այս խումբն իր կարճառոտ բովանդակությամբ մոտենում է քարգործ-քանդակազարդող և գրիչ վարպետների հիշատակարաններին, ինչպես հաջորդ գլուխներում կտեսնենք, քանդակազարդող վարպետների ստորագրության սովորական ձևն է երկու բառից բաղկացած. օրինակ, «Սարգիս կազմող», հազվադեպ՝ «Մելիքսէթ կազմող յիշեցեք» ստորագրությունը, իսկ գրիչների համար՝ կամ միայն անունը և, ամենաշատը՝ «Սիմոն գրիչ» ձևերը: Ճարտարապետների համար, որովհետև նրանք շենքերի քանդակազարդողների նման կաշկանդված չեն եղել զարդաքանդակի՝ հատուկ տեղին մոտ և փոքր ծավալի տարածությամբ (շենքերի վրա) և չափազանց սահմանափակ մակերեսով (խաչքարերի վրա), այլ շենքի մի որևէ ոճավորված տեղում են գրել, դրա համար էլ մի քիչ ավելի երկար հիշատակագրություններ են հանդիպում:

Մի քանի օրինակ.

Մեր հնագույն ճարտարապետներից մեկը, որը կառուցել է Աթենի տաճարը (Վրաստան), իր ձեռակերտ կոթողի պատի վրա գրել է.

ԵՍ ԹՈԴՈՍ[ԱԿ] ՇԻՆՈՂ ՍՐԲՈՅ
ԵԿԵՂԵ[ՑԻՈ]Յ...[1]:

Գեղարդի հուշակավոր ժայռափորների տաղանդավոր ճարտարապետ Գալձագը ժայռափորից մեկի երդիկ—լուսանցքի տակ հիշատակագրել է.

Զվարդպետ Գալձագ յիշեցէք[2]:

1 Բարխուդարյանց, Արցախ, 340, Սրվեղի վանքից:
2 Կ. Ղափադարյան, Պատմա-հնագիտական դիտողություններ, «Տեղեկագիր» ԱրմՖանի, 1940, № 4—5, էջ 169, Շամշադինի շրջանի Նոր-Վարագ վանքից:

1 Արձանագրությունը պակասավոր է. տե՛ս «Ճարտարապետ Թոդոսակ» բաժինը:
2 Տե՛ս «Վարդպետ Գալձագ» բաժինը:

Այս առիթով պետք է նշենք նաև, որ նման կարճ հիշատակագրություններ ճարտարապետները գրում էին շինության որևէ ձևավոր և ակնառու տեղում, իսկ գավիթներում՝ թաղերի հիմքը հանդիսացող քառակուսի շրջանակների և հատկապես դրանցից արևելյանի վրա, որը ներս մտնողի կողմից կդիտվեր անմիջապես։ Հետագայում այդ լուսանցք-երդիկներից ներս հոսող անձրևաջրերի հետևանքով խիստ վնասվում էին այդ հիշատակագրությունները։

Այս տիպի մի ցավալի օրինակի հանդիպեցինք Նոր Բայազետի շրջանի նշանավոր Հայրավանքում, հուշարձանի գավթի երդիկաթաղի արևելյան շրջանակին մնացել է վարդպետի հիշատակագրությունը ամենակարևոր մասի, անվան, խիստ ոչնչացմամբ. ահա այն.

...Վ]ԱՐԴՊԵՏՍ ՅԻՇԵԼ ԱՂԱՉԵՄ./

Չնայած միանգամայն հասկանալի այս կարճ հիշատակագրությունների պարզությանը, արձանագիր վերծանողները հաճախ տարվելով չարաբաստիկ վարդապետ-ի *մտամոլորությունից, շատ վարդպետների դարձրել են վարդապետներ. կան նույնիսկ դեպքեր, երբ վարդպետ բառը վարդապետ վերծանելով՝ ոչ միայն ճարտարապետն է կորել, այլ և ինքը արձանագրությունն անգամ անիմաստ է դառել։ Այդ բանն զգացել է վերծանողը, բայց վարդապետի մասին ունեցած իր համակրանքը և կանխամտածությունն արգելել են նրան կռահելու ճշմարտությունը և գցել զանազան անմիտ ենթադրությունների մեջ՝ արձանագրությանն իմաստ տալու համար։*

Արցախում, Հացի գյուղի մոտ, կան ավանանման շենի ընդարձակ ավերակներ, ինչպես նաև մի քանի եկեղեցիների, մատուռների ավերակներ ու ընդարձակ գերեզմանատուն. երկու փոքրիկ կիսավեր մատուռների վրա զետեղված են հետևյալ կարճ հիշատակարան-արձանագրությունները, ըստ հրատարակիչների. մեկին՝

ԶՇանէն վարդպետ եկեղեցոյս յիշեցէք
ի տէր[1].

մյուսին՝

Զխաչենիկ վարդպետ սուրբ եկեղեցոյս
յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս[2]:

1 Բարխուդարյանց, *Արցախ, 125։*

2 Լալայեան, *Ազգ. Հանդ., Բ, 48։*

Այս արձանագրությունների բովանդակությունն ըստ էության անմիտ է, որովհետև եկեղեցիների պաշտոնյաների մեջ վարդապետ չի լինում, իսկ այս դեպքում սրանք նույնիսկ եկեղեցիներ չեն, այլ փոքրիկ մատուռներ։

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը՝ առաջին այցելուն և վերծանողը այդ հուշարձանների ու արձանագրությունների, զգացել է այդ անհարիրությունը և փոխանակ ուշադիր քննելու արձանագրությունների գրչությունը, հորինել է մտացածին մի պատմություն՝ այն բացատրելու համար։ Որ իբր այդ մատուռներում ժամանակին թաղվել են Աղվանից թագավորների և իշխանազունների աճյունները և յուրաքանչյուր մատուռում կարգվել է մի վարդապետ աղոթավոր։ Բարխուդարյանցի նկարագրությունից երևում է, որ նրանց մեջ նախ գերեզմանի հետք չկա և ապա նրանց վրայի հենց իր, Բարխուդարյանցի մեջբերած արձանագրություններից պարզվում է, որ ոչ թագավորների և ոչ էլ իշխանների կառուցումներ են, այլ ինչ-որ քահանայի և իր երկու եղբայրների, ի հիշատակ իրենց տոհմի և ծնողների[1]։

Այս խմբի արձանագրություններն իրենց կարճ ոճով, պետք է դիտել որպես հեղինակային ստորագրության կայուն ձև, հատուկ միմիայն ճարտարապետներին։ Սյունիքի մի շարք վայրերում, Գեղարդում, Հաղարծինում և այլուր ստուգված հիշատակարան-արձանագրությունների մեջ վարդպետ *է գրված։* Հաստատապես կարող ենք ասել, որ այս կարգի արձանագրությունները ամենաապահով միջոցն են մեր միջնադարյան ճարտարապետներին երևան հանելու համար: *Թեև իրենց կարճ բովանդակությամբ նրանք միայն հեղինակների անուններն են մեզ հաղորդում, բայց նկատի ունենալով հենց այդ մասին եղած մեր անգիտությունը՝ նրանք առայժմ թանկագին արժեք ունեն, քանի որ սոսկ անունների հայտնագործումով այս կամ այն հուշարձանի վրա՝ բացվում են ճարտարապետների մի քանի հուշարձաններ, որոնք ընձեռում են ավելի լայն հնարավորություններ նրանց կյանքն ու գործունեությունը պարզելու համար։ Այսպիսի մեկ հատիկ անունով Այսասիի փառավոր հուշարձանի հե-*

1 Բարխուդարյանց, *Արցախ, 125։*

ղինակը նույնանում է Նորավանքի հուշարձաններից մեկի հեղինակ Սիրանեսի հետ, Ասողիկի համապատասխան գլխում վարդապետ Տրդատի սոսկ անվան հիշատակումով լուծվում է Գագկաշենի հեղինակի մասին եղած վեճը, որի մասին խոսվում է այս աշխատության համապատասխան մասերում։

Ամփոփելով վիմական արձանագրությունների օգնությամբ պատմական ճարտարապետներին երևան հանելու վերաբերյալ մեր ասածները և թողնելով նման այլ փաստերի մեջբերումն իրենց կոնկրետ տեղերում, կարծում ենք, որ մեջբերածներն էլ բավական են՝ անելու հետևյալ կարևոր եզրակացությունը.

1. Միջնադարյան Հայաստանում ճարտարապետների համար հատուկ կոչում չի եղել. թե՛ մատենագիրները և թե՛ վիմական արձանագրությունները գործ են ածել բազմաթիվ և ընդհանուր կոչումներ միայն։

2. Եղած կոչումներից մեկն էլ վարդապետ կոչումն է ճարտարապետ իմաստով, որը վաղ միջնադարում արձանագրությունների մեջ գործ է ածվել իր հին, գործարար իմաստով, բայց մինչև երբ, դեռ պարզել չի լինում։

3. XII դարից, երբ վարդապետ հասկացողությունը բոլորովին մերվել էր կրոնավորի հասկացողության հետ, ճարտարապետները այդ բառի միջից ջնջելով ա տառը դարձնում են վարդպետ ձևի և բոլորովին նոր իմաստ հաղորդում վարդպետ-ին, այն է ճարտարապետ։

4. Ուշ միջնադարում, վարդպետ ձևի միջից ջնջվելով նաև դ տառը, այն դառնում է մեր այսօրվա վարպետը, որն արդեն նույնպես ընդհանուր իմաստ ունի և միայն ճարտարապետ չի նշանակում։

5. Վարդապետ = վարդպետ = վարպետ բառի իմաստաբանական այս ըմբռնումները նկատի ունենալով ըստ դարաշրջանների և նրանց կիրառելով վիմական արձանագրությունների վերծանման ընթացքում, երևան են գալիս մի քանի տասնյակ մինչ այժմ անհայտ ճարտարապետներ, միանգամայն աշխարհական մարդիկ, որոնք կերտել են հայկական ճարտարապետական հոյակապ հուշարձանները։

6. Շինարարական բնույթ կրող բոլոր արձանագրությունները, որոնց մեջ որպես կառուցող հիշատակված են վարդապետներ, պետք է այս առումով վերանայվեն, որովհետև դրանց մեծ մասը ոչ թե մեկենասներ են, այլ կառուցող ճարտարապետներ, որոնք վաղ շրջաններում կարող էին նաև վարդապետ կոչվել, իսկ ավելի ուշ՝ վարդպետ։

7. Մեր ստուգումները ցույց են տալիս, որ վերծանող-հրատարակիչների մոտ վարդապետ կոչված բազմաթիվ շինարարներ, գրված են իրականում վարդպետ ձևով XII—XIV դարերում և այդ կոչումը միմիայն ճարտարապետ է նշանակում և աշխարհիկ անձնավորություն։

8. Ջվստահելով եղած հրատարակություններին, տեղում, կամ լուսանկարների միջոցով վարդապետ և վարդպետ կոչումների ստուգումը է՛լ ավելի կճշտի, ըստ դարաշրջանների, դրանց ճարտարապետի իմաստով գործածության սահմանները մի կողմից և մյուս կողմից երևան կհանի բազմաթիվ ճարտարապետական կոթողները կերտող մեր տեղծագործ ճարտարապետներին։

Գ Լ Ո Ւ Խ   Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ

1. ԻՍՐԱՅԵԼ ԳՈՌԱՂՃԵՑԻ

Է. դար։

Ամենահին հայ ճարտարապետն է, որի մասին գրավոր և ճիշտ թվական ունեցող հիշատակություն է մնացել։

Գոռաղճեցին կառուցել է մի կոթող, որը մեր ճարտարապետության պատմության մեջ շատ արժեքավոր տեղ պետք է գրավեր, բայց, դժբախտաբար մինչև այժմ էլ մնացել է չուսումնասիրված։

Գոռաղճեցու կառուցած եկեղեցին գտնըվում է պատմական Բագրևանդում, Դիադինից հյուսիս-արևմուտք, Արածանիի ձախ ափին, ավերակների մեջ։ Ավերակ այդ վայրը թուրքերի կողմից կոչվում է Ուչքիլիսե, իսկ հայերից՝ ս. Հովհաննու վանք (եկեղեցու անունով)։ Այդ ավերակները հեթանոս Հայաստանի կրոնական կենտրոններից մեկի, նշանավոր Բագավանի, ավերակներն են (պատմա-հնագիտական տեսակետից մի չափազանց կարևոր վայր)։ Համատարած ավերակների մեջ, բոլորովին կանգուն վիճակում, բազմել է ճարտարապետական այս կոթողը՝ շինված VII դարում Իսրայել Գոռաղճեցու ձեռքով։

VII դարի սովորության համեմատ, մեծատառ մի արձանագրություն, մեկ տողով, գոտիի ձևով գրկում է շենքի հարավային, արևելյան և հյուսիսային պատերը, վերին մասից։ Արձանագրությունը շինարարական է և մեր հնագույն ճարտարապետի՝ Իսրայել Գոռաղճեցու անվան հիշատակությամբ։

VII դարից մենք ունենք մի շարք փայլուն հուշարձաններ, որոնց պատերին նման գոտիի ձևով արձանագրություններ կան, բայց նրանցից և ոչ մեկի մեջ ճարտարապետի անվան հիշատակություն չկա։ Բարեբախտաբար գոյություն ունի այս արձանագրության գիտական հրատարակությունը։ Որովհետև հայ ճամփորդների և ուսումնասիրողների գրքերում այն մեծ աղավաղումներով է մեջ բերված, ուստի մենք ամբողջությամբ ենք մեջ բերում ակադ. Հ. Օրբելու հմուտ վերծանությամբ և վերականգնումներով։

ՔՍԱՆ ԵՒ ՄԻ ԱՄԻՈՅՆ ԱՃԱՊԱՀ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱ/ՒՈՐԻ ՀՌՈՏԻՑ ԱՄՍՈՅՆ ՈՐ ԱՒՐ ԽՐԵՍՈՒՆ ԷՐ/ ԵՍ ՏԷՐ ԵԶՐԱՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՍԲ ՎԱՆԱՑ/ ԵՐԵՑ ՀԱՃՈՅԻՒՔՆ ԱՅ ՀԻՄՆ ԱՐԿԻ ՍՐԲՈՑ ԵԿԵ/ՂԵՑՈՅՍ ԵՒ Ի ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԱՄԻ ՆՈՅՆ ԵՐԱ/ԿՂԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՅԱՄՍԵԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԻ ՈՐ ԱՒՐ/ ՔՍԱՆ ԷՐ ՅԱՒՈՒՐՆ ՈՒՐԲԱԹ ԵՂԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ/ ՆՈՅՆ ԳՈՐԾՈՅՍ ՏԵՂԻՈՅՍ ՎՋԵՆԱԿԱՒ ԱՄԵ-

ՆԱՅՆ ԻՐԱՒՔ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԻՍՐԱՅԷՂԻ ԳՈՌԱՂՃԵՑԻՈՅ[1].|

Արձանագրության վերջին նախադասության վարդապետութեամբ բառը, ակադ. Հ. Օրբելին թարգմանում է при зодчем և բացատրում է—«Իհարկե ներկա դեպքում այս տերմինը չունի գիտունի, դոկտորի իմաստ, այլ ավելի նախնական՝ վարպետի, որպիսի նշանակությամբ նա պահպանվել է, մինչև այժմ էլ կորցնելով միջին դա վանկը = վարպետ»[2]:

Մինչև արձանագրության այս ստույգ և գիտական հրատարակությունն էլ, շնորհալի Ալիշանը՝ գոյություն ունեցող պակասավոր բնագրի հիման վրա՝ հանգել էր այն եզրակացության, որ այս դեպքում գործածված «վարդապետութեամբ» բառը նշանակում է ճարտարապետությամբ. ահա նրա խոսքերը-«Ճարտարապետն եղեալ է Իսրայէլ» կամ՝ «իսկ շինուածն արժանի արդարև կայսերն (Հերակլի—Ս. Բ.) և արժանացուցիչ վարդապետին իւրում, այսինքն ճարտարապետին»[3]:

Այս միանգամայն ճիշտ բացատրությունների շնորհիվ, մեր այս խոշոր ճարտարապետն ազատագրվում է հոգևորականի սքեմից և կանգնում մեր առաջ որպես հայ ճարտարապետության մի կարկառուն և առայժմ ամենահնագույն ներկայացուցիչը:

2. ՅՈՀԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Զվարթնոցի տաճարը հայ ճարտարապետական մտքի մինչև VII դարը ստեղծագործած բոլոր լավագույնի հանրագումարն է և այդ հիմքի վրա մի չտեսնված նոր թռիչք հատակագծային, կառուցողական, ոճային ու հարդարման ձևերի:

[1] *И. Орбели*, Багаванская надпись 639 г., „Христианский Восток", 1913, т. II, вып. I, стр. 122. Նույն հանդեսի 1917 թ. II, V-ի մեջ հուշարձանի համառոտ նկարագրությունը, հատակագիծը և լուսանկարներ: Արձանագրության այլ հրատարակությունները տե՛ս Շահխաթունեանց, Բ, 350, «Այրարատ», 528: «Բանասեր», 1903, էջ 373—75 (վերջինս Նժդեհյանի «Նամակ խմբագրությանն» է, որտեղ արձանագրության ընդօրինակությունն է տալիս ԺԵ—ԺԶ դարերին պատկանող մի ձեռագիր քարոզգրքի հիշատակարանից):

[2] Հ. Օրբելի, նույն տեղում: Հատվածի մեջ բառերի ընդգծումները մերն են — Ս. Բ.:

[3] Ալիշան, «Այրարատ», էջ 529:

Բարեբախտաբար այդ հոչակավոր հուշարձանի մասին գոյություն ունեն թե մասնագիտական ընդարձակ գրականություն և թե հանրամատչելի բրոշյուրներ: Բացի դրանից, Զվարթնոցի ավերակները մոտիկության և բարեկարգ ճանապարհների շնորհիվ քաջ ծանոթ են ոչ միայն մասնագետներին, այլև լայն մասսաներին:

Գրականության մեջ բավականի հարուստ փաստեր են հավաքված Զվարթնոցը կառուցող վարպետների՝ թե Արարատյան դաշտում նույն ժամանակ կառուցված հուշարձանների վրա աշխատած լինելու և թե բավական հեռու տեղերի շինարարություններին մասնակցած լինելու վերաբերյալ:

Նախքան Զվարթնոցի շինվելը և կաթողիկոսության այնտեղ տեղափոխվելը, կաթողիկոսները նստում էին Դվին քաղաքում, որը երկրի քաղաքական ու հոգևոր կենտրոնն էր, մեծ քաղաք, ուր կառուցվում էին մեծամեծ պալատներ ու եկեղեցիներ: Զվարթնոցը կառուցող Ներսես Գ. շինող կաթողիկոսը, բացի Տայքում կառուցած իր շենքերից, հենց Դվինումն էլ կառուցել էր ս. Սարգիս եկեղեցին, իսկ Կոմիտաս կաթողիկոսը նախ ավարտել է Դվինի ս. Գրիգոր եկեղեցին, ապա՝ ս. Հռիփսիմեն: Այնպես որ մեծ շահաստան Դվինն է եղել քարգործ վարպետների այն դարբնոցը, որտեղ նրանք կատարելագործվել են քաղաքային բուռն շինարարության ընթացքում և ապա տարածվել ու կառուցել Դվինից դուրս մոտիկ ու հեռու վայրերում, որպես հմուտ վարպետներ (IX—X դարերից սկսած այդ նույն դերը կատարում էր Անին):

Այդ երևույթի ակնառու փաստերն են Դվինի պեղումներից հանված բազմաթիվ ճարտարապետական մնացորդները, որոնք սերտորեն կապվում են Զվարթնոցի և այլ վայրերի հուշարձանների վրա հանդիպող ճարտարապետական մասերի ու զարդաքանդակների ոճին և մանավանդ, մեզ ավելի հետաքրքրող, վարպետների գործածած նշաններին՝ քարերի վրա:

Դվինի պեղումների ղեկավար Կ. Ղաֆադարյանը իր աշխատության մեջ բերում է վարպետների ինը նշաններ և եզրակացնում.

«Քանի որ Դվինի կաթողիկեն վերակառուցվել է VII դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում, իսկ Զվարթնոցի տաճարը՝ նույն դարի կեսերին, պետք է ենթա-

դրենք, որ Դվինի կաթողիկեի վերակառուցման վրա աշխատող երիտասարդ վարպետներից շատերը իրենց ծերության հասակում մասնակցել են Զվարթնոցի կառուցմանը»[1]։ Վ. Հարությունյանը ձեռքի տակ ունենալով Դվինի վարպետների վեց նշաններ, կազմել է համեմատական տախտակ, որից պարզվում է նույն նշանների առկայությունը Զվարթնոցում, Պտղնիում, Արուճում, Զվարիում և Ցրոմիում (վերջին երկուսը՝ Վրաստան)[2]։

Բ. Առաքելյանը այդ առթիվ հետաքրքիր մի միտք է առաջադրում, որ այդ վարպետները շրջում և աշխատում էին խմբով[3]։ Այս հետաքրքիր առաջարկությունը հնարավոր կլինի սակայն քննել միայն այն դեպքում, երբ բոլոր հուշարձանների վրա հանդիպող վարպետների նշանները հավաքվեն և համադրվեն, մի բան, որ տակավին կատարված չէ։

Զվարթնոցը կառուցող վարպետները, միայն քարերի վրա փորագրված պարզ նշաններով չեն բավականացել։ Շենքի առաջին հարկաբաժնի պատուհանների կամարաղեղների եռանկյունաձև հարթությունների վրա, որոնց թիվը 32-ի է հասնում, քանդակել են մարդկանց ֆիգուրներ, ձեռքերին քարտաշության և որմնադրության գործիքներ։ Զվարթնոցի մեծագործ վարպետները, գիտակ իրենց մեծ վարպետության, սրբապատկերների փոխարեն, շենքը զարդարել են սեփական նկարներով։ Այս շնորհակալ գործը կատարելով սակայն, նրանք այն մինչև վերջ չեն հասցրել, բոլորի մոտ չեն գրել իրենց անունները։ Առայժմ դրանցից հայտնաբերված են ինը, որոնցից մեկի վրա ամբողջությամբ կա «Յոհան» անունը։ Ճարտարապետության և արվեստի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ սկզբնական տարակույսներից հետո, այժմ արդեն հաստատ կերպով ընդունված է, որ Յոհանը Զվարթնոցի գլխավոր ճարտարապետն է եղել (Թորամանյան, Լևոնյան, Տոկարսկի, Ղաֆադարյան, Առաքելյան և ուրիշներ)։ Իր այլ գործակիցներից Յոհանին գլխավոր վարպետ-ճարտարապետ համարելու հիմք է ծառայում նախ՝ նրա անվան հիշատակությունը, երկրորդ՝ նրա հագուստի բնույթը և երրորդ՝ քանդակը շենքի գլխավոր՝ արևմտյան մուտքի մոտ գտնվելու հանգամանքը։ Միանգամայն իրավացի այդ դիտողություններից մեկը՝ հոգևորականի տարազը, առիթ է տվել որոշ ուսումնասիրողների Յոհանին հոգևորական համարելու, որն անհիմն է[1]։ Դեռ 1926 թ. արվեստի վաստակավոր գործիչ Գ. Լևոնյանը այն միտքն է հայտնել, որ Յոհանի հոգևորական տարազը պատվո նշան պիտի համարել, ինչպես Վասպուրականի Գագիկ և Կիլիկիայի թագավորները ներկայացվում են այդ տարազով՝ մանրանկարչության մեջ, կամ էլ հետագայում Ներսես կաթողիկոսը կարող էր Յոհանին որպես վարձատրություն իրոք այդ հոգևոր աստիճանը շնորհել[2]։

Բ. Առաքելյանը նկատի ունենալով Զվարթնոցի վարպետների, գտնված քանդակների վրա եղած հագուստների նմանության և տարբերության հատկանիշները՝ դրանք համարում է արհեստակցային ու խմբական սովորության կամ էթիկայի հետևանք[3]։

Այս իրավացի դիտողություններին կարող ենք ավելացնել ուրիշներն ևս։ Վարդապետ բառի ստուգաբանության ընթացքում պարզվեց, որ նրա նախնական իմաստը եղել է վարժության, գործի, ուսման պետ. Հին ժամանակների սովորության համաձայն «պետը» տարբերվում էր իր ստորադրյալներից նաև իր արտաքինով, տարազով, միջնադարում այդպիսի տարբերիչ տարազը ուսուցչի կամ ընդհանրապես «պետի» համար, պիտի ենթադրել, որ եղել է հոգևորականի տարազը, այնպես որ Յոհանին հոգևորականի տարազով քանդակելով նշվել է նրա «պետի» հանգամանքը իր գործակիցների նկատմամբ։

---

1 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, էջ 100—101։

2 Դվինի V—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, 1950, էջ 18, Նույնի՝ По поводу датировки храма в Аруче, „Сборник трудов Ереванского политех. инст.". 1946, № 2, էջ 29, նույնը և առանձնատիպ։

3 Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում, էջ 74 (ծանոթ., Երևան, 1949)։

1 Ն. Մ. Տոկարսկին նույնիսկ բոլոր վարպետներին հոգևորական է համարում, որը միանգամայն սխալ է, որովհետև գտնված քանդակների մեծ մասը աշխարհական տարազով են։ Н. М. Токарский. Архитектура Древней Армении, Ереван, 1946, էջ 104։

2 Գ. Լևոնյան, Նոր կարծիքներ Զվարթնոցի մասին, «Տեղեկագիր» Գիտ. և արվեստի ինստիտուտի, № 1, 1926, էջ 206—208։

3 «Պատկերաքանդակները», էջ 74։

Սակայն տարազի խնդրում ուսումնասիրողները աչքաթող են արել մի շատ կարևոր հանգամանք. ինչպես հայտնի է միջնադարում տղամարդու հագուստի բնորոշ ձևը տարբեր էր ներկայիս ձևերից. նրա վերնազգեստը երկար էր՝ շուխա, իսկ հոգևորականի վեղարին շատ մոտ էր գլխարկի տարածված այն ձևը, որ կնգուղ է կոչվում։ Քարերի վրա քանդակվելով՝ դրանք շատ հեշտությամբ կարող են ներկայիս դիտողին շփոթության մեջ ձգել, մանավանդ որ պահպանվել են զարդարված վիճակում։ Այնուհետև պետք է ավելացնենք, որ ուշադիր նայելով այդ քանդակներին, նրանց մեջ երևում են նաև գլխաբաց ու երկար մազերով դեմքեր, նույնիսկ ճակատի վրայից անցնող ապարոշ՝ մազերը կապող։

Որ բազմաթիվ վարպետներից մեկը, այս դեպքում Յոհանը, միայն կարող էր գլխավորը կամ ճարտարապետը լինել, դա պարզ երևում է նրանից, որ ըստ Կաղանկատվացու վկայության Կոստանդին կայսրը, տեսնելով Ջվարթնոցը հիացել է, և ցանկանալով նման շենք Կոստանդնուպոլսում կառուցել, հրամայել է վարպետներին գնալ իր հետ, սակայն ճանապարհին վախճանվել է կայսրը և գործը գլուխ չի եկել. մինչդեռ պարբերության սկզբում ասված է «ետ հրաման շինողացն»— հոգնակի, նրա վերջում մահացածի մասին եզակի թիվ է գործածված[1]։

Թեև ուշ ժամանակի, բայց Մեծոփա վանքի շինարարության բաժնում կտեսնենք, որ ճարտարապետների 12 անուն է պահպանվել, բայց և հիշատակվել է նրանցից գլխավորի անունն ու դերը[2]։

Ուսումնասիրողների այն կարծիքը, որ վարպետների քանդակների հանդիպում ենք միայն Ջվարթնոցի վրա, ճիշտ չէ։ Ուսումնասիրողներն աչքաթող են արել մեր ճարտարապետության հնագույն և լավագույն, բայց տարաբախտաբար բնավ չուսումնասիրված, կոթողներից մեկը ևս, որի վրա, նույնիսկ ավելի ակնառու կերպով, քանդակված են շինարար վարպետների պատկերները։ Մենք նկատի ունենք Վասպուրականի Աղբակ գավառի ս. Բարդուղիմեոսի վանքը։

1 Մովսեսի Կաղանկատուացւոյ, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Թիֆլիս, 1913, էջ 364։

2 Տե՛ս «Մեծոփա վանքի ճարտարապետները» բաժինը։

1884 թ. հրատարակված գրքում, գրեթե միակ ճամփորդ-նկարագրողն հետևյալն է գրում.

«Վանուցս եկեղեցւոյ դրան արտաքին ճակատի վերի կողմն սքանչելի արվեստիվ հայր Աստուծոյ պատկերն, համաձայն Եզեկիել մարգարէի տեսլեան, առյուծներով և հրեշտակներով փորագրված է, վարի կողմն ս. Բարդուղիմէոս տեգն ի ձեռին նժոյգ հեծած՝ կսպանանէ վիշապն։ Դրան երկու վիքխարի կողերուն վերա փորագրեալ են վանուց չորս ճարտարապետաց պատկերները մեծությամբ յուրեանց հասակներուն և յուրաքանչյուր ճարտարապետն իւր գործած գործիքն ի ձեռին հարմարական տրիւք կկենա, որոց մեջ տեղը կգտնվի նաև *Հովհաննես Մկրտչի* գլուխն և դրան երկու կողմերը երկու մարդ բուրվառ ի ձեռին»[1]։

Այս փաստը ցույց է տալիս, որ հնում ճարտարապետների պատկերաքանդակները իրենց ձեռակերտների վրա, այնքան էլ անսովոր երևույթ չեն եղել՝ ինչպես կարծվում է, և նրանք արտահայտել են գլխավոր վարպետներին, որոնց մեջ մեկն անշուշտ կլիներ հիմնական ճարտարապետը, որպիսին է Ջվարթնոցում Յոհանը։ Յոհանը Ջվարթնոցի հոյակապ տաճարի մեծատաղանդ ճարտարապետն է և նրա անունը պետք է անբաժան մնա իր ձեռակերտից—Ջվարթնոցից (ալբոմ, նկ. 1,2)։

3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈԴՈՍԱԿ ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ

Կենտրոնական Վրաստանում, Գորիի մոտակայքում է գտնվում Վրաստանի հին ճարտարապետական նշանավոր կոթողներից Ատենի սբ. Սիոն տաճարը։ Ատենի կենտրոնագմբեթային հուշարձանը իր հատակագծային ու այլ ճարտարապետական մանրամասներով հար և նման է VII դարում Վրաստանում և Հայաստանում կանգնեցրած այդ տիպի հուշարձաններին (Հռիփսիմե, Ջվարի) և անվիճելիորեն համարվում է VII դարի գործ։ Այդ հուշարձանի պատերին եղած հայերեն

1 Միրախորեան Մանվել, *Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գավառս արևելյան Տաճկաստանի*, մասն Բ, էջ 66—67։ Ընդգծումները մերն են. նույնը մեջ է բերված Էփրիկյանի Բնաշխարհիկ բառարանում։

կարճառոտ արձանագրությունները վաղուց ի վեր իրենց վրա էին գրավել մասնագետների ուշադրությունը[1]։

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի մանրամասն քննությունը տեղում 1920 թ. այդ արձանագրությունների թիվն ավելի ընդարձակեց և հաստատապես ապացուցեց, որ ոչ միայն շենքի գլխավոր ճարտարապետն է եղել հայ, այլև հայ կառուցողների մի ամբողջ խումբ է աշխատել հուշարձանի կառուցման վրա[2]։

Գլխավոր ճարտարապետ՝ Թոդոսակի արձանագրություն-հիշատակարանը գտնվում է տաճարի հարավային պատի վրա դրսից, հիմքից վեր երկրորդ շարքի 5 քարերի վրա, որից պահպանված է սկզբի մասը միայն։

ԵՍ ԹՈԴՈՍ[ԱԿ] ՇԻՆՈՂ ՍՐԲՈ ԵԿԵՂԵ[ՑԻՈ]Ց...[3]։

Այս գլխավոր ճարտարապետից բացի շենքի զանազան մասերում պահպանվել են նրա օգնական այլ վարպետների լոկ անունների հիշատակություններ կամ նրանց անվան սկզբնատառերը միայն. այսպես՝ բեմի մասում լրիվ հիշատակված են ԱՀԱՐՈՆ և ԳԻՈՐԳ անունները, որոնց սկզբնատառերը երևան են գալիս նաև շենքի այլ մասերի քարերի վրա. ՍԱ[ՄՍՈՆ] և ԳՐԻԳՈՐ անունները։

Այսպիսով, պարզվում է, որ հինգ հոգուց բաղկացած վարպետների մի ամբողջ խումբ է աշխատել այդ նշանավոր հուշարձանի կերտման վրա՝ ճարտարապետ Թոդոսակի գլխավորությամբ։

[1] *И. Джавахов*, К вопросу о времени построения грузинского храма в Атени, „Христ. Восток“, т. I, вып. III, 1913, стр. 277—297. Акад. *И. А. Орбели*, Указатель слов и имен к 13 армянским надписям VII века, „Христ. Восток“, т. III, вып. I, 1915, стр. 95—100.

[2] Լ. Մելիքսեթ-Բեկ, *VII դարու հայերեն արձանագրությունները Վրաստանում, «Տեղեկագիր» ԳԱ., № 5, 1945, էջ 1—6։*

[3] *Ինչպես այս, նույնպես և հետագա անունները տալիս ենք պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի նշված աշխատության տառադարձություններով և լրացումներով* — Ս. Բ.։

Թոդոսակ ճարտարապետի մասին տե՛ս Г. Чубинашвили, Памятники типа Джвари, Тбилиси, 1948, стр. 115—116. *Вахтанг Беридзе*, Зодчие Древней Грузии, Тбилиси, 1956, стр. 74.

Ժ դար.

4. ՄԱՆՈՒԵԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Մանուել ճարտարապետը մեկն է այն խոշորագույն միջնադարյան ստեղծագործողներից, որն իր արվեստի մեծությամբ և կառուցումների քանակի շատությամբ հաղթահարել է մեր իշխանագով պատմագիրների քար անտարբերությունը և ստիպել Թ. Արծրունուն իր մասին խոսել։

Ճարտարապետ Մանուելի գործունեությունը զուգադիպեց Հայաստանի պատմության համար շատ նշանակալից այն խաղաղ ժամանակաշրջանին, երբ երկարատև պատերազմներից ու ավերածություններից հետո, X դարում, արաբական խալիֆայության թուլացման հետևանքով Հայաստանում ստեղծվեցին համեմատաբար խաղաղ պայմաններ և դրա հետևանքով ամենուր սկսվեցին շինարարական մեծ ծավալի աշխատանքներ։

X դարի սկզբին (908 թ.) Վասպուրականը խալիֆի կողմից ճանաչվեց թագավորություն։ Վասպուրականի վասալ թագավորության ընդարձակ տերիտորիայի վրա բնակչության շահագործման և այնտեղով անցնող քարավանային ճանապարհների եկամուտներից գոյացող մեծամեծ հարստությունների կուտակման շնորհիվ՝ երկրում ծավալվեցին մեծամեծ շինարարական աշխատանքներ[1]։ Գագիկ Արծրունի թագավորը, որը քաղաքական ու ռազմական ասպարեզում էլ ձեռներեց և եռանդուն մարդ էր, ներքին շինարարական աշխատանքներում էլ հանդես բերեց մեծ թափ ու եռանդ։ Բազմաթիվ բերդերի նորոգումների ու նորերի կառուցումից հետո, նա ձեռնարկեց երկու մեծ քաղաքավանների ու բերդերի շինարարությունը, որոնք ժամանակակից նկարագրողը՝ պատմագիր Թ. Արծրունին, ճարտասանական ու բանաստեղծական ավյունով է գովերգում։

Այդ հսկա շինարարությունների «ճարտարապետ արուեստին», ինչպես ասում է Թ. Արծրունին՝ Մանուելն էր։

Առաջին քաղաքավանը շինվում է Ոշտունիքում, Վանա ծովի հարավային ափին, Աղթամար կղզու հանդեպ, դա Ոստան ավանն էր, որին Թ. Արծրունին քաղաք է անվանում

[1] *«Հայ ժողովրդի պատմություն», մասն Ա, Երևան, 1951, էջ 161։*

(էջ 475) և մեծ ոգևորությամբ նկարագրում նրա բնական ու արհեստական գեղեցկությունները և ձկնորսական հարստությունները, որոնք «ամբարէն ինչս բազումս ի գանձս թագաւորաց»[1]։

Ոստանի մոտ է Արտոս լեռնագագաթը, ծածկված հիասքանչ ծառ ու կանաչներով, բազմաբուխ աղբյուրներով, որտեղից դիտողի առաջ բացվում են ընդարձակ գեղատեսիլ տարածություններ և Վանա լճի փիրուզե մակերեսը։ Այդ լեռնագագաթի վրա Գագիկի հրամանով Մանուելը կերտում է ճարտարապետական մեծ խմբեր. «Ձեռնարկեալ շինէ ի նմա տաճարս և սենեակս և փողոցս հրաշալիս պատկերակերպս և ազգի ազգի յօրինուածս, զոր ոչ բաւեմ պատմել։ Պարսպէ և զծովակողմն զօրաւոր վիմօք, դնելով զհիմանսն յանհնարին խորութեան, շինէ և ի գլուխ պարսպին ընդդեմ ծովուն տաճար մի ճեմարանոց ոսկեզարդ և պէսպէս պաճուճեալ դեղովք, արեգակնահրաշ ճառագայթաձևս ի խողովակս աչաց և յուրախութիւն սրտի ինքեան և իւրոց արժանեացն. իսկ զդրունս կազմեալ կամարաձևս, օդաբերս, զովացուցիչս, միանգամայն և լուսանցոյցս շողախաղացս, որք ի ծագել և ի մտանել արեգականն փայլատակելով ի վերայ ծովուն՝ շող գործեն ի սիրտս տաճարին, և յէրփներփն շըջշըջելով զդրոշմեալ պատկերատիպսն և զզանազան յօրինուածսն՝ զմիտս հիացուցանէ զտեսօղացն, և ի վեր անդր անցանէ լան զպատմողաց գիտութիւն։

Իսկ մեր ի բազմաց զսակաւն յիշատակելով՝ ահա ասացաք որ ինչ յաղագս Ոստանին աւանի»[2]։

Թ. Արծրունին գրեթե մի ամբողջ գլուխ նվիրելով Ոստանի և նրա ճարտարապետական կերտվածքների բանաստեղծական նկարագրությանը (դպրություն չորրորդ, գլուխ Զ), հաջորդ երկու գլուխները նվիրում է Աղթամար կղզու մեծամեծ կառուցումներին, որոնց որպես նախաբան կցում է մի բարձրագով համեմատություն։ Թ. Արծրունին ասում է, որ ինքը «անվրէպ յայտարարութեամբք» պնդում է, թե այն բոլորը ինչ որ շինվել է հայոց աշխարհում, Հայկ աղեղնավորից և վավաշոտ Շամիրամից սկսած և մյուսներով վերջացրած, ինքը շրջել ու բոլորն իր աչքով տեսել է, սակայն ըոլորից առավելն Աղթամարն է.

«Մինչև զԿղարջս և Շուշեթացիս և առ լեռամբն Կաւկոսա և յԱհիզ, մինչև ի մուտս Գաղայ, և ընդ Տայաստան և ընդ ամենայն հիւսիսականս և ընդ արևելս ի հետխոտս գնալով՝ տեսաք զգործ քաջաց և նախնեաց. միայն զմերս գրաւեաց զմիտս և զտեսութիւն, հրաշակերտն և քան զբազումս նորանշանն և զարմանալին Աղթամար»[1]։

Ապա պատմում է այն մասին, որ առաջ էլ կղզում եղել են շինություններ, բայց Մանվելի շինածների համեմատությամբ՝ «Սակայն ամենեքեան սոքա իբրև ի տաղաւարի, և կամ որպէս ի հուղս մրգապահաց»[2]։

Այս համեմատությունից հետո միայն նկարագրում է Աղթամարում կատարված շինարարությունը։

Գագիկ Արծրունին ծրագրել էր Աղթամար կղզին, Վանա լճի սրտի մեջ, դարձնել մի անմատչելի բերդ-քաղաք, որն իր բնական ջրի պատնեշով իր դարաշրջանի համար մի անառիկ միջնաբերդ պիտի դառնար թշնամիների դեմ։ Բնական այդ անառիկ դիրքից բացի կղզու վրա շինվում են հսկայական պատնեշներ ու ամրություններ։ Ամենից առաջ կղզու հարթ մասը մեծացնելու նպատակով լճից կորզում-խլում են որոշ տարածություն. «Հրաման տուեալ բազում արուեստաւորաց և անթիւ մարդկանց զհատեալ վէմս ծանունս և դժուարակիրս հոսել ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն»[3]։

Այս հսկա ամբարտակը լճի մակերևույթից հինգ կանգուն բարձրացնելուց հետո, նրա վրա շինվում են բերդաքաղաքը շրջափակող պարիսպները, լայնանիստ, բուրգերով և աշտարակներով հաստհաստվող, որոնց մեջ եղել են ընդարձակ զբոսատեղիներ։ Պարիսպներն ունեցել են դռներ «ահաւորատեսս, հաստահեղոյսս, բևեռապինդս». լճից կորզված տարածության մեջ գոյացրել են ծոց և վերածել այն նավահանգստի «խաղաղ և անփոյթ»։ Թ. Արծրունին ընդհատելով իր նկարագրությունը, կրկին հիացած, համեմա-

1 Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887, էջ 292։
2 Նույն տեղում, էջ 292։

1 Թ. Արծրունի, Անդ, էջ 293։
2 Անդ, էջ 223։
3 Թ. Արծրունի, Անդ, էջ 293.

տում է դրանք Ալեքսանդրի կողմից Մակեդոն քաղաքի կառուցումների և առասպելական Շամիրամին վերագրված ուրարտական ժայռափոր ապարանքների, Վարագա լեռների ստորոտով անցնող ուրարտական հսկա ջրանցքի, նրա ամբարտակների հետ ու բացականչում. «Զի նորայն գոնեա ի վերայ ցամաքի, իսկ սա ի մեծ խորոց ծովուս արուեստակեալ՝ հարստահարէ զամենայն միտս եւ զգործս իմաստնոցն առ ի քան զինքն, եղելոց»[1]:

Գագիկ Արծրունին իր նոր քաղաքն շուտով շենացնելու համար դիմում է բռնակալական սովորական մեթոդին: Նա իր մոտ է կանչում պետության աշխարհիկ ու կրոնավոր բոլոր իշխաններին և հրամայում, որ հարկադրաբար շինություններ կառուցեն նոր քաղաքում: Այս ընդհանուր համապետական ձեռնարկության շնորհիվ հինգ տարվա ընթացքում Աղթամարի նախկին անապատ կղզու փոխարեն ստեղծվում է գեղեցիկ բերդ-քաղաք:

Քաղաք-բերդի շինությունից հետո կղզու գագաթին կառուցվում են արքունական և իշխանական ապարանքներ, զբոսատեղեր, ծաղկանոցներ և փողոցներ: Այդ բոլորը նորից շրջապատվում է պարիսպներով, որը քաղաքի միջնաբերդն է դառնում:

Գագիկ Արծրունին իր հսկայական ծավալ ունեցող շինարարական աշխատանքներում, համաձայն տեղեկությունների, օգտագործել է մեծ թվով զինվորների և վեց հազարից ավելի վարպետ բանվորների: Թ. Արծրունին այդ մասին գրում է. «և քանզի էին ի դրան արքունի գումարեալք արուեստաւորք բազումք, արք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ»:

Այս մեծաթիվ վարպետ-կառուցողների մեջ հատկապես աչքի է ընկել Մանուելը, որովհետև երբ Գագիկ Արծրունին ցանկանում է Աղթամար բերդ-քաղաքը պսակել իր շինարարական գործունեությունն ու փառքը հավերժացնող երկու հուշարձան-կոթողներով՝ պալատ (տաճար) և եկեղեցի, այդ բոլոր արվեստագետներից նա ընտրում է Մանուելին և նրան հանձնարարում դրանց կառուցումը:

Նախորդ բոլոր մեծամեծ կառուցումներին մասնակցած բազմաթիվ արվեստագետներից և ոչ մեկի անունը չի հիշատակում Թ. Արծրունին, բայց որովհետև եկեղեցին ինչպես և պալատը (տաճար) բոլոր կառուցումների թագ ու պարծանքը պետք է լինեն, և որին պատմագիրը, ինչպես կտեսնենք, հիացքանչ տողեր պիտի նվիրի՝ ակամայից հիշատակում է նաև ճարտարապետ Մանուելի անունը, գերազանց ածականներով, «ումեմն ի նոցանէ ճարտարապետի առն իմաստնոյ և հանճարեղի հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւն, խ (40) կանգնաւ ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւն». կամ այլ տեղ՝ «եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, զոր ի վեր անդր ցուցաք, այր լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր՝ հրաշակերտէ եկեղեցին զարմանագործ արուեստիւ»[1]:

Ապա տալիս է պալատի պատերի լայնության ու բարձրության, խորանների, նկարների, քանդակների, գմբեթի և բոլոր մասերի նկարագրությունը և բացականչում.

«և է կարգ շինուածոյ տաճարին անեղ իմն և զարմանալի, և այնճան բարձրագոյն և անհաս է մտաց՝ զոր օրինակ թէ իմաստուն ոք այր ընդ մի կարգ խորանի միջո զբազում ժամս նայեսցի, արտաքս ելեալ ոչինչ յորոց նայեցաւ պատմել ումեք կարասցէ»[2]:

Այնուհետև լուսանկարչական մանրամասնությամբ նկարագրում է պալատի ներքին մուտքերը, լուսամուտները, առաստաղը, ներքին պատերին եղած զարդերն ու պաճուճանքները, որոնց մեջ պատկերված է եղել արքա Գագիկը՝ նստած ոսկե գահի վրա, շրջապատված պատանի մատովակներով, գուսաններով, պարող աղջիկներով, ապա ըմբշամարտի տեսարաններ, առյուծների և այլ գազանների ու թռչունների չքնաղ պատկերներ:

Դժբախտաբար ինչպես այս պալատը, նույնպես և մեր նկարագրած նախորդ բոլոր շինությունները վաղուց ի վեր ավերված են եղել և ժամանակակից հետազոտողների համար կորած: Նրանց մասին եղած Թ. Արծրունու նկարագրությունն է միայն մնացել, որը բարեբախտաբար այնքան ընդարձակ և կենդանի է մանավանդ պալատի վերաբեր-

1 Թ. Արծրունի, Անդ, էջ 294:

1 Թ. Արծրունի, Անդ, էջ 297—298:

2 Նույն տեղում, էջ 295:

յալ, որ կարող է լավ երևակայություն ունեցող ճարտարապետի համար սխեմատիկ վերականգնման ատաղձի դեր կատարել:

Հսկայական այդ կառուցումների մեջ գլխավոր դերակատար Մանուել ճարտարապետի տաղանդը հավերժացնող միայն մի հուշարձան է մնացել կանգուն, դա Աղթամարի հռչակավոր ս. Խաչ եկեղեցին է, որի շինարարության պարագաներին և նկարագրությանը Թ. Արծրունին իր աշխատության մեջ հատուկ գլուխ է նվիրել (4. Ը): Համաձայն պատմագրի հաղորդման, Գագիկ արքան գրավելով Աղձնյաց նահանգի Կոտոմ գյուղում եղած Թշնամական ամրոցը, հրամայում է այն հիմնովին քանդել և ցամաքով ու ծովով նրա քարերը տեղափոխել Աղթամարի կղզին և դրանով կառուցել եկեղեցին: Թ. Արծրունին անսահման գովեստով է նկարագրում ճարտարապետ Մանուելին և նրա ձեռակերտը, մանրամասնորեն թվարկում է նրա պատերի վրա եղած մարդկային, կենդանական և բուսական քանդակները, Գագիկ արքայի քանդակը, որն իր ձեռների վրա բռնած ունի եկեղեցու կաղապարը, խորանի հարավային կողմում կառուցած հատուկ օթյակը, ուր աստիճաններով բարձրանալով բազմում էր Գագիկը: Բացի վիմաքանդակներից եկեղեցին ներքուստ զարդարված է եղել նաև որմնանկարներով, արծաթապատ դռներով և այլն:

Բարեբախտաբար Մանուել ճարտարապետի տաղանդը հավերժացնող այս բարձրարվեստ կոթողը մնացել է կանգուն մինչև այժմ էլ, թեև ըստ արժանվույն չուսումնասիրված[1]:

Թե՛ իր ճարտարապետական և թե՛ հարդարանքների ու զարդաքանդակների մտահղացման և բազմազանության տեսակետից Աղթամարի ս. Խաչ եկեղեցին մի անսպառ շտեմարան է ոչ միայն միջնադարյան հայկական կուլտուրայի ուսումնասիրության համար, այլև արևելքի կուլտուրաների կապի. փոխազդեցությունների և զարգացման էտապների ուսումնասիրության համար: Աղբյուրներից մեկը հիացած Մանուելի քանդակազարդերով՝ նրան համեմատում է հին աշխարհի սրբագործված նկարչի հետ. «այր լի իմաստութեամբ և զորավորի գործ իւր և զարմանալի ի պատկերահանութիւն նման Ադդէի պատկերահանին, զոր Աբգար յուղարկեաց առ Քրիստոս, զսա կարծեմ թէ աւելի էր քան զնա»[1]:

Թեև Մանուելը այն 2—3 բախտավոր ճարտարապետներից է, որոնց գործի հետ նաև անվան հիշատակությունը կա մեր մատենագիրների մոտ, բայց և այնպես նրա կյանքի, կենսագրության մասին ոչ մի բառ անգամ չունի գրած Թ. Արծրունին, որն իր գովերգած իշխանների կյանքին ու գործունեությանը ամբողջ գլուխներ է նվիրել, իսկ Մանվելի ժամանակակից և մեկենաս Գագիկ Արծրունի արքային նկարագրել է ամբողջությամբ: Ցեղալական գաղափարախոս Թ. Արծրունու համար Մանուելը, թեև հանճարեղ արվեստագետ, այնուամենայնիվ միայն մի գործիք է Գագիկ Արծրունու փառքը պճնազարդելու համար:

Մանուել ճարտարապետի մասին այնքանը միայն գիտենք, որքանով նրա գործունեությունը կապված է Գագիկ Արծրունու շինարարության հետ, եթե Գագիկը իր թագավոր դառնալով է սկսել այդ աշխատանքները, այսինքն 908 թ. և նրա շինարարության պսակը, Աղթամարի եկեղեցին ավարտվել է 921 թ. ուրեմն կստացվի ընդամենը 13 տարվա մի ժամանակաշրջան, որը շատ կարճ է թե՛ այդ ծավալուն աշխատանքների և թե՛ Մանուելի ստեղծագործական կյանքի համար: Բայց ինչպես Աղթամարի եկեղեցու, այնպես էլ Գագիկի մահվան թվականները տարբեր աղբյուրներ տարբեր են նշում:

Մանուել ճարտարապետի դերն ու նշանակությունը անսահման մեծ է մեր ճարտարապետության զարգացման ընդհանուր խնդիրների ուսումնասիրության առնչությամբ: Մանվելը ոչ միայն առանձին հուշարձանի (Աղթամարի ս. Խաչ), այն էլ կրոնական, փայլուն կերտողն ու զարդաքանդակողն է, այլև մեծ, անսամբլային տիպի կառուցումների վարպետ, ամբողջ քաղաքավանների հատակագծող և կառուցող, որոնց մեջ եղել են պալատներ ու եկեղեցիներ, բազմաթիվ բնակելի շենքեր, լճափի չորացման և նավա-

---

1 Ակադ. Հ. Օրբելին գրել է մեծ ուսումնասիրություն Աղթամարի ս. Խաչ եկեղեցու և նրա պատերին եղած քանդակների արվեստի մասին, որը, դժբախտաբար, դեռևս հրատարակված չէ:

1 Հավաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարի), էջ 23, հրատարակեց Մ. Վ. Մաքսուտյանց, Էջմիածին, 1916:

հանգստի շինարարության, փողոցների հատակագծում և ձևավորում։ Ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ X դարում Մանուելն է հիմնադիրն ու նոր աստիճանի բարձրացնողը Արևմտյան Հայաստանի ճարտարապետական դպրոցի, որից մի քանի տասնյակ տարի հետո նույն դերը կատարեց Տրդատ ճարտարապետը Արևելյան Հայաստանում, Անիի ճարտարապետական դպրոցի վերաբերյալ։

Որքան բախտավոր է Մանուել ճարտարապետը՝ իր ժամանակակից պատմագրի կողմից հիշատակվելով իր ստեղծագործությունների հետ միասին, նույնքան էլ դժբախտ՝ ժամանակակից գիտության համար նրա կերտած կոթողների գրեթե բոլորովին չուսումնասիրված՝ ոչնչացումով[1] *(ալբոմ, նկ. 3-4)։*

5. ՍԱՄԵՀԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Տասներորդ դարի այս նշանավոր ճարտարապետը գործել է Շիրակի շրջանում. նրա անունը հանդիպում է մեկ անգամ միայն շինարարական արձանագրության մեջ, Հոռոմոսից ոչ հեռու Կարմիր վանք, կամ Ղըզըլքիլիսե գյուղի եկեղեցու պատին։ Դժբախտաբար թե այդ եկեղեցու և թե նրա արձանագրությունների մասին նորագույն հետազոտություններ չկան. հին հրատարակությունները էլ շատ պակասավոր են։ Սամեհան ճարտարապետի անունը կրող արձանագրությունը գտնվում է եկեղեցու հարավային պատի վրա։ Այն առաջին անգամ մեծ աղավաղումներով հրատարակել է Ջալալյանը, ապա Ալիշանը Պետերբուրգի ակադեմիայից ձեռք բերելով մի ընդօրինակություն, որը նույնպես պակասավոր է, հրատարակում է՝ ասելով, որ այնքան է տարբերվում Ջալալյանից, կարծես թե այլ արձանագրություն լինի և թե անհրաժեշտ է նոր, ստույգ վերծանություն կատարել։

[1] *Հիմնական գրականություն Մանվել ճարտարապետի ստեղծագործությունների մասին.* Թ. Արծրունի, *Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887։ «Հավաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարի)», էջմիածին, 1916 (հրատարակեց Մ. Վ. Մարտուսյանց)։* Սարգսեան, *Տեղագրութիւնք, էջ 274—279։* Ալիշան, *Նոր-Հայաստան, էջ 151—152։ «Արարս», 1897, էջ 51—61, 1898, էջ 69—79։* Ե. Լալայան, *«Ազգ. Հանդ.», էջ 20, Վասպուրականի նշանավոր վանքերը։ И.А. Орбели,* О первоначальной форме купола Ахтамарского храма. Записки восточного отделения Русского археологического общества, т. XXV, Петроград, 1921.

Վաստակավոր ճարտարապետ Թորամանյանը չի զբաղվել այդ հուշարձանով, նա ունի մի համառոտ նկարագրություն միայն իր ցուցակի մեջ, որը և ամբողջովին մեջ ենք բերում։

Կարմիր վանք *(Ղոշավանք), Հոռոմոսի վանքին մոտ, Ախուրյանի ձախ ափին, Կարմիր վանք գյուղի մեջ կա մի եկեղեցի գեղեցիկ շինվածքով և խիստ անաղարտ պահված։ Շինված է 985 թվականին, շինողի անունը եղծված է արձանագրության փչացած մասեր ունենալու պատճառով։ Բայց շինող ճարտարապետի անունը որոշ կարդացվում է, որ եղել է Սամեհան ճարտարապետ աբեղա*[1]*։*

Ալիշանի համառոտ նկարագրությունից իմանում ենք, որ եկեղեցին կոչվում է ս. Գրիգոր, շինված է կարմրավուն քարով (որից և գյուղի Կարմիր վանք անունը), ունի հոյակապ գմբեթ, բեմի երկու կողմերում կան փոքրիկ ավանդատներ և մի մուտք՝ արևմբայան կողմից, ու որմնանկարներ գմբեթի վրա՝ ներսից։

Պակասավոր արձանագրությունից երևում է, որ եկեղեցին շինվել է Հոռոմոսի վանահայրեր Սարգսի և Սողոմոնի կողմից 985 թվականին։ Այդ արձանագրությունը վերջանում է հետևյալ կարևոր տողերով.

«...Եւ զաշխատողս սորա, և տէր Քրիստոս հասարակաց ողոր. ի ձեռն Սամէհանի ճարտարապետի աբեղայի»[2]:

Ամբողջ արձանագրական նյութի մեջ սա միակ դեպքն է, որտեղ գործ է ածված ճարտարապետ բառը։ Ճարտարապետը չէր կարող իր համար այդ տերմինը գործածել, և հիրավի, ներկա դեպքում էլ այն գրված է մեկենասների անունից, և նրա պակասավոր բովանդակությունից երևում է, որ հիշատակված են ընդհանրապես աշխատողները և ի թիվս նրանց նաև նրանց պետ Սամեհանը։

Հանձին Սամեհանի, ունենք X դարի մի նշանավոր ճարտարապետ, որի ձեռակերտ միակ շենքը, սակայն, մնացել է առանց ուսումնասիրության, թեև բոլոր նշաններից երևում են, որ այն պետք է ճարտարապետական արժեքավոր գործ լինի (ալբոմ, նկ. 5)։

[1] Թ. Թորամանյան, *Նյութեր..., Բ, էջ 133։*

[2] Ալիշան, *Շիրակ, էջ 169։* Ջալալեանց, *Ա, 222—223։*

Ե. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՏՐԴԱՏ

Տասներորդ դարի հայ ճարտարապետության հանճարեղ ու ճանաչված ճարտարապետն է Տրդատը։

Մանվելի նման Տրդատն էլ իր տաղանդի մեծությամբ հաղթահարել է մեր չխոսկան մատենագիրներին և ստիպել Ստեփանոս Տարոնեցուն, ժամանակակից պատմագրին, հիշատակել իր անունը։

Տրդատ ճարտարապետը հիշատակվելու կողմից ավելի բախտավոր է, քան Մանվելը, և դա շնորհիվ այն հանգամանքի, որ նրա ստեղծագործության միջավայրը եղել է Բագրատունյաց մայրաքաղաք Անին և նրա շրջապատը, վայրեր, որոնք ժամանակակից ճամփորդների և գիտնականների կողմից շատ ավելի լավ են ուսումնասիրված և դրա հետևանքով էլ Տրդատի անունը իր ձեռակերտ հուշարձանների հետ միասին մտել է գիտահետազոտական լայն գրականության մեջ։ Բացի դրանից, Տրդատի մասին գրվել են նաև հատուկ ուսումնասիրություններ[1]։

Համաձայն պատմագիր Ստ. Տարոնեցու վկայության, Տրդատի առաջին հայտնի ձեռակերտներն են Անիին մոտ Արգինա «գյուղաքաղաքում» կառուցածները։ Արգինան, որ վերջին ժամանակներում մի աննշան գյուղ էր, X դարում եղել է մեծ ավան կամ գյուղաքաղաք, կաթողիկոսական նստոց։

Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսը (973—992) աթոռ բարձրանալով՝ սկսել է շինարարական խոշոր աշխատանքներ կատարել Արգինայում.

«Եւ նորոգեաց զտուն կաթողիկոսարանին Շիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ, յեզերս Ախուրեան գետոյ...։ Եւ ի նմին գեօղ շինեաց զսուրբ կաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւ, հաստահեղոյս արձանօք զմբեթարդ խորան երկնանման, հանդերձ երիւք եկեղեցեօք՝ նոյնաձև, հրեշտակատեսակ, չքնաղագեղ յօրինուածովք»[2]։

Պատմագրի թված այդ բոլոր հուշարձանները վերջերս ավերված էին արդեն և իրենցից ներկայացնում էին կառկառների կույտեր, միայն մեծ, կաթողիկե եկեղեցուց մնացել էին հյուսիսային և արևմտյան պատերը և արևելյանի մի մասը։

Նկատի ունենալով Արգինայի շինարարությունների մեծ ծավալը, և շինել տվողների (կաթողիկոսի) դիրքն ու պահանջները, պետք է ենթադրել, որ Տրդատը պետք է որ արդեն անվանի ճարտարապետ լիներ մինչև այդ, այլապես հազիվ թե մի երիտասարդ ու անփորձ մարդու վստահեին նման պատասխանատու կառուցումներ։ Տրդատի, երկրորդ, հայտնի շինարարական գործունեության միջավայրն արդեն մայրաքաղաք դարձած Անին էր։

Համաձայն Ստ. Տարոնեցու վկայության, 977 թ. Բագրատունիների գահն է բարձրանում Սմբատ Բ՝ Աշոտի որդին («Տիեզերակալ»), որն անմիջապես ձեռնարկում է մայրաքաղաքի ամրացման և բարեկարգման աշխատանքներին, ապա Անիի մայր եկեղեցու շինարարությանը.

Արկանէ հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինայ[1]։

Տրդատի փառքի կոթող այս եկեղեցու շինությունը ձգձգվում է մեկենաս թագավորի մահվան պատճառով և ավարտվում միայն 1001 թվականին, թագուհի Կատրանիդեի մեկենասությամբ։

Նույն տարում Անիում հիմք է դրվում Գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցուն, որն իր կլոր հատակագծով և արտաքին ձևերով, պետք է նմանվեր հռչակավոր Զվարթնոցին։ Գագկաշենի կառուցումը տևում է 9 տարի և ավարտվում է միայն 1010 թվականին։ Գիտնականներից ոմանք հերքում էին այն փաստը, որ Գագկաշեն եկեղեցին Տրդատն է կառուցել[2], սակայն վերջերս Աստղիկի ձեռագրերում հայտնաբերվեցին երեքը, որոնց մեջ Գագկաշեն եկեղեցու շինարարությանը նվիրված գլուխը վերնագրված է.

---

1 Թ. Թորամանյան, *Նյութեր..., Բ, էջ 42—41*։ Գ. Լևոնյան, *Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին», 1949, № 1—2, էջ 56—66*։ *К. Л. Оганесян*, Зодчий Трдат, Ереван, 1951.

2 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, *Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 185*։

1 Ստ. Տարոնեցի, *Անդ, էջ 187*։

2 Թ. Թորամանյան, *Նյութեր..., 1, էջ 275*։ Գ. Լևոնյան, *Ճարտարապետ Տրդատ Անեցին, «Էջմիածին», № 1—2, 1949, էջ 64—65*։

Յաղագս շինելոյ արքային Գագկայ ի քաղաքն Անւոյ զեկեղեցին անուամբ սրբոյն Գրիգորի. Տրդատ վարդպետ եկեղեցւոյն[1]:

Ձեռագրական այս կարևոր հայտնագործության շնորհիվ, մեկով ավելանում է հանճարեղ Տրդատի ստեղծագործությունների թիվը։

Այս արդեն անառարկելի գործերից բացի, ենթադրաբար Տրդատին են վերագրում նս մի շարք հուշարձանների կառուցումներ, ինչպիսիք են Սանահնում և Հաղբատում՝ Ամենափրկիչ և ս. Նշան եկեղեցիները, Անիում պարիսպների ու բուրգերի կառուցումներ, նույնպես և Գագկաշեն եկեղեցու պատին հաստատված Գագիկի արձանը իր շինել տված եկեղեցու քարե կաղապարը ձեռին և այլն։ Թեև հավանականություններ կան այդ հուշարձանների թվում մի մասը, հատկապես Անիում եղածները, Տրդատին վերագրելու, բայց այդ խնդրի լուծման համար հաստատուն փաստեր չկան։

Տրդատի հանճարեղ ստեղծագործության մի ուրիշ կոթող էլ կանգնած է նրա հայրենիքից դուրս, որը և նրա համբավը տարածել է գիտական աշխարհում, հայկական ճարտարապետության ուսումնասիրությունից ավելի վաղ։

Վեցերորդ դարում Կ. Պոլսում Հուստինիանոս կայսրը շինել է տալիս մի եկեղեցի, որն իր ընդարձակությամբ, ճարտարապետական արվեստի խիզախությամբ, հարդարանքների ճոխությամբ մինչև այսօր էլ մնում է որպես հին աշխարհի սքանչելիքներից մեկը։

Այդ հրաշագեղ տաճարի, ս. Սոֆիայի գմբեթը սակայն երկրաշարժների հետևանքով երկու անգամ փլվել է. երկրորդ անգամի փլուզումը տեղի ունեցավ 989 թվականի ահեղ երկրաշարժի ժամանակ։

Բյուզանդիայի կայսր Վասիլը, ցանկանալով անմիջապես նորոգել այդ մասը, հրավիրում է բոլոր նշանավոր ճարտարապետներին, սակայն վերջիններս խուսափում են կատարել կայսեր ցանկությունը, վախենալով գործի դժվարությունից։

Համաձայն Ստ. Տարոնեցու վկայության, այդ ժամանակ Պոլսում է գտնվելիս եղել և Տրդատ ճարտարապետը, որը և հանձն է առնում այդ դժվարին աշխատանքը և չորս տարվա ընթացքում վերականգնում է գմբեթը, որը և մինչև օրս պսակում է այդ հոյակավոր շենքի գլուխը։

Տրդատաշեն այդ կոթողը, կանգնած Եվրոպայի ու Ասիայի հնագույն դարպաս Կ. Պոլսի աշխարհահռչակ հուշարձանի վրա, հայ ճարտարապետական արվեստի և նրա տաղանդավոր ներկայացուցիչ Տրդատի փառքի ու անմահության կոթողն է։

Մենք թվեցինք բոլոր այն հուշարձանների անունները, որոնք մինչև այժմ հաստատորեն կամ ենթադրաբար վերագրվել են Տրդատ ճարտարապետին։

Այժմ մեր ձեռքի տակ է ակադ. Հ. Օրբելու երկար տարիների աշխատանքի արդյունք հանդիսացող՝ Անիի վիմական արձանագրությունների ձեռագիր ժողովածուն, որի մեջ կա մեկ հատիկ բառից կազմված մի արձանագրություն, որը մեր կարծիքով պիտի ընդարձակի Տրդատի ստեղծագործությունների ցանկը։

Ձեռագիր այդ ժողովածուի № 105 արձանագրության մասին և բուն արձանագրությունը ըստ Հ. Օրբելու բառացի գրածի՝ հետևյալն է.

Աբլղարիբ Պահլաւունու եկեղեցի. *արտաքուստ, հարավային կողին (կամ նիստին— Ս. Բ.), մուտքից վեր, ղանգակատան պատի շարվածքի հետքերից բարձր.*

Տ Ր Դ Ա Տ

Ծանոթանանք նախ այս եկեղեցու շինության ժամանակին և ոճական որոշ առանձնահատկություններին։

Պահլավունիների ազգեցիկ տոհմը թե՛ Անիում և թե՛ շրջակայքում կառուցել է տվել մի շարք բարձրարվեստ հուշարձաններ, որոնցից մեկն է վերոհիշյալ եկեղեցին՝ Փրկիչ *անունով, որը կառուցել է տվել Աբլղարիբ Պահլավունի իշխանը, 1036 թվականին[1]։ Հուշարձանն ունի կլոր հատակագիծ, արտաքուստ բազմանկյունի է, որի նիստերը զարդարված են զույգական կիսասյուների վրա*

---

1 Թ. Թորամանյան, *Նյութեր…, Ա, էջ 276, ծանոթ. կազմողի (Կ. Ղաֆադարյան)։*

1 *Եկեղեցու վրա կան շինարարական երկու արձանագրություններ, որոնցից մեկի մեջ 1035 և մյուսի՝ 1036 թթ. են նշված. Համեմատիր՝* Սարգսեան, *Տեղագրութիւնք, էջ 121 և* Ալիշան, *Շիրակ, էջ 82—83։*

հանդչող կամարներով, որոնք կրկնվում են նաև վերևում, արտաքուստ երկրորդ հարկի տեսք ունեցող մասի վրա։ Այս հուշարձանը, ուսումնասիրողների կարծիքով, մեկն է Տրդատ ճարտարապետի ձեռքով Անիում նոր ծնունդ ստացած Զվարթնոցի հիմնական գծերն ունեցող կառուցվածքներից, որոնց նախօրինակն այս նոր էտապում Գագկաշենն է։ Հայ ճարտարապետության հմուտ մասնագետ Ն. Մ. Տոկարսկին, օրինակ, հուշարձանի մասին հետևյալն է գրում. «Այս հուշարձանը կառուցող վարպետը VII դարի օրինակների նման լուծելով հատակագիծը, արտաքին հարդարանքների խնդրում անկասկած ընկել է Գագկաշենի ձևերի ազդեցության տակ, ճիշտ այնպես, ինչպես և այն վարպետը, որը ոչ պակաս հմտությամբ նախագծել է Խծկոնքի վանքի մոտ հիանալի բրգանման եկեղեցին»[1]։

Փրկիչ եկեղեցու վերին մասերը վերանորոգվել են XIII դարում, այդ ժամանակ էլ նրա հարավային կողմում շինվել է զանգակատուն, որը վաղուց ի վեր արդեն փլված է։ Հենց այդ զանգակատան եկեղեցուն կից պատից վերև գտնվում է ակադ. Հ. Օրբելու նշած տեղը։

Հուշարձանի վրա մեկ հատիկ անվան հիշատակումը, ինչպես կտեսնենք հետագայում՝ ավելի մանրամասն, երկու նշանակություն է ունեցել. առաջինն այն է, որ դրանք գերազանցապես շինության վրա աշխատած վարպետների անուններն են, և այդպիսի դեպքերում նրանք փորագրված են լինում բարձր տեղերում կամ ճարտարապետական կարևոր նշանակություն ունեցող մասերի վրա. երկրորդը՝ սովորական այցելուների անվան հիշատակություններ են և այդպիսի դեպքում նրանք գրված են լինում շենքերի վրա արտաքուստ, ցածր, մարդու ձեռքը հասնող տեղերում, անարվեստ և հաճախ խաչերի կողքերին։ Փրկիչ եկեղեցու վրա Տրդատ անունը փորագրված է խիստ բարձր, այցելուների համար անմատչելի տեղ և խորը փորված տառերով. հետևաբար իրավունք ունենք այն համարելու շինարար վարպետի գրած։

Նկատի ունենալով Փրկիչ եկեղեցու հատակագծային և այլ ոճական նմանությունները Տրդատի շինած Գագկաշեն եկեղեցու հետ, և այդ հուշարձանների կառուցման ժամանակների մոտիկությունը և, վերջապես, արձանագրության տեղի պարագաները՝ ենթադրում ենք, որ այդ անունը մեր տաղանդավոր ճարտարապետ Տրդատի անունն է և նա է հենց կառուցել Փրկիչ եկեղեցին։

Այս նոր ենթադրությունը եթե ճշտվի, ապա Տրդատ ճարտարապետի գործունեության ժամանակի տևողությունը, որը շատ կարճ էր, ըստ նախկին հուշարձանների ժամանակագրության՝ կերկարի մինչև XI դարի երեսնական թվականները և մենք կունենանք Տրդատի ձեռքով գրված առաջին հիշատակությունը իր իսկ կառուցած հուշարձանի վրա։

Տրդատը X դարի հայ ճարտարապետական արվեստի ամենափայլուն դեմքն է Մանվելի հետ միասին։ Նա ճարտարապետության մի նոր էտապի, քաղաքային ու անսամբլային ոճի խիզախ ու հանճարեղ կիրառողը և ուսուցիչն է իր ժամանակի և նրանից հետո եկող ճարտարապետների ամբողջ սերունդների։ Տրդատին իր այս նորարարության մեջ միակ զուգակից, գուցե և նախորդ, կարելի է համարել նույնքան հանճարեղ Մանվելին, որն ինչպես տեսանք երկու քաղաքների (Ոստան և Աղթամար), ինչպես և մեծարվեստ եկեղեցիների (Աղթամարի ս. Խաչ) կառուցողն է։ Բայց Մանվելի ստեղծագործությունները գրեթե չուսումնասիրված մնացին և այդ պատճառով էլ գիտական գրականության մեջ նրա անունը Տրդատի հետ համեմատած քիչ է գործածված։

Այս բոլորով, սակայն, մենք Տրդատի կենսագրության մասին նույնպես ոչինչ չգիտենք։ Նրա ժամանակակից պատմագիր Ստ. Տարոնեցին մեզ հաղորդում է միայն նրա անվան հիշատակությունները՝ կապված հուշարձանների կառուցման գործի հետ. մեզ հայտնի չեն նրա ոչ ծննդյան, ո՛չ մահվան թվականները, ո՛չ նրա ծննդավայրը և ո՛չ էլ կենսագրական այլ տեղեկությունները։

Եթե Արգինայի եկեղեցին նրա առաջին ձեռակերտը համարվի, ապա մենք կունենանք առաջին թվականը նրա ստեղծագործության՝ մոտավորապես 985—990 թվականները, և վերջինը՝ Անիի Գագկաշենը՝ 1010 թ., այսինքն 20—25 տարվա մի շրջան, որը շատ քիչ է ստեղծագործական կյանքի համար, իսկ եթե Հաղբատի ու Սանահնի տաճարներն էլ նրա ձեռակերտը լինեն, ապա դրանք պետք

[1] *Н. М. Токарский*, Архитектура Древней Армении, стр. 150—151.

է, որ նախորդած լինեն Արգինայի կառուցումներին, որովհետև հայտնի է, որ նրանք կառուցվել են X դարի երկրորդ կեսին, բայց այդ խնդիրն, ինչպես տեսանք, առայժմ պարզված չէ։ Մեր նոր ընթացքությունը նրա կյանքի սահմանը հասցնում է գոնե մինչև 1036 թվականը (ալբոմ, նկ. 6, 7, 8)։

7. ԽԱՉԱՏՈՒՐ ՔԱՐԳՈՐԾ

Այս ճարտարապետի ստորագրությունը պահպանվել է Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի հարավ-արևելյան եզրին կանգնած մի փոքր գմբեթավոր եկեղեցու պատի վրա։ Հուշարձանը կոչվում է Լուսավորիչ (ըստ Ջամբռի՝ Դափուց վանք. էջ 284)։ Սակայն հուշարձանի պատերին եղած բազմաթիվ արձանագրությունների մեջ այնքան շատ տեղեկություններ կան եկեղեցու «շինության» կամ ավելի ճիշտ վերանորոգումների մասին, որ ստիպված ենք, նախքան ճարտարապետ Խաչատուրի կատարած աշխատանքին անցնելը, երկար էքսկուրս կատարել հուշարձանի «կենսագրության» բնագավառում, որպեսզի հնարավոր լինի որոշել Խաչատուրի կատարած աշխատանքը և նրա ժամանակը։

Արձանագրություններ հրատարակած հին հեղինակները այս եկեղեցու արևմտյան պատին, ներքուստ, իբր կարդացել են հետևյալ արձանագրությունը.

Ի պարոնութեան Իւանէի և Շահանշահի ես տէր Պետրոս վարդապետ հանդերձ եղբարբ՝ ընչիւք և ստացուածովք՝ շինեցի զեկեղեցիս[1]։

Այս արձանագրության մեջ հիշատակված պատմական անձնավորությունների անունների հիման վրա՝ եկեղեցու շինությունը համարվել է XIII դարի սկիզբը։

Մենք շատ փնտրեցինք այս արձանագրությունը և չգտանք, թեև եկեղեցու արևմտյան պատի վրա, մանավանդ ներսի կողմից հետագա նորոգումների և ձևափոխությունների ոչ մի նշան չի երևում[1]։

Արձանագրությունների հին հավաքողները բավարարվելով միայն հեշտ վերծանելի մի քանի արձանագրություններ արտագրելով, դրանց բովանդակության հիման վրա հապճեպ որոշել են հուշարձանի ժամանակը, աչքաթող անելով դժվար վերծանելիները, որոնք նույնպես կապ ունեն թվագրման հարցի պարզաբանման հետ։

Իրականում եկեղեցու պատերի վրա կան մի քանի և՛ շինարարական արձանագրություններ՝ ստույգ թվականներով և՛ մանավանդ ուրիշ անթվական արձանագրություններ, որոնց մեջ հիշատակված պատմական անձնավորությունների անունները ավելի քան երկու դար հնացնում են այդ հուշարձանը։ Եթե սրան ավելացնենք և այն հանգամանքները, որ նախ՝ եկեղեցու ճարտարապետական ոճը ավելի մոտ է XIII դարի վերջի և նույնիսկ XIV դարի առաջին կեսերի ոճին, ապա նաև, որ հիմնական ձևափոխումների և նորոգումների հետքեր չկան բուն կառուցվածքի մեջ, պարզ կդառնա, թե որքան մեծ շփոթություն և դժվարություններ կան այս հուշարձանի ստույգ թվագրման հարցում։

Ամենահին արձանագրությունը, որը բացակայում է հրատարակիչների մոտ, գտնըվում է հուշարձանի արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ.

[Շ]ՆՈՐՀԻՎ ԱՅ ԿԱՄ ԵՂԵՒ ԻՆՋ ՀԵՐԱԿ-ՂԻ ՀԱ/ՎՆՈՒՆՈ ԵՒ ԵՏՈՒ ՋՋՈՐՈՂԱՆ ։Բ։ ԱՐՏ Ի ՍՈ/ՐԲ ԳՐԻԳՈՐ ՀՐԱՄԱՆԱՒ ԳԱԳ-ԿԱ ՇԱՀԱ/ՆՇԱՀԻ, ԵՒ ԳՆԵՑԻ ՋՐ

Ծանոթություն.— 1. Արձանագրության առաջին երեք տողերը գրված են երեսապատման մի շարքի երեք քարերի վրա. վերջին տողը՝ դրանց ներքևի շարքի երկու քարերի վրա. այն հասնում է մինչև հաջորդ քարի եզրը և ընդհատվում։

2. Տառերը հին են, բայց անհամաչափ, մեծ ու փոքր. երկու անգամ փոքրատառ է գործածված՝ առաջին տողում գրված ᵯ

Այ և վերջին տողում՝ գնեցի:

---

[1] Ջալալեանց, *Բ, 128*, Ալիշան, *Սիսական, 46*, Լալաեան. *Գեղարքունիք, 13*, Սմբատեան, *Գեղարքունիք, 407*։

[1] *Կարծում ենք, որ արձանագրության հավաքողներից հնագույնը՝ Ջալալեանը շփոթել և մի այլ վայրի արձանագրությունները վերագրել է այս եկեղեցուն, որից անկյալ մյուսները՝ սխալմունքի մեջ են ընկել։*

Այս արձանագրությունը թեև թվական չունի, բայց Գագիկ Շահնշահի անունը լրացնում է այդ բացը մոտավորապես, քանի որ հայտնի է նրա թագավորության ժամանակը՝ 990—1020 թթ.։ Բացի դրանից այս արձանագրության մեջ հիշատակված Հերակլի անունը պարունակող մի արձանագրություն էլ է գոյություն ունեցել՝ գրված մի խաչքարի վրա և թվագրված։ Այդ խաչքարը գտնվելիս է եղել Նորադուզին մոտ, Նոր Բայազետի ձորամիջի գերեզմանատան մեջ՝ հետևյալ արձանագրությամբ.

Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ/ ՀԱՅՈՑ ։ՆԽԹ։ (= 1000) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ Գ/[ԱԳ]ԿԱ, ԵՍ ՀԱՅՐԱԿՂ ԿԱՆԳՆԵՑԻ Ս/[ՈՒ]ՐԲ ՍԱՐԳԻՍ ՅԱԻ[Գ]ՆԱԿԱՆՈՒԹԻ/[Ւ]Ն ԻՆՋ ԵՒ ԱՄՈՒՍՆԻՆ ԵՒ ՈՐԴԵԱՑՍ ԻՄ. ՈՐ Կ/[ԱՐԴ]Ա, ՋԻՍ ՅԻՇՑէ. ԵՍ ՀԱՐԱԿՂ ԱՋԱՏ /....ԲԱԲԱԹՍ.... Ի ՀՈՂԱՄԱՄՆ ԵՐ..../ .... Ո ՓԱԴ .... ԲԱԶՈՒՄ ՄԵ...[1]։

Մեջբերված այս առաջին խմբի փաստերն ապացուցում են, որ Հուշարձանը, նույն Գ. Լուսավորիչ անունով, գոյություն է ունեցել դեռևս X դարի վերջերում կամ XI դարի սկզբներում։

Հուշարձանի պատերի վրա եղած երկրորդ խմբի շինարարական բնույթի արձանագրությունները վերաբերում են XIII դարի առաջին կեսերին։

Դրանցից առաջինը գտնվում է եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, որտեղ գյուղի առաջնորդ Մխիթարը հայտնում է, որ «կամակից և ազնական եղէ վարդապետին և շինուբեան Սր. Լուսաւոր-չիս»[2] *այս արձանագրությունը թվական չունի, բայց Մխիթարի գրել տված այլ արձանագրությունները, որոնք փորագրված են գյուղի գերեզմանատան մեջ, իրենց տոհմական գերեզմանոցում գտնվող մատուռի և խաչքարերի վրա, ոչ միայն այս եկեղեցու շինության կամ նորոգման մոտավոր ժամանակն են որոշում, այլև Մխիթարի տոհմագրության մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում։ Համաձայն խաչքարի պատվանդանի արձանագրության, Մխիթարը գյուղի առաջնորդ է նշանակվել Զաքարեի իշխանության օրոք՝ Իվանեի հրամանով, հետևաբար դեռ Զաքարեի կենդանության ժամանակ, այն է՝ 1212 թ. առաջ, և իրոք խաչքարերը կանգնեցրել են՝ 1211 թ.*[1]*։ Հավանաբար և եկեղեցու վրա կատարվող աշխատանքները տեղի են ունեցել այս վերջին թվականից հետո։*

Այս շրջանի նորոգումներին վերաբերող երկրորդ արձանագրությունը գտնվում է եկեղեցու հարավային պատի վերին մասում, արտաքուստ՝ սկսած արևմուտքից։ Այն չորս երկար տողերից է բաղկացած, դժբախտաբար կան շատ եղծված տեղեր, որով թվականը ճշտորեն որոշել հնարավոր չէ։

Այստեղ հիշատակված է, որ Իվանեի և Շահնշահի իշխանության ժամանակ, ումն վարդապետ (անունը անվերծանելի) շինել կամ նորոգել է (այդ բառերը նույնպես եղծված) «զաւերեալը եկեղեցիս Նորատուաց»[2]. *արձանագրությունը պիտի վերաբերի XIII դարի երկրորդ տասնամյակին, Զաքարեի մահից հետո (1212) և Իվանեի մահից առաջ,*

---

[1] Թ. Ավդալբեգյան, *Նոր Բայազետի սեպագիրը, «Տեղեկագիր» ՀՍՍՀ Գիտության և Արվեստի ինստիտուտի, № 2, էջ 218, նաև առանձնատիպ, էջ 16։* Մանոր. *Գագիկ թագավորի անվան հիշատակումով մի այլ խաչքար էլ 996 թվականով, գտնվում էր հենց Նորադուզ գյուղի IX դարի ս. Աստվածածին եկեղեցու բակում, որը մենք տեղափոխել ենք Երևան և գտնվում է պետական պատմական թանգարանում, արձանագրությունը տե՛ս* Սմբատեանց, *Գեղարքունիք, էջ 482։*

[2] *Արձանագրությունը տե՛ս* Սմբատեանց, *Գեղարքունի, էջ 87,* Լալաեան, *Ազգ. Հանդ., XVIII, 120։*

[1] Սմբատեան, *էջ 485,* Ալիշան, *Սիսական, 47, Այս արձանագրության մեջ Մխիթարն իրեն անվանում է Փեճուրենց Դավթի որդի, իսկ խաչքարերի մոտ շինված գեղեցիկ մատուռի հյուսիսային պատի վերին մասում գտնվում է արդեն Մխիթարի որդու գրել տված արձանագրությունը, որտեղ սա ևս իրեն հայտարարում է* «Առաջնորդ մեծանուշակ գիւղիս Նորատուաց».

Դժբախտաբար արձանագրության սկզբից քարեր են թափվել և կորել, որով անհայտացել է և՛ ստույգ թվականը, և՛ Մխիթարի որդու անունը։ Մի բան պարզ է, որ Փեճուրենց տոհմը առնվազն երեք սերունդով առաջնորդներ են եղել գյուղին, Զաքարյանների կողմից նշանակված։ Արձանագրության բոլոր հրատարակիչները փոխանակ ՈՐԴԻ ՄԽԻԹԱՐԱ, վերծանել են ՈՐԴԻ ՄԽԻԹԱՐՍ, որով շփոթվել է սրանց տոհմագրությունը։

[2] Սմբատեան, *Գեղարքունիք, էջ 486։*

որի մահվան թվականը համարում են 1227—1234 թվականների միջև[1]:

Մի չհրատարակված արձանագրություն էլ կա Հուշարձանի հյուսիսային պատի վերին մասի արևմտյան անկյունում, արտաքուստ, որը նույնպես շինարարությանը օգնելու ակնարկ է պարունակում.

ԵՍ ԽՈՅՏԱՆ ԴԷՄԵԹԱՐՍ ՆՈՐ/ԱՏՎԱԾ՝ ԱՒԳՆԱԿԱՆ ԵՂԷ ՍԲ ԳՐԻԳՈՐ/ԻՍ ԸՆՁԱՒՔ ԻՄԱՒՔ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՍ/ ՍԱՀՄԱՆԵՑ ԻՆՁ Ի ՏԱՐԻՆ :Բ: ԱՒՐ/ Ի ԳԻՒՏ ԽԱՉԻՆ. ՄԻՆՆ ԻՆՁ ԵՒ :Ա:—ՆՆ ԿԵ/ՆԱԿՑԻՆ ԻՄ (Ք(Ր)ԻՍՏՈՆԷԻՆ. ԿԱՏԱՐ/ԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՑ ՄԵՐՈՑ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՑ.

Այս անթվական արձանագրության մոտավոր տարիները որոշվում են մի այլ թերի արձանագրությամբ, որը գրված է կրկին գյուղամիջի գերեզմանատան մի մեծ ու գեղեցիկ խաչքարի պատվանդանին.

1 Ի Թ/ՎԻ/Ս :ՈՀԴ: ԵՍ ԽՈ(Յ)ԴԱՆ
2 :Ե: ԱՄ ԴԵՄԵԹԱՐ ԿԱՑԻ
3. ՆՈՐ [ԱՏՈՒԱՑ][2]:

Մեջ բերված այս տեղեկություններով վերջանում է Հուշարձանի կյանքի՝ Զաքարյան շրջանի հետ կապված վերանորոգման աշխատանքների պատմությունը:

Մի վերջին և ընդարձակ արձանագրություն, որը գրված է եկեղեցու հարավային պատի կենտրոնում, ներքուստ, արդեն վերաբերում է Օրբելյան տոհմի տիրապետության շրջանին.

«Պարոնութեան իշխանին Հայոց Բուրթելին» և նրա զավակներ Բեշքենի և Իվանիկա հիշատակումով, 1344 թվականին. ոմն Ավագ կամակից է եղել վանքի շինությանը և նվիրել է նրան Նորատվաց ջրի վրայի իր գնած ջրաղացի մի ակը[3]:

Այս ամբողջ շարք տեղեկությունների մեջ, ինչպես տեսանք, որոշակի՝ նորոգումների մասին չի խոսվում, այլ շինարարության. պարզ է, որ այս բոլոր դեպքերում միշտ հիմնովին չի քանդվել և ի նորո շինվել Հուշարձանը. շինել բայը շատ հաճախ նորոգել իմաստով է գործածվել միջնադարում, այդ ակնհայտ փաստ է և մենք չենք ուզում ծանրաբեռնել ընթերցողի հիշողությունը կողմնակի փաստերի մեջբերումով: Մի բան պարզ է սակայն, որ այս Հուշարձանի մասին եղած առաջին տեղեկություններն անգամ, որ վերաբերում են X դարի վերջին և XI դարի սկզբին, նույնպես չեն կարող Հուշարձանի հիմնադրմանը վերաբերել, այլ ձևափոխմանը միայն:

Ներկա գմբեթավոր շենքը ձևափոխված է մի ավելի հին, թաղածածկ, միանավ և փոքր բազիլիկայից, դրա ապացույցն այն է նախ, որ այդ բազիլիկ շենքի վրա գմբեթ շինելու ժամանակ հին պատերին կից, առանց նրանց հետ կապելու, շարել են գմբեթակիր մույթեր[1], և երկրորդ, Հուշարձանի երկու կողքերին պահպանվել են հնուց մնացած երկու թաղածածկ խորաններ, որոնք նույնպես չեն կապվում ներկա շենքի հետ: Եթե ընդունենք, որ XI դարի սկզբից մեզ հասած տեղեկությունները վերաբերում են այս հիմնական ձևափոխմանը, որը ամենահավանականն է, քանի որ այդ շրջանում էր մեծ ծավալ ստացել նման սովորությունը, ապա պարզ կդառնա, որ նախ՝ այս Հուշարձանի իրական հիմնադրումը XI դարից շատ առաջ է եղել, և ապա. որ XI դարից հետո եղած բոլոր մյուս շինարարական տեղեկությունները վերաբերում են այս կամ այն չափի վերանորոգման աշխատանքներին միայն: Հետագա այս աշխատանքների մեջ էլ, ըստ մեր դիտողությունների, ամենաէականը պետք է վերջինը, այսինքն 1344 թ. կատարվածը լինի և այն վերաբերում է, հավանաբար, շենքի վերին մասերին և հատկապես գմբեթին, քանի որ վերջինս իր թմբուկի գլանաձևությամբ և մանավանդ, անսովոր բարձրությամբ՝ ընդհանուր շենքի համեմատությամբ՝ հատուկ է XIV դարի ոճին:

---

1 Միայն Զաքարեի մահվանից հետո Իվանեի կողքին կարող էր Շահնշահի անունը հիշատակվել իր հոր փոխարեն և այն էլ երբ Շահնշահը հասուն լիներ (ծնվել է 1207 թ.):

2 Այս Խոյդանը Փենուրանց տոհմից չէ, որոնց գերեզմանոցը գտնվում է Փենուրանցից զատ, վերջիններս գետի արևմուտք և բաղկացած է մի շարք խաչքարերից և տապանաքարերից:

3 Ջալալեանց, Բ, 128: Ալիշան, Սիսական, 47, Ամրատեան, Գեղարքունի, 486: Լալաեան, Ազգ. Հանդ., XVIII, 119, բոլոր հրատարակիչների մոտ էլ, սխալ վերծանման հետևանքով գրված է «մեկ ջրաղաց», իրականում գրված է. «Ա: ակն ջաղացն»:

1 Н. М. Токарский, Архитектура Древней Армении, Ереван, 1946, стр. 185.

Այժմ վերադառնանք Խաչատուր քարգործի ապրած ժամանակին և կատարած դերին։

Ճարտարապետ Խաչատուրը իր անվան հիշատակության համար շինել է մի փոքր, համարյա քառակուսի, հուշարձանի երեսպատման քարերի մեծության, խաչքար և այն ագուցել է արևելյան պատի մեջ ներսում, բեմի կիսաշրջան պատի կենտրոնում գտնվող պատուհանի մոտ՝ հարավից։ Քարի կենտրոնում հավասարաթև խաչ է, որի չորս թևերը վերջանում են մի զույգ գնդիկներով, շրջանակներին զարդերի փոխարեն, վերից վար, գրված է հետևյալը.

ԽԱՉ ԱՏՈ
Ք ԻՐ
ՅԻ = Խաչատուր քարգ(ործ) յիշ(ե)ա.
Ա
ՐԳ ՇԱ

Խաչատուր քարգործի դերն այս հուշարձանի կյանքում համարում ենք նրա՝ բազիլիկ շենքից գմբեթավորի ձևափոխելու մեջ. նկատի ունենալով հետևյալ հանգամանքները.

Ա. Խաչատուրի հիշատակարան-խաչքարը ագուցված է շենքի արևելյան պատի կենտրոնում, կիսակամար պատի մեջ։ Բեմի այդ մասը շինված է անպայման շենքը գմբեթակիր դարձնելու ժամանակ, ավելի հին հետքեր պատի այդ մասում չկան, հետևաբար բազիլիկ շենքի կառուցման ժամանակին չի կարող վերաբերել։ Այդ մասի վրա չկան նաև ավելի նոր, XIII և հետագա դարերի նորոգումների նշաններ, պետք ավելացնենք նաև այն կարևոր հանգամանքը, որ մեր հին հուշարձանների դիտումները ցույց են տալիս, որ ժամանակի ավերումներից ավելի քիչ են տուժել հյուսիսային և արևելյան պատերը։

Բ. Խաչատուրի հիշատակարան-խաչքարի վրա խաչը հավասարաթև է, թևերից ծայրերին ունի լայն բացվածքներ, որոնք վերջանում են կլոր գնդիկներով. այս երևույթները հատուկ են առանձնապես հնագույն խաչքարերին։

Գ. Խաչատուր քարգործի հիշատակարանի այսպիսի աչքի ընկնող վայրում՝ բեմի կենտրոնական մասում, տեղադրման հանգամանքը ցույց է տալիս հուշարձանի համար նրա կատարած նշանավոր աշխատանքը, որը և նրան այդ արտոնությունն է տվել։

Այս բոլորի հիման վրա, կարծում ենք, որ Խաչատուր քարգործը X դարի վերջին կամ XI դարի առաջին տարիներում բազիլիկ շենքը գմբեթավորի ձևափոխող մեր նշանավոր ճարտարապետներից մեկն է, որի անունը մինչև օրս մնացել էր անհայտության մեջ (ալբոմ, նկ. 9)։

8. ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏ)

ԺԲ. դար.

Իջևանի շրջանի Ուզունթալա գյուղից երեք կիլոմետր հարավ-արևմուտք, անտառի խորքում գտնվում է Սրվեղի վանքը։ Հուշարձանների այս խումբը բաղկացած է երկու եկեղեցիներից և օժանդակ շենքերից, բոլորն առնված պարսպի մեջ, իսկ պարսպից դուրս գտնվում են գյուղատեղի ավերակներ։

Վանքի գլխավոր եկեղեցին կոչվում է ս. Նշան. այն շինված է ստորին մասում քարից, իսկ վերևի մասում՝ թրծած աղյուսից, նույն ձևով և գմբեթը։

Հուշարձանի ներսում, հյուսիսային պատի վրա, մկրտության ավազանի մոտ ագուցված քարի վրա գրված է շինարարական արձանագրությունը, որի մեջ հիշատակված է նաև ճարտարապետի անունը։

ԹՒԻ: ՈԱ: (=1152 թ.)

Ես Արտաւազ և Սարգիս շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննիսի...[1]։

Հովհաննես ճարտարապետը նշանավոր է նրանով, որ շինել է հնագույն և սակավաթիվ աղյուսաշեն հուշարձաններից մեկը։

9. ԺԱՄՀԱՅՐ ՇԻՆՈՂ

Այս նշանավոր ճարտարապետը գործել է Սանահնի վանքում և մեծ երախտիք ունի այդ նշանավոր հուշարձանների խմբի կառուցման գործում։

Ինչպես հայտնի է, Սանահնի վանքի հիմնադրումը (գոնե ներկայումս կանգուն շենքերի) կապվում է Բյուզանդիայի հայ հոգևորականների դեմ հարուցած դավանական հալածանքների և նրանցից ոմանց Հայաստան փախչելու և այստեղ մի շարք վանքեր հիմնելու պատմական դեպքերի հետ, 10-րդ դարում, Ռոմանոս Ա. կայսեր ժամանակ։

[1] Բարխուդարեանց, Արցախ, 340։

Վանքի հուշարձանների խմբի մեջ իր մեծությամբ նշանավորն է Ամենափրկիչ եկեղեցին, որը կառուցված է 966 թ. Բագրատունյաց Աշոտ Ողորմած թագավորի կին Խոսրովանուշի ջանքերով՝ իր ամուսնու օժանդակությամբ, իրենց որդիներ Գուրգենի, Սմբատի և Գագիկի արևշատության համար։

Դրսից երկարավուն քառանկյունի և ներսից խաչաձև ու գմբեթավոր շենք է սա, որի արևելյան պատի վերին մասում գտնվում են երկու մարդկանց բարձրաքանդակները, իրենց ձեռքում բռնած եկեղեցու քարե կաղապարը։ Դրանցից մեկի գլխին գրված է՝ ԿԻՒՐԻԿԷ ԹԱԳԱՒՈՐ և մյուսին՝ ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ. սրանք Աշոտ Ողորմածի և Խոսրովանուշի որդիներն են։

Շինության ժամանակից մոտ 215 տարի անց, այս հուշարձանը կարիք է ունեցել լուրջ վերանորոգումների, դրան զուգընթաց, նրա արևմտյան կողմում շինվել է նաև մի գեղեցիկ ժամատուն գավիթ, ահա այդ վերանորոգումների և նոր շինարարության ղեկավարի դերում հանդես է գալիս Ժամհայր ճարտարապետը։

XII դարի վերջին, երբ կատարվում էին այս աշխատանքները, Սանահնի վանքը գտնվում էր ծաղկման շրջանում, վանքին հովանավորում էին պատմական և գրական-կուլտուրական նշանավոր անձնավորություններ, դրանցից էին Ամիր Քուրդ իշխանը և նշանավոր մտավորական ու կուլտուրական գործիչ Գրիգոր վարդապետ Տուտեորդին։ Վանքի առաջնորդն էր այդ ժամանակ Հովհաննեսը։

Ամենափրկիչ եկեղեցու այդ ժամանակվա վերանորոգված մասերն են համարվում գմբեթն ամբողջովին, ծածկի սալաքարերի փոխարինումը, բոլոր կողմերի քիվերի վերացումը և թափված երեսապատման քարերի լրացումը[1]։

Այս նորոգումներին զուգընթաց, ինչպես ասացինք, հիմքից շինվել է նրա արևմուտքում մի մեծ գավիթ։ Նորաշեն այս գավթի շինությանն օժանդակել են բացի վերը նշված անձնավորություններից նաև Կյուրիկե Բ թագավորի աղջիկներն ու ազգականները. այս մեծաշուք անձնավորությունների նյութական առատ օժանդակությունն ու բարոյական նըպաստը հիմք են հանդիսացել Ժամհայր ճարտարապետի համար՝ ստեղծագործելու մի գեղեցիկ հուշարձան։

Այս գավիթը շինված է բազալտից, մաքուր սրբատաշ, երեսապատման քարերի շատ կանոնավոր շարվածքով և կարերի խնամքոտ միակցումներով։ Սովորականի նման քառանկյունի շենք է արտաքուստ. ներքուստ մի փառահեղ դահլիճ է, չորս հաստահեղույս և գեղեցիկ սյուներով զարդարված, որոնք կրում են բուն գմբեթը կենտրոնական լուսանցքով։ Սյուների պատվանդաններն ու խոյակները զարդարված են գեղեցիկ քանդակներով։ Այստեղ Ժամհայր ճարտարապետը գործադրել է իր ողջ շնորհքը և նրա կառուցած գավիթը ժամանակակիցների մեջ փայլում է իր ներքին ամբողջությամբ, լուսավոր ու գեղեցիկ ձևավորմամբ, կենտրոնական սյուների ու նրանց միացնող կամարների սլացիկ ներդաշնակությամբ և ուժեղ գծերով զարդաքանդակների ճաշակավոր և գեղեցիկ տեղադրմամբ[1]։

Ժամհայր տաղանդավոր ճարտարապետի կառուցած և վերանորոգած հուշարձանների հովանավորողները գնահատել են նրա աշխատությունները ժամանակի սովորությամբ. վանքի բոլոր եկեղեցիներում Աստվածածնի ավետման տոնի օրը նրան են հատկացրել։

Ժամհայր ճարտարապետի կատարած դերի և վարձատրության վերաբերող արձանագրությունը փորագրված է նրա կառուցած գավթի հյուսիս-արևելյան որմնասյան կամարի վրա, դեպի եկեղեցին տանող մուտքի հյուսիսային կողմը.

1 ԱԾԱԾՆԻՆ ԱՒԵՏԵ(Ա)Ց
2 ՏԱՒՆՆ ԱՄԵՆԱՅՆ Ե-
3 ԿԵՂԵՑԻՔՍ ԺԱՄՀԱՒՐՆ
4 Է, ՇԻՆՈՂԻ ԳԱՒԹԻՍ, ԱՆ-
5 ԽԱՓԱՆ. ԵՒ ՈՐ ԽԱՓԱՆ-
6 Է, ԴԱՏԻ Ի ՏԷ ԱԾ ԱՄԷՆ[2]։

1 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, 1957, Երևան, էջ 27։

1 Մանրամասն նկարագրությունը, լուսանկարներն ու չափագրությունները տե՛ս С. М. Мнацаканян. Архитектура армянских притворов, Ереван, 1952 և Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957։

2 Ջալալեանց, Ա, 17, ուր Ժամհաւրն անվան փոխարեն վերծանել է ժամ առնեն, որով կորել է ճարտարապետի անունը և դերը։ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, 116, ուր ճիշտ վերծանելով նախորդի աղավաղած մասը, վերականգնում է այս նշանավոր վարպետի անունն ու դերը։

Այն ժամանակ, երբ ժամհայրը նորոգումներ և ի նորո կառուցումներ էր անում Սանահնում, այնտեղ կային և այլ նշանավոր քարգործներ, որոնցից երկուսի անունը պահպանվել է արդեն վերևում հիշատակված Գրիգոր Տուտեորդու պատվերով իր համար շինված և կանգնեցված խաչքարի թիկունքին, դրանք են՝ Մխիթարիչ կազմողը և նրա գործակից Ավետիսը։ Պետք է ենթադրել, որ այդ երկու նշանավոր քարգործները նույնպես մասնակցած կլինեն շինարարության աշխատանքներին որպես զարդաքանդակող լավագույն վարպետներ[1]։

10. 11. ՄԽԻԹԱՐ ՀՅՈՒՍՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Այս նշանավոր ճարտարապետի ձեռագործն են Գոշավանքի հուշարձանների խըմբի մեծագույն մասը։ Ինչպես հայտնի է, Գոշավանքը հիմնադրվել է Մխիթար Գոշի ձեռքով 1188 թ. երկրաշարժի հետևանքով Կայեն գավառի Գետիկ վանքն ավերվելուց հետո։

Նոր Գետիկում կամ Գոշավանքում շինված առաջին եկեղեցին փայտաշեն էր։ Այս եկեղեցու շինության համար, բնականաբար, հրավիրվելու էր հյուսն-ատաղձագործ. ինչպես երևում է, նախօրոք արդեն վարպետ հյուսնի համբավ ուներ Մխիթարը և այդ պատճառով էլ նրան է հանձնվում այդ եկեղեցու կառուցման գործը։ Հետագայում, երբ Մխիթար հյուսնը արդեն քարաշեն եկեղեցիներ էր կառուցում, այնուամենայնիվ, այդ կոչումը մնում է սերտորեն կապված նրա անվան հետ։ Մխիթար հյուսն են կոչում նրան ոչ միայն ուրիշները, ինչպես և նրան ժամանակակից Կիրակոս Գանձակեցին, այլև, ինքը, Մխիթարը իրեն հյուսն մականունով է հիշատակում իր գրած արձանագրության մեջ։

Գոշավանքում Մխիթար հյուսնի շինած այդ առաջին եկեղեցին, բնականաբար, մինչև մեր օրերը չի մնացել, բայց նրա մասին պատմիչ Կիրակոս Գանձակեցին, որը Գոշավանքի սաներից է և տեսել է այդ փայտակերտ եկեղեցին՝ գովեստով է խոսում.

«Եւ շինեցին եկեղեցի մի գեղեցկաշէն փայտակերտ»։ Այս եկեղեցուն հաջորդում է մի փոքր քարաշեն եկեղեցու շինությունը, որից հետո, անմիջապես, 1191 թ. հիմնարկվում է Գոշավանքի ամենամեծ և ճարտարապետական տեսակետից ամենակարևոր հուշարձանը, ս. Աստվածածնի եկեղեցին, որի շինությունը տևում է հինգ տարի, 1191—1196 թվականը։

Այս եկեղեցու շինարարական արձանագրությունը գտնվում է հյուսիսային խորանի ճակատին։ Մխիթար հյուսնի հետ կապված մանրամասնությունները ճշտելու համար, այն ամբողջությամբ մեջ ենք բերում։

ԻՈԽ (1191 Թ.) ՉԿՆԻ Դ ԱՄԱՑ ԱՌՆԼՌ ՉԵՐՈՒՍԱՂԷՄ ՍԱԼԱՀԱԴՆԻՆ| ՍԿՍԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՍ ՍՈՒՐԲ Ի ՆՈՐՈ ԳԵՏԻԿ ԵՒ ԿԱՏԱՐԻ| ՅԱՄՍ Ե. Ի ԽԱՆԳԱՐ ՁԱՏԿԻՆ ՅՈՒՆԱՑ ՋԵՌԱՄԲ| ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԽԻԹԱՐԱ Ի ՀԱՅՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՆԱ ՁԵՌՆՏՈՒԹԵԱՄԲ| ԲԱՐԵՊ|ԱՇՏ ԻՇԽԱՆԻ ՎԱԽՏԱՆԿԱ.......[1]։

Մեր ընդհանուր դրույթից ելնելով, այսինքն, որ եթե արձանագրության մեջ հայտնի են մեկենասի և վանահոր անունները, այդ դեպքում «ձեռամբ» բառը պիտի վերաբերի ճարտարապետին, այս արձանագրության վերաբերյալ կարող է գործածվել առայժմ վերապահորեն, մինչև տեղում ստուգում կատարելը։ Խնդիրն այն է, որ Գոշ Մխիթարի և հյուսն Մխիթարի անունների նույնությունը դժվարացնում է ներկա դեպքում արձանագրության մեջ «ձեռամբ վարդապետին Մխիթարա» դարձվածքը դրանցից որևէ մեկին հատկացնելու խնդիրը։ Արձանագրության մեջ որպես վանահայր թեև հիշատակված է Վարդանի անունը, բայց Մխիթար Գոշը դեռևս կենդանի էր և նրա հեղինակությունն, ինչպես հայտնի է, այնքան բարձր էր որպես վանքի հիմնադիր, իր ժամանակի ականավոր գիտուն և հասարակական գործիչ, որ կարող էր արձանագրության մեջ տեղ գտնել և վանահորից էլ առաջ[2]։

---

1 Տե՛ս այս աշխատության «Քանդակազարդող վարպետներ» բաժնի Մխիթարիչ և Ավետիս մասը։

1 Մեջ ենք բերում Հ. Ջանփոլադյանի «Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը» աշխատությունից, էջ 157—158, որը ակադ. Հ. Օրբելու ընդօրինակածն է։ Հրատարակել են նաև Ջալալեանց, Ա, 140. Սմբատեանց. Գեղարքունի, 173։ Շահխաթունեանց, Բ, 367։ Բարխուդարեանց, Արցախ, 350։ Кучук-Иоаннисов. „Др. Вост“, I, VI, 38։ Կոստանյան, Վիմական Տարեգիր, 38։ Սպանդիարեան, «Մշակ», 1911, № 16, 17, 18։ Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա։

2 Հ. Ջանփոլադյան, Անդ, էջ 139։ Ի. Հարությունյան, Ազգ. Հանդ., X, էջ 26։

Այնուամենայնիվ, միայն այս արձանագրության հիման վրա չէ, որ մենք Գոշավանքի այս կարևորագույն հուշարձանը Մխիթար հյուսնի ձեռագործն ենք համարում։ Բարեբախտաբար Մխիթար հյուսնը եկեղեցու ներսում գրել է իր սեփական արձանագրությունը, որը ամեն կասկած փարատում է. ահա այդ արձանագրությունը.

ՅԱԻՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅՆ Ի Ս̅Ր̅Բ. ՍԵՂԱՆՆ/ ՊԱՏԱՐԱԳՆ ՀԻՍԱՆՆ Է ՄԽԻԹԱՐԱՅ, ԽԱՓԱՆՈՂՔՆ/ ԴԱՏԱՊԱՐՏԻՆ ՏԱԼ Ի ՏԱՆՋԱՆՍՆ[1]։

Ինչպես երևում է, Մխիթար հյուսնը այս կենտրոնական տաճարի կառուցումից հետո այնպիսի հեղինակություն է ձեռք բերել, որ նրան արձանագրության տեղ է հատկացվել մայր տաճարի ներսում և պատարագ տրվել ավագ խորանում։ Նման իրավունքը միայն, վանքի կողմից էր վաճառվում, այս դեպքում վաճառքի սովորական ձևը չկա. ուրեմն Մխիթար հյուսնը այն ստացել է որպես հատուցում և քաջալերություն իր աշխատանքի։

Հաջորդ մեծ կոթողը, Մխիթար հյուսնի ձեռագործը՝ ս. Աստվածածնի արևմուտքից կառուցված փառավոր գավիթն է, մեկն իր տեսակի շենքերի լավագույն նմուշներից։ Թեև գավթի մասին շինարարական արձանագրություն չկա փորագրված, բայց Կ. Գանձակեցու նկարագրությունից պարզ երևում է, որ այն կառուցվել է ս. Աստվածածին տաճարից անմիջապես հետո. «Վասն շինութեան վանաց Նորն Գետկայ» գլխում Գոշի շինարարությունն է նկարագրվում և թվում է հաջորդաբար նրա կենդանության ժամանակ կատարված կառուցումները հետևյալ կարգով. «Եւ շինեցին եկեղեցի մի գեղեցկաշէն փայտակերտ. և օծեալ կնքեցաւ յանուն սուրբ Լուսաւորչին Գրիգորի», որի օծման հանդեսը նկարագրելուց հետո անմիջապես «Շինեցին ի Նորն Գետկ՝ փոքրագոյն եկեղեցի մի յանուն սուրբ Կարապետին Յովհաննու, ...ի գլուխ վանիցն. և ապա սկսաւ հիմն արկանել մեծափառ եկեղեցւոյն կոփածոյ վիմօք և գեղեցկաշեն արուեստիւ գմբեթայարդ երկնանման, սխրալի տեսողաց». սա գլխավոր եկեղեցին է՝ ս. Աստվածածինը, որին հաջորդում է Գանձակեցու նույն գլխի մեջ.

1 Հ. Ջանփոլադյան, Անդ, էջ 139։ Ի. Հարությունյան, Ազգ. Հանդ., X, էջ 26։

«Շինեցաւ եւ գաւիթն եկեղեցւոյն գեղեցկազարդ և կոփածոյ վիմօք». դրանից հետո՝ «շինեցին և այլ մատուռս յանուն սրբոց առաքելոց և սրբոյն Հռիփսիմեայ». և ապա՝ «Եւ ինքն քանզի սիրէր զանապատ եւ զմայնութիւն, արար իւր տուն բնակութեան բացագոյն ի վանացն. շինեաց և անդ փոքրագոյն եկեղեցի մի փայտակերտ յանուն սուրբ Հոգոյն» ու վերջապես «ի ժամանակի ծերութեանն՝ ի գլուխ վանիցն յաջմէ կողմանէ շինեաց եկեղեցի մի՝ շիրիմ գերեզմանի իւրոյ, կրով և վիմօք մածուցեալ սրբագործ, յանուն Համբարձմանն Քրիստոսի»[1]։

Հետևելով Կ. Գանձակեցու ցուցակի կարգին, պարզորեն երևում է, որ գավիթը շինվել է Աստվածածին եկեղեցուց անմիջապես հետո, այսինքն 1197-ից սկսած։

Գավթի շինությամբ Մխիթար հյուսնի հեղինակությունն ավելի է բարձրանում, և նա իրավունք է համարում իր անունից սեփական հիշատակարան-արձանագրություն փորագրել նաև գավթի ներսի հյուսիսային կամարներից մեկի վրա, որի մեջ իր կյանքի և գործունեության համառոտ ամփոփումն է տալիս, միաժամանակ իրեն ծեր մարդ է համարում։

ԵՍ ՄԽԻԹԱՐ ՀԻՍՆ ՄԻԱՅԲԱՆ ԵԻ ԱՇԽԱՏՈՂ ԱՅՍ/ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ի ՄԱՆԿՈՒԹԵՆԷ ՄԻՆՉ Ի ԾԵՐՈՒԹԻԻՆ/ ՇԻՆԵՑԻ ՋՏՈՒՆՍ ԱՂԱԻԹԻՑ.

...ԻՄՈՎ ՈՐԴԻԱՑԵԼՈՎՍ ՅՈՀԱՆԻՍԻԻ ԵԻ/ ՍՏԱՑԱՅ ԻՆՋ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԻՈՐ Բ. ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ/ ԿԱՄԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԱՆՆ ԱՌԱՋԻ ՔՐԻՍՏՈՍԻ/ .....ԷՏԱՑՍ ԵԻ ՄԻԱՑԲԱՆ ՈԻԽՏԻՍ ՄԻ ԱԻՐ ՄԽԻԹԱՐԱ/ ԵԻ ՄԻ ԱԻՐ ՅՈՎՀԱՆԻՍԻ ԽԱՉ ԳՈԻՏԻՆ ՏԱԻՆԻՆ։ ՈՎ ՋՄԵՐ/ ՅԻՇԱՏԱԿՍ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ՊԱՐՏ(ԱԿԱՆ Է)[2]։

Գանձակեցու ցանկի թված, Մ. Գոշի կենդանության ժամանակ շինված, այս մատուռները նույնպես կանգուն են ս. Ա̅ծածնի հարավային մասում։ Այս հուշարձաններից մեկի վրա ևս մնացել է Մխիթար հյուսնի անվան հիշատակությունը։ Դա Հռիփսիմեի մատուռն է, գլխավոր տաճարի՝ ս. Աստվածածնի հարավային պատին կից, որի մուտքի

1 Կ. Գանձակեցի, Գլուխ ԺԲ։

2 Հ. Ջանփոլադյան, Անդ, էջ 161—162. մենք մեջ ենք բերում Ջանփոլադյանից, որովհետև նրա հրատարակածները ամենից վստահելին են — Ս. Բ.։

ճակատին գրված արձանագրության մեջ ասված է, որ մատուռը շինված է 1208 թ. Սերոբի և Ովասաբի միջոցներով և «ի ձեռն Մխիթարա»։

Նույն 1208 թվականն կրող մի այլ արձանագրված քար կա ընկած ս. Գրիգոր կոչվող Թաղակալ եկեղեցու արևելյան պատի տակ, սրբատաշ քարերի կույտի մեջ, որն ըստ Ի. Հարությունյանի՝ այդտեղ գտնվող կիսավեր մատուռի մուտքի ճակատի քարը պիտի լինի։ Այդ արձանագրության մեջ նույնպես հիշատակվում է ճարտարապետ Մխիթարի անունը։

Ի ԹՎ. ՈԾԷ ՀԱՅՈՑ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՍԵՐՈՎԲՍ, ՄԻՍԱՔՍ/ Ի ՁԵՌՆ.... ՄԽԻԹԱՐԱՅ Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻՒՆ/ ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ....[1]։

Գոշի կենդանության ժամանակ շինված մյուս շենքերը մեծ մասամբ արդեն ավերակներ են կամ խպառ անհետացած և, հետևաբար, Մխիթար հյուսնի անվան հետքերը չեն պահել։

Մխիթար ճարտարապետի ստեղծագործ աշխատանքը չի ընդհատվել, սակայն, Մ. Գոշի մահվամբ։ Մ. Գոշի կողմից նշանակված երիտասարդ վանահայր Մարտիրոսը՝ համաձայն Կ. Գանձակեցու վկայության՝ շարունակել է նույն եռանդով կատարել շինարարական նոր գործեր, և այդ աշխատանքներում նրա ճարտարապետը եղել է դարձյալ Մխիթար հյուսնը.

«Փառաւորեցաւ վանքն և հռչակաւոր եղև անուամբ սուրբ վարդապետին, և իմաստութեամբ Մարտիրոսի առաջնորդի, քանզի այր շինարար էր՝ շինեաց այլ ժամատուն անտաշ վիմօք, մածուցեալ կրովք, հաստահեղոյս որմօք և փայտակերտ վերնահարկօք, որ յետ ժամանակաց փլաւ վերնահարկն. շինեաց և վերնատուն մի գեղեցկաշէն յարկօք, արուեստաւոր ունելով զհիւսն Մխիթար, որ ի բազում իրս աշխատ եղև եկեղեցեաց և վանից», ապա՝ «Սկսան շինել և եկեղեցի մի եօթն խորանօք, կոփածոյ և տաշած վիմօք, զմբեթաւոր և գեղեցիկ շինուածովք»[2]։ Ըստ Գանձակեցու Խորասանի սուլթան Ջալալեդդինի արշավանքների պատճառով եկեղեցու կառուցումը մնում է թերի և ավարտվում միայն 1231 թ.՝ համաձայն արձանագրության, Մխիթարի ձեռքով՝ թե ոչ, անհայտ է։

Հանձին այս նշանավոր ճարտարապետի, մենք ունենք XII դարի վերջի և XIII դարի սկզբի մի խոշոր վարպետ, որի ձեռագործների մեծ մասը մինչև օրս մնացել են կանգուն և վկայում են նրա տաղանդի մեծությունն ու թափը։

Մխիթար հյուսնը միաժամանակ այն երջանիկ վարպետներից է, որի անվան հիշատակությունը մնացել է թե՛ իր ձեռագործ հուշարձանների վրա և թե՛ Գանձակեցու մոտ։ Սա մի երջանիկ բացառություն է, որը մեր կարծիքով իր առանձին պատճառներն ունի. կարծում ենք, որ հիմնական պատճառը պետք է փնտրել այն կուլտուրական միջավայրի մեջ, որն իր վրա ուժեղ կերպով կրում էր Մխիթար Գոշի անձնականության կնիքը։ Մ. Գոշը իր ժամանակի ամենազարգացած, բարձր կուլտուրայի տեր անձնավորություն էր, և իր այդ հատկությունների շնորհիվ ստեղծել էր գիտության ու կուլտուրայի ծաղկած մի դպրոց, աշակերտների և հետևորդների մեջ սերմանել էր հարգանք ու սեր հանդեպ գիտության ու կուլտուրայի մշակները։ Այս միջավայրում Մխիթար հյուսնը սիրվել ու գնահատվել է որպես կուլտուրայի տաղանդավոր գործիչ-ճարտարապետ։ Այդ իսկ պատճառով էլ նա չի քաշվել իր անունը փորագրել ձեռագործ հուշարձանների վրա և մեկենասներն էլ պատիվ են համարել իրենց արձանագրություններում հպարտությամբ հիշատակել նրա անունը։

Այդ միջավայրում Մխիթարը չի դիտվել որպես սովորական մի քարտաշ կամ որմնադիր, այլ որպես կարևոր դեմք, վարպետ արվեստավոր։ Կ. Գանձակեցին նկարագրելով Մարտիրոս վանահոր շինարարությունը՝ գրում է. «արուեստաւոր ունելով զհիւսն Մխիթար, որ ի բազում իրս աշխատ եղեւ եկեղեցեաց և վանից»[1]։

Այս միջավայրի արդյունք է նաև այն հանգամանքը, որ Գոշավանքի արձանագրություններում այնքան հաճախ երևան են գալիս նաև խնդրանքները՝ հիշելու բանվոր-աշխատավորներին։

---

1 «Ազգագրական Հանդէս», X, էջ 33։

2 Կ. Գանձակեցի, Անդ, 115։

1 Կ. Գանձակեցի, Անդ, 115։

Մխիթար Հյուսնը անշուշտ ունեցել է իր գործակիցներն ու աշակերտները. նրանցից մեկի անունը հիշատակված է Մխիթարի արձանագրության մեջ։ Ինչպես Մխիթարը գնահատվել է շրջապատի կողմից, այնպես էլ ինքը գնահատել է իր աշակերտին՝ Հովհաննեսին, որին որդեգրել է և իր ստացած երկու պատարագներից մեկը նրան հատկացրել։ Նա համեստորեն գրում է արձանագրության մեջ, որ իր կառուցած բազմաթիվ հուշարձանները շինել է «փմով որդիացելովս Յոհաննիսիւ»։

Հատկապես Հովհաննեսի ձեռքով կառուցած հուշարձան երևան չի գալիս Գոշավանքում, ոչ Մխիթար Հյուսնի օրոք և ոչ էլ հետագայում. հավանաբար ժամանակը սրբել է նրա հետքերը. բայց անկասկած է, որ նա է շարունակել Գոշավանքում իր տաղանդավոր վարպետի գործը։

Գոշավանքի ներկայումս կանգուն շենքերի մեծագույն մասն, այսպիսով, Մխիթար Հյուսնի ստեղծագործություններն են, իր աշակերտ և գլխավոր օգնական Հովհաննեսի գործակցությամբ։ Հաջորդ դարում շինվածների ճարտարապետների մասին նույնպես տեղեկություններ կան, որոնց մասին իրենց տեղում։ Մխիթար Հյուսնի ստեղծագործ կյանքի 20 տարիներն (1188—1208) անմահացել են Գոշավանքի հուշարձանների փայլուն խմբի մեջ։ Այդ հուշարձաններն այլևս «անհայտ հեղինակի» գործեր չեն, և դրանցով նրանց թե՛ ուսումնասիրությունն է հեշտանում և թե՛ արժեքը բարձրանում (տե՛ս նկ. 10, 11)։

12. ԶՈՒՆԴԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

ԺԴ. դար.

Լենինգրադի Ասիական թանգարանում գտնվում է հայերեն արձանագրված մի քար։

Հայտնի Գ. Վ. Աբիխը իր շրջագայությունների ժամանակ Անիի պարիսպների տակ հանդիպում է հայերեն արձանագրությամբ մի մեծ քարի, որի մասին նա հայտնում է ակադ. Բրոսեին։ Վերջինս որոշում է այն տեղափոխել Լենինգրադ, բայց քանի որ այդ հնարավոր չէր, ապա նա տախտակաձև ողոցում է միայն արձանագրված մասը և այդպես փոխադրում, շատ չանցած նա հրատարակում է այն սխալաշատ վերծանումներով։

1910 թ. ակադ. Մառը զբաղվում է այդ արձանագրությամբ և հրատարակում ստույգ վերծանությամբ ու լուսանկարով. արձանագրությունն ունի հետևյալ կարևոր բովանդակությունը.

> Ի ԹՎ. ՈՃԵ ՇՆՈՐՀԻՒ Ո-
> ՂՈՐՄՈՒԹ(ԵԱՄ)ԲՆ ԱՅ ՇԻՆԵՑ-
> ԱՒ ԴՈՒՌՆՍ ԵՒ ԲՐՋՆԵՐՍ
> ՅԱՆՈՒՆ ՄԱՆԴԱՏՈՐԹԱԽ-
> ՈՒՑԷՍ ՇԱՀԱՆՇԱՀ ԶԱՔ-
> ԱՐԷ(Ի). Ի ՁԵՌՆ ԶՈՒՆԴԿԱՆՍ ԵՂԵՒ[1]։

Ակադ. Բրոսեն իր ժամանակին այն ճիշտ միտքն էր հայտնել, որ Զունդիկը բրգերի և մուտքի շինող ճարտարապետն է[2], սակայն Մառը կասկածում է և ավելի հավանական համարում այն, որ Զունդիկը Զաքարեի գործակատարը պետք է եղած լինի։

Կարծում ենք, որ Բրոսեն իրավացի է, քանի որ նման արձանագրություններ կան Կարսի և Մանազկերտի բերդերի պարիսպների մեջ գրված՝ ի հիշատակ ճարտարապետների[3]։

13. ՎԵՑԻԿ ՎԱՐԴՊԵՏ

Վեցիկ վարդպետը միջնադարի այն «երջանիկ» ճարտարապետներից է, որի պատվին ժամանակակիցների ձեռքով կանգնեցված է այն կոթող-հուշարձանը, որը դարերի ավերածությունների բովից անցնելով՝ անվթար մնացել է մինչև այժմ։ Ժամանակի տեսակետից Վեցիկն առաջինն է այդ «երջանիկներից»։ Այդպիսի ճարտարապետների թիվը մեծ չէ. Վեցիկից բացի մի ուրիշ այդպիսին կա միայն՝ Սիրանես վարդապետը, Վեցիկից 70—80 տարի հետո ստեղծագործած, Սյունյաց աշխարհում։

Վեցիկ վարդպետի միակ հիշատակությունը գտնվում է իր հարազատ եղբայրների կողմից նրա գերեզմանի վրա կանգնեցրած

[1] „Известия импер. Академии наук", VI серия. № 12, стр. 1149—1151. Петербург, 1910.

[2] Ակադ. Աճառյանը Զունդիկ անվան տակ միայն այս մեկ անունն ունի և համարում է «փորագրիչ կամ ճարտարապետ», Անձնան. բառ., Դ, 309։ Բայց մի ուրիշ Զունդիկ էլ հիշված է Հոռոմայրի արձանագրության մեջ, 1247։

[3] Տե՛ս Ջալալեանց, Ա, 99—100։

խաչքար հուշարձանի վրա՝ Կեչառիսի վանքի բակում։

Այս հուշարձանը և նրա արձանագրությունները վաղուց ի վեր ծանոթ են բանասիրությանը և հետազոտողներից յուրաքանչյուրը տարբեր է վերծանել այդ արձանագրությունը։ Արձանագրության առաջին վերծանող Շահխաթունյանցը հուշարձանի միայն արևմտյան երեսին գրվածը կարդալով՝ վարդպետ բառը վարդապետ է վերծանել ու Վեցիկին կրոնական համարել[1]. Նրանից հետո Մ. Սմբատյանը, որն ի միջի այլոց, հին հետազոտողներից լավագույնն է, հուշարձանի նաև թիկունքի, արևելյան կողմի վրա գրվածը կարդալով՝ կասկածել է, որ Վեցիկը վարդապետ լինել չի կարող, արձանագրության առաջին մասի Վարդպետ բառը ուղղակի վարպետ ձևով է մեջ բերել և ելնելով իր կրոնական հայացքներից, կշտամբում է Շահխաթունյանին հետևյալ խոսքերով. «Գ. Յով. եպիսկոպոսն Շահխաթունյան, երես 128, այս Վեցիկ վարպետին վարդապետի պատիվ էր տվել, բայց կարծես սխալ էր»[2]։ Ալիշանը վերցրել է Շահխաթունյանցից և կրկին վարդապետ դարձրել Վեցիկին[3]։ Նույնը արել է Կոստանյանցը՝ հետևելով Ալիշանին[4], Ե. Լալայանը թեև ամբողջ արձանագրությունն է մեջ բերում (արևմտյան և արևելյան երեսներին) և վարդպետ ձևով, բայց բացատրություն չի տվել[5]։ Միայն վերջին վերծանող՝ մանրակրկիտ ուսումնասիրող Գ. Հովսեփյանը ճիշտ է ըմբռնել արձանագրության իմաստը և Վեցիկին ճարտարապետ-վարդապետ է համարել իր հայտնի «Խաղբակեանք» աշխատության մեջ. բայց ինչպես այս, նույնպես և մի այլ առիթով վերադառնալով նույն խնդրին, Վեցիկին այնուամենայնիվ կրոնավոր-վարդապետ է համարում, ցանկանալով հայ կղերի պատիվը բարձրացնել[6]։

Վեցիկ վարդպետը գործել է Ծաղկաձորում, մահացել, ըստ արձանագրության, երիտասարդ հասակում և թաղվել նույն վանքի բակում. նրա հոգևորական լինելու մասին ոչ մի փաստ չկա. ընդհակառակը նրա հուշարձանի վրա եղած երկու արձանագրությունների մեջ մեկ դեպքում վարդպետ և մյուս դեպքում բարգործ կոչումները հաստատուն ապացույց են նրա աշխարհական լինելուն։ Մանավանդ եթե նկատի ունենանք, որ արձանագրություն գրել տվողները նրա հարազատներն են, որոնցից մեկը, Հովհաննեսը, հավանաբար, կրոնական է և Նորաբերդի Անապատ վանքի առաջնորդ, որն անշուշտ իր եղբոր հոգևորական կոչումը գրել կտար արձանագրության մեջ որպես ավելի մեծ պատիվ, ժամանակի հասկացողության տեսակետից՝ քան ճարտարապետ և քարգործ կոչումները։

Եղբայրների կողմից Վեցիկի հիշատակին կանգնեցրած խաչքար-հուշարձանը բաղկացած է երկաստիճան հիմքից, որոնց վրա պատվանդանն է՝ պսակված գեղեցիկ քիվով. պատվանդանի արևմտյան երեսին քանդակված են զույգ կամար սյուներով իրարից բաժանվող երեք խորշեր. այդ սյուներն ունեն գեղեցկորեն մշակված խարիսխներ և կամարների հատման տեղերում խոյակներ՝ տախտակաձև. պատվանդանի վրա դրված է մի նոր հիմնաքար, որի մեջ ագուցված է բուն խաչքարը. հիմնաքարի արևմտյան երեսը շրջանակավոր է, որի մեջ երեք տողով գրված է Վեցիկի հիշատակարանը։ Հիմնաքարի վրա կանգնած է խաչքարը, սյունազարդ շրջանակներով, որոնք պսակվում են սրածայր կամարով. կենտրոնում խաչն է քանդակված, որի թիկունքին 15 տողով գրված է մի մեծ արձանագրություն, որը և հիմնական աղբյուրն է Վեցիկի մասին մեր ունեցած տեղեկությունների։

Խաչքար կոթողի առաջ, արևմուտքից գտնվում է մի մեծ, տափակ գերեզմանաքար, որի վերին երեսի եզրերով անցնում է պարանահյուս մի շրջանակ, հյուսվելով իրար այնպես, որ առաջացնում է բացված օղակներ, նման «սելջուկյան» կոչվող շղթայի։ Այս տապանաքարի տակ անշուշտ թաղված է ինքը Վեցիկ վարդպետը, որի գլխին էլ կանգնեցված է խաչքար կոթողը։ Մեր բազմաթիվ տաղանդավոր ու անհայտ ճարտարապետնե-

---

1 Շահխաթունեանց Յով. եպ., Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Բ, 128, էջմիածին, 1842։

2 Սմբատեանց Մեսրովբ արք., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազետի գաւառ, էջ 355, Վաղարշապատ, 1895, այսուհետև՝ «Գեղարքունի»։

3 Ալիշան, Այրարատ, 264։

4 Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, 231։

5 «Ազգագրական Հանդէս», XXIII, 131։

6 «Խաղբակեանք», Ա, 75—77։

րի շարքում, Վեցիկի համար կանգնեցված այս հուշարձանները նրա հանդեպ եղած մեծ հարգանքի ու գնահատման արտահայտություններ են: Այդ երևույթի ազդակը անշուշտ դարաշրջանի ընդհանուր ոգին էր, որն սկսել էր արվեստի մշակներին բարձր գնահատել և հատուկ էր միայն XII—XIII դարերին, ինչպես կտեսնենք այլ օրինակներով ևս:

Վեցիկի հիշատակին այս կոթող-խաչքարը կանգնեցրել են նրա հարազատները, Հովհաննես[1] և այլ եղբայրները, որոնցից ոմանք հավանաբար Վեցիկի նաև արվեստակիցներն են եղել, նույնպես քարգործ վարպետներ, և Կեչառիսի հուշարձանի կերտման մասնակիցներ: Վեցիկի համար կանգնեցրած հուշարձանի ճարտարապետական ու քանդակագործական ձևերը մեծ նմանություն ունեն այն եկեղեցու քանդակագործական ոճին, որը պետք է Վեցիկի ստեղծագործածը լինի: Սակայն հարազատների հոգատարությունը միայն բավական չէր լինի հուշարձանի կանգնեցման համար, պետք էր որ վանականներն էլ թույլատրեին վանքի բակի այդ ակնառու տեղում մի հասարակ մարդու համար հուշարձան կանգնեցնելը. և հենց այստեղ է, որ արտահայտվում է վերևում մեր ասած ժամանակի հասկացողությունը՝ արվեստագետներին գնահատելու վերաբերյալ: XIII դարի սկզբից Կեչառիսի վանքը դառնում է խաղբակյանների հոգևոր կենտրոններից մեկը և այդ տոհմի համար նաև դամբարան. այդպիսի մի կարևոր կենտրոնում Վեցիկ ճարտարապետի համար վանքի կարևոր մասում հուշարձան կանգնեցնելը ժամանակի հասկացողությամբ հատուկ հարգանքի նշան էր:

Ծանոթանանք Վեցիկ վարդպետի հուշարձանի վրա գրված արձանագրություններին:

Կոթող-խաչքարի պատվանդանի վրա գրված խաչքարի հիմքը կազմող բարձի արևմտյան երեսին երեք տողով գրված է.

Ա.

1 ԶՎԵՑԻԿ ՎԱՐԴՊ
2 ԵՏ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍ
3 ՋԻՔ Ի ՔՍ. ԱՂԱՉԵՄՔ:

Իսկ խաչքարի թիկունքին 15 տող.

Բ.

1 ՅԻՇԵՍՋԻՔ ՅԱՂԱԻԹՍ
2 ԶԾԱՌԱՅՆ ԱՅ ԶՎԵՑԻԿ
3 ՔԱՐԳՈՐԾ ՈՐ ՇԻՆԵԱՑ ԶՆ-
4 ՈՐ ԵԿԵՂԵՑԻՍ, ԵՒ Ի ԿԱՏԱՐՄԱՆ
5 ՍՈՐԻՆ ԻՆՔՆ ԿԱՏԱՐԵԱՑ ԶԿԵՆ-
6 ՑԱՂՍ ԵՒ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ՔՍ.
7 ԿԻՍԱՒՐԵԱՅ ԱՒՈՒՐԲՔ. ԵՒ ԵՍ
8 ՅՈՎԱՆՆԷՍ ԵՒ ԵՂԲԱՐՔՍ ԻՄ՝
9 ՀԱՐԱԶԱՏ ՍՈՐԻՆ, ԿԱՆԿՆԵ-
10 ՑԱՔ ԶՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ՔԻ Ի Վ-
11 ԵՐԱ ՀԱՆԿՍՏԱՐԱՆԻ ՍՈՐԻՆ, ԱՌ
12 Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ ՍՄԱ ԵՒ Մ-
13 ԵԶ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՒԱՏԱ-
14 ՑԵԼՈՑ ԵՒ ՅԻՇՈՂԱՑՆ Զ-
15 ՍԱ[1]:

Կոթողի թիկունքի մեծ արձանագրությունն, ինչպես տեսնում ենք, որոշ նյութեր է պարունակում Վեցիկ վարդպետի կենսագրության ու գործունեության մասին. ամենից առաջ մեզ համար կարևորն այն է, որ մինչդեռ առաջին երեսի հիշատակարան-արձանագրության մեջ Վեցիկը կոչված է վարդպետ, որը տեղիք է տվել որոշ հետազոտողների նրան վարդապետ համարելու, թիկունքի արձանագրության մեջ, հարազատները նրան պարզապես քարգործ են կոչում, մի հանգամանք, որը հիմնովին ցրում է այդ թյուրիմացությունը, որովհետև միջնադարյան մարդու հասկացողությամբ վարդապետը շատ ավելի պատվավոր հասարակական դիրք ու կոչում °էր, քան մի արվեստավոր քարգործ: Հետևաբար եթե նա հոգևորական-վարդապետ լիներ, նրա հարազատները, անշուշտ, այդ ավելի պատվավոր կոչումով կմեծարեին Վեցիկին: Դրան միացած մեր այս աշխատության մեջ բերված բազմաթիվ ուրիշ դեպքեր, երբ վարդպետը միշտ էլ վարպետ-ճարտարապետ իմաստն է ունենում, միանգամայն համոզիչ են դարձնում Վեցիկ վարդպետի ճարտարապետ և աշխարհական լինելու խնդիրը:

Արձանագրության մեջ երկրորդ կարևոր տեղեկությունն այն մասին է, որ Վեցիկ վարդպետը մահացել է «կիսաւրեայ աւուրբք», այսինքն երիտասարդ հասակում:

[1] Այս Հովհաննեսի մասին տե՛ս Ակինյանի հոդվածի ծանոթ. «Հանդէս Ամսօրեայ», 1929, էջ 445, նաև Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Գ, 585:

[1] Շախխաթունեանց, Բ, 198 (միայն Ա): Ալիշան, Սիսական, 264 (միայն Ա): Կոստանեանց, Վիմական, 231 (միայն Ա): Լալայեան, Ազգ. Հանդ., XXIII, 131—132:

Երրորդ կարևոր տեղեկությունն այն է, որ Վեցիկ Քարգործը «շինեաց զնոր եկեղեցիս եւ ի կատարման սորին ինքն կատարեաց զկենցաղս»:

Այս տեղեկությունները շատ կարևոր են Վեցիկ վարպետի գործունեության ժամանակը և նրա շինարարական օբյեկտը ճանաչելու տեսակետից, սակայն արձանագիրները մի խոշոր սխալ են թույլ տվել արձանագրության մեջ, որը դժվարացնում է այդ խնդիրների պարզաբանումը. նրանք մոռացել կամ աչքաթող են արել թվական նշանակել: Ուստի՝ ինչպես Կեչառիսի հուշարձանների խմբի մեջ Վեցիկի կառուցածը որոշելու, նույնպես և նրա գործունեության և մահվան թվականները պարզելու համար պետք է կողմնակի աղբյուրներ որոնել:

Առաջին կարևոր աղբյուրը, այդ խնդրի պարզաբանման համար՝ հենց Վեցիկի հիշատակին կանգնեցված խաչքար-հուշարձանն է, որն իր՝ ինչպես ճարտարապետական ընդհանուր ձևերով, նույնպես և զարդաքանդակների ոճով և արձանագրության գրչությամբ միանգամայն հարազատ է XIII դարի սկզբների արվեստին[1]:

Թվագրության համար կարևոր է նաև խաչքարի թիկունքի արձանագրության մեջ հիշատակված Վեցիկի եղբոր՝ Հովհաննեսի անունը: Բանասիրության մեջ Վեցիկի եղբորը նույնացրել են Շամշադինի շրջանի Անապատ վանքի եկեղեցին շինող և առաջնորդ Հովհաննեսին[2], իսկ Անապատի արձանագրությունները, որոնց մեջ հիշատակված է նրա անունը, թվով չորսն են. և կրում են 1198, 1231, 1235 և 1237 թվականները:

Այս թվականներն արդեն ինքնին ապացուցում են, որ Վեցիկն ու նրա եղբայրները XII դարի վերջի և XIII դ. սկզբի գործիչներ են:

Վեցիկ վարպետի գործունեության այս մոտավոր շրջանը նկատի ունենալով՝ տեսնենք այժմ, թե Կեչառիսի հուշարձանների խմբից յուրաքանչյուրը երբ է շինվել և որն իր ժամանակով կհամապատասխանի մեր որոշած մոտավոր ժամանակաշրջանին:

Կեչառիսի հուշարձանների խումբը բաղկացած է մի քանի մեծ և փոքր կրոնական շենքերից. դրանք են.

1. Լուսավորչի անունով եկեղեցին, որը ամենամեծն ու ամենահինն է: Եկեղեցու հարավային մուտքի ճակատին գրված է շինարարական լավ պահպանված արձանագրությունը՝ ըստ որի այն շինվել է ՆՁԲ=1033 թ. հայոց Գագիկ թագավորի և Սարգիս կաթողիկոսի օրոք: Բանասիրությունը պարզել է, որ այդ թվականը ճիշտ չէ, որովհետև թե՛ Գագիկը և թե՛ Սարգիսը այդ թվականից բավական առաջ արդեն մահացել էին: Ղ. Ալիշանն ու Գ. Հովսեփյանը այդ խնդիրը լուծում են ՆՁԲ թվի մեջ Ձ-ն գրչի սխալմունք համարելով և ուղղում են ՆԾԲ=1003, որը և համարվել է ընդունելի[1]:

2. Ս. Նշան. Լուսավորչի եկեղեցուն, հարավ-արևելքից, կից են մատուռների ավերակներ և մի փոքր եկեղեցի ս. Նշան անունով: Դրանց վրա կառուցման թվականներ չկան, բայց գրավոր այլ աղբյուրներից, ինչպես և ճարտարապետական ոճի քննությամբ պարզվել է, որ նրանք ժամանակակից են Լուսավորչի եկեղեցուն, այսինքն կառուցվել են XI դարի սկզբին[2]:

3. Գավիթ. շինված է Լուսավորիչ եկեղեցու արևմուտքից. շինարարական արձանագրություն նույնպես չունի, բայց իր ոճով այն պատկանում է XII դարի վերջին և XIII դարի սկզբին, ինչպես ապացուցել են ճարտարապետության պատմաբանները[3]:

Այդ կարծիքը հաստատվում է և այն փաստով, որ գավթի ներսում կան նվիրատվական արձանագրություններ 1206—1214 և այլ թվականներին պատկանող:

4. Ս. Կաթողիկե եկեղեցին գտնվում է ս. Նշանի հարավում, նրան գրեթե կից: Այս եկեղեցու վրա շինարարական երկու արձանագրություն կա, մեկը արևմտյան մուտքի

---

1 Գ. Հովսեփյանը նույնպես XII դ. վերջի և XIII դ. սկզբի գործ է համարում: Տե՛ս «Խաղբակեանք», Ա, 75—77:

2 Ակադ. Աճառյան, Անձնանունների բառարան, Գ, 585. Հ. Ակինյան, «Հանդէս Ամսօրեայ», 1929, էջ 445 (ծանոթ.):

1 «Այրարատ», էջ 259: «Խաղբակեանք», Բ, էջ 6: Н. М. Токарский. Архитектура Древней Армении, стр. 174.

2 Գ. Հովսեփյան, Անդ, էջ 6, Տոկարսկի, Անդ, 175—176:

3 Տոկարսկի, Անդ, էջ 175. С. Х. Мнацаканян. Архитектура армянских притворов, Ереван, 1952, стр. 47.

ճակատին, մյուսը՝ հարավային պատին արտաքուստ. երկուսն էլ գրված են մեկենաս Վասակ Խաղբակյանի անունից. մուտքի արձանագրությունը թվական չունի, իսկ հարավային պատինը գրված է 1214 թ.: Արձանագրությունների բովանդակությունները լրացնում են միմյանց, նրանք վերաբերում են եկեղեցու շինությանը և նրան տրված կալվածների ու շարժական գույքի թվարկմանը: Եթե նույնիսկ ընդունենք, որ հիմնական շինարարական արձանագրությունը անթվական է, այնուամենայնիվ, նա կարող է շատ քիչ, մեկ երկու տարով առաջ լինել 1214-ով թվագրվածից: Պատմությունից հայտնի է, որ Խաղբակյան Վասակը Կեչառիսի շրջանին տիրել է XIII դարի առաջին տարիներին և որպես հոգևոր նոր կենտրոն, սկսել է անմիջապես շինել կաթողիկե եկեղեցին: Այս բոլորը ապացուցում են, որ կաթողիկեի շինարարությունը պիտի սկսված լինի XIII դարի առաջին տասնամյակում և վերջացած երկրորդի սկզբի տարիներին[1]:

5. Ս. Հարություն եկեղեցին իր սրահանման գավթով, գտնվում է հուշարձանների ընդհանուր խմբից առանձնացած դեպի արևմուտք, հին գերեզմանատան մեջ և շինված է 1220 թ., համաձայն արձանագրության: Կեչառիսի հուշարձանների այս հինգ շենքերից, ինչպես տեսնում ենք, երկուսը շինված են XI դարի սկզբին, ուրեմն մնում են հաշվից դուրս: Վերջին երեքը շինված են XIII դարի սկզբին, որոնցից մեկը և պետք է լինի այն «նոր եկեղեցին», որը կառուցել է Վեցիկ վարդպետը. այդ երեքից մեկը մեծ գավիթն է, որը նույնպես պետք է հանենք ցանկից, որովհետև Վեցիկի արձանագրության մեջ նրա ձեռակերտը եկեղեցի է անվանված: Մնում են ուրեմն կաթողիկե և ս. Հարություն եկեղեցիները: Ս. Հարություն եկեղեցին հուշարձանների խմբից հեռու է կանգնած և գերեզմանատան մեջ, եթե Վեցիկ վարդպետի շինածն այս եկեղեցին լիներ, անշուշտ նրա գերեզմանը և խաչքար-հուշարձանը կանգնեցրած կլինեին իր ձեռակերտ հուշարձանի մոտ, մանավանդ որ տեղը հենց գերեզմանատուն էր և ավելի հարմար թաղման համար, մինչդեռ նա թաղված է վանքի բակում:

Մնում է կարծել, որ Վեցիկ վարդպետի շինած «նոր եկեղեցին» կաթողիկեն է, շինված XIII դարի առաջին տասնամյակում: Այդ ենթադրությունը ավելի հաստատուն է դառնում Վեցիկի կոթողի և կաթողիկե եկեղեցու ոճական նմանությունները նկատի ունենալով և իրոք խաչքարի ու իր պատվանդանի խորանների զույգ-զույգ կիսասյուները, իրենց խոյակներով և խաչքարի գլխի սրածայր կամարով մեծ նմանություն ունեն կաթողիկե եկեղեցու թմբուկի նման կիսասյուներին, մուտքի սրածայր կամարին և այլ պարանահյուս զարդաքանդակներին, ինչպես ճիշտ կերպով նկատել է Գ. Հովսեփյանը: Վեցիկ վարդպետի շինած եկեղեցին ունի միջակ մեծություն 13,40×9,80 մ ներքուստ խաչաձև է, չորս անկյուններում շինված կրկնահարկ ավանդատների հետևանքով, XIII դարի հուշարձանների բնորոշ մի օրինակ: Թեև Վեցիկ վարդպետի հարազատները նրա հուշարձանի արձանագրության մեջ ասում են, որ նա մահացել է «Կիսաւրեայ»—երիտասարդ հասակում, բայց և այնպես արվեստագետը միանգամից չի վարպետ դառնում և վստահություն ձեռք բերում բարդ շենքի կառուցման իրավունք ստանալու համար, հետևաբար պիտի ենթադրել, որ Վեցիկ վարդպետը իր աշխատանքային գործունեության ընթացքում մեծ մասնակցություն է ունեցել նաև կաթողիկեին ժամանակով մոտ կառուցված մեծ գավթի և այլ շենքերի շինության գործում: Անհավանական չէ նույնիսկ, որ հենց գավիթն էլ նրա ձեռագործը լինի. նախ որ «կիսաւրեայ»—երիտասարդ, կարող է մարդը համարվել մինչև գոնե 35—40 տարեկան հասակը, իսկ «նոր եկեղեցին», ինչպես տեսանք, շինված է մոտավորապես XIII դարի երկրորդ տասնամյակի սկզբին, որին պիտի նախորդած լինի գավթի շինությունը Կեչառիսում. ապա՝ եթե կոթողի արձանագրության մեջ միայն «նոր եկեղեցին» է հիշված՝ այդ միայն այն պատճառով, որ նրա ավարտման հետ կապված է Վեցիկի մահվան ժամանակը:

Հնարավոր է մի քանի խոսք էլ ասել Վեցիկի տոհմագրության և կենսագրության մասին:

Վեցիկի հուշարձանի արձանագրության մեջ հիշատակված են նրա «հարազատներն» ընդհանրապես և ապա Հովհաննեսն ու իր եղբայրները: Ընդունելով, որ Հովհաննեսը Վե-

[1] Տոկարսկին իզուր անորոշ կերպով XII—XIII դարերի գործ է անվանում, անդ, 176:

ցիկի եղբայրն է և այն, որ այս նույն Հովհաննեսը Նոր-Վարագի կամ Անապատի վանքի արձանագրությունների մեջ չորս անգամ հիշատակվել է, կարելի է Անապատի արձանագրությունների քննությամբ Վեցիկի տոհմագրությանը վերաբերող որոշ մանրամասնություններ պարզել։

Այսպես, արձանագրություններից ամենահինը գրված է 1198 թ., որի մեջ Կյուրիկյան Դավիթը, Վասակի որդին, հայտարարում է, որ շինել է եկեղեցին ձեռամբ հայր Գրիգորի «և նորին արբանեկին՝ Պետրոսի և եղբարց նորա Յովհաննիսի և Ազարիայի»։ Այստեղ Հովհաննեսի հետ երևան են գալիս նաև նրա այլ երկու եղբայրների անունները՝ Պետրոս և Ազարիա, որոնց հերթականությունից և նշանակությունից դատելով Հովհաննեսը միջնակն է և ավագը Պետրոսն է։ Քանի որ այս արձանագրության մեջ հիշատակված է միևնույն իշխանի՝ Դավթի և վանահայր Գրիգորի անունները և այս երեք եղբայրներն անվանված են արբանյակներ — գործակիցներ վանահորը և չունեն կրոնական որևէ կոչում, ապա իրավունք ունենք այս երեք եղբայրներին համարելու շինված եկեղեցու վարպետ-ճարտարապետները։ 1231 թ. մեծ արձանագրության մեջ հիշատակված է միայն Հովհանի անունը, նա չունի «տեառն» կոչումը և անվանվում է «շինողի եկեղեցոյս», 1235 թ. արձանագրության մեջ Հովհաննեսը կոչված է վարդապետ և նրա «ձեռամբ» է շինվել եկեղեցին. 1237 թ. արձանագրության մեջ Վասակը կրկնում է, որ շինել է եկեղեցին «ի ձեռն տեառն Յոհաննու»[1]։ Դատելով գործածված կոչումներից և թվականների հաջորդականությունից, կարելի է եզրակացնել, որ Հովհաննեսը նախօրոք իր եղբայրների հետ գործել են Անապատում Կյուրիկյան իշխանների համար որպես ճարտարապետներ, իսկ հետագայում, ինչ-ինչ պատճառներով Հովհաննեսը դարձել է վանական և բարձրացել մինչև վանահոր պաշտոնը. այնուհետև բոլոր արձանագրություններում նա հիշատակվում է որպես եկեղեցու շինող։

1 Արձանագրությունները տե՛ս Բարխուդարեանց, Արցախ, էջ 336—338, և Կ. Ղաֆադարյան, Պատմա-հնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին, «Տեղեկագիր» ԱրմՖանի, 1940, № 4—5, էջ 168—180։ Վերջինս ավելի ստույգ և հարազատ է բնագրերին։

Նկատի ունենալով այս փաստերը, կարելի է եզրակացնել, որ նրանց ընտանիքը եղել է տոհմական քարգործ-վարպետների ընտանիք, ինչ որ միջին դարերի համար սովորական երևույթ էր։

Այսպիսով, Վեցիկը XIII դարի սկզբի նշանավոր ճարտարապետ է՝ ծնված տոհմական քարգործ վարպետների ընտանիքում, որի անդամներից չորս եղբայրները՝ Վեցիկը, Հովհաննեսը, Պետրոսը և Ազարիան բոլորն էլ եղել են ճարտարապետներ և քարգործ վարպետներ, որոնք և միասին պետք է շինած լինեն Կեչառիսի գավիթը, կաթողիկեն, ս. Հարություն եկեղեցիները, Նոր-Վարագի կամ Անապատի եկեղեցին ու գավիթը, և ընդհանրապես այդ երկու կենտրոններում XII դարի վերջին և XIII դարի սկզբին կառուցված ուրիշ հուշարձաններ ևս։

Եղբայրների մեջ հնարավոր է հասակի հետևյալ կարգը սահմանել, ավագը՝ Պետրոս և հաջորդաբար՝ Հովհաննես, Ազարիա և ամենակրտսերը՝ Վեցիկ։

Հնարավոր է, որ հենց Վեցիկ անունը դրամատորեն հորինված է ցույց տալու համար եղբայրների և քույրերի շարքում նրա վեցերորդը լինելը, որոնցից չորսի անունները պահպանվել են (ալբոմ, նկ. 12, 13)։

14. ԱՂԲԱՅՐԻԿ ՎԱՐԴՊԵՏ

Աշտարակի շրջանի Տեղեր գյուղում կանգնած են «հոյակապ», ինչպես անվանում է վաստակավոր գիտնական Թ. Թորամանյանը, երկու հուշարձաններ, եկեղեցի և նրան կից արևմուտքից՝ գավիթ. թե եկեղեցին և թե գավիթը իրենց մեծությամբ և գեղարվեստական կատարումով իրոք որ հոյակապ են. XIII դարի մեր բազմաթիվ բարձրարվեստ կոթողների լավագույններից։

Այս հուշարձանների մեկենասն է սպասալարների վասալ իշխան Վաչեի կին Մամախաթունը, որն իր ամուսնու հետ Արագածոտնում մի շարք այլ հուշարձաններ է շինել տվել։

Հուշարձանների այս խմբի շինության թվականների մասին գրականության մեջ գոյություն ունի շփոթ, և այն առաջացել է հուշարձանի վրա եղած շինարարական արձանագրությունների շատությունից։

Գոյություն ունեն չորս արձանագրություններ, որոնց մեջ հուշարձանների շինությունն է հիշատակվում, դրանցից երկուսը գտնվում են բուն եկեղեցու վրա և մյուս երկուսը՝ գավթի։

Եկեղեցու արձանագրություններից միայն մեկն ունի թվական. այն գտնվում է գմբեթի թմբուկի հարավային կողի վրա. դա մի կարճ արձանագիր թվական է միայն.

Ի թվ. ։ՈԿԲ[1]։=1213

Երկրորդ արձանագրությունը եկեղեցու ներսումն է, պատի վրա, որով Մամախաթունը հայտարարում է, որ շինել է եկեղեցին և պատարագ ստացել իր մոր՝ Վախախի հիշատակին, այս արձանագրությունը թվական չունի։

Գավթի վրա գրված արձանագրությունները երկուսն էլ թվական ունեն, դրանցից հինը Աղբայրիկ վարդպետի արձանագրությունն է, գրված գավթի հարավ-արևելյան սյան խոյակի հյուսիսային կողին, թվագրված ՈՀ=1221։

Վերջին, ամենարնդարձակ շինարարական արձանագրությունը գտնվում է գավթի արևմտյան մուտքի ճակատին.

։ՈՁԱ։ ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ ԵՍ ՄԱՄԱԽԱԹՈՒՆՍ ՇԻՆԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԶՄԵԾ ԵՒ ԶՓՈՔՐ ԵՎ ԶԺԱՄԱՏՈՒՆՍ . . . [2]։

Այսպիսով, ստացվում է հուշարձանների շինության մասին գրված չորս արձանագրություն, որոնցից երեքի մեջ կան թվականներ, հետևյալ հաջորդականությամբ.

1213 թ. եկեղեցու գմբեթի վրա,

1221 թ. գավթի սյան վրա, Աղբայրիկի արձանագրությունը և

1232 թ. գավթի արևմտյան մուտքի ճակատին Մամախաթունի շինարարական արձանագրությունը։

Որոշ ուսումնասիրողներ հիմք ընդունելով մեկենաս Մամախաթունի 1232 թվականի կառուցողական արձանագրությունը, որպես հուշարձանների ամբողջ խմբին վերաբերող թվականություն, բայց և ծանոթ լինելով Աղբայրիկի ավելի վաղ, 1221 թ. և եկեղեցու ներսում ունեն խնձորիկի 1213 թ. արձանագրություններին, ընկել են շփոթության մեջ և դրությունից դուրս գալու համար հայտարարել, որ Մամախաթունի արձանագրությունը 1232 թ. կառուցումների հիմնական թիվն է, իսկ նրանից վաղ թվականություններ ունեցող արձանագրությունների քարերը հետագա նորոգումների ժամանակ տեղափոխվել են մոտակա ս. Հովհան եկեղեցուց և ագուցվել պատերի մեջ, հետևաբար նրանք կապ չունեն Տեղերի հուշարձանի կառուցման հետ[1]։

Վաստակավոր ճարտարապետ Թորամանյանը նույնպես կրկնել է այդ սխալը և եկեղեցու շինության թվականը համարել 1232-ը[2]։ Նորագույն հետազոտողներից Ս. Մնացականյանը, չգիտենք ինչ հիմունքներով, գավթի կառուցման թվականը համարում է 1220[3]։ Ուսումնասիրողների այս շփոթը վերացնելու համար անհրաժեշտ է արձանագրությունների թվականների մեջ գոյություն ունեցող տարբերությունների կարծեցյալ «շփոթ»-ի խնդիրը քննել։

Նախ նշենք, որ հուշարձաններից ոչ մեկի վրա հիմնական վերանորոգումների հետքեր չկան և բոլոր արձանագրություններն էլ իրենց նախնական տեղերումն են՝ կապված հենց այս հուշարձանների հետ և ոչ թե այլ տեղերից բերված։ Լավագույն ապացույցն այդ բանի այն է, որ բոլոր արձանագրությունները, որոնք իբր թե այլ տեղերից են բերված՝ գտնվում են շենքերի այն հիմնական տեղերում, որոնց խախտված լինելու դեպքում հուշարձաններր հիմնական նորոգության պիտի ենթարկված լինեին։ Այսպես, եկեղեցու գմբեթի ձևավոր քարի վրա գտնըվում է 1213 թվականը ցույց տվող արձանագրությունը, բերված քարը այդ տեղին համապատասխանեցնելու համար պետք է անշուշտ մշակվեր, այդ դեպքում արձանագրությունը չէր կարող մնալ ամբողջական ձևով։ 1213-ով թվագրված խնձորիկի արձանագրությունը

1 Այս արձանագրության վերջից այժմ քարերը թափված են և միավորը՝ Բ. գոյություն չունի, բայց Գ. Հովսեփյանն իր ժամանակին լրիվ է տեսել և արտագրել. տե՛ս նրա՝ «Խաղբակեանք», Բ, էջ 76—77։

2 Շահխաթունեանց, Բ, 68։ «Արարատ», 147։ «Բանասեր», 1903, էջ 29։

1 Մխիթար վարդ. Տէր Մկրտչյան, Մի քանի հին արձանագրություններ, Հանդէս Հայագիտութեան, 1903, I, II, էջ 45—46, Մարբուրգ։

2 «Նյութեր...», Բ, 231։

3 „Притворы...“, стр. 53.

գտնվում է եկեղեցու ներսում, պատի միջին մասում։ Եթե նույնիսկ այդտեղից քարեր ընկնեին և կորչեին (որը շատ անհավանական է) ուրիշ տեղերից բերված քարերը նոր տեղի տարածությանը հարմարեցվելու համար պետք է կոտրատվեին, հետևաբար նրանց վրայի արձանագրությունը խառն և թերատ կլիներ, մինչդեռ այն ամբողջական է ու լրիվ։

Իսկ Աղբայրիկի արձանագրությունը, թվագրված 1212-ով, գտնվում է գավթի սյունի խոյակի վրա, անկարելի է ենթադրել իսկ, որ նոր տեղին և տարածությանը համար պատրաստի խոյակ կարելի է գտնել ուրիշ տեղ։

Տեղերի հուշարձանների շինության թվագրությունների շփոթին ուսումնասիրողների մոտ առաջացել է այն սխալ դրույթից, թե միայն մեկ շինարարական արձանագրություն կարող է գոյություն ունենալ և հիմք համարվել։ Ներկա դեպքում նրանք այն ընդունել են Մամախաթունի 1232 թ. արձանագրությունը, իսկ մյուսները համարել շինության հետ կապ չունեցող։ Գոյություն ունեն շատ հուշարձաններ, որոնց պատերին փորագրված են տարբեր թվականներով շինարարական մի քանի արձանագրություններ և այդ խնդիրը սպառիչ կերպով լուծել է ակադ. Հ. Օրբելին[1]։ Սակայն ներկա դեպքում, Տեղերի հուշարձանների վերաբերյալ խնդիրը շատ ավելի պարզ է և միայն եղած արձանագրությունների տեղադրման վրա ուշք չդարձնելու և իշխանուհի մեկենասի խոսքի հեղինակության տառացի ընդունելն է առաջացրել այդ շփոթը։

Տեղերի հուշարձանները բաղկացած են երկու հիմնական մասերից. բուն եկեղեցին (Հավանաբար ս. Աստվածածին) և արևմուտքից նրան կից գավիթը։ Միջնադարի սովորությամբ և տեխնիկայի հնարավորությունները նկատի առնելով, պիտի դատել, որ նրանք շինվել են մեկը մյուսից հետո և ոչ միասին, բնականաբար, առաջ եկեղեցին, ապա գավիթը։ Եկեղեցին շինելու ընթացքում նրա գմբեթի թմբուկի վրա փորագրել են և ավարտման ժամանակը՝ 1213 թ.[1]։

Մեկենաս Մամախաթունը, հավանաբար նույն թվականին, եկեղեցու ներսում գրել է տալիս արձանագրություն, որտեղ հիշատակում է միայն մեկենասի իր դերը եկեղեցու նկատմամբ և իր մոր՝ Վախախի համար սահմանված պատարագները, բայց թվականը չեն նշում, որովհետև նրա անունը կապված է եկեղեցու շինության հետ, իսկ շինության թիվն արդեն գրված էր գմբեթի վրա։

Այդ նույն 1213 թ. ամն Խնձորիկ եկեղեցուն նվերներ է տալիս, որոնց մասին գրում է արձանագրությունը։ Այս բոլորը շատ սովորական երևույթներ են՝ հարյուրավոր անգամներ կրկնված։

Եկեղեցին ավարտելուց հետո անմիջապես սկսվում են գավթի կառուցման աշխատանքները, որն ավարտվում է հիմնականում 1221 թ. և այդ առթիվ գավթի սյան խոյակի վրա ճարտարապետ Աղբայրիկն է իր արձանագրությունը քանդակում, որի մեջ հիշատակում է թե՛ եկեղեցու և թե՛ գավթի իր ձեռքով շինված լինելը։ Գավթի շինությունն այս երկու թվերի համեմատությունից երևում է, որ տևել է 7—8 տարի, միանգամայն սովորական տևողության շրջան նման հուշարձանի համար։

Չբավականանալով այդ կառուցումներով, շինվում են ուրիշ եկեղեցիներ ևս, համաձայն արձանագրության — «շինեցի զեկեղեցիքս մեծ և զփոքր և ժամատունս»։ Եթե դրանցից մեծ եկեղեցին համարելու լինենք 1213 թ. ավարտվածը և ժամատունն էլ ներկա գավիթը՝ ավարտված 1221 թ., կմնան անորոշ հիշատակված փոքր եկեղեցիները միայն։ Թվում է, որ այդ փոքր կոչվածները պիտի համարել հենց նույն գավթի կտուրի վրա, նրա արևմտյան ճակատում շինված բրգանման երկու եկեղեցիները, որով և կլրանա Մամախաթունի արձանագրության մեջ հի-

---

[1] *И. А. Орбели*, О двух терминах в надписях Ани, „Известия Российской академии истории материальной культуры", т. I, 1921, стр. 114.

Շատ դեպքեր էլ կան, երբ շինարարական բնույթի արձանագրությունների թվականները տարբեր են լինում և երբեմն նույնիսկ չեն համընկնում նվիրատվական արձանագրությունների թվականներին, նրանցից ավելի ուշ են գրված լինում։ Մեկենասների իրավունքն այդ բնագավառում սահմանափակված չէր. նրանք կարող էին հենց շինարարական բնույթի արձանագրություն գրել տալ շենքը կառուցված-ավարտված լինելուց հետո էլ. այդպիսի մի օրինակ ունենք հենց այս աշխատության մեջ «Վարդպետ Հերհերցի» բաժնում։

[1] Միայն տարեթիվը նշող այսպիսի կարճ արձանագրություններ գմբեթների վրա, շատ սովորական են XIII դարում. օրինակ՝ Թանահատի, Սպիտակավոր, ս. Սիոն վանքերը Վայոց ձորում և ուրիշներ։

շատակված շինությունների ցանկը: Եթե հաստատվի այս կարծիքը, ուրեմն գավթի կտուրի ձևավորումը և նրա վրա կառուցված զույգ փոքրիկ եկեղեցիների շինությունը պետք է տևած լինի 1221—1232 թվականները:

Եթե նույնիսկ չապացուցվի էլ արձանագրության մեջ հիշատակված «փոքր եկեղեցիների» նույնությունը գավթի կտուրին կանգնած զույգ եկեղեցիների հետ, այնուամենայնիվ այդպիսիները պետք է որ շինված լինեին հուշարձանների մոտակայքում, որովհետև իրավունք չունենք կասկածի տակ առնելու արձանագրության բովանդակությունը: Մամախաթունը չկառուցած եկեղեցիների մասին հազիվ թե հիշատակեր հուշարձանի մուտքի ճակատին: Բայց եկեղեցու ներսի արձանագրության մեջ, ինչպես տեսանք, նա խոսում է եզակի ձևով, միայն մեկ շինության մասին, իսկ եթե այս վերջին արձանագրության մեջ և՛ եկեղեցին, և՛ գավիթը, և՛ փոքր եկեղեցիներն են հիշատակված, ապա հենց այդպես էլ պետք է լինի իրականում: Մեծ եկեղեցու և գավթի առկայությունը հավաստիք են մյուս կառուցումների մասին հիշատակության ճշտության, մի կողմից, և մյուս կողմից հաստատության կառուցումների մեր նկարագրած հաջորդականության:

Եղած թվականներն ապացուցում են, որ այդ փոքր եկեղեցիները շինվել են գավթից հետո, 1221—1232 թվականների ժամանակամիջոցում, մի շրջան, որը նույնպես սովորական է այդ ծավալի աշխատանքներ կատարելու համար:

Այդ չորս հուշարձանների ավարտումից հետո Մամախաթունը 1232 թ. գավթի մուտքի ճակատին գրել է տալիս ընդարձակ և բոլոր կառուցումները թվարկող իր արձանագրությունը: Նույն թվականին վախճանվելով, նա թաղվում է իր շինել տված հուշարձանի ներսում, որն, ըստ երևույթին, ամենամոտն էր իր սրտին, և որտեղ մինչև այժմ էլ մնում է նրա տապանաքարը:

Արձանագրությունների տեղադրության, նրանց մեջ նշված թվականների և շինված շենքերի հիշատակություններից բխող մեր թված ժամանակագրությունը միանգամայն ստույգ և տրամաբանական է և ուսումնասիրողների շփոթ կարծիքները միանգամայն անտեղի:

* * *

Անդրադառնանք այժմ ճարտարապետի խնդրին: Տեղերի այս հուշարձանների շինարարական արձանագրությունների մեջ «շինող»-ների դերն ու նշանակությունը միանգամայն պարզորոշ է, որովհետև մեկենասներն առանձին արձանագրություն են գրել, որտեղ իրենց «շինող» են անվանում. ճարտարապետը նույնպես իրեն «շինող» է անվանում: Այս տաղանդավոր ճարտարապետի անհայտ մնալու պատճառը վերծանողների կողմից արձանագրության մեջ եղած վարդպետ բառը վարդապետով փոխարինելու հանգամանքն է:

Ինչպես տեսանք, մեկենաս Մամախաթունը եկեղեցու ներսում և գավթի մուտքի ճակատին արձանագրություններ է գրել տվել: Ճարտարապետ Աղբայրիկը իր արձանագրությունը գրել է առանձին, գավթի հարավ-արևելյան սյան խոյակի հյուսիսային երեսին: Արձանագրության տեղի ընտրությունն իսկ շատ բնորոշ է. միջնադարյան մեր ճարտարապետները երբ իրավունք են ստացել ինքնուրույն արձանագրություններ գրելու՝ մեծ մասամբ ընտրել են ճարտարապետորեն էական, մի ձևավորված կետ, կարծես թե շեշտելու համար իրենց ու այդ բարդ կետի նույնությունը մի կողմից, մյուս կողմից արձանագրությունն ու գիրը դիտել են նաև որպես զարդաքանդակ՝ ընտրված տեղի վրա ավելի ուշադրություն հրավիրելու համար:

Վարդպետ Աղբայրիկի արձանագրությունը բաղկացած է վեց տողից և ունի հետևյալ բովանդակությունը.

Ի Թ·Ի :ՈՀ: (1221): ԵՍ ԱՂԲԱՅՐԻԿ ՎԱՐԴՊԵՏ/ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂ(Ե)ՑԻՍ ԵՒ ԶԳԱՒԻԹՍ ԵՒ ՄԻԱԲԱՆԵՑԱ ԱՐ/ԴԵԱՄԲՔ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ՀԱ/ՍՏԱՏԵՑԻՆ :Բ: ԱՒՐ ԺԱՄ ԻՆՁ/ ՄԲ ԽԱՉԻՆ. ՈՐ ԽԱՓԱ(ՆԷ) ԴԱՏ(Ի) ՅԱՅ:

Այս արձանագրությունը հրատարակված է մի քանի անգամ և տարբեր մարդկանց կողմից, բայց բոլոր հրատարակիչներն էլ Աղբայրիկ ճարտարապետին դարձրել են վարդապետ-կրոնավոր, առանց մտածելու այն հակասության մասին, որ բխում է այս դեպքում Աղբայրիկ վարդապետի և Մամախաթունի արձանագրությունների բովանդակու-

թյունից։ Մի դեպքում իշխանուհին է հանդես գալիս որպես շենքերի մեկենաս, մի այլ դեպքում ինչ-որ Աղբայրիկ վարդապետ, որը, ինչպես երևում է արձանագրության բովանդակությունից, պաշտոնապես կապված չի եղել վանքի հետ և միայն եկեղեցին ու գավիթը շինելուց հետո ինչ-որ նվերներ է տվել վանքին «միաբանելու» համար[1]։

Արձանագրության ընդհանուր իմաստից շատ պարզ հասկացվում է, որ Աղբայրիկը վանքի միաբանության հետ ոչ մի առնչություն չունի, այլ միայն «շինող» է. այն դեպքում, երբ մեկենասներն անհայտնի են, ուրեմն նա միայն ճարտարապետն է — վարդպետը[2]։

Գրչության տեսակետից էլ, ինչպես պարզ երևում է ճշգրիտ գծագրությունից, վարդպետ գրվածը վարդապետ վերծանելու ոչ մի հիմք չկա. եթե արձանագիրը այդ բառը սղում համարեր, վրան անշուշտ պատիվ կդներ, այնպես, ինչպես վարվել է դատի և յաստուծոյ՝ վերջին բառերի հետ. կամ էլ, եթե ցանկանար, ղեղչված Ա տառը հեշտությամբ կմիացներ նախորդ և հաջորդ Դ և Պ տառերից որևէ մեկի հետ. միացումներով գրելը նույնպես անծանոթ չէ գրիչին։

Աղբայրիկ ճարտարապետի ձեռագործ հուշարձանները դարաշրջանի լավագույն կոթողներից են, թե՛ եկեղեցին և թե՛ գավիթը բարձր վարպետության գործեր են։

Արժե հիշատակել և այն, որ գավթի կառուցի արևմտյան կողմում, երկու անկյուններում, որպես երկրորդ հարկ, կանգնած են զույգ փոքրիկ եկեղեցիներ, որոնք շենքին տալիս են վեհ ու սլացիկ կերպարանք։ Աղբայրիկ ճարտարապետի այս նորամուծությունը գավթի ամբողջության մեջ եզակի է. միայն Հոռոմոսի մոտ կան նման զույգ աշտարակաձև երկհարկանի փոքրիկ եկեղեցիներ, բայց նրանք իրենց առաջին հարկում միանում են և արանքում գոյացնում լայն ու ընդարձակ մուտք, կազմելով շքամուտք կամ «հաղթական կամար», ինչպես երբեմն անվանում են, բայց որի ստույգ նշանակությունը պարզված չէ, սակայն որոնք համաձայն մի կարճ արձանագրության, XI դարի սկզբի գործ են[1]։

Աղբայրիկ վարդպետի մասին առաջին թիվը, եկեղեցու ավարտումը նշող 1213-ն է և վերջինը՝ Մամախաթունի արձանագրության հաղորդածը՝ 1232-ը. նրա ստեղծագործության համար ունենում ենք 19 տարվա մի շրջան. բայց որովհետև առաջին թվականը եկեղեցու ավարտմանն է վերաբերում, և սովորաբար այդ ծավալի շենքերի կառուցումը տևում էր 7—8 տարի, ուրեմն կարող ենք այդքանով էլ ավելացնել նրա գործունեության ընթացքի վրա. կստացվի 26—27 տարի։ Այդ ժամանակաշրջանում նա գործել ու կառուցել է Տեղերի հուշարձանները։ Հայտնի է սակայն, որ Մամախաթունն ու իր ամուսին Վաչեն Արագածոտնում ուրիշ հուշարձաններ էլ են կառուցել։

Այդ ամբողջ ժամանակամիջոցը ամփոփվում է Տեղերում կատարված շինարարության սահմաններում։ Բայց և գիտենք, որ Մամախաթունն ու իր ամուսին Վաչեն Արագածոտնի իրենց կալվածքներում շատ հուշարձաններ էլ են կառուցել տվել, ինչպես Սաղմոսավանքը և ուրիշներ, Աղբայրիկը, որպես Վաչուտյանների «դրան» ճարտարապետ, անշուշտ այդ կառուցումների մեջ ևս իր մասը պետք է ունենա։

Աղբայրիկ վարդպետը իր դարաշրջանի նշանավոր ճարտարապետներից է. նրա կերտած հուշարձանները ճարտարապետական արվեստի լավագույն նմուշներից են (ալբոմ, նկ. 14, 15)։

15, 16, 17. ԸՆՁԱԿ, ԳԱՁԱՆ ԵՎ ՈԼՏ

Հասարակական բնույթի շինությունները, ինչպես եկեղեցիներ, վանքեր և բերդեր, Հայաստանում կառուցվել են ժողովրդի ակտիվ մասնակցությամբ և օժանդակությամբ, այդ մասին բազմաթիվ հիշատակություններ կան վիմական արձանագրությունների մեջ։ Հատկապես բերդերի շինարարության ասպարեզում այդ երևույթը ավելի ցայտուն կերպով է երևան գալիս, և դա շատ հասկանալի ու

1 Արձանագրությունը տալիս ենք Հ. Եղիազարյանի ճշգրիտ գծվածքի հիման վրա, սիրով մեզ տրամադրված, որի համար հայտնում ենք շնորհակալություն։ Հրատարակված է «Բանասեր», 1903, էջ 29։ «Հանդէս Հայագիտության», 1903, I, II. էջ 46։ «Վիմական տարեգիր», էջ 65։

2 Հետազոտողներից միայն Գ. Հովսեփյանը ճիշտ է հասկացել Աղբայրիկի ճարտարապետ լինելը, բայց նա էլ միաժամանակ վարդապետ-կրոնական է համարում Աղբայրիկին. տե՛ս «Խաղբակեանք», Բ, 76—77։

1 Սարգսեան, 168։ «Շիրակ», 18։

բնական է։ Միջնադարյան Հայաստանում, երբ միջֆեոդալական և մանավանդ օտարերկրյա արշավանքները շատ հաճախակի ու պարբերական երևույթներ էին, ժողովրդի ոչ միայն նյութական արժեքների, այլև ֆիզիկական գոյությունը մշտական սպառնալիքի տակ էր, բնական է, որ ժողովուրդը սիրով և հոժարությամբ պետք է արձագանքեր բերդերի կառուցման ամեն մի նախաձեռնության, բերդերն այն պատնեշներն էին, որոնց տակ փշրվում էին օտար կեղեքողների հարվածները։ Բերդաշինարարությունը հայրենասիրական մեծագործություն էր և յուրաքանչյուրի սրտին մոտ գործ։

Արձանագրական նյութեր Հայաստանի հարյուրավոր միջնադարյան բերդերի կառուցման մասին չեն մնացել. բայց այն, ինչ պահպանվել է Կարսի բերդի պարիսպների վրա, կարող է ընդհանուր համարվել նաև ուրիշների վերաբերյալ։ Այդ բանը շատ դեղեցիկ կերպով արտահայտվել է Կարսի բերդի պատնեշների վրա մնացած 5—6 արձանագրությունների մեջ։ Նրանցից մեկում, օրինակ, ասված է. «Մեք կարուց քրիստոնայքս մեծ և փոքր շինեցաք զբրջներս»։ Մի այլի մեջ՝ «Մեք Կարուց քրիստոնէքս շինեցաք զբրջներս ի հալալ արդեանց մերոց» և այլն։

Հայտնի է նաև, որ Անիի պարիսպների տարբեր տեղամասերը շինված են զանազան մարդկանց նյութական միջոցներով, որոնք իրավունք էին ունենում այդ նույն տեղամասում գրելու իրենց հիշատակարան-արձանագրությունը[1]։

Կարսի բերդը իր գոյության ընթացքում բազմաթիվ անգամներ ձեռքից-ձեռք է անցել և ավերածությունների ենթարկվել, նորոգվել, նորանոր պարիսպներով և բուրգերով ամրացվել։ Այդ բոլոր, բազմատեսակ վերակառուցումների ժամանակ նախկին տեղամասերը փոփոխությունների են ենթարկվել, բայց շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, մինչև վերջերս էլ նա իր ռազմական նշանակությունը չէր կորցրել։ Ռազմական տեխնիկային համարժեքվելով՝ փոփոխությունների են ենթարկվել նրա պաշտպանողական կառուցվածքները, այդ ժամանակ ես քանդել ու վերափոխել են հները, կառուցել նորերը։ Ռազմական իշխանությունները այդ բոլոր փոփոխությունների ժամանակ ուշադրություն չեն դարձրել պատնեշների վրա եղած վիմական արձանագրությունների պահպանմանը. եթե այսօր Կարսի բերդի պատնեշների վրա մնացել են մի քանի հատ այդպիսիները, դա էլ հայ վարպետ-քանդակողների ջանքերի և հայրենասիրական զգացմունքի շնորհիվ է, որոնք աշխատել են կորուստից փրկել և նոր պատնեշների վրա, որևէ տեղ ագուցել այդ թանկարժեք հիշատակարանները։

Այսպիսով, կորստից փրկվել են մի քանի արձանագրություններ XIII դարից, որոնք այժմ, իհարկե, իրենց տեղում չեն, բայց իրենց բովանդակությամբ մնում են պերճախոս վկաներ XIII դարի շինարարության։ Այդ դարում թե՛ պատմական այլ աղբյուրները և թե՛ արձանագրությունները ցույց են տալիս, որ բերդի պարիսպների ամրացման համար մեծամեծ աշխատանքներ են կատարվել։

Մեզ համար առանձնապես հետաքրքիր է այն արձանագրությունը, որի մեջ հիշատակված են երեք ճարտարապետների անունները միասին։ Կարսի բերդի հնվայական շինությունների վրա բազմաթիվ ճարտարապետներ միասին են աշխատել, նման շինարարության ամենապատասխանատու մասը բրգերն են իհարկե և հենց այդտեղ էլ ճարտարապետներն ագուցել են իրենց հիշատակարան-արձանագրությունները՝ կապված բրգերի ավարտման գործի հետ։ Արձանագրությունները դժբախտաբար այլ մանրամասնություններ ճարտարապետների մասին չեն տալիս, բավականանում են միայն նրանց անվան հիշատակումով։

Մեզ հատկապես հետաքրքրող արձանագրությունը գրված է երկու քարերի վրա, առաջինի՝ երկու և երկրորդի՝ չորս տողերով և ուռուցիկ տառերով։

Մխիթարիչ գրիչ և նկարիչ
ՈՂԳ *(= 1244 թ.)*
Տէր ԱԾ. զաւրացո զրագաւորն մեր
ի վերա եկացաց: Կատարեցաւ
Բրջներս ձեռամբ Ընձկանն Գազ(ա)նին
և Ոլտին[1]:

(պլրոմ, նկ. 16)։

[1] *И. А. Орбели,* О двух терминах в надписях Ани, „Известия Российской академии истории материальной культуры", т. I, Петроград, 1921.

[1] *И. А. Орбели,* Армянские надписи на камне, „Христианский Восток", II, V, 1917. Սարգսեան, *104։ «Շիրակ», 85։ «Կրպէ», 25։*

2. Օրբելին Մխիթարիչին համարում է խաչքարի կազմող և արձանագրության գրիչ։

18. ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴՊԵՏ

Աշտարակի շրջանի Երնջատափ գյուղը գտնվում է Քասաղ գետի ափին, ժայռոտ ձորի մեջ։ Գյուղի մեջ կա Աստվածընկալ կոչված վանքը՝ բաղկացած մի քանի շենքերից, դրանցից գլխավորներն են կաթողիկե կոչված եկեղեցին և գավիթը, որոնց հարավային կողմում կան նաև փոքր մատուռներ։

Կաթողիկե եկեղեցու ներսում գրված արձանագրությունից պարզվում է, որ հուշարձանների մեկենասն է Վաչուտյան Քուրդ իշխանը իր կնոջ Խորիշահի հետ, որոնք և կալվածքներ ու սպասներ են նվիրել իրենց շինել տված եկեղեցուն։ Հուշարձանները շինված են 1244 թվականին[1]։

Վաստակավոր ճարտարապետ Թ. Թորամանյանը համառոտակի նկարագրում է այդ հուշարձանները, գլխավոր հուշարձանների հարավում գտնվող փոքր եկեղեցիները կամ մատուռները, ինչպես նաև նրանց հատակագիծը։ Նա մեջ է բերել նախորդ հետազոտողների կողմից չնկատված մի կիսեղծ համառոտ արձանագրություն, որը գտնվում է գավթի հարավ արևելյան սյան վրա.

Յոհանէս.... յիշեցէք[2]։

Համոզված ենք, որ այդ արձանագրության կետերով նշանակված մասում պակասում է մի բառ և այն վարդպետ բառն է։ Ինչպես արձանագրությունների մեջ ճարտարապետների անուններ հիշատակելու ձևերի մեր ընդհանուր բաժնում, այնպես էլ բազմաթիվ առանձին դեպքեր, որ մեջ են բերված այս աշխատության մեջ, հաստատում կռվաններ են այդ եղծված արձանագրության մեջ տեսնելու այս կարևոր հուշարձանի վարդպետ-ճարտարապետին։

Վարդպետ Հովհաննեսի կառուցած հուշարձաններր այժմ կիսավեր վիճակում են, բայց գոյություն ունեցած նկարագրությունից երևում է, որ նրանք մեծարվեստ կոթողներ են։ Թ. Թորամանյանը եկեղեցին համեմատում է Անիի Լուսավորչի եկեղեցու հետ. ընդառձակ չորս սյուների վրա կանգնած գավթի առաստաղը զարդարված է ստալակտիտներով և իր տիպի մեջ լավագույններից է։

1 Ալիշան, Այրարատ, 255, Շահխաթունեանց, Բ, 171,

2 Թ. Թորամանյան, Նյութեր..., Բ, 202,

Վարդպետ Հովհաննեսի ձեռագործը, գավթից բացի, պետք համարել անշուշտ նաև եկեղեցին. ըստ արձանագրության, եկեղեցու շինությունը ավարտված է 1244 թ. դրանից անմիջապես հետո պետք է սկսված լինի գավթի հիմնարկությունը։ Եթե ըստ սովորականի այն 6—7 տարվա ընթացքում է շինված, ապա իրավունք ունենք նրա ավարտումը համարել 1250 թվականին։

Վարդպետ Հովհաննեսի կառուցած հուշարձանները միայն մասնակի ուսումնասիրության են ենթարկվել. տեղում կատարվող ճարտարապետական և բանասիրական քննությունները կարող են ավելի ճշտություններ մտցնել[1] (ալբոմ, նկ. 17)։

19. ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴՊԵՏ

Դիլիջանի շրջանի Հաղարծնի վանքի շինությունների մեջ ճարտարապետական մտահղացման ու կատարման տեսակետից ամենանշանավորն է սեղանատունը։

Այդ ընդարձակ դահլիճը գտնվում է բակի արևմտյան ծայրում, առանձնակի։

Վանական կանոնների համաձայն, բոլոր միաբանները պետք է օգտվեին միայն ընդհանուր սեղանից և միաժամանակ (բացի ծանր հիվանդներից), և որովհետև միջին դարերում միաբանության թիվը երբեմն հարյուրների էր հասնում, այդ պատճառով էլ շինվում էին վանքերին կից ընդարձակ սեղանատներ։

Այդ սեղանատները բոլոր դեպքերում հիմնական ու գեղարվեստական կառուցումներ չէին և, հետևաբար, անխնամ մնալու դեպքում, շուտով ոչնչանում էին։

Այդ տիպի շենքերից պահպանվել են մի քանիսը միայն, որոնք շինվել են ժամանակի բարձր տեխնիկայով։ Այս տեսակետից լավագույններից մեկը Հաղարծնի վանքի սեղանատունն է։

Սեղանատան կենտրոնաօժանդակ նրապատակարգումը և մեծ ծավալի պահանջը փայլուն կերպով լուծել է նրա հեղինակ ճարտարապետ Մինասը։

1 Համեմատաբար լավ է ուսումնասիրված գավիթը, որի ճարտարապետական հետազոտությունը կատարել է Ս. Մնացականյանը. տե՛ս նրա «Հայկական գավիթները» (ռուսերեն) աշխատությունը։

23 մետր երկարությամբ և 10 մետր լայնությամբ այդ ընդարձակ դահլիճը իր հատակագծով, արտաքին ու ներքին ձևավորումով հայկական գերդաստանի մեծ տան—գլխատան, ղարադամ քարաշեն մարմնացումն է։ Գյուղական տան նման՝ արտաքուստ անպաճույճ, իսկ ներքուստ քարե շինանյութի ընձեռած հարմարության հետևանքով՝ վերասլաց խաչաձևող կամարներով և առաստաղի սալակտիտներով, զույգ սյուների և 12 որմնասյուների բեկբեկումներով, քարաշեն սեղանների և նստարանների կահավորումով, հարավային պատի զույգ լուսամուտներով և երկու երդիկ-լուսանցքի բացվածքով առաստաղում, այն օգտակար և մի կատարյալ գործի հազվագյուտ օրինակ է։

Միանգամայն իրավացի է ճարտարապետ Տոկարսկին, երբ գրում է, թե՝ ժամանակակից ճարտարապետներն էլ սովորելու բան ունեն նրանից[1]։

Սեղանատունը շինված է 1248 թ. համաձայն հարավային մուտքի շուրջը, քանդակված արձանագրության։

Մինաս ճարտարապետը Գեղարդի վիմափորերի նշանավոր վարդպետի նման իր անունը փորագրել է արևմտյան երդիկի հյուսիս-արևելյան անկյունում, վերից վար տեղադրված տառերով։ Շենքի երեսպատման քարերի վրա էլ հաճախ կրկնված է Մ տառը, որը նրա վարպետական նշանն է հավանաբար և նրա անվան սկզբնատառը։

Սեղանատան կառուցման ժամանակին մոտ տարիներին Հաղարծնում կառուցվել են ուրիշ շենքեր էլ. գավիթը, որի հարավային պատի տակ թաղված են Բագրատունի թագավորները, Ս. Ստեփաննոս եկեղեցին՝ կառուցված 1244 թ. և այլն։ Պետք է ենթադրել, որ արդեն ճանաչված Մինաս վարդպետն իր բաժինն ունի և դրանց կառուցման մեջ (այրում, նկ. 18, 19)։

20. ԱՆԱՆՈՒՆ ՎԱՐԴՊԵՏ

Լենինյին Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարդակերտի շրջանի Վաղահաս գյուղը գտնվում է հին ճանապարհի մոտ, Թարթառ գետի վրա եղած հին կամուրջներից մոտ մեկ կիլոմետր վերև։ Այդ հին ուղիով է անցնում նաև ներկա ասֆալտապատ ճանապարհը, որը հասցնում է մինչև Իստիսու ջրաբուժական առողջարանը։ Գյուղամիջի այժմ կիսավեր եկեղեցին հնում եղել է նշանավոր, երբեմն եպիսկոպոսանիստ և կոչվել է մայրաքաղաք։ Եկեղեցուն կից շինված է եղել նաև հատուկ դպրատուն-մատենադարան։ Համաձայն մի՝ վերջից թերի արձանագրության՝ եկեղեցին շինել է Վասակի որդի Հասանը՝ 1283 թ.։

Ներկա Վաղահաս գյուղից դեպի հարավ-արևելք մեկ կիլոմետր հեռու, վտակների խառնարանի մոտ մնում են հին եկեղեցու և գյուղատեղի ավերակներ, որը տեղացիներն անվանում են հին Վաղահաս։ Այդ ավերակներից էլ վեր, մոտ 2—3 կիլոմետր հեռու, բարձր սարալանջին գտնվում է մի փոքր եկեղեցի, որը անուն չունի, տեղացիները կոչում են Կարմիր վանք և այս անունով էլ հիշատակված է Մ. եպ. Բարխուդարյանի գրքում[1]։

Եկեղեցին մի փոքր երկարավուն թաղածածկ շենք է, որին արևմուտքից կցված է փոքր գավիթ, իսկ հարավ-արևելքից՝ մի փոքր մատուռ։ Բոլոր շենքերը շինված են տեղական սպիտակավուն կրաքարի ճեղքած բեկորներով[2]։ Եկեղեցին ունի երկու մուտք, արևմուտքից և հարավից։

Հուշարձանի հարավային և հյուսիսային պատերը չափազանց հաստ են. դրանց մեջ, գավթում, շինված են մեծ խորշեր, որոնցից և մուտքեր են բացվում դեպի եկեղեցու պատերի մեջ տեղավորված ավանդատները։

Հուշարձանի պատերը շարված են անտաշ քարերով. այստեղ էլ, ինչպես և Ղարաբաղի այլ հուշարձանների վրա, պատերի մեջ ագուցված են նույն կրաքարից տափակ շերտեր, որոնց վրա և գրված են արձանագրությունները։

[1] Н. М. Токарский, Архитектура Древней Армении, Ереван, 1946, стр. 262.

1 «Արցախ», էջ 193. բստ երևույթին անձամբ չի տեսել, այլապես անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ բաց է թողել, այլ ոչ մեկը չի վերծանել պատճենահանված՝ արձանագրություններից և ոչ մեկը չի վերծանել։

2 Ամբողջ Լեռնային Ղարաբաղում շինանյութի այս տեսակն է գործածված և այսպիսի մեթոդով. կրաքարի այս տեսակը փխրուն է, մեծ բլոկներով և սրբատաշ մշակելու համար անհարմար։ Ղարաբաղի սահմաններում միայն երկու հուշարձաններ կան այլ քարով և մաքուր սրբատաշ, դրանք Գանձասարի և Գտչա վանքի նշանավոր հուշարձաններն են։

Շինարարական արձանագրությունը գտնվում է հյուսիսային պատի արևելյան բարձր մասում, արտաքուստ, գրված է մի նեղ և երկարավուն սալաքարի վրա՝ 16 տողով:

Թիւն :ՈՀԳ: էր (1224) ես Սա-
կո որդի Վախտանգ-
ա, եղբայր Հասանա շ-
ինցի զեկեղեցիս եւ ե-
տու զորդի իմ զԳրիգոր-
ս սպասաւոր. եւ զիմ արկ-
ած այգին ի Ճամի իւր կառ-
ապանովն իմ հոգոյս. ո-
վ զայն խափանէ յայ ի
հաւրէ եւ յորդո եւ ի սբ հոգ-
ոյն եւ :ՅԺԸ: (318) հայրապետ-
ացն անիծեալ եղիցի եւ ի-
մ յանցանացն պարտա-
կան: Որ ի տարումն :Լ: (30) աւ-
րեն ժամս պարտակա-
ն եղիցի առ Ած. ամէն:

Եկեղեցին շինել տվող Սակոի գերեզմանն էլ գտնվում է գավթի ներսում: Այստեղ նույն կրաքարից շինված մի մեծ և տափակ գերեզմանաքար կա դրված, որի երեսին, տողերի մեջ, 9 տողով գրված է հետևյալ տապանագիրը.

Այս
է հանգիս-
տ բարէպա-
շտ պատր-
ոնին Սակոի.
զոր տացէ
Քս սմայ զ-
արքաուբ(իւն)
երկնից, ամէն:

Եկեղեցին կարճ ժամանակից հետո, ինչպես երևում է, խիստ վնասվել է, և հիմնավորապես նորոգվել, որը և իրավունք է տվել եկեղեցու հարավային պատին, ներքուստ, գրված 1259 թ. կրող արձանագրության հեղինակներին, գործածել շինեցի *և ոչ թե* նորոգեցի *բայը. մեր նյութի համար այդ կարևոր արձանագրությունը հետևյալն է.*

Թվ. :ՉԸ: (1259)
Ես տր Գրիգոր, Ամա-
րասա եպիսկոպոս, մ-
իաբանեցա սբ ո[ւ]խտի-
ս եւ ետու զամէն վար-
ձս վարդապետին, որ շ-
ինեց զե-
կեղեցիս. առաջնո-
րդ տեղիս տր Գրիգոր-
էս եւ ա[յ]լ միաբանքս կ-
արգեցին ինձ ի տարո-
ջն :Գ: ժամ անխափան. ով
շառնէ կապած է յայ:

Դժբախտաբար այս արձանագրության մեջ վարդպետ-ճարտարապետի անունը չի գրված. այն չի հիշատակված նաև վարդպետի հիշատակագիր հանդիսացող արձանագրության մեջ, որը փորագրված է շենքի ամենաակնառու տեղում, եկեղեցու արևմտյան մուտքի կամար ճակատաքարի վրա. ահա և այս արձանագրությունը.

Յանուն այ.
Ես վարդպետ եկեղ-
եցոյս միաբանեցայ
սբ ուխտիս. եւ ետուն ի տ-
արոջն մի աւր ժամ անխա-
փան կատարել:

Ճարտարապետների մեր ցանկի մեջ սա առաջին դեպքն է, երբ վարդպետ *կոչումը փոխարինել է նույնիսկ նրա անձնանվանը, ավելի ճիշտ մոռացության է տվել այն (նման մի դեպք էլ ունենք քիչ հետո, որին պայմանականորեն կոչել ենք Վարդպետ Հերհերցի): Այս երևույթը ցույց է տալիս, որ վարդպետ-ճարտարապետները շատ անվանի մարդիկ են եղել իրենց մասնագիտությամբ և եզակի, որոնց կոչումը միայն նշելով ամեն ոք հասկացել է, թե ո՞ւմ մասին է խոսքը. ճիշտ այնպես, ինչպես այժմ էլ նշանավոր մասնագետներին ու արվեստագետներին իրենց միջավայրում միայն* վարպետ *պատվանունով են հիշատակում:*

Միաժամանակ սա առաջին դեպքն է, երբ որոշակի հիշատակված է վարդպետին վարձատրության տալու խնդիրը: Թեև վարձատրության չափը ճշգրտորեն չի նշված, բայց պետք է, որ այն զգալի մասը կազմեր շենքի շինարարական ծախսերի մեջ, որպեսզի Ամարասի եպիսկոպոս Գրիգորը այն իր վրա վերցներ և այդ առթիվ հատուկ արձանա-

գրությունն գրել տար և պատարագներ ստանար դրա դիմաց։ Սակայն կողմնակի միջոցներով վարդապետին այս դեպքում տրված վարձատրության մոտավոր չափը հնարավոր է որոշել։ Խնդիրն այն է, որ պատարագների չափը XIII դարի համար գրեթե ճշգրտորեն որոշված է, այն հավասար է եղել մոտավորապես 20 դահեկանի[1]։ Մեջ բերված արձանագրության մեջ տեր Գրիգորը որպես եկեղեցուն միաբանվելու գին տվել է վարդապետի վարձը և դիմացն ստացել երեք պատարագ. հետևաբար, այս պատարագագնի համեմատ, նա վճարած պետք է լինի 60 դահեկան։ Կարելի է ենթադրել նաև որ վարդապետին տրված մեկ պատարագագին 20 դահեկանը ես վճարել է նույն տեր Գրիգորը, այդ դեպքում վարդապետի ստացածը կհավասարվի 80 դահեկանի։

Այս անանուն վարդպետ-ճարտարապետի շինած, ավելի ճիշտ հիմնովին վերանորոգած փոքր շենքերի համար 60 կամ 80 դահեկանը զգալի գումար էր XIII դարի համար, մանավանդ այսպիսի մի ծայրամասային վայրի պայմաններում։

21, 22. ՄԽԻԹԱՐ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՂԲԱՐ ՔԱՐԳՈՐԾ

Այս շնորհալի ճարտարապետ-քանդակագործն իր ստեղծագործական աշխատանքները թողել է Վայոց ձորի Ախտա և Մարտիրոս գյուղերի սահմաններում։

Վայոց ձորի այս մասը հնում Պռոշյանների իշխանության մասն էր կազմում և նրանց կենտրոններից մեկն էր։

Գլամուր կամ Վերին Ախտա գյուղում, ձորի եզրին, ամբողջական վիճակում, կանգնած է մի գողտրիկ հուշարձան. այն բաղկացած է ճարտարապետորեն. շատ գեղեցիկ ձևավորված կոթող-խաչքարից և արևելքից նրան կից շատ փոքրիկ մի մատուռից։

Ծավալով փոքր այս հուշարձանը մտահղացման և կատարման տեսակետից բարձրարժեք գեղարվեստական մի գործ է։ Ճարտարապետորեն ձևավորված խաչքարեր՝ շրջանակներով Հայաստանում և հատկապես Սյունիքում, շատ կան, բայց այս դեպքում վարպետները այդ բոլորին կցել են արևելքից մի շատ փոքրիկ մատուռ ևս, որը սակայն խաչքար-կոթողին չի ծածկում, այլ ընդհակառակը, նրա հետ կազմելով մի ամբողջություն, ավելի շեշտում է նրա տեսանելիությունը։ Իր տեսակի մեջ նման հուշարձան մենք ուրիշը չգիտենք։

Հուշարձանը գրեթե բոլոր կողմերից ունի հարթաքանդակ և բարձրաքանդակ զարդեր, որով դիտողին գրավում է ամեն կողմից, հավասար հետաքրքրությամբ։

Արվեստի այդ չքնաղ գործի հեղինակներն են Մխիթարը և Շնորհավոր աղբար քարգործը, որոնք բարեբախտաբար իրենց ստորագրությունը թողել են հուշարձանի վրա։

Ի ԹՎ Հ(ԱՅՈՑ) ։ՉԺԲ։ (=1263)| ԲԱՐԷՊԱՇՏ ԻՇԽԱՆՈՒԹՆ ՊՌՈՇՈ, ՄԽԻԹԱՐ| ԵՒ ԱՐԵՒԻԿ ՈՐԴԻ ԽՈՅԴԱՆԱ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉԸՍ| ԵՒ ՄԱՏՈՒՌՆՍ. Ի ԳՈՒՂՍ ԵԿԵՂԵՑԻ ԽՍԿ ՉԿԱՐ| ՇԻՆԱԾ, ԶԵԿԵՂԵՑԻՆ ԱՅԼ ՄԵՔ ՇԻՆԵՑԱՔ ՄԵՐ|ՀԱԼԱԼ ԱՐԴԵ(Ա)ՄՔ, ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԲ. ՄԵԶ| ԵՒ ԱՄՈՒՍՆԱՑ ՄԵՐՈՑ. ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՅԱՂ(ԱԻԹՍ| ՅԻՇԵՑԷՔ)։

ՄԽԻԹԱՐ, ՇՆՈՀՈՐ ԱՂԲԱՐ ՔԱՐԳՈՐԾ ՅԻՇԵՑԷՔ[1].

Նույն բովանդակությունը կրկնված է նաև կոթողի ներքևում, պատվանդանի վրա, որի մեջ հիշատակված է նաև ժամատան շինության մասին։ Կասկած չկա, որ նույն մեկենասների կողմից շինել տված նաև գյուղամիջի եկեղեցին ու ժամատունն էլ պետք է որ վարպետներ Մխիթարի ու Շնոհոր աղբոր ձեռակերտները լինեն. բայց այդ երկու հուշարձաններից այժմ միայն չնչին հետքեր են մնացել, նրանց ավերակների վրա հետագայում նորերն են շինել։

Բոլոր օրինակները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր կենտրոնում, որտեղ կառուցումներ են կատարվել, որոշ մի ժամանակաշրջանի համար գործում է մի գլխավոր ճարտարապետ. այնպես. որ իր ժամանակի համար այս շրջանի շինարարությունը ան-

1 Թ. Ավդալբեկյան, Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ, ՀՍՍՌ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», № 2, 1927։

1 Գ. Հովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, հատ. Գ, էջ 6—7, Նիւ-Եորք, 1942 թ.։ Ջալալեան, Բ, 204—205։ Քաջբերունի, Արարատ, 1891, էջ 136։ «Սիսական», 147։ МАК, XIII, 155։ «Վիմական տարեգիր», 105—106։ «Ազգագրական Հանդես», XII, 287։

սխալ կերպով պետք է վերագրել Մխիթարին և Շնոհոր քարգործին։

Ինչպես տեսնում ենք, այս հուշարձանի վրա ստորագրել են երկու վարպետներ, Մխիթար և Շնոհոր (Շնորհավոր), ստորագրության հակիրճությունը թույլ չի տալիս որոշելու նրանց հարաբերությունը, մեզ թվում է սակայն, որ դրանք հայր և որդի պետք է լինեն, որովհետև քարգործ կոչումն ըստ երևույթին վերաբերում է երկուսին, հետևաբար վարպետ և աշակերտ չեն կարող լինել, համենայն դեպս գործակիցներ են, հավասար արժեքով, որոնցից միայն Շնորհավորի ստորագրությունը կրող հուշարձանների դեռևս պիտի հանդիպենք։

Երկրորդ վայրը, ուր կանգուն է մնացել Շնորհավոր աղբար քարգործի կերտած հուշարձանը, դա հարևան Մարտիրոս գյուղն է, որի պատմա-կուլտուրական արժեքի մնայուն հանգամանքը մեծ չափով Շնորհավորի կերտած հուշարձանին ենք պարտական։

1283 թ. ոմն Դեղիկա որդի Մխիթար երկրի իշխաններից իրավունք է ստանում նոր գ․ուղ հիմնելու։ Նորակերտ գյուղին տրվում է Մարտիրոս անունը, այստեղ կառուցվում է եկեղեցի (վկայարան) ու մի հիանալի աղբյուր, և ի հիշատակ այս բոլորի՝ աղբյուրի կողքին կանգնեցվում է հիշատակարան-խաչքար։

Իր տեսակի մեջ եզակի այս կուլտուրական ձեռնարկությունների մեջ զգացվում է Շնորհավոր աղբոր բարձր արվեստը։ Նրա վարպետ ձեռքով կառուցած և մնայուն հուշարձանների շնորհիվ է, որ դարերի ավերածություններից հետո այս կուլտուրական երևույթի հիշատակները մնացել են անջինջ։

Գյուղի մշտահոս աղբյուրի գլխին կանգնած է վարդագույն գրանիտից շինված կոթողը ի համերժացումն այդ կուլտուրական ձեռնարկությունների։ Հազվադյուտ խնամքով կերտված այս խաչքարը մի բարձր տախտակաձև քար է, կանգնած նույնպես գրանիտե լավ մշակված պատվանդանի վրա։ Խաչքարը մոնումենտալ, տեսք ունի, զուրկ մանր օծերով քանդակներից. կենտրոնում խաչն է, որի թևերի տակ կան մեկական այլ մանր խաչեր, վերի անկյուններից կախված են մի-մի արմավենիկի տերևներ. խաչքարի ճակատին հյուսածո արմատից կախված են նշենու տերևներ, մեջտեղը վարդյակ, կենտրոնական խաչի և պատվանդանի արանքում գոտին է հավիտենականության պտտվող քանդակով. խաչի և գնդի մեջ Շնորհավոր քարգործի ստորագրություն-հիշատակարանն է «ՋԵՌԱՄԲ ՇՆՀԱԻՈՐԻՍ»։ Ի Թվ. ՉԼԲ (1283)։

Խաչքարի ճակատին, տակը և կողքերին գյուղի կառուցման հետևյալ հիշատակարան-արձանագրությունն է.

ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ ԵՍ ՄԽԻԹԱՐ/
ՈՐԴԻ ԴԵՂԿԱ ՀՐԱՄԱՆԱՒ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱ-
ՆԻՆ/ ՄԵԾԻՆ ՊՌԱԻՇՈ ԵՒ ՈՐԴՈՅ ԻՒՐՈ ՊԱ-
ՐՈՆ/ ՀԱՍԱՆԱ ՇԻՆԵՑԻ ՋԳԵԱԻՂՍ ՄԱՐՏԻ-
ՐՈՍ. ԵՒ/ ԿԱՆԿՆԵՑԻ ՋԽԱՉՍ Ի ԴՈՒՌՆ ՍԲ
ՎԿԱՅԱՐԱՆԻՍ/. Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ ԻՆՋ ԵՒ
ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ/ ՄԱՄԵՐԻՆ ԵՒ ՈՐԴՈ ԻՄՈ
ԽԱՐԻՓՇԱՀԻՆ ԵՒ/ ԴՍՏԵՐ ԻՄՈ ՌՋՈՒՔԱՆԻՆ։
ՔՍ. ԱԾ.
ԿԱԶՄԵՑԱՒ ՋԵՌԱՄԲ
ՇՆՀԱԻՈՐԻՍ։ Ի ԹՎ ։ՉԼԲ։ (=1283)
ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՒՔ ՅԻՇԵՑ(ԷՔ) Ի ՏՐ.

Արձանագրության մեջ հիշատակված վկայարանը բոլորովին անհետացել է, նրա տեղը շինված է մի մեծ եկեղեցի XIX դարում, որի պատերի մեջ ագուցված կան հնի բազմաթիվ բեկորներ — քանդակազարդ քարեր, արևի ժամացույց և այլն[2]։

Սխալ Շնորհավոր քարգործի անունը կրող մի այլ խաչքար է հիշատակում Մարտիրոս գյուղի նորաշեն եկեղեցու մոտ, 5 արշին բարձրությամբ, որն այլ հետազոտողների մոտ չի հանդիպում և կարող է պարզապես հիշյալ աղբյուրի խաչքարը լինել։ Սակայն նկատի ունենալով այն, որ այս խաչքարի արձանագրության բովանդակությունը այլ է, կարելի է կարծել, որ սխալմունք չէ։ Այս արձանագրության մեջ գյուղի շինության մասին չի խոսվում, այլ միայն խաչքարի. մինչդեռ առաջինի մեջ հիշվում է, որ խաչը կանգնեցված է «ի դուռն սբ. վկայարանիս»,

---

1 Գ. Հովսեփեան, Խաղբակեանք, III, էջ 5—6։ Ջալալեանց, Բ, 200. Քաջբերունի, Արարատ, 1891, էջ 109. «Սիսական», 176. «Վիմական տարեգիր», 125. «Ազգագրական Հանդես», XII, 288։

2 Այս եկեղեցու կտրանն էլ, երդիկի վրա, դրված է մի մեծ կլոր քար, ըստ երևույթին ջրաղացի ներքևի քարը, բայց մեջտեղից ուղիղ կիսած, դրանց վրա մնացել են արձանագրության մնացորդներ՝ Պռոշի և նրա որդի Հասանի անուններով և ՉԻԸ թվականով։

այս երկրորդի մեջ՝ «ի դուռն սբ. Ստեփանոսի»։ Այդ պատճառով էլ կարծում ենք, որ սա տարբեր է և իր արձանագրության բովանդակությամբ լրացնում է առաջինին, պարզելով առաջինի մեջ «Վկայարան» կոչված եկեղեցու անունն ու տեղը։

Յիսուս Քրիստոս. կազմեցաւ ձեռամբ Շնորհիս, որք ընթեռնուք յիշեցէք. կանգնեցի զխաչս ի դուռն սուրբ Ստեփանոսի բարեխաւսութիւն ինձ [եւ] ամուսնոյ իմոյ Մամերին և որդոյ իմոյ Խարիփշահին և դստեր իմոյ Զուքաին[1] *(հավանաբար Ռուզուքանին—* Ս. Բ.):

Բացի այս հուշարձաններից, որոնք, անկասկած, Շնորհավոր ճարտարապետի ձեռքի գործն են և կրում են նրա անվան հիշատակությունը, Մարտիրոս և Ախտա գյուղերում էլ կան բազմաթիվ հուշարձաններ, նույն ժամանակին վերաբերող և նույն ոճի, որոնց շինությունը պետք է Շնորհավորին վերագրել։ Այսպես, Ախտա գյուղի մոտ մի աղբյուր կա, գլխին գեղեցիկ խաչքար կանգնեցրած, ոմն Սարգսի և իր որդի Պետրոսի կողմից 1258 թվականին։ Արձանագրության վերջին մասը ջարդված է, որտեղ հավանաբար կազմողի ստորագրությունը պետք է լիներ։

Մեզ հասած արձանագրությունների բովանդակությունից պարզվում են Շնորհավոր աղբար քարգործի կերտած հետևյալ հուշարձանները.

1. Ախտայի կանգուն կոթողը, շինված 1263 թ.։

2. Նույն գյուղում մի եկեղեցի (ըստ կոթողի արձանագրության), որն այդ թվականից առաջ պետք է շինված լիներ. այդ եկեղեցին վաղուց ի վեր քանդվել է և նրա հիմքերի վրա նորն է շինվել ուշ ժամանակներում, վերջինիս միայն ավերակներն են մնացել։

3. Մարտիրոս գյուղի աղբյուրն ու գրանիտե խաչքարը, երկուսն էլ կանգուն. շինված 1283 թ.։

4. Մարտիրոս գյուղում «Վկայարան», որն այժմ գոյություն չունի։

5. Ախտա գյուղից դեպի արևմուտք, Խաչի ձորում մի աղբյուր և խաչքար, թիվն անհայտ։

Ամփոփելով եղած նյութը, ստացվում է հետևյալ պատկերը. Շնորհավոր աղբար քարգործը սկսել է աշխատել Մխիթար քարգործի հետ, որը նրա հայրն է կամ գործակիցը, բայց անշուշտ տարիքով ավելի մեծ, որովհետև շուտով Շնորհավորը մնում է մենակ։

Շնորհավորի համար վաղագույն թվականը Ախտայի հուշարձանի կառուցումն է, այն է 1263 թ., այդ շենքը ցույց է տալիս արդեն կատարյալ վարպետության հասած մի արվեստագետի։ Վերջին թիվը Մարտիրոս գյուղի խաչքարի վրայինն է՝ 1283 թ. ստացվում է Շնորհավոր քարգործի համար 20 տարվա գործունեության մի ժամանակամիջոց, որն անշուշտ շատ քիչ է, ուստի պետք է ենթադրել, որ նրա գործունեությունն ավելի վաղ էր սկսված։

Շնորհավոր քարգործը միջնադարի մեր շնորհալի ճարտարապետներից է, որից մնացել են և՛ ճարտարապետական, և՛ խաչքարային հուշարձաններ։ Ախտայի փայլուն կոթողը այդ երկու արվեստների հիանալի զուգորդման մի նմուշ է (ալբոմ, նկ. 20, 21, 22, 23)։

23. ՍԻՐԱՆԵՍ ՎԱՐԴՊԵՏ

Չնայած այն հանգամանքին, որ երեք տարբեր տեղերում և երեք արձանագրությունների մեջ հիշատակվում է այս նշանավոր ճարտարապետի անունը, բայց արձանագրությունները վերծանողների աղավաղումների հետևանքով, նա մնացել է անհայտության մեջ, մինչդեռ նրա կանգնեցրած կոթողները իր դարաշրջանի լավագույն նմուշներից են, և հենց իր կենդանության օրոք նա մեծ հեղինակություն է ունեցել և առատորեն վարձատրվել։

Սիրանես ճարտարապետի անվան հնագույն հիշատակությունը գտնվում է Վայոց ձորի Արատես (այժմ Այսասի) գյուղի նշանավոր հուշարձանի արձանագրության մեջ։

Այդ արձանագրության հայտնաբերման պատիվը պատկանում է անխոնջ ուսումնասիրող բժիշկ Քաջբերունուն (Գաբրիել Հովհաննիսյան)[1]*։*

1 ՄԱԿ, XIII, 157. *Լալայանը սույն հուշարձանը դնում է Ախտա գյուղի մոտ, դեպի արևմուտք մի ձորի մեջ, որը կոչվում է «Խաչի ձոր», Ազգ. Հանդ., XII, էջ 287—288։*

1 *Քաջբերունուց հետո այդ վայրն այցելած ճամփորդների մոտ դրա հիշատակությունը չկա. հավանաբար գյուղացիների կողմից օգտագործվել է նոր շենքերի մեջ —* Ս. Բ.։

Քաջբերունին համառոտ կերպով այսպես է նկարագրում արձանագրությունը. Զանգակատան կամարից ընկած մի քարի վրա գըրված է «Աստուած ողորմի Սիրանէսի»[1]:

Նկատի ունենալով քարի կամարաձևությունը (որից Քաջբերունին եզրակացնում է, որ կամարից է ընկած) և արձանագրության իմաստը, կարծում ենք, որ արձանագրությունը լրիվ է։ Բազմաթիվ դեպքեր կան այս ձևի կարճ արձանագրությունների, հուշարձանի մի որևէ անկյունի, բայց ակնառու տեղում գրված, որոնք բոլորն էլ նման կարճ ձևով հիշատակում են մեր մեծագործ ու համեստ ճարտարապետների անունները միայն։

Արատեսի հուշարձանների խմբից արդյոք ո՞րն է կառուցել Սիրանես ճարտարապետը։

Արատեսի հուշարձանների խումբը բաղկացած է մի քանի մեծ և փոքր եկեղեցիներից, մատուռներից և գավթից. արձանագրական և մատենագրական տեղեկություններ դրանցից յուրաքանչյուրի շինության մասին չկան։ Ամենահին արձանագրությունը մի խաչքարի վրա է, որն ագուցված է եկեղեցու պատի մեջ և կրում է 975 թ. այնուհետև կա Վասակ Խաղբակյանի արձանագրությունը 1220 թվականից, բայց դրանք չեն վերաբերում շենքերի կառուցումներին։ Շինարարական միակ արձանագրությունը գրված է եկեղեցու արևելյան պատին, արտաքուստ, գավթի մեջ։ Նկատի ունենալով հրատարակությունների մեջ եղած մեծ տարընթերցումները և մեր նյութի համար նրա ունեցած կարևորությունը, մեջ ենք բերում այն լրիվ, տեղում կատարած մեր վերծանությամբ.

1. Ի Թվ ։Չ[Ժ]Դ։ (1265) Ի Տ[Է]ՐՈՒԹԵ(ԱՆ)
ՓԱՌԱՒՈՐ ԻՇԽԱՆԻՆ ՍՄՊԱՏԱ ԵՒ ՀԱՐԱԶ-
2. ԱՏԻՆ ԻՒՐՈ ՏԱՐՍԱՒՃԻՆ, ԵՍ ՆՎԱՍՏ
ԱԲԵՂԱ ՀԱՅՐԱ-
3. ՊԵՏ ԱՆՈՒՆ ՍՊԱՍԱՒՈՐ ԲԱՆԻ ԿՐԿԻՆ
ՇԻՆԵՑԻ ԶՎԱՆՔ
4. Ս ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ՇԻՆԵ-
ՑԻ ԶԳԱՒԻԹՍ ԵՒ ԶԱՅԼ ԻՆՉ ՈՐ
5. ԷՐ ԵՒ [ԱՅԼ] ԱՇԽԱՏՈՒԹԻ(ԻՆ)։ ԵՒ
ԶԳՈՋՈՑ ԱՅԳԻՆ ՅՈՍՏԻՆ ԵՒ ԶԹԵՂՈՒՆԻ
6. ՄՃՌԿԱՋՈՐ ԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵ(Ա)ՄՔ
ԳՆԵՑԻ ԵՒ ՏՎԻ Ի ՍԲ ՍՒՈՆՍ։ ԵՒ
7. ԵՂԲԱՐՑՍ ԿԱՄԱՒ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ
ՋՍԲ ԳՐԻԳՈՐԻՆ ԶՇԱԲԱԹՆ

[1] «Այրարատ», 1888, ԺԲ, էջ 768։

8. ԵՒ ԿԻՐԱԿԻՆ ԻՆՋ ՅԻՇԱՏԱԿ ԿՐԿԻՆ...
ԿԱՏԱՐ-
9. ԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՄԷՆ ՍՐԲՈՑ ԵՒ
ՀԱԿԱՌԱԿՈՂՔՆ
10. ՏԱՆՋԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱՅԻ ԵՒ ԸՆԴ ԲԵ-
ԼԻԱՐԱ Ի ՄԵԾԻ ԱՒՈՒՐՆ. ԱՄԷՆ[1]։

Այս արձանագրությունը գրված է խաչաձևող կամարներով գավթի ներսում, որի առաստաղի կամարակալ քարի վրա գտնվել էր Սիրանեսի հիշատակարան-արձանագրությունը։ Շինարարական արձանագրությունները գրվում են սովորաբար կառուցումն ավարտելուց հետո, կառուցված շենքի մի նշանավոր տեղում։ Հետևաբար սա հենց այն գավիթն է, որ Հայրապետ աբեղան շինել է տվել Սիրանես ճարտարապետին, և որի կամարի վրա վերջինս գրել է նաև իր հիշատակարանը։ Այս գավթից բացի, ըստ արձանագրության, բազմաթիվ նորոգումներ են կատարվել, անշուշտ նույն Սիրանեսի ղեկավարությամբ, բայց դրանք ստուգել կարելի է միմիայն ճարտարապետական մանրամասն չափագրումների և հետազոտման միջոցով։

Սիրանես ճարտարապետի շինած գավիթը ծավալով մեծ չէ, բայց խաչաձևող կամարների փայլուն գործադրումով և զարդաքանդակների ու ամբողջ շենքի խնամքոտ և բարձրարվեստ կատարումով, արդեն բավական է անմահացնելու մեծ արվեստագետի համբավը։ Հայկական ճարտարապետության կառուցողական ձևերից այդ լավագույնի, խաչաձևող կամարների, կատարման մեջ իր բաժինն ունի Սիրանես ճարտարապետը։ Այդ փայլուն կառուցումից հետո, երբ ողոշվեց Նորավանքում Սմբատ «արքայի» համար տապանատուն կառուցել, Տարսայիճ Օրբելյանը և իր որդին՝ Ստ. Օրբելյանը, Սիրանեսին հանձնարարեցին այդ նոր հուշարձանի կառուցումը, որպես ճանաչված ու հռչակավոր ճարտարապետի։

* * *

Սիրանես ճարտարապետի կառուցած երկրորդ հայտնի հուշարձանը գտնվում է

[1] Քաջբերունի, Այրարատ, 1888, ԺԲ, էջ 768։ Ջալալեանց. Բ, էջ 157։ МАК, XIII, էջ, 89։ «Սիսական», էջ 142։ Լալաեան. Ազգ. Հանդ., XXVI, էջ 80—81։ Բացի Քաջբերունուց մնացած բոլոր հրատարակություններում թվականը սխալմամբ ։ՉԺԹ։ (1270) է նշանակված։

վայոց ձորի հռչակավոր Նորավանքում, Սյունյաց եպիսկոպոսանիստ կենտրոնում։ Նորավանքը ոչ միայն Սյունյաց հոգևոր կենտրոնն էր XIII դարում, այլև Օրբելյան տոհմի տապանատունը։ Այստեղ, ս. Կարապետ կոչվող գլխավոր եկեղեցու առաջ, թաղված էին Օրբելյանների ավագ սերնդի անդամները, որոնց վրա Սմբատ Օրբելյանը 1261 թ. շինել տվեց մեծ և փառավոր մի գավիթ։

1273 թ. երբ Սմբատ Օրբելյանը մեռավ Թավրիզում և նրա դիակը տեղափոխվեց հայրենիք, Սմբատի փոխարեն տոհմի ավագ մնացած նրա եղբայր Տարսայիճը, պատմագիր Ստ. Օրբելյանի հայրը, որոշել էր «արքայաշուք» եղբոր համար նոր և հատուկ տապանատուն կառուցել։ Այդ նոր շենքի կառուցումն ահա նա հանձնարարեց Սիրանես ճարտարապետին։ Այս տապանատան կառուցումն ավարտվել է համաձայն արձանագրության 1275 թ.

1. ԵՍ ՏԱՐՍԱՒՃ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽ-
2. ԱՆ ՇԻՆԵՑԻ ՋԴԱՄԲԱՐԱՆՍ Յ-
ԱՂԱԳՍ ԵՂ-
ԲԱՒՐ ԻՄՈ ՍՄՊԱՏ
ԱՐՔԱՒՆ ՎԱՍՆ ՈՐՈ ԱՂ-
ԱՉԵՄ ՅԻՇԵԼ Ի ԹՎ. ։ՉԻԴ։ (1275)։

Սիրանես վարդպետի այս երկրորդ ձեռագործը շինված է ուրեմն հատուկ նպատակով ու ծրագրով, որպես տապանատուն, բայց սովորական տապանատներից նա տարբերվում է իր հատակագծով։ Տապանատները սովորական գավիթների ձևով են շինված լինում, այսինքն մեծ սրահներ՝ սյունազարդ, կամ անսյուն, առանց գմբեթի և ապսիդի։ Հայաստանի իշխանական տոհմերից յուրաքանչյուրն իր տիրապետության սահմաններում հատկապես գլխավոր վանքին կից, շինում էին այդպիսի գավիթ-տապանատներ։ Սիրանեսի շինած տապանատունը ոչ թե գավիթ-տապանատուն է, այլ եկեղեցի-տապանատուն։

Գավիթները սովորաբար չեն ունենում հատուկ անուն և ապսիդ-բեմ։ Սիրանեսի շինածն ունի ժամասացության համար բեմ և կոչվում է ս. Գրիգոր։

Սիրանեսի ձեռագործ այս տապանատունը, չնայած սահմանափակ նպատակադրմանը և հատակագծային պարզությանը, կատարման ու ձևավորման տեսակետից արվեստի կատարյալ մի գործ է, արժանի, Նորավանքի մյուս շենքերի հետ միասին, XIII դարի լավագույն կոթողներից մեկը համարվելու։

Սիրանես ճարտարապետն իր այս նոր կառուցումն ավարտելուց հետո, անօրինակ առատ վարձատրություն է ստանում իր մեկենասից, Տարսայիճ Օրբելյանից։ Սիրանեսի ձեռակերտ ս. Գրիգորի հյուսիսային պատին՝ դրսից, քիվի տակ, պատի ամբողջ երկարությամբ տեղավորված է չորս տողանի գեղագիր արձանագրություն՝ Տարսայիճ Օրբելյանի անունից և ստորագրությամբ։ Այս արձանագրության գրիչն անշուշտ հենց ինքը Սիրանեսն է, որն այդ բնագավառում էլ ցույց է տվել իր մեծ արվեստը։ Արձանագրությունը XIII դարի գրչության լավագույն նմուշներից մեկը կարելի է համարել։

Չնայած այն հանգամանքին, որ այս արձանագրությունը գրեթե ամբողջական է ու լավ պահպանված և ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, բայց հրատարակիչների կողմից նրա իմաստն աղավաղելու հետևանքով կորել է Սիրանես ճարտարապետի դերն ու նշանակությունն ամբողջապես, ինչպես և նրան՝ իր ձեռակերտի համար տրված վարձատրության խնդիրը։

Նկատի ունենալով վերոգրյալները, բերում ենք այդ կարևոր արձանագրությունն ամբողջովին և բացատրություններով.

1. ԿԱՄԱՒՆ ԱՅ ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ՏԱՐՍԱ-
ՅԻՃԻՍ| ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՍ, ՈՐ ԻՇԽԵՑՈՂ
ԷԻ |ՍԻՒՆԵՑ ՆԱՀԱՆԳԻՍ ՈՐՈՏԱՆ ԵՒ ՇՆՀԵ-
ՐՈՅ.| ՈՐ ԵԿԵՂԵՑԻ ՏՎԻ ՇԻՆԵԼ ՍԻՐԱՆԷՍ
ՎԱՐԴՊԵՏԻՆ,| ՈՒ ՋՀԱԼԷՋՈՐԻ ՇՆՀԵՐՈՅ
ՆՐԱՅ ՀԱՅՐԷՆԻՔ| ՏՎԻ ԻՒՐ ՍԱՀՄԱՆԱՒՔՆ
Յ-|
2. ՈՐԴԵՑ ՅՈՐԴԻՔ ՆՐԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ
ՏՎԻ. ՈՒ ԻՆՉ| ՋԵԿԵՂԵՑԻՆ ԼՄՆԵՑԻՆ ԽԻԼԱՅ
ԿՈՒՏԱՅԱՔ ։Ճ։| ՍՊԻՏԱԿԻ, ԱՅՆ ԽԻՇԱՅԻՆ
ՓՈԽԱՆ ՋԱՂԱՋԱՐ| ԸՂՈՒԵՐԾԵՑԻՆ ՏՎԱՔ,
ՆՐԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ ԼՆԻ,| Ի ՆՐԱՅ ԳԵՂԻՆ ԿԱՅ
ՑԱՋԳԷ ՅԱՋԳ. ՈՒ ՋՀԱԼԷՋՈՐՈՅ

1 Արձանագրությունը մեջ ենք բերում տեղում կատարած մեր ստուգման և լուսանկարի հիման վրա։ Այլ վերծանումներ տե՛ս Ջալալեանց, Բ, 171։ Ալիշան, Սիսական, 190—191։

3. ՀԱԿՆ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Ի ՏԱՐՈՒՄՆ ՎԱՑ-ՍՈՒՆ ՄՊԻՏԱԿ ՏԱ. ԱՅԼ ԱՋԱՏ Է ՅԱՄԷՆ ՀԱՐԿԱՑ. ԱՅԼ ՈՉ ԱՄԻՐԱՅԻ ՈՉ [ՊԱՐՈՆԻ] ՈՉ ՁԵՌՆԱՒՈՐԻ ՈՉԻՆՉ ՀԱՇԻՒ ՉԿԱՅ ՀԵՏ ՀԱԼԷՁՈՐՈՅ. ՈՉ ԻՇՈՐ ՏԱՅ ԵՒ ՈՉ ԱՅԼ՝ ՈՉ ՈՒՄ։ ՈՎ ՅԵՏ ՄԵՐ ՋԱՅՍ ՀԱՍՏԱՏ ՎԻՃԻ-

4. ՌՍ ԽԱՓԱՆԷ ՈՒ ՁՄԵՐ ՀՐԱՄԱՆՔՍ ՈՒ-ՆԱՅՆ ԱՌՆԷ, ՅԵՐԻՑ ՄԲ ԺՈՂՈՎՈՑՆ ՈՐՈՇԵԱԼ ԵՂԻՑԻ ԵՒ ՄԱՍՆ ԵՒ ԲԱԺԻՆ Ը[ՆԴ ՅՈՒԴ]ԱՅԻ ԵՂԻՑԻ ԵՒ ԸՆԴ ԽԱՉԱՅՀԱՆՈՒԱՑՆ ԵՂԻՑԻ. ԵՍ ՏԱՐՍԱՅԻՃՍ ԻՄ ՁԵՌԱՒՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻ ՁԳԻՐՍ ՋԱՅՍ.

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1. Արձանագրությունն ընդհանրապես շատ խորը փորագրված և գեղագիր է, չունի ջարդված և հողմահարված մասեր, միայն արձանագրությունը պարունակող երեսպատման մեկ քար ընկած-կորած է, որի հետևանքով 3-րդ և 4-րդ տողերի մեջ ստացվում են դատարկ տեղեր. սակայն նախորդ և հետագա բառերից կազմված նախադասությունների բովանդակությամբ հեշտությամբ լրացվում է։ Մանավանդ, որ առաջին վերծանող Ջալալյանի ժամանակ, ըստ երևույթին, այդ քարն իր տեղումն է եղել, որովհետև նա լրիվ է մեջ բերում։

2. Տառերի սղումներ չկան, իսկ միացումներ՝ բավական շատ։ Սղման երկու դեպքերը, Ա. տողի մեջ Սիւնեց, *փոխանակ* Սիւնեաց *և Բ. տողի մեջ* լնի, *փոխանակ* լինի, *մեր կարծիքով բարբառային ձևեր են, ինչպես որ նույն երկրորդ տողի մեջ կա բարբառային ՈՐԴԵՑ—փոխանակ ՈՐԴԵԱՑ կամ ՈՐԴԻՈՑ։*

3. Երկրորդ տողում նույն միտքը լրացնող բարդ նախադասության մեջ գործ է ածված ԽԻԼԱՅ և ԽԻՇԱՅ բառերը, նույն իմաստով. կարծում ենք ԽԻԼԱՅ-ն է ճիշտ, գրչի սխալմունքով Լ-ի փոխարեն Շ է գրված։

4. Երրորդ տողում, միևնույն իմաստով գործ է ածված ՀԱԿՆ և ՀԱՐԿՆ, կարծում ենք, որ առաջինի մեջ գրիչը Ա տառի վրա մոռացել է Ր տառի վերին ստեղը փորագրել. թեև այլ արձանագրությունների մեջ ՀԱԿ ձևը նույնպես հանդիպում է, բայց այստեղ, միևնույն նախադասության մեջ, սպասելի էր որ այդպես չլիներ։

5. Երրորդ տողում ԱՄԻՐԱ ՈՉ բառից հետո ընկած է մի քար, 4—5 տառի պարունակությամբ. լրացնում ենք ըստ իմաստի և նախկին վերծանումների։

6. Երրորդ տողում ԻՇՈՐ ՏԱՅ վերականգնում ենք մենք առաջին անգամ. նախկին բոլոր հրատարակություններում այդ մասը վերծանվել է ՇՈՐ ՏԱՅ. Շոր բառի մեջ մեր ավելացրած Ի տառը գրված է Շ տառի բացվածքի մեջ, փոքր է և երևանց, վերծանողները չեն նկատել. ԻՇՈՐ մենք համարում ենք էշի կոռ, ինչպես ուրիշ տեղեր կրկնվում է. օր. «…զմարդոյ, եզին, իշոյ, զամենայն ցեղ կոռ հասարակ» (տե՛ս Սմբատեանց, *Գեղարքունի, 241)։*

7. Նույնտեղ ԻՇՈՐ ՏԱ բառերից հետո ԵՒ շաղկապի առաջին Ե տառը գրիչը բաց է թողել, լրացնում ենք։

8. Չորրորդ տողի մեջ ԲԱԺԻՆ Ը տառից հետո ընկած քարն է. № 5 ծանոթության հիմունքներով լրացնում ենք ԸՆԴ ՅՈՒԴԱՅԻ։

Գրչագրական այս անկանոնությունների վրա պետք է ավելացնենք, որ կան նաև շարահյուսական անհարթություններ, բարբառային ձևեր և խոսակցական լեզվի մտածողությանը հատուկ արտահայտություններ։ Ի վերջո նշելի է, որ բնագիր կազմողն էլ չի փայլում իր գրագիտությամբ։

Արձանագրության առաջին և երկրորդ տողի սկիզբը ամբողջի իմաստն ու նշանակությունը հասկանալու տեսակետից շատ կարևոր է, բայց քերականորեն անկանոն լինելու և վարդպետ *բառը* վարդապետ *ընթերցվելու պատճառով, խանգարել է հրատարակիչներին ըմբռնելու արձանագրության իմաստը, այդ պատճառով էլ հրատարակիչները հրաժարվելով բացատրությունից, բավարարվել են արձանագրության այդ մասի մեջ շարահյուսական կարգի խմբագրություններ կատարել բոնազբոսիկ ձևով։ Որպեսզի պարզ լինի ասածներս, բերում ենք այդ տողերի բոլոր վերծանումները ժամանակագրական կարգով։*

1. Կամաւն Աստուծոյ իմ գիր է Տարսայինիս իշխանաց իշխանիս, որ իշխեցող է Սիւնեաց նահանգիս Որոտանէ Ճնհերոյ, որ Եկեղեցի տուի շինել Սիրանէս վարդապետին ու Հալիձորոյ Ճնհերոյ, նորա հայրենիքն տուի

իւր սահմանօքն յորդէց յորդիքն:

Ջալալեան, Բ, էջ 172:

2. Կամաւն Աստուծոյ (այս). իմ գիր է Տարսայիճիս իշխանիս, որ իշխեցող էի Սիւնեաց նահանգիս Որոտան և Շնհերոյ, որ եկեղեցի տուի շինել ՍԻՐԱՆԷՍ վարդապետին, ու Հալէձորոյ (ու) Շնհերոյ հայրենիքս տուի իւր սահմանաւքն յորդէց յորդիքն նորա հայրենիքն տվի...

Սիսական,101:

3. Կամաւն Աստուծոյ այս իմ գիրս է Տարսայիճիս իշխանաց իշխանիս, որ իշխեցող էի Սիւնե(ա)ց նահանգիս Որոտան և Շնհերոյ, որ եկեղեցի տուի շինել Սիրանէս վարդապետին ու զՀալեձորոյ ու Շնհերոյ հայրենիքն տվի իւր սահմանաւքն յորդեց յորդիքն նորա հայրենիք տվի.

Սիսուե, MAK, *XIII, էջ 183:*

4. Կամաւն Ա.յ. այս իմ գիրս է Տարսայիճիս իշխանաց իշխանիս, որ իշխեցող էի Սիւնե(աց) նահանգիս Որոտան եւ Շնհերոյ, որ եկեղեցի տվի շինել Սիրանես վարդապետին ու Հալիձորոյ ու Շնհերոյ հայրենիքն տվի իւր սահմանաւքն յորդեց յորդիքն նորա հայրենիք տվի[1]:

Լալաեան, *Ազգ. Հանդ., XII, էջ 50:*

Չնայած այդքան տարբեր ընթերցումներին ու խմբագրություններին, հրատարակիչներից և ոչ մեկը, նույնիսկ Ալիշանը, որը միշտ ամենամանրամասն տեղագրական ու պատմական բացատրություններ է կցում իր շարադրությանը, չեն փորձել արձանագրության այդ մասի վերաբերյալ բացատրություն տալ. միայն Քաջբերունին, որը արձանագրությունը մեջ չի բերում, հետևյալ ընդհանուր և սխալ բացատրությունն է տալիս.

«Այս դամբարանի շինությունը հանձնված էր Սիրանէս վարդապետին և նորան (դամբարանին) հատկացված է եղել Հալեձոր գյուղի տարեկան վարսուն սպիտակ *հարկ, ինչպես սորա մասին յիշվում է հյուսիսային պատի արտաքին անթվական արձանագրության մեջ»[2]:*

Հրատարակիչների կողմից արձանագրության բովանդակության վերաբերյալ լռության պատճառը համարում ենք այն, որ նըրանք վարդպետ *բառը* վարդապետ *կարդալով՝ ընկել են ծանր դրության մեջ. նրանք շատ լավ գիտեն, որ վարդապետին, թեկուզ նա շենքի ճարտարապետն էլ եղած լինի, որպես վարձատրություն չէր կարելի անշարժ կալվածներ նվիրել, որովհետև կանոնական օրենքներով վարդապետներն այն ունենալու իրավունք չունեին: Կալվածներ նվիրվում էին վանքերին, բայց ոչ վարդապետներին անձնապես: Այդ պատճառով էլ բազմաթիվ խըմբագրական ձևակերպումներից հետո ստացվում է, որ Տարսայիճ Օրբելյանը եկեղեցին Սիրանես վարդապետին է շինել տալիս, իսկ կալվածքներ հատկացնում եկեղեցուն, կամ էլ առանց բացատրության թողնում, որովհետև այլ խմբագրությամբ ստացվում է, որ Տարսայիճը Շնհեր և Հալիձոր գյուղերն ամբողջովին է նվիրել (Սիրանեսին թե՞ եկեղեցուն, անորոշ է):*

Այս թյուրիմացությունը մասամբ պարզվում է նրանով, որ Սիրանեսը վարդապետ չի, այլ վարդպետ, *այսինքն՝ ճարտարապետ: Ինչպես տեղում կատարած մեր համեմատությունից, նույնպես և լուսանկարի վրա շատ պարզ երևում է, որ Սիրանեսը կոչված է* վարդպետ, *այսինքն ճարտարապետ, որը և իրավունք ուներ կալվածներ ունենալու և որդոց որդի տիրելու այն, ինչպես ասված է արձանագրության մեջ:*

Այս հիմնական ճշտումից հետո էլ, սակայն, դեռ չի որոշվում, թե ի՞նչ կալվածք է ստացել Սիրանես վարդպետը, միայն Շնհե՞րը, միայն Հալիձո՞րը, թե երկու գյուղերը միասին, կամ Հալիձորի վաթսուն սպիտակ հարկն, ինչպես ենթադրում է Քաջբերունին, որը սակայն տվել է նորաշեն եկեղեցուն:

Կարդալով արձանագրության այն մասը, որտեղ անվանված են տրված կալվածները, պարզ երևում է, որ այստեղ իմաստի թերություն կա, ահա այս պարբերությունը.

...Եկեղեցի տվի շինել Սիրանէս վարդպետին ու զՀաւիձորի Շ՞հերոյ նրայ հայրենիք տվի իւր սահմանաւքն.

Մեր մեջ բերած Ալիշանի ընթերցման մեջ այս հատվածը խմբագրված է այսպես.

...Եկեղեցի տուի շինել Սիրանէս վարդապետին ու Հալէձորոյ (ու) Շնհերոյ հայրենիքն տուի...:

---

1 Մենք գլխավորյալ մեջ բերինք արձանագրության այս կտորը, որպես օրինակ, թե որքան մեծ տարբերություններով են վերծանվել արձանագրությունները տարբեր մարդկանց կողմից — Ս. Բ.:

2 *«Արարատ», 1889, ԺԲ, էջ 658:*

Ձևականորեն կարգավորելով այս հատվածը, իմաստի տեսակետից դարձյալ մնում է թերի, ապա ո՞րն է այն հայրենիքը, որ տվել է Տարսայիճը։ Այսպիսի խմբագրությունից հետո «հայրենիքը» մնում է ենթադրելի ու անորոշ։

Մենք կարծում ենք, որ այս պարբերության խմբագրություններից և ոչ մեկը բավարար չեն։

Այդ պարբերությունը մենք խմբագրում ենք հետևյալ ձևով.

...Եկեղեցի տվի շինել Սիրանէս վարդպետին, ու Հալիձորի և Շնհերոյ վնսարն նրան հայրենիք տվի...

Այս նոր բառի, Վնսարի, *տեղադրումը այս պարբերության մեջ մենք իրավացի ենք համարում, հենվելով Սիրանեսի գործունեության այս նույն հատվածին վերաբերող մի այլ արձանագրության վրա, որը բախտ ունեցանք հայտնաբերելու 1954 թ. ամռան գիտարշավի ընթացքում։ Նախքան այլ մանրամասնությունների քննարկումը, ծանոթանանք այս երկրորդ արձանագրության բովանդակությանը։*

Գորիսի շրջանի Հալիձոր և Շնհեր գյուղերի սահմանաբաժանն է լեռնային մի բազուկ, որ ձգվում է մինչև Որոտան գետի ձախ ափը, իր երկու կողմերում ձևացնելով խոր ձորեր։ Մինչդեռ երկու կողմի ձորերն ու լանջերը կանաչազարդ այգիներով են պատած, բազուկի բուն կատարը, իր ամբողջությամբ, չոր ու ապառաժոտ տարածություն է։ Տեղացիներն այդ վայրն անվանում են «Խաչերի սար» կամ «Խաչերի խութ»։ Ահա հենց այդ «խութի» վրա, Շնհեր-Հալիձոր ճանապարհից 150—200 մետր հեռու (ճանապարհից երևում են), իրար մոտ կանգնած են երկու գեղեցիկ խաչքարեր, մի փոքրիկ, ավերակ եկեղեցու հիմնապատերը, գետնի մեջ խրված տապանաքարեր և տների ավերակներ։

Ամենակարևորն այդ բոլորի մեջ, մեր նյութի համար, զույգ խաչքարերն են, որոնք իրենց վրա կրում են Սիրանեսի անունը։

Խաչքարերից հյուսիսայինը գեղեցկորեն ձևավորված մի կոթող է իր պատվանդանի մասում։ Այդ պատվանդանը կազմված է երեք մասերից. նախ՝ միակտուր մի հիմք ճակատի (արևմտյան) մասում մեկ մետր լայնությամբ և կողքից՝ 1,8 մ ու 23 սմ հաստությամբ սալաքարից. այդ հիմքի վրա շինված է ճարտարապետորեն ձևավորված խորանարդաձև բունը, որ ավելի նեղ է, քան հիմքը. արևելքից և արևմուտքից միակտուր սրբատաշ սալաքարեր են ագուցված 93 սմ լայնությամբ և 80 սմ բարձրությամբ, հյուսիսային և հարավային ճակատներում այդ երկուսի արանքների մեջ մի ավելի նեղ քարով լրացրած. ապա դրանց վրա դրված է միակտուր, գեղեցիկ քիվերով չորս կողմից եզերվող սալաքարը (կամ սեղանաքար) 1,12×1,7 մ։ Սալաքարի եզրերը չորս կողմից շրջանցում են բունը և նրա վրա կազմում դուրս ընկած և լավ ձևավորված քիվերով մի հարթակ։ Սալաքարի կենտրոնում սովորական սեղանակերպ անցքն է, որի վրա կանգնած է իր պարզությամբ գեղեցիկ խաչքարը։ Խաչքարն ունի 1,84 մ բարձրություն, 76 սմ լայնություն և 24 սմ հաստություն։ Արևմտյան ճակատի կենտրոնում քանդակված է բարձրաքանդակ խաչ, որի թևերի ծայրերը ճյուղավորված են, իսկ արանքները մանր խաչքարով լցված։ Արևելյան կամ թիկունքի մասը նույնպես սրբատաշ է. կողքերին վերին մասում մեկական կլոր ելուստներ ունի, պարանով կապելու և քարշ տալով բերելու համար։

Ճակատի մասում խաչը երեք կողմից եզերված է լայն շրջանակներով, որոնք, սակայն, հակառակ սովորականի, չեն զարդաքանդակված։ Զարդաքանդակներ չկան ո՛չ խաչքարի, ո՛չ էլ պատվանդանի որևէ այլ մասում։

Ամբողջ հուշարձանը կերտված է խնամքով, թողնում է ամբողջական և պարզ կոթողի հաճելի տպավորություն։ Անզարդ շրջանակների մեջ առնված խաչը ստեղծում է շրջանակի մեջ առնված նկարի տպավորություն։ Ընդհանրապես զգացվում է, որ հուշարձանը սովորական խաչքար չէ, այլ ճարտարապետական արվեստի մի փոքրիկ կոթող։

Պատվանդանի արևմտյան երեսին, սկըսած սեղանաքարի քիվից, գրված է 16 տողից բաղկացած մի մեծ արձանագրություն, որի երկու տողն էլ շարունակված է հյուսիսային ճակատի սեղանաքարի քիվի վրա, նրա գոգավորության մեջ։

Նկատի ունենալով արձանագրության կարևորությունը և նրա գրեթե հրատարակված չլինելը, բերում ենք ամբողջությամբ.

1. ԱՆՈՒՆ Ա̅Յ̅ ԵՍ ՏԱՐՍ(Ա)Յ-
2. ԻՃՍ ԼԻՊԱՌՏԻ
3. ՋՀԱԼԻՁՈՐՈՅ ։Բ։ ԿՈՊԱ-
4. ՐՍ ՎՆՍԱՐՍ ՎՆՍ(ԱՐՍ)Յ ՄԱՐՄԱՆԴ-
5. ՈՎՆ ՍԻՐԱՆԷՍ ՔԱՐԳՈՐԾԻՆ Հ-
6. ԵՐԵՆԻՔ ՏՎԻ. ՈՐԴԻՔ, ԹՈՌՆ ԵՒ ԹՈ-
7. ՌՆ ՍԻՐԱՆԷՍ ՔԱՐԳՈՐԾՆ ԵԿԵՂ-
8. ԵՑԻ ՇԻՆԵՑ ԱՆՎԱՐՁ ՆՈՐԱՅՎ-
9. ԱՆՍ, ԵՍ ՋԱՅՆ ՆՐԱՅ ԴԱՏՄԱ-
10. Ն ՓՈԽԱՐԷՆՔ ԱՐԱՐԻ, ՈՐ ՆՐԱՅ
11. ՀԱՅՐԵՆԻՔ Լ(Ի)ՆԻ ՅԱԶԳԷ ՅԱԶԳ. Ո-
12. Վ ՋԱՅՍ ԳԻՐՍ ԽԱՓԱՆԵԼՈՅ ՋԱՆ-
13. ԱՅ ԻՄՈՅ ԿԱՄ ԱՒՏԱՐԱՅ ։ ՅԺԸ ։ ՀԱ-
14. ՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՋԱՎԱԾ ԵՂ(ԻՑԻ),
15. ՄԱՍՆ Ո(Ի) ԲԱԺԻՆ ՅՈ(Ի)ԴԱՅԻ
16. ԱՌՅԷ. ՀԱՍՏԱՏԱՅ ԳԻՐՍ։
17. ԵՍ Տ̅Ր̅. ՀԱՅՐ ՎԿԱՅ ԵՄ. ԵՍ
18. Տ̅Ր̅. ՍԱՐԳԻՍ ՎԿԱՅ ԵՄ. Փ...[1]։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— 1. Առաջին տողի առաջին բառը՝ ԱՆՈՒՆ, փոխանակ ՅԱՆՈՒՆ, պատահում է և այլ արձանագրություններում մեջ, համարում ենք կենդանի լեզվի ազդեցություն։

2. Երրորդ տողի մեջ ԿՈՊԱՐ բառից առաջ գրված Բ տառն ուղղում ենք Բ՝ համարելով գրչի սխալ, մոռացված է հորիզոնական սաեղը։

3. Չորրորդ տողի մեջ ՎՆՍԱՐՍ համարում ենք վանքասար-վանքասար բառը, որը Սյունիքի բարբառի օրենքներով սղված է։ (Կան Վանքասար, Վանքաձոր և այլն նույն կազմությամբ բառեր, վանքերին մոտ վայրերում)։ Սրան հաջորդող ՎՆՍԱՅ բառը նույն ՎՆՍԱՐԻ հոլովական ձևն է, գրչի կողմից անփութությամբ միջի տառերը բաց թողնված։

4. Նույն տողի մարմանդովն բառը համարում ենք աշխարհագրական տեղանուն—որոշիչ, մարմանդ մեղմ թեքությամբ պետք է հասկանալ մեղմ թեքությամբ լանջ, այլ իմաստով նաև քամիներից պաշտպանված վայր։

5. Հինգերորդ, վեցերորդ տողերում ՀԵՐԵՆԻՔ—հայրենիքի բարբառային ձևն է. այստեղ գործ է ածված նեղ իմաստով՝ կալվածք նշանակությամբ։

6. Վեց և յոթերորդ տողերում ՈՐԴԻՔ ԹՈՌՆ ԵՒ ԹՈՌՆ—պետք է կարդալ որդին քոռն և քոռներ իմաստով, գրչի վատ գրագիտության արդյունք է, իմաստն է որդոց որդի և քոռից քոռն — այսինքն՝ միջտնջենական սեփականություն։

7. Տասնմեկերորդ տողում լն. լրացնում ենք լինի։

8. 12-րդ տողի սկզբի մասում ՋԱՅԱ—ուղղում ենք ՋԱՅՍ —համարելով գրչի սխալ. Ս-ի վրա ավելորդ սահղն է փորված։

9. 13-ի վերջին և 14-ի առաջին ՀԱՅ-ՐԱՊԱՅՆ — լրացնում ենք ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ։

10. 14-րդ տողի ՆՋԱՎԱԾ բառը համարում ենք բարբառային ձևը։

11. 14-րդ տողի վերջին ԵՂ լրացնում ենք ԵՂԻՑԻ, բաց տեղ կա, բայց գրիչը մոռացմամբ թերի է թողել։

12. 18-րդ տողի վերջում Փ ավելորդ տառ է. երևի պետք է շարունակվեր ՓԱՌՔ բառով որևէ միտք, բայց չի ավելել։

13. Պետք է նշել ընդհանրապես, որ արձանագրության հեղինակը և գրիչը լավ գրագետներ չեն եղել, արձանագրությունը լիքն է սխալմունքներով, շարահյուսական անկանոնություններով, բարբառային բառերով և ձևերով։

Այս երկու արձանագրությունները, ինչպես տեսնում ենք, իրենց բովանդակությամբ վերաբերում են նույն նյութին. Տարսայիճ Օրբելյանի կողմից Սիրանես վարդապետին—ճարտարապետին եկեղեցի շինել տալու և այդ աշխատանքի համար նրան վարձատրելուն։ Այս արձանագրությունը միանգամայն լուսն։ Այս արձանագրությունը միանգամայն պարզում է առաջինի մի քանի մութ կետերը. առաջին, Սիրանեսն այնտեղ վարդպետ է կոչված, իսկ այստեղ քարգործ, մի հանգամանք, որն անառարկելիորեն լուծում է Սիմանք, որն անառարկելիորեն լուծում է Սիրանեսի ճարտարապետ լինելու խնդիրը. երկրորդ՝ ապացուցում է, որ Սիրանեսը նույնպես և հոգևորական չէ, որովհետև կալվածքը տրվել է նրան որդոց որդի և թոռից թոռ, երրորդ՝ պարզում է տրված կալվածքի տեղն ու անունը։

Սակայն այս լրացումներից բացի, երկու արձանագրությունների մեջ կան նաև որոշ տարբերություններ. օրինակ, առաջին արձանագրության մեջ հիշատակված են երկու գյուղերի, Հալիձորի և Շնհերի անունները, իսկ երկրորդի մեջ՝ միայն Հալիձորի անունը։

1 Հրատարակել է միայն Ե. Լալայանը, մեծ աղավաղումներով. տե՛ս «Ազգ. Հանդ.», Դ և առանձնատիպ «Զանգեզուր», էջ 40, 1899, Թիֆլիս։

Առաջինի մեջ հիշատակված է Հալիձորի 60 սպիտակ հարկի մասին, երկրորդում՝ այդ մանրամասնությունը չկա։ Առաջինի մեջ տրըված կալվածքից բացի 500 սպիտակի վարձատրության խնդիրը կա (որը փոխարինվել է ճորտով՝ Աղաղար Ըղվերծեցիով), երկրորդի մեջ այդ բանը բացակայում է, և դեռ ավելին—ասված է, որ եկեղեցին անվարձ շինեց Սիրանեսը։

Ինչպե՞ս բացատրել այդ տարբերությունները։

Ամենից առաջ պետք է նշել, որ առաջին, այսինքն Սիրանեսի շինած եկեղեցու պատի արձանագրությունը գրված է առաջ, եկեղեցին ավարտելուց անմիջապես հետո, այդ պատճառով էլ մանրամասնորեն խոսվում է այն բոլորի մասին, ինչ տրվել է Սիրանեսին և այն գյուղերի մասին, որոնց սահմաններից կտրվել և Սիրանեսին է տրվել հողաբաժին-կալվածք։ Այդ արձանագրությամբ կարգավորվել են այն հարաբերությունները, որոնք վերաբերում են Սիրանեսին ու իշխան Տարսայիճին մի կողմից, ապա Սիրանեսին և այն գյուղերին, որոնց հողամասերից Սիրանեսը հողաբաժին-կալվածք է ստացել. և վերջապես այս առթիվ՝ այդ գյուղերի և իշխան Տարսայիճի մեջ հարկերի չափի նոր փոփոխությունը։ Ըստ արձանագրության բովանդակության, ի հաշիվ Հալիձոր գյուղի հողամասի նվազեցման (որն օտարացվել է գյուղից և տրվել Սիրանեսին), համապատասխան չափով իջեցվել է նաև տրվելիք հարկերի քանակը։

Այդպիսի ընդհանուր խնդիրներ կարգավորելուց հետո հասկանալի է դառնում նաև այն, թե ինչու նրա մեջ հիշատակված դրամով կամ ճորտով եղած վարձատրությունը չի հիշատակված երկրորդ, «Վանասարում» կանգնած խաչքարի արձանագրության մեջ։ Շարժական վարձատրությունն արդեն տրվել-վերջացել էր, երբ երկրորդ արձանագրությունն էր գրվում։ Այս արձանագրության նպատակն էր կարգավորել Սիրանեսի և այդ հողամասի նախկին տեր Հալիձոր գյուղի փոխհարաբերությունները, ճշտել հողաբաժնի ստույգ սահմանները և տեղում հիմք դառնալ իշխան Տարսայիճի նոր կարգադրության։ Այս արձանագրությունը կալվածագիր է, հաստատված իշխան Տարսայիճի և վկաների ստորագրությամբ, նոր կալվածատիրոջ իրավունքների հաստատման վճիռ, դրա համար էլ առաջին արձանագրության մեջ հիշատակված մանրամասնությունները չէին կարող և չեն արտահայտվել նրա մեջ։

ՍԻՐԱՆԵՍԻՆ ՏՐՎԱԾ ԿԱԼՎԱԾԻ ՏԵՂՆ ՈՒ ՉԱՓԵՐԸ

Տարսայիճ Օրբելյանի կողմից Սիրանես վարդպետին տրված կալվածքի տեղի վերաբերյալ, ինչպես տեսանք, առաջին արձանագրության հատվածի մեջ անորոշություն կար. այն կապակցված էր Շնհեր և Հալիձոր գյուղերի անվան հետ, և առաջին հայացքից թըվում է, թե այդ երկու գյուղերն են տրվել Սիրանեսին։ Բայց այդպիսի անօրինակ չափով վարձատրություն, իհարկե, միանգամայն անհասկանալի է։ Այդ առթիվ երկրորդ արձանագրության մեջ միայն Հալիձոր գյուղի անունն է հիշատակված և ավելի որոշակի՝ Վնասարը և Վնասարի մարմանդը։

Այն մասին, որ Շնհեր և Հալիձոր գյուղերը չեն տրվել Սիրանեսին, կան նաև ուրիշ տեղեկություններ։ 1274 թ. Տաթևի վանքի ներսում, նրա հարավային մույթի վրա Տարսայիճի կողմից փորագրված մի մեծ արձանագրություն է եղել (այժմ բոլորովին հողմնահարված), ուր վանքին տրված շարժական և անշարժ կալվածների ցանկ կա՝ տրըված նույն Տարսայիճի կողմից։ Այդ արձանագրության բովանդակությունն այն է, որ Տարսայիճը միաբանել է Տաթևի վանքին և նվիրել իր հոգու բաժինը — «Գիւղ 6, զոր լուեալ էաք ի հին ժամանակաց ժառանգութիւն լեալ սմին՝ զՇնհեր, զԽոտն աւան...» և այլն[1]։

Նորավանքի Սիրանեսաշեն եկեղեցին շինված էր, ինչպես տեսանք, 1275 թ., որը և համարում ենք այնտեղ գրված արձանագրության թվականը։ Տաթևի այս արձանագրությունը, առնվազն մեկ տարի դրանից առաջ գրված, պարզում է, որ Շնհերը նվիրված է եղել Տաթևին, հետևաբար երկրորդ անգամ Սիրանեսին նվիրվել չէր կարող, այն էլ Տաթևի հեղինակավոր վանքից վերցվելով, որի դյուխն այդ ժամանակ հենց նույն Տարսայիճի որդի, պատմաբան Ստ. Օրբելյանն էր։

Հալիձոր գյուղի պատկանելության խընդրի մասին Սիրանեսաշեն եկեղեցու պատի

[1] Օրբելյան, Պատմություն, 416—17։

արձանագրությունն էլ ունի բացատրություն։ Արձանագրության առաջին մասում կարգավորվում է Սիրանեսին վարձատրելու խնդիրը, չափն ու եղանակները, նրա երկրորդ մասում կարգավորվում են դրանից բխող այն հետևանքները, որ առաջացել են Հալիձոր գյուղից հողաբաժին կտրելու խնդրի հետ։ Համաձայն արձանագրության, Տարսայիճը Հալիձորի հարկը սահմանում է այսուհետև 60 սպիտակ միայն, մնացած բոլոր հարկային պարտականությունները զիջվում են որպես փոխհատուցում օտարացված հողաբաժնի, ըստ որում այդ 60 սպիտակը մնում է իշխանական միակ հարկը և ոչ թե այն տրվելու է նորաշեն եկեղեցուն, ինչպես ենթադրում էր Քաջբերունին[1]։

Այս տեղեկությունը մեր երկրորդ արձանագրության մեջ միանգամայն արդարացնում է Շնհերի անվան բացակայությունը. Շնհեր գյուղը առնչություն չունի Սիրանեսին տրված կալվածի հետ։

Աղբյուրներից հայտնի է, որ Հալիձոր գյուղն էլ պատկանելիս է եղել Տաթևի վանքին՝ դրանից առաջ. այդ երկու գյուղերն էլ դեռևս մինչև XIX դարի կեսերը Տաթևի սեփականություն են եղել. Տաթևի վանահայր Մարտիրոս արքեպիսկոպոսը ռուս իշխանությունների առաջ նույնիսկ՝ ապացուցել է վանքի իրավունքներն այդ գյուղերի վրա և վերահաստատել Շնհեր, Հալիձոր, Խոտ և այլ գյուղերի՝ վանքին որպես սեփականություն։

Բայց երկրորդ արձանագրության առաջին հատվածը Հալիձորի պատկանելության մասին շփոթության տեղիք է տալիս, այդ պատճառով էլ պիտի քննել այն. բերենք այդ հատվածը.

Անուն այ ես Տարսայիճս որդի Լիպարտի զՀալիձորոյ Բ կոպարս, Վնաարս, Վնաարայ մարմանդովն Սիրանէս խարգործին ճնրենիֆ տվի...

Այս հատվածի ճիշտ ըմբռնման համար հարկավոր կլինի կոպար բառի պարզաբանումը։

Մեր բառարաններն ունեն հետևյալ բացատրությունները.

Կոպար — «Սահման, որոշված՝ սահմանված վարձատրություն, ըստ աշխատանքի որակի (կոպար սահմանել=սահման որոշել). որակը, տիպը սահմանել»։

Մեջբերված հատվածում նշանակված է Հալիձորի ։Բ։ կոպարը, այսինքն 2 մաս կամ սահման, և որպես լրացուցիչ բացատրություն անվանված են Վնաարն ու Վնաարի մարմանդը, այսինքն այն երկու վայրերը, սահմանները կամ մասերը, որոնք հասկացվել են այդ երկու կոպարի տակ։

Սիրանեսին տրված կալվածքի սահմանների ճշտման համար գոյություն ունի մի արձանագրություն ևս։ Խնդիրն այն է, որ Վնաարի արևելահայաց լանջը, որը ներկայումս նույնպես ծածկված է պտղատու այգիներով, Տարսայիճ Օրբելյանի կողմից 1265 թ., այսինքն Սիրանեսին վարձատրելուց 10 տարի առաջ, համաձայն այս արձանագրության, տրվել է այլ մարդու, ոմն Գրիգորիկի։

Իջնելով Վնաարի արևելյան լանջով մինչև ձորի հատակը և շարունակելով ճանապարհը մինչև Որոտանի ձախ ափը, ճիշտ Վնաար, կամ ներկայիս «Խաչի խութի» տակ, բարձրագիր մի հարթության եզրին ծառերով և մացառներով շրջապատված կանգնած է մի խաչքար, հաստատված բնական ժայռի վրա, որի թիկունքին և հյուսիսային կողին գրված է հետաքրքիր և մեծ արձանագրություն.

1. Ի ԹՎԻՍ ։ ՉԺԴ ։ ԵՍ ԳՐԴՈ-
2. ՐԻԿ ԲԱՋՈՒՄ ԱՇԽԱ-
3. ՏՈՒԹ(ԵԱՄ)Բ ԲԵՐԻ ՋԱՌՈՅ-
4. Ս ԵՒ ՏՆԿԵՑԻ ՋԲՈԽՈՒ
5. ՌԱՅ ԿԵՍՍ ԻԳԻՍ ՎԱ-
6. ՅԵԼՈՒՉՍ, ՅԻՇԽԱՆ-
7. ՈՒԹԵ(ԱՆ) ԱԾԱՍԷՐ ՊԱՐ-
8. ՈՆԱՅՆ ՍՆՊԱՏԱՅ
9. ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻ ԻՒՐՈ-
10. Յ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ։ ԵՍ
11. ՏԱՐՍ(Ա)ԻՃՍ ԳԻՐ ՏՎԻ Հ-
12. ԱՅՐԵՆԵՔ, ԱՋԳԷ Ա—
13. ՋԳ ։Յ։=(300) ԱՄ ԷՐ ՈՐ ԱԻ,
14. ԵՐ ԷՐ։ ԹԷ ՈՔ Ի

1 Ջնջված հարկերից միայն մեկն է հակառակ հանված հիշված. այն է՝ ԻՇՈՐ. այս հարկը մենք համարում ենք կոռի տեսակ, երբ գյուղացին իր էշով պիտի աշխատեր իշխանի և կալվածատիրոջ համար. Հալիձոր գյուղում մինչև այժմ էլ էշը հիմնական փոխադրամիջոց է գյուղից ներքև մինչև Որոտան ձգվող խիստ թեք լանջերին գանվող փարթամ այգիներից բարիքները գյուղ բերելու համար։

1 Այս արձանագրությունը մեր նյութից անկախ ունի մի շատ կարևոր նշանակություն, որն անհրաժեշտ ենք համարում նշել։ Արձանագրության մեջ հողամասը սեփականացնելու որպես իրավաբանական հիմք նշված են երկու փաստ. նախ, որ Գրիգորիկը առել է հանել

15. ՀԱՅՈՑ ԿԱՄ
16. Ի ՏԱՃԿԱՑ ԽԼԵԼ ՋԱՆԱՑ ։ՅԺԸ։ ՀԱՐ-
17. ԱՊԵՏԱՑՆ ՆՋՈՎԱԾ ԵՂԻՑԻ[1]։

Այս արձանագրության պարզ բովանդակությունն ապացուցում է Վնասարի արևելյան լանջի—մարմանդի պատկանելության խնդիրը, այն էլ Սիրանեսին վարձատրելուց առնվազն 10 տարի առաջ։

Վնասարի հարավային բնական սահմանը ձորի հսկայական քարափն է, հյուսիսայինը՝ Որոտան գետը, իսկ արևմուտքում մի խոր ձորակ, որի մյուս ափին կանգնած է Հալիձոր գյուղը։ Այս ձորակի հատակն էլ մենք համարում ենք գյուղի և Վնասարի բնական բաժանարար գիծը՝ գյուղին հարող լանջը վերագրելով գյուղին, իսկ Վնասարին հարող լանջը՝ «Վնասարի մարմանդը», Վնասարի հետ միասին կազմել է Սիրանես վարդապետին տրված կալվածքը։ Այս կալվածքի մի մասը, բուն «Վնասարը» քարքարոտ և մշակության համար անպետք, իսկ նրա «մարմանդը»՝ լանջը պատած է կանաչազարդ այգիներով։ Կալվածքի ընդհանուր տարածությունը 10—20 հեկտար կլինի. վերին մասերը հարմար են անասնապահության, իսկ ցածրադիր մասերը՝ այգեգործության համար։

Սիրանես վարդապետն ստանալով այդ կալվածը, ինչպես երևում է, հենց այնտեղ էլ հաստատել է ագարակի բնույթի տնտեսություն, գերդաստանով տեղափոխվել այնտեղ, խութի գլխին, կալվածագիր խաչքարի մոտ շինել բնակարաններ ու փոքրիկ մատուռ, որի հիմնապատերը մնում են մինչև այժմ. մնում են, ինչպես ասացինք, նաև տների հիմնապատերը և մի երկու տասնյակ տապանաքարեր։ Դրանցից ամենահետաքրքիրը Սիրանեսի և նրա եղբոր կողմից իրենց ծնողների գերեզմանի վրա կանգնեցրած խաչքարն է։ Այս խաչքարը նույն կառուցողական ոճն ունի, ինչ կալվածագիր-խաչքարը։ Պատվանդանի վրա կանգնած խաչքարը իր մանրամասնություններով տարբեր է և գրված է կարճ։ Կենտրոնում երկգիծ պարզ խաչ է քանդակված, որի թևերի արանքում կան փորագիր մանր խաչեր. երկու շրջանակների վրա շըրջանաձև օղակներից բաղկացած շղթա. ճակատն ունի դեպի արևմուտք թեքված նեղ քիվ, որի տակի գոգավորության մեջ գրված է հետևյալ չորս տողից բաղկացած արձանագրությունը։

1. ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՀՋԱՐՄԷԼ
2. ՈՒ ՍԻՐԱՆԷՍ ԿԱՆԳՆԵՑԻՆՔ
3. ՋԽԱՉՍ ՀՕՐՆ ՄԵՐՈ ԳՈՐՔ-
4. Ա ՄՕՐՆ ՄԵՐՈ ԹԷՆԻԿԱ[1]։

Դժբախտաբար Սիրանեսի անունը կրող այս երկու արձանագրություններն էլ թվականներ չունեն, բայց, անշուշտ, նրանց կառուցման ժամանակները մոտ պետք է լինեն. Սիրանեսի ու նրա հարազատների (որոնք հավանաբար նույնպես քարգործներ էին) ձեռքով շինված։

Այս վերջին արձանագրությունը շատ կարևոր է նաև նրանով, որ մանրամասնություններ է պարունակում Սիրանեսի կենսագրության, հատկապես տոհմագրության մասին։ Այստեղ առկա են նրա հոր և մոր, նաև եղբոր անունները։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ եղբոր անունը առաջինն է գրված, կարելի է ենթադրել, որ նա ավագն է. Սիրանեսի համեմատությամբ։

Ոչ միայն ճարտարապետների, այլև մեր միջնադարի կուլտուրական գործիչներից շատ շատերի մասին գոնե այս չափով էլ տոհմագրական տեղեկություններ չկան։

Թե որքան ժամանակ Սիրանեսի ագարակը շեն է եղել և պատկանել նրա սերունդներին՝ պարզել չի կարելի. բայց որ այն բավական ժամանակ գոյություն է ունեցել, դա ապացուցվում է թվական ունեցող մի այլ ար-

---

և այգի տնկել, այսինքն մինչև այդ խոպան երկիր է մշակել, և ապա, որ այդ վայրը «300 ամ էր որ աւեր էր»։ Այս փաստարկները լիովին համընկնում են Գոշի «Դատաստանագրքի» կանոններին, ուր ասված է. «Թագաւոր իշխանի տուեալ գաւառ՝ եթէ շինէ ըստ հրամանի նորա բերդ կամ աւան և կամ աւերակս ի նոյն սահմանս ի ժառանգութիւնս համարեսցի նմա. մի՛ լիցի ի փոխել առանց մեծի և իրաւացի յանցանաց. և զկնի մահու նոցա՝ որդւոց նոցա լիցի հրամանաւ Թագաւորի։ Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատ լիցեն և ընդ ազատաց ձեռամբ շինականք, յորժամ աւերս շինեսցեն և հողս հաստատեսցեն ի մայրեաց, ստացուած լիցի անփոփոխ և որդւոց նոցա յետ մահու. այլ փոփոխումն ի վերայ մեծի յանցանաց և իրաւացի լիցի, և մի ի պատճառս զրպարտութեան փոփոխեսցի»։

«Դատաստանագիրք», մասն երկրորդ, Ա, էջ 317։ Արձանագրությունը հրատարակել է Ե. Լալայանը՝ մեծ աղավաղումներով։ Տե՛ս «Ազգ. Հանդ», Դ և առանձնատիպ, «Զանգեզուր», էջ 40։

[1] Այս խաչքարը տեսել է Ե. Լալայանը և ասում է միայն. «Տապանագիրն անընթեռնելի է»։ Անդ, էջ 41։

ձանագրությունից: Ավերակ եկեղեցու-մատուռի մուտքի մոտ, կիսովին թեքված, կանգնած է մի անմշակ սալաքար՝ վրան խաչ քանդակված, որի տակին գրված է.

ՃԽՈՐՄԷՐ ՅԻՇ-
ԵՑԷՔ Ի ՔՍ ԹՎ.
ՊԿԳ (= 1414 թ.):

Մի այլ, գետնի մեջ խրված տապանաքարի վրա, որը գտնվում է խաչքարերի արևելքում ընթեռնվում է ՄՈՒՐԱՏ կամ ՄՈՒՐԱՏՇԱՀ անունը:

Թե ովքեր են այս հորմերն ու Մուրատը պարզ չէ. բայց թվականն ապացույց է, որ մինչև XV դարի սկզբները գոնե, Սիրանենի ագարակը շեն է եղել:

ՍԻՐԱՆՆԵՍ ՎԱՐԴՊԵՏԻ ՍՏԱՑԱԾ ԱՅԼ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես տեսանք, համաձայն Նորավանքի Սիրանեսաշեն եկեղեցու վրայի արձանագրության, Տարսայիճ Օրբելյանը կալվածքից բացի այլ վարձատրություն էլ է տվել Սիրաննեսին: Ըստ արձանագրության, Տարսայիճը Սիրաննեսին խոստացել էր եկեղեցին ավարտելուց հետո 500 սպիտակ «խիլայ» տալ, որը սակայն անհայտ պատճառներով փոխարինվել է մի ճորտով, Աղազար Ըղվերծեցիով:

Նախ՝ ինչ է նշանակում այդ «խիլայ» բառը: Կան մի շարք վիմական արձանագրություններ, որոնց մեջ գործ է ածված «խալա» տերմինը, որպես հարկի անուն կամ տեսակ, սկսած XI դարից: Թ. Ավդալբեգյանն իր ուսումնասիրության մեջ այս «խալա»-ն համարում է գինու վերցվող հարկ, նաև ընդհանրապես այգեհարկ, բառի ծագումն էլ, հենվելով Վ. Բարտոլդի տեսակետի վրա, համարում է մոնղոլական կայան, *որն աղճատվելով «խալա» է դարձել հայերենում*[1]*:*

Բայց Սիրաննեսին վերաբերող այս արձանագրության մեջ նախ՝ «խիլայ» ձևով է գրված, և ապա այնպիսի նախադասության մեջ, որը կապ չունի խաղողի, այգու և ոչ էլ որևէ հարկի հետ:

Ստ. Մալխասյանցի բառարանը խալայ *բառի համար ունի երկու ձև,* խիլայ *և* խլայել, *ծագումն էլ համարում է արաբական* xəla't, *և տալիս է հետևյալ նշանակությունները.*

1. Վարձատրել, խալաթ տալ. զգեստ, որով իշխեցողները *պարգևատրվում էին, օր. թագավորը նրան թանկագին զգեստով խլայեց: 2. Երկայն ու լայն կապա, հարսին նվեր*[1]*:*

Սիրաննեսին տրվելիք խիլայը, մոտենում է Մալխասյանցի բացատրության մի մասին. ընդհանրապես վարձատրել կամ նվեր տալ հասկացողությանը, և կապված չէ շորի և նրա որևէ ձևի հետ, այլ դրամի, 500 սպիտակի: Սիրաննեսին ժամանակակից և հովանավորող Ստ. Օրբելյան պատմագիրը այդ բառը մի քանի անգամ գործածած ունի իր պատմության մեջ. նկարագրելով Զաքարեի և Իվանեի ջանքերով Ելիկում Օրբելյանի փախուստը Նախիջևանից և Վրաց արքունիքին ներկայանալն, ասում է.

«Ապա մեծապէս խիլայէ զնա Արարէկն և բազում շուք և պատիվ դնէ նմա[2]»:

Մի այլ տեղ, նկարագրելով Սմբատ Օրբելյանի՝ դարձյալ վրաց արքունիքում գտնըվելը, գրում է.

«Յետ որոյ և այլ բազում և մեծամեծ պարգևօք և թագավորական զգեստուք պատուէր և խիլայէր զնա թագաւորն»[3]:

Օրբելյանի այս հատվածներում խիլայը ունի ընդհանրապես նվերի բնույթ, որի մեջ կարող է ամեն ինչ մտնել, թե շոր, պատիվ և թե դրամ:

Խիլայ *բառի այս ընդհանուր բնույթի գործածությունը գոնե Սյունիքում ծանոթ է եղել մինչև XIX դարն էլ, որովհետև Ս. Օրբելյանի պատմությանը որպես հավելված կցված Սյունյաց եպիսկոպոսների շարակարգության հեղինակները գործածել են այն. այսպես՝ Թավ-Սյունյաց Մարտիրոս արքեպիսկոպոսը Թավրիզում ներկայանում է գահաժառանգ Աբբաս-Միրզային զանազան խնդիրներով.*

«Եւ անտի պատուեալ յարքայորդւոյն Աբբաս-Միրզայէն մեծամեծ խիլայիւք և հրովարտակաւ վերադարձաւ կրկին...»[4]:

Բոլոր այս դեպքերում խիլայ *նշանակում է պարգև-նվեր: Սիրանեսի արձանագրության մեջ* խիլայ-*ն համապատասխանում է այս իմաստին և կապ չունի* խալա-*ի, հարկի որևէ տեսակի հետ:*

---

1 *«Հաս, սակ ու բաժ»—«Տեղեկագիր» Գիտ. և արվեստի ինստիտուտի, № 1, Երևան, 1926, էջ 77—78:*

1 *«Բացատրական բառարան», 2, 228 և 265:*
2 Ստ. Օրբելեան, *Պատմութիւն, էջ 396:*
3 *Անդ, 539:*
4 *Անդ, էջ 539:*

Արձանագրության մեջ, ինչպես պարզ երևում է մեջբերված վերծանությունից և լուսանկարից, նույն պարբերության առաջին մասում գրված է խիլայ, իսկ երկրորդում խիշայ[1]: Քանի որ այդ պարբերության իմաստը մի ամբողջություն է կազմում և այդ բառերը միևնույն իմաստն են արտահայտում և խիշայ ձևն էլ ուրիշ ոչ մի տեղ չի գործածված, պետք է եզրակացնել, որ խիշայ բառի մեջ Շ տառը գրչի սխալ է, Լ-ի փոխարեն:

...ՈՒ ՉԻՆՉ ԷԿԵՂԷՑԻՆ ԼՄՆԵՑԻՆ ԽԻԼԱՅ ԿՈՒՏԱՅԱՔ :Շ: ՍՊԻՏԱԿԻ, ԱՅՆ ԽԻԼԱՅԻՆ ՓՈԽԱՆ ՋԱՂԱՋԱՐ ԸՂՈՒԵՐԾԵՑԻՆ ՏՎԱՔ, ՆՐԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ ԼԻՆԻ ԵՒ ՆՐԱՅ ԳԵՂԻՆ ԿԱ ՅԱԶԳԷ ՅԱԶԳ.

Ընդունելով խիլայ բառի հիմնական իմաստը—նվեր, պարգև, ստացվում է, որ Տարսայիճը խոստացել էր Սիրանեսին, կալվածքից բացի, նաև 500 սպիտակի, կամ արծաթ դրամի պարգև՝ եկեղեցու կառուցումն ավարտվելուց հետո: Ծանոթության կարգով նշենք, որ նվեր հասկացողությունը միջին դարերում և ֆեոդալական հասարակության պայմաններում մեր այսօրվա իմաստը չուներ, այլ ուղղակի հարկի կամ պարտքի ու պարտականության իմաստ. ոչ միայն թագավորներն իրենց վասալներին վարձահատույց էին լինում կալվածների, պատիվների և այլ կարգի «նվերներով», այլև հարկային որոշ, կայուն տեսակներ կային, որոնք «նըվերի» ձևով պետք է վճարեին ֆեոդալական հիերարխիային ամենացածր աստիճանից մինչև թագավորը, նրանց ստորադրյալները: Այնպես որ այն, ինչ արձանագրության մեջ խիլայ=նվեր պետք է տար իշխան Տարսայիճը ճարտարապետ Սիրանեսին, պետք է ըմբռնել որպես վարձ նրա աշխատանքի համար:

Բայց մեզ անհայտ պատճառներով դրամական այդ վարձատրությունը փոխարինվել է ճորտով: Ճարտարապետ Սիրանեսին ճորտով վարձատրելու և ճորտ Աղազար Ըղվերծեցու մասին եղած կարգադրությունը, որ նա պիտի տեղափոխվի իր նոր տիրոջ, Սիրանեսի գյուղը և սերնդե-սերունդ, ապրի այնտեղ— երևույթներ են, որոնք որոշ նոր գծեր են ավելացնում միջնադարի ճորտերի սոցիալական կացության մեր ճանաչողության վրա:

Այս աշխատության նպատակներից դուրս լինելով միջնադարյան ճորտերի խնդրի քննարկումը, մի քանի խոսքով կնշենք միայն արձանագրության մեջ այդ խնդրին վերաբերող առանձնահատուկ կողմերը:

1. Ճորտերի վաճառք և գին: Ինչպես մատենագրության, այնպես էլ XIII դարին վերաբերող վիմական արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան ճորտերի վաճառքի վերաբերյալ, բայց նրանց գնի մասին տեղեկություններ չկան: Արձանագրության մեջ որոշակի ասված է, որ Աղազար Ըղվերծեցին տրվել է ճարտարապետ Սիրանեսին որպես փոխհատուցում 500 սպիտակի, ստացվում է, որ ճորտ Աղազար Ըղվերծեցին գնահատվել է 500 սպիտակ գումարով: Այդ գումարը այնքան էլ փոքր չէր, որը և ենթադրել է տալիս, որ Աղազարը հավանաբար եղել է որակյալ քարգործ արհեստավոր և աշխատել է Սիրանեսի կերտած հուշարձանների վրա: Արձանագրական այս փաստը, որպես ճորտի գնահատման եզակի դեպք, արժանի է լուրջ ուշադրության[1]:

2. Ճորտի նվիրում: Վիմական արձանագրություններում շինական-ճորտերի նվիրաբերման բազմաթիվ օրինակներ կան հատկապես XII—XIII դարերում, ինչպես ամբողջ գյուղերի, այնպես էլ, մի քանի դեպքերում, անհատների և անունների հիշատակումով. օրինակ, ոմն Վասակ նվիրում է Սանահնի վանքին՝

զՄուսէս, Մարգարէի որդին, իւր շահու ցինս... Մուսէսն իւր տամբն... (ընտանիքով — Ս. Բ.)[2]:

3. 1262 թ. Խավռազը նվիրում է Բագնայրի

---

1 Հրատարակիչներից Ջալալյանը երկու դեպքում էլ խիլայ է վերծանում, Ալիշանը կրկնում է նույնը, բայց հարցականով, Սիսոևը միայն երկրորդն է խիշայ դնում, իսկ Լալայանը, ընդհակառակը, առաջինը խիշայ և երկրորդը՝ խիլայ:

1 Ս. Հակոբյանը, որը հետաքրքրվել է ճորտերի և նրանց վաճառքի խնդիրներով, հետաքրքիր տվյալներ է բերում Սանահնի ձեռագրից (Մատենադարանի № 3031), բայց ճորտի գնի մասին ոչինչ չունի: Մեզ թվում է, սակայն, որ նրա մեջբերած տեղեկությունները ընդհանրապես շատ ավելի ուշ շրջանի են, քան ինքն է ենթադրում: Տե՛ս «Փաստեր ճորտերի և նրանց վաճառքի մասին միջին Հայաստանում», ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 5, էջ 79—84:

2 Ջալալեանց, Ա, 21, Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, էջ 124, Երևան, 1957:

վանքին երկու շինական,— «ի գիւղս զՄեհրևվան ու Խաչատուր Դուլուսին փեսա;ն իւրեանց հողովն և ջրովն»[1]։

4. XIII դարի վերջում Կիրակոս վարդապետը Ջինջիռլուի վանքին է նվիրում երկու մարդ՝ «զՄարտիրոս և զՎարդիոս»[2]։

5. 1300 թ. Հեճուպ Դավիթը շինարարական աշխատանքների համար Հովհաննավանքին է նվիրում «զԱւետիս՝ մականուն Կոնկիկ...»[3] և այլն։

Ինչպես այս, նույնպես և բազմաթիվ այլ դեպքերում, շինական ճորտերը սովորաբար նվիրվում են վանքերին ու եկեղեցիներին, նրանք որոշ դեպքերում մնում են իրենց «հող ու ջրի» վրա, նրանցից ստացվող եկամուտների տերն է միայն փոխվում, այլ դեպքերում նրանք տեղափոխվում են վանքի տնտեսության մեջ աշխատելու։ Մասնավոր մարդկանց ճորտ նվիրելու մասին տեղեկություններ չկան. Սիրանեսին այդ ձևով վարձատրելու դեպքն, այդ տեսակետից, նույնպես շատ հետաքրքիր է, մանավանդ, որ Աղազարը տրվում է Սիրանեսին, ըստ երևույթին ամբողջ ընտանիքով և պարտավոր էր Ըղվերծից տեղափոխվել Սիրանեսի գյուղ-ագարակը և այնտեղ ապրել որդոց-որդի[4]։

Ամփոփենք մեր ասածները Սիրանես ճարտարապետի մասին.

1. Սիրանես վարդպետը XIII դարի մեր նշանավոր վարպետ-ճարտարապետներից է, որի ձեռակերտ երկու հուշարձանները մինչև այսօր էլ գրեթե կանգուն են. դրանցից առաջինը Այսասի խաչավորող կամարներով գավիթն է, հայկական ճարտարապետության այդ շատ ինքնատիպ ոճի փայլուն ներկայացուցիչներից մեկը, շինված-ավարտված 1270 թվականին։

2. Սիրանես վարդպետի կառուցած երկրորդ մեզ հայտնի հուշարձանը Նորավանքի խմբի մեջ, Տարսայիճ Օրբելյանի շինել տված տապանատուն եկեղեցին է, շինված հատկապես Սմբատ Օրբելյանի համար, որը հետագայում դարձել է տոհմական տապանատուն։ Այդ տապանատունը կառուցվել-ավարտվել է 1275 թվականին։

3. Տապանատուն-եկեղեցին ավարտելուց հետո Սիրանես ճարտարապետը առատորեն վարձատրվել է Տարսայիճ Օրբելյանի կողմից. նա ստացել է 500 սպիտակի գինաց մի շինական-ճորտ, Աղազար Ըղվերծեցին և Գոռիսի Շնհեր ու Հալիձոր գյուղերի արանքում մի մեծ հողաբաժին՝ իբրև ժառանգական սեփականություն։

4. Նկատի ունենալով այդ մեծ վարձատրությունը, կարելի է անսխալ ենթադրել, որ նա ուրիշ շատ կառուցումներ էլ է արել Տարսայիճ և Սմբատ Օրբելյանների համար։ Դրանցից առաջին հերթին պիտի հիշատակել Նորավանքի մեծ տապանատուն-գավիթը, որը շինել է տվել Սմբատ Օրբելյանը 1261 թ. որպես տոհմական տապանատուն, ուր թաղված են այդ տոհմի անդամները՝ նաև թե մեկ և թե մյուս տապանատներում եղած հիանալի գերեզմանաքարերը։ Այդ բոլորի վրա Սիրանեսի ստորագրությունը չկա, բայց նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա Սմբատի ժամանակներից սկսած, ապա նաև Տարսայիճի օրոք եղել է Օրբելյան իշխանական տոհմի և Նորավանքի գլխավոր ճարտարապետը, անկասկած այդ շրջանում կառուցված շենքերը նրա ձեռագործները պիտի լինեն։ Թողնելով զուտ ճարտարապետական մանրամասնությունների քննությունը, որը կարող է այդ խնդրին օժանդակել, կարելի է մատնացույց անել Սմբատի տապանատան վրայի շինարարական և Սիրանեսին վարձատրելու մասին գրված երկու արձանագրությունների տառերի ոճի և Սմբատի ու այլ իշխանների տապանաքարերի գրչության ոճի նույնությունը, որոնք խիստ տարբերվում են մնացածներից, դրանք նեղ ու բարձր, չափազանց գեղեցիկ տառաձևեր են։

5. Մեզ հայտնի երկու հուշարձանների կառուցումը տևել է մոտ 10 տարի. վերջին թիվն է 1275-ը. պետք է ենթադրել, որ դրանք Սիրանես ճարտարապետի ստեղծագործության վերջին շրջանին են պատկանում, երբ նա արդեն անվանի ու հարգված ճարտարապետ էր։

6. Օրբելյան տոհմը, XIII դարի կեսերից, Վայոց ձորի այն մասերում, որտեղ գտնվում են Սիրանես ճարտարապետի շինած երկու հուշարձանները և ընդհանրապես Սյունիքում, կառուցել է բազմաթիվ այլ հուշարձաններ, եկեղեցիներ, պալատներ, բերդեր, կամուրջ-

---

1 Սարգսեան, 188։

2 Գ. Հովսեփյան, Потомство Тарсаича, „Христианский Восток". т. II, вып II, 1913, стр. 238.

3 «Այրարատ», 171։

4 Ըղվերծը Սիսիանի շրջանի այժմյան Դարաբաս գյուղն է։

ներ և ավելի փոքր կոթողներ. վստահորեն կարելի է պնդել, որ դրանց մի մասը ևս Սիրանես ճարտարապետի ստեղծագործություններն են։

7. Սիրանեսի ձեռակերտն են, բացի գըրանից, նաև իր կալվածք-ագարակում մինչև օրս կանգնած զույգ խաչքար-հիշատակարանները. մեկն իր կալվածագիր-արձանագրությամբ, մյուսն իր ծնողների գերեզմանի վրա։

8. Սիրանես վարդպետը մեր միջնադարյան այն ճարտարապետներից է, որն այդչափ նյութական և բարոյական գնահատականքի է արժանացել (գոնե հայտնի), որի համար հատուկ արձանագրություններ են գրվել մեկենասների կողմից և հատուկ հուշարձան է կանգնեցվել կալվածագիր արձանագրությամբ ու մեկենասի ստորագրությամբ հաստատված։

9. Սիրանես ճարտարապետը հավանաբար բնիկ Հալիձորցի է եղել, և հենց իր գյուղի սահմանում էլ կալված է ստացել, ուր և թաղված են նրա հայրն ու մայրը։

10. Սիրանեսը առայժմ միակ ճարտարապետն է, որի կյանքի մասին այդքան մանրամասնություններ գիտենք, հոր՝ Գորքի (Գևորգ), մոր՝ Թեհիկի և եղբոր՝ Հղարմէյի անունները (այրում, նկ. 24, 25, 26, 27, 28, 29)։

24. ՇԱՀԵՐ ՎԱՐԴՊԵՏԸ

Անիի առաջին, 1892 թ. պեղումների ընթացքում, պրոֆ. Մառը բաց արեց մի փոքրիկ եկեղեցի, որը գտնվում էր քաղաքի հյուսիսային պարիսպների մոտ, դեպի Իգաձոր տանող ճանապարհին, Վրաց եկեղեցուն մոտ։

Այս հուշարձանը, նախքան պեղումները, ամբողջովին փլած ու ծածկված էր հողի տակ և ներկայացնում էր փոքրիկ բլուր. պեղումների միջոցով բացվեցին նրա պատերի ստորին մասերը և բազմաթիվ ճարտարապետական բեկորներ, որոնց հիման վրա հնարավոր եղավ թղթի վրա վերականգնել նրա լրիվ պատկերը. դա եղել է արտաքուստ քառակուսի գմբեթավոր շենք, ճոխ զարդաքանդակներով և ներքուստ պատած որմնանկարներով։

Հուշարձանի վրա շինարարական արձանագրություն չի գտնվել, այլ միայն արձանագրված զանազան բեկորներ։ Դրանցից հնագույն թվական ունեցողը եղել է պատի մեջ ագուցված մի խաչքարի վրա, այն է՝ 951 թ.։ Այդ պատճառով էլ եկեղեցու մասին եղած առաջին գրավոր հաղորդումների մեջ նրա կառուցման ժամանակը ենթադրել են X դարը, իսկ ավելի ուշ, XIII դարին վերաբերող արձանագրական բեկորների մեջ հանդիպող թվերը վերագրել են հետագա նորոգումների ժամանակներին[1]։ Ճարտարապետական հետագա մանրամասն ուսումնասիրությունները ապացուցեցին սակայն, որ հուշարձանն աներկբայորեն կառուցված է XIII դարում, իսկ հին թվականություն ունեցող արձանագրված քարերը կառուցման ժամանակ օգտագործվել են որպես շինանյութ։

Այսպիսի անճշտություն գոյություն ունի գրականության մեջ նաև հուշարձանի անվան վերաբերյալ, հուշարձանի բեմի ճակատին գտնվող ծաղկագիր գրերով մի արձանագրության մեջ, որն անշուշտ շինության ժամանակին է վերաբերում, պահպանվել են հավանաբար եկեղեցին շինել տվողների անունները՝ Խաչատուր քահանա, Բախտաղեկ և ուրիշներ։ Հիմք ընդունելով այս հանգամանքը, ակադ. Հ. Օրբելին իր արձանագրությունների ժողովածուի մեջ հուշարձանն անվանում է «Խաչատուրի եկեղեցի»[2], իսկ ճարտարապետ Տոկարսկին՝ «Բախտաղեկի եկեղեցի»[3]։ Այլ ուսումնասիրողներ նկատի ունենալով հուշարձանի ներսում, որմնանկարների մեջ, Գրիգոր Լուսավորչի և Գրիգոր Նյուսացու պատկերների առկայությունը՝ հուշարձանն անվանել են ս. Գրիգոր[4]։ Նույն հուշարձանի վերաբերյալ ուսումնասիրությունների մեջ տարբեր անուններ գործածելը ավելորդ դժվարություններ է հարուցում, այդ

---

[1] *Н. Я. Марр.* Раскопки в Эриванской губернии, Отчет имп. археологической комиссии за 1892 г., С.-Петербург, 1894, стр. 78–79.

И. П. Сычев, Анийская церковь, раскопанная в 1892 г., „Христианский Восток", т. I, вып. II, 1912 г., С.-Петербург, стр. 212—214.

[2] «Անիի արձանագրությունների ժողովածուն», էջ 161—167 (ձեռագիր)։

[3] *Н. М. Токарский*, Архитектура Древней Армении, Ереван, 1946, стр. 265.

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, հայկական ճարտարապետության պատմության, Ա, Երևան, 1942, էջ 166։ Կ. Յ. Բասմաջեան, Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի և Մարմաշէնու, Պարիս, 1931, էջ 122։

պատճառով էլ մենք, նկատի ունենալով ներքևում բերվելիք արձանագրությունը, որի մեջ հուշարձանի ստույգ անունը կա, գերադասում ենք ս. Գրիգոր կոչումը։

Պրոֆ. Մառի պեղումների շնորհիվ հայտնաբերված արձանագրություններն այս հուշարձանի շինարար վարպետների մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում։ Դրանցից գլխավորը մի մեծ արձանագրություն է, գրված երեսպատման չորս քարերի վրա, որոնք ագուցված են եղել հուշարձանի պատի վրա արտաքուստ և պեղման ժամանակ ընկել են։ Այդ կարևոր արձանագրությունը հինգ տող է և ունի հետևյալ բովանդակությունը.

Թ

Վ. : :Ի

Ջ

ԵՍ ՇԱՀԵՐ ՎԱ[Ր]ԴՊԵՏՍ ԵՏՈՒ Զ[ԻՄ] ՀԱՅՐԵ-
[ՆԻ] .../ԳՈՐ ԶԻԹԱԳԻ[Ն] ԶՈՐ Ի ՀԻՄԱՆՑ
ՇԻՆԵՑԻ/ [Ի] ՍԲ ԳՐԻԳՈՐ, ԵՒ [ՊԱՐՏԻՆ] ՍՊԱ-
ՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ/ Ի ՏԱՐՈՋ :Բ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ
ՍԲ ԳՐԻԳՈ[ՐՈ/ ՏԱՒ]ՆԻՆ ԱՆԽԱՓԱՆ. ՈՐՔ
ՀԱԿԱՌԱԿԻՆ, ՄԵ[Ղ] ՄԵՂԱՑՆ/ ՊԱՐՏԱԿԱՆ Է
[ԱՌԱՋ]Ի ԱՑ[1]։

Ծանոթություն — 1. Արձանագրությունը չորս քարերի վրա է, որոնցից մեկի վրա միայն թվականն է։

2. Թվականը կարելի է Թվ :ՁԻ։ և ԹՎԻ(Ն) :Ջ: կարդալ. գերադասում ենք առաջինը՝ 1271 թ.։

3. Վարդպետ բառը տեղավորված է երկու քարերի վրա, առաջին քարի ծայրը մի քիչ ջարդված է, որով մնացել է միայն միջի Ր տառը, որը ոչ միայն հեշտությամբ լրացվում է, այլև երկրորդ քարի վրա ամբողջ մնացած — ԴՊԵՏ մասը հաստատորեն թելադրում է ՎԱՐԴՊԵՏ վերծանել։

4. Նշված հրատարակություններում մեջ (բացի ակադ. Օրբելու) վարդապետ է վերծանվել, որը միանգամայն սխալ է։

Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը նվիրատվական բնույթի է և չի պարզում Շահեր վարդպետի կառուցողական կապը հուշարձանի հետ, սակայն նկատի ունենալով Շահերի ճարտարապետ լինելու հանգամանքը և եկեղեցու շինության նույն ժամանակին վերաբերելը՝ կարող ենք հաստատորեն այս հուշարձանը Շահեր վարդպետի ձեռագործը համարել։

Մեր աշխատության մեջ կան երկու դեպքեր էլ, երբ ճարտարապետները միաբանում են իրենց ձեռակերտ եկեղեցիներին, դրանցից վարդպետ Աղբայրիկը նույնպես նվերներ տալու միջոցով, իսկ Մխիթար հյուսնը առանց այդպիսի երևույթի հիշատակման։ Թված այդ երկու վարդպետներն էլ՝ իրենց անվան հիշատակումով՝ մեկից ավելի արձանագրություններ են փորագրել իրենց ձեռակերտ հուշարձանների վրա. անհավանական չէ, որ վարդպետ Շահերի անունը հիշատակված կլիներ նաև շինարարական արձանագրության մեջ, որը, դժբախտաբար, հուշարձանի գրեթե հիմնովին կործանման պատճառով, ոչնչացել է։

Բացի վարդպետ Շահերի հայտնագործումից, այս հուշարձանի արձանագրական մնացորդները հնարավորություն են տալիս երևան հանելու հուշարձանի կերտման մասնակից ուրիշ քարտաշ և քանդակազարդող վարպետների անուններ ևս։

Ակադ. Հ. Օրբելու նշված ձեռագիր աշխատության մեջ այս հուշարձանին վերաբերող երկու արձանագրություններ կան, յուրաքանչյուրը մեկ բառ-անունից բաղկացած. այսպես, № 161-ի համարում գրված է. «որմնասյան խոյակի վրա»— (Գրի)գոր, № 162-ում պատի մեջ ագուցված խաչքարի ներքևի մասում՝

ՋՎԱՐԴԻԿ ՅԻՇԵՑԷՔ

Եթե երկրորդի համար միայն ենթադրաբար, ապա առաջինի համար հաստատորեն կարող ենք ասել, որ շինության վրա աշխատած բանվորներից է, որովհետև մի հատիկ անուն, այն էլ խոյակի վրա, միմիայն վարպետը կարող էր գրել, շինության ժամանակ, ինչպես ուրիշ օրինակներն էլ հաստատում են։

25. ՑՐԵՐ ՎԱՐԴՊԵՏ ԿԱՐՆՈ ՔԱՂԱՔԱՑԻ

Հոռոմոսի վանքի արևմտյան մեծ դարպասին կից, բակի կողմից, շինված են երեք

---

[1] *Н. Я. Марр*, Новые материалы по армянской эпиграфике, Записки Восточного отделения Российского археологического общества, т. VII, вып. I—II, С.-Петербург, стр. 64—75.

Կ. Բասմաջեան, Նշված աշխատությունը, № 110, էջ 122—123։ Օգտվել ենք նաև ակադ. Հ. Օրբելու «Անիի արձանագրությունները», № 164 (ձեռագիր)։

դահլիճանման սրահներ, իրար միացած մուտքերով։ Այդ շենքերի նշանակությունը մինչև այժմ էլ ճշտորեն որոշված չէ։ Շինարարական երկու արձանագրությունների մեջ նրանք անվանված են «նշխարատուն», որը կարելի է թե նշխարք թխելու տեղի համար հասկանալ և թե ծիսական անոթներ ու սպասքներ պահելու տեղի համար։ Շինարարական արձանագրություններից մեկի մեջ (Վաչեի) «նշխարատուն» անվան հետ գործ է ածված նաև «գրատուն» բառը, որը մատնացույց է անում նաև գրադարանի կամ մատենադարանի իմաստը։ Ավանդաբար նրանց համարվել է նաև դատարանի, ժողովասրահի, արքայական խորհրդարանի և բազմաթիվ այլ նշանակություններ, որոնք սակայն հաստատել այժմ դժվար է։ Մի բան պարզ է, որ այդ դահլիճները տարբեր նպատակներով են օգտագործվել և համենայն դեպս ոչ կրոնական ծիսակատարության[1]։ Սակայն նկատի պիտի առնել և այն, որ այդ սրահները կառուցել տվող Վաչեն նրանց պահպանման համար այգի է նվիրել, դա ապացույց է շենքի ինքնուրույն դրության, իսկ այդպիսի ինքնուրույն հիմնարկներ վանքերին կից, որոնց պահպանության համար հատուկ նվիրատվություններ էին լինում, դրանք ըստ արձանագրությունների՝ հյուրատները և գրադարանդպրոցներն են։

Շինարարական երկու արձանագրություններից երևում է, որ սրահները շինված են տարբեր ժամանակ և տարբեր մեկենասների կողմից։ Առաջին դահլիճի մուտքի ճակատին է գտնվում հին արձանագրությունը, ըստ որի 1229 թ. այդ սրահը շինել է տվել Սարգսի որդի Վաչեն, իր ամուսին Մամախաթունի հետ։ Մյուս շինարարական արձանագրությունը գտնվում է երկրորդ սրահի պատուհանի ճակատին և կարևոր է նրանով, որ իր մեջ պահել է նաև ճարտարապետի անունը.

Թվ. ՉԻԶ (=1277) կամաւն ա̅յ ես Առիւծս հոգեւ[որեանց]² Սարգսի որդիս և կենակից իմ Սէդա շինեցաք ի մեր հալալ արդեանց զնըշխա[րա]տունս ի մեր ժամատան դուռս յիշատակ ծնողաց մերոց եւ ս... զոր ի կա .. ա̅յ կարողութեամբ. վարդպետ Ցրեու Կարնոյ քաղաքացի[1]։

Շինարարական երկու արձանագրություններից պարզվում է, որ այդ շենքերը միաժամանակ չեն շինվել, նրանցից մեկը շինվել է 1229 թ., այսինքն 48 տարի առաջ, քան վարդպետ Ցրեի անունը կրող շենքերը։ Թեև ժամանակի տարբերությունը շատ մեծ չէ և սրահների ոճերի մեջ էլ մեծ նմանություններ կան, բայց սխալներից զերծ լինելու համար՝ հարմար ենք գտնում միայն Ցրեի անունը իր պատին կրող շենքը նրա ձեռակերտը համարել։

Ինչպես վարդպետ Ցրեի անունը կրող, այնպես էլ նրան կից մյուս սրահները ճարտարապետական տեսակետից մեծ արժեք են ներկայացնում, ամենից առաջ այն պատճառով, որ նրանք եկեղեցիներ չեն, այլ ինչ-որ օժանդակ, տնտեսական ու կուլտուրական կարիքների համար կառուցված սրահներ, այսինքն շենքեր, որոնք կապ ունեն քաղաքացիական ճարտարապետության հետ։ Նրանց այդ բնույթը արտահայտվել է թե՛ հատակագծային և թե՛ ձևավորման մանրամասնությունների մեջ։ Դժբախտաբար այդ կարևոր հուշարձանների չափագրությունները և ճարտարապետական ուսումնասիրությունն ընդհանրապես գոյություն չունեն, բայց ճամփորդների համառոտակի և պարզ նկարագրություններից իսկ երևում է նրանց թե աշխարհիկ-կուլտուրական բովանդակությունը և թե մանավանդ մեծարվեստ մտահղացումն ու կատարումը։ 1864 թ. հրատարակած իր աշխատության մեջ Սարգսյանը հետևյալ կերպ է նկարագրում այդ սրահները.—Փառահեղ և զարմանալի... առաջին սենյակի չորս կող-

---

1 Համեմատիր՝ Սարգսեան, էջ 161։ «Շիրակ», էջ 23։ Ա.. Մխիթարեանց, «Ուղեցույց Անի քաղաքի», Ալեքպոլ, 1902, էջ 20։

2 Փակագծերի մեջ առնված տառերը՝ որեանց— բնագրում ջարդված են, լրացնում ենք նույն վանքի մի այլ արձանագրության մեջ Առյուծի անվան և ազգանվան լրիվ պահպանված բնագրի օրինակով, տե՛ս Սարգսեան, էջ 156 և «Շիրակ», էջ 25։

1 Սարգսեան, 163, «Շիրակ», 25. կարծում ենք, որ «վարդպետ» բառն այստեղ սխալ է վերծանվել, բնագրում «վարդպետ» պիտի լիներ, վերծանողները նկատի ունենալով վերջին «վարդպետ Ցրեու Կարնո քաղաքացի» նախադասության ընդհանուր իմաստի բացարձակապես անհարիր լինելը «վարդպետ» իմաստին, որը նրանց կողմից միշտ «վարդապետ» է հասկացվում, ներկա դեպքում պարզապես «վարպետ» են դարձրել։ Սակայն եթե սույց լինի «վարպետ» ձևը, այս կդառնա «վարպետ» կոչումի հնագույն գործածության օրինակ, արձանագրական նյութի մեջ։

մերը երեքական մասի է տրոհված, որոնք կամարաձև շրջանակներով խորաններ են կազմում պատերին կից, զարդարված 12 սյուներով և վսեմ քանդակներով։ Երկրորդ սրահը մի քիչ փոքր է առաջինից, չորս պատերից որմնասյուներ են բարձրանում, որոնք աղեղնաձև միանում են առաստաղի կենտրոնում, թողնելով մի քառակուսի բացվածք— լույսի համար։

Իսկ երրորդ սենյակը «փառափայլ ևս է քան զայլսն», չորսսյունանի դահլիճի միջումն են և ութ որմնասյուներ պատերին հեցված, որոնց ձևացնող կամարների վրա, ժամատան նման, քարաշեն առաստաղն է հանգչում՝ զարդարված ճոխ քանդակներով. պատերի մեջ էլ կան խորաններ կամ պատուհաններ[1]։

Եթե այս հոյակապ հուշարձանի միայն մի մասը շինած լինի վարդպետ Ցրերը, միևնույն է, նա հանդես է բերել խոշոր ճարտարապետի և նրբաճաշակ արվեստագետի իր ձիրքը և համարվելու է XIII դարի մեր տաղանդավոր ճարտարապետներից լավագույններից մեկը և եթե առայժմ նրա ձեռակերտը միայն այս շենքն ենք ճանաչում, դա նշան չէ, որ նա ուրիշներ ևս չի կառուցել, ընդհակառակը, այսպիսի մեծ վարպետը չէր կարող չօգտագործվել նույն Վաչե իշխանի, կամ այլոց կողմից կատարվող շինարարությունների վրա, որոնք XIII դարի երկրորդ կեսում մեծ ծավալ էին ստացել Հայաստանում։

26. ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴՊԵՏ

Հայաստանի հնագույն բնակավայրերից է Մրենը, որը պատմագիրների մոտ կոչվում է նաև գյուղաքաղաք։ Այժմ համատարած ավերակների մեջ կանգնած են ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ, որոնցից գլխավորը՝ տաճարը, VII դարի հայ ճարտարապետության լավագույն կոթողներից է։ Գլխավոր այդ հուշարձանից բացի, նրա շուրջը գտնվում են բազմաթիվ այլ կոթողների կանգուն և ավերակ մնացորդներ։ Մրենի հուշարձանների պատերին կան բազմաթիվ արձանագրություններ, բարձրաքանդակներ, շրջապատում՝ մեծ թվով գեղեցիկ խաչքարեր,

1 Սարգսեանց. *160, 161*։

բայց այդ հարուստ արձանագրական նյութի մեջ ճարտարապետի անունը պահպանել է միայն մի փոքրիկ մատուռ, որի մուտքի շուրջը գրված 1277 թ. արձանագրությունն ունի Մխիթար վարդպետի անունը։

Թ. ՉԻԶ.: Ի հայրապետութեան և թագաւորութեան տն. Յակոբա և Լեւոնի ի պարոնութեան Սահմատինին վերակառուցեալս զայս խորան յանունճաղրութիւն Յիսուսի փրկչին մերո որ է պատճառ աղաւթելոյ ի սմա և զիս զՄխ[իթար] վարդպետս և որք ագնեցին յիշեցէք[1]։

Արձանագրության բոլոր հրատարակիչները Մխիթար վարդապետեն կարդացել[2], բայց նկատի ունենալով այն, որ վերջին նախադասությունը գրեթե անկախ է արձանագրության ընդհանուր բովանդակությունից և ելնելով այս գրքի «Հիշատակություններ աշխատավորների» բաժնում մեկնաբանվող մեր ընդհանուր դրույթից, համոզված ենք, որ տեղում պետք է գրված լինի Մխիթար վարդպետ[3]։

Թեև գլխավոր հուշարձանը կառուցված է VII դարում, բայց ինչպես այն, այնպես էլ մյուսները ենթարկվել են նորոգումների և հատկապես XIII դարում։ Այդ ժամանակ շինվել են նաև նոր հուշարձաններ նույն տեղում[4]։ Այս աշխատանքների մեջ Մխիթար վարդպետը պետք է որ մեծ վաստակ ունենար։

27. ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊԵՏ

Մոմիկ վարդպետը բազմատաղանդ արվեստագետ է։ Նա իր ուժերը փայլուն կերպով գործադրել է գրչության, մանրանկարչության, քարի վրա զարդաքանդակելու և վերջապես ճարտարապետության բնագավառներում։

Որպես գրչի և մանրանկարչի, նրա մասին բազմիցս խոսվել է այդ բնագավառների հետազոտություններին նվիրված ուսումնասիրությունների մեջ։ Վերջին տարիներում հատկապես նրա մանրանկարչական արվեստի ուսումնասիրությանը նվիրվել են նաև հա-

1 Սարգսեան, *200*։ «*Շիրակ*», *140*։ «*Վիմական տարեգիր*», *119*։

2 *Իրականում բոլորի աղբյուրը Սարգսյանն է*։

3 Թ. Թորամանյան, *Նյութեր..., Բ, 190*։

4 *Նույն տեղում*։

տուկ աշխատություններ, որոնց հեղինակ Ա. Ավետիսյանը շատ բարձր գնահատելով Մոմիկի արվեստը՝ նրան համարում է Գլաձո-րի մանրանկարչական դպրոցի հիմնադիր[1]։

Մեր աշխատության բնույթի համապատասխան, մենք կզբաղվենք Մոմիկ վարպետի քանդակագործական և ճարտարապետական աշխատանքների քննությամբ, նրանց ժամանակի, վայրերի և Մոմիկի կենսագրության հետ կապված խնդիրների քննարկմամբ, նրա մյուս բնագավառներին վերաբերող աշխատություններին անդրադառնալով այս հարցերի պարզաբանման առնչությամբ միայն։

Դատելով Մոմիկի անունը կրող հիշատակարանների ժամանակագրությունից՝ Մոմիկն իր գործունեությունն սկսել է որպես մատյաններ արտագրող գրիչ, ապա նաև մանրանկարիչ ու վերջում մագաղաթի ու թղթի վրա արվեստագործելուց բացի զբաղվել է նաև քարգործությամբ։

Մոմիկի արտագրած ու ծաղկազարդած առաջին գործը մի ավետարան է, 1292 թվից, գրված Նորավանքում «Ուռոյ Քարոյ» կրոնավորներ Հովհաննեսի և Թադեոսի խնդրանքով (№ 2848, Մատենադարան)։ Բազմաթիվ լուսանցքազարդերից ու գլխագրերից բացի, Մոմիկը չորս ավետարանների սկզբից նկարել է բոլոր չորս ավետարանիչներին։

Ընդարձակ հիշատակարանի մեջ Հովհաննես և Թադեոս կրոնավորներն ասում են, որ երկար ժամանակ փափագում էին ունենալ մի այդպիսի գիրք, ապա՝ «Եւ ըստ ժամանակի ի պատշաճի հարկեալ զոմն եղբայր սիրելի Մոմիկ անուն բազմիմաստ և հանճարեղ յարուեստ գրչի և նկարագրութե որ և ստ ելից զփափագ և զտարփումն սրտից մերոց»։

Ավետարանից հետո Մոմիկը կարճ հիշատակարան է գրել, որտեղ իրեն անվանում է՝ ծրող (Մատթեոսի ավետարանի վերջը). գծող (Մարկոսի ավետարանի վերջը). գրիչ՝ (Հովհաննու ավետարանի վերջը)։ Իսկ ընդարձակ հիշատակարանի մեջ նշելով իր պատվիրատուների ցանկությունը, ավելացնում է. «Եւ բարեյորդոր փութով ստիպեաց զտկարութի ասպիկար քարտուղարիս, Մոմիկ կոչելոյ. դրոշմել ի քարտէնի զգիծ և զնկար»։ Երկրորդ ձեռագիրը նույնպես մի ավետարան է՝ գրված՝ Ստ. Օրբելյանի համար Հովհաննես անուն գրչի կողմից, որը նկարազարդել է Մոմիկը և իր հիշատակարանը գրել Հովհաննու ավետարանի նախագրության մեջ.

«Աղաչեմ զհանդիպեալքդ այսմ Աստուածաբան տառիս յիշել անիմաստ նկարողս Մոմիկ և սխալանացն անմեղադիր լինել, զիթէպէտ անհմուտ էի, այլ ժամանակս ձմեռն էր և տունս նեղ և Աստուած զյիշողսդ յիշէ յիւր անբաւ ողորմութիւնն, և նմա փառք յաւիտեանս ամէն, ի թվիս ՉԾԱ (1302)»[1]։

Սրանից բացի կա մի երրորդ ձեռագիր ևս Վիեննայում, որի խորաններից մեկի մեջ կա հետևյալ կարճ հիշատակարանը՝ «ԶՄոմիկ նկարիչ խորանիս յիշեցէք աղաչեմ»[2]։ Այս ձեռագիր մատյանը տարբեր գործերի և տարբեր գրիչների կողմից գրված մի ժողովածու է, գրված Կիլիկիայի Մլիճի վանքում և համարվում է 1283 թ. արտագրություն։ Ակադ. Հ. Աճառյանը այստեղ հիշված Մոմիկին այլ անձ է համարում և իր բառարանում տարբեր համարի տակ է դնում[3]։ Մեզ թվում է, որ այս Մոմիկը ևս նույնն է նախորդների հետ, հետևյալ նկատառումներով. նախ որ այս ձեռագիրը մի ժողովածու է, որի տարբեր մասերը գրված են չորս տարբեր գրիչների կողմից, որոնցից մեկը՝ Մատթեոսը մեր Նորավանքի Մոմիկին հայրենակից է։ Իր հիշատակարանի մեջ այս Մատթեոսը գրում է, որ եկել է «Վայոց գավառից հուպ ի շիրիմն Սիւնեցի ի յԱղբերց վանս մենաստանի»[4]. կարող է պատահել ուրեմն, որ ժողովածուի տարբեր մասերը տարբեր տեղեր գրված լինեն, ապա միացված-կազմված վերջնականապես Մլիճի վանքում։ Այս դեպքում Մատթեոսի գրած մասը կարող է հենց Վայոց ձորում գրված լինել և զարդարվել Նորավանքում հիմնականորեն աշխատող մեր Մոմիկի ձեռքով. բայց

[1] *А. Аветисян*, О художнике Момике, «Տեղեկագիր» ԳԱ-ի, 1956, № 2, և նույնի՝ Գլաձորի մանրանկարչության դպրոցի հիմնադիր վարպետ Մոմիկը, «Էջմիածին», 1956, VIII—IX։

1 Մ. Սմբատեանց, Նկարագիր ս. Կարապետի վանից Երնջակա և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 232—233։ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները։

2 Տաշեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեան, ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 1039։

3 Հ. Աճառյան, Անդ, Գ, էջ 418.

4 Տաշեան, Անդ։

և հնարավոր է ինչպես գրիչ Մատթեոսի, նույնպես և Մոմիկի՝ անձամբ Վայոց ձորից Կիլիկիա գնալը և ավելի կամ պակաս շափով այնտեղ մնալն ու աշխատելը։ Նորավանքի Մոմիկը գործել է Ստ. Օրբելյան պատմագիր եպիսկոպոսի ժամանակ, հայտնի է, որ վերջինս Կիլիկիա մեկնեց 1285 թ. ձեռնադրությունն ստանալու համար. իշխանազուն եպիսկոպոսն, անշուշտ, կունենար իրեն ուղեկցող մարդիկ և հավանաբար դրանց մեջն էր և Մոմիկը, որն ինչպես մեջբերված հիշատակարանից տեսանք՝ անվանված է «Բազմիմաստ և հանճարեղ յարուեստ գրչի և նկարագրութե» և մի այլ դեպքում ինքն իրեն «քարտուղար» է կոչում։

Մեր ենթադրությանը կարող է նպաստել նաև Մոմիկ անվան հազվադեպ լինելը։ Ակադ. Հ. Աճառյանի բառարանում չորս Մոմիկներ կան նշված, դրանցից երեքը Նորավանքում գործող գրիչ և քանդակագործ Մոմիկներն են, որոնց բանասիրության մեջ վաղուց ի վեր համարել են մի անձ[1]. մնում է միայն՝ իբր Կիլիկիայում գործած այս մանրանկարիչ Մոմիկը, որին մենք նույն անձնավորությունն ենք համարում վերևում բերած հիմունքներով։

Այս ենթադրությունը կարող է հաջողությամբ լուծվել թված ձեռագրերի մանրանկարչության ոճային համեմատությամբ, որը տարաբախտաբար հնարավոր չէ, կիլիկյան համարված ձեռագրի մեզ համար անմատչելի լինելու հետևանքով[2]։

Սրանցից բացի մեր Մատենադարանում կան ևս երկու ձեռագրեր, № 6764 Կեռան թագուհու ավետարանը և մի ուրիշ ավետարան, № 3399, գրված 1309 թ., որոնց ծաղկողը նույնպես ենթադրաբար Մոմիկն է համարվում։

* * *

Մեր նյութի տեսակետից, սակայն, կարևոր են Մոմիկի քարգործ արվեստի հետ կապված ստեղծագործությունները։

Գրականության մեջ մինչև այժմ քարե հուշարձանների վրա հայտնի էին Մոմիկի երկու ստորագրությունները, դրանցից ժամանակով առաջինը մի խաչքար է, որն իր նուրբ և կատարյալ քանդակագործությամբ կարող է համեմատվել միայն Պավղոս կազմողի ստեղծագործություններին։ Այդ խաչքարի նախնական կանգնած տեղն անհայտ է, թեև կասկածից դուրս է, որ այն իր ներկայումս գտնվող վայրի մոտերքում պետք է լիներ։ Այժմ այդ չքնաղ խաչքարը գտնվում է Եղեգնաձորի (Վայոց ձոր) հուշակավոր Նորավանքի բակում՝ հենված գավիթ-տապանատան արևմըտյան պատին, մուտքի կողքին, արտաքուստ։

Խաչքարի ճակատը երկու գեղեցկորեն ձևավորված սյուներով բաժանվում է երեք մասի, կենտրոնում լրիվ խորան է, ուր գահույքին նստած է Հիսուսը, ձախ ձեռքով կրծքի վրա բռնել է ավետարանը. կողքերին երկու կիսախորանների մեջ մեկական առաքյալներ են։ Խաչքարի կենտրոնում կամարակապ խորանի մեջ խաչն է, տակին հազվագյուտ նրբությամբ զարդարված գունդ. երկու շրջանակներին մոմաթերթի մանրությամբ ծակոտկեն և ցանցապատ մակերեսի վրա ցցուն կերպով 8 թևանի աստղեր են քանդակված, յուրաքանչյուր շրջանակին յոթ հատ։ Զարմանալի նուրբ քանդակների համար ոչ միայն նրբագույն գրիչներ են օգտագործվել, այլև շաղափ, որովհետև հատկապես գնդի քանդակները տակերից անցքով միանում են իրար, ինչպես այդ գոյություն ունի միայն Պավղոսի կազմած Գոշավանքի հայտնի խաչքարերի վրա։

Խաչքարի նեղ քիվին եղել է մեկ տողով արձանագրություն, որն ամբողջապես ջարդվել է և միայն հատուկենտ տառեր են նշմարվում, իսկ տակին լավ պահպանվել է չորս տողից բաղկացած հետևյալ կարևոր արձանագրությունը, որն անհրաժեշտ ենք համարում մեջ բերել պատճենագիր.

ԵՍԹԱՄԹԱԽԱԹՈՒՆՍԿԱՆԳՆԵՑԻԶԽԱՉՍԻՎՐԿ
ՈՒԹԻՀՈԳՈԱԹԱՂԿՄԱՐՍԱԽՏՍԵԻՅԱՄԵԻՇԱ
ՄՈՒԹԻՐԴՈՑԻՄՈՑԲԻՐԹԷԼՐՆԵԻԲՈՒՂՄԱՅԻՆ
։ԹՎԻՆ։ՉՀԷ ՄՈՄԻԿՎԱՐԴ ՊԵՄՅԻՆ։

Մոմիկի ստորագրությունը կրող երկրորդ, մինչ այժմ ստույգ քարաշեն հուշարձանը Նորավանքից մի քանի կիլոմետր հեռու Արենի (Արփա) գյուղի հին եկեղեցին է։ Մո-

1 Գարեգին վարդ. Յովսէփեան, Քարտեղ հայ հնագրութեան, «Շողակաթ», էջ 207, «Էջմիածին», 1913։ Կ. Ղափադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 12։

2 Բանասիրության մեջ այս ձեռագրի թվականն է համարվում Մոմիկի առաջին հիշատակությունը, բայց դա կարող է ճիշտ չլինել, որովհետև 1283 թ. ձեռագրի արտագրությանն է վերաբերում, իսկ Մոմիկը այն կարող էր ծաղկել ավելի ուշ։

միկի ստորագրությունը գտնվում է եկեղեցու արևմտյան մուտքի շրջանակների վերին երկու կողմերին գրված շինարարական արձանագրության տակ. կարևոր ենք համարում այս արձանագրությունը ևս մեջ բերել լրիվ, տեղում կատարած մեր ստուգումներով և ներկա վիճակով։

ԵՍ ՏՐ ՅՈՎԱՆ[ՆԵՍ ԱԻՐՊԷՂ] ՍԻԻՆԵ(Ա)Ց ԱՐՔԷՊԻՍԿՈՊՈՍ/ ՇԻՆՈՂ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈ[ՅՍ ՅԻՇԵԼ ԱՂԱ]ՉԵՄ ԵԻՍ ԵԻ/ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆՆ ԵԻ ՋԱՐԵ[ԱՆ ՄԵՐ/ՋԱ]ՈՐՆ ԻՄ ՁՔԱՋ ՄԵՆԱՄԱՐՏԻԿՆ ՁԲՈՒՐԲԷԼՆ ԵԻ/ Ձ] ԴԺՇԽՈԱՓԱՌ ՔՍԱՍԷՐ ՁՈՅԳՆ ԻԻՐ Ձ[ՎԱԽ]ԱԽՆ՝/ ՆՈՐԱԲՈՂԲՈՋ ՁԱԻԱԿԱԻՔ ԻԻՐԵԱՆՑ ԲԷՇՔԷ/ՆԻԻՆ ԵԻ ԻԻԱՆԷԻՆՆ։ Թվ. ՉՀ։ ՇԱՐԺ ԵՂԵԻ./ ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊ[1].

Բացի այլ սխալներից մեր մեջբերած այս երկու արձանագրությունների տակ եղած Մոմիկ վարդպետ ստորագրությունը բոլոր հրատարակիչների մոտ «ուղղվել» է Մոմիկ վարդապետ ձևով[2]։

Քարգործ արվեստի հետ առնչվող Մոմիկի գործունեության մասին գրականության մեջ գոյություն ունեցող միայն այս երկու տեղեկությունները 1955 թ. հնարավոր եղավ շատ ավելի ընդլայնել, մեր կրկին այցելության ժամանակ թե՛ Նորավանք և թե՛ Վայոց ձորի այլ հուշարձաններն ընդհանրապես։

Նախ, այդ նու՛յն Նորավանքում, Գավիթ-տապանատան ներսում, նրա արևելյան պատի տակ, ամբողջ պատի երկարությամբ շինված ու ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի վրա (դեպի եկեղեցին տանող մուտքի երկու կողմերից) կանգնած են մի քանի գեղաքանդակ խաչքարեր, որոնցից մեկը այնքան նման է իր քանդակների ոճով մեր նկարագրած և Մոմիկի ստորագրությունը կրող նախորդ խաչքարին, որ հենց այս հիման վրա էլ նա համարվել է Մոմիկի ձեռագործը։

Այս խաչքարի տակին գտնվող երեք տողից բաղկացած արձանագրությունը, որը կարող էր այդ կարծիքը հաստատող կռվան հանդիսանալ, չափազանց հողմահարված ու ջարդված է, այս պատճառով էլ համարվել է անվերծանելի։ Մեզ հաջողվեց, սակայն, թեև մեծ դժվարությամբ, արձանագրության մնացորդների հիման վրա այն վերականգնել. և որ ավելի կարևոր է, նրա վերջում Մոմիկի ստորագրությունը հայտնաբերել. մեջ ենք բերում այդ արձանագրությունը ջարդված մասերը լրացնելով անկյունավոր փակագծերի մեջ.

ԵՍ ԱԻՐՊԷՂ [ՅՈՎԱՆՆԷՍ [ՍԻԻՆԵ]ՑԻ ԿԱՆԳՆ[ԵՑ]Ի/ ՁԽԱՉՍ Ի [ՓՐ]ԿՈՒԹ[Ի ՀՈԳԻՈ ՀՈԳ]ԵԻՈ[Ր] ՀԱԻՐՆ ԻՄ ՏՐ/ ՍՏԵՓԱՆՈ[ՍԻ]։ ՏՎ. Չ... [Մ]Ո[Մ]ԻԿ ՎԱՐԴՊԵՏ։

Դժբախտաբար անհնար է այս հուշարձանի կերտման ստույգ թվականը վերականգնել, որովհետև թիվը նշանակող տառերից միայն հարյուրավորն է մնացել, սակայն արձանագրության մեջ հիշատակված երկու անունները էլ պատմական դեմքեր են և նրանց մասին պահպանված տեղեկությունների հիման վրա կարելի է հուշարձանի գոնե մոտավոր ժամանակը որոշել։ Այսպես, երկրորդ անունը՝ տէր Ստեփանոսը՝ պատմագիր Ստեփանոս Օրբելյանն է, որը մահացել է 1304 թ., որին և հաջորդել է այս արձանագրության մեջ հիշատակվող Հովհաննես Օրբելը, որը ազգակիցն ու աշակերտն էր մատենագիր Ստեփանոս Օրբել անի և գահակալել է մինչև, հավանաբար, 1324 թ.։ Արձանագրության բովանդակությունից երևում է, որ խաչքարը Ստեփանոսի «հոգւո փրկութեան» համար է կանգ-

---

1 Արձանագրությունը գրված է մուտքի վերին շրջանակների հարթությունների վրա՝ հարմարեցնելով տեղին, որը վերևում լայն է և աստիճանաբար նեղանալով վերջանում է նեղ անկյունով, այնպես որ ստորագրության մեջ կոչումը ոչ թե սղված է, այլ տեղ չլինելու պատճառով թերի է թողնված։

Արձանագրության վերջում և նրա բովանդակության հետ չառնչվող հիշատակությունը շարժի (երկրաշարժի) մասին, անսովոր երևույթ է վիմագրության արվեստի մեջ և ընդհակառակը՝ սովորական՝ գրչագրական արվեստին. ներկա դեպքում Մոմիկը վարվել է իր գրչագիր արվեստի սովորությամբ։

Ուղղանկյուն փակագծերի մեջ առնված մասերը պարունակող քարն այժմ ընկած-կոտրած է, այն եղել է մուտքի հյուսիսային կողմին։ Արձանագրությունը հյուսիսային կողմում բաղկացած է 13 տողից և հարավում՝ 12 տողից. համեմատել՝ Ջալալեանց, Բ, 213 (առանց վերջին տողի), Ալիշան, Սիսական, 181—82։ Քաջբերունի, Փորձ, 1777/78, № 4, էջ 32։ Լալաեան, Ազգ. Հանդ., Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, էջ 11, 12։

2 Բացի պատմ. գիտ. դոկտոր Ղաֆադարյանից, որը երկու արձանագրությունների մեջ միանգամայն ճիշտ ձևով է վերծանել և Մոմիկ վարդպետ—վարպետ. տե՛ս նշված աշխատությունը, էջ 12։

նեցված, այսինքն 1304 թ. հետո, երբ Ստեփանոս Օրբելյանն արդեն մահացել էր և 1334 թ. առաջ՝ Հովհաննեսի կենդանության ժամանակ:

Մոմիկի քանդակների ոճն այնքան ուրույն է, որ, ինչպես տեսանք, նրան վերագրվող խաչքարն իրոք որ նրա ձեռակերտը հանդիսացավ: Բակում թափված խաչքարերի մեջ մեկ հատ բեկոր էլ կա, որը թեև Մոմիկի ստորագրությունը չի պահպանել իր վրա, բայց քանդակների մոմաթերթային հատկությունները և մանավանդ տակի ամբողջ մնացած գունդը իր մեծությամբ և ասեղնագործի նման քանդակներով հար և նման է Մոմիկի նախորդ խաչքարերի գնդերին և ամեն կասկածից վեր է, որ նրա ձեռքի արվեստն է: Խաչքարի այս բեկորը միայն տակի մասն է և նրա էլ միջտեղը, արձանագրության արանքում քառակուսի փորվածք կա, որի վերին մասում կլոր անցք է փորված, ինչպես երևում է՝ վերջին դարերում այդ խաչքարը այլափոխելով ու այլանդակելով ինչ որ շենքի վրա է օգտագործվել:

Խաչքարի այս բեկորն այժմ ընկած է Տարսայիճ Օրբելյանի կողմից Սիրանես վարդպետի ձեռքով շինել տված Սմբատ Օրբելյանի տապանատան մուտքի առաջ, գավիթ-տապանատան հյուսիսային պատի տակ: Քառակուսի փորվածքից աջ ու ձախ ամբողջ է մնացել հետևյալ արձանագրությունը 5 տողով:

ՁԱՅՍ ՆՇԱՆ ԷԻՆ ՅԻ ԽԱՉԵԼ(ՈՅՆ)

ԱՐԵԱՄԲ ՏՆ ԱՅ, ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵ(ԱՆ)

Ա. կողմ. ՄԱՐԴԿԱՆ, ԿԱՆԳՆԵ(Ա)Լ ՅՈՒՍՈՎ

Ք(ՐԻՍՏՈ)ՍԱՍ ԷՐ ԻՇԽԱՆՈՒՀԻ ԹԱՄԹԱ

ԽԱԹՈՒ[Ն].

Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ(ԻՆ) ԳԼԽԱՒՈՐԻ

ԻՒՐ ՄԵԾԱՓԱՌ ԻՇԽԱՆԻՆ ԷԼԻԿՈՒՄԻ

Բ. կողմ. ԵՒ ՎԱՍՆ ԵՐԿԱՐ ԿԵՆԱՑ ԶԱՒԱԿԱՑ

ԻՒՐՈՑ| ԲՈՒՐԹԷԼԻՆ (ԵՒ) ԲՈՒՂ[ԴԱՅԻՆ][1]:

Մոմիկ վարդպետի զարդաքանդակների խիստ ուրույն ոճը նկատի ունենալով, Կ. Ղաֆադարյանն իրավացիորեն նրան է վերագրում ինչպես նույն Նորավանքի բակում շինված Բուրթելաշեն եկեղեցու զարդաքանդակները և պատկերաքանդակները, այնպես էլ շրջակա վայրերում գտնվող նման գործերը:

1 Ալիշան, *Սիսական*, 192—193:

Մենք կարծում ենք, որ ըստ էության ճիշտ այդ կարծիքը՝ թերի է:

Մոմիկը ոչ միայն գրիչ, մանրանկարիչ և քարի վրա քանդակներ անող վարպետ է, այլև ճարտարապետ:

Ինչպես տեսանք Մոմիկն իր արտագրած և ծաղկած մատյաններում միշտ ստորագրել է այդ մասնագիտություններին հատուկ և ընդհանրացված ձևերով — ծրող, գծող, նկարող և գրիչ. իսկ քարգործ արվեստին վերաբերող բոլոր երեք հուշարձանների վրա, որտեղ նա դրել է իր ստորագրությունները, միշտ Մոմիկ վարդպետ ձևով են: Այս երևույթը խիստ հետաքրքիր է, որովհետև այն երեք հուշարձանները, որոնց վրա փորագրված է Մոմիկ վարդպետ ստորագրությունը, իրականում, ընդհանրացած սովորության համաձայն, Մոմիկը չպետք է վարդպետ կոչումը գործածեր: Այդ երեք հուշարձաններից երկուսը, ինչպես տեսանք, խաչքարեր են. հաջորդ գլխում տեղավորված զարդաքանդակներ կատարող վարպետների բազմաթիվ կոչումների մեջ վարդպետ ձեր գոյություն չունի, խաչքարեր շինող վարպետների համար ամենատարածված կոչումներն են հորինող և մանավանդ կազմող: Մոմիկի ստորագրության երրորդ դեպքը, Արենի գյուղի եկեղեցու շինարարական արձանագրության տակ, նույնպես Մոմիկ վարդպետ ձևով՝ կրկին անսովոր է, որովհետև, ինչպես կտեսնենք այս աշխատության Գ գլխում, արձանագրություններ փորագրող գրիչների համար վարդպետ կոչումը նույնպես անսովոր է. այդ կարգի վարպետների ընդհանրացած կոչումը գրիչ է: Այսպիսով, տեսնում ենք, որ Մոմիկը որպես մատյաններ արտագրող և ծաղկող մնում է հավատարիմ իր դարաշրջանում գործածած կոչումներին, իսկ քարակերտ հուշարձանների վրա ստորագրելիս՝ շեղվում է ընդհանրացած սովորություններից: Այս հակասություն թվացող երևույթի միակ բացատրությունն այն է, որ Մոմիկը արտագրող և ծաղկող իր արվեստներից հետո՝ երբ անցավ քարգործության, ճանաչվում էր արդեն որպես ճարտարապետ-վարդպետ և ինքն էլ իր հիմնական մասնագիտությունն այդ էր համարում և ոչ թե լոկ խաչքարեր շինող կամ արձանագրություններ փորագրող: Եթե միայն այս վերջին աշխատանքներով զբաղվեր, նա իրեն թույլ չէր տա ավելի բարձր՝ վարդպետ, կոչում գոր-

ծածել, որը կնկատվեր անհամեստություն, որովհետև այդ դարաշրջանում քարգործ արվեստի այդ տարբեր ճյուղերը բնորոշող կոչումները արդեն տարրորոշվել էին և քաղաքացիության իրավունք ստացել, այն է վարդպետ=ճարտարապետ, խաչքարեր շինողի համար՝ հորինող կամ կազմող, և արձանագրություններ փորագրողի համար՝ գրիչ։

Լավ գրագետ ու կրթված Մոմիկը չէր կարող անտեղյակ լինել այս՝ իր ժամանակ հանրածանոթ՝ կոչումներին, մանավանդ որ հենց իր գործունեության գլխավոր վայր հանդիսացող Նորավանքի Սիրանեսաշեն դամբարանի հյուսիսային պատին արտաքուստ, փորագրված է Սիրանես վարդպետ բաժնից մեզ ծանոթ մեծ ու Նորավանքի վիմագրությունների մեջ ամենագեղեցիկ գրչությունը հանդիսացող արձանագրությունը, որի մեջ ճարտարապետ Սիրանեսի համար գործ է ածված վարդպետ կոչումը։ Բացի դրանից, Մոմիկ վարդպետի գործունեության սկիզբը Նորավանքում պետք է որ զուգադիպած լինի Սիրանեսի գործունեության վերջին շրջանին։ Մեր կարծիքով Մոմիկը ոչ միայն վանքում ավանդված հիշողություններով և արձանագրություններով էր միայն ծանոթ Սիրանեսին և նրա կողմից գործածված վարդպետ կոչմանը, այլև հնարավոր է կռահել, որ Մոմիկը իր քարգործ և ճարտարապետ-վարդպետ արհեստները ձեռք է բերել հենց Սիրանեսի մոտ աշակերտելով։ Փաստերը ցույց են տալիս, որ իշխանական տները և մեծ վանքերն ունեցել են իրենց մշտական քարգործներն ու ճարտարապետները։ Մենք տեսանք, որ Տարսայիճի օրոք Օրբելյանների տան գլխավոր ճարտարապետը եղել է Սիրանեսը, որի վերջին հիշատակությունը Նորավանքում՝ իր շինած տապանատան պատին՝ նշված է 1275 թ., բայց որ դրանից հետո նա դեռ կենդանի էր, այդ էլ ապացուցվում էր նրանով, որ նա այդ ժամանակ կալվածներ և այլ վարձատրություններ էր ստացել Տարսայիճից։ 80-ական թվականներից արդեն հիշատակվում է Մոմիկի անունը նույն Նորավանքի հետ կապված, սկզբում դրիչ և հետո արդեն որպես վարդպետ։ Տարսայիճի որդի և հաջորդ Ելիկումի և սրա կին Թամթայի օրոք արդեն Նորավանքում և այլուր կառուցած սրանց քարային հուշարձանների վրա հանդես է գալիս Մոմիկ վարդպետի ստորագրությունը։ Բոլոր այս փաստերն ապացուցում են, որ Սիրանեսի՝ ասպարեզից հեռանալուց հետո, Օրբելյանների Վայոց ձորի կալվածներում և նրանց հոգևոր կենտրոն Նորավանքում Մոմիկը, որպես քարգործ և ճարտարապետ, փոխարինել է Սիրանեսին։

Հաստատ համարելով, մեր կարծիքով, Մոմիկի վարդպետ-ճարտարապետ լինելու հանգամանքը, մենք կարող ենք նրա այդ բնագավառի ձեռակերտները համարել նախ՝ Արենի գյուղի եկեղեցին, շինված 1321 թ., որի մուտքի ճակատի շինարարական արձանագրության տակ, ինչպես տեսանք, դրոշմված է նրա ստորագրությունը և ապա Նորավանքի բակում, գլխավոր շենքերի հարավարևելքում կանգնած երկհարկանի շքեղ եկեղեցին։

Դրանցից առաջինը, Արփայի եկեղեցին, գտնվում է Արենի (Առփա) գյուղից կես կիլոմետր հեռու, հին Արփա գյուղատեղի ավերակների մեջ։ Շինված է տեղական կարմրա-սպիտակավուն քարից, կենտրոնագմբեթ է, ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից։ Ներքուստ, գմբեթակիր կամարների չորս անկյուններում չորս ավետարանիչների բարձրաքանդակներն են տեղավորված։ Առանձնապես ճոխ են քանդակված արևմտյան մուտքի շրջանակները, իսկ ճակատաքարի վրայի աստվածածինը՝ գծանկար է։

Ամբողջ շենքը թողնում է ճարտարապետորեն ամբողջական գործի, նուրբ ու ճաշակով արվեստի և բարձր տեխնիկական կատարման հաճելի տպավորություն։ Ինչպես նախապես մեջ բերած արձանագրությունից պարզվում է, որ այն շինել է տվել Հովհաննես Օրբելյան արքեպիսկոպոսը 1321 թվականին[1]։ 1840 թվականի երկրաշարժի ժամանակ փլվել է գմբեթի վերին մասը, մնացածը պահպանվել է մինչև այժմ։

Մոմիկ վարդպետի կառուցած երկրորդ հուշարձանը գտնվում է Նորավանքի բակում, հուշարձանների գլխավոր խմբի հարավարևմուտքում։ Սա շատ յուրօրինակ և հազվագյուտ արվեստի գործ է, երկհարկանի է և պսակված է եղել սյունազարդ գմբեթով։

---

1 Շինարարական այս արձանագրության մի շարք հին հրատարակիչներ թիվը սխալմամբ ՉՀԱ=1232 են նշանակել. տե՛ս Ջալալեանց, Բ, 213, Ալիշան, Սիսական, 181—182 և ուրիշներ։

Առաջին հարկը կիսագետնափոր է, արտաքուստ քառանկյունի և ներքուստ խաչաձև. սա ևս ծառայել է որպես դամբարանատեղի (պանթեոն), մուտքը արևմտյան կողմից է, որն աստիճաններով տանում է ներքև։ Այս մուտքի երկու կողմերից դեպի երկրորդ հարկն են տանում 13-ական քարե գեղեցկորեն ձևավորված աստիճաններ, որոնք կառուցվելու ժամանակ ագուցված են պատի մեջ և կազմում են գեղեցիկ ամբողջություն արևմտյան պատի այլ զարդաքանդակների հետ։ Այս հարկը եկեղեցի է, ունի սեղան։ Սյունազարդ գմբեթը փլվել է 1840 թ. երկրաշարժի ժամանակ և ինչպես սյուները, նույնպես և նրա այլ մասերը թափված են շրջապատում։

Հուշարձանի բոլոր մասերն ու պատերը զարդարված են քարգործ արվեստի ամենանուրբ զարդաքանդակներով, կենդանիների, թռչունների և մարդկանց բարձրաքանդակներով, առանձնապես ճոխ են զարդարված ներքևի և վերևի հարկերի մուտքերի ճակատներն ու շրջանակները։

Ներքին հարկի մուտքի ճակատաքարի վրա քանդակված է կենտրոնում՝ Աստվածածինը, բազմած գահույքի վրա, Հիսուսը գրկին, կողքերին Գաբրիել և Միքայել հրեշտակապետները՝ կիսարաց թևերով։

Վերին հարկի մուտքի ճակատաքարի կենտրոնում քանդակված է Հիսուսը՝ ձախ ձեռքով կրծքին բռնած ավետարան, կողքերին՝ Պողոս և Պետրոս։ Առանձնահատուկ են գմբեթի սյուների բարձրաքանդակները, որոնցից մեկի վրա, որն ընկած է ներսում, մի թագազարդ տղամարդ է երկար շորերով և գոտեկապ, հավանաբար եկեղեցին շինել տվող Բուրթելը. մյուս սյուների բեկորների վրա ևս նման բարձրաքանդակների մնացորդներ կան։

Այս Բուրթելաշեն եկեղեցին ընդհանրապես զարդաքանդակների և պատկերաքանդակների մի ամբողջ թանգարան է և կարոտ արվեստագետի գրչին։ Հուշարձանի շինարարական արձանագրությունը գրված է վերին հարկի մուտքի ճակատին՝ հատուկ շրջանակի մեջ և ուռուցիկ տառերով։

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՊԱՐՈՆ ԲՈՒՐԹԵԼ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՎԱԽԱԽ ԵՒ ՈՐԴԻՔ ԻՄ| ԲԵՇՔԷՆ ԵՒ ԻՒԱՆԷ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ| ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ[1].

1 Ջալալեանց, Բ, 182։ Ալիշան, Սիսական, 202։

Շինության թիվը գրված է ներքին հարկի մուտքի վերին շրջանակի վրա նույնպես ուռուցիկ տառերով և ծաղկագիր.

Թվ. : ՉՁԸ : =(1339 թ.)

Այս հուշարձանի վրա Մոմիկի ստորագրությունը թեև չի մնացել, բայց առաջին իսկ դիտողին, որը կնայի Մոմիկի ստորագրությունը կրող Արենիի եկեղեցին, մանավանդ Մոմիկի կերտած Նորավանքի մեր նկարագրած խաչքարերը և այս եկեղեցու բազմաթիվ զարդաքանդակներն ու մարդկանց պատկերները, հաստատորեն կհամոզվի, որ այս բոլորը մեկ արվեստագետի ձեռքի գործեր են։ Այդ կողմից հատկապես բնորոշ են Մոմիկի 1308 թ. կերտած խաչքարի շրջանակների ութ թևանի աստղերի, նրա ճակատի սրբապատկերների ու Բուրթելաշեն այս եկեղեցու մուտքերի շրջանակների նույն ոճի ութ թևանի աստղերը և ապա նույն մուտքերի ճակատաքարեր սրբապատկերների տեխնիկան և հագուստների մանրամասնությունները։

Նորավանքի հուշարձանները ոչ միայն Օրբելյան տոհմի, այլև XIII—XIV դարերի հայկական արվեստի պանթեոն են։ Այդ թանգարանի ստեղծագործական աշխատանքների մեծագույն մասի հեղինակները Սիրանես և Մոմիկ վարդպետներն են, որոնց տաղանդավոր ստեղծագործություններն են ոչ միայն մեր նկարագրածները, որոնց վրա նրանց անվան հիշատակությունները կան, այլև բազմաթիվ ուրիշներ, որոնց մեջ չեն հիշատակվում նրանց ստորագրությունները։

* * *

Բազմարվեստ ու բազմատաղանդ մեր այս խոշոր վարպետ Մոմիկին հին ուսումնասիրողները հոգևորական են համարել, վարդապետ կամ սարկավագ։

Առաջին, վարդապետ կոչումին որպես հիմք ծառայել է Մոմիկի քարային աշխատանքների տակ ստորագրած վարդպետ կոչումի սխալ վերծանումը վարդապետ ձևով[1], որի առթիվ բազմիցս խոսել ենք և այժմ ավելորդ ենք

1 Համեմատիր մեջբերված արձանագրությունների տակ նշված հրատարակությունները։

համարում կրկնել։ Իսկ Սարկավագ տիտղոսը ստեղծագործել է Գ. Հովսեփյանը, որից առնելով կրկնել են և ուրիշները[1]։ Գ. Հովսեփյանը Մոմիկի մասին խոսում է նրա 1292 թ. արտագրած ավետարանի նկարագրության առնչությամբ, սակայն ձեռագրի բոլոր կարճ և երկար հիշատակարանների մեջ, ինչպես տեսանք նախորոք, Մոմիկը իրեն կոչում է՝ ծրող, գծող, գրիչ և վերջապես՝ քարտուղար. սարկավագ կոչում նա չի գործածել նաև իր մյուս ձեռագրական և մանրանկարչական աշխատանքների մեջ։ Ըստ երևույթին ուսումնասիրողների համար բացի վարդպետ=վարդապետ սխալ վերծանումից Մոմիկին հոգևորական մկրտելու մի այլ հիմքն էլ այն է, որ այդ նույն, 1292 թ. գրված ավետարանի պատվիրատու կրոնավոր Հովհաննեսն իր հիշատակարանի մեջ Մոմիկի մասին գործ է ածել հետևյալ դարձվածքը. «զումն եղբայր սիրելի Մոմիկ անուն...», Ուսումնասիրողներն ենթադրել են, որ հոգևորականը միայն հոգևորականին կարժանացներ «եղբայր» կոչելու պատվին, բայց մոռանում են, որ հոգևորական պատվիրատուն Մոմիկին լոկ «զումն եղբայր» կոչելով և նրա հոգևոր աստիճանն աչքաթող անելով՝ ոչ թե պատիվ, այլ վիրավորանք հասցրած կլիներ միայն։ Այնպես որ այս հիմքը ևս շատ խախուտ է։

1955 թ. կատարած մեր պրպտումների ժամանակ բացի վերևում հիշատակած նոր աղբյուրներից, Մոմիկի մասին, մեզ հաջողվեց նաև այս խնդիրը պարզաբանող նյութեր գտնել։

Նորավանքից 14—15 կիլոմետր հեռու, դեպի հյուսիս Աղավնաձոր (Այնաղուր) և Ռինդ գյուղերի հյուսիսային կողմում գտնվում են երկու գյուղատեղերի ավերակներ, երկուսի մեջ էլ եկեղեցիների ավերակներ ու գերեզմանատներ կան։ Դրանցից մեկը այժմ կոչվում է ներքին և մյուսը՝ վերին Ուլգյուր. վերջինի մեջ գտնվող ավերակ եկեղեցու միջի և կողքերին կանգնած խաչքարերն ունեն արձանագրություններ XIII դարի երկրորդ կեսերի թվականներով (ոչ շինարարական)։ Կիսավեր եկեղեցուց մի հարյուր քայլ հեռու, փոքրիկ բլրակի վրա գտնվում է գերեզմանատունը, որտեղ կան մի քանի արձանագրված խաչքարեր և տապանաքարեր, նույն ժամանակների թվականներով։ Այստեղ պատվանդանի հետ միասին շուռ եկած մի մեծ խաչքար է ընկած, ըստ երևույթին վաղուց ի վեր. որովհետև երեսին եղած արձանագրությունը ոտքի տակ տրորվել և հողմնահարվել է սաստիկ։ Արձանագրությունը գտնվում է խաչքարի երկու շրջանակների վրա և ճակատին, հյուսիսային շրջանակին՝ սկիզբն է, որը երկու տող է, սկսվում է ներքևից, հասնելով ճակատին, շարունակվում է մի տողով, ապա հարավային շրջանակին, արդեն հորիզոնական տողերով (19 տող). արձանագրության տառերը խառն ոճի են և անհամաչափ։ Մոմիկի կենսագրության համար անշուշտ արժեքավոր այս արձանագրությունը խիստ վնասված է. մենք կարողացանք սկզբի, համեմատաբար լավ պահպանված մասում կարդալ.

ԵՍ ԱՍԿԱՆԴԱՐ ՄՈՄԿԱ ՈՐԴԻ ՋԽԱՋ...

այնուհետև կցկտուր բառերից հասկացվում է, որ նվիրել է իր հայրենիքը, որի մի մասը թողել է իր որդիներին և ի վերջո՝

ՅԻՇԵԱ ՔՍ. ԱԾ. ՋԱՍԿԱՆԴԱՐ...

Թվական չունի, կամ ջնջվել է իսպառ։ Արժեքավոր այս արձանագրության մնացորդները թանկագին տեղեկություններ են Մոմիկի կենսագրության համար, որով աներկբայորեն հաստատում են նրա աշխարհական լինելը. Մոմիկը զավակ և թոռներ է ունեցել, մյուս կողմից՝ այս գյուղը, որտեղ գտնվում է արձանագրությունը, պետք է լինի Մոմիկի ծննդավայրը, որտեղ ապրող նրա զավակը իր ունեցած հողի-հայրենիքի մասին կտակի իմաստով արձանագրություն է փորագրել։

Մոմիկի մասին մեր հայտնաբերած նոր նյութերից վերջինը մի փոքր խաչքար է, որը կանգնեցված է եղել նրա գերեզմանի վրա։ Այն շինված է տեղական սպիտակավուն քարից. երեք կողմից ունի նեղ շրջանակներ, որոնց վրա հյուսված զարդեր են, շաղափով արված նեղ փոսիկներով. կենտրոնում հարթաքանդակ խաչ է, բավական արխայիկ ձևավորումով, որի ուղղահայաց թևերի վերին և ներքին ծայրերի վրա երկու կողմերից սկիզբ են առնում և դեպի կենտրոնը ձգվում ոճավորված ծաղկի

[1] «Շողակաթ», էջ 207։ Աճառյան, Անձ. բառ., Գ, 418։

կամ տերևի փնջեր։ Խաչը ներքևի շրջանակին է միանում պտուտակաձև ճողիկներով. ունի պատվանդանի մեջ ագուցվելիք պոչուկ։ Խաչքարի բարձրությունն է 65 սմ (առանց պոչուկի) և լայնությունը վերևում՝ 48 սմ, ներքևում՝ 39 սմ։ Նախնական տեղն անհայտ է, այժմ նա ընկած է Նորավանքում, բակից դուրս, արևելյան պարսպի տակ, արտաքուստ, երեսն ի վայր. շուռ տալուց հետո պարզվեց նրա էությունը։ Տեղից խախտվելուց հետո այն օգտագործվել է որպես շինանյութ, ինչպես քանդակների, այնպես էլ արձանագրության տառերը մեծ մասամբ լցված էին կրաշաղախով, որը մաքրելուց հետո լրիվին վերծանվեց երկու տող հետևյալ կարևոր և լավ պահպանված արձանագրությունը[1]։

ՅԻՇԵԱ ՔՍ. ԱԾ ԶՄՈՄԿԱ ՀՈԳԻՆ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ.

Բացի այս երկու տողից, խաչի հորիզոնական թևերի տակ, երկու կողմից գրված է եղել նաև թվականը, ձախ կողմում շատ պարզ մնում են Թվ տառերը, իսկ աջ կողմում երեք տառի հետքեր, որոնք շատ մաշված, քայքայված են, համեմատաբար լավ է երևում առաջինը, որ է Չ, երկրորդից մնացած գծերը Ջ-ի նմանություն ունեն, իսկ վերջինի՝ միավորի վերին մասը լավ է պահպանվել, որը Բ-ի կամ Ը-ի մաս է, մենք այն վերականգնում ենք՝ Ը.

Այսպիսով, Մոմիկի մահվան թվականը որոշվում է ՉՋԸ[2]=1339 թ.։ Դա հենց այն տարին է, երբ ավարտվել է Բուրթելաշեն եկեղեցու կառուցումը, որը Մոմիկի վերջին ձեռակերտն է[3]։

Այս արձանագրությունը Մոմիկի մահվան թվականի ճշտումից բացի կարևոր է նաև նրանով, որ Մոմիկի համար ոչ մի կոչում չեն գործածել այն երախտապարտ հարազատները կամ հարգողները, որոնք նրա հիշատակին խաչքար են կանգնեցրել և արձանագրություն փորագրել։ Եթե նա իր երիտասարդ ժամանակ, երբ ձեռագրեր էր արտագրում և գրեր ծաղկում՝ սարկավագ լիներ, անշուշտ հետագայում հոգևոր ավելի բարձր պաշտոնի կհասներ, առնվազն վարդապետի, ու նրա հիշատակը հարգող և նրա գերեզմանին խաչքար կանգնեցնող անձնավորությունները այդ բանը չէին մոռանա նշել արձանագրության մեջ։

Թեև Մոմիկի գերեզմանի վրա կանգնեցրած խաչքարի նախնական ստույգ տեղն անհայտ է, բայց կասկածից դուրս է, որ Մոմիկը թաղված է եղել Նորավանքի բակում, կամ պարսպից դուրս, դեպի հյուսիս, ժայռերի տակ գտնվող վանական գերեզմանատան մեջ։ Վանքի և ընդհանրապես Օրբելյան հոգևոր և աշխարհական իշխանների համար կատարած նրա բազմազան մեծարվեստ աշխատանքները բարոյապես գնահատելու մի ձև էր այդ, ժամանակի հասկացողությամբ. Մոմիկը, ինչպես Վեցիկ վարդապետը և ուրիշներ, արժանացել են այդ «պատվին» (ալբոմ, նկ. 30, 31, 32, 33, 34, 35)։

28. ԳԱԼՁԱԳ ՎԱՐԴՊԵՏ

Միջնադարյան հայ ճարտարապետական միտքը իր ստեղծագործական պրպտումների մեջ՝ յուրաքանչյուր դարաշրջանի գեղարվեստական ճաշակին ու պահանջներին հատուկ՝ այնքան բազմազան ու բազմաթիվ հուշարձաններ է ստեղծագործել, որ, իրավամբ, արվեստի շատ պատմաբաններ զարմանքով նկատում են, որ կարծես նորանոր կառուցողական ձևերի և ոճերի ու քանդակազարդման, գեղարվեստական հարդարումների մի ազնիվ մրցակցություն է գոյություն ունեցել այդ տաղանդավոր վարպետների միջև։ Սեփական արվեստի նախորդ շրջանների բոլոր լավագույնը, շրջապատող ու հարևան երկրներում ծնունդ առած բոլոր արժեքավորն ու առաջադեմը դիտվել, ուսումնասիրվել և ստեղծագործորեն վերամշակվել են միջնադարի հայ տաղանդավոր վարպետների մտքի ստեղծագործ հնոցում և վերարտադրվել, որպես արվեստի նոր, ավելի կատարյալ ու բարձր կոթողներ, որոնք իրենց մեջ ամփո-

---

1 Ստորին մասով վնասված է երկրորդ տողի սկզբի Ա տառը, որի մասին կասկած լինել չի կարող։

2 Լուսանկարի վրա թվականի տառերը բոլորովին չեն երևում, որովհետև ստվերի մեջ են։

3 Այս տեսակետից հետաքրքրական է գրող Հ. Մկրտչյանի պատմվածքը Մոմիկի մասին, գրված է իբր ժողովրդական ավանդության հիման վրա, ուր Մոմիկի մահվան ժամանակը կապված է եկեղեցու ավարտման հետ։ Տե՛ս Հ. Մկրտչյան, Նովելներ և ակնարկներ, Երևան, 1947, էջ 81—84։

փել են որպես հորդահոս գետ, բազմաթիվ վտակների ջրերը, մնալով միշտ ինքնատիպ և գեղարվեստորեն կատարյալ, իրենց վրա կրելով կերտող վարպետի տաղանդի բարձր կնիքը։

Քարը, շինարարական այդ ազնիվ նյութը, որի այնքան բազմաթիվ ու բազմազան տեսակները պարգևել է Հայաստանի բնությունը հայ վարպետներին, դարձավ միջնադարի վարպետների ձեռքին երաժշտական մի գործիք, որի վրա վիրտուոզի նման նվագում էր հայ վարպետը անսահմանորեն շատ ու բազմապիսի եղանակներ. ի վերջո չբավականանալով քարի հատվածներին շունչ տալով, այդ վարպետի միտքը թափանցեց և քարի սիրտը, ժայռերի խորքը, կերտեց լեռների խորքում հրաշալի շենքեր, միակտուր քարից, հար և նման այն շենքերին, որոնք այդ քարի մանր կտորներից նա կերտում էր երկրի երեսին։ Հայրենի լեռների խորքը ևս դարձավ ստեղծագործական մտքի գործունեության ասպարեզ, հայ վարպետները սքանչելի կոթողներ կերտեցին ժայռերի ընդերքում։

Ժայռափոր արվեստը շատ հին կուլտուրա է. դա նախնադարյան մարդու բնակարաններից մեկի, բնական այրերի և նրանց թեթև հարմարեցման ժամանակից է ծնունդ առնում և մեծ զարգացման հասնում Ասիայի և Աֆրիկայի հնագույն կուլտուրական ժողովուրդների մոտ. Եգիպտոսում, Հնդկաստանում, Պարսկաստանում, Փոքր Ասիայի շատ վայրերում, մեր հարևան Վրաստանում հայտնի են այդ արվեստի բազմաթիվ նմուշներ։ Հայաստանի հողի վրա էլ այդ կուլտուրան նույնքան հին ծագում ունի, բացի հնագույն կիսամշակ բնական այրերից հայտնի են ուրարտական շրջանի մեծ և ճարտարապետորեն մշակված ժայռափոր շենքեր, Հին Բայազետում, մանավանդ Վանում, որի հետ պետք է կապվեր մեր հերոսական էպոսը, և այլուր։

Հայկական պետականության վաղ շրջաններից հայտնի են Անի բերդի (Կամախ), Արագածոտնի և ուրիշ վայրերի ժայռափոր դամբարանները։

Միջին դարերում ևս այդ արվեստը շարունակվում է ծաղկել. Վրաստանում հայտնի է մի ամբողջ ժայռափոր քաղաք՝ Վարձիան. Հայաստանում, Անի մայրաքաղաքում՝ ամբողջ թաղամասեր։ Այդ մեծ կոմպլեքսներից բացի, պատմական Հայաստանի բազմաթիվ վայրերում կան ժայռափոր եկեղեցիներ, մատուռներ և բնակարաններ. հիշենք մի քանիսը.

1. Բասենի Արոս գյուղից հարավ-արևմուտք կա մի ժայռափոր եկեղեցի.

2. Նաղիկ լճի մոտ Քեոս գյուղի մեջ, նույնպես ժայռափոր մի եկեղեցի կա.

3. Սեբաստիայից արևելք երեք ժամ հեռավորությամբ երկու իրար կից ժայռափոր եկեղեցիներ կան, որոնցից մեկի պատին գրված է հայերեն արձանագրություն։

Խորհրդային Հայաստանի տերիտորիայի վրա ևս, Գեղարդից բացի, հայտնի են մի քանի միջնադարյան ժայռափոր եկեղեցիներ, դրանցից լավ կերտվածներն են.

1. Վայոց ձորի Մարտիրոս գյուղի մոտ երկու իրար կից եկեղեցիները.

2. Վեդիի շրջանում գետի վերին հոսանքում լավ կերտված մի մատուռ.

3. Քեղվա բերդի հյուսիսային անկյունում, դարպասի մոտ միմափոր մի եկեղեցի կա ամբողջական վիճակում և ուրիշներ։

Միջնադարյան ժայռափոր արվեստի գլուխ-գործոցները Հայաստանում Գեղարդի հոյակապ կոթողներն են, ճարտարապետության արվեստի տեսակետից կատարյալ ստեղծագործությունները։

Գեղարդի ժայռափոր հուշարձանների նկարագրությունը չենք տալիս, որովհետև հազիվ թե քիչ թե շատ հետաքրքրվող մարդ գտնվի այժմ Հայաստանում, որ դրանք սեփական աչքերով տեսած չլինի. իսկ մասնագիտական գրականության մեջ նրանք վաղուց իրենց արժանի տեղը գրավել են։

Գեղարդի հին անունը արդեն ցույց է տալիս, որ այնտեղ ժայռափորները շատ հին ծագում ունեն. նրա հին անունն Այրիվանք է. Գեղարդ անունը միայն միջնադարից է ծագում, կապված «Գեղարդ» կոչվող մասունքի այնտեղ բերվելու հետ։

Գեղարդի մի քանի տասնյակների հասնող մեծ ու փոքր ժայռափոր հուշարձաններից մի քանիսն առանձնակարգ տեղ են գրավում. դրանք են՝ մեծ գավիթը և եկեղեցու հյուսիսային մասում կառուցված երկու ժայռափոր եկեղեցիները, դրանց վրա գտնվող երկրորդ հարկի գավիթ-տապանատունն ու բազմաթիվ մանր շենքեր։ Իսկ մի մեծ, սրահանման շենք, որի բնույթը պարզ չէ, գտնը-

վում է շակից դուրս, ժայռերի տակ, որն ամբողջովին փլվել է և թեթևակի բացվել պեղումների ընթացքում[1]:

Ներքևի հարկի երկու ժայռափոր շենքերը շինված են Պռոշ իշխանի ժամանակ, համաձայն արձանագրությունների, իսկ վերևի գավիթ-տապանատունը՝ Պռոշի որդի Պապաքի և նրա ամուսին Ռուզուքանի ժամանակ 1288 թվականին:

Պռոշ իշխանը Զաքարյան Ավագից՝ գնման միջոցով տիրել է Գեղարդավանքին XIII դարի կեսերին. նրա առաջին գործն է եղել կարգի բերել տևական պատերազմների հետևանքով քայքայված վանական տնտեսությունը և շինել տալ իր տոհմի համար տապանատուն:

Տապանատան համար ընտրվում են գավթի հյուսիսում գտնվող ժայռերը. այդտեղ ըստ երևույթին հնագույն ժամանակներից գոյություն ուներ մի բնական այր, որի միջից բխում էր փոքրիկ աղբյուր՝ հանքային բաղադրությամբ, որն իր բուժիչ հատկությունների շնորհիվ սրբազան ջրի համբավ էր ստացել:

Հենց այդ բնական քարայրն է, առաջինը վերածվեց խաչաձևորվող կամարներով ձևավորված գավիթ-տապանատան: Այդ շենքը լուսավորվում է միակ լուսանցքով, որը գտնվում է առաստաղի կենտրոնում, կամարների խաչաձևորման մեջտեղում: Թաղակապ գմբեթի քառակուսի հիմքի հյուսիսային և արևելյան շրջանակների քիվին, նռնազարդ շարքից վեր, գեղեցիկ տառերով գրված է.

ԶՎԱՐԴՊԵՏՍ ԳԱԼՁԱԳ ՅԻՇԵՑԷՔ.

Այս արձանագրությունն առաջին անգամ հրատարակված է Սիսուեի ժողովածուում, որի խմբագիր Քյուչուկ Իոաննեսովը այն տեղադրել է գրքի վերջի հավելվածում, էստամպաժներից վերծանված արձանագրությունների մեջ, բայց անուամենայնիվ հետևյալ պակասավոր ձևով.

ԶՎԱՐԻԴՊԷՍ ԳԱԼ... ՅԻՇԵՑԷՔ[1].

Արձանագրությունը հրատարակել է նաև Գ. Հովսեփյանը, սկզբում նույնպես պակասավոր.

ԶՎԱՐԴՊԷՍ ԳԱ... Գ. ՅԻՇԵՑԷՔ...

Բայց հետո արդեն նաև ամբողջական և այն կարծիքն է հայտնել, որ Գալձագի անվան մեջ պետք է տեսնել շենքի ճարտարապետին[2]:

Գեղարդի վանքի արձանագրությունների լրիվ ժողովածուի մեջ արձանագրությունը ամբողջական է. ամեն կասկած վերացնելու համար 1954 թ. տեղում կրկին անգամ ստուգեցինք. պարզվեց, որ արձանագրությունը շատ լավ է պահպանված և ոչ մեկ տառ ջարդված չէ. վերծանողներին խանգարել է, հավանաբար, արձանագրության բարձր և անմատչելի դիրքը և երդիկից թափանցող լույսի բեկբեկումները, գուցե Զ տառի ոչ շատ սովորական ձևի գրությունը:

Ամեն կասկածից վեր է, որ ժայռափոր արվեստի գլուխ-գործոց Գեղարդի հուշակավոր վիմափորերի գլխավոր ճարտարապետը Գալձագ վարդապետն է: Պռոշի շինել տված ներքևի հարկի երկու ժայռափոր եկեղեցի-տապանատները պետք է շինված լինեն 40-ական թվականներից հետո, երբ Գեղարդի վանքն անցավ Պռոշի ձեռքը և նրա կենդանության ժամանակ (Պռոշը մեռել է 1284 թ.), ինչպես ցույց են տալիս նրա երկու արձանագրությունները, մեկը այս Գալձագաշեն կոթողի հարավային պատին (առանց թվականի) և մյուսը՝ ավելի ընդարձակը՝ Գեղարդավանքի գլխավոր տաճարի բեմի հյուսիսային գոգավոր պատին՝ գրված 1283 թվին, իսկ երկրորդ հարկի տապանատուն—գավիթը Պռոշի որդի Պապաքի օրոք՝ 1288 թվին, ուրեմն երեք ամենակարևոր ժայռափոր կառուցվածքները կերտվել են 40 տարվա ընթացքում: Պետք է ենթադրել, որ այդ երեքն էլ Գալձագ վարդապետի ձեռագործն են, քանի որ այդպիսի բարդ ու բացառիկ արվեստի մեջ մի անգամ իր շնորհքը ցույց տված ճարտարապետը չէր կարող հեշտությամբ փոխա-

---

1 Դրանցից բացի, շրջապատի ձորի մեջ կան բազմաթիվ ժայռափոր բնակարաններ, որոնցից կարևորն է ժամանակագիր ու գրական գործիչ Մխիթար Այրիվանեցու բնակարանն ու մատուռը, որը գտնվում է վանքից արևմուտք մի բարձր տեղում (այնտեղ կարելի է գնալ շրջանցելով վանքը ետևից):

1 MAK, 238.

2 Գ. Յովսեփեան, Խաղբակեանք, Ա, էջ 114:

բինվել մեկ ուրիշով։ Հարկավ հենց այդ շրջանում ուրիշ ժայռափոր շենքեր էլ են կառուցվել Գեղարդում, բացի հիշյալ շենքերից կա մեկ ուրիշը ևս՝ Պռոշի անունը հիշատակող արձանագրությամբ, որը գտնվում է պարսպից դուրս, դեպի հարավ-արևմուտք՝ ժայռերի տակ։ Այդ շենքը ամբողջովին փլված էր և մասնակիորեն բացվեց 1932 թ. պեղումների ընթացքում. դա մի մեծ շենք է, հավանաբար հյուրատուն կամ սեղանատուն։

Համեստ վարդպետ Գալձագը միայն մեկ անգամ և մի տեղում է իր անվան հիշատակությունը թողել, այդ պատճառով էլ հնարավոր չէ նրա բոլոր կառուցումները հայտնաբերել։ Սակայն այն երեք գլխավոր ժայռափորներն էլ, որոնք անկասկած նրա ձեռագործն են, ցույց են տալիս Գալձագ վարդպետի տաղանդի մեծությունը։ Այդ երեք ժայռափորների մեջ ամփոփված են XIII դարի կառուցումների ճարտարապետական բոլոր ձևերն ու ոճերը. և՛ գմբեթավոր եկեղեցի, և՛ քառասյուն գավիթ, և՛ խաչավորվող կամարներ, և՛ զարդաքանդակների բոլոր հիմնական ձևերը։

Գալձագ վարդպետը կատարելագործեց Հայաստանի ժայռափոր արվեստը, հասցրեց այն աստիճանի, որ այն արդեն սովորական ժայռափոր հասարակ այր ու բնակարանից դարձավ կատարյալ ճարտարապետություն՝ իր լայնագույն հասկացողությամբ։ Նա ստեղծեց այդ արվեստի ճարտարապետության դպրոց, որը նույն հենց իր կենդանության օրոք հետևողներ ունեցավ։ Այդպիսի մեկի մասին, որը կառուցել է Մարտիրոս գյուղի ժայռափոր եկեղեցիները, կխոսենք իր տեղում (ալբոմ, նկ. 36, 37)։

29. ԳՐԻԳՈՐԻԿ ՎԱՐԴՊԵՏ

Վայոց ձորի Մարտիրոս գյուղը միջնադարյան հուշարձաններով շատ հարուստ է։ Սակայն, այն բոլորից բացի, որոնց մասին խոսվել է այս աշխատության մեջ, այնտեղ կա ևս մի հուշարձան, որ ճարտարապետական տեսակետից ամենից արժեքավորն է եղածների մեջ և ընդհանրապես կարևոր նշանակություն ունի միջնադարյան արվեստի մի բնագավառի՝ ժայռափոր ճարտարապետության համար։

Գեղարդի հանրահռչակ վիմափորներից հետո Մարտիրոսի այս կոթողներն ամենակատարյալներն են Սովետական Հայաստանի տերիտորիայի վրա։ Այդ հուշարձանները գտնվում են Մարտիրոս գյուղից մեկ ու կես, երկու կիլոմետր դեպի արևելահարավ, Նշար լեռան ստորոտում։ Հուշարձանը բաղկացած է երկու մասից՝ գավթից և եկեղեցուց։ Եկեղեցին ունի 6,57 մետր երկարություն (արևմուտքից մինչև արևելյան պատը, աբսիդն էլ հետը) և 5 մետր լայնություն. երեք կողմից պատերն ուղիղ են, միայն բեմը կիսաշրջան է ներքևի մասում, իսկ վերևում կամարաձև, որոնց վրա բարձրանում է ցածր գմբեթը, կենտրոնում ունենալով երդիկը։ Բեմի երկու կողերին կան պատուհաններ։ Գավթի երկարությունն է 6,98 մետր և լայնքը՝ 6,69 մետր սա ևս ունի ցածրիկ գմբեթ և նրա կենտրոնում երդիկ. Թեև այս վիմափոր հուշարձանները Գեղարդի կոթողների կատարելությունը չունեն, բայց ճարտարապետական որոշ ձևերով ու մանրամասնություններով, առնչվում են Գեղարդի հուշարձաններին։ Ինչպես «Գալձագ վարդպետ» բաժնում ասել էինք, Գեղարդի հուշարձանները որպես կատարելատիպ XIII դարի վիմափոր արվեստի՝ ոչ միայն օրինակ են հանդիսացել ուրիշներին, այլև Գեղարդում աշխատած վարպետները, որպես այդ մասնագիտության մեջ հմտացած մարդիկ կարող էին օգտագործվել և այլ տեղերում շինվող վիմափոր շինարարության մեջ։ Հավանաբար Մարտիրոս գյուղի վիմափոր հուշարձանների վարպետներին, մեր կարծիքով, պետք է համարել Գալձագի դպրոցի սաներ։

Համաձայն եկեղեցու բեմի հարավային պատի պատուհանից վեր գրված 10 տողանի արձանագրության բովանդակության՝ հուշարձանը կառուցել է տվել Մաթեոս վարդապետը, ի հիշատակ իրեն, Պետրոսի և նրա ծնողների. նաև իր պատրոնների՝ Պռոշի և նրա զավակների Պապաքի ու Հասանի հիշատակին։ Այդ Մաթեոս վարդապետի անունը հիշատակված է նաև շրջապատում գտնվող խաչքարերի վրա և ձեռագրերի հիշատակարաններում։

Շինարարական այս արձանագրությունը թվագրված է 1286[1]։

1 Գ. Յովսեփեան, Խաղբակեանք, Գ. 20—21։ Ջալալեանց, Բ, 201։ Ալիշան, Սիսական, 176։ «Ազգ. Հանդ», XII, 289։

Նույն եկեղեցու ներսում, նախորդ արձանագրության հակադիր, բեմի հյուսիսային կողի պատուհանի գլխին էլ գտնվում է մի ավելի կարճ արձանագրություն, որը մեր նյութի համար շատ արժեքավոր նշանակություն ունի։ Այս արձանագրությունը բաղկացած է 6 կարճ տողերից, ամբողջ է մնացել միայն առաջին տողը, մնացածների սկզբի մասերը փշրված-թափված են, բայց նրա հիմնական մասը վերականգնվում է.

1. ԳՐԳՈՐԻԿ $\overline{\text{ՎԹ}}$
2. [ՅԱՆՈ]ՒՆ ԱՅ ԵՍ
3. [ԳՐԳՈՐ]ԻԿՍ ՄԻ
4. [ԱԲԱՆԵՅԱ] ՍԲ ԱԾ
5. [ԱԾՆԻՄ][1]..........

. . . .

Արձանագրության առաջին տողի տառերն ավելի մեծ են՝ հաջորդների նկատմամբ ավելի շեշտակի դարձնելու համար։

Այս հակիրճ արձանագրությունը մենք համարում ենք ճարտարապետներին հատուկ հիշատակագրություն. բայց և սա առաջին դեպքն է, երբ վարդպետ բառը սղված է գրված. սակայն այդ սղումն էլ ստացել է իր առանձնահատուկ ձևը. վիմական արձանագրությունների մեջ վարդապետ բառի սղումների սովորական ձևերն են ՎԴՊ, կամ ամենակարճ ձևով՝ ՎԴ։ Այս դեպքում վարդպետ Գրգորիկը, տեղի պատճառով, հարկադրված է եղել իր կոչումը նշանակող բառը նույնպես սղել, բայց և գտել է սղման այնպիսի ձև, որն ըստ ամենայնի չշփոթվի վարդապետի հետ։

Այսպիսով, Գեղարդավանքի նշանավոր վիմափոր ճարտարապետ Գալձագի կողքին ունենում ենք Հայաստանի երկրորդ վիմափոր հուշարձանի ճարտարապետի անունը ևս, դա վարդպետ Գրգորիկն է։

Նկատի ունենալով Գալձագի և Գրգորիկի գործունեության ժամանակների մոտիկությունը, Գեղարդավանքի և Մարտիրոս գյուղերի նույն իշխանական տան կալվածքներ լինելու հանգամանքը և, մանավանդ, վիմափոր արվեստի սահմանափակ ու առանձնահատուկ բնույթը՝ Գրգորիկին համարում ենք Գեղարդավանքում վիմափորության մեջ մարզված վարդպետ և Գալձագի դպրոցի աշակերտ։

1 Գ. Յովսեփեան, Խաղբակեանք, էջ 21 (խիստ պակասավոր)։

* * *

Գրգորիկ վարդպետի ստեղծարար գործունեության արդյունք՝ մի հուշարձան ևս գոյություն ունի։

Սիսիանի շրջանի Բնունիս գյուղի կողքին. հյուսիսից, գտնվում է մի հին գերեզմանատուն, որը մինչև օրս էլ օգտագործվում է նույն նպատակով։ Այդ գերեզմանատան մեջ մինչև վերջին տասնամյակները կանգնած էր անվթար մի գեղեցիկ կոթող-հուշարձան (Զանգեզուրի վերջին երկրաշարժի ժամանակ մասամբ ավերվեց)։

Կոթողի արևմտյան երեսին ձևավորված են երկու սրանկյուն խորաններ, յուրաքանչյուրի մեջ ագուցված մեկական խաչքար. խաչքարերի կենտրոնում մեծ և շուրջը մանր խաչեր են քանդակված, իսկ նրանց շրջապատում ուռուցիկ տարածություններ, որոնցից մեջտեղինի վրա գառ է ձևավորված։

Խաչքարի շրջանակները ծածկված են երկրաչափական երկդարան և եռադարան զարդերով. ամբողջ խաչքարը որմնափակ է, ճակատին գրված է մի մեծ կիսաշրջան ճակատաքար, ամբողջապես ծածկված նուրբ բանդակներով, որի վրա ձևավորված է եղել ճակտոնը, նրա արևելյան կողմում քանդակված են երկու վագրերի բարձրաքանդակներ, որոնց տակ՝ նույնպես բարձրաքանդակ կաքավներ[1]։ Խաչքարի վրա, խաչերից ազատ տարածությունների մեջ և նրա ստորին մասում, նույնպես և որմերի վրա գրված կան մի քանի արձանագրություններ, որոնցից կարևորն է խաչերի ներքևում գրվածը, որը շարունակվում է նաև խաչքարի հարավային որմի վրա։ Դա մի ընդարձակ և սրտառուչ արձանագրություն է, ուր գեղարվեստորեն պատմված է մանկիկ Օրբելի կյանքի և մահվան ու նրա ծնողների՝ Մարտիրոսի և Վանենիի անմխիթար վշտի մասին։

Հուշարձանի մեծ արձանագրությունը հրատարակել են երկու բանասերներ, Ալիշանն ու Ե. Լալայանը։

1 Ինչպես ճակտոնը, այնպես էլ պատերի մի մասը վերջին երկրաշարժի ժամանակ քանդվել են, թափված քարերի մի մասը Հնութ. պահպ. կոմիտեն իր ժամանակին տեղափոխել էր Սիսիանի եկեղեցին, ուր և այժմ գտնվում են. դրանց մեջ կան երկու վագրերի բարձրաքանդակներ, մեծ արձանագրության մի մասը՝ գրված որմի քարի վրա և ուրիշներ։

Ալիշանի բնագրի աղբյուրը բարեբախտաբար հիշատակված է այս դեպքում՝ «զայս ընդօրինակեալ Պրոսէի վրիպակօքն՝ յօրինակէ գրոց իւրոց, առաքեաց ինձ»[1]. Ալիշանի և Լալայանի հրատարակած բնագրերն ունեն շատ մեծ տարբերություններ։ Բացի արձանագրության որոշ բառերի տարբեր վերծանություններից, Ալիշանի բնագրի սկզբից և վերջից կան ամբողջական նախադասություններ, որոնք բացակայում են Լալայանի բնագրի մեջ և ընդհակառակը՝ Լալայանի բնագրի սկզբից տրված է մի հավելյալ փոքր արձանագրություն՝ թվագրված 1331, որը պիտի համարել անջատ արձանագրության մասը, քանի որ այդ փոքր արձանագրության մեջ հիշատակված անձնավորությունների անունները՝ Պապ և Սիմեոն, բացակայում են մեծ արձանագրության մեջ և այնտեղ հիշատակված են մանուկ Օրբելիի և նրա ծնողների՝ Մարտիրոսի և Վանենիի անունները։

Թեև Լալայանն այդ փոքրիկ արձանագրությունը անջատ է տվել, բայց քանի որ մեծ արձանագրությունը նրա մոտ թիվ չունի, կարող է կարծվել, թե մեծ արձանագրությունն է վերաբերում այդ 1331 թ., հետևաբար և հուշարձանի կառուցմանը, որն անշուշտ սխալ կլիներ։

1954 թ. տեղում կատարած մեր քննության հետևանքով եկանք հետևյալ եզրակացության.

1. Բրոսսեի ժամանակ հուշարձանը թեև վնասված, բայց ավելի ամբողջական է եղել. արձանագրության սկզբում և վերջում նրա բնագրի մեջ եղած ամբողջական նախադասություններն այդ ժամանակ հուշարձանի վրա իրոք որ եղած պիտի լինեին արձանագրության սկզբում տրված մասը, ճակտոնին մոտ որևէ տեղում, և վերջում տրված մասը՝ հարավային որմի ընկած քարերից մեկի վրա։ Բրոսսեն թեև ոչ հմուտ հայկական արձանագրություններ վերծանելու՝ բայց այնպիսի գիտնական էր, որ անմտություն կլինի կարծել անգամ, թե նա կարող էր ամբողջական նախադասություններ հորինել և կցել այդ արձանագրությանը։ Այդ խնդիր է, որ նա որպես օտարազգի և անհմուտ նյութին, կարող էր բառերի մեջ աղճատումներ մտցնել և տարբեր վերծանել, մի հանգամանք, որը նկատել է իր ժամանակին և հմուտ Ալիշանը, մանավանդ, եթե նկատի ունենանք վերջին նախադասությունը, ուր տրված է մանրամասնորեն թվականությունը՝ 1291 թ. ամսաթվով հանդերձ։

Այսպիսով եզրակացնում ենք, որ Բրոսսեի բնագիրը, թեև սխալաշատ, բայց ավելի ամբողջական է. նա ներկայացնում է արձանագրության պատկերը, հուշարձանը ավելի քիչ վնասված ժամանակ։

Լալայանի հրատարակած բնագիրը ըստ ամենայնի ավելի քիչ սխալներ ունի, բայց նրա մեջ պակասում են սկզբից և վերջից նախադասություններ, որոնք Լալայանի ժամանակ արդեն ընկած էին շենքի վրայից. դրանցից հատկապես կարևոր է վերջին նախադասության կորուստը, որի վրա եղել է նաև թվականությունը ՉԽ=1291 թ. հունիսի 11։

Լալայանի բնագրից առաջ տրված Պապ և Սիմեոնի արձանագրությունը առանձին է, կապ չունի մեծ արձանագրության հետ և նրա մեջ հիշատակված ՉՁ=1331 թ. չի վերաբերում հուշարձանի կառուցմանը (կամ մանուկ Օրբելիի մահվանը)։

Դրան որպես ապացույց կարող ենք ավելացնել, որ նման հուշարձանների վրա սովորական երևույթ է տարբեր ժամանակներում, հիմնականից բացի, այլ մանր արձանագրություններ գրելը։ Հենց այս հուշարձանի վրա, բացի Լալայանի բերածից, մենք երկու ուրիշն էլ ենք ընդօրինակել, որոնք, ճիշտ է, թվական չունեն, բայց դա էական չէ, նրանք բոլորովին անկախ և այլ մարդկանց անուններ պարունակող հիշատակարաններ են։ Ավելացնենք նաև, որ Բնունիս գյուղից ոչ հեռու Լոր գյուղում ևս կանգնած կա այս տիպի մի հուշարձան, որն ըստ արձանագրության կառուցված է 1271 թ., բայց դրանից զատ կան ուրիշ մանր արձանագրություններ, որոնցից մեկն ունի 1382 թվականը, և գրված է հենց խաչքարի պատվանդանի տակը, ուրեմն ամբողջ 90 տարի հետո։ Նշենք միաժամանակ, որ այս Լորիկի կոչվող հուշարձանը կառուցողական և զարդաքանդակների ոճով մեծ նմանություններ ունի Բնունիսի հուշարձանին։

Նկատի ունենալով այս բացատրությունները, եզրակացնում ենք որ, Բնունիսի այս հուշարձանը կառուցված է XIII դարի վեր-

[1] «Սիսական», էջ 215։

ջում, նրա ճարտարապետական և քանդակազարդման ոճը ևս այդ դարի է, հետևաբար Բրոսսեի և Ալիշանի հաղորդած թվականը՝ 1291, միանգամայն համապատասխանում է իրականությանը և մենք այն ընդունում ենք որպես հուշարձանի կառուցման թվական։

Ավելորդ չենք համարում ի հաստատություն վերև ասածներին բերել և մի այլ աղբյուր, որն ունեցել է Բրոսսեն և որից օգտվել է Ալիշանը։ «Յեւս կայ ԺԳ. դարու տէր երկուցուն ևս գիւղիցս, Կիրակոսի և Բնունեաց՝ է Մարտիրոս ոմն, ի նախնեաց իւրոց ժառանգեալ, որ (կնաւն իւրով Վանենի, տարաժամ մահուամբ որդւոյ իւրեանց Օրբելի, անպայազատ մնացեալ) վճակեցոյց աթոռոյն Տաթեւոյ զհայրենիս իւր՝ ամենայն սահմանօք նոցին, զոր և որոշակի նշանակեն. բայց մեր չունենալով զբնագիրն, այլ զփռանկ թարգմանութիւն (Պրոսէի, յորոյ ձեռագիր օրինակի գտանիւր բանն)»[1]։

Այս հուշարձանի, նրա արձանագրությունների և ժամանակի որոշման մասին մանրամասն խոսելու մեր բուն նպատակն այն է, որպեսզի կարողանանք նրա ճարտարապետի անունը որոշել, որը կարծում ենք, Մարտիրոսի վիմափորները կառուցող Գրիգորիկը պետք է լինի։

Մեր նկարագրած Օրբելիի կոթող-հուշարձանի մոտ, նրա հյուսիս-արևմտյան կողմում որպես տապանաքար է օգտագործված հուշարձանի երեսպատման քարերից մեկը, որի վրա կա հետևյալ կարճ արձանագրությունը՝ բաղկացած երեք տողից.

Ջ ԳՐԳՈՐԻԿ
ՔԱՋ ՎԱՐԴՊԵՏ
ՅԻՇԵՑԷՔ Ի Ք̅Ս̅ Ա̅[2]։

Արձանագրությունը շատ գեղագիր է, մի քանի տառերի գրչությունն ուրույն ոճով՝ Ջ, Գ, Ջ, խորը քանդակված, միայն ՔՍ և ԱԾ բառերի վրա պատիվներով, որոնք կփորագրեր նաև վարդպետ և Գրգորիկ բառերի վրա անշուշտ, եթե վերջիններս նույնպես սղված համարեր։ Վարդպետ ձևի գործածությունն արդեն պարզ է մեզ համար, իսկ Գրգորիկը համարում ենք տեղական արտասանության ձև, որ մտել է և արձանագրության մեջ։

Սա գերեզմանաքար չէ, այլ հուշարձանի պատից ընկած երեսպատման քար. այն դրված է գերեզմանի վրա այնպես, որ արձանագրությունը բաց երևում է։ Քարի գույնը քիչ ավելի մուգ է, քան կոթող հուշարձանինը, ըստ երևույթին դա գետնի մեջ թաղված լինելու հետևանքով է։

Կասկածից դուրս է, որ այդ քարը ժամանակին եղել է կոթողի վրա, որովհետև երկարավուն քառակուսի ձև ունի, որպես սովորական շարքի քար։ Հավանականորեն նա շենքի ճակատի կենտրոնում պիտի լիներ, արևելյան երեսից։

Կարևորը մեզ համար այն է, որ հայտնաբերվում է այս գեղեցիկ կոթողի ճարտարապետը՝ Գրգորիկը (Գրիգորիկ)։

Կարծում ենք, որ Մարտիրոս գյուղի վիմափորների Գրիգորիկ վարդպետը պետք է նույնացնել Բնունիսի այս հուշարձանը կերտող Գրգորիկի (Գրիգորիկի) հետ։ Այդ դեպքում նա որպես Գեղարդի նշանավոր վիմափոր ճարտարապետ Գալձագի ուղղակի կամ անուղղակի աշակերտ՝ նախ փորել-կառուցել է 1286 թ. Մարտիրոսի վիմափորները և ապա որպես հռչակված վարպետ, Բնունիսի տեր Մարտիրոսից հրավիրվել է կառուցելու իր վաղամեռիկ որդի Օրբելիի դամբարանի վրա այս գողտրիկ կոթողը։ Հավանաբար իր կյանքի վերջին շրջանում, նա այնպես համբավավոր է եղել, որ չի քաշվել իր ձեռքով գրած հիշատակարանում իրեն անվանել քաջ վարդպետ, այսինքն հմուտ կամ գերազանց ճարտարապետ։

Գրիգորիկ վարդպետից այս երկու հուշարձաններն ունենք անկասկած, բայց անշուշտ նա ուրիշ կոթողներ էլ կերտած կլինի, որոնց մասին առայժմ դժվար է որևէ բան ասել։ Օրինակ, Լոռի կոթող-հուշարձանը կառուցված է Բնունիսի հուշարձանին ժամանակով մոտ՝ 1271 թ. և իր ոճով այնքան հարազատ է Բնունիսի հուշարձանին, որ այս նույնպես կարելի է նրա ձեռագործը համարել։

Գրիգորիկ վարդպետը XIII դարի մեր նշանավոր ճարտարապետներից մեկն է (ալբոմ, նկ. 38, 39)։

1 «Սիսական», 215։

2 Վերջին երևացող Ա տառից հետո քարի անկյունը ջարդված է մի տառատեղի չափով, ուր միայն Ծ տառը պետք է լիներ և իր նախորդի հետ ԱԾ=Աստուած կազմեր։

30, 31. ԶԱՔԻՈՍ ԵՎ ԳՐԻԳՈՐ

Գոշավանքի հուշարձանների խմբում կա մեկ կոթող, որը մի նեղ և եռահարկ շենք է։ Սա գտնվում է Աստվածածին եկեղեցու հյուսիսային կողմում, գավթի մոտ։ Արտաքուստ հսկայական մեծության անտաշ քարերով է շարված, բայց ներքուստ սրբատաշ և խաչավորվող կամարներով։ Հավանաբար սա Կ. Գանձակեցու հիշատակածն է.

Շինեաց և այլ ժամատուն անտաշ վիմօք մածուցեալ կրով հաստահեղոյս ոռմօք փայտակերտ վերնահարկօք, որ յետ ժամանակաց փլավ վերնահարկն[1]:

Համաձայն Գանձակեցու վկայության այս շենքը շինվել է Մարտիրոսի վանահայրության օրոք և Մխիթար հյուսնի ձեռքով. նույն պատմագիրը հաղորդում է նաև, որ այդ շենքի փայտակերտ վերնահարկերը շուտով փլվել են։ Հենց նախկին փայտակերտ հարկերն են, որ հետագայում վերակառուցվել են և արդեն քարաշեն։

Այժմ այն շենքը երեք հարկից է բաղկացած, որով կարող ենք ասել, որ Մխիթար հյուսնից մնացել է միայն առաջին հարկը, մեծամեծ քարերով շինված, իսկ նրա վերին երկու փայտաշեն հարկերը հետագայում են ավելացվել։ Երկրորդ հարկաբաժնի պատի մի արձանագրությունը՝ գրված 1291 թ. պատմում է, որ դասապետ վարդապետը և իր եղբայր Կարապետը շինել են այդ վերին հարկերը,

Ի վերն եղեալ հիմանս.:

Այս շենքը եղել է վանքի գրատունը, որի երկրորդ և երրորդ հարկերից միջինը մատուռ է և վերջինը զանգակատուն՝ շինված վերոհիշյալ եղբայրների մեկենասությամբ։

Ընդարձակ արձանագրության մեջ հիշատակված են մեկենասներից բացի ժամանակի թագավորների և իշխանների անունները, կառուցման թվականը։ Հիշատակություն կա նաև եկեղեցու պարսպի և այլ կառուցումների մասին, մեկենասների ստացած պատարագների մասին։ Այդ լրացած-ամբողջացած բովանդակությունից հետո, արձանագրությունը շարունակվում է մեկ և կես տողով ևս, որտեղ բոլորովին նոր իմաստ և նոր անուններ են հանդես գալիս.

1 «Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 203։

Արդ աղաչեմ զամենայն ժառանգաւորսդ յիշման արժանի արարէք զամենայն աշխատեալսն ի սմա. առաւել Զաքիոսն և զԳրիգորն[1]:

Միանգամայն պարզ է, որ արձանագրության այս հատվածը կցորդ է բնագրին և այն արված է «աշխատողների» — վարպետների և հատկապես նրանց ղեկավար-ճարտարապետների՝ Զաքիոսի և Գրիգորի կողմից։

Այս ճարտարապետների ձեռագործն են ուրեմն նախկին գրատան վրա շինված երկու հարկերը, մատուռներն ու զանգակատունը, նաև պարիսպը և արձանագրության մեջ հիշատակված «այլ» կառուցումները։

32. ՀԵՐՀԵՐՅԻ ՎԱՐԴՊԵՏ

Վայոց ձորի Հերհեր գյուղն այդ շրջանի՝ հնագիտական տեսակետից՝ ամենահարուստ գյուղերից մեկն է։ Հատկապես XIII դարին վերաբերող մեծ և փոքր հուշարձանների քանակը շատ մեծ է։ Տարաբախտաբար այդ մեծաքանակ հուշարձանները իրենց վրա չեն կրում վարպետ-ճարտարապետի անուն։ Բացառություն է կազմում մի տապանաքար, որը լրացնում է այդ պակասը։

Ս. Սիոն վանքի եկեղեցիների արևելյան պատի տակ, ժայռի եզրին է գտնվում այս տապանաքարը, արդեն շարժված, բայց իր տեղում։ Այս տապանաքարը մուգ գույնի կարծր քարից է, որից և շինված են թե՛ եկեղեցիները և թե՛ բազմաթիվ խաչքարեր ու տապանաքարեր։ Այն շինված է միակտուր մեծ քարաբեկորից, որի վրա սկզբում տաշված-շինված է հիմքը — բարձր, ապա չորս կողմից նեղացրած՝ բարձրանում է տապանաքարի բունը, վերի մասում չորս թեք մակարդակներով էլ ավելի նեղանում է և գլխի նեղ ու հարթ մակարդակով վերջանում՝ կազմելով տապանաքարերի այն տիպը, որը սովորաբար կոչվում է «օրորոցաձև»։

Տապանաքարի թե ընդհանուր մշակումը և թե արձանագրության տառերը կատարված

1 Հ. Զանփոլադյան, *Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը*, Պետական պատմական թանգարանի «Աշխատությունները», հատ. Ա, նաև առանձնատիպ, էջ 164—165։ Ծախխարունեանց, Բ, 368, Սմբատեանց, Գեղարքունի, էջ 174—175։ Բարխուդարեանց, Արցախ, 353—354։ «Ազգ. Հանդ», X, 35։

են խնամքոտ և վարժ վարպետի ձեռքով։ Տառերը խորն են և բավական գեղեցիկ։ Արձանագրությունը փորագրված է չորս տողով, այն սկսվում է հարավից, գլխի մասի թեք հարթության վրայից մի քանի տառով, անցնում է արևելյան գլխին, ապա ծածկում հյուսիսային կողի նույն հարթությունն ամբողջովին. շարունակությունը վերի մասի հարթության վրա է և սկսվում է հակառակ, արևելյան ծայրից։

Արձանագրությունն իր բնական վիճակում ունի հետևյալ տեսքը.

չնչելը, արդեն սովորական աղավաղումներ են, գրեթե բոլոր նախկին հրատարակողների մոտ և յուրաքանչյուր արձանագրության մեջ։

Մեր հիմնական թեզի համար, այն է՝ որ վարդպետ հավասար է վարպետ-ճարտարապետի, այս անանուն Հերհերցի վարդպետի արձանագրությունն ունի շատ կարևոր նշանակություն։ Ամենակարևորն այն է մեզ համար, որ այս դեպքում վարդպետը ունեցել է կին և նրա մահվանից հետո գերեզմանաքար է կազմել — շինել նրա համար։ Եթե նա վարդապետ լիներ, անշուշտ կուսակրոն պետք է



ԵՍ ՎԱՐԴՊԵՏ ԿԱԶՄԵՑԻ ՏԱՊԱՆԱՆԻՍ ԱՄՈՒՍՆՈՅ ՍԹԵՐՈՅՍ ՈՉ ՈՐԴԻ ՈՒՆԷՐ ՈՉ ԱՂԲԷՐ. ՈՎ ԿԱՐԴԼՔ ՅԱՂԱԻԹ[Ս] ՅԻՇԷՔ. Ի Թ :ՉԽԵ: =(1296 Թ.)։

Արձանգրությունն, ինչպես նկարից և գծագրությունից պարզ երևում է, գրչագրական միատեսակություն չունի, տառերի բոլոր և անկյունավոր ոճը խառն կերպով հաջորդում են իրար. նույն և գլխագիր և փոքրատառ ձևերը խառն են գործածված. սղումներն ու պատիվները բացակայում են. եղած սղումները տեղի պակասության հետևանքով են։

Այս արձանագրությունը առաջին անգամ հրատարակել է Ալիշանը աղավաղված ձևով։ Կոստանյանցը արտագրում է Ալիշանից ուղղագրական մեկ փոփոխություն կատարելով՝ Աղբեր դարձնելով Աղբէր։ Ամենից առաջ Ալիշանի տեղեկատուն երևակայության զարմանալի խաղով, այս անանուն վարդպետին կնքել է Վարդան անունով, մի անուն որից հետք անգամ չկա շատ լավ պահպանված արձանագրության մեջ։ Մնացած աղավաղումները ինչպես վարդպետը=վարդապետ, յիշեք=յիշեցէք և յաղաւթ բառի բոլորովին

լիներ, թե ինչպես հայ եկեղեցու կանոններին քաջ գիտակ Ալիշանն ու Կոստանյանցը չեն նկատել այդ, մեզ համար անհասկանալի է[1]։

Երկրորդ կարևորությունն այս արձանագրության այն է, որ անանուն վարդպետ-ճարտարապետը շինելով գերեզմանաքար, գործ է ածել «կազմեցի» տերմինը. խաչքարի և գերեզմանաքարերի համար արմատացած այդ տերմինն ուրեմն այնքան տարածված է եղել, որ վարդպետ-ճարտարապետն էլ իր շինած գերեզմանաքարի համար նույնն է գործածում։

Երրորդն այն է, որ Հերհերցի այս ճարտարապետը իր միջավայրում այնքան հայտնի է դարձել որպես վարդպետ, որ բոլորի կողմից էլ հենց միայն այն մականունով է կոչվել և ինքն էլ նույնիսկ իր գրած արձանագրութ-ան մեջ իր անվան փոխարեն միայն մականունն է հիշատակել. սա ապացույց է, որ իր ժամանակ և իր միջավայրում նա եղել է միակ վարդպետը, բոլորին հայտնի. այլապես եթե ուրիշ վարդպետներ էլ լինեին, նա

---

1 Եթե վարդպետը նախկին քահանա լիներ, որևէ կերպ կարտահայտվեր արձանագրության մեջ։

պետք է նրանցից տարբերվելու համար արձանագրության մեջ իր անունը հիշատակեր, իրեն ուրիշների հետ չշփոթելու համար։

Վերևի ասածներից պարզ է, որ այդ հանրահռչակ մարդը պետք է, որ շատ երկար ժամանակ աշխատած լիներ և շատ կոթողներ կառուցած, որպեսզի վարդպետ մականունը մոռացնել տար նույնիսկ նրա սեփական անունը։

Մեջբերված արձանագրությունը 1296 թ. է, ուրեմն Հերհերցի վարդպետը գործել է XIII դարի երկրորդ կեսում։ Հերհերում այդ ժամանակաշրջանին վերաբերող մի շարք հուշարձաններ կան. ամենից առաջ գյուղի կողքին (հյուսիսային կողմից), ս. Սիոն վանքն է։ Այս վանքը բաղկացած է երկու իրար կից եկեղեցիներից և մի փոքր մատուռից — խորանից, կցված հյուսիսային եկեղեցուն։ Վանքի այս երեք շենքերից երկու հյուսիսայինները կոփածո քարով են շինված և իրենց պատերին չունեն արձանագրություններ և հետևաբար, շինության թվական[1], միայն հարավայինը շինված է սրբատաշ քարերով և շատ խնամքով. թե դրսից և թե ներսից, պատերին ունի բազմաթիվ արձանագրություններ։ Արևմտյան պատի վերին մասում նեղլիկ պատուհանի գլխին ագուցված է միակտոր մի քար, որի վրա քանդակված է կիսաբաց թևերով արծիվ, մագիլների մեջ բռնած մի խոյ, քարի չորս անկյուններում գրված է չորս տառերով թվականը (1282)

Թ Ջ

Լ Ա ձևով. այս թիվը

համարում ենք հուշարձանի շինության թվականը։ XIII դարի համար սովորական երևույթ էր թվականի նման ձևով գրելը շինությունների վրա։ Այս հուշարձաններից մոտ 10 կիլոմետր հեռու Թանահատի վանքի վրա, նույնպիսի արծվի քանդակի զուգորդությամբ գրված է շինության թվականը։ Թվականի այս ոճի հիշատակություն կա Բարձրավան (Բաշքենդ) գյուղի մոտի Սպիտակավոր աստվածածին կոչված հուշարձանի վրա, ապա Կոտայքի Գյոդ քիլիսե հուշարձանի արևմըտյան ճակատին և այլուր. բոլորն էլ XIII դարի հուշարձաններ։

Հերհերի եկեղեցու այս թվականության վերաբերյալ մի շփոթություն կա սակայն. խնդիրն այն է, որ եկեղեցու նույն արևմտյան պատի վրա, ներքևի մասում, կա մի այլ ընդարձակ արձանագրություն նվիրատվական բովանդակությամբ, թվագրված ՉԸ=1259— այս երկու թվականների մեջ կա 23 տարվա տարբերություն, և նվիրատվական արձանագրությունն ավելի հին է։ Մենք կարծում ենք, որ շինության իսկական թիվը պիտի լինի թևատարած արծվի շուրջը գրված թվականը, այն է՝ 1282-ը, իսկ Ստեփանոս արքեպիսկոպոսի արձանագրության մեջ նշված ՉԸ—թվականի մեջ գրչի սխալմամբ տասնավորը բաց է թողնված։ Այս խնդիրը կարելի է ճշտել նաև կողմնակի տվյալներով։ Նույն եկեղեցու պատերին կան բազմաթիվ թվագրված արձանագրություններ, որոնցից ոչ մեկը 1282 թվականից առաջ չէ։ Ավելի հաստատուն ապացույց կարող է համարվել նույն եկեղեցու ներսում, հարավային պատի վրա գրված ընդարձակ շինարարական արձանագրությունը, որտեղ մանրամասն կերպով տրվում են մեկենասների անուններն ու նվերները և որը թվագրված է ՉԼԲ=1283 թ., այսինքն եկեղեցու շինության մեր կողմից ընդունած 1282 թ. մեկ տարի հետո միայն։ Սա բոլորովին օրինաչափ երևույթ է. եկեղեցին շինելու ընթացքին արծվաքանդակ քարը ներքևում փորագրվել-պատրաստվել է և եկեղեցու պատի մեջ՝ վերևում, տեղավորվել շինության ընթացքի ժամանակ, մի տարի հետո կառուցումն ավարտվել է, որից հետո և գրվել է մեկենասների հիշատակարան արձանագրությունը՝ արդեն պատրաստի շենքի պատի ներսում, ուր հիշատակված են և՛ եկեղեցու շինությունը, և՛ նրան տրված սպասքներն ու կալվածները[1]։

Այս եկեղեցին ծավալով փոքր է, զուրկ քանդակագործական հարդարանքներից, բայց մեծ խնամքով ու վարպետորեն է շինված, անգմբեթ է, երկթեք կտուրով։ Ներսում շատ առանձնահատուկ է բեմի ձևը, այն մի որմնասյունով բաժանվում է երկու մասի, յուրաքանչյուրում առանձին վիմաքարով. արևելյան պատի մեջ էլ աբսիդի յուրաքանչյուր այդ մասը լուսավորվում է առանձին պատուհանով։

---

[1] Կենտրոնական, մեծ եկեղեցու արևմտյան մուտքի կողքին կա նորոգման անթվական արձանագրություն։

[1] Աբել արքեպիսկոպոսը սխալ կերպով շինության թիվ է նշանակում՝ 1321, տե՛ս «Այրարատ», 1873, էջ 386։

Այս եկեղեցուն հյուսիսից կից ավելի մեծ եկեղեցին կոփածո քարերով է և չունի շինարարական արձանագրություն. բայց դատելով արձանագրությունների ընդհանուր բովանդակությունից և ճարտարապետական առանձնահատկություններից, առաջինին ժամանակով մոտ պիտի կառուցված լինի։

Հերհերից դեպի հարավ՝ գետի ձախ ափին, մի բարձր քարաժայռի գագաթին, գտնվում է նույն ժամանակներում կառուցված մի փոքրիկ մատուռ, արևմտյան կողմից փոքր սրահով։ Այս մատուռի շինողները կարծես մի նպատակ են հետապնդել, այն է՝ անկարելին դարձնել կարելի. այժմ էլ այդ ժայռագագաթը բարձրանալու համար հարկ է լինում ոչ միայն հարյուրավոր մետրեր մագլցել, այլև նրա վերին մասում չորեքթաթ սողալ լերկ ժայռերի վրա։ Այդ բնականորեն անմատչելի փոքրիկ գագաթին շինել են մի մատուռ և այն էլ այնպիսի մեծամեծ քարերով և զարմանալիորեն մաքուր տաշված ու շարված, որ թվում է, թե դրանք այնտեղ բարձրացնելու համար դժոխային ջանքեր են հարկավոր եղել։ Մատուռի կտուրն ունի երկթեք ծածկ, որի սալաքարերը երկու մետրից ավելի երկարություն ունեն և յուրաքանչյուր թեքության վրա վերից վար միակտուր են։ Սրահի պատի և ծածկի քարերը մեկ ամբողջական հսկա բեկորներից են. ամբողջ շենքը զարմանալի մի կոթող է, խիստ ազդեցիկ տեսքով։ Սրահի մեջ բացվող մատուռի մուտքին հասնելու համար պետք է բարձրանալ մեծ և միակտուր քարե աստիճաններով։ Այդ մուտքը պսակվում է սրածայր կամարով, որի շուրջը փորագրված է մի ընդարձակ շինարարական արձանագրություն, որտեղ հիշատակված են տեղական այն իշխանների անունները՝ ինչ ս. Սիոնի արձանագրությունների մեջ, ապա բուն շինող մեկենասների անունները, որոնք են՝ Շաչ միայնակյացը և իր հարազատ եղբայր Մաթուսը։ Մատուռը շինված է ՉԽԶ= 1297 թ.։

Վերոհիշյալ եկեղեցիներից բացի, թե՛ ս. Սիոնի բակում և թե գյուղամիջում կան XIII դարի երկրորդ կեսին պատկանող բազմաթիվ խաչքարեր. դրանցից մի քանիսը առանձին խումբ են կազմում։ Այս խմբի առանձնահատկությունն այն է, որ շատ մեծ ու մոնումենտալ են, լավ մշակված, սակայն միանգամայն զերծ որևէ քանդակազարդությունից, որը սովորական է այդ դարաշրջանի խաչքարերի համար, կենտրոնում ունեն մոնումենտալ խաչ միայն, իսկ լայն շրջանակների ու ճակատի վրա, զարդերին փոխարինում են մեծ և գեղեցիկ տառերով արձանագրություններ։ Իրենց այդ մոնումենտալությամբ և քանդակազարդերի բացակայությամբ նրանք սերտորեն կապվում են եկեղեցիների ճարտարապետական ոճին, որոնք նույնպես անզարդ են ու մոնումենտալ։ Այդ խաչքարերից երկուսն իրենց վրա կրում են նույն իշխանական տոհմի անունները, որոնք հիշատակված են եկեղեցիների արձանագրությունների մեջ։ Կարծում ենք, որ ս. Սիոն վանքի սրբատաշ եկեղեցին շինված է 1282 թ., Շաչի մատուռը՝ 1297 թ. և խաչքարերի թված մոնումենտալ խումբը, որոնցից մեկը՝ ամենաբնորոշը կանգնած է գյուղամիջում ճանապարհի վրա և կրում է Վահրամի որդի Գրիգորի անունը՝ շինված 1282 թ.։ Այս կառույցները Հերհերցի անանուն վարդապետի ձեռագործերն են։

Երբ 1216 թ. մահանում է վարդապետի կին Սթերը, նա արդեն այնքան հարգված մարդ էր, որ նրան թույլատրվում է կնոջ դիակը թաղել իր ձեռակերտ եկեղեցու արևելյան պատի տակ։ Պետք է ասել, որ այդ փոքրիկ տարածությունը շատ դժվարանցելի էր և զուրկ հողային շերտից, այնպես որ քարաժայռը պետք է փորվեր գերեզմանափոսի համար, իսկ գերեզմանաքարն այնտեղ տեղափոխելու համար եկեղեցու հարավ արևմտյան անկյունում, որը անդունդի եզրին է, կամուրջ պետք է շինվեր։

Հերհեր գյուղը վարդապետի գործունեության ժամանակ, XIII դարի երկրորդ կեսում նշանավոր ավան էր և Օրբելյան տոհմի վասալ իշխաններից մեկը՝ Շահուռնցիների նստոցը։ Իշխանական այդ տան անդամներից մեկի, Ամատի համար ձեռագրի հիշատակարանի մեջ ասված է «Նիզակակալ և կորովաձիգ ասպարապետ ի դրան Թագաւորաշուք իշխանաց Բուրթելին և Վախախին»[1]։ Այս իշխանական տան ձեռքով կատարված շինարարությունների ականավոր ճարտարապետը պետք է լիներ Հերհերցի անանուն վարդապետը XIII դարի վերջերին, որի կյանքի մանրամասնու-

1 Գ. Յովսէփեան, Խաղբակեանք, Ա, էջ 21։

թյունների մասին դժբախտաբար ուրիշ տեղեկություններ չունենք[1]։

33. ԱՇՈՏ ՇԻՆՈՂ

Հին ու միջին դարերում փոխադրական միակ միջոցը գրաստների կարավաններն էին։ Կարավանային բանուկ ճանապարհների վրա շինվում էին ընդարձակ իջևաններ ճամփորդների և գրաստների հանգստանալու և կերակրվելու հարմարություններով։ Իջևաններ շինվում էին ոչ միայն այն քաղաքներում և գյուղերում, որոնց միջով անցնում էր ճանապարհը, այլև այդ երկու բնակավայրերի արանքում, բաց դաշտերում, երբեմն էլ լեռնանցքների վրա, երբ ճանապարհն անցնում էր լեռնային ու անմարդաբնակ վայրերով։

Պատմական Հայաստանի շատ վայրերում մնացել են միջնադարյան այդպիսի իջևանների ավերակներ թե բնակելի վայրերի մոտ և թե լեռնացքների վրա, և թե բաց ու ընդարձակ դաշտերում։

Նախկին Սուրմալու գավառի Ջոր գյուղից 15—20 վերստ դեպի հյուսիս-արևմուտք, բաց դաշտի մեջ կիսավեր վիճակում դեռ մնում են մի այդպիսի ընդարձակ իջևանի ավերակները։

Այդ իջևանը մի մեծ շենք է, 65 մետր երկարությամբ և 25 մետր լայնությամբ։ Նա բաղկացած է մի շարքում կանգնած երեք սենյակներից, որոնցից յուրաքանչյուրից մի դուռ բացվում է ընդհանուր ու մեծ դահլիճը, որտեղ իջևանում էին ճանապարհորդները։ Այդ դահլիճը ինը կամարներով բաժանվում է մասերի, որոնցից յուրաքանչյուրի երկու պատերի մեջ խորություններ են՝ առանձին ճամփորդների և նրանց ապրանքների տեղավորման համար։

Միջնադարի պայմաններում կարավանները իրենք էին հոգում իրենց ապահովության մասին և հաճախ, բացի ճամփորդների զինվածությունից, նաև հատուկ պահակախումբ էին ունենում։ Այդ նպատակով էլ Ջորի այս կարավանատունը շեն ժամանակ փոքրիկ բերդի է նմանվել։ Հյուսիսից և հարավից հինգական, ընդամենը տասը բուրգեր է ունեցել պաշտպանության համար։

Շենքն ունեցել է նաև երկրորդ հարկ, որի հետքերն են միայն մնացել։

Իջևանը կառուցված է սրբատաշ քարով, մեծ արվեստով և խնամքով։ Մուտքը գեղեցկորեն զարդարված է քանդակներով, XIII դարի հուշարձաններից շատերի ոճով, վեց թևանի աստղերի քանդակներով, որոնք այդ դարում ոչ միայն եկեղեցիների, այլև Անիի աշխարհիկ շենքերի մուտքերի ձևավորման մեջ շատ սիրված էին։

Իջևանի շենքի վրա կա միայն մեկ հատիկ կարճ, երկու բառանի արձանագրություն արաբերեն տառերով։ Այն փորագրված է հարավային սենյակի երդիկ-լուսանցքի շրջանակին և ճարտարապետի անվան հիշատակությունն է միայն՝

Աշոտ կառուցող.

Բազմաթիվ իջևանների կառուցողներից միայն այս մեկ ճարտարապետի անունն ունենք, որը XIII դարի ճարտարապետների սովորության համեմատ իր հիշատակարանը գրել է երդիկի շրջանակին, ինչպես Գալձագը Գեղարդի վիմափորի և ճարտարապետ Մինասը Հաղարծնի սեղանատան համապատասխան տեղում։ Այսպիսով, երդիկավոր շենքերի ճարտարապետների համար այս նշանավոր կետը, ուր մարդ ներս մտնելիս ակամա նայելու է, դարձել է սիրած տեղ՝ իրենց անվան հիշատակությունը գրելու համար։

Ջորի այս նշանավոր հուշարձանը դժբախտաբար մնաց չուսումնասիրված, գոյություն ունի միայն համառոտ նկարագրություն և երկու լուսանկար՝ շենքի տեսարաններից[1]։

34. 35. ԽԱՉԵՆԻԿ ԱՆԵՑԻ ԵՎ ՇԱՀԵՆ ՎԱՐԴՊԵՏՆԵՐ

Արցախի Վարանդա գավառի Նորշեն և Հացի գյուղերի արանքում «Բռի եղցի» կոչված վայրում (Ներկայիս Մարտունու շրջանում) գետակի ձախ ափին, բլրի հարթ գա-

[1] *Հուշարձանների և նրանց արձանագրությունների մասին տե՛ս Ջալալեան, Բ, 140—143։* Քաջբերունի, *Այրարատ, 1889, էջ 322։ «Սիսական», 114։* Սիսոն, МАК, *XIII, 138—139։*

[1] *А. Калантар*, „Христианский Восток", т. III, вып. I, Петроград, 1914, стр. 101—102.

գավթին և լանջերին պահպանվել են մի խումբ հուշարձաններ և ընդարձակ գերեզմանատուն:

Կանգուն և կիսավեր հուշարձանների ճարտարապետական ոճը և նրանց վրա եղծված վիճակում մնացած արձանագրությունների թվականներն ապացուցում են, որ դրանք մեծ մասամբ շինված են XIII դարում: Հուշարձանների շուրջը թափված են քառակուսի կոթողների բներ և խոյակներ V—VII դարերին բնորոշ ձևերով ու քանդակներով, որոնք ապացուցում են այդ վայրի երկարատև ու մեծ կուլտուրական կենտրոն լինելու հանգամանքը:

Հուշարձանների այս խումբը բաղկացած է երեք փոքր եկեղեցիներից և չորս-հինգ որմնափակ խաչքարերի մնացորդներից: Բոլոր շենքերը շինված են հենց նույն բլրի ստորոտում գտնվող սպիտակավուն կրաքարի բարակ շերտերից, որոնք շարված են պատերի մեջ մեծ ու փոքր աղյուսների նման, իսկ քանդակների և արձանագրությունների համար օգտագործվել է նույն շերտաքարը ագուցվելով պատի երեսին: Քարի այդ տեսակը, որը միակ շինանյութն է ամբողջ Ղարաբաղում, փխրուն է և շուտ քայքայվող, այդ պատճառով էլ այստեղ եղած քանդակներն ու արձանագրությունները խիստ հողմնահարված ու փշրված են:

Բլրի գագաթի արևմտյան կողմում կանգուն է մի փոքր եկեղեցի, շինված անտաշ սալքարերով, թաղածածկ, միակ մուտքն արևմուտքից է, որի շրջանակները գեղեցիկ հյուսվածազարդով են, քառակուսիներ և մեջը նույնպես հյուսազարդ խաչեր: Ճակատաքարը կիսակամար է, կենտրոնում խաչ և շուրջը ռոմբեր, բոլորը ռելեֆ: Մուտքի վերին երկու կողմերին հուշկապարիկներ են՝ գլուխներն այժմ փշրված. արևմտյան ամբողջ պատի արտաքին երեսը պատած է խաչազարդ սալքարերով:

Հյուսիսային կողմի հուշկապարիկի մոտ ագուցված է մի սալաքար, որի վրա վարդպետ-ճարտարապետի հետևյալ արձանագրություն-հիշատակագրությունն է, 8 տող՝

Զխա-
չենիկ
վարդ-
պետ
սբ եկեղ-
եցոյս յ-
աղաւթս յիշ-
եցէք ի Քս[1]:

Բացի այս եկեղեցուց Խաչենիկ վարդպետը այստեղ կառուցել է նաև մի մեծ որմնափակ խաչքար, որը գտնվում է բլրի ստորոտում, դեպի գագաթը բարձրացող ճանապարհի հարավային եզրին: Հուշարձանի գլխի ճակատը քանդված է, սրա տակ եղել են սրբատաշ 8 քարեր՝ մի շարքով, որոնց վրա գրված է մեծ արձանագրություն, բաղկացած 6 երկար տողերից: Այդ քարերից այժմ մնացել են տեղում միայն երեքը՝ մեկը սկզբի մասում և երկուսը՝ վերջին. մնացած քարերի վրա պահպանված տառերը ևս խիստ հողմնահարված-մաշված են[2]. այդտեղ մնացած տառերից միայն մի անուն կարելի է անսխալ լրացնել ՎՐԹ=Վարթանէս:

Հուշարձանի հյուսիսային շրջանակի ստորին մասում, ամբողջական վիճակում պահպանվել է վարդպետի 7 տողից կազմված հետևյալ կարևոր արձանագրությունը.

Ես Խաչենե-
կ Անեցի, վար-
դպետ սբ Եշ-
անիս, որդի Վար-
կասա. որք կար-
դէք յաղաւր-
ս յիշեցէք ի ՔՍ[3]:

Խաչենիկ վարդպետի կառուցած այս հուշարձանը XIII դարում տարածված նման հուշարձանների լավագույն նմուշ է և մեր տեսած ամենամեծերի շարքին է պատկանում: Այն բոլոր կողմերից պատած է սրբատաշ սալաքարերով, ունի բարձր պատվանդան, որի երեսքարերից միայն մեկն է մնացել և դրա վրա պահպանվել են նույն ռոմբաձև զարդերը, ինչ որ եկեղեցու մուտքի ճակա-

---

1 Մ. Բարխուդարեանց, Արցախ, 125: Վարդպետի փոխարեն վարդապետ:

Լալայան, Ազգ. Հանդ., Թ, 48, նախորդի սխալներով:

2 Այդ վիճակումն են եղել դեռևս Բարխուդարյանցի ժամանակ. տե՛ս «Արցախ», էջ 125. սկզբից գրել է ՙնԱ: Թվականը, որն այժմ չկա և ընդհանրապես էլ սխալ է:

3 Մ. Բարխուդարեանց, Անդ, 126. խիստ աղճատված:

տաքարին էր։ Խորության մեջ ագուցված են եղել չորս խաչքարեր՝ գեղեցիկ քանդակներով։

Այս վայրի բոլոր հուշարձաններից դեպի արևմուտք, բլրի ստորոտում, ճանապարհի եզրին, առանց ծածկի կանգնած է մի փոքր եկեղեցի. նախորդների նման անտաշ սալաքարերով շինված. մուտքն արևմտյան կողմից, որի կիսակամար միակտուր ճակատաքարի կենտրոնում խաչ է և շուրջը շախմատաձև զարդեր. մուտքի վերի երկու կողմերում ունենք սիրամարգեր. արևմտյան պատն արտաքուստ ամբողջովին խաչքարերով պատած։

Մուտքի շրջանակից վեր գրված է հետևյալ շինարարական մեծ արձանագրությունը՝ 5 տողով, որի տողերի սկզբի մասից երկու քար ընկել, կորել են և մնացածներն էլ կիսաեղծ վիճակում են.

. . . . եղբ[այր] իմ Վարհամ
. . . . . ունափա շինեցաք զեկեղեցիս
բազում աշխատ(ութբ) յեպիսկոպոսութե տր.
Յոհաննիսի և տր. Ներսիսի. յիշատակ հոգոց և ծնողաց մերոց, [որք] կարդ[էք] յ[աղաւթ]ս
յիշէք զաշխատողք եկեղեցոյս[1]:

Կարևոր այս արձանագրությունն, անշուշտ, կունենար նաև թվական, որը պիտի լիներ սկզբից, բայց տարաբախտաբար կորել է. սակայն մոտավոր ժամանակը հնարավոր է որոշել հիշատակված անձնանունների ինքնության և ժամանակի որոշմամբ։ Յոհաննես և Ներսես եպիսկոպոս եղբայրները հայտնի դեմքեր են։ Ավագը Յոհաննեսն է, որը դարձավ Աղվանից կաթողիկոս, նրա մասին պատմական և արձանագրական նյութերի մեջ տեղեկություններ կան 1195—1235 թվականներից։ Վերջին՝ 1235 թվականը կոստանդ եղբոր՝ Ներսեսի կաթողիկոսության, որի մասին տեղեկությունները հասնում են մինչև 1251 թվականը։ Այս ժամանակագրությունից պարզ է դառնում, որ շինությունից պետք է կառուցված լինի XIII դարի առաջին հիսնամյակի ընթացքում, 1235 թ. առաջ, երբ Յոհաննեսը դեռ կաթողիկոս չէր, հետևաբար դարի առնվազն երկրորդ տասնամյակում։

Բարեբախտաբար հուշարձանի նույն արևմտյան պատի վրա՝ մուտքից հյուսիս, պահպանվել է նաև ճարտարապետի հիշատակագիր արձանագրությունը, 4 տողով.

Զճահեն վ-
արդապետ
եկեղեցոյս յիշեցէք ի տր[1],

Այս արձանագրության մեջ Վարդպետ գրության փոխարեն վարդապետ գրված լինելը համարում ենք գրչի սխալ։ Արձանագրության ընդհանուր ոճը լիովին համընկնում է ինչպես նախորդ, նույնպես և այս վայրի վարդպետ Խաչենիկի հակիրճ հիշատակագրություններ և, անկասկած, գրիչը վարդպետ-վարդապետ բառերի խիստ նմանությունից շփոթված՝ մի ավելորդ Ա է գրել բառամիջում։

Այսպիսով, «Բոխ եղցի» հուշարձանների այս մեծ խմբի մեջ երկու ճարտարապետների անուններ են հանդես գալիս, որոնցից Խաչենիկ Անեցին կառուցել է մի եկեղեցի և մի որմնափակ խաչքար, իսկ Ճահենը՝ մի եկեղեցի. բայց նկատի ունենալով մնացած կանգուն և կիսավեր հուշարձանների ոճական և կառուցողական նմանությունները այս վարպետների կառուցածների հետ, պիտի ենթադրել, որ վերջիններիս մի մասն էլ այս ճարտարապետների ստեղծագործություններն են, մանավանդ, որ անհայտ եկեղեցիների պատերին եղած արձանագրություններում պահպանված թվականները և անձնանունները ևս, ինչպես Ներսես եպիսկոպոսի և ժամանակի իշխան Սմբատի, ժամանակակից են Խաչենիկի և Ճահենի կառուցածներին։

Հարկ ենք համարում անդրադառնալ գրականության մեջ տեղ գտած մի սխալ կարծիքի պարզաբանմանը.

«Բոխ եղցի» վայրի առաջին նկարագրող Մ. Բարխուդարյանցը ճարտարապետների բոլոր երեք հիշատակագիր արձանագրությունների մեջ էլ Վարդպետ բառը վարդապետ վերծանելով՝ Խաչենիկին և Ճահենին անվերապահորեն կրոնավոր վարդպետներ է ընդունել. բայց և նկատել է որ նման վերծանությունը տալիս է արձանագրություններին անստույգ և սխալ իմաստ, այն է՝ վարդապետ եկեղեցոյս: Մ. Բարխուդարյանցը ինքը եպիսկոպոս և եկեղեցական կանոններին գիտակ մարդ՝ լավ հասկանում է, որ եկեղե-

1 Անդ, 125։ Տեղում կատարած մեր ճշտումներով։ Լալաեան, Ազգ. Հանդ., Բ, 48։

1 Մ. Բարխուդարեանց, Անդ, էջ 125։ Ճահեն բառի մեջ Ճ նախդիրն անջատել է, և սխալմամբ Ջ=700, թվական համարել. տե՛ս նաև Հ. Աճառյանի կարծիքը, Անձնան. բառ., Դ, էջ 119։

ցիները, այն էլ այսպիսի փոքրիկները, վարդապետներ չէին ունենում, այլ միայն քահանաներ. վարդապետ կոչումը եկեղեցական կանոններով ամենահիմնական և բարձր գիտական աստիճանն է, դրանից վեր եղողները միայն պաշտոնական տիտղոսներ են. այս կանոնական հակասությունը սրբագրելու համար «Արցախի» հեղինակն ստեղծել է հետևյալ թյուր վարկածը։

«Կարծում ենք, որ Աղվանից թագավորների և իշխանազների մարմիններն ամփոփված լինեն այս առանձնապես պատրաստված շինության մեջ և աղոթավոր վարդապետներ կարգված պաշտոնապես»[1]։

Մ. Բարխուդարյանցն այս դեպքում մոռանում է, որ հենց իր գրքի մեջ տեղ գտած հուշարձանների պատերին եղած արձանագրությունների մեջ Աղվանից ոչ մի թագավորի ու իշխանազնի մասին հիշատակություն չկա և չի էլ կարող լինել, քանի որ արձանագրությունները և հուշարձանները վերաբերում են XIII դարին, երբ Աղվանից թագավորներ չկային, աշխարհիկ իշխանների տիտղոսի մեջ Աղվանք անունը վերացել էր և այն միայն հոգևոր իշխանության բաժինն էր մնացել։ Բացի այդ, հուշարձաններից միայն մեկում կա մի տապանաքար, որի արձանագրությունը, վերաբերում է 1725 թ. և հիշատակված է ոմն **Խմիչի որդի Սարքիս**[2]։ Իսկ հուշարձանների պատերի վրա պահպանված այլ արձանագրությունների մեջ որպես կառուցել տվողներ հիշատակված են սովորական մարդիկ, օրինակ, մեկի մեջ ինչ որ քահանա (անունը ջարդված) է իր երկու եղբայրը (մեկի անունը Վարհամ) շինել են եկեղեցին՝ հիշատակ իրենց ծնողների և ազգականների։

Մ. Բարխուդարյանցի այս թյուր կարծիքի մի պատճառն էլ այն է եղել, որ նա հուշարձանների էությունը և տարբերությունները չի ճանաչել և բոլոր եղածները եկեղեցի ու մատուռ համարելով և մեծ թիվ ստանալով՝ աշխատել է դրա պատճառը տեսնել թագավորական և իշխանական դամբարանների՝ իր ստեղծած վարկածի մեջ։ Ըստ «Արցախի» հեղինակի այստեղ կան երկու մատուռ, երեք բեմ և երկու եկեղեցիներ[1]։ Եկեղեցի և մատուռ հասկացությունների նույնացումը կամ առանձնացումը հասկանալի է, քանի որ կապված է հիմնականում նրանց ծավալի հետ և մասամբ էլ միատեղ գտնըվելու դեպքում առանձնակի կանգնած փոքրը մեծի համեմատ մատուռ է անվանում։

Բայց ինչ է նշանակում բեմ հասկացողությունը առանձնակի կանգնած հուշարձանի նկատմամբ գործածված։ Հայ եկեղեցու կանոնական որոշումներով այդպիսի աղոթավայրեր չեն նախատեսված, այդպիսիները գոյություն չունեն և փաստորեն Հայաստանում միայն մեկ հուշարձան կա, որն այժմ իրոք որ միայն բեմից է բաղկացած և գրականության մեջ պայմանականորեն «զորաց տաճար» է անվանվում։ Այն գտնվում է Օրբելյան իշխանական տան նստոց Եղեգիս գյուղում (Եղեգնաձորի շրջանի Ալայազ գյուղ), շինված XIV դարի սկզբներում. այդ «Զորաց տաճարն» ունի բեմերին հատուկ մեծ խորություն և վեմ քար, կողքերին ավանդատներ, այլ խոսքով բոլոր հարմարությունները ծիսակատարության համար։ Իսկ այն բոլոր հուշարձանները «Բռի եղցի» ավերակների մեջ, որոնց Մ. Բարխուդարյանցը **բեմ** է կոչում, պարզապես որմնափակ խաչքար են՝ երեք կողմից շրջափակված ավարտված և սովորական պատերով, իսկ արևմըտյան երեսին ագուցված են խաչքարեր, որոնց շրջանակ հանդիսացող պատերը հազիվ 5—10 սանտիմետր խորություն են գոյացնում։ Նման տիպի որմնափակ խաչքարեր՝ կառուցված XII և մանավանդ XIII դարերում, մեծ քանակությամբ պահպանվել են, և «Բռի եղցում» եղածները ոչնչով չեն զանազանվում դրանցից։

Եթե Մ. Բարխուդարյանցի թված յոթ հուշարձանների ընդհանուր հաշվից հանենք երեք «բեմերը», ապա կմնան 4 եկեղեցի և մատուռներ միայն։ Իսկ Ղարաբաղի սահմաններում կան վանքեր, ուր եկեղեցիների և մատուռների խումբը բաղկացած է 10-ից ավելի հուշարձաններից և դրանք երբեք էլ «թագավորազների և իշխանազների» դամբարաններ չեն եղել և մանավանդ, առանձ-

---

1 «Արցախ», էջ 125։
2 «Անդ», էջ 127։

1 «Արցախ», էջ 125։

նապես ոչ մի «աղոթավոր վարդապետ պաշտոնապես» չի եղել կարգված[1]։

36. ՈՎԱՆՆԷՍ ՔԱՐԳՈՐԾ

Ներքին Թալինը Հայաստանի հնագույն բնակավայրերից է. գյուղի շրջապատում և ներսում կան նաև միջնադարյան հին հուշարձաններ, որոնց շինության ստույգ ժամանակները թեև հայտնի չեն, բայց պատերի վրա կան X և XI դարերի արձանագրություններ։

Առանձնապես նշանավոր է գյուղի կենտրոնում կանգնած կիսավեր դղյակը կամ միջնաբերդը։ Դա եռահարկ մի շենք է, ուղղանկյուն հատակագծով, որի չորս անկյուններում բարձրանում են կիսաշրջան բուրգեր, որոնցից մեկի վրա կան մարդու և վագրի բարձրաքանդակներ։ Դղյակի առաջին հարկի պատերը շինված են կոփածո, իսկ վերին հարկերինը՝ սրբատաշ քարերով։ Ունի մեկ մուտք, որն ունեցել է միակտուր քարից դուռ (այժմ ընկած է մուտքի մոտ)։ Դղյակի շինության ստույգ ժամանակը հայտնի չէ, հնարավոր է, որ կառուցվել է VII դարում։

Դղյակը հետագայում շրջապատվել է քառակուսի պարսպով, որի անկյուններում և կենտրոններում կառուցվել են 8 բուրգեր, պարիսպն ունի միայն մեկ մուտք, որը բացվում է դղյակի մուտքի դիմաց, սրա վրա նույնպես քարե միակտուր դուռ է եղել։ Այս պարսպի շինության ստույգ ժամանակը նույնպես հայտնի չէ, սակայն հավանական է համարվում, որ այն կառուցվել է XII—XIII դարերում։ Մուտքի գլխին փորագրված է Զաքարյան Աղբուղայի արձանագրությունը, 1267 թ., որը նվիրատվական բովանդակություն ունի։ Ենթադրվում է, որ դղյակի այս պարիսպը, ինչպես նաև պարսպի ու դղյակի արանքում—հյուսիս-արևելյան մասում գտնվող փոքր եկեղեցին շինված են Զաքարյանների ժամանակ, քանի որ Թալինը որպես բերդ է ծառայել նրանց համար։

Պարսպի այն բուրգի վրա, որը գտնվում է այս փոքրիկ եկեղեցու հյուսիսային պատի դիմաց՝ կա հետևյալ կարճ արձանագրություն-հիշատակարանը։

ՋՈՎԱՆՆԷՍ ՔԱՐԳՈՐԾՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

Կասկածից վեր է, որ Ովանեսը պարիսպը կառուցող ճարտարապետն է և եթե նկատի ունենանք նույնիսկ միայն այն, որ նա իրեն քարգործ է կոչում, ապա պետք է ենթադրել, որ պարիսպը XIII դարից հետո չէր կարող կառուցվել, որովհետև դրանից հետո քարգործ կոչումը մոռացվել էր արդեն։

Մինչև նոր ժամանակներն էլ Թալինի այդ դղյակ-բերդը իր նշանակությունը պահպանած է եղել։ Տեղեկություններ կան, որ 1583 թվականին օսմանյան զորավար Ֆարհադփաշան նորոգումներ է կատարել այնտեղ, իսկ Երևանի սարդար Հյուսեին խանը 1821 թվականին մի նոր պարսպով է շրջապատել ամբողջը։

Այս վերջին պարսպից ներս կան երկու փոքր եկեղեցիների ավերակներ, որոնց շինության ժամանակները նույնպես անորոշ են։

37. ՎԱՐԴԵՏ ԲՈՒՏ

ԺԴ դար

Այս վարպետ-ճարտարապետը ստեղծագործել է ներկա Վեդիի շրջանում։ Վեդիի շրջանը պատմական Արարատ նահանգի Ուրծ և Արած գավառների տեղն է գրավում և պահպանել է մի քանի շատ կարևոր հուշարձաններ, որոնք մինչև օրս էլ դուրս են մնացել ճամփորդ-ուսումնասիրողների տեսադաշտից։ Պահպանված ամենահետաքրքիր հուշարձանը Ղարաբաղլար գյուղից ոչ հեռու, սարալանջին, հարթավայրի վրա գտնվող վաղֆեոդալական շրջանի բերդի և շենքի ընդարձակ ավերակներն են, որոնք Ուրծա նախարարների նաև Սակաաբերդի մնացորդները պիտի լինեն։

XIII դարից այդ շրջանը պատկանում էր Սյունյաց Օրբելյան իշխանական տանը, իսկ երբ 1289 թ. վախճանվեց Տարսայիճ Օրբելյանը և տոհմի կալվածները բաժանվեցին նրա ժառանգների միջև, Վեդիի շրջանը բաժին դարձավ Տարսայիճի որդի Ջալալին՝ ծնված նրա երկրորդ կնոջից, Մինա խաթու-

---

[1] Մենք քաջ գիտենք հատուկ տոհմական դամբարանները և դրանցից այնպիսիները, որոնց մեջ միայն մեկ հոգի է թաղված, օրինակ, Եղիշե առաքյալի վանքինը, ուր թաղված է Աղվանքի Վաչագան թագավորը։ 1961 թ. արշավախմբի հետ եղել ենք «Թափի եղցի» և մանրամասնորեն ուսումնասիրել բոլոր հուշարձաններն ու արձանագրությունները։

նից (Ստ. Օրբելյան պատմագրի խորթ եղբայրը՝ մոր կողմից):

Ջալալ Օրբելյանը ամուսնացած էր Իվանե Զաքարյանի աղջկա՝ Գոնցայի հետ։ Վեդիի շրջանում այդ դարաշրջանից մնացած հուշարձանները և այժմ մեզ առանձնապես հետաքրքրողը՝ Ջինջիրլու գյուղի մոտ գտնըվող ս. Կարապետի վանքի շինությունները, կառուցվել են Օրբելյան այս ճյուղի հիմնադիրների կողմից։

Ս. Կարապետի վանքը բաղկացած է եղել մի շարք շենքերից. գլխավոր տաճարը՝ Սպիտակավոր աստվածածին անունով և երկու այլ անջատ շենքեր, որոնցից մեկի միայն հարավային և արևելյան պատերն են մնացել, իսկ մյուսը՝ փոքր քառակուսի մի շենք է երկհարկանի, ներքևի մասում կոփածո քարերով և վերևում սրբատաշ, կտուրը փլած[1]։

Մեր նյութի համար կարևոր է Սպիտակավոր Աստվածածին կոչվող տաճարը, որն իր պատերի վրա պահել է թե՛ ճարտարապետի, թե՛ քանդակագործի և թե՛ արձանագիր-գրչի անունները։

Այս եկեղեցին XIII դարին հատուկ, գմբեթավոր շենք է, մաքուր սրբատաշ քարով շինված. դուռը արևմուտքից է, դեկորատիվ ձևավորված, ճակատաքարին և ավելի վերևում սրբապատկերների քանդակներով զարդարված. շինարարական արձանագրությունը գտնվում է ներսում, հարավային պատի վրա. այն արված է Ջալալի կնոջ Գոնցայի անունից 1301 թ. տասը տողով, մոտ 3,5 մետր երկարությամբ[2]։

Արձանագրության մեջ Ջալալ Օրբելյանի կին Գոնցան մանրամասն թվարկում է այն բոլոր գյուղերի անունները, որոնք նվիրել է իր նորաշեն վանքին և սույն իր համար սահմանված պատարագները։ Արձանագրությունը փորագրել է Տիրացու գրիչը։ Շինարարությունը կատարվել է Կիրակոս վարդապետի հսկողությամբ, որ և վանքի առաջին վանահայրն է։ Իշխանական այս տոհմը դարաշրջանի սովորության համեմատ շինել է այս հուշարձանները, որպես իր տիրույթի հոգևոր կենտրոն և տոհմական տապանատուն։

Շինարարական մի երկրորդ արձանագրություն էլ գտնվում է աբսիդի հյուսիսային պատին, անթվական. այն գրված է Կիրակոս վարդապետի անունից, որը հիշատակված է առաջին արձանագրության մեջ և որին Գոնցան անվանում է «Ի ձեռն բաց հոգոյ սրբոյ մեր Կիրակոս վարդապետին»։ Կիրակոս վարդապետը, որպես վանքի վանահայր, իր արձանագրության մեջ թվում է իրեն և վանքին տված նվերների մասին։

Երկրորդ շենքը իշխանական տապանատունն է, որի մասին հիշվում էր Գոնցայի շինարարական մեծ արձանագրության մեջ։ Կանգուն են այժմ միայն արևելյան ու արևմտյան պատերը և հյուսիսային ու հարավային մասերը, կտուրն ամբողջովին փլված է։

Սա քառակուսի մի շենք է առանց աբսիդի ու սեղանի։

Շինարարական արձանագրություն չունի. արևելյան պատին, ներսում, գրված է Ջալալի ու Գոնցայի որդի Եսիկումի արձանագրությունը, որի մեջ հիշատակված են այս տապանատանը նվիրված կալվածները։ Գրված է 1346 թվականին[1]։

Երրորդ շենքը անթվական ու անարձանագիր է. գրականության մեջ երբեմն անվանվել է զանգակատուն։ Սա փոքր, քառակուսի և բրգանման մի շենք է, ըստ երևույթին կանգուն ժամանակ եռահարկ է եղել, այժմ մնում են երկու հարկերը, ներքևինը լցված է փլած բեկորներով, սրա վրայինը ունեցել է աբսիդ, որը հիմնական շենքից դուրս, տապանատան կարին է շինված։ Երրորդ հարկն, ինչպես երևում է, սյունազարդ է եղել, սյուների մի քանի բեկորներ թափված են շուրջը։

Բոլոր շենքերը շինված են տեղական սպիտակավուն քարից, շինարարական ձևերով և ճարտարապետական ոճով իրար խիստ նման և նույն ճարտարապետի ձեռքի գործեր են։

Այս վանքը մեր նյութի համար առանձնա-

---

[1] Այս վերջին երկու շենքերին Գ. Հովսեփյանը, ժողովրդից առնելով, կոչում է «զգեստատուն և զանգակատուն» անուններով, որ կասկածելի է. տե՛ս նրա „Потомство Тарсаича и Мина Хатуны", „Христианский Восток", т. II, вып. II, 1913, стр. 235.

[2] Արձանագրությունը տե՛ս Գ. Հովսեփյանի նշված աշխատության մեջ։

[1] Արձանագրությունը տե՛ս Գ. Հովսեփեան, Անդ, էջ 243։

կի նշանակություն ունի այն պատճառով, որ երեք կարգի վարպետների անուններ է պահպանել. ճարտարապետ Բուտի, քանդակագործ Սարգիս վարդապետի և Տիրացու գրչի: Այս երևույթը ցույց է տալիս միջնադարում շինարարական աշխատանքի և մասնագիտությունների բաժանման փաստը, այն էլ այնպիսի վայրում, որը մի փոքրիկ իշխանական տոհմի կալվածք էր միայն:

Վարպետ Բուտի հիշատակ-արձանագրությունը գտնվում է եկեղեցու ներսում, հարավային պատին հղկված քառակուսի կիսասյան արևմտյան երեսին՝ 5 տողով.

1. Ի ՏԱԻՆԻ ՍԲ ԳՐԻԳՈՐԻ
2. ։Ա։ ՊԱՏԱՐԱԳ ԲՈՒՏ
3. ՎԱՐՊԵՏԻՆ, ԺՐԱՋԱ-
4. Ն ԱՃԽԱՏՈՂԻՆ
5. ԿԱՏԱՐԻՋՆ Ա(ԻՐ)ՀՆԻՆ ԱՅ[1]:

Վարպետ Բուտն անկասկած շենքերի ճարտարապետն է: Նկատի ունենալով այն, որ նրա համար հատուկ արձանագրություն է գրվել, պատարագ է հատկացվել և կոչվել է «ժրաջան աշխատող», պիտի ենթադրել, որ նա երկար է աշխատել իշխանական այդ տոհմի համար և արդեն ճանաչված ու հեղինակություն վայելող վարպետ է: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ արձանագրությունը գրված է ոչ թե Բուտի, այլ մեկենասների անունից, որով ավելի է շեշտվում նրան գնահատելու հանգամանքը:

Շինարարական աշխատանքները ղեկավարել է Կիրակոս վարդապետը, որին Գոնցան իր արձանագրության մեջ անվանում է «հոգու որդի», իսկ իր, Կիրակոսի արձանագրության մեջ վերջինս Գոնցային և Ջալալին անվանում է իր «պարոնները»:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այս հուշարձանի վրա նկատվող հետևյալ եզակի երևույթը. հուշարձանի գմբեթն ունի աշխարհագրական չորս կողմերի վրա բացվող նեղ ու երկար լուսամուտներ, դրանցից յուրաքանչյուրի կողքերին սղումներով գրված են հուշարձանի շինարարությանը մասնակցած մեկենասների և վարպետների անունները. այսպես՝ արևելյան լուսամուտի կողքերին:

ԿՍ. ԲՏ. այսինքն՝ Կիրակոս, Բուտ. հարավայինի՝

ՋԱԼ ԳՑ — այսինքն՝ Ջալալ — Գոնցա հյուսիսայինի՝

ՏԻ ՅՃ այսինքն Տիրացու յիշեցէք.

Արևմտյանի վրա եղածները անընթեռնելի են:

Շատ հետաքրքիր է, որ իշխան մեկենասների, վանքի առաջնորդ և շինարարության վերակացու Կիրակոսի անունների կողքին, նույնպիսի նշանավոր տեղում քանդակվել է վարպետ Բուտի և գրիչ Տիրացուի անունները:

Այդ կրճատ անունների տառերը շատ գեղեցիկ են և այնպես են տեղադրված պատուհանների շուրջը, որ փոխարինում են զարդերին:

Ավարտելով այս հատվածը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այս հուշարձանների և՛ ճարտարապետական, և՛ զարդաքանդակների ոճն ու տեղադրությունը մեծ նմանություններ ունեն Ամաղու Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու հետ, որը կերտել է Մոմիկ վարդապետը: Հավանական է, որ այս հուշարձանների վրա աշխատած ճարտարապետն ու մյուս վարպետները մարզված են Օրբելյանների հոգևոր կենտրոն Նորավանքում՝ իրենց մասնագիտությունների մեջ և բերվել են այստեղ, այս շինարարությունը կատարելու համար ճիշտ այնպես, ինչպես շենքի մեկենասներ Ջալալն ու Գոնցան ևս եկել են Օրբելյանների բուն տիրույթից (ալբոմ, նկ. 40):

38. ԿԻՐԱԿՈՍ

Մանազկերտ քաղաքը գտնվում է պատմական Հայաստանի Ապահունիք գավառում և մեկն է հնագույն բնակավայրերից:

Քաղաքը եղել է պարսպապատ և ամրացված բուրգերով, ըստ տեղեկությունների ունեցել է հինգ հսկայական դռներ՝ արևելքից, արևմուտքից, հարավից և երկուսը հյուսիսային կողմից, որոնց մնացորդները երևում էին մինչև վերջերս էլ:

Կիսականգուն բուրգերից հինգի վրա ներկառվել են ճերմակավուն քարերից ագուցված կես մետրաչափ մեծության սալեր, որոնց վրա եղել են արաբատառ արձանագրություններ, իսկ հյուսիս-արևելյան կող-

[1] Գ. Հովսեփյան, Անդ, էջ 241:

մի բուրգերից մեկի սալաքարի վրա եղել է հայերեն հետևյալ արձանագրությունը, որը և շինող ճարտարապետի հիշատակարանն է.

Ի թվականիս հայոց ։ՉՁԳ։ (=1334) կանգնեցաւ բուրգս ձեռամբ Կիրակոսին. Աստուած ողորմի[1]։

39. 40. ՄԵԾՈՓԱ ՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ

ԺԵ դար

Տուրուբերանի Աղիովիտ գավառի Ականց ավանի մոտ է գտնվում այս վանքը, որը XIV դ. վերջերին և XV դարի սկզբներին սերտորեն կապված էր Սյունյաց նշանավոր գործիչներ Որոտնեցու և Տաթևացու դպրոցների հետ և կուլտուրական դեր էր կատարում հատկապես Հովհաննեսի և պատմագիր Թ. Մեծոփեցու վանահայրության ժամանակներում։

Վանքի սկզբնական հիմնարկության և շենքերի մասին տեղեկություններ չկան։

XIV դարի վերջերում Քաջբերունիքի Ջարիշատ գյուղի Ներսես քահանայի որդի Հովհաննես անունով պատանին աշակերտում էր Մեծոփա վանքում՝ Նահապետ քահանայի մոտ։ Նախնական կրթությունն ավարտելով և քահանա ձեռնադրվելով չի բավականանում այդ ուսումնածարավ երիտասարդը և որովհետև մոտակայքում ավելի բարձր դպրոց չկար, մեկնում է այդ ժամանակ Սյունիքում և ամբողջ Հայաստանում հռչակ հանած Հ. Որոտնեցու մոտ, ուր 12 տարի աշակերտելով նրան՝ Ապրակունիսի վանքում, Որոտնեցու հաջորդ Գ. Տաթևացուց վարդապետական կոչում ստացավ, վերադարձավ Մեծոփա վանքը և ծավալեց կրթական ու շինարարական գործունեություն։

Հովհաննես վարդապետը որոշել էր իր վանքում մի փառավոր եկեղեցի շինել, բայց Լենկթեմուրի արշավանքների հետևանքով, երկրում ստեղծված անորոշ դրությունը կասեցնում է նրա մտադրությունը։ Միայն 1402-ին նա հավաքում է բազմաթիվ վարպետ-ճարտարապետների և հիմնադրում մի գեղեցիկ եկեղեցի, որի շինարարությունը տևում է յոթ տարի և ավարտվում 1409 թվականին։

Հովհաննես վանահոր շինել տված եկեղեցին կոչվում է ս. Աստվածածին. շինության մասին գոյություն ունեն թե՛ շատ ընդարձակ արձանագրություն՝ գրված եկեղեցու արևմտյան պատի վրա, և թե՛ Հովհաննեսից հետո՝ վանքի վանահայր, պատմագիր Թ. Մեծոփեցու տեղեկությունները, իր «Պատմության» մեջ։ Այդ տեղեկությունները ստուգապատում են, մեկը մյուսին լրացնող, և, որ կարևոր է, պահպանել են շենքի ճարտարապետների անունները։

Շինության ընդարձակ արձանագրությունն արտագրել է Փիրղալեմյանը 1860 թվականին, որից հետո ոչ մի ուրիշ ուսումնասիրողի մոտ չկա, այն չի արտագրել իր Վիմական տարեգրի» մեջ նաև Կ. Կոստանյանցը։ Նկատի ունենալով միակ աղբյուրի հազվագյուտ լինելը, մենք այն մեջ ենք բերում ամբողջությամբ։

Թուին ՊԾԸ ես Յովհաննէս վարդապետս վերջինս եկեղեցւոյ և առաջնորդ սատուածածնեան սուրբ ուխտիս Մեծոփայ՝ միաբանութեամբ ամենայն եղբարցս ապաստան եղեալ ի նոյն, որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ շինեցաք զսուրբ տաճարս Մարիամայ Աստուածածնին, յիշատակ հոգւոյ իմոյ մեղաւորիս և ծնողացս կրկնակի (հոգևորի և մարմնաւորի), և որք մասն ինչ տրօք նուիրեալ են ի սուրբ եկեղեցիս։ Արդ յերես անկեալ աղաչեմ մանկացդ Սուրբ Սիոնին՝ որք ընծայէք զսուրբ հացն կենաց յիշեսջիք զմեզ առաջի անմահ Գառին Յիսուսի Քրիստոսի. զի և ձեզ յիշողացդ. և մեզ յուսացողացս, և համօրէն միաբանիցս առհասարակ աշխատաւորացս ողորմեսցի Քրիստոս Աստուած։ Ի կաթողիկոսութեան տէր Յակոբին. ի վարդապետութեան (Հայոց) քաջ հռետորին Գրիգորի Տաթեւացւոյն. յորմէ ազատեցաք ի կապանաց և անիծիցն Աղթամարայ։ Ի թագաւորութեան Լանկթամուրին հիմնարկեցաւ. և ի պարոնութեան (Ղարայ Ոսուֆին) աւարտեցաւ ձեռամբ Ուստա (ուստա, վարպետ ճարտարապետ) Յարանին, Ատոմին, Սիրունին. Դաւթին, Տիրատրուն, Մրկրտչին, Յովհաննէսին, Յովսեփին, Ղազարին. Ատոմին, Մարտիրոսին, Ջաֆար բէկին.

---

1 Գ. Վ. Սրուանձտեանց, *Թորոս աղբար, Բ, 278, Կ. Պոլիս, 1879*։ Մ. Միրախորեան, *Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի, մասն Գ, էջ 53—54, Կ. Պոլիս, 1885, հեղինակը թվականը դնում է ։ՇՁԳ։=1134 թ., ստուգել անհնարին է։*

կիրակոսին և այլ ամենայն աշակերտաց նոցին[1]։

Թ. Մեծոփեցին եկեղեցու շինության մասին հաղորդում է հետևյալը.

Այր մի ի գնրուբենէ Թամուրին, ազգաւ Հոռոմ Ֆարաջ անուն եկեալ էր ի Մերդին քաղաքէ՝ յոյժ իմաստուն և ճարտար շինող։ Ցղեաց և կոչեաց զնա և սկիզբն արար շինութեան սուրբ եկեղեցոյն յանուն Զաղարային. յորմէ ամենայն եկեղեցիք Հայոց և նիմանէ քակեալ լինէին :ՊԾԱ: Ամին սկսաւ և ի :ՊԾԸ: ամին աւարտեցաւ յեօրն ամին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ամէն[2]։

Վերջապես մի երրորդ կարճ տեղեկություն էլ վանքի նորոգումների սկզբնավորման մասին, արձանագրված է եկեղեցու պատին.

:ՊԾԱ: (=1402 թ.) սկիզբն նորոգութեան վանուցն Մեծոփայ, ձեռամբ Յովհաննէս վարդապետի, Բարեջան վանահօր տեղւոյն[3]։

Ամփոփելով այս տեղեկությունները, ստացվում է հետևյալը.

1. որ 1402 թ. սկսվել են եղած շենքերի վերանորոգման աշխատանքները ու միաժամանակ հիմք է դրվել նորաշեն ս. Աստվածածին եկեղեցուն։

2. Շինարարությունն ավարտվել է 1409 թ. և, ինչպես հաղորդում է Թ. Մեծոփեցին, այդ նույն տարին իր աշակերտների հետ միասին Մեծոփ է եկել «Վարժապետն Գրիգոր» (Տաթևացին — Ս. Բ.), և տեղի է ունեցել հանդիսավոր օծումը[4]։

Մեծոփա վանքի մասին եղած այս տեղեկությունների մեջ կարևորն ու եզակին այն է, որ հիշատակված են 13 ճարտարապետ-վարպետների անուններ և ընդհանուր ձևով, նաև «ամենայն աշակերտաց նոցին»։ Միջնադարյան կառուցումների մասին եղած ոչ մի աղբյուրում այդքան վարպետների անուններ միաժամանակ չեն հիշատակվում։ Այս տեղեկությունները պարզում են, որ բացի գլխավոր ճարտարապետից շենքերի վրա աշխատել և կարևոր դեր են կատարել նաև նրա օգնական այլ վարպետները, բացի սովորական բանվորներից, որոնք այս դեպքում անվանված են «աշակերտներ»։

Ըստ այս տեղեկությունների Մեծոփի վանքի գլխավոր ճարտարապետը եղել է ազգով հույն Ֆարաջը, որը Լենկթեմուրի գերությունից ազատվել էր և գտնվում էր Մերդին քաղաքում, որտեղից նրան Հովհաննես վանահայրը բերել է տալիս և գլխավոր կարգում մյուսների վրա, որպես «յոյժ իմաստուն և ճարտար շինող»։ Այս վկայությունը պարզում է Զվարթնոցի պատերին եղած տասնյակ վարպետների քանդակների և Բարդուղիմեոսի վանքի 4 քանդակների իրական իմաստը։ Այդ քանդակները ոչ թե գեղարվեստական համաչափությունը պահպանելու համար են այդքան շատ թիվ կազմում, այլ պատկերն են իրականության և գլխավոր վարպետների թվի։ Բայց և ինչպես Մեծոփի 13 անունների մեջ Ֆարաջն է հիշատակված որպես գլխավոր ճարտարապետ, այնպես էլ Զվարթնոցի վարպետների մեջ իր տարազի և անվան հիշատակումով պարտավոր ենք Յոհանին համարել գլխավոր ճարտարապետ։

Մեծոփի վանքի ինչպես ավելի հին, այնպես էլ ս. Աստվածածին եկեղեցու ճարտարապետության մասին դժբախտաբար նորագույն ոչ մի ուսումնասիրություն, անգամ համառոտ նկարագրություն չկա։ Ինչպես Արևմտյան Հայաստանի հուշարձանների ճնշող մեծամասնությունը, այնպես էլ այս կարևոր հուշարձանը մնացին գիտության համար կորած գանձեր։

41. 42. Ս. ՀԱԿՈԲԻ ՎԱՆՔԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ

(Գրիգոր, Հոհաննես և Հովհաննես)

Վասպուրականի Ռշտունյաց գավառում, Ընձաքիսար լեռան փեշերի վրա Ընձակ գյուղի մոտ է գտնվում ս. Հակոբա վանքը։ Վանքի ներկա շենքերն են՝ եկեղեցին, երեք մատուռներ և օժանդակ շենքեր, շրջապատված պարսպով։ Եկեղեցին շինված է կոփածո քարերով, ներքուստ ունի խաչաձև հատակագիծ, կամարակապ մասերը և բեմի մասը սրբատաշ քարերով է շինված. մեծությունն է 10×6 մետր։

Գրավոր ու բերանացի ավանդությունները վանքի հիմնադրումը հասցնում են «յա-

[1] «Նոտարք», էջ 30, պահպանում ենք հեղինակի ընագիրը նույնությամբ — Ս. Բ.։

[2] «Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմայ վարդապետի Մեծոբեցւոյ», Պարիս, 1860, էջ 58—59

[3] «Նոտարք», 16։

[4] Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 59։

ռաչ էր լեալ քան զհայ Թուականը», բայց XV դարի սկզբին նա արդեն կիսավեր էր և 200 տարի անմարդաբնակ։

Այդ ժամանակ Որոտնեցու աշակերտներից մեկը, Փիր Ստեփանոսը (Փիր մականունն է), որ բնիկ Ոշտունցի էր, Բախվանից գյուղացի, երկար ժամանակ թափառիկ քարոզչական գործունեությունից հետո իր շուրջը համախմբած մի խումբ կրոնավորներ, հաստատվում է ս. Հակոբա կիսավեր վանքում և ձեռնարկում նրա վերակառուցման աշխատանքներին։

Փիր Ստեփանոսի գործունեության և ս. Հակոբա վանքի վերակառուցման աշխատանքների մասին տեղեկություններ գրվել են մի ձեռագիր Մաշտոցի մեջ, հիշատակարանի ձևով՝ Մինասենց Թոման, Աղթամար կղզում. գրիչը դեպքերին ժամանակակից է և մանրապատում ու արժանահավատ տեղեկություններ է հաղորդում։ Այդ հիշատակարանը առաջին անգամ արտագրել և հրատարակել է Փիրղալեմյանը։

Բերում ենք վանքի վերանորոգումների մասին եղած հատվածը.

...Ի բազում ժամանակաց աւերակ լեալ՝ և անմարդաբնակ և սկիզբն առնեն շինութեան տեղւոյս և յաջողութեամբն Աստուծոյ ժողովեն ի տեղիս և այլ կրօնաւորք և աշխարհական գործաւորք վաստակս... և շինեն զվանքս ծաղէ ի ծաղ. նորոգեն կոմ՞դրոշէն և կրամած զՍուրբ Յակոբայ գումբէթս. որոյ նախարարապետ և շինող էին սրբասէր կրօնաւորքն՝ Գրիգորն և Յոհաննէսն և Հոհաննէսն, որք մաքրական վարուք զկենի ամաց ինչ անցելոյ փոխեցան յաշխարհէս...»[1]:

Հիշատակագիրը վանքի եկեղեցին անվանում է «գումբեթաձև և եկնանման»։

XIX դարի կեսերին վանքն այցելած Սարգսյանը երկու խոսքով հիշատակելով վանքի նախկին հռչակն, ավելացնում է. «Այլ արդ մի յանշուք վանորէից է, շինուածքն ամենևին ոչինչ յախորժակաց, մթին և անմաքուր»[2]։

Նորագույն հետազոտողներից միայն Լալայանն է եղել այնտեղ, որը մի քանի նկարագրական խոսք ունի միայն և վանքի ընդհանուր տեսարանը պատկերող մի լուսանկար[1]։

1 Փիրղալեմեան, Նօտարք, 138։

2 Սարգսեանց, Տեղագրութիւն, 251։

43. ՆԵՔԱՄԱՏ ՎԱՐԴԵՏ

Այս նշանավոր ճարտարապետի անունը սերտորեն կապված է միջնադարի նշանավոր կուլտուրական գործիչ և արվեստագետ Մկրտիչ Նաղաշի անվան հետ։

Մկրտիչ Նաղաշը ծնվել է Բաղեշի Պոռ գյուղում, քահանայի ընտանիքում. փոքր հասակից հակում ու սեր է ունեցել դեպի գիտությունն ու արվեստը. գրեթե պատանի հասակում (16 տարեկան) կորցնելով կնոջը դառնում է կրոնավոր և փոխադրվում Ամիթ քաղաքը 1430 թվականին։

Մկրտիչ Նաղաշը հայտնի է որպես գրիչ, մանրանկարիչ և բանաստեղծ «ամենայն արհեստից (իմա արվեստից — Ս. Բ.) ճարտարապետ»։ Որպես բարձր կուլտուրայի տեր արվեստագետ, նա չափազանց համեստ և հեզաբարո բնավորություն է ունեցել։ Այս բոլոր բարեմասնությունները նրան սիրելի են դարձրել ժողովրդին։ Դառնալով ընդարձակ գավառների առաջնորդ, Մկրտիչ Նաղաշը ծավալում է լայն շինարարական աշխատանքներ. 1433-ին հիմնարկում է Արղնիի բարձր բերդի գլխին բարձրահայաց ս. Աստվածածին վանքը, 1439-ին սկսում է նորոգել Ամիթի ս. Թեոդորոս եկեղեցին ու նրա վրա կանգնեցրել մի շատ գեղեցիկ կաթողիկե, որի շինությունը տևել է մեկ տարի և այլ ուրիշ շենքեր։

Մկրտիչ Նաղաշն իր շինարարական գործունեության ասպարեզում հանդիպեց իր նման մի բարձրարվեստ ճարտարապետ-արվեստագետի, Նեքամատին, երկու արվեստագետների մտահղացումները ճարտարապետության բնագավառում իրականացնում էր Նեքամատը։ Ըստ երևույթին Նեքամատի ամենափայլուն կոթողն է եղել Ամիթի եկեղեցին և հատկապես նրա վրա կանգնեցրած հրաշափառ կաթողիկեն, որի համար հիշատակարանի հեղինակը գրում է.

«Դ (4) ամ մարտիրոսական արյան է հեղի յիշումն սուրբ եկեղեցւոյն և ատարեալ կատարեաց զգմբեթաւորն յօրինուածովք, անասելի ու անպատմելի գեղեցկութեամբ,

1 «Ազգ. Հանդ.», XXI, 49—51։

զի գլուխ գմբեթին բարձր էր քան զմնարայիցն և Ը ու Ժ (18) անկիւնի ճոխուցեալ և Ը ու Ժ (18) լուսամուտս ի գմբեթին, և բարձրութիւն լուսամուտին՝ ի չափ մարդոյ, և ո՛չ կարէ ընդ գրչաւ արկանել զզանազան յաւրինուածս գմբեթին վայելչութեան»:

Սակայն երկու նշանավոր արվեստագետներին չէր վիճակված երկար վայելել իրենց ձեռակերտի ավարտման հաճույքը: Քաղաքի մահմեդական մոլեռանդ բնակչությունը նախանձելով այդ շենքի գեղեցկության և մանավանդ այն բանին, որ նա ավելի բարձր էր քան մզկիթների մինարեները, դիմում են Փարսից, Եգիպտոսի և «Հոռոմոց» տան սուլթաններին ու պահանջում քանդել եկեղեցու գմբեթը. ոչ Ամիթի տերերի նախկին համակրանքը Նաղաշի հանդեպ և ոչ էլ մեծամեծ կաշառները չեն օգնում, և այդ մեծարվեստ գմբեթը քանդվում է:

Նաղաշի արվեստագետ հոգին չի դիմանում այդ ծանր վշտին. նա թողնում է Ամիթը և հեռանում Պոնտոս, Կաֆա և ի վերջո Պոլիս:

Մի քանի տարի հետո մահանում է Ամիթի տեր Համզան և նրա տեղն է նստում Ջհանգիրը, որի օրոք Նաղաշը կրկին վերադառնում է իր սիրած Ամիթ քաղաքը և նոր եռանդով ձեռնարկում կիսավեր եկեղեցու վերանորոգման աշխատանքներին. որը և ավարտվում է 1447 թ. օգոստոսի 6-ին «ձեռամբ վարպետ Նեքամատին»:

Նեքամատի կենսագրությունից հայտնի է, որ նրա պապը կոչվել է Մերկեռ և տատը Մինասթեր, որոնք ունեցել են մի որդի՝ Ավագ քահանա: Ավագ քահանան գրքի և գրչության սիրահար էր: Նա երկրորդ ստացողն է Կարնո Կան գյուղում 1283 թ. գրված չքնաղ ավետարանի և Ստեփանոս գրչին մի մեծ ճառընտիր գրել տվողը (Վիեննայի № 1 և 2): Այս տեր Ավագի և իր կին Մամախաթունից ծնվել են երեք որդիներ՝ Քարիմ, Նեքամատ և Քիմիլ, որոնցից Նեքամատը դարձավ նշանավոր ճարտարապետ և Մկրտիչ Նաղաշի արժանավոր գործակիցը[1]:

[1] Լ. Խաչիկյան, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 629—631, Երևան, 1955, նաև՝ «Արարատ», 1898, էջ 44—48:* Ալիշան, *Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 574:* Ակադ. Հ. Աճառյան, *Անձնանունների բառարան, Ա, 322 և 324 և Գ. էջ 324:*

44. ՅԻՍԱՅ ՎԱՐՊԵՏ

Այս բազմարդյուն ճարտարապետն ստեղծագործել է Հալեպ քաղաքում: Նրա մասին հիշատակություններ են մնացել Հալեպի ձեռագրերի հիշատակարաններում: Այսպես՝ մի Հայսմավուրքում, գրված Զեյթուն բերդում (Կիլիկիա) 1536 թ., որը ձեռք է բերվել և նվիրվել Հալեպի «Քառասուն մանկունք» եկեղեցուն, մանրամասն հիշատակված են այն մարդկանց անունները, որոնք մասնակցել են Հայսմավուրքը ձեռք բերելու գործողությանը (հավանաբար գնման միջոցով). այդ մարդկանց մեջ է նաև՝ «Ջռայիս Յեսայն և զիւր կենակիցն զՇահ լին»[1]:

Հալեպի Քառասուն մանկանց եկեղեցին ունի մի հնագույն սեղան, որը նորոգվել է 1499 թ. վարպետ Յիսայի կողմից, որ կոչված է Հռոմկլայցի[2]*: Այս առաջին հայտնի շինությունից հետո Յիսային, ինչպես երևում է, շինարարական մեծ գործունեություն է ծավալել և հռչակավոր ճարտարապետի համբավ վաստակել ոչ միայն տեղական հայկական համայնքում, այլև քաղաքի այլացեղ ժողովուրդների մեջ:*

Այս հանգամանքն իր արտահայտությունն է գտել Հալեպի № 71 ձեռագիր գանձարանի մի հիշատակարանում գրված 1500 թ.: Հիշատակագիրն իրեն անվանում է Մովսես վարդապետի ծառա (իր անունը չի գրում), և ասում է, որ Երուսաղեմ գնալիս «եկեալ հասաք տունըս Շամյան, Հալապ քաղաք ի շահաստան. հանդիպեցաք ուրախութեան. և ցնծառար հոգւոյ լրման. զի նոր շինեաց էր սբ. Խորան յանուն սրբոց Խ (40) մանկան: Այլև զխորանն Մարանեան. նոյնպես զազգին ըզհոռոմեան, զորքս շինեալ էր զամենայն ածասէր ըռայիս Յիսայն: Այլ և խըցեր հանգըստարան, ի գալ հիւրոցն ատարական զի հանգիցեն խաղաղական հանդերձ գրաստիւքն իւրեանց որ կան: Շինեաց դարպաս թագւորական, որ ժամատեղ էր ամառն քահանայից տեղ էր հանգստեան զի վայելեն խաղաղական: Ած պահէ զպարոն Յիսայն, զինքն և ըզկիւրքն զամենայն, որք ի

[1] Արտ. արք. Սուրմէեան, *Ցուցակ ձեռագրաց Հալեպի ս. Քառասունք եկեղեցւոյ և մասնաւորաց, էջ 340ր, Երուսաղեմ, 1935 թ.:*

[2] Սուրմէեան, *Պատմութիւն Հալեպի ազգային գերեզմանատանց, էջ 27 (կազմված առաջինի հետ):*

յայժմուս կենդանի կան, որք ննջեցին ի հող տապան[1]: (Հիշատակարանը ոտանավորով է):

45. ԳՐԻԳՈՐ ՈՒՍՏԱ

ԺԷ. Դար.

Ղափանի շրջանի Ուժանիս գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, լեռնալանջի հարթության վրա գտնվում է հին Ուժանիս գյուղատեղին: Գյուղատեղու ավերակների մեջ կա մի թաղածածկ եկեղեցի, որի ծածկի միայն արևմտյան մասն է փլված: Եկեղեցին շինված է, ըստ այս շրջանի սովորության, գրանիտի անտաշ կտորներով. սրբատաշ են միայն լավ ձևավորված մուտքը և բեմի երկու կողմերից բարձրացող և վերևվում կամար կազմող ոտքերը: Այս բավական ընդարձակ հուշարձանի պատմության միակ աղբյուրը մուտքի ճակատաքարին, արտաքուստ, գրված արձանագրությունն է, որն անշուշտ շինող ճարտարապետի կողմից է գրված և նրա անվան հիշատակությունն է պահպանել.

1. ԿԱՆԳՆԵ-
2. ԱՅ ՍԲ ՅԵԿԵՂԵ-
3. ՅԻՍ ՏՐ ԸՌԸՍՏԱԿ
4. ԷՄՆ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈ
5. ՅՆ ԻԻՐ ԵԻ ԾՆՕՂԱՅ ԻԻՐՈՑ:
6. ՅԻՇԵՑԷՔ ՈՒՍՏԱ ՋԳՐԻԳՈՐՆ Ի ՔՍ
7. ԹՎ(Ա)Կ(Ա)Ն ։ՌՀԸ։ (=1629) ՎԵՐՋ ԱՄԻՆ! ՇԱ˜ԿՊԱՋԻՆ

46. ՄՈՒՍԷՍ ՈՒՍՏԱ

Պատմական Արցախի Փառխոս քաղաքի ավերակներից դեպի հյուսիս-արևմուտք, Ջակամ գետի ակունքների շուրջը գտնվում են նույնպես մի քանի ավերակ գյուղեր, որոնցից Փոքր և Մեծ Ղարա Մուրադ կոչվածներում կան եկեղեցիների և գերեզմանատների մնացորդներ:

Մեծ Ղարա Մուրադում կան երկու եկեղեցիներ՝ կանգուն, դրանցից մեծը ներքուստ վեց սյուներով մի ընդարձակ և «հոյակապ» շինություն է: Ներսին խորանների ճակատների վրա պահպանված արձանագրությունների շնորհիվ վերականգնվում է եկեղեցու շինության պատմությունը:

Համաձայն շինարարական արձանագրության, եկեղեցին շինված է ոմն Զաքարեի, նրա ամուսին Խաթունջանի և ընտանիքի այլ անդամների ջանքերով և հիշատակին:

Հյուսիսային խորանի ճակատին մնացել է մի այլ արձանագրություն, որը բացի ընդհանուր մանրամասներից, պահպանել է նաև շինող ճարտարապետի անունը.

Շինեցաւ սուրբ տաճարս ձեռամբ անարժան Ջուղայեցի ուստայ Մուսէսին որդի Խտկարին զաւակ Սողոմոնին. հրամանաւն տէր Փիլիպոս կաթողիկոսին, եկի շինեցի սուրբ եկեղեցիս Ղարամուրադին, Հայոց թվին ։ՌՁԳ։ (=1634 թ.). ով կարդաք, ողորմի Մուսէսին յիշեցէք ի տէր. Աստուած ձեզ յիշէ. ամէն[1]:

Այս արձանագրությունը կարևոր է և նրանով, որ ցույց է տալիս Փիլիպոս կաթողիկոսի շինարար գործունեությունը, որն իր գահակալության հենց առաջին տարում, բացի Էջմիածնից, օժանդակում է նաև հեռավոր վայրերում կատարված շինարարություններին:

47. ԳՐԻԳՈՐ ՈՒՍՏԱ

Թուրք-պարսկական տևական պատերազմների հետևանքով Էջմիածնի վանքը և բոլոր հարակից շենքերն ընդհանրապես մեծ ավերածությունների էին ենթարկվել: Այդ պատերազմներից հետո, Մովսես Սյունեցի կաթողիկոսի օրոք սկսվում են վերանորոգման մեծ աշխատանքները և շարունակվում նրա հաջորդ Փիլիպոս կաթողիկոսի ժամանակ (1634—1656) էլ ավելի մեծ ծավալով:

Աշխատանքներն սկսվում են վանքի բակի օժանդակ շինություններից, որոնք գրեթե հիմնահատակ էին եղել: Բակի արևելյան կողմում հիմքից վերաշինվում են միաբանների կացարանները՝ քարաշեն և աղյուսաշեն, որոնց երկրորդ հարկը հարմարեցվում է վեհարանի: Արևմտյան կողմի կիսափուլ շենքերն էլ վերաշինվում են և ձևավորվում մի թաղակապ մեծ դարպասով, որը կոչվում է Տրդատի անունով: Փորվում են ստորերկրյա ջրանցքներ վանքը խոնավությունից փրկելու

1 Սուրմէեան, Ցուցակ, էջ 151ա: Հիշատակարանի մեջ միայն մի տեղ է կոչված «Վարպետ Յիսայ», 40 մանկանց խորանի առթիվ:

1 «Ազգ. Հանդ.», V, 326: «Արցախ», 309:

համար և այլն։ Այս բոլոր աշխատանքները, ինչպես երևում է, կատարվել են ուստա Գրիգորի ղեկավարությամբ, որին թույլ է տրվել իր շինած՝ Տրդատի դարբասի առաստաղի մեջ ագուցել մարմարե քար հետևյալ արձանագրությամբ.

Ուստա Գրիգոր ծառայ
Աստուծոյ Թ. ։ՌՁԸ։ (=1639)[1]

Նույն Փիլիպոս կաթողիկոսի օրոք են հիմնական վերանորոգումների ենթարկվել նաև Գայանեի տաճարը 1652 թ. և Հռիփսիմեի տաճարը՝ 1653 թ., բայց թե դրանց վրա էլ ուստա Գրիգորը աշխատել է, դժվար է ասել[2]։

48. ԳՐԻԳՈՐ ՈՒՍՏԱ

1937 թ. Երևան քաղաքի ամենահին հուշարձան՝ կաթողիկե փոքրիկ եկեղեցու շուրջը եղած նոր մասերը մաքրելու ժամանակ՝ ճարտարապետական դիտողությունների և մանավանդ բացված արձանագրական նյութերի հիման վրա հնարավոր եղավ պարզել և այդ նոր հավելումների ստույգ ժամանակագրությունը և դրանցից մեկի կառուցող ճարտարապետի անունը։

Նախ պարզվեց ստույգ կերպով, որ կաթողիկե փոքրիկ եկեղեցին կառուցվել է XIII դարում և առանց էական ձևափոխումների մնացել է կանգուն մինչև այժմ. ապա պարզվեց, որ նրա արևմտյան կողմից, մեկը մյուսի տեղ ժամատներ են կառուցվել՝ 1472, 1609, 1642 և վերջապես 1694 թվականներին դրանց փոխարինել է մի մեծ շենք՝ ժողովրդարան, որի համար հին կաթողիկեն օգտագործվել է որպես բեմ[3]։ Այդ ժողովրդարանի պատերը քանդելիս, հյուսիսային պատի կենտրոնական մասի, հիմնաշարքի միջուկի լիցքի միջից դուրս է եկել քարի մի բեկոր, որի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Խ(Ա)ՉՍ Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է
ՋՈՒՂԵՑԻ ՍՐ(Ա)ՊԻՈՆԻ ՈՐԴԻ
ՈՒՍՏԱՅ ԳՐԻԳՈՐԻՆ՝ ՇԻՆՈՂԻ
եկ(ե)ղ(ե)ց(ւոյս). թվ ։ՌՂԱ։=(1642 թ)[1]։

Թե ինչպիսին է եղել ուստա Գրիգորի կառուցած ժամատունը, այժմ ոչինչ հնարավոր չէ ասել, միայն թե պեղման աշխատանքները ղեկավարող Կ. Ղաֆադարյանը կարծում է, որ այն բավական մեծ պետք է եղած լինի, քանի որ ընդգրկել է կաթողիկեի մասերը հարավից և հյուսիսից, որի ապացույցն են կաթողիկեի պատերի այդ մասերում մնացած դաջածեփի մնացորդները։

49. 50. ԴԱՎԻԹ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՒՍՏԱՆԵՐ

Սյունիքի Երնջակ գավառի Ապրակունիս գյուղի մոտ է գտնվում Երնջակի ս. Կարապետ վանքը՝ շինված մեծ և լավ մշակված քարերով և աղյուսաշեն գեղեցիկ գմբեթով։ Ներքուստ նա ունի չորս սյուն և ավանդատներ։ Այս հուշարձանը ժամանակակից իմաստով ուսումնասիրված չէ։ Հնագույն տեղեկությունները հուշարձանի մասին 1381 թվականից են, ըստ որի, ոմն վարդապետ Մաղաքիա Ղրիմեցի նորոգել է այն և որից հետո այդ վանքը դարձել է նշանավոր կրթական կենտրոն, ուր որոշ ժամանակ աշխատել են Հով. Որոտնեցին և ապա Գրիգոր Տաթևացին։

XVII դարի կեսերին վանքն ապրում է ծաղկման նոր շրջան և այդ ժամանակ էլ թե՛ բուն եկեղեցին և թե՛ հարակից շենքերը ենթարկվում են նորոգումների։ Այդ ժամանակվա կառուցումների և նորոգումների մասին գրվել են արձանագրություններ խաչքարերի վրա և ամրացվել եկեղեցու արևմտյան պատին, բարձր տեղերում, պատուհաններից վեր։

Նորոգման աշխատանքները ձեռնարկել է Եսայի վարդապետ Մեղրեցին՝ Ղազար վարդապետի օժանդակությամբ։ Նրանք արևմտյան պատի լուսամուտներից վեր խաչքարի վրա գրել են տվել հիշատակ-արձանագրություններ, հետևյալ բովանդակությամբ։

---

1 Շահխաթունեանց, Ա, 87—88, Ա. Դավրիժեցի, գլ. ԼԷ։

2 Համեմատել՝ Մխիթարեան Աբ. եպ., Կաթողիկէ մայր եկեղեցի Վաղարշապատու, Վաղարշապատ, 1875, էջ 42—43։

3 Կ. Ղաֆադարյան, Երևանի կաթողիկեն և նորահայտ հուշարձանի վիմական արձանագրությունները, «Տեղեկագիր», ՀԽՍՀ Պատմ. և գրակ. ինստիտուտի, I, Երևան, 1938, էջ 184։

1 Կ. Ղաֆադարյան, Անդ, էջ 189։

Ա. Եսայի վարդապետ շինող թ. :ՌՃԴ: (=1655 թ.)

Բ. Եսայի և Ղազար վարդապետf շինող թ. :ՌՃԵ: (=1666)[1]:

Եսայի վարդապետի մի այլ հիշատակարան-խաչքար էլ ագուցված է եկեղեցու ներսում, բեմի ճակատին, բայց այս անգամ նրա կողքին ագուցված մի այլ ա. դպիսի խաչքար-հիշատակարան էլ վերաբերում է նորոգումները կատարած ճարտարապետին։

Աղաչեմ զձեզ հարf սուրբf զուստայ Դաւիթն յիշեցէf[2]:

Այս կարևոր նորոգումների մասին գրել են նաև գրչագրական հիշատակարաններ, որոնք շատ ավելի մանրամասնորեն են պատմում կատարված աշխատանքների բնույթի ու ծավալի մասին։

Գրչագրական այդ հիշատակարանների հրատարակիչ Վ. Հակոբյանը հետևյալ տեղեկություններն է հաղորդում ձեռագրի մասին.

«№ 745 ժողովածուի ընդօրինակությունից՝ 1607 թ. հետո, ուրիշները վերջինիս 193-րդ թերթի և սկզբի պահպանակի վրա ավելացրել են մի քանի տեղեկություններ, որոնք վերաբերում են 1654—1678 թթ. և արձանագրված են ժամանակակից տարբեր անձնավորությունների կողմից, հետևապես նրանք ստույգ են և վստահելի»[3]։

Առաջին պահպանակի վրա մեզ հետաքրքրող հուշարձանի մասին եղած հիշատակարանը հետևյալն է.

Ի թվականութեանս մերոյ :ՌՂ: և :Գ: (1644) արկաւ հիմն սուրբ Կարապետիս Երնջակայ և ի :ՌՃԺ: և Բ-ն (1663) աւրհնեցաւ ի խաչ Գիւտի աշնան եղանակին: Իսկ սրահն և գաւիթն ի :ՌՃԺ: և :Գ: (1664) ամին հիմնարկեցաւ, և :ՌՃԺ: և հնգին (1666) կատարեցաւ ի հոկտեմբեր ամսոյ :Ժ: (10) նաւասարդի Հայոց :Ե: (5): Աւարտեցաւ հարաւային կողման մեծ fոչfն ի թվին :ՌՃԺԴ: (1665): Ի ներfուստ հիմնարկաւ և ի թվին հազար :ՃԺ: և :Զ: (1667) կատարեցաւ հոկտեմբերի :ԺԵ: (15), նաւասարդի :ԺԱ: (11), ձեռամբ ուստա Յովանիսին[1]:

Ձեռագրի հիշատակարանի գրիչը միանգամայն վստահելի է, որովհետև ականատեսի և նույնիսկ աշխատանքներին մասնակցողի անմիջականություն ունի. թվում է շինարարական յուրաքանչյուր միավորի սկզբնավորման և վերջինի թվերը, նույնիսկ ամսաթվերը։

Հիշատակարանի և արձանագրությունների մեջ եղած թվականների տարբերությունները հեշտությամբ լուծվում են հիշատակարանում թված ընդարձակ նորոգումների ու նորաշեն միավորների ընդհանրության մեջ. ըստ հիշատակարանների այդ աշխատանքներն սկսվել են 1644 թ. և ավարտվել 1667 թ.։ Արձանագրությունները միայն երկու թիվ են տալիս՝ 1655 և 1666, դրանցից վերջինը՝ 1666-ը զուգադիպում է հիշատակարանում նշված սրահի և գավթի կառուցման աշխատանքների ավարտմանը։ Հետևապես եկեղեցին և նրա հետ սերտորեն կապված սրահն ու գավիթը ավարտվելու ժամանակ էլ Եսայի և Ղազար վարդապետները գրել և իրենց տեղում են հաստատել արձանագրությունները, իսկ մնացած այլ շենքերի մասին նրանք նոր արձանագրություն չեն գրել, կամ այդպիսին մեզ չի հասել։ Շնորհիվ ձեռագրի հիշատակարանի, պարզվում է օժանդակ շենքերի և նրանց շինող վարպետճարտարապետի անունը։ Արձանագրությունների և հիշատակարանի մեջ եկեղեցու մասին ասվում է. «շինվեց» կամ «արկաւ հիմն», բայց նկարագրողների դիտողություններից և վանքի մասին եղած պատմական տեղեկություններից պարզվում է, որ դրանք միայն նորոգումներ են եղել, գուցե հիմնական։

Զարմանալին այն է, որ ձեռագրական հիշատակարանում միայն ուստա Հովհաննեսի անունն է հիշատակված. սրա հավանական բացատրությունն այն է, ըստ երևույթին, որ ուստա Դանիելը սկսել է բուն եկեղեցու նորոգումները և այդ վերջացնելուց հետո, մեզ անհայտ պատճառով, չի մասնակցել ուրիշ աշխատանքների, իսկ գրչագրական հիշատակարանի գրիչը աշխատանքների ավարտման ժամանակ գրելով հիշատակարանը, հարկ է համարել միայն ուստա Հովհաննեսի

---

1 Սեդրակեան, *«Հնութիւնք»*, *էջ 16*։ Սմբատեանց, *Նկարագիր*, *4*։ Շահխաթունեանց, *Բ*, *319—320*։ Ալիշան, *Սիսական*, *379*։

2 Սմբատեանց, *Անդ*, *էջ 8*։

3 Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. էջ 389*։

1 Վ. Հակոբյան, *Անդ*, *էջ 395*։

անունը հիշատակել, որի ձեռքով ավարտվել են բոլոր աշխատանքները։

Մեջբերված աղբյուրներից երևում է, որ այդ ընդարձակ աշխատանքները տևել են 23 տարի, գլխավորությամբ Դանիել և Հովհաննես ուստաների։

51. ՏԻՐԱՏՈՒՐ ՄԵՅՄԱՐ

Ներքին Վարագ վանքը գտնվում է Վասպուրականում՝ համանուն լեռան արևմտյան լանջին, Վան քաղաքից ընդամենը հինգ կիլոմետր հեռու, դեպի հարավ-արևելք։

Վանքն իրենից ներկայացնում է բազմաթիվ շինությունների մի մեծ խումբ, բաղկացած յոթ եկեղեցիներից, երկհարկանի բնակելի շենքերից, պահեստներից, մառաններից, դպրոցական շենքից և ամուր պարսպից։

Պատմական աղբյուրների տեղեկությունների համաձայն նրա հիմնադրումը հասցրվում է մինչև Հռիփսիմյան կույսերի օրերին և Գրիգոր Լուսավորչին. սակայն եղած շինությունները՝ այժմյան վիճակում, այդ հնագույնները չեն, այլ հների հիմքերի վրա տարբեր ժամանակներում շինված հետագա շենքեր են, իսկ գլխավոր եկեղեցիների մի մասը, ըստ իրենց հատակագծային առանձնահատկությունների, յոթ և տասներորդ դարերի կառուցվածքներ են։

1648 թ. Վասպուրականում տեղի ունեցած մեծ երկրաշարժի ժամանակ, խիստ ավերածության է ենթարկվում և Ներքին Վարագ վանքը[1]։ Սակայն ձեռներեց վանահայր Կիրակոս վարդապետը այդ աղետից մեկ տարի անց եռանդուն աշխատանք է ծավալում, կազմակերպում է ժողովրդական հանգանակություն, գործի մեջ է ներգրավում Վան քաղաքի մի շարք հարուստների և միացյալ ուժերով կարողանում է հիմնականորեն վերաշինել կիսավեր շենքերը։

Վերանորոգման այդ բարդ աշխատանքները կատարվում են Մեյմար ճարտարապետ Տիրատուրի ձեռքով։ Վանքի ս. Գևորգ կոչված գավիթանման շենքի արևմտյան մուտքի ճակատին գրված է մի ընդարձակ արձանագրություն, ուր մանրամասն հիշատակված են նվիրատուների և վերանորոգման ենթարկված շենքերի անունները, արձանագրության վերջում խնդրվում է քրիստոնեից հիշել բոլորին՝

Եւ Մեյմար[1] Տիրատուրին[2]։

52. ՍՈՒԼԵՅՄԱՆ ՈՒՍՏԱ

Ներքին Ագուլիս գյուղի հյուսիս-արևմտյան ծայրում գտնվում են իրար կից երկու եկեղեցիներ. դրանցից առաջինը կոչվում է ս. Երրորդություն, կանգնած վեց կլոր սյուների վրա, ունի փոքրիկ գմբեթ։ Այդ եկեղեցու արևմտյան կողմում կա փոքրիկ գավիթ, որը համաձայն արձանագրության, կառուցված է 1650 թվականին, Հայրապետի որդի Աստվածատուրի և Եարղուլու միջոցներով[3]։

Շինարարական արձանագրության մոտ իր առանձին հիշատակարանն է գրել նաև կառուցող վարպետը.

Շինեցաւ ձեռամբ ուստա Սուլեյմանի.

53. ՆԱՎԱՍԱՐԴ ԱՌՆՋԵՑԻ

Հաղբատի հուշարձանների խմբի մեջ իր հնությամբ և ճարտարապետական արձանագրություններով նշանավոր է ս. Նշան կոչված եկեղեցին, որը հիմնվել է X դարում Խոսրովանույշ թագուհու կողմից։

Դարերի ընթացքում եկեղեցին ենթարկվել է մասնակի վերանորոգումների, այդպիսի մի կարևոր վերանորոգման կարիք է զգացվել XVII դարում, երբ եկեղեցին զգալի խախտումների էր ենթարկվել։ Այսպիսի նշանավոր կոթողի վրա կարևոր նորոգումներ կատարել, և այնպես որ ճարտարապետական հիմնական ոճի մեջ աղավաղումներ չմտնեն, պահանջվում էր մեծ վարպետություն։ Այդ ճարտարապետը Նավասարդ Առնջեցին էր, որն իր անունը կրկնակի ձևով հիշատակագրել է արձանագրության մեջ։

Արձանագրությունը գտնվում է եկեղեցու ներսում։

Ի թուին ՌՃ (=1651 թ.) ես քաղաքացի[4] խօջայ Բէհբուտս սուրբ Նշանիս հարաւային

1 Ա. Դավրիժեցի, Գլ. ԼԵ։

1 Մեյմար=ճարտարապետ (արաբերեն)։

2 Սարգսեան, 256—259։ Ե. Լալաեան, Ազգ. Հանդ., ԻԱ, 63։

3 «Ազգ. Հանդ.», XI էջ 313։

4 Քաղաքացի — այստեղ նշանակում է Թիֆլիսեցի։

կամարն վեր էր ընկել, շինել տվի. յիշատակ ինձ և ծնողաց իմոց. և կողակցին իմ. ամէն. շինեցաւ առաջնորդութեան Ս․․տիս արհիեպիսկոպոսին. շինեցաւ ձեռամբ Առնջէցի Նաւասարդին[1]:

Արձանագրության կողքին փակագրով կրկնված է.

«Առնջէցի Նավասարդ»:

54—57. ՍԱՐԳԻՍ ՈՒՍՏԱ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Սանահնի նշանավոր հուշարձանների խմբի մեծ մասը XVII դարի կեսերին կարիք է ունեցել վերանորոգումների: Վանքի առաջնորդ, ձեռներեց Սարգիս արհիեպիսկոպոս Արղության ձեռնարկել է այդ աշխատանքները և ավարտել 1652 թ., որի մասին և գրել է տվել ընդարձակ արձանագրություն, Աստվածածին եկեղեցու արևմուտքում գտնվող մեծ գավթի մեջ, կամարավոր պատի վրա:

1. Ի թվիս հայոց :ՌՃԱ: (=1652)

2. Ի բազաւորութի պարսից փոքրն Շահապազի և ի վրաց Բագրատունի Ռոստամ շահն —

3. շահի, և հայրապետութե(ան)ց տն Փիլիպոսի և Յակոբայ, և ամիրայութե(ան) Ղորխըմազ բէկին: Կամաւն Այ

4. Ես՝ Սարգիս Արհեպիսկոպոս, որդի Մելիքին, ազգէ Արղութին, ծառայ սբ ուխտիս, որ է սրբոց բնակարան.

5. Բագրատուն(ե)աց հանգստարան, հանդերձ միաբանաւք նորոգեցի ամենափրկիչն և

6. Սծածինն, զանգակատունն, սբ Գրիգորն,

7. նշխարայխուցն, ամէն[2]:

Սանահնի վանքի այս հինգ հիշատակված հուշարձանների նորոգումները կատարվել են ուստա Սարգսի գլխավորությամբ և նրա չորս աշակերտների՝ Հերապետի (Հայրապետ), Դավթի, Հեսուչի և Կարապետի օգնությամբ:

[1] Ռ. Բ. Երզնկեան, *Հնախօսական ․․եղագրութիւն*, էջ 45: Ջալալեանց, *Ա*, էջ 69:

[2] Ջալալեան Ա, *19*: Описание монастырей Ахпатского и Санаинского, архимандрита Иоанна Крымского, стр. 66, СПб, 1863.

Եթե Իշխան արհիեպիսկոպոս Սարգիսը զլացել է իր արձանագրության մեջ հիշատակել ճարտարապետ Սարգսի և նրա գործակիցների անունները, ապա այդ համեստ շինարարները՝ իրենց համար առանձին արձանագրություն գրելով, չեն զլացել հիշատակել նաև Սարգիս առաջնորդի անունը:

Միայն 1957 թ. հրատարակված այդ կարևոր արձանագրությունը գրված է վանքի մեծ գավթի մուտքի հյուսիսային կողքին, դեպի արևելք նայող պատին, արտաքուստ.

1. Սծ. ողորմի Սարգիս եպ(իս)

2. կոպոսին և ուստայ Սարգ(սին)

3. և աշակերտաց նորայ՝

4. Հէրապետին, Դավրին, Յէսու(ին)

5. Կարապետին: Յիշէցէf ի (տր)[1]:

Նորագույն ուսումնասիրությունները պարզել են ուստա Սարգսի և իր աշակերտների կատարած վերանորոգումներից հետևյալները.

1. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (շինված 1061 թ.), քանդել և հիմնովին նորից են շինել գմբեթը. ցածրացրել են շենքի ընդհանուր բարձրությունը կես մետրից ավելի, որի հետևանքով պատերի արտաքին երեսները զարդարող կամարների վերին մասերը վերացվել են:

2. Աստվածածին եկեղեցի (շինված X դարի առաջին կեսին), քանդել և հիմնովին վերաշինել են գմբեթը, փոխել են ծածկի սալաքարերը և բիվերի ձևավոր քարերը:

3. Գրատուն-Նշխարախուց (շինված 1063 թ.). վերանորոգվել են ծածկի սալաքարերը:

Արձանագրության մեջ հիշատակված նաև Ամենափրկիչ և զանգակատուն հուշարձանների վրա այդ նորոգումների ժամանակ փոփոխություններն աննկատելի են[2]:

58. ԱՂԻՂ ՎԱՐԴԵՏ

Հաղբատի վանքի մեծ Գավիթ-տապանատան կտուրը նորոգման է ենթարկվել XVII դարում. այդ աշխատանքները կատարել է

[1] Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը*, էջ 65:

[2] *Այս բոլոր տեղեկությունները առնում ենք Կ. Ղաֆադարյանի «Սանահնի վանքը» աշխատությունից, էջ 18, 33, 34:*

Ագիզ վարպետը. նույն գավթի հյուսիսային պատի վրա, պատուհանի գլխին գրվել է այդ մասին կարճ հիշատակարան.

Սիմէօն հայր և Տիրանուն Երէց շինեցաք զեկեղեցիս Սմբատայ և Գուրգենայ փրկութեան։ Ի թուին ։ՌՃԳ։ (=1654) նորոգեալ է տաճիս սուրբ ուխտիս, ձեռամբ Ագիզ ապաշխարողի[1]։

Ինչպես երևում է վարպետ Ագիզը կամ հայրապետի պիտի եղած լինի և կամ երկար ժամանակ վանքում աշխատած, որովհետև մահացել է հենց այստեղ ու թաղվել նույն գավիթ-տապանատան մեջ։ Նրա գերեզմանաքարը գտնվում է դռան մոտ այն շարքում, ուր թաղված են Աբաս թագավորը և ուրիշները. ունի հետևյալ տապանագիրը.

Տապան Ագիզի, որ նորոգեաց սուրբ ուխտս[2]։

59. ՇԱՀՆԱԶԱՐ ՈՒՍՏԱ

Ալավերդու շրջանի Ջանախչի և Աղքյորփի գյուղերի սահմանում, Խոշիկ անվանված հանդում գտնվում են բազմաթիվ ավերակների հետքեր, որոնք, ենթադրաբար, համարվում են պատմական Խորակերտ (նաև Խոռակերտ) քաղաքի մնացորդները[3]։

Այդ ավերակների մոտ մի անտառապատ բլրի վրա գտնվում է Խորակերտ վանքը՝ բաղկացած մի մեծ եկեղեցուց և մի գավթից, որի կտուրը փլված է։ Վատ պահպանված արձանագրություններից երևում է, որ վանքը շինված է 1252 թ. Կարենցի Հովհանի որդի Ստեփանոսի կողմից, որպես դամբարան իրենց տոհմի համար։ Ճարտարապետական այս նշանավոր հուշարձանը դարերի ընթացքում ենթարկվել է նորոգումների։ Այսպիսի, հավանաբար կարևոր նորոգումներից մեկը տեղի է ունեցել XVII դարում, որի մասին տաճարի հյուսիսային պատի վրա գրվել է արձանագրություն՝ բաղկացած երկու մասից, սկզբում մեկենասների, իսկ վերջում ճարտարապետների հիշատակարանով.

1 Ջալալեանց. Ա, 80։

2 Անդ, 79։

3 Սմբատ Բ Բագրատունի թագավորը ի թիվս Լոռվա այլ վայրերի իր եղբայր Գուրգենին տվեց նաև Խոռակերտը։

Աստուած ողորմի Վելի որդի... պալի պարոն Շահնազարին և իր կողակից Ռուստղանին, որ այս ս. եկեղեցիս և իր ծնողաց անդարձովն և իր որդի պարոն Կորկին շինեցին թվ. ։ՌՃԺ։ յիշեցէք ուստա Շահնազարին[1]։

60. ԳՐԻԳՈՐ ՄԵՄԱՐ

Վասպուրականի Ռշտունյաց գավառի Էրեմերա գյուղի մոտ գտնվում է «Էրեմերա ս. Աստվածածին» վանքը, բաղկացած մի եկեղեցուց և մի գավթից, երկուսն էլ շինված անտաշ քարերով։ Տեղական ավանդությունները վանքի հիմնադրումը հասցնում են Թադեոս առաքյալի ժամանակներին, բայց այդ մասին ո՛չ մատենագրական և ո՛չ էլ արձանագրական տվյալներ կան։ Ժամանակակից գիտական ուսումնասիրության էլ ենթարկված չեն։

Վանքը շրջապատված է պարսպով, որի դարպասի գլխին գտնվում է միակ արձանագրությունը, որը վերաբերում է պարսպի շինությանը՝ Գրիգոր ճարտարապետի ձեռքով.

Շինեցաւ պարիսպս ձեռամբս մէմար Գրիգորին յիշատակ տէր Աւետիս հերպետին (=հայրապետին) թվ. ՌՃԺԲ[2]... 1663 թ.։

61. ՍԱՐԳԻՍ ՈՒՍՏԱ

Արցախում, Մռավ լեռան փեշերին, անդրնդախոր մի ձորում գտնվում են Խոտորաշեն ավերակ գյուղատեղին և նրա մոտ Երից մանկանց վանքը։ Համաձայն պահպանված արձանագրությունների, եկեղեցիները շինել են Աղվանից կաթողիկոս Սիմեոնը և իր եղբայր Իգնատիոս վարդապետը 1664 թվականին, նվիրատուների օժանդակությամբ։

Եկեղեցին շինված է դարաշրջանին հատուկ անտաշ քարերով, սպիտակավուն, ներքուստ չորս քառակուսի սյուներով. բակում կան բնակելի սենյակներ։

Եկեղեցին շինող ճարտարապետը ուստա Սարգիսն է, որի առանձնակի արձանագրությունը գտնվում է ներսում, բեմի հյուսիսային կողի պատին։

1 Քաջբերունի. Արձագանք, 1884, № 42, էջ 614 (թիվը նշանակել է ՌՃԸ)։ «Ազգ. Հանդ.», VII—VIII, 425։

2 «Ազգ. Հանդ.», XXI, էջ 56։

Շինաւղ և վարպետ եկեղեցւոյս ուստա Սարգիսն յիշեցէ՛ք ի Քրիստոս[1]:

62, 63. ՍԱՀԱԿ ՀԻԶԱՆՑԻ ԵՎ ՄՈՒՐԱԴ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ

Աշտարակի շրջանի Մուղնի գյուղում մինչև օրս էլ կանգուն է XVII դարի եկեղեցական ճարտարապետության լավագույն ոճով շինված մի եկեղեցի և նրա արևմուտքում՝ գավիթ:

Այս եկեղեցու վայրում եղել են ավելի հնում կառուցված շենքեր, որոնք մի քանի անգամ վերանորոգվելուց հետո, Հովհաննես վարդապետը հին մնացորդները քանդել և նրանց վայրում շինել չորս մույթերի վրա կանգնած մի գեղեցիկ եկեղեցի և գավիթ: Հիմնադրված է 1664 թ. և ավարտված՝ 1669 թվականին:

Շենքերի գլխավոր ճարտարապետն է եղել Սահակ Հիզանցին, որը, սակայն, դեռ չավարտած իր ձեռնարկումը՝ մեռել է 1666 թ. և թաղվել եկեղեցու հյուսիս-արևելյան կողմում, պարսպից դուրս: Ճարտարապետ Սահակի կիսատ գործը շարունակել և ավարտել է նրա աշակերտն ու փեսան՝ Մուրադը[2]:

Ալբոմ, նկար. 41

64. ԳԱԲՐԻԵԼ ՈՒՍՏԱ

Շուշի քաղաքից դեպի արևելք, Սոս, Քերթ և Ղուզի Ճարտար գյուղերի արանքում, մի բարձրավանդակի վրա գտնվում է Եղիշա Կուսի Անապատ կոչված վանքը (Ներկա Մարտունու շրջան), շինված 1675 թ. երկու կրոնավորների՝ Հոհան աբեղայի և իր որդեգիր փոքր տեր Հովանի կողմից: Շինարարական արձանագրությունը գտնվում է մուտքի ճակատի քարի վրա:

Տաճարն այս դարաշրջանի ոճին հատուկ «բազիլիկա» է, ներսից երկու սյուներով միայն, որոնց վրա բարձրանում է թաղակապ ծածկը: Եկեղեցին շինված է կոփածո քարերով, միայն անկյունաքարերը, մուտքի և պատուհանների կողերը սրբատաշ քարերով են շարված:

Եկեղեցու արևմտյան պատի մեջ, արտաքուստ, ագուցված են մի քանի խաչքարեր: Դրանցից մեկը, որ ագուցված է նույն պատի լուսամուտից վեր, կրում է եկեղեցին շինող վարպետի հիշատակարանը:

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ես անարժան ուստայ Կաբրրելս շինեցի այս եկեղեցիս ձեռամբ իմով, ով կարդա մեկ բերան ողորմի ասէ. խաչս յիշատակ է Գաբրելիս, ծնողաց իմոց, դստերաց և որդոց իմոց[1]:

65. ՀԱՅՐԱՊԵՏ ՈՒՍՏԱ

Կամուրջաշինարարության կուլտուրան Հայաստանում չափազանց հին ծագում ունի. բոլոր մեծ ու փոքր գետերի վրա մեր երկրում շինված են եղել այդպիսիները: Ոչ միայն հին կամուրջների մնացորդներն են մնացել, այլև դրանցից մի քանիսը մինչև օրս էլ ամբողջ են և կատարում են իրենց դերը: Սյունիքի ամենամեծ գետը Որոտանն է, որի վրա մի քանի կամուրջներ կան, շինված XVII—XIX դարերում, որոնք մինչև օրս էլ կատարում են իրենց դերը:

Միջնադարից մնացած այդ բոլոր կիսավեր և շեն կամուրջների կառուցողներից ոչ մեկի անունը չի պահպանվել սակայն:

Սիսիանի Դարաբաս գյուղի տակ, Որոտան գետի վրա կա մի կամուրջ, որին տեղացիք կոչում են «Արզումանի կամուրջ», իր աջ ոտքով նա հենվում է հանդիպակաց ափի ժայռերին, իսկ ձախ ոտքը ցածրադիր ափին, որն արհեստական թմբով բարձրացրած է. կամուրջի կամարը սրբատաշ քարերով է շինված, իսկ օժանդակ մասերը կոփածո և բոլորովին անտաշ:

Ձախ ոտքի թմբի հարավային պատի վրա ագուցված կան երեք շարքով վեց նեղ քարեր, որոնց վրա արձանագրված է կամուրջի կառուցմանը վերաբերող արձանագրությունը: Այդ կամուրջի արձանագրության մասին կարճ հիշատակություն ունի միայն Լալայանը.

«Մի հին կամուրջ ձգվում է գետի վրա, որ ունի մի եղծված արձանագրություն: Ավանդաբար այս կամուրջը Արզումանի կամուրջ է կոչվում»[2]:

---

1 Ջալալեանց. *Ա, 177—179:*

2 Շահխաթունեանց. *Ստորագրութիւն, Բ, 94: «Այրարատ», 184:*

1 *«Արցախ», 115—116: «Ազգ. Հանդ.», Բ, 46—47:*

2 *«Ազգ. Հանդ.», Դ, էջ 165:*

Արձանագրությունը փորագրված է տարբեր տեսակի քարերի վրա, որոնց մի մասը ավազաքար լինելով՝ ավելի շատ է ենթարկվել հողմահարության. միաժամանակ չափազանց բարձր վայրում է տեղադրված և անմատչելի է. սակայն հեռադիտակի օգնությամբ հաջողվեց մեզ ամբողջ մնացած մասերը կարդալ, որը և պարզում է արձանագրության հիմնական իմաստը և մանավանդ պահել է վերջում նաև վարպետ ճարտարապետի անունը:

Նկատի ունենալով արձանագրության հրատարակված չլինելը և նրա բովանդակության ընդհանուր՝ կուլտուր-պատմական արժեքը, տալիս ենք այն ամբողջությամբ, բնագրի առանձնահատկություններով և վերծանությամբ:

Ի ԹՎԻՆ Հ(Ա)Յ(Ո)Ց ։ՌՃԻԴ։ (1675) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ(ԱՆ) ՇԱՀ ՍԼԷՄԱՆԻՆ/ ԵՎ ԻՇԽԱՆ ՏԵՂԱՅՍ ՄԱՂՍՈՏ Պ(Է)ԿԻՆ, ՈՐ ԷՐ ՎԵՐԱԿԱՑԻ ՏԱՆՆ ԱՐՔՈՒՆԻ,/ Շ(Ի)Ն(Ե)ՑԱՒ ԿԱՄՈ(Ի)ՐՋՍ ՀԱՃԻ ԲՌԸՋՎԱՆ ԱՂԻՆ. ՅԻՇ(Ա)Տ(Ա)Կ ԻՒՐՆ,/ ՈՐ ԷՐ ԴԱՐՈՒՂԱՅ ՏԵՂԻՍ ԵՒ Բ(Ա)Ջ(ՈՒ)Մ ԳՒՒՂՈՐԷԻՑ ՍՈՐԻՆ./ Ի ՄԵՋՆ ԲՆԱՒ . . . . . ՄԵԾԱ . . . ՏԵՂԱՑՆ. ՓԱՌՔ ԱՐԱՐՉԻՆ.) Ձ(Ե)ՌԱՄԲ ՈՒՍՏԱ Հ(Ա)Ր(Ա)Պ(Ե)ՏԻՆ:

Ալբոմ, նկ. 42, 43

66. ԴԱՆԻԵԼ ՈՒՍՏԱ

Հին Երնջակ գավառի Փարադաշտ գյուղից դեպի հյուսիս գտնվում են գյուղատեղիի ավերակները և փայտածածկ եկեղեցին ընդարձակ ու բարձր պարիսպներով շրջափակված: Բակում գտնվող մի խաչքարի վրայի ընդարձակ արձանագրությունը պահպանել է այդ պարիսպը շինող վարպետի անունը: Գրված է հենց իր՝ վարպետի անունից:

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՂԻԱԶԱՐՈՒ ԵՒ ՄԵՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ/ ՄԱՐԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԵՍ ՄՈՒՂԴՈՒՍԻ ԴԱՆԻԵԼՍ ՁԵՌԱՄԲ ԻՄՈՎ /ՇԻՆԵՑԻ ԶԱՅՍ ՊԱՐԻՍՊՍ, ԵՒ ԶԱՅՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԻՄ ԾՆՈ/ՂԱՑՆ, ԶՀԱՅՐՆ ԻՄ ՍԱՀԱԿՆ ԵՒ ԶՄԱՅՐՆ ԻՄ ԽՈՒՊՆԻԿԱՐՆ, ԵՒ /ՎԱՆԻՑ ՄԻԱԲԱՆՔՆ. ԱՄԵՆԵՑՈՒՆ ԲԵՐԱՆ ՄԻ ՈՂՈՐՄԻ ԱՍԵՔ ԹՎ./ ։ՌՃԼԲ։ (1683 թ.)[1]:

1 Սեդրակեան, *Հնութիւնք հայրենեաց*, 141: Ալիշան, *Սիսական*, էջ 358—359:

67. ՀԱԿՈԲ

Իջևանի շրջանի Գետաշեն (Կուննեն) գյուղից մոտ երեք կիլոմետր դեպի արևմուտք գտնվում են Հին Կուննեն գյուղի ավերակները, որոնք մեծ տարածություն են գրավում Կուննենագետ վտակի երկու ափերին: Ավերակների մեջ կան երկու եկեղեցիների մնացորդները և երկու ընդարձակ գերեզմանատուն, ուր կան խաչքարեր՝ սկսած XIII դարից:

Եկեղեցիներից մեկը գտնվում է վտակի աջ ափին և կոչվում է Աստվածածին. դրա հարավում եղել է նաև սրահ, որի չնչին մնացորդներն են պահպանվել: Ս. Աստվածածին եկեղեցին շինված է եղել անտաշ քարերով. միայն լավ ձևավորված է եղել մուտքը, որի ճակատակալ քարի վրա պահպանվել է, բարեբախտաբար, շինարարական հետևյալ արձանագրությունը.

Թվին ։ՌՃԽԴ։ Ես Մելիք Շահնազարս [և իմ] ամուսին Խանզատէն շինեցինք սուրբ Աստուածածին. ձեռամբ Յակոբին[1]:

Այս գյուղատեղում շրջապատը և ամբողջ ձորահովիտը հնում եղել են խիտ բարեշեն, այստեղ կան ուրիշ գյուղատեղիների ավերակներ ևս, ապա նաև Կիրանց, Դեղձնուտ և Առաքելոց նշանավոր վանքերը, իրարից ոչ շատ մեծ տարածության վրա: Առաքելոց վանքը իր ընդարձակ տարածությամբ և բերդապարիսպներով հավանաբար նշանավոր Մահկանաբերդն է, որի շուրջը փռված են գյուղատեղու ավերակները:

68. ԹՈՒՄԱ ՎԱՐՊԵՏ

Սիսիանի շրջանի Դաստակերտ գյուղում եղել է մի փոքր եկեղեցի, որի հիմքերն են միայն այժմ երևում: Եկեղեցու հարավում ընկած է թեթև կոփված մի երկարավուն քար, որը հավանաբար այդ եկեղեցու մուտքի բարավորն է եղել: Քարի մի երեսին երկու տողով գրված է.

Ես Յոհանէսի տղայ Յիսայի էրէցս մըսրու... եպս. Յովսէս, Վարդ. Թումայ վա(ր)պէտ:

1 Բարխուդարեանց, *Արցախ*, 377: Ըստ Հ. Եղիազարյանի շինության թիվն է 1675. տե՛ս «Իջևանի շրջանի հուշարձանները», էջ 11:

Անշուշտ հիշատակված անձինք եկեղեցու շինության նախաձեռնողներն են, իսկ Թումա վարպետը՝ շինողը։

Արձանագրության մեջ թվական չկա նշված, բայց անկասկած է, որ վերջին դարերի գործ պիտի լինի և հավանաբար՝ XVII դարի։

* * *

Մեր աշխատության մեջ ճարտարապետների անունները սկսվում են VII դարից։ Այդ դարը մեր պատմական ճարտարապետության զարգացման ամենափայլուն շրջանն է։ Այդ դարում կանգնեցված հուշարձաններն իրենց նոր ձևերով, մոնումենտալությամբ, կմնան ընդմիշտ որպես հայ պատմական ճարտարապետական մտքի ստեղծագործության գագաթներ։

VII դարում վերջնականորեն ձևավորված ճարտարապետական կառուցումները երեք հիմնական կարգի են. Ա. արտաքուստ կլոր և բազմահարկ տեսքով, որոնց ամենափայլուն տիպը Զվարթնոցի տաճարն է. Բ. ներքուստ խաչաձև և արտաքուստ քառակուսի հատակագծով (նաև արտաքուստ խաչաձև) կենտրոնագմբեթ շենքեր, որոնց հոյակապ ներկայացուցիչը Հռիփսիմեի տաճարն է և Գ. դեռևս V դարից հիմնվել սկսած բազիլիկ տիպի շենքեր, որոնք կամ գմբեթավորվել են VII դարում կամ հենց ի նորո շինվել՝ որպես գմբեթավոր բազիլիկներ, ինչպիսիններն են Մրենի, Օձունի և որ ամենամեծն ու վեհափառն է՝ Բագավանի տաճարը։

Ճարտարապետների այն երեք անունները, որոնք բարեբախտաբար մնացել են այդ դարից՝ ներկայացուցիչներն ու կերտողներն են այն երեք հիմնական տիպերի, որոնք ապրել ու ստեղծագործել են VII դարի առաջին կեսում, երբ ճարտարապետական կառուցումների նշված երեք տիպերը ձևավորվել էին վերջնականապես։

Հոհան ճարտարապետին, որի անունը կապված է Զվարթնոցի հետ, պետք է համարել կլոր հատակագծով բազմահարկ շենքերի այդ փառավոր դպրոցի հիմնադիրը, որի վերջին և ամենակատարյալ ստեղծագործությունն է միայն Զվարթնոցի տաճարը։

Պատմությունից հայտնի է, որ Ներսես շինող կաթողիկոսը, նախապես Տայքում, իր ծննդավայր Իշխան գյուղում է կառուցել տվել մի եկեղեցի՝ դեռևս այնտեղի եպիսկոպոս եղած ժամանակ։ Այդ եկեղեցին չի մնացել իր նախնական ձևով, այն X դարի երկրորդ կեսում հիմնականորեն վերակառուցվել է, բայց մնացել են ճարտարապետական որոշ մասեր (բեմի կիսաշրջանի սյունազարդը), որոնք միմիայն Զվարթնոցում են կրկնված։ Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ տասներորդ դարի սկզբում նույն Տայքի Բանակ (այժմ Փենյակ) գյուղում կառուցվել է Զվարթնոցի տիպի կլոր հատակագծով եկեղեցի, ճարտարապետության պատմաբաններն այն ճիշտ կարծիքն են հայտնել, որ Բանակի տաճար շինողներն իրենց ստեղծագործության համար մտահղացման նախօրինակ են ունեցել Իշխանի տաճարը, որն իր նախնական վիճակում նույնպես կլոր հատակագիծ պետք է ունենար[1]։

Մեր աշխատության ընթացքում պարզվել է, որ յուրաքանչյուր խոշոր շինարարություն կատարած իշխան, հոգևոր թե աշխարհիկ, ունեցել է իր հիմնական ճարտարապետը և հավանաբար նաև շինարար վարպետների մի հիմնական կորիզ, որոնք իշխանի կալվածքների տարբեր տեղերում կառուցումներ են կատարել։

Ներսեսը նախապես ապրել ու գործել է Տայքում, որտեղ և իր շուրջն է խմբել ճարտարապետներին և այլ կառուցող վարպետների։ Հետագայում դառնալով կաթողիկոս և տեղափոխվելով Դվին, ըստ երևույթին իր հետ բերել է իր շինարարներին Հոհանի գլխավորությամբ։ Դրան ապացույց կարող է համարվել վարպետների գործած նշանները, որոնք կրկնվում են մանավանդ այս էպոխայում, տարբեր վայրերում կառուցված հուշարձանների վրա. այսպես, Դվինի կաթողիկեի վերանորոգման ընթացքում (VII դարի առաջին տասնամյակներ) քարերի վրա մնացած վարպետների նույն նշանները կրկնվում են Զվարթնոցի, Պտղնիի, Արուճի, Զվարթի, Ցրոմիի (վերջին երկուսը Վարդատանում) տաճարների քարերի վրա։

Զվարթնոցի քարերի վրա եղած վարպետների որոշ նշաններ իրենց հերթին կրկնվում են նույն ժամանակներում կառուցված Թա-

[1] *Н. М. Токарский*, Архитектура Древней Армении, стр. 98.

լինի, Աղիամանի, Հաջի Ղարայի և այլ վայրերի տաճարների քարերի վրա։

Այս փաստերն ապացույց են դարաշրջանի ճարտարապետական ինչպես ոճի, այնպես էլ նրա կառուցման մեջ մասնագիտացված վարպետների դպրոցի ստեղծմանը, իրենց ղեկավարի—ճարտարապետի գլխավորությամբ, որոնք մասնագիտացած իրենց արվեստի մեջ, աշխատել ու կառուցել են բազմաթիվ շենքեր։ VII դարի առաջին կեսում ծագած, կլոր հատակագծով բազմահարկ շենքի ոճի հիմնադիրն անշուշտ Հոհան ճարտարապետն է։

Այդ դարաշրջանից մեր ցուցակում նշված Իսրայել Գռաղձեցին տաղանդավոր ներկայացուցիչն է գմբեթավոր բազիլիկներ կառուցող ճարտարապետների, որի ձեռակերտը՝ Բագավանի տաճարը, ավարտված 639 թ. իր մոնումենտալությամբ և մանավանդ ծավալով խոշորագույնն է այդ տիպի շենքերի մեջ։

Իսկ Թոդոսակ ճարտարապետը, իր չորս վարպետների հետ կառուցել է Վրաստանում Աթենի ս. Սիոն տաճարը, կենտրոնագմբեթ և խաչաձև հատակագծով եկեղեցին, որը VII դարում կատարելության հասած հիմնական ճարտարապետական ձևն է, որի օրինակ է Հռիփսիմեի տաճարը։

Որքան էլ, ուրեմն, ճարտարապետության ծաղկման այդ կարևոր, VII դարից մեզ հասած ճարտարապետների անունները սակավաթիվ են (3 անուն), այնուամենայնիվ նրանք հիմնադիրները կամ ներկայացուցիչներն են դարաշրջանում ձևավորված երեք հիմնական ճարտարապետական ոճերի, այդ իսկ պատճառով էլ թանկ են մեզ համար։

Յոթերորդ դարում իր փայլուն կատարելությանը հասած հայ ճարտարապետության զարգացման ընթացքը, սակայն, ընդհատվեց արաբական արշավանքների և տիրապետության երկու դար տևող երկար ժամանակաշրջանով. միայն IX դարի վերջերին, արաբական խալիֆաթի թուլացման հետևանքով Հայաստանը երկար մաքառումներից հետո կարողացավ նորից անկախություն ձեռք բերել։ Տնտեսական-քաղաքական ընդհանուր վերելքի հետ հայ ճարտարապետական միտքը ևս վերածնվեց և զարմանալի արագությամբ կառուցվեցին ճարտարապետական խոշոր հուշարձաններ ու մեծամեծ քաղաքներ։

Հայաստանը, ազատվելով արաբական լծից՝ տարբեր պատճառներով չմիավորվեց մեկ քաղաքական ամբողջության մեջ, այլ բաժանվեց մի քանի մեծ նախարարությունների, որոնցից յուրաքանչյուրը դարձավ անկախ թագավորություն։ Դրանցից գլխավորներն էին Բագրատունիները Շիրակում՝ Անի մայրաքաղաքով, Արծրունիները՝ Վասպուրականում և Սյունիքը։

Նորաստեղծ թագավորությունների մեջ սկսվում է շինարարական բուռն վերելք, որտեղ աշխատում են բազմաթիվ ճարտարապետներ. բարեբախտաբար մեզ հասել են Բագրատունիների և Վասպուրականի թագավորությունների այդ նոր շինարարությունները գլխավորողների և ճարտարապետական նոր դպրոցների հիմնադիրների անունները՝ իրենց կառուցած գործերի հետ միասին. դրանք մեր ճարտարապետության այդ շրջանի աստղերն են, Մանվել և Տրդատ ճարտարապետները։

Բացի առանձնակի խոշոր հուշարձաններից (տաճարներ, պալատներ, իջևաններ) շինարարական այդ նոր շրջանում առանձնահատուկ երևույթ է նաև քաղաքային ընդարձակ և պետականորեն հովանավորվող շինարարությունը։

Այդ երկու նշանավոր ճարտարապետներին նվիրված հատվածներում թվարկել ենք նրանց անվան հետ կապված հայտնի հուշարձանները և հնարավորին չափ հաստատել այն ընդհանուր կարծիքը, որ դրանցից յուրաքանչյուրը հիմնադիրներն են IX—X դարերում ծաղկած հայ ճարտարապետական դպրոցների. Մանվելը՝ արևմտյան և Տրդատը՝ արևելյան Հայաստանում, որոնց արվեստը հետագայում ստեղծագործող ճարտարապետների համար դարձավ օրինակելի ու դասական և մեծ ազդեցություն ունեցավ Հայաստանի բոլոր կողմերում շինված հուշարձանների վրա։

Հատկապես Մանվել ճարտարապետի համար չափազանց բնորոշ և առանձնահատուկ է այն, որ իր կերտած հուշարձանների վրա, ներքուստ և արտաքուստ, առատապես օգտագործել է բուսական և կենդանական զարդաքանդակների ամբողջական սյուժեներ՝

տեսարաններ, հոգևոր և աշխարհիկ թեմաներով։

Այդ շրջանում ընդունված սովորություն էր շենքերի քիվերը, մուտքերի և պատուհանների պսակները զարդարել երկրաչափական քանդակներով, որոնց մեջ խառնվում էին նաև բուսական էլեմենտներ՝ ճյուղ, տերև, պտուղ (գերազանցապես նուռ և խաղող). կենդանական մոտիվները քիչ էին, իսկ մարդկանց քանդակները մեծ մասամբ ս. գրքից վերցրած սյուժեներ են եղել՝ տեղավորված մուտքերի բարավորների վրա[1]։

Մանվել ճարտարապետը համարձակորեն խախտեց այդ սովորությունը. նրա ձեռակերտներից կանգուն մնացած Աղթամարի ս. Խաչ եկեղեցու արտաքին պատերի վրա մինչև այժմ էլ մնացել են ամբողջ շենքը գոտևորող քանդակների ընդարձակ տեսարաններ, թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ բնույթի, ամբողջական ծառեր, գազանների և կենդանիների վազք և այլն։

Մանվելի շինած արքայական տաճարընդունարանը, որը դժբախտաբար այժմ գոյություն չունի, ներքուստ նկարազարդված է եղել նույնչափ ճոխ պատկերներով։

Ֆեոդալական պալատների միայն ներսում գունավոր, կամ գիպսաշեն, սյուժետային նկարները, Մանվել ճարտարապետը համարձակորեն տեղափոխեց Աղթամարի ս. Խաչ եկեղեցու պատերի վրա և դրա շնորհիվ նրանք մինչև այժմ էլ մնալով (պալատները բոլորն էլ քանդվել են) անսպառ աղբյուր են միջնադարյան արվեստի ուսումնասիրության համար։

Մանվել և Տրդատ ճարտարապետների դերը մեր միջնադարյան արվեստի պատմության մեջ չի կարելի սպառված համարել ոչ նրանց անունով հայտնի շենքերի և ոչ էլ նրանց թողած հետագա ազդեցությամբ միայն։ Այդ տաղանդավոր ճարտարապետները մեր բոլոր մյուս ճարտարապետներից տարբերվում են նաև մի այլ առանձնահատկությամբ։

Եթե այս աշխատության մեջ տեղ գտած այլ ճարտարապետները անհատ ստեղծագործողներ են, կամ մի որևէ իշխանական տան գլխավոր ճարտարապետներ, ապա Մանվելն ու Տրդատը չեն եղել միայն իշխանների — արքայական տների ճարտարապետներ, նրանք առանձնակի հուշարձաններից բացի ղեկավարել են այդ արքաների նոր հիմնադրած կամ հիմնականորեն վերակառուցած-ընդարձակած քաղաքների շինարարությունը, ինչպիսիններն են Ոստանը, Աղթամարը և Անին։

Այս տեսակետից առայժմ մեր ճանաչած առաջին քաղաքաշինարար ճարտարապետներն են Մանվելն ու Տրդատը։ Թեև նրանց մասին եղած գրավոր աղբյուրներում բառացի նրանց պաշտոնը չի հիշատակված, բայց այդ աղբյուրներում նրանց վերագրած հեղինակությունը և շինարարության ընդարձակությունն այդ են թելադրում։

Միջնադարում քաղաքային գլխավոր ճարտարապետի պաշտոնի մասին, Հայաստանի հողի վրա, գոյություն ունի մի կարևոր արձանագրական վկայություն, որը թեև վերաբերում է քիչ ավելի ուշ շրջանի, XII դարի կեսերին, բայց կարևոր ենք համարում մեջ բերել։

Հին Նախիջևանում Աթաբեկների շրջանից մնացել են մի քանի դամբարան-մինարեներ, որոնց վրայի արաբերեն հիշատակագրությունների տակ երեք տեղ հանդիպում է կառուցող ճարտարապետի անունը, որը բոլոր դեպքերում էլ իրեն քաղաքի ճարտարապետ տիտղոսով է բնորոշում. ահա դրանցից մեկը.

ՇԻՆԵՑ ԱՃԵՄԱՄ ՈՐԴԻ ԷՊԻԻՊԷՔՐԻ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՆԱԽԱՃԱԻԱՆԻ[1]։

Այդ փաստը մի կարևոր ապացույց է միջնադարում քաղաքի գլխավոր ճարտարապետի պաշտոնի գոյության. թեև Նախիջևանում նրա հիշատակությունն ավելի ուշ է, բայց անկասկած է, որ այն գոնե արաբական ժամանակաշրջանի տրադիցիա է և ընդհանուր պետք է լիներ Հայաստանի այլ մեծ քաղաքների համար ևս։

* * *

XIII դարը մեր ճարտարապետության նոր ծաղկման դարաշրջանն է։

Սելջուկ պետության տրոհվածության և թուլացման հետևանքով Վրաստանն աստի-

[1] Բացառություն է կազմում Հոհան ճարտարապետի կերտած Զվարթնոցի տաճարը, որն ունի շենքի այլ մասերի վրա ևս քանդակներ։

[1] «Միսական», 502։

ճանապար դարձավ զորեղ և մեծ պետություն. Հայկական ավագանին և ժողովուրդը մեծագույն համակրանքով էին վերաբերվում հարևան եղբայրական ժողովրդի զորեղացմանը և ամեն կերպ օժանդակում էին նրան:

Վրաց արքունիքում գտնվող նշանավոր հայ Զաքարյան զորապետները հայկական մեծամեծ գնդեր միացրած Վրաց բանակին՝ աստիճանաբար նվաճեցին պատմական Հայաստանի շատ նահանգներ: Վիրա-հայկական սահմանը հասավ մինչև Վանի լիճը:

Այդ բարենպաստ քաղաքական պայմաններում երկրում սկսվեց տնտեսական ու կուլտուրական ծաղկման նոր վերելք, որը տևեց մինչև XIII դարի սկզբի տասնամյակները:

Հայ ճարտարապետական միտքը ևս այդ ընդհանուր շարժման մեջ իր նշանավոր տեղը գրավեց: Մեր ճարտարապետության խոշորագույն մասնագետ Թ. Թորամանյանը այս շրջանի վերաբերյալ հետևյալ կարծիքն է հայտնել. «Զորրորդ (XIII—XIV դդ.) վերածնության մեջ ոչ միայն ճաշակի նրբություն, այլև շինարարական հանճարեղ նորություններ ևս մտցրեց»[1]:

Հայաստանում կանգուն մնացած հուշարձանների ամենամեծ թիվը վերաբերում է այդ շրջանին:

Ճարտարապետական մեծ գործերին զուգընթաց, այդ դարաշրջանում իր ամենամեծ զարգացմանը հասավ արվեստի փոքր գործերի կուլտուրան—խաչքարեր, կոթողներ և այլն, որոնք իրենց քանակով և որակով գերազանցում են բոլոր նախորդ դարերին:

Կառուցված մեծ ու փոքր հուշարձանների խոշոր քանակը, կառուցող ճարտարապետ-վարպետների խորը մասնագիտացումը և դրանց հետևանքով արվեստագիտական ինքնագիտակցության զարգացումը, դրդել են մեր հանճարեղ վարպետներին ավելի հաճախակի իրենց ձեռակերտների վրա իրենց անունների հիշատակությունը թողնել: Հենց այդ արվեստագիտական ինքնագիտակցությամբ պիտի բացատրել և այն, որ կրոնավորներից անջատվելու համար ստեղծվում է վարդապետ-ճարտարապետ կոչումը: Մեր աշխատության մեջ ճարտարապետների և քարգործ վարպետների անունների ամենամեծ թիվը XIII դարին է վերաբերում. 35—36 ճարտարապետ, 33 քանդակազարդող-կազմող վարպետներ և 20 գրիչներ, ընդամենը 89 անուն:

Իսկ եթե հետևելով Թ. Թորամանյանի հեղինակավոր կարծիքին, XIV դարն էլ իր շինարարական և ոճական առանձնահատկություններով համարենք նախորդի շարունակությունը, ապա իրավունք կունենանք XIII դարի մեր վարպետների 89 թվին ավելացնել XIV դարից մեր աշխատության մեջ հիշատակված վարպետների 6 անուն ևս, որով մեր ճարտարապետական արվեստի այդ «չորրորդ վերածնության» (ըստ Թ. Թորամանյանի) համար կունենանք ճարտարապետական և քարգործական արվեստագետների 95 անուն, մի պատկառելի թիվ, որն ինքնըստինքյան մեծ ապացույց է դարաշրջանի արվեստի զարգացման բարձր աստիճանի:

XIV և XV դարերից շատ քիչ ճարտարապետների անուններ ունենք և դա միանգամայն օրինաչափ է երկրի քաղաքական դրության և դրա հետևանքով, շինարարական աշխատանքների հարկադիր դադարեցման հետ: Այդ այն դարաշրջաններն են, երբ մոնղոլթաթարական հորդաները սամումի նման շրջացնում և հողին էին հավասարեցնում նաև մինչև այդ շինվածները, իսկ նոր շինարարության համար ամեն հնարավորություն խլված էր. եթե այնուամենայնիվ մի քանի աննշան շենքեր էլ շինվել են բուն Հայաստանի տերիտորիայի վրա, ապա դրանք գերմարդկային ջանքերի ու առանձին մեծակորով անհատների կամքի բացառիկ արտահայտություններ են միայն. Մեծոփա և ս. Հակոբա վանքի ճարտարապետների բաժիններում այդ երևույթը ցայտուն կերպով արտահայտված է. քաջակորով ու ձեռներեց մարդիկ, անհուն տառապանքների գնով որոշում են հուշարձաններ կառուցել և կուլտուրայի ընդհանուր անկման և վայրենացման պայմանների բերումով, նույնիսկ ճարտարապետներ չեն կարողանում գտնել ճարտարապետության կլասիկ երկիր Հայաստանում և ստիպված են լինում հեռու տեղերից օտարազգի ճարտարապետ որոնել և բերել. Շատ հավանական է, որ այդ հազիվ գտնված Ցարաճ հույն ճարտարապետն էլ Թաթառ-մոնղոլ բանակների կողմից գերված և ստրկացված մի օտարախոս արվեստագետ է եղել:

XVI դարից ոչ մի ճարտարապետի անուն

[1] Թ. Թորամանյան, I, 11:

չունենք, սա ևս արտահայտությունն է ժամանակի շինարարության վիճակի: XVI դարը տաճկա-պարսկական արյունահեղ պատերազմների շրջանն է, որոնք տեղի էին ունենում մեծ մասամբ Հայաստանի հողի վրա և ոչնչացման ենթարկում ժողովրդին ու երկիրը:

XVII դարի սկզբի արյունահեղ պատերազմներից ու Հայաստանի անխնա ավերածություններից և գերեվարություններից հետո, վերջապես Պարսկաստանի ու Տաճկաստանի միջև կնքվում է հաշտության պայմանագիր (1639) և երկու մասի բաժանված հայ ժողովուրդը գոնե ժամանակավորապես ի վիճակի եղավ ձեռնարկել իր տնտեսության վերականգնման և շինարարական գործունեության: Այդ դարից մեր աշխատության մեջ ներկայացված են 22 ճարտարապետների անուններ, հին արվեստի ձևափոխություններին զուգընթաց, նաև ձևափոխված նոր անուններով, վարպետ, ուստա և մեյմար կոչումներով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔԱՆԴԱԿԱԶԱՐԴՈՂ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Քարգործ արվեստի այս ճյուղը պահպանել է համեմատաբար ավելի շատ վարպետների անուններ։ Մեր միջնադարյան արվեստի մեջ քանդակազարդող վարպետը ամենակարևոր և էական դերն է կատարել։ Նրա արվեստը գործադրվում էր բազմաթիվ բնագավառներում, այն բոլոր տեսակի քարաշեն հուշարձանները, որոնք կառուցվում էին, իրենց վրա կրել են քանդակազարդող վարպետի ձեռքի կնիքը, սկսած մանր հուշարձաններից, որպիսիններն են տապանաքարեր, կոթողներ, խաչքարեր՝ մինչև ճարտարապետական խոշորագույն շենքեր։ Հայ ժողովուրդը սիրել է քարից կառուցված յուրաքանչյուր մանր, թե մեծ կոթողի վրա տեսնել զարդաքանդակներ. հաղարամյակների ընթացքում այդ արվեստը հասել է մեծ կատարելության։

Բայց այդ քանդակագործ վարպետը, դժբախտաբար, սովորություն չի ունեցել ամեն դեպքում հիշատակել իր անունը։ Քարաշեն հուշարձաններից մեծ մասամբ միայն խաչքարերն են, որտեղ քանդակազարդող վարպետները հաճախակի են իրենց անունը հիշատակում։

Թե ինչո՞ւ մեծ մասամբ միայն խաչքարերի վրա են իրենց անունը հիշատակում քանդակագործ վարպետները՝ շատ հասկանալի է. մեծ հուշարձանները կոլեկտիվ աշխատանքի արդյունք են, նրանց վրա աշխատել են հարյուրավոր «աշխատավորներ», ինչպես հաճախ հիշատակվում է և անհատ վարպետի համար անհարմար էր իրեն միայն հիշատակել։ Իսկ խաչքարերը մեծ մասամբ մեկ մարդու ձեռագործ են և նրա կերտողը անհամեստ բան արած չէր լինի իր անունը հիշատակելով։

Երկրորդ պատճառն էլ այն է, որ քարաշեն մանր կոթողներն ու խաչքարերը թվով շատ ավելի մեծ քանակություն են կազմում, քան մեծ հուշարձանները, հետևաբար մինչև մեր օրերը դրանցից մեծ քանակով մնալով, մեծ թվով էլ, համեմատաբար, վարպետների անունն են պահպանել։

Վաղ միջնադարում, ինչպես երևում է, ընդհանրապես սովորություն չի եղել վարպետների մեջ՝ իրենց անունները նշել ձեռակերտ կոթողների վրա. այլապես մեզ հասել են նաև շատ վաղ շրջանի կոթողներ, որոնք խաչքարերի նման անհատական ձեռագործներ են, բայց դրանցից ոչ մեկի վրա վարպետի անուն չկա։

Կոթողական այդ տիպի հուշարձաններից ամենաակնառուներն են, օրինակ, քառակող-սյունանման հուշարձանները, որոնցից բազմաթիվ օրինակներ են հայտնաբերված Հայաստանում։ Այդ հուշարձանների ծագման, ժամանակի և նշանակության մասին մի շարք թռուցիկ ակնարկներից բացի (Մառ, Թ. Թորամանյան, Գ. Լևոնյան, Սարժիզովսկի) գրվել են նաև երկու հատուկ ուսումնասիրություններ՝ Գ. Հովսեփյանի և Բ. Առաքելյանի. դրանցից վերջինն ու ամբողջականը Բ. Առաքելյանի աշխատությունն է, ուր պարզված է, որ նրանք պատկանում են IV—

VII դարերին (մեր թվակ.) և հանդիսանում են գերեզմանական հուշարձաններ։ Սակայն հեղինակին հայտնի 70-ից ավելի այդ տիպի հուշարձաններից ոչ մեկի վրա քանդակագործող վարպետի անուն չի հիշատակված, չնայած, որ նրանք ձոխ քանդակազարդերից բացի, իրենց վրա կրում են սյուժետային պատկերներ[1]։

ԽԱՉՔԱՐԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Խաչքարերը կոթողական տիպի հուշարձաններ են և զարդարված ձոխ քանդակներով, որոնք սերտորեն կապված են նաև ճարտարապետական հուշարձանների վրա եղած քանդակներին թե՛ իրենց կատարման տեխնիկայով և թե՛ ոճով։ Քանի որ խաչքարերի վրա էլ մեծ մասամբ երևան են գալիս քանդակագործ վարպետների անունները, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել միջնադարյան հայ արվեստի այդ ինքնատիպ և գեղարվեստորեն մեծ կատարելության հասած հուշարձանների ծագման և զարգացման խնդիրների վրա։ Մանավանդ, որ գրականության մեջ այդ առթիվ միայն շատ թռուցիկ և հարևանցի ակնարկներ կան միայն։

Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում գոյություն ունեն մարդկության հնագույն կոթողական տիպի հուշարձաններ, դրանք մենհիրներն են: Մենհիրների հնությունը Հայաստանում հասնում է հազարամյակներ։ Դրանք երկար, սյունանման, անտաշ քարից կոթողներ են, առանց որևէ զարդի, մեծ մասամբ հաստ ծայրով թաղված գետնի մեջ, շուրջանակի մանր քարերով և հողով ամրացված։

Մեծ մասամբ ընկած, բայց և կանգուն մենհիրներ հայտնաբերված են Հայաստանում բավականին մեծ թվով, սակայն նրանց կանգնեցնելու բուն նպատակը դեռևս ճշտված չէ։ (Ալբոմ, նկ. 44)։

Կոթողական հուշարձանի հաջորդ տիպը Հայաստանում՝ գրականության մեջ «Վիշապ» կոչված եռկարավուն, քարե, սյունանման հուշարձաններն են։ Վերջիններս արդեն իրենց վրա կրում են մարդկային մշակույթի հետքեր, դրանք ոչ միայն տաշված, մշակված են, այլև նրանց վրա կան կենդանիների, թռչունների և այլ սիմվոլիկ քանդակներ։ «Վիշապներ» գտնվել են Հայաստանի լեռնային մասերում արհեստական ջրավազանների կամ առուների կողքերին և համարվում են ջրի պաշտամունքի հետ կապված հուշարձաններ։ Թեև այս կարևոր հուշարձանների մասին գոյություն ունի արդեն ընդարձակ գրականություն, բայց նրանց ժամանակի խնդիրը դեռևս մնացել է վիճելի[1]։

Հայաստանում հայտնաբերված բոլոր «վիշապներն» ընկած վիճակում են (ալբոմ, նկ. 45)։

Հուշարձանների այս երկու տիպերը, մենհիրներն ու «վիշապները» հետագա խաչքարերի համար միայն գաղափարատիպերի արժեք կարող են ունենալ։

Այս գաղափարատիպերից դեռևս ուրարտական ժամանակաշրջանում (IX—VI դարերում մեր թվականությունից առաջ), քարկոփության մեջ մեծ վարպետության հասած ուրարտացի վարպետները վերամշակեցին ճարտարապետական և կառուցողական տեսակետից կոթողական հուշարձանի մի կատարյալ տիպ, որը մնայուն կերպով և անփոփոխ պահպանեց իր գոյությունը Հայաստանում մինչև XIX դարի կեսերը։

Ուրարտացի վարպետի վերամշակած կոթողը բաղկացած է երկու հիմնական մասից, խորանարդաձև հիմքից և վերևից նրա մեջ ագուցված տախտակաձև քարից, որի վրա գրվում էին արքայական հիշատակարաններ՝ զանազան բովանդակությամբ։

Պատվանդան հանդիսացող քարի վերին մակերեսի կենտրոնում փորվում էր քառակուսի խոռոչ (ավելի ճիշտ սեղանակերպ), իսկ նրա վրա ագուցվելիք տախտակաձև քարի ներքին ծայրը նեղացվում էր և կազմում փոսին համապատասխան պոչուկ, որն ագուցվելով այդ փոսի մեջ ստանում էր կանգուն և ամուր դիրք։

---

[1] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում, Երևան, 1949։

[1] Н. Я. Марр. Я. И. Смирнов. Вишапы, Труды Гос. Академии истории материальной культуры, т. I, Л., 1931; И. И. Мещанинов, Каменные статуи рыб-вишапы на Кавказе и в северной Монголии, Записки коллегии востоковедов, I, Л., 1926; В. А. Миханкова, Вишапы, Сообщения ГАИМК, 1931, № 9—10; Л. М. Меликсет-Беков, Мегалитическая культура в Грузии, Тбилиси, 1938; Б. Б. Пиотровский. Вишапы, каменные статуи в горах Армении, Л., 1939.

Այս ձևով կանգնեցրած կոթողները այնքան ամուր և հաստատուն են եղել, որ մոտ երեք հազար տարի, բաց դաշտերում կանգնած՝ հասել են մինչև մեր օրերը (ալբոմ, նկ. 45, 47):

Ոչ միայն Ուրարտուի մայրաքաղաք Վանում և կենտրոնական մասերում, այլև հեռավոր տեղերում և ծվարված վայրերում կանգնեցրած այդ հուշարձանները, իրենց ամուր կառուցողական ձևով և գեղարվեստական ամբողջականությամբ չէին կարող վրիպել հետազոտական շրջանի ոչ կոթողական հուշարձան կանգնեցնող թագավորից ու իշխանից և ոչ էլ մանավանդ այն կերտող վարպետի աչքից:

Ուրարտական այդ հուշարձաններն այնքան ակնառու էին, որ նրանց մասին հիշատակում է մեր պատմահայր Խորենացին անգամ: Անծանոթ պատմության ու լեզվին, ինչպես հայտնի է, Խորենացին Ուրարտուին վերաբերող ամեն ինչ վերագրել է ասորեստանյան թագուհի Շամիրամին, հիացած նկարագրելով վերջինիս կողմից Վան քաղաքի հիմնադրումն և մեծամեծ կառույցները, մանավանդ քարաժայռի միջի վիմափոր տաճարներն ու նրա վրա գրված սեպագիր արձանագրությունները, Խորենացին ավելացնում է.

«Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»[1]:

Ուրարտական այս կոթող-արձանները կանգնեցված են բազմազան նպատակներով, ի հիշատակ ռազմական հաղթանակների, ջրանցքների շինարարության, խոպան հողերի յուրացման, նրանց վրա արքայական տարեգրություններ գրելու և այլն:

Ուրարտական պետականության անկումից հետո, երբ հայ պետականության օրով նրա հիմնադիր Արտաշեսը կարիք ունեցավ իշխանների, գյուղերի և ագարակների սահմանները որոշող հաստատուն նշաններ դնել, այդ սահմանաքարերի համար միակ հարմար ձևը հանդիսացան ուրարտական վերոհիշյալ կոթողները. նույն պատմահայր Խորենացին է դարձյալ, որ ոչ միայն նկատել, այլև մանրամասն նկարագրել է այդ սահմանաքարերը, հնագետին հատուկ մանրամասնությամբ:

«Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց. եկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և չորեք կուսիւն ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ: Ընդ որ նախանձեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ զնոյն նման հրամայէ առնել և ի Պարսից աշխարհին և յիւր անունն անուանել, զի մի՛ ևս յիշեսցի անունն Արտաշիսի» :

Իսկ ինչ վերաբերում է Խորենացուց մեջ բերած հատվածի վերջին մասին, որտեղ նա իր սիրած Արտաշեսին էլ ավելի բարձրացնելու համար ասում է, որ երբ Սասանյան Արտաշիրը ընդօրինակում է մեր Արտաշեսից և նույնանման սահմանաքարեր է կանգնեցնում նաև Պարսկաստանում, դա պետք է բացատրել բոլորովին այլ կերպ. այսինքն, որ իրոք, Պարսկաստանում էլ, նույնպես և այլ հարևան երկրներում նման սահմանաքար-կոթողներ կանգնեցնելու սովորություն եղել է, և Խորենացին այդ մասին ոչ միայն կարող էր իմանալ, այլև տեսած լինել և ցանկացել է դրանց հեղինակը դարձնել իր հերոսին, Արտաշեսին:

Հին Արևելքում իրոք որ սահմանաքարեր կանգնեցնելու սովորությունը շատ տարածված և հին է. դեռևս Բաբելաստանում այդպիսիները գոյություն ունեին և կոչվում էին Կուդուրրու: Նույնպիսի սահմանաքարերի գործածությունը կար Հռոմի և Բյուզանդիայի պետությունների մեջ և դրանցից շատ օրինակներ գտնված են ու պահվում են թանգարաններում:

Հայտնի երևույթ է, որ յուրաքանչյուր դարաշրջանում տարբեր նշանակությամբ կանգնեցված կոթողների վրա ժամանակի տիրող գաղափարախոսությունը դնում էր իր կնիքը, այդ կոթողին իրավաբանական մեծ

---

1 Մովսիսի Խորենացւոյ, *Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 54:*

1 Խորենացի, *Անդ, էջ 186:*

ում տալու համար, օրինակ՝ կելտերը իրենց ցեղային տերիտորիաների սահմաններին դնում էին կրոնական բնույթի կոթողներ, հռոմեացիք կանգնեցնում էին սահմանաքարեր արձանագրություններով, իսկ միջին դարերում այդ նույն միջավայրից հայտնի է Արագոնում Լյուզի վայրի մոտ կանգնեցրած խաչքար-սահմանաքարը XV դարում, Իմպերիայի սահմանի վրա[1]:

Պատմահոր նկարագրած Արտաշիսյան այս սահմանաքարերը իրենց ձևով և կառուցողական ոճով միանգամայն նման են ուրարտական կոթողներին, այսինքն բաղկացած են երկու մասից՝ պատվանդանից և նրա մեջ վերևից ագուցված տափակ քարից, որի վրա գրված են արամեերեն տառերով և լեզվով սահմանները որոշող արձանագրություններ:

Ուրարտական կոթողները շատ են և հայտնի, դրանցից մեկը, գտնված Զվարթնոցի պեղումների ժամանակ՝ այժմ դրված է Էջմիածնում, Հռիփսիմեի տաճարի մեջ: Արտաշիսյան սահմանաքարերից առայժմ գտնված են հինգը, բոլորն էլ Սևանի առափնյա շրջաններից, մեկը Նոր Բայազետի շրջանի Կարմիր (Ղուլալի) գյուղից և չորսը՝ Մարտունու շրջանի Ծակքար, Լիճք (Գյոլ), Վերին Ղարանլուխ և Վաղաշեն (Ալիղըրխ) գյուղերից[2]: Դժբախտաբար դրանցից ոչ մեկն իր նախնական տեղում և վիճակում չի հայտնաբերվել, ոչ մեկի էլ պատվանդանը չի գտնվել, այլ միայն վերին մասերը, այն էլ կիսովին, բացի մեկից, 1957 թ. պատահաբար բացված Ծակքար գյուղում, որի միայն պատվանդանի մեջ ագուցվելիք պոչունքն է կոտրված, որը և հնարավորություն է տալիս մյուսների թե՛ պակասավոր արձանագրությունները լրացնել և թե՛ մանավանդ, նրանց ձևի ստույգ պատկերը պարզել, որը նույնն է, ինչ որ ուրարտական կոթողները, բայց ավելի փոքր ծավալի: Այս վերջին հանգամանքն անշուշտ պետք է բացատրել նրանով, որ նախ՝ ուրարտական կոթողները կանգնեցվել են թագավորների կողմից, հետևաբար «արքայական» վեհություն է տրված նրանց և ապա, նրանք շատ մեծ թվով և մասսայական բնույթի չեն, մինչդեռ Արտաշիսյան սահմանաքարերը ըստ թագավորական հրամանի մասսայաբար պետք է կանգնեցված լինեին յուրաքանչյուր իշխանական կալվածքի, գյուղի և ագարակների սահմաններում և շինվելով յուրաքանչյուրն իր տեղում՝ միայն ձևով և գրված արձանագրությամբ պետք է համապատասխանեին արքայի կողմից տրված հրահանգին: Եվ իրոք, գտնված բոլոր հինգ օրինակները, ձևի և արձանագրության նույնության հետ, ունեն չափերի և նյութի տեղական տարբերություններ, որոնք տեղում և տարբեր վարպետների կողմից շինվելու հանգամանքն են ցույց տալիս (ալբոմ, նկ. 48):

Հեթանոսական Հայաստանում գոյություն ունեին առանձնակի կանգնած այլ տիպի կոթողներ և հուշարձաններ ևս, ինչպես մատնացույց են անում Ագաթանգեղոսն[1] ու Մ. Խորենացին[2], սակայն դրանք խաչքարերի տիպին չեն պատկանում, հետևաբար մեր նյութից դուրս են: Բայց Մ. Խորենացու հիշատակած մի կոթողի մասին անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել, որոշ նկատառումներով:

Պատմահայրը նկարագրելով Արշակ I-ի գործունեությունը և հատկապես դեպի Պոնտոս կատարած արշավանքը՝ մեզ համար հետաքրքիր մի կոթողի կանգնեցման և նրա նկարագրությունն է տալիս.

«...Պատերազմելով ընդ Պոնտացիս, և նշանակ եթող յեզեր ծովուն մեծի. զնիզակն իւր, ասեն, զրուցատէգ, որ էր արեամբ զեռնոց մխեալ, ձգեալ, ի հեռաւորուց՝ խորագոյնս նստոյց յերկնաքար արձանին, զոր կանգնեաց ի ծովեզերն: Զայս արձան բազում ժամանակս պատուեցին Պոնտացիք որպէս զաւ ի յաստուածոցն գործ: Իսկ ի գոռալն Արտաշեսի միաբանգամ ընդ Պոնտացիս՝ ընկեցեալ ասեն զարձան ի ծով»[3]:

Խորենացու այս նկարագրության դյուցազնական մասը հանելով, կմնա կոթողի մի իրական ձև, այն է, քարե կոթող, որի վրա քանդակված է եղել նիզակ և որն, անշուշտ, ռազմի ու հաղթության սիմվոլ էր: Հուշար-

[1] Шарль пти Дютани, Феодальная монархия во Франции и в Англии X—XIII в., стр. 9—10.

[2] Դրանցից մեկը հայտնաբերել էր Ե. Լալայանը՝ Կարմիր գյուղում, Ծակքար գյուղինը հայտնաբերված է 1957 թ. դաշտային աշխատանքների ժամանակ, մնացած երեքը հայտնաբերել ենք մենք, ըստ որում երկուսը՝ 1957 թվականին:

[1] Ագաթանգեղոս, էջ 410, 259:

[2] Մ. Խորենացի, անդ, 128:

[3] Նույն տեղում, էջ 118—119:

ձանի այս տիպի ու նրա հետ կապված հավատացողությունը ևս իր աղբյուրն ունի, ավելի հին, ուրարտական էպոխան, ինչպես հայտնի է, ասորեստանցիների պատկերացմամբ մեզ հասած ուրարտական գլխավոր, Մուսասիրի տաճարի մուտքի երկու կողքերի որմնասյուների վրա քանդակված կամ ամրացված են նիզակներ, երկար կոթերով, որոնց վերին ծայրերը բարձրանում են կտուրից էլ վեր. իսկ ճակատի կենտրոնում, անկյունի վրա ամրացված է նիզակի ծայր կամ տեգ[1]:

Արշակ Թագավորի կանգնեցրած այս կոթողը, եթե իր հաղթության սիմվոլ նիզակի քանդակով մի կողմից կապվում է ուրարտական շրջանի հասկացողություններին, ապա մյուս կողմից առնչվում է արդեն վաղ քրիստոնեական՝ IV—VII դարերում Հայաստանում կանգնեցրած քառակող կոթողների վրա հանդիպող նույն նիզակի պատկերի քանդակներին[2] (ալբոմ, նկ. 49, 50, 51):

Ինչպես տեսնում ենք, ուրարտական ոչ միայն սեպագիր կոթողներն են իրենց ձևով և նշանակությամբ օգտագործվել հեթանոս Հայաստանում որպես սահմանաքարեր, ապա նաև քրիստոնյա Հայաստանում, որպես խաչքարեր՝ բազմազան նշանակությամբ, այլև ուրիշ կարգի հուշարձաններ. այս միանգամայն բնական երևույթ է նույն երկրում ապրող, տարբեր հասարակությունների ստեղծած կուլտուրաների համար:

Հայտնի է, որ քրիստոնեությունն իր սկզբնական շրջանում քանդում, ավերում էր հեթանոսական տաճարները, բայց և մեր ճարտարապետության պատմությունն ապացուցել է, որ մեր հնագույն բազիլիկ տիպի եկեղեցիների որոշ մասը ձևափոխված, նախկին հեթանոսական տաճարներ են: Կոթողների մասին մեր ասածներն ու ասելիքները ապացուցելու են, որ կոթողական տիպի հուշարձանների վերաբերյալ տեղի է ունեցել նույն երևույթը, քանդել-ավերելուց բացի նրանց մի մասին սկզբնապես տրվել է նոր կրոնին ծառայելու կերպարանք, այսինքն պարզապես նրանց վրա խաչի նշան է ավելացվել, «սրբագործվել» և ապա, նրանց ձևով, հատկապես խաչի նշան կրելու համար, կոթողներ են կանգնեցվել: Հայտնի էին Վանում և շրջապատում գտնված կոթողներ, որոնց ամբողջ երեսին գրված է սեպագիր արձանագրություն, հետագայում հենց սեպագրով ծածկված երեսի վրա քանդակել են խաչ, նույնպես Աժդահա յուրտի մի վիշապի վրա խաչ է քանդակված:

1957 թ. էպիգրաֆիկ գիտարշավի ընթացքում մեզ հաջողվեց Մարտունու շրջանի Լիճք և Վաղաշեն գյուղերում հայտնաբերել Արտաշիսյան երկու սահմանաքարերի բեկորներ, նրանց վերին մասերը՝ արամեական արձանագրությամբ. բարեբախտաբար երկու դեպքում էլ դրանց ոչ արձանագրված, այլ թիկունքի երեսին քանդակված են խաչեր, որոնք իրենց ոճով պատկանում են խաչերի հնագույն ձևերին:

* * *

Քրիստոնեության պետական կրոն հռչակելու ժամանակ, նրա ղեկավարները ծավալում են մի եռանդուն ջարդարար աշխատանք՝ կործանելու հին կրոնի մեծ ու փոքր հուշարձաններն ու նրանց տեղերում նորերը, քրիստոնեականը կանգնեցնելու ուղղությամբ: Հենց այս առաջին շրջանում է, որ խաչեր կանգնեցնելը մասսայական ու կարևոր նշանակություն է ունենում, կործանվող բոլոր մեհյանների և առանձնակի կանգնած կոթող հուշարձանների տեղերում, նաև Լուսավորչի կողմից նշված՝ ապագայում շինվելիք տաճարների տեղերում՝ կանգնեցված են խաչեր:

Համաձայն Ագաթանգեղոսի նկարագրության՝ Գրիգոր Լուսավորիչն, իր ձեռքով, առաջին խաչերը կանգնեցնում է Վաղարշապատում, Հռիփսիմյան կույսերի նահատակության վայրերում.

«Եւ ի ներքնագոյն խորանացն, ի վերայ հանգստարանացն կենդանագիր գերեզմանացն ի տեղիս սեղանոցն, յերեսին վկայարանսն մէն մի կանգնեաց զսուրբ նշան տէրունական խաչին. «Զի միայն, ասէ, առաջի այդր ամենակեցոյց նշանիդ երկիր պագանիցէք տեառն Աստուծոյ արարչին ձերոյ»[1]:

---

1 Ունի բազմաթիվ հրատարակություններ. համեմատիր՝ И. И. Мещанинов, Халдоведение, I, Баку, 1927, стр. 82.

2 Համեմատիր, Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Բ, էջ 164 և 168 (նկարներ) և Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դդ., նկ. 19, 42:

1 Ագաթանգեղայ, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 399—400:

Այս առաջին ձեռնարկից հետո, Լուսավորիչը բանակի գլխին անցած շրջում է ամբողջ երկիրը և ոչնչացնում հեթանոսական կուլտի շենքերը՝ և որովհետև շտապով էր կատարվում այդ ամենը և ինքն էլ իբր թե քահանայության աստիճան չունենալով իրավունք չուներ եկեղեցիներ շինելու և օծելու, դրա համար էլ միայն նշում էր շինվելիք եկեղեցիների տեղերը և՝ «այլ լոկ պարսպէր քարաքորմով զտեղիսն, և կանգնէր զնշան տէրունական խաչին: Նոյնպէս և յելս և ի մուտս ճանապարհաց և ի փողոցս և ի հրապարակս և ի ճանապարհակիցս պահ և ապաւէն զերկրպագեալն յամենեցունց զնոյն նշան կանգնէր»[1]:

Այնուհետև Տրդատի հետ գնում են Դարանաղի, Անի (Կամախ) և ամենուր կործանում մեհյանները և նրանց տեղ խաչ կանգնեցնում: Այդ առաջին կանգնեցրած խաչերն, անշուշտ, հասարակ փայտից էին, որովհետև շտապ երթի ժամանակ հնարավոր չէր անմիջապես քարից կամ այլ նյութից խաչեր շինելը: Այդ մասին կա հետևյալ ապացույցը: Լուսավորիչը Կեսարիայում օծվելուց հետո վերադառնում է և Տարոնում պատերազմի բռնվում հեթանոս Հայաստանում դեռևս կանգուն մնացած պաշտամունքի կենտրոնական վայրի քրմական բանակի հետ. ըստ Ագաթանգեղոսի հրաշագան նկարագրության Լուսավորիչը քրմական բանակին հաղթում է իր ձեռքին բռնած փայտաշեն խաչով, որից հողմ էր փչում և խորտակում հակառակորդների բանակները:

Քրմերի դիմադրությունն ամեն տեղ ճնշելուց հետո միայն սկսվում է եկեղեցական շինարարություն փայտաշեն խաչերով մատնացույց արված տեղերում:

Սկզբնական այդ խաչերը փայտաշեն էին և քառաթև, այսինքն երկու փայտի ձողեր փակցված իրար: Դրանց մի մասի տեղերում պետք է եկեղեցիներ շինվեին, իսկ ճանապարհներին, հրապարակներում և այլն, կանգնած տեղերում, նրանք կմնային առանձնակի:

Բայց այդ խաչքարեր կանգնեցնողները շուտով համոզվեցին, որ դյուրաբեկ փայտը իրենց նպատակին չի կարող ծառայել. նախ՝ որովհետև բաց տեղերում նրանք շատ շուտով փտելու էին, որով բռնությամբ քրիստոնյա դարձած ժողովրդի աչքում վարկաբեկվելու էր նոր կրոնի սիմվոլը և նրա հեղինակությունը, բայց որ ավելի էական է, նոր կրոնը ուներ բազմաթիվ թշնամիներ, հանձինս ոչ միայն այս ու այն կողմ թաքնըված քրմերի, այլև ժողովրդի մեծամասնության մեջ: Ինչպես տեսանք, ինքը՝ թագավոր Տրդատը և Գ. Լուսավորիչն են, ըստ Ագաթանգեղոսի, առաջնորդում բանակին քրմերի դիմադրությունը փշրելու համար: Բայց ժողովուրդը մի քանի օրվա կամ տարիների ընթացքում չէր կարող մոռանալ դարերով պաշտած իր աստվածներին, նրանց հետ կապված սովորությունները և բնական է, որ առաջին շրջանում նա ակտիվորեն կպայքարեր նոր կրոնի և նրա հետ կապված նորամուտ նյութական արտահայտությունների դեմ: Այդպիսիներից էին առատորեն անկվող փայտե խաչերը, որոնցից շատերը գաղտնի կերպով կտրատվում էին ժողովրդի կողմից, և այս հանգամանքը պետք է ստիպեր քրիստոնեության ջատագովներին փայտաշեն խաչերը ավելի դիմացկուն նյութով փոխարինելու: Բերենք մի քանի մատենագրական տեղեկություններ. նախ պետք է նկատի ունենալ, որ քրիստոնեության առաջին դարերում գոյություն ունեին մեծ թվով հեթանոսներ և եռանդով պայքարում էին նոր կրոնի դեմ: Փավստոս Բուզանդը երկու կարևոր դեպք է հիշատակում նման պայքարի. նախ՝ Խոսրով 3-րդի ժամանակ (330—338), Վրթանես կաթողիկոսին սպանելու և Աշտիշատի եկեղեցիներն ավերելու համար, երկու հազար հեթանոսներ անհաջող դավադրություն են կազմակերպում հենց իր՝ հայոց թագուհու դրդմամբ[1]. իսկ ավելի ուշ Պապ թագավորին (368—374 թ.) եկեղեցու կողմից առաջադրվող ամենամեծ մեղադրանքն այն էր, որ Պապը հանդուրժողական քաղաքականություն էր վարում հեթանոսների հանդեպ, որոնք ազատորեն կատարում էին իրենց ծեսերը[2]:

Մ. Խորենացին հետևյալ կերպ է նկարագրում վրաց դարձի պատմությունը, երբ Միհրան թագավորը (առաջնորդ՝ ըստ Խորենացու) դարձի է գալիս և խնդրում Նունեին

1 Ագաթանգեղոս, 407:

1 Փաւստոսի Բուզանդացւոյ, Պատմութիւն Հայոց, III, գլուխ Գ:

2 Փաւստոս, Անդ, V, գլուխ ԼԱ:

«լուսավորել» իրենց և իր երկիրը, Նունեն խոստանում է և սուրհանդակի ձեռքով Գրիգոր Լուսավորչին հայտնում է այդ մասին և հրահանգներ խնդրում իր գործունեության համար։ Լուսավորիչը հրահանգում է կործանել կուռքերը և տնկել խաչեր, այդպես էլ իրը վարվում է Նունեն, առաջին հերթին կործանում է Մցխեթից դուրս գետի մյուս ափին կանգնած Արամազդի արձանը, բայց երբ քաղաքի մեծամեծները դժգոհությամբ հարցնում են, թե ինչին կամ ում պետք է երկրպագեն դրա փոխարեն, նրանց ասում են, որ կանգնած խաչին. բայց երբ մոտեցան բլրի վրա կանգնած անարվեստ փայտե խաչին, արհամարհանքով ասացին, որ այդպիսինները լիքն են իրենց անտառներում և հեռացան։

Իսկ Ա. Լաստիվերտցին նկարագրում է, թե ինչպես թոնդրակեցիները քանդում, այրում են եկեղեցիները և գիշերով ջարդում Պարխար լեռների վրա կանգնած մի նշանավոր խաչքար[1]։ Այս մեջբերումները ցույց են տալիս, որ քրիստոնեության և եկեղեցու հակառակորդ հոսանքներն իրենց հարվածը ուղղում էին կրոնի նյութական արտահայտությունների՝ հատկապես և խաչի դեմ։ Իսկ քրիստոնեության սկզբնավորման շրջանում այդ դիմադրությունը անկասկած շատ մեծ էր[2]։

Այս հանգամանքները հաշվի առնելով քրիստոնեության տարածողները փայտաշեն խաչերը պետք է փոխարինեին ավելի կայուն նյութով, որպեսզի և՛ դիմացկուն լինեին և՛ իրենց արտաքին տեսքով գեղեցիկ, որ արհամարհանքի չարժանանային և կարողանային մրցել հեթանոսական կրոնի առանձնակի կանգնած արձանների և կոթողների հետ։

Փայտյա նյութը հնարավոր էր փոխարինել մետաղով և քարով։ Մետաղը բաց երկնքի տակ նույնպես դիմացկուն չէ, նա ժանգոտում ու քայքայվում է և այն ժամանակվա տեխնիկայի պայմաններում, նրանից մեծ չափերի գեղարվեստական իր շինելը չափազանց ծանր գործ էր, այդ պատճառով էլ մետաղյա խաչերը, փոքր ծավալի, արմատավորվեցին գերազանցապես եկեղեցիների ներսում՝ ծիսակատարությունների կարիքների համար և գմբեթների գլուխներին ամրացնելու համար, կրկին, համեմատաբար փոքր չափերի։

Միակ համար նյութը, առատ, նրա մշակմանը քաջածանոթ, որին կարելի էր գեղարվեստական ձևավորում տալ և որից կերտված բազմաթիվ առանձնակի կանգնած հին հուշարձան-կոթողների տեսքը հարազատ ու սիրելի էր ժողովրդի համար, դա քարն էր։

Փայտե խաչեր շինելը և մի ծառով գետնի մեջ տնկելը հեշտ ու հասարակ բաներ էին, մանավանդ որ նրանք ժամանակավոր բնույթ էին կրում։ Քարից շինված խաչերը պետք է ընդմիշտ մնային և զերծ լինեին այն բոլոր անհարմարություններից ու թերություններից, որոնց համար ժողովուրդը արհամարհում և ջարդում էր։

Պետք էր գտնել քարե խաչի համար նախ այնպիսի կոնստրուկտիվ ձև, որ այդ ծանր նյութը կանգուն մնար իր տեղում. մի պոչով գետնի մեջ խրելով նրանք շուտով կգլորվեին։

Սկզբնական քարե խաչերն սկսեցին շինվել փայտի օրինակով, այսինքն՝ միակտուր քարը ամեն կողմից տաշելով, թողնում էին չորս ազատ թևեր և ստացվում էր խաչը պատկերող արձան։ Պետք է նշել, որ կանոնական հասկացողությունների համաձայն խաչի բոլոր չորս թևերը պիտի հավասար լինեին իրար, այնպես որ եթե մենք մտքով այդ առաջին արձան-խաչերի ազատ ծայրերը գծով իրար միացնենք՝ կստացվի ուղիղ քառակուսի մի մակերես։ Այդպիսի խաչը գետնի մեջ տնկել անհնարին էր, նա շուտով կգլորվեր կամ թշնամաբար տրամադրված մարդիկ կգլորեին և իր տեսքով էլ նույն անձոռնի պատկերն ուներ ինչ որ փայտե խաչերը։ Քրիստոնեության ջատագովները նախ ստիպված եղան դիմել հեթանոսության ժամանակ ստեղծված կոթողների կառուցվա-

[1] Մ. Խորենացի, Անդ, էջ 232—233։

[2] Խաչքարեր և այլ առանձնակի կոթողներ ոչնչացնում էին հետագայում նաև Հայաստանի օտարազգի նվաճողները. այսպես VIII դարի վերջին, արաբները, ըստ Ղևոնդ պատմագրի, ոչնչացնում էին «զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան տեառն մերոյ և Փրկչին և նորին աշակերտացն», նաև՝ «զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի»։ «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 100, 152։

կան ձևին, վերջին այդ կոթողների խորանարդ պատվանդանը և նրա վրա ագուցեցին քարե խաչարձանները։ Բայց դժվար չէ հասկանալ, որ մեր նկարագրած այդ առաջին քառաթև խաչերը, թեկուզ պատվանդանի վրա, նախ՝ կրկին նույն տգեղ տեսքը պիտի ունենային և ապա հեշտությամբ նրանց կարելի կլիներ վնասել, դրա հետևանքով է, որ մեզ չեն հասել այդ հնագույն շրջանից կանգուն մնացած խաչեր, բոլորը, ինչ որ մնացել է, տեղահան են արված և ջարդոտված։ Այդպիսի քառաթև խաչեր թեև շինվել են հետագա դարերում էլ, նույնիսկ մինչև XVII դարը, բայց շատ փոքր քանակի են և դրանք էլ բոլորն իրենց պատվանդանից ընկած են։

Քառաթև խաչերը կոչվում են սովորաբար «թևավոր խաչեր»։

Այս անհաջող փորձը պետք է ստիպեր խաչի պաշտպաններին նախ՝ հրաժարվել «թևավոր»» խաչից, որը նույնպես անկայուն ու անարվեստ էր և խաչը քանդակել ուղղանկի լայն մակերես ունեցող քարի երեսին, որպես պատկեր և երկրորդ՝ լիովին վերցնել նախաքրիստոնեական կոթող հուշարձանները և նոր բովանդակությամբ օգտագործել այն։

Տեսանք նախորդ էջերում, որ հեթանոսության ժամանակ մշակված առանձնակի քարե հուշարձանը բաղկացած էր պատվանդանից և նրա մեջ ագուցված վերին մասից։ Այդ վերին մասը կարող էր լինել նեղ ու երկար, սյունանման, եթե նրա վրա պետք է քանդակվեր այնպիսի սիմվոլ, որը կունենար երկարավուն ձև, ինչպես օրինակ, վերևում հիշատակված նիզակը, որպես հաղթության նշան, կամ տափակ ու լայն, տախտակաձև, որն ավելի հարմար էր ընդարձակ արձանագրություններ գրելու համար։

Խաչի պատկերը կրող հնագույն հուշարձանները, այդ առաջին ձևի, սյունանման կոթողներն են[1]։

Վերջիններիս մեզ հասած օրինակները խորանարդ պատվանդանների մեջ ագուցված քառակուսի, երկար սյունի նման կոթողներ են, որոնք երբեմն սյունի գլխին ունեն նաև խոյակ։ Դրանց թե պատվանդանները և թե վերևի սյունն ու խոյակները բոլոր կողմերից լավ մշակված և արվեստավոր գործեր են, թե պատվանդանի և թե սյունի բոլոր չորս երեսները ծածկված են պատկերաքանդակներով, մեծ մասամբ կրոնական բովանդակությամբ։ Հենց այս սյունանման կոթողների վրա էլ հանդես է գալիս խաչի պատկերը քանդակված։ Այս տիպի հուշարձանների վրա խաչի պատկերը քանդակված է մեծ մասամբ պատվանդանների վրա և ավելի սակավ դեպքերում՝ վերևի սյան վրա։ Այս երևույթի պատճառը հեշտ է հասկանալ, եթե վերհիշենք մեր վերևում ասածներն այն մասին, որ վաղ շրջանում խաչի կանոնական ձևը հավասարաթև էր. սյունանման կոթողի պատվանդանի երեսն իրենից ներկայացնում է քառակուսի մակերես և միանգամայն հարմար հավասարաթևերով խաչ տեղավորելու համար, մինչդեռ պատվանդանի վրա կանգնած սյունի չորս երեսներն էլ միանման նեղ ու երկար են և նրանց վրա քանդակված խաչը իր ուղղահայաց կողմերով խիստ երկար և ընդհակառակը հորիզոնական թևերով խիստ կարճ էր տաշվում[1]։

Այդ սյունանման կոթողների վերին ծայրին մեծ մասամբ կան անցքեր, ուր ժամանակին ագուցված են եղել փոքրիկ «թևավոր» խաչեր, բայց բոլոր գտնված կոթերի վրայից նրանք վաղուց արդեն ընկած են եղել և նրանց մասերը գտնվել են շրջապատում։

Հեթանոսական շրջանում ստեղծված կոթողի այս ձևն էլ, ինչպես տեսնում ենք խաչի պատկերը իր վրա կրելու համար նույնպես անհարմար է, որովհետև վերևում ագուցված «թևավոր» խաչը կրկին անկայուն է, սյունի վրա քանդակվածը խախտում է խաչի կանոնական ձևը, պատվանդանը թեև հարմար բա

---

[1] Այս քառակող կոթողների մասին գոյություն ունեն թե՛ մենագրական ուսումնասիրություններ և թե՛ առանձին դիտողություններ՝ ընդհանուր բնույթ կրող աշխատությունների մեջ, որոնցից կարևորներն են՝

Ա. Գարեգին արք. Յովսէփեան, Գերեզմանական կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմության համար, Նյու-Յորք, 1944 (տե՛ս հեղինակի «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմությեան», պրակ Գ)։

Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում, Երևան, 1949։

Գ. Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, էջ 24—25։

Դ. Գ. Լևոնյան, Հայ գեղարվեստի ներածություն (տե՛ս «Գեղարվեստ», № 6)։

Ե. *Н. Я. Марр*, Описание дворцовой церкви в Ани, стр. 33, *И. А. Орбели*, Армянское искусство, Новый энциклопедический словарь, т. III, стр. 670.

[1] Համեմատիր Բ. Առաքելյան, նշված աշխատությունը, նկ. 21, 22, 23։

տեղի, բայց անվայել նրանով, որ կոթողի կենտրոնական, ակնառու մասը չէ, այլ ներքին, գետնին մոտ մասը։

Այս անհարմարությունների պատճառով քառակող կոթողները չմասսայականացան և չդարձան ապագա խաչքարերի հիմքը։ Թեև այս տիպի կոթողներ միշտ էլ հատ ու կենտ շինվել են, ինչպես «Թևավոր» խաչերը, մինչև X և ավելի ուշ դարերը, բայց ոչ հատկապես որպես խաչի նշանն իրենց վրա կրող կոթողներ, այլ որպես հատուկ հուշարձաններ[1] (այրոմ, նկ. 49, 50, 51)։

Նախաքրիստոնեական կոթողների մյուս տիպը, խորանարդ պատվանդանի վրա կանգնած տախտակաձև քարն ավելի հարմար էր խաչի նշանը իր կանոնական ձևով տեղավորելու համար։ Նա լայն մակերես ուներ, կենտրոնում խաչը քանդակելուց բացի շրջապատում մնում էր ազատ տարածություն, որը կարելի էր գեղեցիկ քանդակելով զարդարել և նոր կրոնի սիմվոլը կրող հուշարձանին տալ հաճելի տեսք։ Այդ պատճառով էլ նախաքրիստոնեական այդ հուշարձանի տիպը ընդունվեց և տարածվեց. դարերի ընթացքում նրա վրայի քանդակների և ընդհանրապես միայն արտաքին ձևավորման մեջ կատարելություններ ու փոփոխություններ մտցվեցին։

Վերջնականապես արմատավորված և սիրված ու միջնադարյան քարգործ-վարպետների տաղանդի շնորհիվ արվեստի բարձր կատարելության հասած հուշարձանի այս տիպն է, որ խաչքար *անունն ստացավ։*

Իրենց արտաքին բազմազանության մեջ խաչքարերն ունեն հետևյալ ընդհանուր կառուցողական ու ձևավորման հատկանիշները։ Նախ՝ մի մեծ և մեծ մասամբ անմշակ քարե խորանարդաձև պատվանդան, ստորին մասով մտցրած հողի մեջ՝ կայունության համար և վերևի մասում երկարավուն քառակուսի անցք, որի մեջ ագուցվում է տախտակաձև քարը։ Պատվանդանի այդ հիմնական ձևից բացի կան չորս կողմից լավ մշակված և ընդհանրապես բնական ժայռաբեկորներ, որոնց վրա կանգնեցրած են խաչքարեր։ Վերջիններս մեծ մասամբ առանձնակի հիշատակարան-կոթողներ են՝ կանգնած դաշտերում, բլուրների գագաթներին և ճանապարհների եզրերին։

Խաչքարի երկրորդ մասը մի տախտակաձև քար է, որի ստորին մասը քառակուսի նեղացված է, պատվանդանի վրայի անցքին համապատասխան, որով ագուցվում է այդ անցքի մեջ և կրաշաղախով լցվում։ Շաղախի, ինչպես և երկու կողմերով հարմար կերպով պատվանդանին հենված լինելու շնորհիվ, տախտակաձև քարը ստանում է կայուն դիրք և բաց դաշտերում դարերով կանգնած մնում է ամբողջ հազարամյակ։

Այսպիսով տեսնում ենք, որ նորամուծ խաչի ջատագովները անկարող եղան նրա համար որևէ նոր, գեղեցիկ ու միաժամանակ դիմացկուն կոնստրուկտիվ ձև ստեղծել և հարկադրված եղան յուրացնել նախապես ստեղծված հեթանոսական կոթողների ձևը, բայց կտեսնենք, որ ոչ միայն կոնստրուկտիվ ձևը, այլ այդ կոթողների կանգնեցման նպատակներն ու նշանակություններն էլ կենդանի մնացին խաչն իրենց վրա կրող կոթողների մեջ։

ԽԱՉՔԱՐԵՐ ԿԱՆԳՆԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գոյություն ունի մի ընդհանուր սխալ կարծիք, թե խաչքարերը գերեզմանաքարեր են։

Նույնիսկ գերեզմանատանը և գերեզմանի վրա կանգնած ժամանակ նրանք լոկ հիշատակարաններ են, որովհետև այդ նույն գերեզմանի վրա, ուր կանգնած է խաչքարը, անպայման կա նաև առանձին գերեզմանաքար, որի արևելյան ծայրին կանգնած է խաչքարը, որպես գերեզմանաքարից անկախ հուշարձան։

---

[1] Այս քառակող կոթողների մասին եղած գրականության մեջ, նրանց ծագման մասին եղած տարբեր կարծիքների թվում աչքաթող է արված մեր կարծիքով մի փաստ, որն ավելի կարևոր է, եթե ոչ նրանց ծագման, գոնե վաղ քրիստոնեական շրջանում ձևակերպման համար. դա Գրիգոր Լուսավորչի հայանի տեսիլի հետևյալ հատվածն է. «Եւ տեսանէի ի մէջ քաղաքին, մոտ յապարանսն արքունի, խարսխաձև ճախարակաձև խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրև զմեծ մի բլուր, և ի վերայ նորա սիւն մի հրեղէն բարձր մինչև յօյժ և ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ, և խաչն լուսոյ ի վերայ նորա», Ագաթանգեղոս, *էջ 384։*

Քառակող կոթողների հնագույն և լավ օրինակները նյութական ճիշտ արտահայտություններն են այս նկարագրության. ունեն մեծ պատվանդան, վրան երկար սյուն, գլխին թակաղաղով խոյակ և սրա վրա Թևավոր խաչ։

Խաչքարերը ամեն դեպքում էլ հիշատակարան-հուշարձաններ են՝ կանգնեցված բազմազան նպատակներով:

Մենք տեսանք, որ ըստ Ագաթանգեղոսի վկայության Գ. Լուսավորչի հրամանով խաչերը կանգնեցված էին—«յելս և ի մուտս ճանապարհաց և ի փողոցս և ի հրապարակս և ի ճանապարհակիցս պահ». խաչի նշանի, որ նույնն է հետագա խաչքարերի, այսպիսի բազմազան տեղերում կանգնեցնելու Լուսավորչի կողմից սրբագործված սովորությունը ոչ մի առնչություն չունի գերեզմանաքարի հետ: Այս երևույթը հեթանոսական սովորությունների ու հասկացողությունների դեմ, հենց հեթանոսների ստեղծած տրադիցիաներով պայքարելու մի միջոց էր: Հեթանոս Հայաստանում բազմաթիվ հուշարձաններ, որոնք, անշուշտ, կրում էին հին կրոնի կնիքը՝ կանգնեցվում էին գյուղերում, ավաններում և ճանապարհահատման տեղերում՝ տարբեր նշանակություններով: Դրանք կուռքեր էին, սահմանաքարեր, կոթող հիշատակարաններ, նվիրված նշանավոր դեպքերի, հաղթանակների, շինարարության և այլն: Գ. Լուսավորիչն աշխատում էր այդ բոլորին փոխարինել քրիստոնեության սիմվոլով, որովհետև նա ոչ հասարակության սոցիալական կառուցվածքի հեղաշրջման ջատագով էր և ոչ էլ տիրող իրավական հարաբերությունների խախտման կողմնակից, այլ գոյություն ունեցող կարգերի հաստատման նպատակով նոր կրոնի սիմվոլ՝ խաչն էր դնում գոյություն ունեցող իրավակարգի նյութական արտահայտությունների վրա և դրանով սրբագործում միայն: Այնպես որ նոր կանգնեցրած խաչերը փոխարինելու էին հնում բազմազան նպատակներով կանգնեցված կոթող-հուշարձաններին:

Ովքեր շրջել են Հայաստանում, նկատած կլինեն խաչքարեր կանգնած թե բնակելի վայրերի փողոցներում և դաշտերում, թե բանուկ ճանապարհների եզրերին՝ գյուղերից հեռու, թե բլուրների գագաթներին և թե եկեղեցիների շրջակայքում և գերեզմանատներում: Դրանցից միայն գերեզմանատներում և մասամբ էլ եկեղեցիների բակերում կանգնածներն են միայն մահացածների համար գրված և այն էլ որպես հիշատակարան, որովհետև նման բոլոր դեպքերում էլ խաչքարերից անկախ, գերեզմանի վրա դրված կան տապանաքարեր: Իսկ մնացած բոլոր դեպքերում խաչքարերն ունեն բոլորովին այլ նշանակություններ և կանգնեցված են հատուկ նպատակներով, ինչպես օրինակ՝ նշանավոր հասարակական դեպքերի և անձնավորությունների հիշատակին, գյուղերի հիմնադրման, կամուրջների, ճանապարհների, աղբյուրների և այլ հասարակական նշանակություն ունեցող շենքերի կառուցման և վերանորոգության հիշատակին. սահմանների որոշման, կալվածների նվիրման և կալվածագրեր իրենց վրա կրող արձանագրություններով և այլ բազմաթիվ նպատակներով: Ըստ որում բազմաթիվ են և այն խաչքարերը, որոնք շենքերի կառուցման և կառուցողների հիշատակագրություններով ագուցված են հենց այդ շենքերի պատերի մեջ:

Մեր ասածներին ի հաստատություն թվենք մի քանի փաստեր.

1. Գնդեվանքում (Եղեգնաձորի շրջան, Վայոց ձոր) հայր Սոփանը կառուցում է վանքին կից սրահ և ի հիշատակ դրա կանգնեցնում խաչքար՝ այս դեպքի հիշատակագրությամբ—967 թվականին:

Հավել. արձ. 1

2. Բագրատունի Աբաս թագավորի կին Վանենին, ի հիշատակ իր վաղամեռիկ ամուսնու, շինել է տալիս Սանահնի մոտ, Դեբեդ գետի վրայի նշանավոր կամուրջը, որը մինչև այժմ էլ գործում է. ի նշանավորումն այս դեպքի կամուրջի մոտ կանգնեցնում է խաչքար-հիշատակարան՝ XII դարի վերջին տասնամյակում:

Հավել. արձ. 2

3. Սանահին գյուղի մոտ, Սաղու (Սևորգյաց) ձորում կանգնած է մի խաչքար, որի թիկունքին գրված է ընդարձակ արձանագրություն, ըստ որի Գրիգոր վարդապետը տնկել—շինել է նոր այգի և այն նվիրել Աստվածածին եկեղեցուն, 1178 թվականին:

Հավել. արձ. 3

4. Հայ-վրացական բանակների միացյալ ուժերով XI—XII դարերում սելջուկներից ազատագրված հայկական քաղաքներում և բերդերում կատարվում են վերանորոգչական մեծ աշխատանքներ, դրանց թվում նաև Կարս քաղաքում ու մանավանդ բերդերում: Պահպանվել են բերդի բուրգերի կառուցման և

վերանորոգման առթիվ պատերի մեջ ագուցված 3—4 խաչքարեր՝ այդ աշխատանքներին նվիրված արձանագրություններով, դրանց բովանդակությունն առանձնապես հետաքրքիր է նրանով, որ ցույց է տալիս վրաց և հայ ժողովուրդների ջերմ դաշինքն ու շինարարության ժամանակ քաղաքի համայն ժողովրդի աշխատակցությունը՝ «Մեք կարուց Քրիստոնեայքս մեծ և փոքր շինեցաք զբրջեներս»: Հենց նույն խաչքարերի վրա հիշատակված են նաև այդ կառուցումները ղեկավարող մեզ ծանոթ՝ Ընձակ, Գագան և Ոլո ճարտարապետների և Մխիթար կազմողի անունները. խաչքարերը թվագրված են 1184, և 1234:

Արձ. տե՛ս «Ընձակ, Գագան և Ոլո» ճարտարապետներ բաժնում:

5. Ամիրսպասալար Զաքարեն վրաց և հայկական զորքերով գրավում է սելջուկներից Արագածոտնի նշանավոր և անառիկ Ամբերդ բերդը. ի հիշատակ այդ նշանավոր հաղթության կանգնեցնում է խաչքար՝ 1200 թ[1].:

Հավել. արձ. 4: Ալբոմ, նկ. 55

6. Ամիրսպասալար Զաքարեն իր նախկին տերերից գնում է Հառիճա վանքը (Թալինի շրջան), այնտեղ շինում է ամրոց և եկեղեցի, ապա վանքին նվիրում թանկարժեք սպասներ ու կալվածքներ իր տիրույթի զանազան մասերում, վերահաստատում է վանքի կալվածների հին սահմանները: Այս բոլորի մասին արձանագրություն է գրել տալիս վանքի հյուսիսային պատին, արտաքուստ, որի մեջ սահմանները որոշվում են հետևյալ կերպ՝

...Եւ զառաջին սահմանքն, որ բուն լեալ էր, հաստատեցի ի Սահմանախաչէ ի Հառիճա գետն կոռ Մարգով, Գրերով, Ցամաք Ձորով, Ճինարին Հարով, Գոմցեց ձորովն, Աբենադրերովն, հին Հառիճավ[2]... 1201 թ.:

7. Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի հարավային կողմում կանգնած է եղել մի խաչքար, որի պատվանդանի վրա գրված արձանագրությունը հաղորդում է, որ Իվանեի պարոնության օրոք, ոմն Քաջազոր Գավառագետի վրա շինել է կամուրջ և ի հիշատակ դրա կանգնեցրել խաչքար՝ 1211 թ.:

Հավել. արձ. 5

8. Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի հյուսիսային եզրին ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի վրա, բարձր կանգնած է մի խաչքար, որին տեղացիները անվանում են «Հազախաչ». այդ խաչքարի բարձի արձանագրությունը պարզում է, որ խաչքարը կանգնեցված է 1226 թ. ի նշումն Խորասանի սուլթանի՝ Հայաստանում կատարած ավերածության և կոտորածների[1]:

Հավել. արձ. 6

9. Մարտունու շրջանի Ներքին Ալիչալու գյուղից դեպի հարավ, 2—3 կիլոմետր հեռու, բարձրության վրա, կանգնած է եղել մի մեծ խաչքար, որն այժմ կոտրված է երկու մասի. ներքևի մասը կանգնած է դեռ պատվանդանի վրա, իսկ վերի մասն ընկած կողքին: Խաչքարի կենտրոնում պարզ խաչ է քանդակված, իսկ ճակատին, շրջանակներին և ներքևի մասում գրված է մի շատ կարևոր և մինչև այժմ չհրատարակված արձանագրություն, ըստ որի այն կանգնեցված է երկու գյուղերի հողերի և ջրերի սահմաններում՝ Տարսայիճ Օրբելյանի և նրա որդիներ Լիպարիտի ու Ջալալի իշխանության օրոք. տանուտեր Գագրաճի ու շրջակա այլ գյուղերի տանուտերերի որոշմամբ հաստատվել է ջրանցքով բերված ջրի օգտագործման կարգը՝ 7—8 գյուղերի մեջ: Խաչքարի թվականն է 1285:

Հավել. արձ. 7

10. Եղեգնաձորի շրջանի (Վայոց ձոր) Մարտիրոս գյուղի կենտրոնում պատվանդանի վրա կանգնած է վարդագույն գրանիտե մի աքանչելի կոթող-խաչքար, 3,35×1,34 մեծությամբ, որի ճակատին, շրջանակներին և ներքևում գրված է ընդարձակ արձանագրություն. ըստ որի ոմն Մխիթար, Դեղկա որդի, իշխանաց իշխան Պռոշի և նրա որդի պարոն Հասանի հրամանով շինել է Մարտիրոս գյուղը: Խաչքարի կազմողն է մեզ ծանոթ Շնորհավոր քարգործ-ճարտարապետը և թվականը՝ 1283:

Արձ. տե՛ս «Շնորհավոր քարգործ» բաժնում:

---

[1] Ամբերդը գրավվել է 1196 թ., խաչքարն այժմ գտնվում է Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղի եկեղեցու մեջ:

[2] Արձանագրությունը տե՛ս Շահխաթունեանց, II, 568: Ալիշան. Շիրակ, 161: Կոստանեանց, Վիմական տարեգիր, 43:

[1] Խորասանի սուլթան կոչումի տակ պետք հասկանալ, հավանաբար, Խորեզմի շահ Ջալալ-էդդինին:

11. Օրբելյան Տարսայիճ իշխանը վարդապետ (ճարտարապետ) Սիրանեսին, որպես վարձատրություն վերջինիս շինած եկեղեցիների և այլ շենքերի, տալիս է մի մեծ հողաբաժին: Այդ նույն կալվածքի մեջ էլ կանգնած է մի խաչքար, որի վրա փորագրված է կալվածագիրը և հաստատված վկաների կողմից 13-րդ դարի վերջում:

Արձ. տե՛ս. «Սիրանես վարդպետ» բաժնում:

12. Եղեգնաձորի շրջանի Գյոմուր գյուղի մոտ, ձորի միջին, աղբյուրի գլխին կանգնած է մի խաչքար, որի արձանագրությունը հաղորդում է, որ Պապաքի և Ամիր Հասանի իշխանության օրոք, ոմն Սարգիս և իր որդի Պետրոսը շինել են այս աղբյուրը և որպես հիշատակ դրա, խաչքար են կանգնեցրել՝ 1288 թ.:

Հավել. արձ. 8

13. Հաղպատ գյուղում, վանքերի մոտ, կանգնած է մեծ և գեղարանդակ խաչքար, որի թիկունքին գրված ընդարձակ արձանագրությունից պարզվում է, որ խաչքարը կանգնեցված է ի հիշատակ ինչպես շինարարական գործերի, նույնպես և մի շարք այլ կառուցումների:

Հավել. արձ. 9

14. Հաղպատ գյուղի մոտ կանգնած է մի խաչքար, որի արձանագրությունը հաղորդում է, որ Սարգիս վարդապետն իր եղբայրների հետ կարգի են բերել իրենց հայրենական այգին, ցանկապատել են այն և նվիրել ս. Նշան եկեղեցուն, մանրամասնորեն հիշատակված են այգու չորս կողմերի սահմանները, ի հիշատակ այդ բոլորի կանգնեցրել են խաչքարը՝ 1568 թ.:

Հավել. արձ. 10.

Խաչքարերի վրա գրված և նրանց նշանակությունը պարզող նման փաստերի թիվը կարելի է տասնապատկել. բավական համարելով մեջ բերվածները, կարևոր ենք համարում մեկ հատ էլ մատենագրական հաղորդում հիշատակել:

Ստ. Օրբելյանը նկարագրելով Վայոց ձորի նշանավոր Նորավանքի հիմնադրման պարագաները, պատմում է՝ թե ինչպես Բաղաց իշխան Հասանի որդի Հովհաննեսը, որոշում է հիմնավորվել Ամաղուի ձորում, այդ նպատակով նա իր ընտրած վայրի սահմաններից հեռացնում է գյուղացիներին և բռնությամբ տիրած կալվածքի սահմանները հաստատում է նրանց վրա խաչքարեր կանգնեցնելով.

...Եւ շրջապատի սահմանէ զվայրն ամենայն՝ կանգնելով զնշանն տէրունի, զի մի տնցանիցեն ընդ այն կանայք և լկտի մարդիկ[1]:

Խաչքարերը հանդիսանում են նաև մեր ճարտարապետական մեծ հուշարձանների գեղարվեստական հարդարման կարևոր մաս: Այս նպատակին ծառայող խաչքարերը կարելի է երկու խմբի բաժանել, նախ՝ շենքերի մուտքերի մեկ կամ երկու կողմերում, կամ ներսում, մեծ մասամբ արևելյան պատի տակ պատվանդանների վրա կանգնեցրած խաչքարեր և երկրորդ՝ պատերի մեջ շինության ժամանակ ագուցված: Երկու դեպքում էլ նրանք իրենց տեղով և նշանակությամբ սերտորեն կապված են ճարտարապետական հուշարձանի գեղարվեստական ամբողջության հետ և լրացնում են այն: Այն դեպքում, երբ նրանք պատերի մեջ են ագուցվում, սովորականից ավելի կարճ են լինում և նրանց վրա գրվում են շինության մեկենասների հիշատակագրությունները:

Այսպիսի ճարտարապետական ձևավորման մասեր են կազմում աշխատության մեջ հիշատակված վարպետներ Տիմոթի և Մխիթարի խաչքարերը Գեղարդավանքի գավիթում, Պավղոսի անզուգական խաչքարերը Գոշավանքում, Թաար վարպետի զույգ խաչքարերը Շամշադինի շրջանի Վարագա վանքում և շատ ուրիշներ[2]:

* * *

Բացի այսպիսի իրական փաստերից ու նշանակություններից, խաչքարերի մասին գոյություն ունեն նաև բազմազան սնոտիապաշտական հասկացողություններ և ժողովրդական ավանդություններ, որոնք թեկուզ քիչ կապ ունեն նրանց բովանդակության հետ, բայց հանդիսանալով հեթանոսական հասկացողությունների վերապրուկներ՝ նշանակություն ունեն հին հավատալիքների ուսումնասիրության համար:

Այսպես՝ շատ տեղերում գոյություն ունեն

[1] Ստ. Օրբելեան, Պատմութիւն, 348:

[2] Այս դեպքում մենք հաշվի չենք առնում հին խաչքարերը՝ հետագայում տեղահան արված և նոր շենքերի պատերի մեջ ագուցված՝ երբեմն ճաշակով, երբեմն էլ խիստ անճաշակ ու անկարգ:

խաչքարեր, որոնք կոչվում են «ամենափրկիչ» և համարվում են բոլոր տեսակի հիվանդությունների բուժող. ուխտի էին գնում այդ խաչքարերին և զոհեր մատուցանում. որպես օրինակ նշենք երկուսը միայն: Դրանցից մեկը գտնվում է Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղի արևելյան ծայրում: Դա մի մեծ և շատ գեղեցիկ քանդակներով ծածկված խաչքար է, կանգնած ձևավորված պատվանդանի վրա. ճարտարապետորեն ձևավորված է կողքերից ու տակից. գլուխը պսակվում է ճակտոնով:

Մյուսը գտնվում է Եղեգնաձորի շրջանի Ալայազ գյուղում, ձևավորված է նախորդի նման: Երկուսն էլ XIII դարի գործեր են:

Մեծ տարածում ունեն «Հազախաչ» կոչված խաչքարերը. հավատում էին, որ նրանք բուժում են հազով տառապող հիվանդներին. ուխտի էին տանում մեծ մասամբ երեխաներին:

Գոյություն ունեն այլևայլ առանձին հիվանդություններ բուժող խաչքարեր, ինչպես «Թալալոց» կոչվածները, որոնք իբր թալկացողներին են բուժում և այլն:

Առանձնապես շատ են այն խաչքարերը, որոնք ժողովրդի մեջ հայտնի են «Ցասման խաչ» անունով, որոնց մասին հարկ ենք համարում մի քանի խոսք ասել:

Դեռևս Գ. վ. Սրվանձտյանցն ու Ս. Հայկունին գրի են առել «Ցասման խաչի» հետ կապված սնոտիապաշտություններ. Սրվանձտյանցը գրում է.

«Ցասման խաչ այն խաչքարերն են, որ քաղաքից դուրս ու ըստ մեծի մասին վանքերուն մոտ, գեղերուն մոտ, արտի, անդաստանի բոլորը գտնված բլուրներուն վրա տնկված են առհասարակ... Թե ինչու համար ըսված են ցասման խաչ, վասն զի երբ տարաժամ ձին կամ կարկուտ տեղայ, բերքերուն վնաս է, երբ մարախն ու թրթուրը բոյսն ու կանաչը դասացնեն, երբ երաշտություն լինի, երբ երկրաշարժ լինի. և ինչ վնաս որ պատահի երկրին, այն որ մարդոց ըրածը չէ. Աստուծոյ ցասումն կհամարին. և այդ ցասման դեմն առնելու համար Քրիստոսի պատկերը կբարձրացնեն այսպես երկնքին առջև, որ պատուհասի հրեշտակը պատկառի խաչեն և աստված հաշտվի»[1]:

1 Գ. վ. Սրվանձտեանց, Գրոց-բրոց, Պոլիս, 1874, էջ 117—118:

Ս. Հայկունին նշում է «Ցասման խաչերի» շատ մեծ տարածումը հատկապես Բագրևանդում, կապված նույն հասկացողությունների հետ[1]: Պրոֆ. Մ. Աբեղյանը, Սրվանձտյանցի այդ հաղորդման հիման վրա, նրանց համարում է հեթանոսական հավատալիքների վերապրուկ, կապված հեթանոսական շրջանում կանգնեցրած նման կոթող-կուռքերի հետ, որոնց հետագայում, նույն նպատակներով փոխարինեցին «Ցասման խաչերը» և որպես անցողիկ շրջանի նմուշ, օրինակ է բերում հեթանոս կուռքերից «վիշապները», կանգնեցրած բնական պատահարների դեմ, որոնցից մեկի վրա քրիստոնեական շրջանում քանդակված է խաչ[2]:

Ինչպես հեթանոսության շրջանից մնացած, այնպես էլ միջին դարերում առանձնակի կանգնած խաչքարերի մասին ժողովրդի մեջ գոյություն ունեն զանազան գեղեցիկ ավանդություններ: Դեռևս Թ. Արծրունին Վանի մոտի նշանավոր Լեզք գյուղի շրջակայքում կանգնած, ուրարտական շրջանից մնացած, մենհիրանման քարերի մասին ասում է, որ ժողովրդի մեջ գոյություն ունի գեղեցիկ ավանդություն, թե իբր այդ քարերը կանգնած են Շամիրամի սպանված զինվորների վրա[3]:

Գ. Սրվանձտյանցը կրկին նույն ժամանակներից մնացած Վանի մոտի Ակրփու քարեր կոչված ժայռին կից քարերի մասին պատմում է, որ ժողովրդի մեջ գոյություն ունի ավանդություն, իբր իրենց ծնողների կամքին հակառակ ամուսնացող հարսն ու փեսան և հարսնիքավորներն են քարացել՝ ծնողների անեծքի հետևանքով:

Բազմաթիվ խաչքարեր կան գյուղերից դուրս, որոնց մասին գոյություն ունեն գեղեցիկ ավանդություններ. կան իրար մոտ գտնվող խաչքարեր, որոնք կանգնեցված են թշնամիներին զոհ դարձած, քույր և եղբոր, ըստ ավանդության իրենց մուրազին չհասած դժբախտ սիրահարների հիշատակին և այլն:

1 Ս. Հայկունի, Բագրևանդ, Ջրարաշխ գավառ, Էջմիածին, 1894, էջ 130:

2 Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 88—89:

3 Թ. Արծրունի, Պատմություն, էջ 215:

խաչքարի հետ կապված մի այդպիսի դեպքի ավանդություն անհրաժեշտ ենք համարում շարադրել համառոտակի։

Կոտայքի շրջանի Ջրվեժ գյուղի արևելյան ծայրին, այգու մեջ, պատվանդանի վրա կանգնած էր մի խաչքար, որին գյուղացիք ակնածարար էին վերաբերվում, մի հասակավոր մարդ այդ առթիվ պատմեց հետևյալը.

Մեր գյուղի իսկական անունը ոչ թե Ջրվեժ է, այլ՝ Ջրվեճ. հին ժամանակներում շատ սակավաջուր է եղել մեր գյուղը և հարևան գյուղերի հետ հաճախակի վեճեր է ունեցել ջրի համար։ Հարևան Թեջրաբաղ, այժմ Ձորաղբյուր գյուղի հանդում կար մի բարակ աղբյուր, որը խմելու ջուր էր մատակարարում գյուղին. մեր գյուղի ծերունի և իմաստուն մարդիկ, հետազոտելով այս աղբյուրը, գտան, որ եթե նրա ակունքները փորվեն և մաքրվեն, առատ ջուր կլինի և երկու գյուղերին էլ կհերիքի. համաձայնվեցին և երկու գյուղերի ջանքերով աշխատանքը կատարվեց, բայց հոսող ջուրը երկու գյուղին միաժամանակ չէր կարող բավարարել. սկսվեց վեճը՝ ջրից առաջին հերթին օգտվելու համար. ի վերջո որոշվեց այսպես, այն գյուղացիները, որոնք առաջինը զոհ կմատուցանեն աղբյուրի գլխին, ջրից օգտվելու առաջին հերթը նրանց կպատկանի։ Թեջրաբակցոց անասուններն ավելի մոտ էին աղբյուրի ակունքին, մի քանի երիտասարդներ իսկույն վազեցին ոչխար բերելու, մեր գյուղն ու անասունները հեռու էին, թեև մերոնցից էլ վազողներ եղան, բայց ոչ մի հույս չկար, թե ժամանակին կկարողանան հասցնել։ Շուտով հեռվից երևում են թեջրաբակցիք զոհի ոչխարով, իսկ մերոնք չկան. այդ ժամանակ աղբյուրի գլխին կանգնած մեր կտրիճներից մեկը դուրս է քաշում իր դաշույնը և ասում. Թող ես զոհ դառնամ մեր գյուղի համար և կտրում է իր վիզը։ Ահա գյուղի բարեկեցության համար իրեն զոհած այդ ազնիվ կտրիճի վրա է կանգնած այս խաչքարը։

Իր ժամանակին Մ. Սմբատյանցն էլ է լսել ավանդություններ այս անձնազոհ հերոսի մասին, բայց հարկ չի համարել ամբողջովին գրի առնել. սակայն Մ. Սմբատյանցը արտագրել է մի տապանաքարի, այն ժամանակ մասամբ վերծանելի, հետևյալ արձանագրությունը։

Այս է տապանս Խաչատուրի, որ սպանաւ ի վերայ ջրիս Ջրվէժո... թվին: ՌԻԲ: (1573)[1]:

Մեզ բերված սակավաթիվ օրինակներն էլ համոզիչ կերպով ապացուցում են, որ միանգամայն սխալ է ուսումնասիրողների այն կարծիքը, թե խաչքարերը գերեզմանական կոթողներ-գերեզմանաքարեր են և մյուս կողմից պարզում այն, որ խաչքարերը կանգնեցվել են տարբեր նպատակներով։ Քրիստոնեության հիմնադիրները Հայաստանում չկարողանալով ժողովրդի միջից արմատախիլ անել հեթանոսական շրջանում կանգնեցված կոթողների հետ կապված հավատալիքները, ստիպված են եղել սրբագործել այդ կոթողները, դնելով նրանց վրա խաչի նշանը միայն և եթե մենք մտքով խաչքարի վրայից ջնջելու լինենք խաչի նշանը, ապա իրենց իրական, արձանագրական բովանդակությամբ, նրանք կդառնան նաև հեթանոս հավատալիքների և ժողովրդական սնոտիապաշտությունների նյութական արտահայտություններ։ Արձանագրությունների և ժողովրդի մեջ պահպանված անուններն իսկ ապացուցում են նրանց միանգամայն ուրույն և շիրմաքարի հետ կապ չունենալու հանգամանքը, ինչպես, օրինակ, սահմանախաչ, ճանապարհախաչ, ամենափրկիչ, հաղախաչ, ցասման խաչ, թալալոց և այլն։

ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Նախորդ հատվածներում պարզեցինք, որ խաչքարերի սկզբնական ձևը եղել է «թևավոր» խաչը, որն ինքնուրույն պարզ ձև ուներ, և եթե նրան գեղեցկացնելու ջանք էր թափվում, ապա նրա համար պատվանդանի դեր կատարող քառակուսի կոթողներն էին զարդարվում պատկերաքանդակներով և այլ զարդերով։ Այդպես էլ նրանք շարունակվել են մինչև VII դարը։

Արաբական արշավանքների հետևանքով ինչպես ճարտարապետական այլ հուշարձանների, նույնպես և խաչքարերի կանգնեցման

1 Մ. Սմբատեանց, Գեղարքունի, էջ 257։—Մեր վերծանությամբ՝ ԱՅՍ ՏՈՒՆ ՍԳՈ... [ԽԱՉԱՏՐԻ, ՈՐ ՍՊԱՆԱՒ/Ի ՎԵՐԱ ՋՐԻ ՋՐՎԻԺՈ-ԿԻՍԱԻՐԵԱ ԵՒ Ի ՅԱՃԽԱՐՀԷ./ ԵՒ ԵԹՈՂ ԿՍԿԻ/Ծ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍԲ ՆՇԱՆԻՍ ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՏՐ./ Թ[ՎԻՆ] ՌԻԲ, (1173)։ ՎԱՐԴ.

աշխատանքները գրեթե դադարում են մոտ երկու դար, մինչև IX դարի վերջերը, միայն IX դարից են առայժմ հայտնի իսկական իմաստով ձևավորված խաչքարերը:

IX դարից հայտնի սակավաթիվ խաչքարերը շատ անարվեստ են դեռևս. լավագույն ապացույցն այն է, որ Գառնիում կանգնած 879 թվական կրող Կատրանիդե թագուհու խաչքարը մի կոպիտ քարեկոթող է դեռևս: IX—X դարի վերջերի մեզ հասած սակավաթիվ խաչքարերն ունեն հետևյալ առանձնահատկությունները. նախ՝ պատվանդանները ցածր են, գետնին հավասար, վրայի տախտակաձև քարերը շատ մեծ են և վերին ծայրում կամարաձև մշակված, երեսի աջ և ձախ կողմերի շրջանակները շատ նեղ են և զուրկ զարդաքանդակներից. եղած զարդերը գերազանցապես բուսական են, ռեալիստական և մեծ ու մոնումենտալ գծերով գտնվում են շրջանակներից ներս, խաչի հորիզոնական թևերի ներքևում և վերևում:

Սակայն այս ընդհանրությունների հետ նրանց կարելի է բաժանել երկու խմբի. մի դեպքում վրայի տախտակաձև քարը խիստ լայն է և մյուս դեպքում նեղ. առաջին լավագույն նմուշը Բասարգեչարի շրջանի Մեծ Մազրա գյուղում գտնվող խաչքարն է, շինված 881 թ., որի նկարագիրը հետևյալն է. դա մի մեծ և լայն քար է, կանգնած գետնին հավասար պատվանդանի վրա, ներևում փոքր ինչ նեղ և գլուխը կամարաձև, կենտրոնում մեծ խաչ է՝ հարթաքանդակ, հորիզոնական թևերը քիչ կարճ ուղղահայացների համեմատությամբ խաչի յուրաքանչյուր թևերի ծայրերը կենտրոնի համեմատությամբ լայնանում են և վերջանում իրենց ծայրերում երկու կլոր և մեջը փոս գնդերով, վերի թևի վերին ծայրից սկիզբ են առնում վազի երկու ոստեր և աջ ու ձախ թեքվում ներքև՝ իրենց ծայրին ունենալով ներքև կախված մեծ ողկույզներ, սակայն առանց հատիկների մշակման: Ներքևից, խաչի ներքին թևի երկու կողմերից բարձրանում են մեկական ոստեր, յուրաքանչյուրի վրա չորս տերև, մեկ կողմ նայող, որոնց վերինները սրանկյուն են, մեջտեղի երկուսը կլոր ծայրերով և ներքևինը նեղ ու ոլորված դեպի ցածր: Խաչի կենտրոնում կլոր շրջանակ է մեջն ուռուցիկ, որը հիշեցնում է փայտե խաչերի բևեռը, որի վերապրուկն է անշուշտ, ոճավորված: Շրջանակները շատ նեղ են և զարդի կամ արձանագրության համար միանգամայն անհարմար: Խաչքարի թիկունքը մշակված է, որտեղ և գրված է թվականը՝ 881 և ընդարձակ արձանագրություն, որը լրիվ մեջ ենք բերում՝ նկատի ունենալով հրատարակությունների մեջ կատարված սխալները:

Հավել. արձ. 11: Ալբոմ, նկ. 52:

Երկրորդ խմբի լավ նմուշ է Տեկորի դերեզմանատան մեջ 964 թ. կանգնեցրած խաչքարը: Գետնին հավասար պատվանդանի վրա բարձրանում է նեղ ու երկար խաչքարը. գլուխը կիսակամար, քարի վերին մասում քանդակված է սեղանակերպ խորություն, որի կենտրոնում խաչն է, ուղղահայաց թևերը փոքր-ինչ երկար, թևերը դեպի դուրս լայնանում են և գծված են երեք ակոսներով, որոնք վերջանում են մեջը փոս գնդիկներով: Այսպիսի գնդիկներ կան հորիզոնական թևերի վերևից և ներքևից, թևերից հեռու և առանձնակի, խաչը կանգնած է եռաստիճան հիմքի վրա: Թևերի միացման կենտրոնում նախորդի նման գնդիկ կա. խաչի բռնած տարածությունը քարի կեսից փոքր է, ճակատին և ներքևի բաց տարածության վրա գրված է արձանագրությունը, երկու կողմերի շրջանակները նեղ են և զուրկ որևէ զարդաքանդակից (ալբոմ, նկ. 53):

X դարի վերջերից խաչքարերի վրա նկատվում է զարդաքանդակի հաճախակի երևան գալը: Այսպիսի առաջին խաչքարի լավագույն նմուշն է Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղից պետական պատմական թանգարան փոխադրվածը: Սրա վերևի հյուսիսային մասը թեև կոտրված է, բայց ընդհանուր պատկերին չի խանգարում: Նախորդների նման լայնանիստ քարի վերին ծայրին կամարի ձև չի տրված, դրա փոխարեն խաչը վերցրած է կամար շրջանակի մեջ: Խաչի թևերը գծված են չորս ակոսներով. ծայրերի գնդերը զույգական են և գծված են կարկինով ու մեջը չորս գծեր խաչաձևում են շրջանակը: Թևերի վրա ևս նույն տիպի շրջանակներ են ձևավորված, հորիզոնականների՝ մեկական և ուղղահայացների՝ զույգ: Խաչի թևերի միացման տեղում նույնպես գունդ է՝ շրջան, մեջը չորս գծերով խաչավորված. ուղղահայաց ներքին թևի բնից սկիզբն են առնում ձևավորված ոստեր, դրանց վրա, դեպի ներս

բազմաթիվ տերևներ կամ ցողուններ, որոնց ծայրերին ծաղիկների փոխարեն կարկինագիծ շրջանակներ և մեջը չորս գծերով խաչաձևող գնդեր, խաչքարի տակ խորաքանդակ գունդ է. շրջանակները նախորդներից ավելի լայն են և իրար մեջ անցնող շրջաններով շղթայաձև զարդարված. տակին արձանագրություն է և թվականը՝ 996 թ.:

Հավել. արձ. 12: Ալբոմ, նկ. 54:

Նորադուզի այս խաչքարը կարելի է դիտել որպես մի նմուշ միայն խաչ պատկերող արձանից անցումն դեպի զարդաքանդակված խաչքարերը:

XI դարի կեսերին խաչքարերի վրա երևան է գալիս մի կարևոր կանոնական ըմբռնման արտահայտություն, դա խաչի ձևի համասարակողմ անելու ձգտումն է: Ինչպես տեսանք, հիմնականում խաչը կրող քարը լինում է լայն և նեղ, լայն քար է ընտրվում, որ նրա վրա հնարավոր լինի համասարաթև խաչ քանդակել, այս դեպքում նույնիսկ գեղչվում են շրջանակները, որպեսզի հորիզոնական թևերի համար ազատ տեղ լինի. իսկ այն դեպքում, երբ քարը նեղ ու երկար է, նրա մակերեսի մի մասումն է միայն խաչ քանդակվում, որպեսզի ուղղահայաց թևերը մնան կարճ: Դրանից բացի խաչի թևերի միացման կենտրոնում բևեռի ոճավորված արտահայտությունը միշտ կա, իսկ Նորադուզի խաչքարի նույնիսկ թևերի ծայրերին էլ խաչելության բևեռների ոճավորված մոտիվներն են մնում:

XI դարի երկրորդ կեսից հետո խաչքարերի կուլտուրան արագ թափով զարգանում է: Նրանք մեծ չափերով կանգնեցվում են ամենուր. միաժամանակ աստիճանաբար մոռացվում է խաչի կանոնական համասարաթև ձևը, որը կաշկանդում էր կազմողներին ազատորեն և արվեստով ձևավորել քարի ամբողջ մակերեսը: Քանի որ բոլոր դեպքերում պատվանդանի վրա կանգնած քարը առնվազն երկու անգամ երկար պետք է լիներ լայնքից, որպեսզի ցցուն և վերասլաց կոթողի տեսք ունենար, այդ պատճառով էլ անհրաժեշտ եղավ կանոնական ձևը զոհել արվեստագիտական ճաշակին. այդ կոթողները տաղանդավոր վարպետների անկաշկանդ երևակայության և նուրբ արվեստի շնորհիվ դարձան գեղարվեստական մեծարժեք գործեր:

XI դարի վերջից սկսած մինչև XIII դարի վերջերը խաչքարերի ծաղկման փայլուն շրջանն է: Խաչքարերը դառնում են ժողովրդական զարդաքանդակի վարպետ, տաղանդավոր կազմողների անսպառ եռանդի ու ջանքերի սիրված կոթողներ, որոնց վրա ամենանուրբ ու գեղեցիկ գծերով փորագրվում են բուսական ու երկրաչափական անհաշիվ մոտիվներ: Զարմանք ու հիացմունք են պատճառում դիտողին մոտիվների բազմազանությունը, նրանց կատարման տեխնիկայի նրբությունը և դասավորման ճաշակը:

Այդ մեծարվեստ քանդակները իրենց էությամբ ոչ մի կապ չունեն կրոնական հասկացողությունների հետ. դրանք զուտ աշխարհիկ և ժողովրդական արվեստի արտահայտություններ են: Նույնիսկ կենտրոնում անպայմանորեն բազմած խաչը ենթարկվում է զարդարանքի և կորցնում խաչելության հետ կապված իր մռայլ բովանդակությունը:

Համեմատած նախորդ շրջանի հետ, զարդաքանդակի գծերը սակայն ավելի մանր են և աստիճանաբար գնում են դեպի իրենց ռեալիստական բնույթի թուլացումը, ճիշտ այնպես, ինչպես ճարտարապետական մեծ հուշարձանների զարդաքանդակները: Այդ երևույթը միանգամայն հասկանալի և օրինաչափ է. բացի ժամանակի գեղարվեստական ըմբռնումների և նյութի (քար) նույնությունից, այստեղ ամենաէականը քանդակազարդող վարպետների նույնության խնդիրն է:

Ամեն կասկածից վեր է, որ այն վարպետը, որը այս կամ այն գյուղում կամ վանքի մոտ խաչքարեր է քանդակել, նույն ժամանակներում մասնակցել է նաև այդ վայրում շինվող եկեղեցիների քանդակազարդման աշխատանքներին: Նկատի ունենալով մեծամեծ հուշարձանների՝ բակերում կանգնած խաչքարերի զարդաքանդակների և ժամանակով նրան մոտ շինված եկեղեցու զարդարված մասերի մոտիվների և ընդհանուր ոճի նմանությունները կարող ենք երկուսն էլ նույն վարպետ-քարգործի ձեռագործը համարել: Այս հանգամանքը մեծ հնարավորություններ է ստեղծում մեկ կամ մյուս հուշարձանի թվականով թվագրել մյուսը և հայտնաբերել վարպետին: Եվ որովհետև խաչքարերը մեծ մասամբ թվագրված են լինում, ուստի կարող ենք նրանց միջոցով պարզել մեծ հուշարձանների թվականները:

Այս աշխատության մեջ, իրենց տեղում մի շարք այսպիսի համեմատություններ և նույնություններ արված են, ինչպես Մոմիկ վարդպետ, Պողոս և այլ վարպետների բաժիններում։

Հենց այս շրջանում, երբ խաչքարերը պարզ կոթող, հիշատակարանից վեր են ածվում արվեստի գործերի, նրանց կազմող վարպետների մեջ էլ զարգանում է արվեստագետի անհատականության վեհ զգացմունքը և գերազանցապես անհատական աշխատանքի արդյունք հանդիսացող այս հուշարձանների վրա նրան կերտող վարպետը դրոշմում է նաև իր անունը, դա մի արժեքավոր սովորություն է, որին և մենք պարտական ենք ժողովրդական այդ տաղանդավոր զավակներին ճանաչելու գործում։

XIII դարի կեսերից Հայաստանն ընկնում է իր պատմական կյանքի ամենածանր ու դաժան վիճակի մեջ։ Մոնղոլների, թաթարների և ի վերջո Լենկթեմուրի արշավանքները հաջորդելով մեկը մյուսին, ավերակների կույտ են դարձնում ամբողջ երկիրը. կոտորածների, գերեվարության և տնտեսական քայքայման այս ծանր պայմաններում բնականաբար ընդհատվում են նաև շինարարական աշխատանքները, դրանց թվում նաև խաչքարեր կանգնեցնելը։ XIV—XV դարերում նրանք շատ քիչ են կանգնեցվել, այն էլ Հայաստանի լեռնային, քիչ վնասված վայրերում միայն։ XVI—XVII դարերում, վերջնականապես պարսկական տիրապետության տակ ընկած Արևելյան Հայաստանում, ուր տեղական հայ մելիքների կառավարչություններ կային, նոր թափ է ստանում խաչքարեր կանգնեցնելու սովորությունը։ Այս ժամանակաշրջանում սկսվում է զարդաքանդակի ծաղկման նոր էտապ, որի բնորոշ հատկանիշներն են գծերի էլ ավելի մանրացումն ու նրբացումը, քանդակների նյութ հանդիսացող տարրերի պայմանական ու ոճավորված լինելը։

XIV դարից սկսած ավերածությունների պայմաններում մեծ ու մոնումենտալ շենքեր շինելը դառնում է անհնար, դրանք շատ հազվագյուտ են, այն էլ լեռնային մասերում իրենց գոյությունը քարշ տվող ֆեոդալական տիրույթներում միայն։ Տաղանդավոր քարգործների համար մնում էր համեմատաբար փոքր, կարճ ժամանակ և նյութական մեծ միջոցների հետ չկապված բնագավառ, որտեղ նրանք կարող էին իրենց արվեստով զբաղվել։ Դա խաչքարերի արվեստն էր, և այդ փոքրիկ հուշարձանները դառնում են նրանց գուրգուրանքի առարկան, մշակվում և մեծ արվեստի կոթողներ են դառնում ջերմացած քարգործ վարպետների տաղանդի շնչով։

Թերևս առանց գիտակցելու իրենց գործի մեծությունը, այդ տաղանդավոր վարպետները XIII դարից հետո հայ ճարտարապետության՝ մոտ երկու դար տևող դադարի ընթացքում՝ այդ փոքրիկ հուշարձաններով — խաչքարերով կարողանում են վառ պահել քարգործ արվեստի ու ճարտարապետության երբեմնի փայլուն ջահը, կենդանի պահել այդ մեծ արվեստի տրադիցիաները ժողովրդի մեջ, սովորեցնել ու դաստիարակել վարպետների նոր սերունդներ։

ԽԱՉՔԱՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Իրենց կատարյալ վիճակում խաչքարերն ունեն հետևյալ նկարագիրը. նրանք երկու հիմնական մասից են բաղկացած՝ խորանարդաձև պատվանդանից և վերևից նրա մեջ ագուցված տախտակաձև քարից։

Պատվանդանը, որ հնում մինչև վերին երեսը թաղված էր լինում հողի մեջ, XI դարից սկսած աստիճանաբար բարձրանում է վեր և դառնում տեսանելի։ Հաճախ պատվանդանի քարը հսկայական մեծություն է ունենում, երբեմն էլ հենց տեղում, բնական քարաժայռի վրա փոս է փորվում և խաչքարն ագուցվում մեջը։ Պատվանդանը մեծ մասամբ միայն կոփվում է կոպիտ կերպով, բայց և երբեմն լինում են սրբատաշ և ձևավորված, վրան արձանագրված կամ խորանավոր։

Կազմող վարպետի ուշադրության կենտրոնում, սակայն, գերազանցապես պատվանդանի վրայի խաչքարն է. այստեղ է փայլում նրա ձիրքը։ Խաչքարի արևմտյան երեսը հետևյալ կերպ է բաժանվում. կենտրոնում փորվում է սեղանակերպ կամ վերևից խորանաձև հարթություն, որտեղ տեղավորվում է հարթաքանդակ խաչը։ Այն հնում կանգնած էր աստիճանների վրա, իսկ հետագա դարերում մեծ մասամբ, գեղեցկորեն զարդարված հարթաքանդակ գնդի վրա, որը հավանորեն երկրագնդի սիմվոլն է։

Խաչից վերև քարի ամբողջ լայնությամբ քիչ դուրս ընկած ճակատն է, որը զարդարվում է ճոխ քանդակներով։ Վերջին դարերում այդ ճակատին տրվում է գոգավոր ձև, որն իր վերին եզրին ունենում է նեղ քիվ, միշտ արձանագրված։ Խաչի հարթության վրա և ձախ կողքերին, ճակատից սկսած լայն շրջանակներ են իջնում մինչև խաչի ստորին սահմանը, որոնք ծածկված են լինում քանդակներով։ Խաչի ներքևում, ճակատին հավասար, բաց տարածության վրա, մեծ մասամբ արձանագրություններ են փորագրվում։

Այս ընդհանուր նկարագիրը, սակայն, հաճախ խախտվում է, կազմողների ճաշակի և խաչքարի նպատակի համապատասխան։ Այն դեպքերում, երբ խաչքարը որևէ գործարքի օրինականացման համար է կանգնեցվում և հետևաբար իր վրա պետք է կրի իրավական կարգի մեծ արձանագրություն, քանդակները զեղչվում են և նրանց տեղում, ամբողջ երեսով մեկ փորվում է արձանագրություն։

Նույնպես և շենքերի պատերի մեջ ագուցվելու համար շինված խաչքարերը, համապատասխան իրենց տեղադրման, խոտորում են ընդհանուր գծերից։ Նախ սրանք բնականաբար ավելի կարճ են լինում, երբեմն նույնիսկ շարքի երեսպատման քարերին հավասար, ապա դուրս ընկած քիվ և պատվանդանի մեջ ագուցվելու պոչուկ չեն ունենում։

Արձանագրությունները գրվում են մեծ մասամբ նեղ քիվի վրա և տակի ազատ մասում։ Մեծ տեքստերը նաև թիկունքին, երբեմն էլ պատվանդանի վրա։

Խաչքարի միայն մեկ, արևմտյան երեսն է մշակվում և զարդարվում, ճնշող մեծամասնությամբ. թիկունքը՝ արևելյան երեսը, թեթև հարթվում է միայն, նույն և հյուսիսային և հարավային նեղ կողերը։ Այս երևույթը, հավանաբար, կանոնական հասկացողության հետևանք է. եկեղեցական ծիսական կանոնի համաձայն քրիստոնյան աղոթելիս կանգնած պետք է լինի երեսը դեպի արևելք դարձրած, որի առաջ դրված են լինում եկեղեցու մեջ խաչ կամ այլ սրբություններ, որոնք երեսով դեպի արևմուտք են նայում և որոնց միայն հենց այդ արևմտյան երեսն է լինում մշակված, որպես հասարակության տեսանելի մաս. դրսում կանգնած խաչքարի արևմտյան երեսն է միայն մշակվում, որովհետև խաչի նշանն այդ երեսին է և նրա առաջ աղոթող կամ անցնելիս խաչակնքող մարդը պետք է նայեր արևելք և միայն այդ երեսը տեսներ։

Կան հազվագյուտ խաչքարեր, այն էլ վերջին դարերի, որոնց թիկունքին ևս խաչեր են քանդակված, մեզ հայտնի են օրինակ, Բասարգեչարի շրջանի Մազրա գյուղի Մելիք Շահնազարյանների տոհմին պատկանող երկու խաչքարեր, XVII դարում կանգնեցրած և նույն շրջանի Ակունք (Ղրխբուլաղ) գյուղի սահմաններում Սարգիս երեցի կազմած և կանգնեցրած խաչքարը XVI դարից։

Այս հիմնական և ընդհանուր գծերը չեն կարող, հարկավ, սպառել խաչքարի բազմաշխի առանձնահատկությունները, որոնք արդյունք են տարբեր շրջաններում գոյություն ունեցող քարի տեսակների և մանավանդ տեղական կնիք կրող հատուկ դպրոցների, որոնք առաջ են եկել որևէ տաղանդավոր կազմողի ազդեցությամբ և երկար ժամանակ նկատվում են նրա աշակերտների և հետևորդների գործերում։ Այդ առանձնակի հատկանիշների պատկերը գծել ենք առանձին կազմողների մասին խոսելիս և առայժմ, այսքանը միայն կարելի է ասել. իսկ ավելին՝ այն ժամանակ, երբ ավելի մանրամասն կուսումնասիրվեն մեր խաչքարերը արվեստագիտական տեսանկյունով։ Խաչքարերի մասին ներկա պատմաբանասիրական թռուցիկ ակնարկի նպատակն է նյութի ընդհանուր կողմի բացատրությունը ներկայացնել որպես ֆոն՝ խաչքարերի և նրանց կազմողների նշանակությունը հասկանալի դարձնելու համար։ Իսկ նրանց լրիվ արժեքն ու նշանակությունը, ոչ միայն հայկական, այլև ընդհանուր արվեստի համար կպարզվի, երբ որևէ տաղանդավոր արվեստագետ ձեռնամուխ կլինի և կկատարի նրանց զարդաքանդակների ուսումնասիրության շնորհակալ գործը։ Սակայն այժմ պետք է ասենք, որ միայն Հայաստանում զարգացած հուշարձանների այս տիպը իր վրա կրող քանդակների բարձրարվեստ և բազմազան մոտիվներով՝ կարող է զուգակիցը համարվել մեր միջնադարյան մանրանկարչության և խոշոր ավանդ մտցնել մարդկային զարդարվեստի պատմության գանձարանում։

* * *

Հետագա էջերում տրվում են քանդակազարդող՝ բոլոր, մինչև այժմ հայտնի վարպետ-

ների՝ անունները, ընդգծված տառերով, ապա նրանց կերտած հուշարձանների վայրը, համառոտ նկարագրությունը և ժամանակը։

Վարպետներին դասավորել ենք ժամանակագրական կարգով, ըստ դարերի և տարիների։

Այն դեպքերում, երբ հուշարձանի վրա պահպանված արձանագրությունը կարճ է, կամ վարպետի կենսագրության կամ արվեստի մեր համառոտ բնութագրի համար անհրաժեշտ՝ տեղավորում ենք բնագրի մեջ, իսկ այն դեպքերում, երբ այդ անհրաժեշտությունը չկա և մանավանդ երբ նույն վարպետի կերտած շատ հուշարձանների վրա կան արձանագրություններ, դրանք տեղավորում ենք վերջում, «Հավելված» բաժնում։ Սկզբնական շրջանում արձանագրությունների այդ «Հավելված» մասը բաց էինք թողել. այժմ մեր բարեկամ մասնագետների, մանավանդ ակադ. Հ. Օրբելու խորհրդով՝ լրացրինք, հաշվի առնելով, որ արձանագրությունների մի մասը հրատարակում ենք առաջին անգամ, և նախկին հրատարակություններն էլ ցրված են բազմաթիվ գրքերի մեջ ու երբեմն մեծ սխալներով, որոնցից մի մասը տեղում ստուգելով ուղղել ենք, կարծում ենք, որ ի մի ամփոփելով և լրացնելով՝ նպաստած կլինենք հետագա ուսումնասիրողների գործին։

Այն արձանագրությունները, որոնք օգտագործված են բնագրի մասում, էջատակի ծանոթություններում նշանակել ենք դրանց հրատարակությունների աղբյուրներն ու հեղինակները, իսկ «Հավելված»-ի մեջ տրված յուրաքանչյուր արձանագրության տակ՝ անմիջապես։ Թե՛ բնագրում և թե՛ «Հավելվածում» աղբյուրը չհիշատակված արձանագրությունները չունեն հրատարակություններ, դրանք մեր ձեռագիր ժողովածուներից են վերցրած, որի մասին ամեն առանձին դեպքում հիշատակելն ավելորդ ենք համարել։

ԿԱԶՄՈՂՆԵՐ

ԺԱ դար.

1. Սարգիս — *Անիի Գագկաշեն եկեղեցու հյուսիս-արևմտյան կողմում տարածվում են պալատական շինության ավերակներ, բազմաթիվ մեծ և փոքր սրահներից բաղկացած, որոնցից ոմանք ներքուստ սյունազարդ են, ճոխ քանդակազարդված և շքեղ մուտքերով։ Գագկաշեն եկեղեցին ավերվելիս՝ նրանից մի մեծ բեկոր ընկել ու խորտակել է այդ շենքի գլխավոր մուտքը.*

«Որ իր քանդակազարդ աստղաձև մողայիկներով ոչ միայն Անիի ճարտարապետական գոհարն էր, այլև հիմա ալ մեր Թանգարանի գլխավոր հարստություններեն մեկն է իր բազմատեսակ մնացորդներով։ Մոտավորապես չորս հարյուր աստղ կզարդարեր դըռան ճակատը անոնց ամենն ալ առանձին տեսակ քանդակված. աստղերեն մեկուն վեց ծայրերուն վրա գրված էր վեց բարձրաքանդակ տառերով Սարգիս *անունը, որ կամ սեփականատերն էր և կամ անոր բնակության հատկացած»*[1]։

Ինչպես Ն. Մառը, նույնպես և մեծավաստակ Թ. Թորամանյանը հենվելով այդ միակ փաստի, Սարգիս *անվան վրա, վերջինիս համարել են այդ ապարանքի տերը և շենքը կնքել են «Սարգսի» պալատ անունով*[2]։

Կարծում ենք, որ երկու ուսումնասիրողներն էլ այս դեպքում սխալվում են. նախ որ ըստ Թ. Թորամանյանի՝ շենքի «հասարակական կամ ազգային մեծ շինություն ըլլալուն ոչ մի կասկած չկա»[3] *և երկրորդ, սեփականատիրոջ անվան այսպիսի կարճ հիշատակություն, այն էլ գրված տառերով և հյուսված զարդաքանդակների մեջ բնավ չի հանդիպում և աններևակայելի է։ Մինչդեռ այդ նույն ձևի հիշատակագրություններ վարպետների համար հանդիպում են և միանգամայն հասկանալի են։*

Սարգիսն առնվազն այդ փառահեղ մուտքի քանդակազարդող վարպետն է. անհավանական չէ, որ շենքի ուրիշ քանդակազարդ մասերն էլ նրա ձեռագործը լինեն և գուցե նույնիսկ ճարտարապետը լինի։

Գագկաշեն եկեղեցին, որը բացվեց 1905—6 թվականների պեղումների ընթացքում, քանդված է համարվում XI դարի կեսերին[4]*, հետևաբար Սարգսի անունը կրող*

[1] Թ. Թորամանյան, *Նյութեր…, Ա, 276։*

[2] *Н. Я. Марр.* О раскопках в Ани летом 1906 г. (предварительный отчет). Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. X, Петербург, 1907. *Նույնի* „Ани", *էջ 6, այս վերջին աշխատության մեջ, Մառը Սարգսին համարում է քանդակագործ-ճարտարապետ։*

[3] Թ. Թորամանյան, *Անդ, 276։*

[4] *Անդ, 276։*

մուտքը և շենքը դրանից առաջ պետք է որ շինված լինեն, ուրեմն ամենաուշը XI դարի սկզբներին (Ալբոմ, նկ. 56, 57):

ԺԲ. դար

2. Յեսու գծող — Մուշի Առաքելոց վանքի արևելյան կողմում, պարսպից դուրս կանգնած են ինը խաչքարեր, ագուցված մեծ ժայռապատ քանդակների վրա: Խաչքարերի այդ խումբը կոչվում է «Խաչաթառ» կամ «Թարգմանչաց»: Դրանցից երկուսը Յեսու գծողի ձեռագործն են. մեկի վրա նրա ստորագրությունը մնացել է լրիվ, մյուսին թերի, բայց վերականգնելի.

...Եւ պատուական Պետրոս քահանայ որ կանգնեաց զխաչս ի բարեխաւսութի[ւն]... ՇՀԲ: զՅեսու գծողս. ...... 1123 թ.:

Ի թվականութ(եան) Հայոց :ՇՂ: կանգ[նեցաւ]... Պետրոսի քահանայի և Կոստան(դն)ի յիշեսջիք ի ՔՍ. աղաչեմ և զԳործողս... ի (Յե)սու ի Նվարի.. Ժ. կա[տարիչք]...[1]... 1141 թ.:

3. Գեորգ Ճոնակ — Կազմել է այդ նույն «Խաչաթառի» երկու խաչքարերը նույն տարվա ընթացքում. կոչում չի գործածում, մի դեպքում ստորագրում է «մեղաւոր Գորգ Ճոնակ», մյուս դեպքում «Մեղուցեալ Գեորգ Ճոնակ»:

Ի թ(ուին) Հ(այոց) :ՇՂԳ: կանոնեցաւ խաչս ի բարեխաւսու(թիւ)ն Ստեփ(աննոսի) Ճոնկանն ննջեցելոյ ի Քս յիշ(եցէք) աղաչ(եմ). զմեղաւոր զԳորգ Ճոնակ.

Ի թ(ուին) Հ(այոց) ՇՂԳ. կանգնեցաւ խաչըս ի բարեխաւսու[թիւն] տ(եառ)ն Դաւթի անյաղթ փիլիսոփաի յիշեցէք ի Քս աղաչեմ. զմեղուցեալ Գէորգ Ճոնակս յիշէցեք 1144 թ.[2]:

Յեսու և Գեորգ Ճոնակ վարպետների օրոք, այն է 1125 թ. մեծ նորոգումներ են կատարվել վանքում, որոնց հիշատակագրությունը գտնվում է նույն «խաչաթառի» խաչքարերից մեկի վրա: Անկասկած է, որ այս երկու անվանի քարգործ վարպետները մասնակցած կամ նույնիսկ ղեկավարած պիտի լինեն այդ աշխատանքներին. ահա այդ արձանագրությունը.

Տ(է)ր Ղազարոս և Տ(է)ր Ստեփանոսի ի թ(ուին) Հ(այոց): :ՇՀԴ: կանգնեցաւ խաչս և նորոգեցաւ սբ. առաքեալքս. Ած ողորմի աշխատողաց սորա[1]:

4. Ատոմ գործող — Կազմել է մի խաչքար Ուխտիկի դուստր Մարգարիտի պատվերով, Բանանց գյուղում.... 1155 թ.:

Հավել. արձ. 13

5. Վարդ — Այս շնորհալի վարպետը քանդակել է մի խաչքար և մի տապանաքար, որոնք դրված են Կոտայքի շրջանի Ջրվեժ գյուղի եզրին, դեպի հարավ-արևելք այգիների մեջ, ոռոգման ջրի համար զոհված Խաչատուրի գերեզմանի վրա:

Խաչքարը տեղափոխված է այժմ Երևան, իսկ նրա պատվանդանը և գերեզմանաքարը տեղումն են: Գյուղացիք իրավամբ համարում են նահատակի գերեզման[2]:

Տապանաքարը երկթեք է և նրա հյուսիսային կողին մնացել է չորս տող արձանագրություն, առաջին տողի կենտրոնական մասը ջարդված է[3]:

ԱՅՍ ՏՈՒՆ ՍԳՈ..... ԽԱ[ՉԱ]ՏՐՈ, ՈՐ ՍՊԱՆԱՒ Ի[ՎԵՐԱ. ՋՐԻՍ ՋՐՎԵԺՈ. ԿԻՍԱՒՐԵԱ. ԵԼԻ ՅԱՇԽԱՐՀԷ[ԹՈՂԻ ԿՍԿԻ[Ծ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ[ՍԲ ՆՇԱՆԻՍ ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՏՐ.[ԹՎ.: :ՈԻԲ: ՎԱՐԴ: (1173):

Վերջին Վարդ անունը գրված է փակագրով և ավելի մեծ տառերով. անշուշտ կազմողի ստորագրությունն է, որովհետև արձանագրության հետ կապ չունեցող անուն է և գրչությամբ շեշտված:

6. Արմա կազմող — Աշտարակ գյուղի Կարմրավոր եկեղեցու բակում, եկեղեցու հյուսիսային պատի դիմաց գտնվում է չորս կողմից լավ մշակված մի խաչքարի պատվանդանը միայն, որի մի երեսին մնացել է 5 տողից բաղկացած արձանագրություն, ըստ որի 1184 թ. է կանգնեցված այդ խաչքարը և հավանաբար հենց կազմողի մոր հիշատակին:

Հավել. արձ. 14

[1] Թ. Թորամանյան, Անդ, 274:

[2] Սարգսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ էջ, 232:

[1] Սարգսեան, Անդ, 232:

[2] Ջրի համար նահատակված Խաչատուրի մասին տեղում գոյություն ունի գեղեցիկ ավանդություն. տե՛ս այս աշխատության 134 էջը:

[3] Այս արձանագրությունը հրատարակել է և Մ. Սմբատյանը, բայց թերի է և աղավաղված, թվականն էլ սխալ՝ ՈԻԲ, տե՛ս նրա «Գեղարքունիք», էջ 257 (ծանոթ.):

7—8. Մխիթար կազմիչ և Ավետիս — Այս նշանավոր քանդակագործը գործել է Սանահնում։ Նրա նշանավոր գործերից է միջնադարի հայտնի գործիչներից մեկի, Գրիգոր Տուտեորդու հուշարձան-խաչքարը։ Այս նշանավոր կոթողը կանգնած է ս. Հարության եկեղեցու հյուսիսային պատի տակ։ Խաչքարի պատվանդանը չորս կողմից մշակված է. յուրաքանչյուր երեսին կան երկայուն կամարներով երկուական խորաններ. սեղանաքարը երիզված է «սելջուկյան շղթա» ունեցող քիվով, դրա վրա դրված է մի երկրորդ, ավելի նեղ պատվանդան կամ բարձ՝ նույնպես հիանալի ձևավորված, վերջինիս վրա կանգնեցրած է գեղաքանդակ խաչքարը։

Մխիթար կազմողը ոչ միայն իր դարաշրջանի, այլև ընդհանրապես միջնադարի լավագույն և տաղանդավոր քանդակագործներից մեկն է։

Խաչքարի թիկունքին գրված է Տուտեորդու հիշատակարան-արձանագրությունը։ Հետաքրքիրն այն է, որ ըստ արձանագրության բովանդակության, Տուտեորդին դեռևս իր կենդանության ժամանակ է կանգնեցրել այդ հուշարձանը և մահանալիս թողել է նրա դիմացը։ Այդ ընդարձակ արձանագրությունը գրված է իր—Տուտեորդու անունից և վերջանում է այսպես.

.....Կանգնեցաւ ի հայրութեանս Յովհաննիսի, յորում ամի նորոգեցաւ կարուղիկէս սբ: Ի թու: :ՈԼԳ: ԶՄխիթար կազմիչ յիշեսջիք ի ՔՍ:

Աւետիս[1] . . . . 1174 թ.։

Քանի որ պարզ է Մխիթար կազմիչ-կազմող լինելը, ապա որեմն Ավետիսը պիտի նրա աշակերտը լինի, որի անունը հիշվում է առանձնակի։ Ինչպես երևում է Ավետիսը արդեն շնորհալի վարպետ է եղել, որովհետև իր անունը փակագրով է փորագրել։

Մեջ բերված արձանագրական հատվածից երևում է, որ նույն թվերին նորոգումներ են կատարվել կաթողիկե եկեղեցում, պիտի ենթադրել, որ Մխիթարն ու իր աշակերտ Ավետիսը այդ աշխատանքներում նշանավոր մասնակցություն են ունեցել (Ալբոմ, նկ. 58)։

1 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 53 և 179—180։ Տե՛ս նաև Ջալալեանց, Ա, 14—15։ Ի. Հարությունյան, Ազգ. Հանդ., III, էջ 306։ Ե. Լալայեան, Ազգ. Հանդ., VII—VIII, 391։

9. Թասր — Այս նշանավոր կազմողից երկու խաչքար են հայտնի, որոնք պատրաստված են հատկապես պատի մեջ ագուցվելու համար՝ Շամշադինի շրջանի Վերի գյուղի մոտի Անապատ (Նոր Վարագ) կոչվող եկեղեցու մուտքի աջ և ձախ կողմերում, շքեղության համար։ Բացի կամարաձև և գեղաքանդակ այս երկու խաչքարերից նրա ձեռագործն են համարում նաև նույն շենքի մուտքի և այլ մասերի քանդակազարդերը։ Եկեղեցին շինված է[1] .....1198 թ.։

ԺԳ դար

10. 11. Տիմոր և Մխիթար հորինողներ— Այս երկու վարպետների ստորագրությամբ մի շատ գեղաքանդակ, կարմրավուն տուֆե խաչքար է հայտնի, որը գտնվում է Գեղարդավանքի գավթի ներսում, արևելյան պատի տակ, եկեղեցու մուտքի հարավային կողմում։ Խաչքարը կանգնած է ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի վրա և գավթի ընդհանուր ձևավորման համար է դրված։ Քիվի կարճ արձանագրությունը հետևյալն է.

Աստուած ողորմեա Տիմորին և
Մխիթարա խաչիս յարինող
:ՈԿԲ: թ(վին)[2] . . . . . 1213 թ.:

(Ալբոմ, նկար 59)։

12. Մարտիրոս կազմող — Վեդիի շրջանի Մանկուկ գյուղից մոտ մեկ կիլոմետր հյուսիս, ժայռաբեկորի վրա կանգնած է մի խաչքար դեղնավուն գրանիտից, նեղ շրջանակով. քարի խորացրած մակերեսին ուռուցիկ խաչ է միայն, որի վերի կողքերից կախված են մեկական բարձրադիր նռներ։ Խաչը բռնում է քարի միայն վերի մասը, որի տակը հյուսածո զարդեր են, ավելի ներքև, հարթ տարածության վերևի մասում վարդյակ և նրա կողքերին ու տակը արձանագրություն, որն ըսկըսվում է Մարտիրոս կազմողի անունով և վերջանում կանգնեցնող Ջեպուտի և նրա ծնողների հիշատակումով . . . 1213 թ.։

Հավել. արձ. 15։ (Ալբոմ, նկ. 60)։

13. Յովնէս գծող. (Յովհաննէս)—Կազմել

1 Կ. Ղաֆադարյան, Պատմա-հնագիտական դիտողություններ Կյուրիկյան իշխանության մասին, «Տեղեկագիր» ԱրմՖանի, № 4, 1940, էջ 169։

2 Ալիշան, Այրարատ, 328։ МАК, 12։ «Արարատ», 1871, էջ 90։

է մի խաչքար Վանի Ալ‚ուր գյուղում, Անձրև քաշանայի պատվերով. ագուցված է գյուղի ս. Ածածին նորաշեն եկեղեցու հյուսիսային պատի մեջ դրսից 1214 թ.։

Հավել. արձ. 16

14. Արեճամ կրոնավոր կազմող—*Իր կերտած մեծ խաչքարը գտնվում է Մարտունու շրջանի Վերին Ղարանլուխ գյուղից երեք կիլոմետր արևմուտք, հին գյուղատեղու ավերակների մեջ. շինել է Լոռեցի Գաչանի (Գաղանի) պատվերով ընդարձակ արձանագրությամբ. . . . . 1220 թ.։*

Հավել. արձ. 17

15. Շապուհ գրիչ—*Այսպես է անվանում իրեն վարպետը, որի շինած սև մարմարե, լավ չմշակված խաչքարը կանգնած է հին Սոլյան ավերակ գյուղատեղու մեջ (Եղեգնաձորի շրջան), խճուղու եզրին........ 1222 թ.։*

Հավել. արձ. 18

16. Դավիթ — *Սանահին գյուղում, վանքից դեպի արևմուտք, կանգնած է մի գեղեցիկ խաչքար, որը կոչվում է «Ծիրանավոր»։ Խաչքարի պատվանդանը նեղ է, բայց ճարտարապետորեն ձևավորված, երեք շարք քարերով եռաստիճան նեղանալով. քիվավոր բարձի վրա կանգնած է խաչքարը։ Շրջանակները լայն են և ամբողջովին ծածկված հյուսվածո քանդակներով, կենտրոնում զարդարուն խաչն է կանգնած փոքր գնդի վրա, որի երկու կողմերից բարձրանում են Թռչնաթևի նմանողությամբ բուսական քանդակներ. խաչքարի գլխին ագուցված է մի հատուկ քար, որը կազմում է նրա ճակատն ու քիվը։*

Արձանագրությունը գրված է պատվանդանի արևմուտք նայող 3 շարք քարերի վրա՝ սկսած բարձի քիվից և ունի հետաքրքիր բովանդակություն, Սանահնի վանքի առաջնորդ տեր Սարգիսը այգի, տներ և հողաբաժին է նվիրում վանքի հյուրատանը և դրա հիշատակին կանգնեցնում է խաչքարը. . . . 1222 թ.։

Արձանագրության տակը տեղ չլինելու պատճառով հուշարձանի կերտողն ստորագրել է պատվանդանի հյուսիսային կողմի վրա Զ ԴԻԹՑ, որը պետք կարդալ՝ զԴ(ա)վ(ի)թս յ(իշեցէք)։

Հավել. արձ. 19

17. Եղբայրիկ նկարող, շինող—*Այս ճաշակավոր վարպետից մնացել են երկու հուշարձաններ։ Առաջինը գտնվում է Հոռոմոսի վանքի մոտ. դա մի խաչքար է եղել կանգնած ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի վրա։ Խաչքարն այժմ կոտրած է, մնում է պատվանդանը մարդաչափ բարձրությամբ, դրա մի երեսին քանդակված են վեց սյունազարդ խորաններ, շրջապատված երկրաչափական գեղեցիկ զարդերով. իսկ խորանների մեջ երկաթական տառերով գրել է իր հիշատակությունը.*

ԵՂԲ ԱՅՐ ԻԿՆ ԿԱՐՈ ԶԽԱ ԶԻՄ։

Պատվիրատուի անունը և թվականը պիտի լիներ խաչքարի վրա. սակայն պատվանդանի քանդակների ոճը անկասկած XIII դարի է։

Եղբայրիկի երկրորդ ձեռագործը մի խաչքար է, շինված 1222 թ., որն ագուցված է եղել Անիի պարսպի մեջ, Գլիձորի կողմից։ Խաչքարի վերևի մասը ջարդվել-կորել է, մնացել է միայն ներքևի մասը յոթ տող լրիվ արձանագրությամբ։ Արձանագրության մեջ Եղբայրիկն իրեն շինող է կոչում և Անիի հայտնի հարուստ Տիգրանի (Հոնենց) ծառա։ Այս վերջին ցուցումը շատ կարևոր է. բոլոր նշաններից երևում է, որ միջնադարյան նշանավոր վանքերն ու նախարարական տներն ունենում էին իրենց ճարտարապետներն ու քարգործ վարպետները։ Դրամի ուժով բարձրացած Հոնենցների տոհմը ևս, ինչպես երևում է, ունեցել է իր ճարտարապետը, հանձին Եղբայրիկի։

Տիգրան Հոնենցն, ինչպես հայտնի է, Անիում կառուցել է քաղաքի լավագույն եկեղեցիներից մեկը, նվիրված ս. Լուսավորչի անվանը 1215 թ. և ապա նաև տոհմական գերեզմանատուն, երկու տեղում էլ գրել տալով ընդարձակ արձանագրություններ։ Բնական է, որ այսպիսի մեծամեծ շինարարությունների համար Հոնենց Տիգրանը կուներ իր ճարտարապետն ու քարգործ վարպետը և մեզ հավանական է թվում, որ այդպիսին եղել է հենց Եղբայրիկը։

Հավել. արձ. 20

18. Տէր Հովհաննէս կազմող—*շինել է մի ստապանաքար իր քեռի տեր Ստեփանոս Ս-*

---

[1] Սարգսեան, *Տեղագրութիւնք*, 164։ Ալիշան, *Շիրակ*, 29, «*Այրարատ*», 112։

փեսորդի համար. գտնվում է Հաղբատի վանքից մոտ մեկ կիլոմետր բարձր՝ Տերունական լեռան ստորոտում գտնվող փոքր եկեղեցու մոտ[1] . . . . *1224 թ.:*

Հավել. արձ. 21

19—20. Աբել և Տէր Ավագ կազմողներ—*կերտել են մի խաչքար Սարգիս քահանայի պատվերով. գտնվում է Շամշադինի շրջանի Նոր-Կողբ գյուղի գերեզմանատան մեջ, ս. Աստվածածին կիսավեր մատուռի արևելքում 1243 թ.:*

Հավել. արձ. 22

21. Մխիթարիչ գրիչ և նկարիչ—*այսպես է ստորագրում իր կազմած զույգ խաչքարերի վրա այս վարպետը, որոնք ագուցված են Կարսի բերդի պարսպի մեջ և որոնց վրա գըրված է նորոգումների և այն կատարող երեք ճարտարապետների հիշատակարանը թվագըրված, 1244 թ.:*

Արձ. տե՛ս Ընձակ, Գագան և Ոյտ ճարտարապետներ բաժնում։

22. Դեսառուք կազմող — *Այս վարպետի շինած խաչքարը գտնվում է Բագարանի հուշարձանի բակում, իրար մոտ կանգնած երեք հասարակ խաչքարերից մեկն է միայն վարպետի ստորագրությունը կրում, թեև հավանական է, որ մյուսներն էլ նրա կազմածը լինեն։ Անսովոր այս անունը տարակուսանք է առաջացրել արձանագրության հրատարակիչ հմուտ լեզվաբան-հայագետ Մառի մեջ։*

Խաչքարի տակի արձանագրությունը կիսեղծ է.

Թվ. :ՉԲ: (1254)

Ես Շապուհ, հարազատ որդի Դիոսկորոս քահանայի :ԾԹ: ամ [...որ կար՝դէք ողորմ....

Իսկ խաչքարի հարավային նեղ կողին, վերից վար գրված է՝

Դեսառոյքս կազմող յիշեցէք... յաղ[2]:

23. Սարգիս կազմող—*Այս նշանավոր վարպետը կերտել է մի շատ գեղաքանդակ խաչքար, որն այժմ ագուցված է Էջմիածնի ս. Գայանե վանքի 1688 թ. շինված գավթի հյուսիսային պատի մեջ, ներքուստ։ Խաչքարի ճակատը և լայն շրջանակները զարդարված են երկրաչափական նուրբ քանդակներով, կենտրոնում սրանկյուն խորան է, մեջը խաչ՝ կանգնած շատ գեղեցիկ քանդակներով ծածկված գնդի վրա։ Այս գնդի չորս անկյուններում գրված է կրճատումներով՝*

ՍԱՐԳ ԻՍ
ԿԶ ՈՂ

Իսկ խորանի վերին մասի կողքերին ուռուցիկ տառերով թվականը, թվ.: ՉԵ[1]*: . . . . 1256 թ.:*

24—25. Պավղոս և Քաղաք—*Այս նշանավոր վարպետների ստորագրությունը կրող մի շատ յուրահատուկ խաչքար է կանգնած եղել Իջևանի շրջանի Դեղձնուտի վանքի մուտքի հյուսիսում։ 1948 թ. մեր այցելած ժամանակ խաչքարը վաղուց ի վեր ընկած էր պատվանդանից երեսն ի վայր և կոտրատված բազմաթիվ մասերի ու խրված հողի մեջ կիսովին։ Զգուշությամբ շուռ տալով այդ բեկորները և իրար միացնելով պարզվեց նրա պատկերը և վերծանվեց ընդարձակ արձանագրության մեծ մասը։ Չգտնվեցին ճակատի հարավային մասի, նույն կողմի միջին և ստորին մասի փոքր բեկորները։*

Արձանագրության մեծ մասը հնարավոր է լինում լրացնել մնացածի բովանդակության և անձնանունների պատմականության շնորհիվ։ Այդ մեծ խաչքարը կանգնեցված է եղել վանքի շինության ժամանակ և կրում է վանքի հիմնադրմանն ու շինությանը նվիրված ընդարձակ հիշատակարան արձանագրություն, որը լուսաբանում է մինչև այժմ անհայտ այդ խնդիրները։

---

1 *Հ. Աճառյանը սխալմամբ համարում է այս տապանաքարը Յովհաննէս Սարկավագ վարդապետին, առնելով անունների և թվականների տարբերությունները. տե՛ս «Անձ. բառ.», Գ, էջ 571։*

2 *Н. Я. Марр*, Записки Восточного отделения русского археологического общества, т. VIII, вып. 1—2, 1893, стр. 92.

1 *Գրականության մեջ այս խաչքարի մասին թյուր տեղեկություններ են մտել. Ալիշանի տեղեկատուն կարդացել է* ՉԵ. խաչիս գծող. *այդ ձևով էլ նա մտել է Կոստանյանցի «Վիմական տարեգրի» մեջ և դասվել VII դարի արձանագրությունների շարքը. Թյուրիմացության առիթը հանդիսացել է Չ տառի ծաղկագիր ոճը, որի կլորության ներքին մասի զարդը գիծ են համարել և Զ վերծանել։ Անկախ թվականից խաչքարի քանդակների ոճը միմիայն XIII դարի է, ապա, ինչպես հայտնի է, մենք տասնավորով սկսվող վիմական արձանագրություններ չունենք. մեր թվագրված ամենահին արձանագրությունը Թալինինն է, որն ունի ՄԼԲ թվականը։ Մենք տեղում ստուգել ու նկարել ենք խաչքարը և պարզել, որ նրա թվականը ՉԵ է։*

Համեմատել՝ Ալիշան, *Այրարատ, 243, և* Կոստանեանց, *Վիմական տարեգիր, 1 էջ։*

Խաչքարը շատ մեծ է, պարզ ու գրեթե անզարդ, բայց մեծ ճաշակով ու ազդեցիկ: Կենտրոնում խաչի ձևով մեծ տարածություն է փորված, որի մեջ բուն խաչն է տեղավորված. ինչպես ճակատին, այնպես էլ խաչի հորիզոնական թևերի տակ թողնված է լայն ու բարձր հարթություն, որի վրա արձանագրությունն է փորագրված, իսկ այդ նույն թևերի վերևներում՝ լայն ու բարձր հարթությունների վրա տեղավորված են փոքր խաչեր և կազմողների ստորագրությունները, ապա խաչաձև տարածության ներքին, թեք եզրերի շրջանակավորված տարածության վրա գրված է կրոնական իմաստով արձանագրություն:

Նկատի ունենալով որ այս կարևոր արձանագրությունը հրատարակված չէ, բերում ենք ամբողջովին, պակասող մասերը լրացնելով անկյունավոր փակագծերի մեջ.

ԷԻՆ ԱՅ. ԶԱՒՐՈՒԹԲ. ՅԱՇԽ[ԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ ՀՈՒԼԱՂՈՒ ՂԱՆԻՆ]/ ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԱԹԱԲԱԿ ՍԱԴՈՒՆԻՆ ԵՍ Ա]ԹԱՔԵԱԼՍ, ՆՈՒԱՍՏ ՍՊԱՍԱՒՈՐ ՔԱՆԻՆ [ԱՅ ՑԵՐԿՐ]/ԷՆ ԿԻԼԻԿԻՈ, Ի ԳԱՒԱՌԷՆ ՏԱՐՍՈՆԻ, ԿԱՄ[ԱՒՆ]/.... ՊԱՐՈՆԻՆ/ ԵՒ ԶԱՒԱԿԱՅՆ Ն/ՈՐԱ ՈՐ ԵՂԵՒ Ձ/ԵՌՆՏՈՒ ԵՒ ՄԽԻԹ/ԱՐ ԿԵՆԱՑ ՄԵՐՈՅ/, ԱՐՔԻՊԻՍԿՈՊՈ/ՍՈՒԹԵ ՀԱՂԲԱՏ/Ա ՏՐ. ՅՈՎԱՆԵՍ[Ի]/, ՈՐ Է ՀԵԶ ԵՒ ՄԱՐԴԱՍ/ԷՐ ԵՒ ՄԵՐ ՅՈՅՍ/ ԱՅՍ. ՇԻՆԵՑ/ԱՔ ԶԷԿԵՂԵՑ/ԻՍ ԱՄԵՆԱՅՆ ՊԱ/ՏՐԱՍՏՈՒԹԲ/. ԵՒ ԶԳԱՒԻԹՍ, ԵՒ ԿԱՆ/ԳՆԵՑԱՔ ԶՍԲ. ՆՇ/ԱՆՍ ԱԾԸՆԿԱԼ Ի/ ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ, Ի ԴԱ/ՌՆ ԱՇԽԱՏՈՒԹԲ/ [ԲԱՐԷ]ԽԱՒՍ ՄԵԶ/ [ԵՒ] ԾՆՈՂԱՑ Մ[ԵՐՈՑ]/:

ԲԱՐՁՈՂ Է ՑԻ ՔԱՒԻՉ ԱՄԻՆ ՄԵՂԱՒՈՐԻ ՄԵԶ ԲԱՐԷԽ[ԱՒՍ]:/ ԱՒՐՀՆԵԱԼ Է ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՒ ԱՄԵՆԱՒՐՀՆ/Ե(Ա)Լ ԽՈՐՀՈՒՐ[ԴՆ] ՓՐԿԱԳՈՐԾ/ ԶԱՐՉԱ/ՐԱՆԱՑ ԽԱՉԵԼՈՅՆ ՔԻ. ԱՅ. ՄԵՐՈ Ի ԾԱԳ[ՄԱՆԷ ՄԻ]ՆՉԵՒ Ի ԾԱԳՍ/ ԱՇԽԱՐՀԻ ԾԱ/ԳԻՆ, ՈՐ ՈՉ ՀԱՏ ԵՒ ՈՉ ՎՃԱՐ . . . . . /

ՔՍ. ԱԾ./ [ՔՍ. ԱԾ.]

ՈՂՈՐՄԻ ՊԱՒՂՈՍՈՅ:/ ՈՂՈՐՄԻ ՔԱՂԱՔԻՆ:/

Խաչքարի հարավային նեղ կողին ևս կա վերից վար գրված արձանագրություն, որը հավանաբար նախորդի շարունակությունն է. սրա վերևի մի քանի տողն այժմ կորած քարի վրա է եղել, մնացածը քսան տողով հետևյալն է.

.... ԲՆԱԿԻՉՔ [ՈՒԽ]ՏԻՍ ԿԱՏԱՐԵՆ ՄԵԶ: :Դ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ԶԱՄԷՆ ԷԿԵՂԵՑԻՔՍ. ԾՆԸՆԴԵ(Ա)Ն :Բ: [ԱՒՐՆ. ԿԱՏԱՐԻ]ՉՔՆ ԱՒՐՀՆԵՆ ՅԱՅ. ԹԷ ՈՔ ՅԷԿԵՂԷՑՈՅՍ ԻՐԱՑ ՊԱԿԱՍԷՑՆԷ Ի ՄԵԾԱՑ Կ[ԱՄ Ի Փ]ՈՔՐՈՒՆՑՆ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՑԻ Ի ՏԷ. [ԹՎ] :ՉԻԴ:

Այս արձանագրությունները մեջ ենք բերում այն նպատակով, որովհետև դրանք ոչ միայն խաչքարի կերտման ժամանակի խնդիրն են պարզում, այլև վանքի հիմնադրման, հիմնադիրների և ժամանակի խնդիրները և քանի որ հրատարակված չեն, այդ պատճառով էլ հուշարձանների այս խմբի մասին գրականության մեջ ստույգ տեղեկություններ չկան[1]:

Վանքի հիմնադրման արձանագրական տեղեկությունները լրացվում են հիշատակված երկու անձնավորությունների անուններով. այսպես՝ ամիրսպասալար Աթաբակ Սադունը վիմական արձանագրությունների մեջ հիշատակվում է 1260—1280 թվականներին, իսկ Հաղբատի առաջնորդ տէր Հովհաննես Դ. նստել է 1257 թ. և նրա հիշատակությունները հասնում են նույնպես մինչև 1280 թ.: Վանքի հիմնադիր Պաւղոս վարդապետի անունը Դեղձնուտի այլ արձանագրությունների մեջ հիշատակվում է 1275 և 1292 թվականներին, նրա գերեզմանաքարը դրտնվում է եկեղեցու նախագավթի մեջ և վերևից թափված քարերի հարվածներից կոտրվել է, բայց երկու տողանոց արձանագրությունը վերծանվում է լրիվ, սակայն թվական չունի:

Պավղոս և Քաղաք կազմողների այս գեղեցիկ խաչքարը միայնակ չի եղել, ժամանակին նրանք զույգ են եղել՝ կանգնած եկեղեցու մուտքի երկու կողքերին, որպես նրան ճարտարապետորեն զարդարող անբաժան մասեր[2]:

Քանի որ Պավղոս և Քաղաք վարդապետները մասնակցություն են ունեցել հուշարձանը ձևավորելու գործին, պետք է ենթադրել, որ

---

1 Բարխուդարեանց, Արցախ, էջ 380—381։ Հ. Եղիազարյան, Իջևանի շրջան, Երևան, 1947, էջ 15։

2 Բարխուդարեանց, Արցախ, էջ 381։

նրանց այդ գործունեությունը չի սահմանափակվել միայն խաչքարը կերտելով, այլ որ նրանք ավելի ընդարձակ մասնակցություն են ունեցել հուշարձանների կառուցման գործում, թե նրա մուտքի և այլ մասերի զարդաքանդակների կերտման և որ ավելի հավանական է, նրանք եղել են հենց հուշարձանների կառուցող վարպետ-ճարտարապետները, որը և նրանց իրավունք է տվել շինարարական միակ արձանագրության մեջ, վանքի հովանավորների և հիմնադրի անվան հետ հիշատակել նաև իրենց անունները՝ խաչքար-հիշատակարանի ակնառու տեղում[1]:

26. Վահրամ յիշեցէք — Այսպես է ստորագրել այս նշանավոր կազմողը, որի կերտած խաչքարը գտնվում է Դսեղ գյուղի կենտրոնում գտնվող գերեզմանատանը: Այն կանգնած է պատվանդանի վրա. ճակատին գրված է մի առանձին քար, որը կազմում է բիվը. այդտեղ քանդակված է Հիսուս՝ նստած դիրքով, աջ ձեռքը բարձրացրած, իսկ ձախ ձեռքին բռնած մագաղաթ, որի վրա գրած է՝ «Ես եմ լոյս աշխարհի», շուրջը՝ այլ պատկերներ: Կենտրոնում խաչելություն է, գլխին գրած՝ «սա է թագաւոր հրէից», աջ կողմից կա մի ձեռք և աղավնի ու գրված է «աջ տեառն և հոգի Աստուծոյ», իսկ խաչյալի թևերի վրա գրված է «Ձեռք որ զերկինս արարին՝ տարածեցան ի խաչին»: Խաչելության մի կողքին կան Հովհաննեսի և Նիկոդիմոսի, մյուսում՝ Աստվածածնի և Հովսեփի պատկերները: Պատվանդանի վրա կա ընդարձակ արձանագրություն, որից պարզվում են պատվիրատուների անունները, ապա և կազմողի ստորագրությունը:

Վահրամի կազմած խաչքարը թե իր յուրօրինակ կառուցվածքով և թե պատկերաքանդակներով առանձնակի տեղ է գրավում. նախ հազվագյուտ են պատկերաքանդակների այսպիսի առատությամբ խաչքարեր և ապա՝ առանձին կտորով բիվ դնելը դրեթե եզակի է: Շինված է . . . . . 1281 թ.:

Հավել. արձ. 23: Ալբոմ, նկար. 61:

27. Վարդան Քարգործի[1] — կազմել է կարմրավուն գրանիտից մի պարզ ու գեղեցիկ խաչքար և ընդարձակ արձանագրությունը տեղադրել խաչքարի ճակատին, խաչի չորս թևերի վրա և տակին:

Խաչքարը կանգնած է Մարտունու շրջանի Վարդենիկ (Գյոզալդարա) գյուղի հանդեպ, գետի ձախ ափին, Իշխանավանքի մոտի գերեզմանատան մեջ. շինված է 1286 թ.:

Հավել. արձ. 24: Ալբոմ, նկար 62:

28. Խաչատուր նկարող — Այս նշանավոր վարպետից մնացել են երկու տարբեր հուշարձաններ Բագարանում. առաջինը տաճարի հյուսիսային պատի պատուհանն է, միակտուր քարից, խաչաձև ձևավորված լուսանցքով, որի շուրջը և գրել է իր կարճ հիշատակագրությունը: Մյուսը՝ նույն տեղում՝ մի մեծ և շատ գեղազարդ խաչքար է՝ կանգնած հինգ աստիճանավոր պատվանդանի վրա. ընդհանուր բարձրությունը հինգ սաժեն է: Պատվանդանի չորրորդ աստիճանի վրա, ոչ գեղեցիկ տառերով, գրել է նույնպես իր հիշատակագրությունը:

Երկու հիշատակագրություններից միայն առաջինի, պատուհանի վրա է թվականը նշանակել արաբական թվանշաններով, այն է՝ 1287 թ., բայց անկասկած է, որ խաչքարը ևս այն նույն վարպետի և նույն ժամանակների գործ է:

Այն փաստը, որ Խաչատուր նկարողը շինել է տաճարի ձևավոր քարե լուսամուտը, ապացույց է, որ Բագարանի հուշարձանների կառուցումների և նորոգումների ուրիշ աշխատանքներին ևս մասնակցած կլինի, եթե ոչ որպես ճարտարապետ, գոնե որպես լավագույն քանդակազարդող վարպետ:

Հավել. արձ. 25, 26

29. Պաւղոս — Մեծատաղանդ կազմողհայտնի են նրա ձեռագործ երեք խաչքարերը,

---

[1] Հուշարձանների պահպանության կոմիտեի ցուցակներում Եկեղեցու կառուցման թվականը նշանակված է 1258 թ. դրան հիմք է ծառայել, ըստ երևույթին, եկեղեցու հյուսիսային պատին, ներքուստ գրված մի սկսված, բայց չավարտված արձանագրություն, որը բաղկացած է երեք տառից ՉԷԾ, ըստ որում է տառը գրված է Չ-ի բացվածքի մեջ. կոմիտեի աշխատակիցները ենթադրել են, որ այդ երեք տառից առաջին երկուսը թվական են, որից հետո եկող Ծ տառը պետք է լիներ ԾԻՆԵՑԱՒ. Նախ եթե այդ երկու տառերը թվական լինեին, հավանաբար նրանցից առաջ կամ հետո կլիներ նաև ԹՎ. կամ ԹՈՒԻՆ բառերը կամ, այդ երկու տառերը կլինեին կետերով որոշված. ապա՝ անսովոր է թվականի տառերը մեկը մյուսի մեջ գրելը, այն էլ արձանագրության հենց սկզբում.

[1] Ստորագրության այսպիսի ձև հանդիպում է և այլուր, հատկապես Գեղարքունիքում:

որոնք գտնվում են Գոշավանքում: Երկու լավագույնները դրանցից հաստատված են պատվանդանների վրա ս. Գրիգոր եկեղեցու հարավային մուտքի աջ ու ձախ կողմերից (արևելյանը, որն ընկած և մեջտեղից երկու կես էր եղած, մենք փոխադրել ենք Երևան, պետական պատմական թանգարան), իսկ երրորդը՝ նույն տեղում՝ ս. Հոգու անունով կոչվող մատուռի մոտ:

Պավղոսը որպես կազմող՝ ամենայն իրավամբ կարող է բոլոր ժամանակների իր արվեստակիցների շարքում լավագույնը համարվել: Նրա խաչքարերի քանդակների բազմերանգությունը, նրբությունը և պատակարգ բարդ գծագրությունն ու մանավանդ տեխնիկան անմրցելի են:

Այս մեծատաղանդ արվեստագետը միաժամանակ ծայր աստիճան համեստ բնավորություն է ունեցել. նա իր ձեռագործներից միայն մեկի՝ ս. Հոգու մատուռի մոտ եղած խաչքարի վրա է իր անունը հիշատակել, այն էլ իր սիրած 8 թևանի աստղե զարդաքանդակի մեջ հյուսված.

ՊԱՒ ՂՈՍ ձեռվ[1]:

Պավղոսի ձեռագործ երեք խաչքարերից միայն մեկի, ս. Նշան եկեղեցու մուտքի արևմտյան կողմի պատվանդանի արձանագրության մեջ է պահպանվել թվականը: Այդ խաչքարը կանգնեցրել է սին վարդապետ (անունը եղծված) իր հարազատների հիշատակին, 1291 թվականին:

Պավղոսի անունը կրող խաչքարի արձանագրության մեջ թվականը եղծված է: Այդ խաչքարը կանգնած է Մխիթար Գոշի տապանատուն համարված խարխուլ շենքի մոտ և, ինչպես կիսեղծ արձանագրության բովանդակությունից երևում է, այն կազմել է Պավղոսը և իր եղբայր Հովհաննեսի հետ կանգնեցրել իր ծնողների հիշատակին.

...ողոյն ճարապատ եղբարց Պաւղոս և Յովհաննէս Երկոբեակ Նշանըս ամենայն Յիսուսի, ծնողաց մերոց, որք երկրպագէք... Ի բւ.....[2]

Պավղոսի արվեստին նմանություններ ունի Վայոց ձորի Նորավանքում ստեղծագործած Մոմիկ վարդպետի քանդակած խաչքա-

1 Ի. Հարությունյան. Գոշավանք կամ Նոր Գետիկ, «Ազգ. Հանդ.», X, 1903, էջ 30:

2 «Արցախ», 355:

րերի արվեստը, որը ժամանակակից էր Պավղոսին (տե՛ս Մոմիկ վարդպետ): Ալբոմ, նկար 63, 64:

30. Սմբատ պատանի — կազմել է մի խաչքար Վայոց ձորի Գյուլիդուզ գյուղում. 1291 թ.:

Հավել. արձ. 27

31. Գրիգոր շինող—Քանդակել է մի խաչքար Լամբրոնի բերդում (Կիլիկիա), որը հետագայում տեղափոխվել է Տարսոն....... 1297 թ.:

Հավել. արձ. 28

32, 33. Սարգիս Կարնո Բաղամացի և Յովհաննէս աշակերտ—Այս քարգործ վարպետները ստեղծագործել են Արցախի իշխանանիստ, այժմ ավերակ, Վաճառք կոչվող ավանում: Վաճառքը գտնվում է Գանձասարից արևելք՝ Ծմակահող գյուղի սահմանում, ավերակները քաղաքատիպ վայրին հատուկ տնատեղերի, խանութների և եկեղեցիների մնացորդներ են, գերեզմանատան մեջ կանգնած մի մատուռի արևելյան պատին Սարգիս վարպետը գրել է հետևյալ արձանագրությունը.

Կամաւ Ա̅յ ես Սարգիս Կարնու Բաղամացի Սալեցի զեկեղեցիս և կանգնեցի զխաչերս ինձ և աշակերտի իմո Յովաննիսի, յաղաւթս[1]...

Թեև արձանագրության մեջ թվականը չկա, բայց այլ արձանագրություններից հայտնի է, որ այդ եկեղեցին շինել է տվել իշխան Հասանը 1229 թվականին: Կարծում ենք, որ Սարգսի և իր աշակերտ Հովհաննեսի աշխատանքները այդ թվականից շատ ուշ լինել չեն կարող, մանավանդ որ կան նաև այլ հուշարձաններ նույն վայրում, բոլորն էլ իրար մոտիկ թվականներով շինված. համարում ենք XIII դարի կեսերի գործ:

ԺԴ դար

34. Սարգիս վարդապետ նկարիչ — Այս նշանավոր քանդակագործի աշխատությունները պահպանվել են Վեդիի շրջանում՝ Ջինջիրլի գյուղի մոտ գտնվող վանքի եկեղեցու վրա: Եկեղեցու մուտքի ճակատաքարի վրա քանդակված է Աստվածածինը, Հիսուսը նըստած նրա ձախ ծնկին, երկու կողմերից կանգ-

1 «Արցախ», 184—285: Խաղբակեանց, Ա., 33:

նած են հրեշտակներ՝ ձեռքերը մեկնած դեպի Հիսուսը. քանդակների եզրերին գրված է.

Ես Սարգիս վարդապետ վ[ա՛]ս[ն] յոյսոյ իմոյ նկարեցի զպատկերս[1]:

Մուտքի կամարից էլ վեր, պատի վրա մի տարածություն առնված է հյուսվածո ուռուցիկ շրջանակի մեջ, որի ներսում քանդակված է աստծու պատկերը, նստած բազկաթոռին. ներքևի երկու անկյուններում երկու գլուխներ՝ Պողոսի և Պետրոսի:

Գլխավոր եկեղեցու պատի տակ այժմ ընկած է մի մեծ սալքար. վրան բարձրաքանդակ արծիվ, կիսաբաց թևերով, ճանկերում բռնած գառ: Այդ քարը գլխավոր եկեղեցու մաս չէ, որովհետև այն ամբողջ է, նա կից տապանատան (կիսափուլ է այժմ) վրա պիտի տեղավորված լիներ, որը նույն ժամանակի շինություն է:

Քանդակների այս երեք խմբերն էլ Սարգիս նկարչի գործերն են: Նրա արվեստը՝ պատկերաքանդակների ոճի տեսակետից, մոտ է Մոմիկ վարդապետի արվեստին, քանի որ նույն իշխանական տիրույթում են գործել (Օրբելյանների) և նույն ժամանակ, պետք է ենթադրել, որ նրանց մեջ եղել է կապ թե՛ արվեստի գծով և թե՛ անձնապես: (Համեմատել Մոմիկ վարդապետ մասը):

Գլխավոր եկեղեցին շինվել է 1301 թ. (տես Բուռ վարպետ բաժինը), հետևաբար Սարգսի քանդակներն ա. դ. նույն եկեղեցու վրա պիտի նույն ժամանակին լինեն, այսինքն 1301 թ.: Ալբոմ, նկար 65:

35. Հովսէփ նկարիչ — *Բաղնայր գյուղից մի կիլոմետր դեպի արևմուտք, ժայռի քարափի վրա փորագրված են բազմաթիվ խաչեր. դրանցից երկուսի տակ ստորագրել է Հովսեփ կազմողը:*

Ա. ։ՉԿԶ։ (1317) Յովսէփ յիշեցէք:
ի տ(է)ր:
Բ. Զնկարիչ ս(ուր)բ նշանացս
զ[Յ]ովսէփ անարժանս [յ]իշեցէք
ի Քս̅[2].

[1] Գ. Հովսեփյան, Потомство Тарсанча и Мина Хатуны, „Христианский Восток", II, вып. II, 1913, стр. 235.

[2] *K. Basmagian*, Les inscriptions, 181.

36. Աբլ Հասան — *Շինել է մի գերեզմանաքար Հաղբատում տեր Հովհաննեսի համար:*

Այս է հանգիստ տէր Յովհաննէսի. թ(վին): ։ՊԻԴ։ (1375): Աբլ Հասան[1]:

37. Վարդ քահանա նկարող—*Այս վարպետի ստորագրությունը գտնվում է Սիսիանի շրջանի Լոր գյուղի եզրին կանգնած «Լորիկի խաչ» կամ «Սպիտակ խաչ» կոչվող հուշարձանի վրա և անսովոր բնույթ ունի: Խնդիրն այն է, որ այս որմնափակ և զույգ խաչքարերից բաղկացած կոթողը, համաձայն արձանագրության, շինված է 1217 թ.: Արձանագրության մեջ հիշատակված պատմական անձանց անունները լրիվին համընկնում են նշված թվականության հետ. բայց հուշարձանի պատվանդանի վրա բոլորովին այլ ժամանակ և գրչությամբ փորագրված է Վարդ նկարողի հետևյալ արձանագրությունը.*

ԿԱՄԱՒՆ ՀԶԱՒՐԻՆ Ա̅Յ̅ ԵՍ ՎԱՐԴ ՔԱՀԱՆԱ /ՅԵՏՈՅ ՆԿԱՐԵՑԻ ԶՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵԽԱՒ/ՍՈՒԹ̅Ի ՄԵՌՂԱՑ ԻՄ ԱՄԿԱ ԵՒ ԽՈՆ-ԻՆ/ Ի ԹՎ. ։ՊԼԶ։ (1387):

Թե ինչ է նկարել կամ ավելացրել կառուցումից 116 տարի հետո Վարդ նկարողը, մնում է անհայտ:

ԺԵ Դար

38. Գորգ քահանա աշխատող — *Կազմել է մի խաչքար Խաչիկի պատվերով, վերջինիս հորեղբայր, վանքի առաջնորդ Պետրոսի գերեզմանի վրա կանգնեցնելու համար: Հետագայում խաչքարը ագուցվել է Վասպուրականի Ներքին Վարագ վանքի ս. Աստվածածին կոչվող եկեղեցուն արևմուտքից կից ս. Գևորգ գավթի պատի մեջ՝ ներսից: Այս գավթում են գտնվում Սեներքերիմ Թագավորի և իր կին Խուշուշի տապանաքարերը........ 1403 թ.:*

Հավել. արձ. 29

39. Սիմէոն վարպետ, քարգործ — *Կազմել է երկու խաչքար Ղրիմում: Ժողովրդի Նոր Նախիջևան տեղափոխվելիս այդ խաչքարերը ևս բերվել են և 1783 թ. այստեղ կառուցած ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատերի մեջ ագուցվել: Դրանցից առաջինը, որ շինված է 1413 թ. պարոն Սիմէոնի պատվերով, ի հիշատակ իրեն, ծնողների, կնոջ և զավակ-*

[1] Երզնկեանց, *44:*

ների, ագուցված է եկեղեցու գավթի մուտքի ձախ կողմում, ստորագրված՝ «ձեռագործ է Սիմէօն վարպետին»։ Երկրորդը, որն ավելի բարձր արվեստով է շինված, ագուցված է եկեղեցու բեմի ճակատին՝ ներքուստ, կրում է 1464 թ. և շինված է Սիմէոն քահանայի պատվերով իր և կնոջ ծնողների հիշատակին, ստորագրված է՝ «Ձեռամբ ք(արգոր)ծ Սիմէօնին»:

Հավել. արձ. 2, 30, 31

40. Գրիգոր կազմող — Քանդակել է մի խաչքար Աղթամարի կաթողիկոս Զաքարիայի համար։ Խաչքարը կանգնած է կղզու գերեզմանատան մեջ։ Արձանագրության բազմաթիվ հրատարակիչները վերջին, կազմողի անունը կրող մասը բաց են թողել և թիվը սխալ նշանակել. Փիրղալեմյանը լրիվ և ճիշտ թվականով է մեջ բերել... 1434 թ.

Հավել. արձ. 32

41. Զաքար կազմող — Այս վարպետի շինած միայն մի խաչքարի մասին է հիշատակություն մնացել գրականության մեջ[1]։ Մեր ցանկերի մեջ եղած վարպետներից Զաքարը միակն է, որ քանդակել է խաչարձան կամ «թևավոր խաչ» — միակտուր, արձանի ձևով։ Խաչքարի վրա պարզ գծային զարդեր են եղել և խաչելություն, այն կանգնած է եղել Սևանա կղզում, ս. Հարության տաճարի մոտ, պատվանդանի վրա (այժմ կորած է)։

9 տողից բաղկացած արձանագրությունը փորագրված է խաչթևերի եզրերին, տարբեր մեծության տառերով, պայմանավորված տարածության չափերով, բայց գեղեցիկ տառերով։ 6, 7 և 8-րդ տողերը գրված են աջից ձախ և շուռ տված (ընդգծված են).

1. Սա է Փր
2. կիչ աշխար-
3. հի եւ յոյս
4. հաւատացելոց.
5. որք երկրպա-
6. գէք զԿ(արա)պ(ե)տ ք(ա)հ(անա)յ ադ-
7. աւթս յիշեցէք.
8. Զ(ա)ք(ա)ր կազմող.
9. :ՊԴԷ: (1448)[2]:

1 Ղահխաթունեանց, Բ, էջ 209։ Ջալալեանց, Բ. 109։ «Սիսական», 79 և 89։

2 Գայուստ Տեր-Մկրտչյան, Աջից ձախ հայ գրություն, «Շողակաթ», էջ 137, Վաղարշապատ, 1913։

42. Ծմավոն եպիսկոպոս կազմող — Քանդակել է մի գեղեցիկ խաչքար Մարտունու շրջանի Զոլախաչ գյուղում[1] ....1451 թ.։

Ստորագրել է՝

Ես Ծմավոն եպիսկոպոս իմով ձեռամբս կազմեցի զխաչս թվ. :Չ:

43. Ավետիք աբեղա — Ղրիմում քանդակել է մի խաչքար, որը հետագայում տեղափոխվել է Նոր Նախիջևան և ագուցվել ս. Լուսավորիչ եկեղեցու պատի մեջ։ Ստորագրված է՝ Ձեռամբ Աւետիք աբեղային — 1461 թ.։

Հավել. արձ. 33

44. Հակոբ հայր — Շինել է մի խաչքար Ղրիմում՝ Ահրոն (Ահարոն) քահանայի պատվերով։ Հետագայում այն տեղափոխվել է Նոր Նախիջևան և ագուցվել ս. Լուսավորիչ եկեղեցու մուտքի ձախ կողմում։ Ստորագրել է՝ Ձեռամբ հայր Հակոբին ....1418 թ.։

Հավել. արձ. 34

45. Դավիթ — Քանդակել է մի գեղեցիկ և մեծ խաչքար 2,75 մ բարձրությամբ և 1,22 մ լայնությամբ՝ Արցախի իշխան Սասնալի համար։ Խաչքարը կանգնած էր Փառիսոսի (Ղայաքենդ) ավերակների մեջ, երկաթուղու գծի մոտ։ Ստորագրել է՝ ով կարդայ այս Դավիթս յիշեսցէ[2].... 1481 թ.։

Հավել. արձ. 35

ԺԶ դար

46. Հովհաննես եպիսկոպոս նկարող — Կոտայքի շրջանի Առինջ գյուղի հյուսիսային մասում բարձրանում է մի բլուր, որի վրա գտնվում են ավերակ բերդի պարիսպներ, որոնց ստորին, հնագույն շարքերը մեծ և վերին՝ նոր շարքերը փոքր քարերով են շարված։ Պարսպափակ տարածության մեջ կան բազմաթիվ շենքերի և մի փոքր եկեղեցու ավերակներ։ Եկեղեցու և մանավանդ բերդի պարիսպների մեջ ագուցված են մի քանի քանդակազարդ քարեր, որոնցից երկուսի վրա արձանագրություններ կան՝ վարպետների անունների հիշատակումներով։ Դրանցից մեկը մի մեծ և սև սալաքար է, ագուցված բերդի պարսպի մեջ, վրան քանդակված է գեղեցիկ արծիվ և շուրջը վարպետի անունը՝

1 Սմբատեանց, Գեղարքունիք, 546։ Լալայան, Ազգ. Հանդ., XVIII, 151։

2 «Արցախ», 307։

Յովհաննէս եպիսկոպոս նկարող յիշեցէք Յովհաննէս ավետարանիչ, արծիվ. թվ. ՋԾ[1]— 1501:

47. Տէր Մանվել քարգործ — *Այդ նույն բերդի մուտքի գլխի կամարակալ քարի վրա քանդակված են դեմառդեմ իրար փաթաթված երկու վիշապներ կավելիս. իսկ ներքև, մուտքի կողաքարի վրա արձանագրված է՝*

Տ(է)ր Մանվել քարգործ որդի
տ(է)ր Յովհաննէսին յիշեցէք ի Քս. ամէն
Թվ. :ՋԾ:[2] 1501:

Հավանաբար հայր և որդի այս արվեստագետները (կնոջ մահվանից հետո քահանան կարող էր և ավելի բարձր հոգևոր աստիճան ստանալ) տոհմական քարգործներ են և շարունակել են իրենց արվեստը հոգևորական դառնալուց հետո էլ: Նրանց գործերը պիտի համարել ոչ միայն քանդակները, այլև, հավանաբար, հիշված եկեղեցու և բերդի վերին, նոր մասերի, շինարարությունը:

48. Գրիգորէս եպիսկոպոս նկարող — *Կազմել է մի ինքնատիպ խաչքար և գերեզմանաքար, Մելիք Միրզայի պատվերով վերջինիս որդի Ջոհրայի գերեզմանի վրա կանգնեցնելու համար: Այս հուշարձանի առանձնահատկությունն այն է, որ տապանաքարն ու խաչքարի պատվանդանը միակտուր են: Տապանաքարից բավական բարձր ձևավորված է պատվանդան խաչքարի համար, որի միակտուր լինելը միայն ուշադիր դիտելով է պարզվում: Խաչքարը նույնպես ինքնատիպ է, նրա ճակատին քանդակված է բաց թևերով արծիվ, որը ճանկերի մեջ բռնած ունի գառ: Արծվի երկու կողմերում սրբագլուխներ են քանդակված, որոնցից հյուսիսայինի շուրջը մանր տառերով գրված է. Լուսավոր(իչ), հարավայինի շուրջը նույնպես գրության հետքեր կան՝ բայց անվերծանելի արդեն:*

Խաչքարն ունի շատ լայն շրջանակներ երկրաչափական զարդերով, որոնց վրա քանդակված են ութթևանի աստղեր, նույնպես նուրբ քանդակներով: Կենտրոնում շատ ներսով քանդակված է խորանը, որի մեջ խաչն է: Խորանի շուրջը դեպի ներս թեքված նեղ շրջանակի շուրջը պատվիրատուի արձանագրությունն է, որի հարավային կողմի վերևի և ներքևի մասերն ամբողջովին ջարդոտված և անվերծանելի են:

Արձանագրության այդ մասերը դեռևս առաջին հրատարակիչ Շահխաթունյանի ժամանակ էլ նույն վիճակում են եղել, սակայն ընթեռնելի տեղերում հրատարակիչները սխալներ են թույլ տվել, որոնցից կարևորը պատվիրատուի անունն է: Բոլոր հրատարակողների մոտ Փիրհամզէս *է նշանակված, մինչդեռ իրականում գրված է՝* Մք Համզէս *այսինքն* Մելիք Համզէս: *Արձանագրությունն սկսվում է թվականով շրջանակի վերին մասից, ուր գրիչը փորագրել է միայն տասնավորն ու միավորը՝ ԾԴ հարյուրավորի տեղն ազատ է: Ինչպես անունը և կոչումը, նույնպես հուշարձանի քանդակների ոճը նկատի ունենալով՝ հավանական ենք համարում թվականը լրացնել ՋԾԴ 1505 թ.:*

Խաչքարի հարավային կողին գրված է նկարող-կազմողի արձանագրությունն առանձին, 9 տողով, որի մեջ պատվիրատուի անունը Փիրհամզէ *է: Այս ապացույց է, որ վերջինս իր պաշտոնական տիտղոսով Մելիք-Համզէ է կոչվել:*

Հուշարձանը գտնվում է Նոր Բայազետի շրջանի Կարմիր (Ղուլալի) գյուղում, գյուղամիջի ավերակ ս. Գևորգ եկեղեցու մոտ, հին գերեզմանի մեջ: Արձանագրությունները և մատենագիտությունը տե՛ս Հավել., արձ. 36:

49, 50. Մկրտիչ և Վարդիկ կազմողներ — *Կերտել են մի ինքնատիպ խաչքար Պեկեշեի պատվերով, Գոզորի գերեզմանի վրա կանգնեցնելու համար: Խաչքարն ու իր պատվանդանը միակտուր են. նեղ խաչքարի երեսին քանդակված է երկար խաչ, որը հատվում է հինգ հորիզոնական գծերով, որոնց արանքներում գծված են 8 մանր խաչեր: Պատվիրատուի արձանագրությունը փորագրված է պատվանդանի վրա, իսկ կազմողների հիշատակագրությունը՝ խաչքարի հարավային կողին:*

Խաչքարը կանգնած է Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի մեծ գերեզմանատան մեջ, երկրորդ շարքում (արևմուտքից). շինված է . . . . 1515 թ.:

Հավել. արձ. 37

51. Աղապէկ — *Բասարգեչարի շրջանի*

1 Սմբատեան, *Գեղարքունի*, 247:

2 Գ. Յովսեփեան, *Խաղբակեանք*, Ա, 165 *հեղինակը վիշապների քանդակը համարում է ավելի հին, ԺԳ—ԺԴ դարերի գործ:*

Յարփուզլու գյուղի սահմանում, գյուղից դեպի հարավ-արևմուտք մոտ երեք կիլոմետր հեռու, գտնվում է մի ավերակ գյուղատեղի, որի մեջ եղած եկեղեցու միայն հիմնապատերն են մնացել, իսկ շուրջը գերեզմանատան մնացորդներ են։ Այս գյուղատեղին այժմ շրջապատի գյուղերի բնակիչների կողմից անվանվում է Կարմիր խաչքար[1]։ Սակայն ավերակ եկեղեցու մեջ կանգնած մի խաչքարի թիկունքին պահպանված արձանագրությունից պարզվեց, որ դա հին Քրաշեն գյուղն է։

Ավերակ եկեղեցու մոտ կա մի մեծ, օրորոցաձև տապանաքար, վերևի մասը ձևավորված եռատերևան և թամբաձև, հարավային կողին չորս սրանկյուն խորաններ են, առաջինի մեջ սանդ, կոճակ, մկրատ և ցըրցամ տալու կեռ գործիք, երկրորդի մեջ՝ գավ և բլիթ. երրորդի մեջ երկլարանի սազ նվագող. չորրորդի մեջ հեծյալ՝ ձեռին գավազան՝ կեռ գլխով. շրջանակներին գրված է.

Այս է հանգիստ Ղուկասին, է որդի Սիմէոնին. Կանգնեցաւ խաչս ձեռաւ Փիրինանին, :ՋՀ: (1521 թ.)

Հյուսիսային կողին նույնպես չորս սրանկյուն խորաններ են, որոնց մեջ զարդարուն խաչեր կան։ Դրանցից արևելյանի մեջ, խաչի կողքերին, գրված է կազմողի ստորագրությունը՝ Աղապէկ:

Աղապէկի ձեռագործը վարպետի վայել աշխատանք է. թե ֆիգուրները և թե զարդերը նուրբ և գեղեցիկ են։ Այստեղ կան նման ուրիշ տապանաքարեր ևս, բայց անստորագիր։

52. Դավիթ — Այս վարպետի ստորագրությունը կրող միակ տապանաքարը գտնվում է Բասարգեչարի շրջանի Կարճաղբյուր գյուղի հարավում՝ Խարաբա ժամ կոչվող վայրի գերեզմանատան մեջ։ Դա մի օրորոցաձև տապանաքար է վերևի մասի կենտրոնում բարձի ձևով։ Հարավային կողմի վերին շրջանակից կախված են ծոպանման զարդեր, իսկ ներքևում՝ մեանդր։ Հարթ մակերեսին նախ՝ փորագրված է թամբած ձի, ապա հեծյալը՝ ձեռքին կեռ դաշույն, առջևը երկար վերնազգեստով և վերի մասում հատած սրածայր գլխարկով, որը հեծյալի առաջ բռնել է կենաց ծառը։ Սրանից հետո նույնպիսի զգեստով և գլխարկով երկու այլ մարդիկ են, սրանց արանքում մեծ գավ է և հացեր։

Վերին շրջանակի կողքերին և հյուսիսային երեսի շրջանակներին գրված է.

Կամաւն այ. Սահակ էրէց որդի/ Ոհաննիսին կանգնեցի զտապանս ի վերայ որդոյ իմոյ Մովսէսին. չկատարեցաւ փափագանց իւրոյ. աղաւթս իշեցէք. /ի Ըն թվ. :ՋՀԷ: (1528): Դաւիթ

Վարպետի ստորագրությունը գտնվում է հարավային կողի արևելյան շրջանակի վերին մասում, փակագիր է և ունի հետևյալ ձևը։ Տապանաքարի հյուսիսային կողին վեց խորաններ են, միջներին խաչեր։ Զարդերի և ֆիգուրների մշակման գործում Դավիթը երևան է բերել բարձր ճաշակ ու վարպետություն։

Այս տապանաքարը իր ֆիգուրների ու զարդերի ոճով շատ նման է «Կարմիր խաչքարներ» (Գթաշեն) կոչվող ավերակների մեջ գտնվող տապանաքարերին։ Եթե նույնիսկ այս տապանաքարերից որևէ մեկի վրա, որը կրում է Աղապեկ կազմողի անունը, բացակայեր այդ ստորագրությունը, ամենայն վստահությամբ այն կարելի էր Դավթի ձեռագործը համարել։ Արվեստի այդ նմանությունները, ժամանակի և վայրի մոտիկությունը նկատի ունենալով՝ Դավթին պետք է համարել Աղապեկի աշակերտ և այդ տիպի տապանաքարերի ոճին նման շատ հուշարձաններ կարելի է վերագրել նրանց։

53. Ակոբ Նկարող — Սիսիանի շրջանից քիչ կազմողների անուններ են մնացել, որոնց մեջ ամենատաղանդավորը Ակոբ Նկարողն է։ Այս նշանավոր վարպետի անունը պահպանվել է շրջանի Անգեղակոթ գյուղում, որտեղ և, շրջանի մյուս գյուղերի համեմատությամբ, ավելի շատ հուշարձաններ, մանավանդ գերեզմանական կոթողներ են պահպանվել։

Անգեղակոթ գյուղի հյուսիսային եզրի բլրաշարքի վրա փռված է մի մեծ գերեզմանատուն, որը հնուց մինչև այժմ էլ այդ նպատակին է ծառայում։ Գերեզմանատան հարավային մասում 7 աստիճան հետզհետե նե-

[1] Սմբատեանց. 597. Լալայեան. Ազգ. Հանդ., XIX, 9—10։

ղացող պատվանդանի վրա կանգնած է մի հին խաչքար: Դրա հարավային կողմում կան երեք և հյուսիսում՝ մեկ տապանաքարեր, որոնք միևնույն տիպի, միևնույն տոհմի գործեր են և ժամանակով իրար մոտ:

Այդ տապանաքարերը բաղկացած են երկու մասից, ներքևում միակտուր մեծ բարձ է և նրա վրա՝ օրորոցաձև տապանաքար, որի ներքևի մասը նույնպես փորված է բարձի ձևով: Դրանցից հնագույնը ամենահարավայինն է, որի հարավային և հյուսիսային կողմերին փորագրված է մեկ տող արձանագրություն, համաձայն որի, Սաղաղին նորոգել է խաչը (խաչքարը) և տապանաքարը, որոնք կանգնած են իր պապ Բաղդասարի գերեզմանի վրա: Արևելյան ճակատին թիվն է 1526:

Սրա հյուսիսային կողմի տապանաքարի վրա գրված է վեց տող արձանագրություն, հարավում և հյուսիսում երեքական տող՝ շրջանաձև շարունակվող, համաձայն որի Բաղդասարը շինել է տվել տապանաքարը իր հայր Շապանի գերեզմանի վրա դնելու համար: Թվականը գրված է արևելյան ճակատին, որը, տարաբախտաբար, բոլորովին ջարդված է[1]:

Խաչքարի աստիճանավոր պատվանդանին մոտ երրորդ տապանաքարն է, որի երկու տող կարևոր արձանագրությունը վերաբերում է նաև գյուղի պատմությանը: Համաձայն այդ արձանագրության Նիանց, Բացին, Ռստամը և Միրզեն, չորս եղբայրներ՝ միաբան շինել են այս տապանը իրենց հայր Փիրնտաղի համար, որ յոթ տարվա ընթացքում շինել է տվել գյուղը. արևելյան ճակատին գրված է կազմողի անունը՝ ԱԿՈԲ և թիվը 1549:

Վերջին, չորրորդ տապանաքարը, որ գտնվում է պատվանդան ունեցող խաչքարի հյուսիսում, համաձայն երեք տող արձանագրության, շինել է տվել Սարգիսը, Մուրադի գերեզմանի վրա դնելու համար:

Այս չորս տապանաքարերն էլ, անկասկած, Ակոբի շինածներն են:

Բացի վերոհիշյալներից, նույն Անգեղակոթ գյուղում պահպանվել են նաև երկու շատ գեղեցիկ խաչքարեր՝ Ակոբի ստորագրությամբ:

Դրանցից մեկը կանգնած է գյուղի հարավային եզրին գտնվող ս. Աստվածածին եկեղեցու դիմաց՝ փոքրիկ գերեզմանատան մեջ: Այն պատվանդանից ընկել է, բայց ամբողջովին անվնաս վիճակում է: Դա մի գեղեցիկ, նրբաքանդակ խաչքար է, ամենալավը այս գյուղում կանգնած բազմաթիվ խաչքարերից: Քիվին գրված է կանգնեցնողների՝ Ամիր աղայի և Հեկաղի անունները, իսկ խաչի տակի ընդի վերին երկու կողմերին ԱԿՈԲ ՆԿԱՐՈՂ. Թվականը գրված է խաչի թևերի շուրջը. շինված է . . . . . . 1549 թ.:

Ակոբ նկարողի կազմած երկրորդ խաչքարը ագուցված է նույն գյուղի հարավ-արևելյան կողմում գտնվող ս. Ստեփանոս եկեղեցու բեմի հարավային պատի մեջ եղած փոքրիկ պատուհանի մեջ, դրված է նրա վրա որպես ծածկ, երեսով դեպի ներքև: Խաչքարի վերին և ներքին մասերը պատի մեջ են: Միջին խորանի տակ երևում է թիվը միայն, այն է՝ :ՋՂԸ: . . . . 1549 թ.:

Թեև այս խաչքարի վրա Ակոբի ստորագրությունը չի երևում (հավանաբար ծածկված մասերի վրա է), բայց խաչքարի երևացող մասերի քանդակների ոճը փարատում է ամեն կասկած:

Ակոբ նկարողը XV դարի Սիսիանի շրջանի լավագույն նկարող-կազմողն է:

Հավել. արձ. 38, 39

54. Մաթեոս Երեց կազմող.—Կերտել է մի ինքնատիպ խաչքար Աթանեսի պատվերով, ի հիշատակ պատվիրատուի, նրա ծնողների և ազգակիցների: Մեծ խաչքարի երեսը բաժանված է չորս մասերի, նախ նեղ քիվն է, ապա ճակատի մասում ունի երեք խորաններ՝ իրարից բաժանված զույգ սյունիկներով՝ արանքներում խաչեր, դրանցից ներքև մեծ խորան է՝ մեջը հիմնական խաչ, սրանից ներքև կրկին չորս փոքր խորաններ՝ իրենց խաչերով:

Արձանագրությունը տեղավորված է քիվի վրա, խորանների կամարներին և բաժանարար սյունիկների արանքներում:

Մաթեոս կազմողն իր հիշատակությունը

[1] Բացի տապանաքարերի միօրինակությունից, այս տապանաքարի ժամանակի որոշման համար կարևոր է և նրա տեղադրությունը, նրան կից հարավից, ինչպես տեսանք նույն ձևի տապանաքարը թվագրված էր 1526, իսկ հյուսիսայինը՝ 1549, հետևաբար միայն դրանց արանքում նա պետք է շինված լինի:

գրել է կենտրոնական մեծ խորանի գլխի կամարին, պատվիրատուի հիշատակությունը քիվի վրա է, իսկ ազգակիցների 10-ից ավելի անունները խորանների բաժանորդ մասերում: Արձանագրությունը գրված է ուռուցիկ տառերով:

Խաչքարը գեղաքանդակ է և բարձր արվեստի ու դրչության նմուշ:

Խաչքարի նախկին տեղն անհայտ է, այն այժմ ագուցված է Մարտունու շրջանի համանուն շրջկենտրոնի ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի արևմտյան մասում: Շինված է . . . . . 1513 թ.:

Հավել. արձ. 40

55. 56. Իգնատիոս և Հովանէս կազմողներ — Այս երկու հեղինակները քանդակել են մի գեղեցիկ խաչքար, որը կանգնած է Նոր Բայազետի «Դարի գլուխ» կոչված գերեզմանատան արևելյան մասում, բարձր պատվանդանի վրա: Խաչքարի նեղ քիվի տակը լայն ճակատ է, որի կենտրոնում խաչ է քանդակված, իսկ կողքերին մանր գծերով երկրաչափական բարդ զարդամոտիվներ: Ճակատը վերջանում է շրջանակով. ապա ուրածայր խորանի մեջ ամբողջովին զարդերով ծածկված մեծ խաչն է, կանգնած գեղեցիկ գնդի վրա: Կողքերի լայն շրջանակների վերին մասերում մեկական խաչեր են, ապա զարդարված հարթությունների վրա գրված են 8 թևանի աստղեր: Զարդերի մեջ հիմնական, երկրաչափական գծերից բացի խառնված են նաև բուսական էլեմենտներ, ոճավորված տերևներ և ճյուղեր:

Խաչքարը շինված է Վիլաթի պատվերով ի հիշատակ իրեն և ծնողներին. պատվիրատուի արձանագրությունը տեղավորված է խաչքարի քիվին և տակին, իսկ կազմողների հիշատակագրությունը՝ ճակատը մեծ խաչից ու խորանից բաժանող շրջանակի վրա: Արձանագրությունը քիվի վրա է և հեղինակների մասին գրված է ուռուցիկ տառերով, իսկ ներքևի մասում՝ խորագիր: Շինված է ...... 1535 թ.:

Մի երկրորդ խաչքար ևս, միայն Հովանէս կազմողի ստորագրությամբ և անթվական, գտնվում է Նորադուզ գյուղի մեջ, եկեղեցու արևմտյան պատի տակ: Սա ավելի համեստ է և բավականին վնասված: Նկատի ունենալով Նորադուզի ու Նոր Բայազետի մոտիկությունը, շատ կազմողների երկու վայրերում աշխատած լինելը և քանդակների այդ դարաշրջանին հատուկ լինելու և նախորդի հետ նմանություն ունենալու հանգամանքը, համարում ենք նախորդ Հովանեսի գործը:

Հովանեսն, անշուշտ, Իգնատիոս կազմողի աշակերտն է եղել, առաջին խաչքարի ստորագրության մեջ նրա անունը երկրորդ տեղն է գրավում: Նա իր անունն ստորագրել է այն ժամանակ, երբ սկսել է ինքնուրույն աշխատել:

Վերջին խաչքարը շինված է Մարտիրոս քահանայի պատվերով:

Հավել. արձ. 41, 42: Ալբոմ, նկ. 66:

57. Պախշայիշ կամ Պախշայիչ կազմող — Այս վարպետի շինած մի գեղեցիկ խաչքարը ագուցված է Մարտունու շրջանի Լիճք (Գյոլ) գյուղի հարավում, բլրի վրա գտնվող եկեղեցու արևելյան պատի մեջ ներսից, պատուհանի մոտ: Նախկին վայրն անհայտ է, ներկա տեղում նա դրվել է եկեղեցին շինելու ժամանակ, շատ ուրիշ խաչքարերի և տապանաքարերի հետ միասին: Արձանագրությունը, երկու տողով, գրված է քիվին և խիստ վնասված է, երևում է միայն Աստվածատուր անունը, որը կանգնեցնողինը պետք է լինի և երկրորդ տողի վերջում կազմողի հիշատակությունը: Թվականը գրված է կենտրոնում, խաչի կողքերին և լավ է պահպանված, ըստ որի շինված է . . . . . 1538 թ.:

58. Ակոբ նկարող, կազմող — Այս շնորհալի վարպետը մեկն է իր դարաշրջանի լավագույն արվեստագետներից, նրա գործերը պահպանվել են Մարտունու և Բասարգեչարի շրջանների գյուղերում: Գրականության մեջ հայտնի էին առաջինի երեք գործերը միայն: Մեր պրպտումները հայտնաբերեցին արվեստագետի կողմից ստորագրված և չստորագրված մի քանի կոթողներ ևս: Ակոբ կազմողի կերտած հնագույն կոթողը գտնվում է Մարտունու շրջանի Վաղաշեն (Ավդալ Աղալու) գյուղի գերեզմանատանը: Այդտեղ, ս. Աստվածածին անունով եկեղեցու մոտ, նրա հյուսիս արևմտյան անկյունում, կանգնած են երկու գեղաքանդակ խաչքարեր, որոնցից հյուսիսայինն ավելի մեծ է, դրա քիվին փորագրված է պատվիրատու Վելումի արձանագրությունը, իսկ խաչքարի տակին ուռուցիկ տառերով՝ ԱԿՈԲ ԿԱԶՄՈՂ: Արվեստագե-

տի այս առաջին ձեռագործը (մեզ հայտնի), կրում է 1540 թվականը։

Ակոբի ձեռակերտ երկրորդ հուշարձանը գտնվում է Բասարգեչարի շրջանի Մեծ Մազրա գյուղում։ Դա մի գեղեցիկ տապանաքար է, որի նախնական տեղը թեև անհայտ է, բայց պատվիրատուների անուններից պարզվում է, որ Մելիք Շահնազարյանների տոհմից են, որոնց տոհմակիցների գերեզմանները գտնվում են այս գյուղամիջում։ Հուշարձանն այժմ ագուցված է գյուղամիջի ավերակ եկեղեցու արևմտյան պատի մեջ, արտաքուստ, մուտքի գլխին, բարեբախտաբար կարևոր երեսով դեպի դուրս։

Տապանաքարի երևացող երեսի հյուսիսային կողմում մի թագակիր հեծյալ է, ձախ ձեռքում խաչ, իսկ աջում՝ երկար նիզակ, որը սուր ծայրով խրել է ձիու ոտների տակ գալարված և գլուխը վեր բարձրացրած վիշապի բերանը։ Ձիու առաջ կանգնած է մի մարդ, երկար, շուխայանման շորով և գոտիով, երկու ձեռքերով բռնած ունի դեպի աջ բարձրացրած փայտանման իր, վերի ծայրը հաստ, հավանաբար գուրզ, գլխարկը վերևից հարթ է (կարող է և կին լինել)։ Դրանցից հարավ վարդյակներով զարդարված պատվանդան կամ բազմոց, որի վրա՝ ծնկած մի կին, աջում մեծ գավ, ձախում կլոր բլիթ-գաթա, սա նույնպես գոտեզարդ է, սրանցից հարավ դրված է նույնպես երկարավիզ, փոքր գավ։ Բոլոր քանդակները կատարված են ռեալիստորեն և բնականին մոտեցող գծերով։ Քանդակների երկու կողքերին և վերին մասում շրջանակներ են, որտեղ գրված է արձանագրություն, ըստ որի տապանաքարը դրված է եղել պարոն Միրզաջանի որդի, Մելիքբեկի եղբայր, Տրունի գերեզմանի վրա. շինվել է 1541 թ. և ստորագրված է՝ Ակոբ ԿՋՂ—կազմող։

Երրորդ վայրը, որտեղ պահպանվել են Ակոբ նկարողի գործերը, դա Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն (Ն. Ադիաման) գյուղն է։ Գետաշենը միջնադարյան Կոթ գյուղաքաղաքն է, գյուղի արևմուտքում մի բարձրավանդակի վրա գտնվում է X դարի սկզբում շինված, հայտնի «Կոթա ս. Աստվածածին» եկեղեցին, կիսավեր վիճակում, որի շուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանատուն, որտեղ և կանգնած են Ակոբ նկարողի կերտած մի քանի խաչքարերը։ Սրանցից դժբախտաբար միայն երկուսի վրա է արվեստագետն իր ստորագրությունը դրել։

Եկեղեցու հարավային պատի մոտ, իրար կից, շարքով կանգնած են չորս խաչքարեր, որոնց տեղադրությունը ցույց է տալիս, որ մի տոհմի գերեզմաններ են։ Հյուսիսայինի քիվի արձանագրությունը հաղորդում է, որ կանգնեցրել է Մանվելը Բարսեղ քահանայի հիշատակին, ապա լայն ճակատից հետո՝ ուռուցիկ տառերով գրված է. ԿԱԶՄՈՂ ԱԿՈԲ և թվականը՝ 1542. մնացած երեքի վրա ոչ կազմողի ստորագրություն կա և ոչ էլ թվականներ, բայց առաջին իսկ հայացքից երևում է, որ դրանք նույն վարպետի ձեռագործն են. մենք անվերապահորեն այդ գործերը վերագրում ենք Ակոբին։

Դրանցից փոքր-ինչ հեռու, դեպի արևմուտք, իրար կից կանգնած են զույգ խաչքարեր։ Հարավային խաչքարի քիվին պատվիրատու Գրիգորի հիշատակությունն է, որը կանգնեցրել է իր հոր հիշատակին, ապա ճակատից ներքև, խաչի խորանի երկու վերին կողմերին՝ ԱԿՈԲ ՆԿԱՐՈՂԻ։ Հյուսիսայինի քիվի արձանագրությունը նույն Գրիգորի անունն է կրում և խաչքարը կանգնեցրած է Արղումանի հիշատակին, պարզ է, որ այդ էլ պետք է նրա մայրը լինի։ Երկուսի վրա էլ թվական չի նշանակված[1]։

Խաչքարերի այս զույգի վրա Ակոբը ցուցադրել է իր արվեստի մի այլ կողմը ևս։ Երկու խաչքարերի լայն ճակատների կենտրոններում տեղավորված են սրբապատկերներ, մեկ դեպքում Աստվածածինն է նստած դիրքում և մանուկ Հիսուսը գրկին, մյուս դեպքում ամենակալը, կողքերին երկու հրեշտակներ։

Բացի այս վեց խաչքարերից, շրջապատում կան ուրիշները ևս՝ արվեստով նման Ակոբ կազմողի գործերին։

Ակոբ նկարողի ստորագրությունը կրող հուշարձանների չորրորդ վայրը Մարտունու շրջանի Երանոս գյուղն է։ Գյուղի կենտրոնումն է գտնվում ս. Աստվածածին եկեղեցին, որի պարսպափակ բակը ամբողջովին ծածկված է գերեզմանաքարերով և խաչքարերով. բակի արևմտյան մասում մի մեծ

[1] Խաչքարերը մեկ քառորդով խրված են գետնի մեջ. հնարավոր է, որ նրանց ներքևի մասում էլ արձանագրություն լինի և թվական։

պատվանդանի վրա իրար կից կանգնած են երկու խաչքարեր, որոնցից հյուսիսայինը ավելի մեծ ու բարձր է (2,25 մ)։ Քիվին գրված արձանագրությունից պարզվում է, որ այն կանգնեցրել է Էլադանը՝ իր հայր Մելիք Միրզայի հիշատակին. խաչի խորանի ձախին կողին ուռուցիկ տառերով գրված է ԱԿՈԲ ՆԿ-ԿԱՐՈՂ, իսկ տակի գեղաքանդակ սնդի չորս անկյուններում թվականն է, ՌԻԴ—1575։ Խաչքարի ճակատին նույնպես Ակոբ նկարողը պատկերել է Աստվածածինը նստած և մանուկ Հիսուսը աջ ծնկանը. իսկ տակի գնդի կենտրոնում, որը սովորաբար միայն զարդերով է ծածկված լինում՝ տեղավորել է մարդու դիմանկար։

Այս խաչքարին կից հարավից կանգնածը մի քիչ փոքր է. կանգնեցված է պարոն Պահլուլի հիշատակին, նույն՝ 1575 թ. Թեև Ակոբ կազմողի ստորագրությունը չկա այս խաչքարի վրա, բայց երկու հուշարձանների միաժամանակ կառուցումը և նրանց զարդաքանդակների ոճը ոչ մի կասկած չեն հարուցում, որ միևնույն վարպետի ստեղծագործություններն են։

Վերջին, հինգերորդ վայրը, որտեղ մնում են տակավին Ակոբ նկարողի աշխատությունները, դա նույն Մարտունու շրջանի Վերին Ղառանլուխ գյուղն է։ Գյուղամիջի ս. Գևորգ եկեղեցու բակը, որը մի ընդարձակ գերեզմանատուն է՝ ծածկված բազմաթիվ գեղեցիկ խաչքարերով և տապանաքարերով, որոնցից հատկապես վերջինների (տապանաքարերի) վրա կան փայելչագեղ քանդակված կենցաղային բազմապիսի տեսարաններ։

Այստեղ, գերեզմանատան հարավում կանգնած է մի գեղեցիկ խաչքար, գլուխը ճակատով պսակված. ըստ արձանագրության՝ կանգնեցրած է Շահսվարի հիշատակին, ներսի գնդի շուրջը կա ԱԿՈԲ ստորագրությունը. թվական չունի։

Սրանից բացի նույն տեղում գտնվում է նաև միջակ մեծության մի օրորոցաձև տապանաքար, տեղից շարժված, որի հյուսիսակողին չորս խորաններ են՝ միջին խաչեր, հարավային կողին թամբած ձի, ոտների տակ փիշապր տորբեյիս, ապա երկփողանի սրինգ, կերակրով լի ամանակ, գաթա և ծալապատիկ նստած կին։ Ձիու առաջ քանդակված է քառակուսի և պոչավոր մի իր, որը, համանաքար, հայելի է և դրա վրա գրված՝ ԱԿՈԲ Նկ.— այսինքն Ակոբ նկարող. գերեզմանաքարի տիրոջ հիշատակությունը և թվականը չի գրված։

Այս գերեզմանատանը, ոճական համեմատություններով՝ հնարավոր է Ակոբ նկարողի այլ գործերը ևս հայտնաբերել։

Ակոբ կազմող-նկարողն իր ժամանակաշրջանի և Գեղարքունիքի լավագույն արվեստագետներից է։ Նրա արվեստի առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն իր ժամանակակիցների, որոնց մեծ մասը մանր գծերի սիրողներ են, ինքը մնում է հին տրադիցիաների հետևող. քանդակները գծում է հաստ, ուժեղ ու մոնումենտալ, բայց և գեղեցիկ ու ճաշակավոր, ժամանակի տարածված ոճով։ Նրա խաչքարերի քիվերը նեղ են, ճակատներն ու շրջանակները լայն և խաչքարի կենտրոնում սրանկյուն խորան՝ կենտրոնական խաչի համար։ Ակոբի զարդամոտիվները շատ բազմազան են, նա իր ուժերը փորձել է դիմանկարներ և կենդանիներ պատկերելու բնագավառում։

Ակոբ կազմողի թվագրված հուշարձաններից հնագույնը կրում է 1540 և վերջինը՝ 1575 թ.։ Այսպիսով նրանց մեջ ստացվում է 35 տարվա գործունեության մի շրջան, որի ընթացքում նա՝ որպես պրոֆեսիոնալ արվեստագետ շատ ավելի գործեր է կերտել անշուշտ, քան այն ինչ մեզ հաջողվեց թվարկել։ Դրանց մի մասը կարող է կորած լինել, բայց և մի մասն էլ ըստ դարաշրջանի սովորության կարող էր անշուշտ անստորագիր լինել. դրանց հայտնաբերումը հնարավոր է արվեստագիտական քննության և համեմատության ճանապարհով։

Ակոբ կազմողի գործունեությունն ընթացել է գերազանցապես այժմյան Մարտունու շրջանում, պետք է ենթադրել, որ նա ծնվել է հենց այդ շրջանի գյուղերից մեկում՝ Վաղաշենում, որտեղ և գտնվում է նրա հնագույն կերտած հուշարձանը։

Համեմ. արձ. 43—48։ Ալբոմ, նկ. 67, 68, 69։

59. Ալէք կազմող—Մարտունու շրջանի Վարդենիկ (Ներքին Գյոլայդարա) գյուղամիջի ս. Աստվածածին կիսավեր եկեղեցու աբսիդում կանգնած են մի խումբ խաչքարեր։ Մի գեղաքանդակ և մեծ արձանագրություն ունեցող խաչքարի վրա է գտնվում այս վար-

պետի ստորագրությունը. խաչքարի քիվին և տակը փորագրված է պատվիրատուների հիշատակարանը, իսկ ճակատին և կենտրոնական խաչի խորանի վերին կողմերին՝ կազմողի ստորագրությունն ու թիվը՝ ուռուցիկ և ծաղկագիր տառերով. շինված է.... 1541 թ.:

Հավել. արձ. 49: Ալբոմ, նկ. 70:

60. Մելիքսեթ կազմող—*XVI դարում խաչքարերի զարդաքանդակների ձևավորման մեջ երևան են գալիս այնպիսի գծեր, որոնք հատուկ են այդ և հետագա ժամանակներին միայն: Դրանցից հիմնականը զարդաքանդակների գծերի բարակացում-նրբացումն է, ապա բուսական էլեմենտների՝ տերևների, ոճավորումն է այն աստիճան, որ նրանք ընկալվում են դժվարությամբ միայն, սովորական դիտողի վրա նրանք երկրաչափական գծերի տպավորություն են թողնում: Այդ գործը կամ ուղղությունը աստիճանաբար տարածվում է ամենուրեք:*

Մելիքսեթ կազմողը հիմնականում գործել է Նոր Բայազետի շրջանում, ուր նա եղել է այդ ուղղության առաջին ներկայացուցիչը, եթե չասենք հիմնադիրը:

Այս նշանավոր վարպետի անվան հիշատակությունը, իր ձեռակերտ խաչքարերի վրա, երկու անգամ է միայն հիշատակված գրականության մեջ (տե՛ս Հավելված): Մեր պրպտումները հայտնի դարձրին ևս յոթ հուշարձաններ Մելիքսեթի ստորագրությամբ: Այժմ գոյություն ունի հուշարձանների մի մեծ խումբ՝ Մելիքսեթի ստորագրությամբ, որը հնարավորություն կտա նրա արվեստի մասին ստույգ գաղափար կազմել:

Մելիքսեթ կազմողի հնագույն ձեռակերտը գտնվում է Նոր Բայազետի շրջանի Կարմիր (Ղուշչի) գյուղում. ս. Աստվածածին եկեղեցու արևելյան կողմում, պարսպի տակ: Կարմրավուն քարից կերտված և մեծ արվեստով քանդակազարդված այս հուշարձանը դժբախտաբար շատ է վնասված. ջարդոտված է և քիվը, որի վրա պատվիրատուի անունը պիտի լիներ և գեղեցիկ զարդաքանդակները վերևի մասում. համեմատաբար լավ է պահպանվել միայն կենտրոնական մասը:

Բարեբախտաբար կենտրոնական խաչի խորանի վերին կամարի շուրջը մնացել են լրիվ՝ կազմողի ստորագրությունը և թվականը՝ 1541:

Մելիքսեթի կազմած երկրորդ խաչքարը գտնվում է նույն Կարմիր գյուղում՝ կիսավեր ս. Գևորգ եկեղեցու մեջ, նրա հարավային պատի տակ. շինված է Միրաքի պատվերով Դալաթի հիշատակին, 1546 թ.:

Մելիքսեթի կազմած երրորդ հուշարձանը կանգնած է նախորդին մոտ, ս. Գևորգ եկեղեցու հարավում գտնվող այլ խաչքարերի մոտ. սա կարմրավուն քարից է, մեծ ուբարձր, կանգնած լավ մշակված պատվանդանի վրա: Շինված է ի հիշատակ Մելիք աղային և յուր ծնողներին......... 1549 թ.:

Չորրորդ հուշարձանն այս վարպետի գտնվում է հարևան Սարուխան (Դալի ղարդաշ) գյուղում: Այստեղ, գյուղամիջում կա մի հասարակ, փայտածածկ մատուռ, կիսավեր վիճակում. դրա ներսում, հյուսիսային պատի մեջ ագուցված է Մելիքսեթ վարպետի մի գեղեցիկ ձեռակերտ խաչքարը. այն շինված է Մելիք Պարեքի և պարոն Մերհասի պատվերով՝ տէր Բարսեղի հիշատակին . . . . 1549 թ.:

Մելիքսեթ կազմողի հինգերորդ ձեռագործը գտնվում է իր գործունեության հիմնական միջավայրից դուրս, ներկայիս Հրազդանի շրջանի (Ախտա) Ծաղկունք գյուղում: Գյուղամիջի ս. Հարություն եկեղեցու հարավային պատի տակ կանգնած է մի խաչքար, իր արվեստով բոլորովին նման այս վարպետի մեր նկարագրած խաչքարերին, քիվին ունի կանգնեցնողի հետևյալ արձանագրությունը.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍԷ ԱՐԻԷ ԱՂԻՆ. ԹՎ. ՌԲ. (1553)

Իսկ կենտրոնական խաչի խորանի վերին կողմերում՝

ՄԷԼՔՍԷԹ ԿԱԶՄՈՂ.

Այս նշանավոր վարպետի կազմած վեցերորդ և յոթերորդ խաչքարերը գտնվում են կրկին Նորադուզ գյուղում. գյուղամիջի մեծ եկեղեցու (IX դար) բակի հարավում, այլ խաչքարերի շարքում, որտեղ մի մեծ պատվանդանի վրա կանգնած են եղել զույգ խաչքարեր, մեկն այժմ ամբողջ է և կանգուն, իսկ մյուսը, որ նախորդին կից է հարավից, կեսից կոտրվել և ընկել է պատվանդանի մոտ: Ընկած մասն իր հերթին կոտրվել է հյուսիսից վերին անկյունից, բայց այդ փոքր մասը ևս գտնվեց մոտերքում: Այս երկու հուշարձաններից կանգունը, համաձայն քիվին եղած արձանագրության՝ կանգնեցված է ի հիշատակ Եղիսաբեթին (Եղիսապետ). կեն-

տրոնական խորանի վերի երկու կողմերում ուռուցիկ տառերով գրված է Մելիքսէր կազմող, *իսկ խորանի մեջ, վերի մասում թվականը՝ 1555 թ.: Մյուս խաչքարը, որը թվագրըված չէ, նույնպես Մելիքսեթի ստորագրությունն է կրում, նույն տեղում և նույնպիսի ուռուցիկ տառերով: Քիվին փորագրված երկտող արձանագրությունից պարզվում է, որ այն կանգնեցրել է Մելիք Բարեքը իր հոգու փրկության համար: Պարզ է, ուրեմն, որ միևնույն պատվանդանի վրա կանգնած զույգ խաչքարերը Մելիք Բարեքինը և իր ամուսին Նըխաբեթինն են: Այդ կոտրված խաչքարի թիկունքին եղած մեծ արձանագրությունը ոչ միայն մեր վերևում ասածներն է հաստատում, այլև լույս է սփռում Մելիքսեթ վարպետի գործունեության այդ կողմերի վրա: Բերում ենք արձանագրությունն ամբողջովին.*

Կամաւն Ա̅յ [ես] Մելիք [Բարէքս եղ]բայր իմ զԱ(տ)եփաննոս քահանէն, որդին իմ Գունկչայբեկն հարն իմ Գունտուզ աղէն. եկինք Գանձակայ, շինեցինք կարմու(ն)նս, շինեցինք շրջապատս, կանգնեցինք զխաչերս, որք երկրպագէք, յիշեցէք ի Քրիստոս[1]:

Ինչպես արձանագրության բովանդակությունից երևում է՝ Մելիք Բարեքը, բացի իր և կնոջ համար խաչքարեր կանգնեցնելուց, շինել է նաև կամուրջ և շրջապարիսպ եկեղեցու համար: Այդ բոլոր աշխատանքների մեջ, անշուշտ, մասնակցություն պետք է ունենար Մելիքսեթ վարպետը, որպես նշանավոր բարգարծ:

Այլ փաստերից ևս երևում է, որ Մելիքսեթը սերտորեն կապված է եղել Մելիք Բարեքի հետ և դրան վարպետ է եղել այդ մելիքական տան համար: Մենք տեսանք, որ նույն Մելիք Բարեքի պատվերով Մելիքսեթ կազմողը մի խաչքար էր շինել Սարուխան գյուղում[2]: Ժամանակագրորեն VII հուշարձանը, Մելիքսեթ կազմողի, գտնվում է կրկին Կարմիր գյուղում: Դա խաչքարի մի բեկոր է, վերին մասը միայն ջարդոտված և ագուցված ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի մեջ՝ մուտքից վեր: Քիվի ջարդված մասում մնացել է պատվիրատուի հիշատակագրությունը, ըստ որի այն եղել է փաշան, ապա խորանի վերին մասերի կողքերին, ըստ իր սովորության ուռուցիկ տառերով գրված է Մելիքսեթի ստորագրությունը. շինված է.... 1567 թ.:

Մելիքսեթի ութ և իններորդ խաչքարերը կրկին իր գործունեության հիմնական վայրերից հեռու են գտնվում: Նշանավոր Բջնի գյուղի եկեղեցու բակում կանգնած կան երկու խաչքարեր այս վարպետի ստորագրությամբ: Դրանցից մեկը եկեղեցու արևելյան պատի մոտ մի շարքի կանգնած 6 խաչքարերից մեկն է, ամենահյուսխայինը, Մելիքսեթ կազմողի արվեստին հատուկ մանր ու նուրբ քանդակներով. քիվին ուռուցիկ տառերով գրված է.

Սբ. խաչս Բար(է)խաւ Մելիքսէր քահանային. թվ. :ՌԻԹ: (1580):

Իսկ խաչի կողքերին հատուկ հարթություններին վրա՝ կազմող Մէլ(ի)ք(ս)էր.

Մյուս խաչքարը կանգնեցրած է նույն եկեղեցու պարսպի հյուսիս-արևելյան անկյունի գլխին, բարձր և անմատչելի տեղում, որի ճակատին մեկ տողով գրված է.

Սբ խաչս բարեխաւս Աստուածադուր պէկին.

Իսկ խաչի կողքերի հարթություններին վրա ուռուցիկ տառերով

Մելիքսէր կազմող.

Թեև այս երկրորդ խաչքարը թվական չունի, բայց հավանական է, որ նույն այցելության միջոցին է շինել այն Մելիքսեթ վարպետը:

Տասներորդ և վերջին թվագրված խաչքարը գտնվում է Նորադուզ գյուղում: Նրա նախնական տեղն անհայտ է, հավանաբար մեծ եկեղեցու բակում պետք է լիներ կանգնած, այժմ դրված է այդ եկեղեցու հարավում հետագայում շինված անարվեստ գավթի արևելյան մուտքի ճակատին, արտաքուստ. դա մի մեծ և գեղեցիկ հուշարձան է.

[1] *Հրատարակված է՝* Սմբատեանց. *Գեղարքունիք,* 484:

Լալաեան, *Ազգ. Հանդ.* XVIII, *118 և Գեղարքունիք, 12: Տեղում կատարած մեր ստուգմամբ և ներկա վիճակի նշմամբ:*

[2] *Մելիք Բարեքի համար աշխատել է նաև նշանավոր Քիրամ կազմողը: Մելիքական այս տոհմը, ինչպես երևում է Նոր Բայազետի մի քանի գյուղերում թողած նրանց հուշարձաններից՝ սկզբում միայն Գանձակ գյուղի մելիքներ են եղել (Նոր Բայազետից հարավ, նախկին Քյոսամահմադ, այժմ Բատիկյան), իսկ հետագայում տիրել են մի քանի գյուղերի, ուր ամենուրեք նրանց գործունեության հիշատակությունները կան:*

բառ պահպանված արձանագրության բովանդակության, նա կանգնեցրած է Գիրգորի և իրեն՝ կազմող Մելիքսեթի հիշատակին։ Կարելի է ենթադրել, որ հիշատակված Գիրգորը (Գրիգոր) Մելիքսեթի մերձավորներից է՝ հայրը կամ եղբայրը։ Մելիքսեթը ինքն է ոչ միայն կազմել, այլև կանգնեցրել այդ հուշարձանը, իր ծերության ժամանակ և ոչ թե սովորականի նման ստորագրել է, այլ և շաղկապով իրեն կապել հիշված Գիրգորի հետ։ Շինված է.......1595 թ.։

Իններորդ խաչքարը անթվական է, բայց հավանաբար շինված է նախորդից առաջ, սրա էլ նախնական տեղն անհայտ է. այն այժմ ագուցված է Նոր Բայազետ քաղաքի 1830 թ. շինված ս. Կարապետ եկեղեցու արևելյան պատի կենտրոնում, արտաքուստ. դա մի գեղեցիկ խաչքար է և այդ անշուք եկեղեցու միակ ու խակական զարդն է հանդիսանում. շինված է ի հիշատակ Մարմոս եղխկոսոսին։

Մելիքսեթ կազմողի խաչքարերի առանձնահատկություններն են. նեղ քիվ, լայն ճակատ, կենտրոնում խաչ, կենտրոնական խաչը միշտ խորանի մեջ, մեծ մասամբ ուղանկյուն, խաչքարերի շրջանակները լայն և նրանց վրա մեծ, երկարավուն (վերից վար) քառակուսիներ։ Արձանագրությունը մեծ մասամբ միայն քիվի վրա է, իսկ իր ստորագրությունը կենտրոնական խորանի վերին երկու կողմերին գծած շրջանակների մեջ և հաճախ ուռուցիկ տառերով։ Խաչքարերի մեծ մասը թվագրված են, մեծ մասամբ նույնպես ուռուցիկ տառերով։

Այս նշանավոր արվեստագետի կազմած առաջին մեզ ծանոթ հուշարձանը թվագրված է 1541 և վերջինը՝ 1595, միջանկյալ ժամանակամիջոցն է 54 տարի, մարդու աշխատանքային գործունեության մի լրիվ կյանք։ Մելիքսեթն, անկասկած, պրոֆեսիոնալ կազմող-քարգործ է, իր ամբողջ կյանքը այդ արվեստին նվիրաբերած։ Այն հուշարձանները, որոնք մեզ են հասել՝ շատ քիչ են իրենց թվով մի խոշոր արվեստագետի 54 տարի տևած աշխատանքային գործունեության համար։ Պետք է ենթադրել, որ Մելիքսեթի կերտած բազմաթիվ հուշարձաններ ժամանակի ընթացքում օգտագործվելով նոր շինությունների մեջ՝ այժմ կորած են մեզ համար։ Մյուս կողմից, Բոյաղեխի շրջանի գյուղերում, որտեղ գործել է նա, բազմաթիվ չստորագրված հուշարձանների մեջ հավանական է կան և նրա ձեռակերտները։ Այդպիսիները պետք է փնտրել հատկապես այն հուշարձանների մեջ, որոնք վերաբերում են գանձակեցի մելիքների շինածներին, Գունդուզ աղայի, սրա որդի Մելիք Բաբեքի, սրա որդի Գուկչայ բեկի և այլոց։

Մելիքսեթ կազմողը Նոր Բայազետի շըրջանում գործած XVI դարի ամենանշանավոր կազմող-արվեստագետներից մեկն է և արժանի է հատուկ ուսումնասիրության։ Արձանագրությունները և մատենագրությունը տե՛ս Հավել. արձ. 50—58։ Ալբոմ, նկ. 71, 72, 73, 74։

61. Յովանէս կազմող—*Այս շնորհալի վարպետի կերտած երկու խաչքարերը գտնվում են Նոր Բայազետի շրջանի Լանջաղբյուր (Քյուսաջըղ) գյուղում։ Նրանք ագուցված են գյուղամիջի ս. Խաչ եկեղեցու արևմտյան պատի մեջ, մուտքի երկու կողմերին։ Մուտքից հարավ ագուցվածը շինված է տանուտեր Սարգսի պատվերով... 1542 թ.։ Իսկ հյուսիսայինը՝ Համազիզ աղի պատվերով, իր եղբայր Սարգիս աղայի հիշատակին... 1551 թ.։ Երկու խաչքարերն էլ մեծ արվեստի գործեր են, առաջինի ճակատի կենտրոնում փոքր խաչ է, շուրջը ուռուցիկ տառերով գրված է թվականը, որից հետո մեծ, ուղանկյուն խորան և խաչ. ունի լայն շրջանակներ՝ նուրբ ու գեղեցիկ քանդակներով։ Արձանագրությունը քիվին ու տակին է, իսկ կազմողի հիշատակությունը, նույնպես ուռուցիկ տառերով՝ խորանի վերին կողմերին։*

Երկրորդ խաչքարը ձևավորված է ավելի գեղեցկորեն, կիսաշրջան խորանի մեջ խաչն է, որի տակ քանդակված է շատ գեղեցիկ մի դունդ, ամբողջովին մանր զարդաքանդակներով և կլոր շրջանակն ամբողջովին արձանագրված. լայն շրջանակները նույնպես պատած են զարդաքանդակներով։ Պատվիրատուի արձանագրությունն սկսվում է քիվից և շարունակվում կողքերի շրջանակների վրա, նրանց ներքևի մասերում։ Գնդի շուրջը թվականն է և կազմողի հիշատակագրությունը։

Հավել. արձ. 59, 60։ Ալբոմ, նկ. 75, 76։

62. Վարդան կազմող — *Այս մեծարվեստ վարպետը գործել է Վայոց ձորում. մեզ են հասել նրա երկու գեղաքանդակ խաչքարերը։ Առաջինը կանգնած է եղեղ Գյոգարաս գյուղի*

կիսավեր եկեղեցու արևմտյան մուտքի հյուսիսային կողմում. հետագայում ընկել է պատվանդանից։ 1936 թ. այն փոխադրվել է շրջանային կենտրոն՝ Եղեգնաձոր և այժմ էլ գտնվում է այնտեղ, եկեղեցու բակում. շինված է Խաչատուրի պատվերով ....1549 թ.։

Վարդան կազմողի երկրորդ խաչքարը գտնվում է Գյոզալդարաս գյուղից ոչ շատ հեռու նշանավոր Գնդեվանքում։ Թե որտեղ է այն կանգնած եղել նախկինում՝ հայտնի չէ. այժմ դրված է եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային որմնախորշի մեջ, խախուտ վիճակում. կերտված է 1551 թվականին. Վարդան կազմողի խաչքարերը դարաշրջանի լավագույն գործերից են, նա սիրում է խաչքարի ամբողջ երեսը ծածկել նուրբ քանդակներով. նույնիսկ խաչի հարթությունը։ Խաչքարերի ճակատները լայն են, նույն և շրջանակները և դրանք բաժանված են քառակուսիների, որոնք ծածկված են բազմազան մոտիվներով, երկրաչափական ու բուսական, ոճավորված և նուրբ քանդակներով։ Սրբապատկերները և նրանց կենդանական սիմվոլները քանդակված են մեծ ճաշակով։ Խաչքարերի տակին քանդակված գնդերը արվեստի բարձր նմուշներ են. Գյոզալդարասինը ուռուցիկ է։ Վարդան կազմողն ունի թվականներ նշելու մի խիստ ընորոշ առանձնահատկություն։ Գնդեվանքում մնացած խաչքարի արձանագրության մեջ, որը հայկական թվականով ուղիղ 1000 է, փոխանակ մի տառով՝ ։Ռ։ նշանակելու, Վարդանը գրել է երկու տառով՝ ։ՋՃ։, այսինքն 900+100։

Թվականի գործածության այսպիսի դեպքի հանդիպում ենք Գյոզալդարասի մի այլ խաչքարի վրա։ Այն շինված է Խաչատուր երեցի պատվերով, պարոն Սմբատի և իր Թուրան հիշատակին, համաձայն խաչքարի ներքևում գրված չորս տող արձանագրության։ Դրանցից վեր, խաչերի թևերի արանքներում նշված է թվականը՝ ։ՋՃԼԲ։[1]։ Այս խաչքարը կանգնած է այժմ ավերակ Գյոզալդարասի գյուղամիջում, գետակի աջ ափին, խաչքարը մեծ է, լայն շրջանակներով, որոնք բաժանված են քառակուսիների և նրանց մեջ՝ գեղաքանդակ վարդյակներ ու այլ զարդեր՝ Վարդան կազմողի հայտնի հուշարձանների ոճով։ Գնդեվանքինը հարթ է. երկուսն էլ իրենց մանր ու ճոխ գծագրությամբ Վարդանին պատիվ բերող գործեր են։

Վարդան կազմողը նաև գրչագրության ճաշակավոր վարպետ է. նրա տառաձևերը գեղեցիկ են և հաճախ ուռուցիկ, այսպես՝ Գյոզալդարասի խաչքարի նեղ քիվին և տակի գնդի նեղ շրջագծի վրա միայն ուռուցիկ է գրել. իսկ Գնդեվանքի խաչքարի վրա և՛ փորագիր, և՛ ուռուցիկ։

Գյոզալդարասի խաչքարի արձանագրության բովանդակությունից պարզվում է, որ Վարդանն այդ խաչքարը կանգնեցրել է իր ծնողների և քույրերի հիշատակին։ Հոր անունից առաջ երկու տառի տեղ ջարդվածք կա, որտեղ պետք է կամ ՏՐ=տէր և կամ ՀՐ=հայր բառերը լինեին, մեզ հավանական է թվում վերջինը։ Վարդանի հոր անունը Խաչատուր է, իսկ մորը՝ Ուլուխաթուն։

Քանի որ ծնողների հիշատակին կանգնեցրած է խաչքար Գյոզալդարասում՝ պարզ է, որ այդ է եղել և նրանց բնակավայրը և Վարդան կազմողի ծննդավայրը։ Այդ հանգամանքն իրավունք է տալիս մեզ նրա ծննդավայրում եղած անստորագիր խաչքարերի մեջ ևս Վարդանի ձեռակերտները որոնել։ Բացի դրանից կա նաև երկու հանգամանք, նախ՝ խաչքարերի քանդակների ոճական համեմատությունները և ապա Վարդան կազմողի կերտած այս երեք խաչքարերի վրա նշած թվականներից հնագույնը 1549-ն է և վերջինը՝ 1583, միջին ժամանակամիջոցը 34 տարի. պետք է ենթադրել, որ իր աշխատանքային գործունեության շրջանում նա որպես խաչքար արվեստագետ և՛ իր ծննդավայրում, և՛ հարևան՝ հուշարձաններով հարուստ գյուղերում ևս կերտել է խաչքարեր ու այլ կոթողներ, որոնց մի մասը հնարավոր է հայտնաբերել քանդակների ոճական առանձնահատկությունների հիման վրա։

Հավել. արձ. 61, 62։ Ալբոմ, նկ. 77, 78։

63. Մխիթար կազմող — Այս վարպետի ստորագրությամբ առայժմ մի խաչքար է հայտնի. այն տեղահան է եղել և այժմ դրված է Մարտունու շրջանի Զոլաղյուղ գյուղի եղբին գտնվող, Մարուց անապատ կոչվող եկեղեցու ներսում, հենած պատին։ Խաչքարի

[1] Բազմաթիվ հրատարակություններ ունեցած այս արձանագրության թիվը սխալմամբ միշտ ։ՋԼԲ։ է նշանակված։ Մենք ուղղում ենք տեղում կատարած մեր գծագրության հիման վրա։ Հրատարակությունների մատենագիտությունը տե՛ս արձանագրության տակ, Հավելվածում։

բիվը ջարդոտված է, հավանաբար հնում այդ ձևով հարմարեցրել են պատի մեջ դնելու համար. քիվին, շրջանակին և տակին մնացել է հետևյալ արձանագրությունը.

ԽԱՉՍ ՀԱՒՐՆ ԻՄ ՏՐ ԱՋԱՐԻՆ. Թվ. ։ՋՂԸ։ (1549) ԿՄԽԻ

Վերջին տառերը անկասկած պիտի վերծանել ԿԱՋՄՈՂ ՄԽԻԹԱՐ։ Մասրուց անապատը շինության արձանագրություն չունի, պատերին պահպանված ամենահին արձանագրությունը XIII դարից է։

Պարսպափակ բակի մեջ կան շատ խաչքարեր, որոնցից մի քանիսը ժամանակակից են Մխիթարի կազմածին, հավանաբար նրա գործերն են, բայց անստորագիր։

64. Անտոն Երեց կազմող — Շինել է մի խաչքար և մի տապանաքար Մարիանի պատվերով, նրա որդի դարբին Ալդունճանի գերեզմանի վրա դնելու համար։ Խաչքարը միջակ արվեստի գործ է, բայց տապանաքարը զարդարված է կենցաղային հետաքրքիր տեսարաններով, այսպես՝ նրա հարավային կողմին քանդակված է մեծ կարաս և զնդան, որի առաջ կանգնած է դարբինը. հյուսիսային կողմում գուսան՝ սազը ձեռքին նվագելիս և մատովակ՝ մի ձեռքին գինու գավ, մյուսին՝ գաթա. քանդակները բավական գեղեցիկ են և համաչափ։

Խաչքարի քիվին գրված է Ալդունի, հարավային կողին՝ կազմողի հիշատակագրությունը, իսկ տապանաքարի վրա գրված է պատվիրատու Ալդունի։ Շինված են........ 1550 թ.։

Գտնվում են Վեդիի շրջանի Ջինջիրլու գյուղի գերեզմանատան հյուսիսային մասում։

Հավել. արձ. 63

65. Սիմէոն կազմող —Այս նշանավոր վարպետից առայժմ միայն մի խաչքար է հայտնի, որը կանգնած է Նոր Բայազետի «Դարի գլուխ» գերեզմանատան մեջ ս. Ստեփանոս մատուռի հարավային պատի տակ, պատվանդանի վրա և ամբողջ է։

Այս շրջանի համար հազվագյուտ է կարմրավուն քարե խաչքարի նյութը. նույնպես հազվագյուտ են նրա վրա գործադրած վարպետի եռանդն ու արվեստը. ոչ միայն զարդաքանդակներն են բացառիկ նրբությամբ քանդակված, այլև խաչքարի վրա բազմաթիվ պատկերաքանդակներով և նրանց բովանդակությունը պարզող կարճ բացատրագիր-արձանագրություններով ավետարանական մի ամբողջ պատմություն է պատկերացված։ Գոգավոր լայն ճակատի կենտրոնում բազմած է ամենակալը, սրա տակ կիսաշրջան գլխով խորան է, որի խաչի վրա խաչված է Քրիստոսը, նրանից ներքև մի քառակուսի խորան, որի ներքևում կռացած Քրիստոսը աջ ձեռքով բարձրացնում է ընկած Ադամին, սրանից վերև Աստվածածինն ու Հովհաննես ավետարանիչը ծնկաչոք աղոթում են։ Խաչի դիմաց, այս խորանի ներքևի երկու կողմերին պատկերված են երկու վիշապ, բազմիցս ոլորապտույտ՝ գլուխները բարձրացրած նայում են ընկած Ադամին։ Այս բոլոր տեսարանները մանրատառ բացատրագրերով փորագրված են համապատասխան քանդակների կողքերին, ազատ տեղերում։ Խաչքարի լայն շրջանակները, պատկերաքանդակից ազատ ճակատի մասերը և կենտրոնական խորանի ամբողջ ազատ մակերեսը՝ ծածկված են բուսական ու երկրաչափական ամենանուրբ զարդերով, որոնք շրջապատում են կարկինային ձվաձև թևեր ունեցող խաչերը, յուրաքանչյուր շրջանակի վրա ութ հատ։

Պատվիրատուի հիշատակագրությունը քիվին է՝

Ս(ուր)բ խ(ա)չս բարէխ(ու)ս
Ովա(ն)էս իրիցին[1].

Կազմողի հիշատակագրությունը և թվականը գրված են խորանի երկու վերին կողմերին տեղավորված հատուկ շրջանակի մեջ, որոնք միաժամանակ ճակատը բաժանում են շրջանակներից.

Կազմող անարժան Սիմէոն, թվ. ։Ռ։.. 1551։

Այս նշանավոր վարպետի գրչության արվեստը ևս իր ժամանակի լավագույն նմուշներից է։ Համեստ արվեստագետ Սիմեոնի՝ իր համար գործածած «անարժան» մակդիրը արժանավորի փոփոխելը նրա արվեստը տեսնողի առաջին ցանկությունն է լինում։ (Ալբոմ, նկ. 79)։

---

1 Այս մասին գրող հեղինակները մեջ են բերել միայն արձանագրության վերին մասը, բաց թողնելով ներքևինը՝ կազմողի անունը։

Սմբատեան, Գեղարքունի, 57, Լալաեան, Ազգ. Հանդ., XVIII։

66. Քիրամ կազմող — Այս մեծատաղանդ կազմողը իր արվեստակիցների մեջ ամենաբախտավորն է։ Ոչ մի կազմողից այնքան շատ հուշարձաններ չեն պահպանվել, որքան Քիրամ կազմողից։ Այն բազմաթիվ չստորագրած հուշարձանները, որոնց մասին կխոսվի հետագա տողերում՝ անպայմանորեն Քիրամ կազմողի ձեռագործներն են։ Այժմ նրա ձեռագործը համարվող 50 հուշարձան գոյություն ունի։ Նրա կերտած հուշարձանները ոչ միայն թվով են գերազանցում բոլոր իր արվեստակիցներին, այլև Քիրամի գործունեության վայրերի աշխարհագրական տարածությունը գերազանցում է որևէ ուրիշ կազմողի գործունեության շառավիղին։ Արարատյան դաշտից սկսած մինչև Գեղարքունիքի բազմաթիվ գյուղեր և Ճամշադինի շրջանում սփռված են այս արդյունավետ կազմողի գործերը։

Մեծ քանակի և ընդարձակ տարածության հետ մեկտեղ Քիրամն իր արվեստով ամենաառաջնակարգ տեղն է գրավում իր արվեստակիցների մեջ։ Սակայն ամենից առաջ համառոտակի ծանոթանանք նրա կերտած հուշարձանների ցանկին և վայրին, ժամանակագրական կարգով։

Ա. Քիրամի ստորագրությունը կրող ամենավաղ հուշարձանը գտնվում է Մարտունու շրջանի Երանոս գյուղում։ Այստեղ գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու շրջափակված բակը ծածկված է խաչքարերով և տապանաքարերով. դրանց մեջ կա մի օրորոցաձև տապանաքար, որի հարավային կողմին կենցաղային տեսարան է քանդակված։ Նա մի մարդ է (հավանաբար կին), երկար շորերով և գտակով, աջ ձեռին հայելիանման մի իր, որի վրա հենց թվականն է գրված Թվ. ։Ռ։ 1551. ձախով մի այլ քառակուսի իր (երևի գիրք) բռնած. աջ կողքին՝ երկփեղկանի սրինգ, ձախում՝ դաթա և շամփուրով խորոված՝ դրված սինիի մեջ, ապա մի պատանի, աջ ձեռքով բռնած գինու մեծ գավ. այնուհետև թամբած և սանձած մի ձի։

Տապանաքարի արևելյան ճակատին գրված է արձանագրությունը, համաձայն որի Նախիխանը շինել է տվել տապանաքարը իր եղբայր Ակորի գերեզմանի վրա դնելու համար. վերջում ստորագրված է կրճատ՝ ՔՐԱՄ։

Սրանից ոչ հեռու գտնվում է մի օրորոցաձև փոքրիկ տապանաքար, որի հյուսիսային կողին քանդակված են երկու մարդ, կին և տղամարդ, տղամարդու աջ ձեռքը կրծքին է, ձախով բռնել է կլոր բլիթ, վրան հավիտենականության գծեր։ Կնոջ ձախ ձեռքը կրծքին է, աջով բռնել է գավ. գլուխը երկարակ շորով փաթաթված է և բերանը ծածկած, կողքին մկրատ, կոճակ և սանր։ Դիմացները սեղան է ուտելիքներով։ Հարավային երեսին՝ 6 խորան, մեջը խաչեր։

Համաձայն արձանագրության քարը շինել է տվել Կարախանը՝ Նազարի և Փարու համար։ Ո՛չ թվական և ո՛չ էլ կազմողի ստորագրություն կա, բայց քանդակների ու գրչության ոճը հաստատապես մատնացույց է անում Քիրամի արվեստը։

Բ. Քիրամի ստորագրությունը կրող երկրորդ հուշարձանը մի խաչքար է, որը գտնվում է Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղում, նրա հարավ-արևմուտքում, բլուրների վրա գտնվող գերեզմանատան մեջ։

Այստեղ մի ընդհանուր պատվանդանի վրա կանգնած են զույգ գեղաքանդակ խաչքարեր. հյուսիսայինը՝ Գրիգոր աղայի և հարավայինը՝ Խանում աղայի հիշատակին, շինված միևնույն ՌԼ=1581 թվականին. խաչքարերի դիմաց զույգ տափակ մեծ գերեզմանաքարեր կան. Գրիգոր աղայի տապանաքարի կենտրոնում բարձրաքանդակ մեծ գավազան է, նշան իշխանության։ Անկասկած է, որ խաչքարերն ու տապանաքարերը պատկանում են ամուսիններին, շինված են նույն թվականին և իրենց քանդակների նույնությամբ՝ մի վարպետի ձեռագործներ են։ Այս չորս հուշարձաններից միայն մեկի, Գրիգոր աղայի խաչքարի հյուսիսային կողին, վերից ներքև գրված է.

ԵՍ ՔԻՐԱՄՍ ԽԱՉՍ ԿԱԶՄԵՑԻ.

Բոլոր հուշարձանների այս խմբի չորս քարերն էլ անշուշտ Քիրամ կազմողի ձեռագործն են, կտեսնենք հետագայում էլ, որ ամենուր, երբ խմբական հուշարձաններ է կերտել Քիրամը, դրանցից հաճախ միայն մեկի վրա է ստորագրում և եզակի թիվ գործածում։

Գ. Ժամանակի տեսակետից Քիրամի գործունեության հաջորդ վայրը, Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղն է։ Այստեղ, մեծ ու նշանավոր այս գերեզմանատան հյուսիսա-

յին կողմում մի մեծ պատվանդանի վրա կանգնած են զույգ խաչքարեր, հարավայինն ավելի մեծ է՝ Մելիք Պեկի հիշատակին, իսկ հյուսիսայինը՝ Աղիբոլեկի, դրանցից միայն առաջինի վրա է Քիրամն իր ստորագրությունը գրել և թվագրել՝ 1582. երկրորդի վրա թվագրություն չկա: Խաչքարերի տերերը հայր ու որդի՝ կամ երկու եղբայրներ են: Հուշարձաններն անշուշտ միաժամանակ են շինվել, քանի որ միևնույն պատվանդանի վրա են կանգնած. կազմողի ստորագրությունը երկուսին է վերաբերում, հավանաբար նույնպես թվականը: Արձանագրությունների գրչության և քանդակների ոճը միևնույն ձեռքի գործեր են:

Դ. Կրկին Նորադուզի նույն գերեզմանատան մեջ, նախորդներից ոչ շատ հեռու կանգնած է մեծ ու բարձր պատվանդան, վրան զույգ խաչքար, որոնցից մեկը նվիրված է Խանում աղի հիշատակին և մյուսը՝ Գոշկադեկի:

Նախորդների ոճով թվագրված և Քիրամի կողմից ստորագրված է միայն մեկը. Խանում աղի համար կանգնեցրածը շինված է 1582 թ.: Այս զույգ խաչքարը կանգնած ամուսինների հիշատակին՝ շատ ինքնատիպ են: Խանում աղի խաչքարի ճակատին քանդակված է ննջեցյալ, պառկած վիճակում և կողքերից յուրաքանչյուրում երեքական սգվոր կանայք, իսկ Գոշկադեկի հիշատակին կանգնածի ճակատին սրբապատկեր է քանդակված, նստած վիճակում, ձախ ձեռքը կրծքին, աջը՝ վեր բարձրացրած, որի տակ եղան գլուխ, վրան կանգնած մարդ. աջ կողմում նույնպես եղան գլուխ՝ վրան թռչուն. խաչի թևերի տակ երկու մարդ:

Ե. Քիրամի գործունեության հաջորդ կարճատև շրջանը դուրս է Գեղարքունիքի սահմաններից: 1591 թ. նրա կերտած հուշարձանը գտնվում է Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում: Այդտեղ եռահարկ ս. Աստվածածին եկեղեցու կիսավեր գավթի հարավային պատին հենած, դրսից, կանգնած է սև տուֆաքարից կերտված մի խաչքար. քիվը հետագայում հարթվել է (երևի պատի մեջ ագուցվելու ժամանակ), սրանկյուն և ցածրիկ խորանի մեջ խաչ. կողքերին բարձրադիր շրջանակներ նուրբ քանդակներով, որոնց վրա, յուրաքանչյուր կողմում 3-ական ութթևանի գեղեցիկ աստղեր: Ճակատի կենտրոնում փոքր խաչ, որի կողքերին մանր գծերով հյուսվածքազարդեր: Կենտրոնական խորանի վերին ձախ կողմում շրջանակի մեջ, ուռուցիկ տառերով գրված է՝ ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ, իսկ աջ կողմի շրջանակի վրա փորագրված է՝ ԱԲԻՆ: Խաչի ներքև, գեղաքանդակ գնդի վերին կողմերին թիվն է՝ 1591:

Ուշադրության արժանի է այստեղ այն հանգամանքը, որ հակառակ սովորականին, երբ, ինչպես Քիրամը, նույնպես և ուրիշ կազմողներ խաչքարի միջին մասում արձանագրության համար պատրաստված ուղղահայաց շրջանակի վրա գրում են միատեսակ, ուռուցիկ կամ փորագիր տառերով, այս դեպքում նույն տեղում գրված է խառն գրչությամբ, ուռուցիկ և փորագիր, ըստ որում միայն կազմողի հիշատակագրությունն է ուռուցիկ, իսկ հաջորդ Աբին[1] բառը, որն անշուշտ խաչքարի տիրոջ անունն է՝ փորագիր: Այս հազվագյուտ դեպքը, մեզ թվում է, արժանի է հատուկ ուշադրության: Այն պետք է բացատրել, ըստ երևույթին, հետևյալ կերպ. Քիրամ կազմողը ոչ միայն պատվերներով է հուշարձաններ կերտել, այլև, պատահական գնորդի համար. այս վերջին դեպքում պատրաստում և իր ստորագրությունն էր վրան դնելով՝ ազատ տեղ է թողնում գնորդի անվան համար: Ներկա դեպքում գործարքը կատարվել է այնպիսի պայմաններում, որ ժամանակ չի եղել գնող Աբիի անունը ուռուցիկ տառերով գրել, որը երկար ժամանակ կպահանջեր. նա շտապ կերպով միայն փորագրել է:

Զ. Դեպի Արարատյան դաշտ կատարած այս առաջին ճամփորդությունից հետո, Քիրամ կազմողը նորից վերադարձել է Գեղարքունիք: 1593 թվականը կրող նրա կերտած հուշարձաններին հանդիպում ենք մի քանի գյուղերում: Դրանցից առաջինը Մարտունու շրջանի, մեզ արդեն ծանոթ Երանոս գյուղն է, որտեղ իր առաջին ձեռագործը պարունակող գերեզմանատան մեջ, այս անգամ արդեն երկու գերեզմանաքար է շինել, սակայն միայն մեկի վրա ստորագրել:

Առաջինը մի գեղեցիկ օրորոցաձև տապանաքար է, որի հյուսիսային կողին քան-

[1] Աբին անունը՝ Աբիանդամ անվան փաղաքշական ձևն է. տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, 19:

դակված է ընդարձակ կենցաղային տեսարան՝ նետ, աղեղ և կապարճ լիքը նշաքներով, մի մարդ, ձախ ձեռին դաթա բռնած և առաջը խնջույքի սեղանը բազմազան ուտելիքներով, գինու մեծ գավ, ապա գործիքներ՝ կացին, ուրագ, դանակ, սղոց. ամենահաբավային ծայրին գուբան՝ լծված զույգ եզներով՝ առանց մաճկալի՝ միայն մարակ։ Այս տեսարանի շուրջը երեք կողմից շրջանակ է, որտեղ գրված է պատվիրատու Ջիլավ խանի հիշատակագրությունը և Քիրամի ստորագրությունը։ Շինված է... 1593 թվականին։

Բացի սրանցից նույն գերեզմանատան մեջ կա մի փոքր օրորոցաձև տապանաքար կա, անպայման Քիրամի շինածը, թեև անթվական և անստորագիր։ Հյուսիսային կողմին քանդակված են մի կին և մի տղամարդ, մեկի ձեռքին գինու գավ, մյուսի ձեռքին գաթա, դիմացներին ուտելիքներով լիքը սեղան. եզրին՝ աղեղ, մկրատ և կոճակ. արևելյան եզրին գրված է արձանագրությունը, ըստ որի տապանաքարը շինել է տվել Կարայխանը՝ Նազարի և Փարու գերեզմանի վրա դնելու համար։

է. Այդ նույն՝ 1593 թ. Քիրամի ստեղծագործության հետքը կա նաև, կրկին Նորադուզում, նույն մեծ գերեզմանատան մեջ. դա մի մեծ օրորոցաձև տապանաքար է, որի հյուսիսային երեսին պատկերված է կենցաղային տեսարան, իսկ հարավում.կան չորս խորաններ, որոնց վերևում գտնվող կամարների միացման անկյուններում արտաքուստ, մեջընդմեջ գրված է Քիրամ կազմող և թվականը . . . . 1593 թ.։

Այս տապանաքարի վրա պատվիրատուի անուն չկա. կենցաղային տեսարանի շուրջը քանդակված շրջանակի վրա կա միայն՝ Սուրբ խաչս բարեխաւս՝ բառերը, մնացած տեղն ազատ է։ Կարծում ենք, որ սա ևս Քիրամի կերտած այն գործերից է, որոնք շինվել են վաճառելու համար, սակայն վաճառվելուց հետո որևէ պատճառով արձանագրության մեջ տիրոջ անունը մնացել է չգրված։

Ը. Գործունյա Քիրամը այդ նույն՝ 1593 թ. աշխատել է նաև Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղի մոտ, այժմ ավերակ, Իշխանագյուղում։ Քիրամի շինածն այստեղ մի փոքրիկ օրորոցաձև գերեզմանաքար է, որի վրա քանդակված է մի մարդ, թախտի վրա նստած, մոտը մուրճ, գավ և հաց. արձանագրված է, որ Մկրտիչինն է սուրբ խաչը և թիվը . . . . 1593 թ.։

Թ. Մեկ տարվա անհայտությունից հետո, Քիրամի ստորագրությամբ խաչքարեր հանդիպում են կրկին Նոր Բայազետում։ Դրանցից առաջինը գտնվում է քաղաքից դուրս դեպի Արծվաքար (Ղշլաղ) տանող ճանապարհի կողքին գտնվող ս. Հովհաննես կիսաժայռափոր մատուռի մեջ, բոլորովին ծածկված վառվող մոմերի մնացորդներով։ Շինված է այն Ծատուրի հիշատակին՝ 1595 թվականին։ Մեկ տարի հետո, Նոր Բայազետի «Ծարի գլուխ» գերեզմանատան մեջ Քիրամը կազմում է իր ստեղծագործության գլուխ գործոցները հանդիսացող երկու խաչքար, մեկը կանգնեցրած Հախնազար աղայի հիշատակին, ստորագրված և թվագրված՝ ...1596, մյուսը՝ պարոն Շահնազարի հիշատակին՝ անստորագիր և անթվական։

Այս երկու խաչքարն էլ պատվանդանից ընկած են, որը երկու դատարկ փոսով մի մեծ քարից է և կանգնած իր տեղում։ Երկու խաչքարի վրա էլ արձանագրությունները գրված են ուռուցիկ տառերով, նույնպես թվականն ու ստորագրությունը։ Այս երկու խաչքարը իրենց խնամքոտ մշակումով, քանդակների ճոխությամբ ու նրբությամբ ամենակատարյալն են Քիրամի մի քանի տասնյակ ստեղծագործությունների մեջ։ Դրանք Քիրամի արվեստի ամենահասուն շրջանի ստեղծագործության կոթողներն են։ Դրանցից Հախնազար աղայի համար կանգնեցրածը մեջտեղից կոտրված է երկու մասի. կոտրված գիծն անցել է Քիրամի անվան առաջին երկու տառերի վրայով և նրանք ջարդված են, բայց հենց այդ վիճակում, այդ կոտրված խաչքարը թանգարանի լավագույն զարդ կարող է լինել[1]։

Ժ. Հաջորդ, 1597 թ., Քիրամն աշխատել է կրկին Նորադուզ գյուղում։ Այստեղ, մեծ գերեզմանատան հյուսիս-արևմտյան մասում երեք երկար և ցածր, սրբատաշ քարեր, իրար միացնելով կազմել են մի երկար պատվանդան, որի վրա կանգնած են եղել ութ ու մեծ

---

[1] Այս խաչքարն այժմ տեղափոխված է Երևան և պահվում է Մատենադարանում. տեղից շարժելիս պարզվել է, որ նրա թիկունքին ևս արձանագրություն կա, ուր հաղորդվում է, որ 1581 թ. Գավառը (Կամո քաղաք) ավերվել էր և 1591 թ. Հախնազարը նկել վերաշինել է այն։

խաչքար. դրանցից հյուսիսային երկուսը պատվանդանի հետ միասին շուռ են եկել և ընկած են տեղում, մեջքի վրա. մեկն էլ առանձին է ընկած, իսկ մյուսները չկան։ Տեղում պահպանված այս երեք խաչքարից միայն մեկի, Վարդանի հիշատակին կանգնեցրածի վրա կա թվականը և Քիրամի ստորագրությունը, որն է՝ 1597 թ., մյուսները՝ շինված Գիրակոսի և Մելիքբեկի հիշատակին՝ ստորագրություն և թվական չունեն։ Դատելով պատվանդանների միասին շինված լինելու հանգամանքից և մնացած երեք խաչքարի միատեսակ և փոքր լինելու ոճից, հավաստի կարելի է ասել, որ այդ ութ խաչքարն էլ, կանգնած մի տոհմի գերեզմանների վրա, Քիրամի ձեռագործներն են եղել։

ԺԱ. Նույն թվականին, Նորադուզի նույն գերեզմանատան մեջ Քիրամը կերտել է վեց խաչքար նույն ընտանիքի համար, որոնցից երեքը իրենց ձևով, իսկ մնացածներն իրենց քանդակների ոճով խիստ տարբերվում են Քիրամի արվեստի այլ հուշարձաններից։ Խաչքարերի այս խումբը գտնվում է գերեզմանատան հյուսիսային մասում։ Երեք մեծ քարաբեկորներ իրար ագուցելով և միացնելով կազմված է մի ընդհանուր և երկար պատվանդան, որոնց վրա կանգնեցված են վեց խաչքար։ Այդ խաչքարերի քանդակները երկրաչափական են և խոշոր գծերով կատարված, իսկ մեջտեղի երեքը քիվից վերև ունեն սրանկյուն բարձրություններ (երկուսի ծայրերը ուղիղ գծով հատած)։ Եթե հուշարձանների այս խմբի վրա Քիրամի ստորագրությունը պահպանված չլիներ, հեշտությամբ կարելի էր սխալվել և նրա ձեռագործը չհամարել։

Համաձայն քիվերին եղած արձանագրությունների, սրանք շինված են՝ (հարավից սկսած) Գուլքանի, Սոլթանգուլի, ...Ղուլու, Ղազարի, Շահնիկարի և Դովլաթ խանումի համար։ Ըստ իր սովորության Քիրամն այս խմբից միայն մեկ խաչքարի վրա է իր ստորագրությունը դրել և թվագրել. դա Ղազարի համար կանգնեցրածն է, որի սրանկյան մասի և քիվի վրա երկու տողով գրված է՝

ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ ԹՎ. :ՌԽԶ։
ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ(ԽՍ) ՂԱԶԱՐԻՆ.

ԺԲ. Այս անհանգիստ արվեստագետին հանդիպում ենք Կոտայքի Արզնի գյուղում։ Այստեղ նրա ձեռագործ երկու խաչքարը, որոնց նախնական տեղն անհայտ է, նորոգումների ընթացքում ագուցվել են եկեղեցու պատերի մեջ։ Տեղադրման ժամանակ տաշվել են քիվերը և վնասվել քանդակները, դրանցից մեկի վրա մնացել է Քիրամի անունը լրիվ՝ գրված խորանի վերին մասի աջ և ձախ կողմերին, և թվականը, որի միավորի ներքևի մասը նույնպես փչացված է, բայց մնացած մասը կարող է Բ, կամ Ը լինել. մենք պայմանականորեն դնում ենք Ը. մնացած արձանագրությունը հետևյալն է՝

Քիրամ կազմող թվ. :ՌԽԸ:

Երկրորդ խաչքարն ավելի է վնասված և Քիրամի անունն էլ ջարդոտված է. մնում է միայն թիվը՝ :ՌԻԶ: (1577)։ Ինչպես խաչքարի մնացած բեկորի ոճը, նույնպես և ուռուցիկ տառերով գրված արձանագրության մնացորդները ոչ մի կասկած չեն հարուցում այս երկրորդ խաչքարը Քիրամի ձեռագործ լինելու մասին։ Հետևաբար ստացվում է, որ նա երկու անգամ է աշխատել Արզնիում, առաջին անգամն իր գործունեության վաղ շրջանում և երկրորդ անգամ՝ ուշ[1]։

ԺԳ. Քիրամի կազմած հաջորդ խաչքարերի խումբը կրկին Նորադուզի նույն գերեզմանատան մեջ է. նախորդներից ոչ հեռու երեք կոպտ մեծ քար իրար ագուցելով՝ շինված է երկար պատվանդան, որի վրա կանգնած են հինգ միջին մեծության խաչքար։ Միաժամանակ շինված այս հուշարձաններից Քիրամը միայն մեկի վրա է ստորագրել. դա Ատիպեկի հիշատակին կանգնեցրածն է, որը թվագրված է 1599 թ. մյուսները կանգնեցված են նույն տոհմի այլ անդամների հիշատակին. Նազլու խանին՝ 1599 թ., Մելիք պեկին՝ անթվական. Ստեփաննոս քահանային՝ անթվական, Վարդանին՝ 1601 թվականին։

Այս խաչքարերը շինված են միատեսակ կապտավուն քարից, նույն մանրաքանդակ ոճով։

ԺԴ. 1599 թ. Քիրամ կազմողը երկրորդ անգամ է եկել Արարատյան դաշտ։ Այս անգամ նրա կերտած զույգ խաչքարերը գտնվում

---

[1] Այս խաչքարն անձամբ չենք տեսել, տեղեկությունները հաղորդեց Գ. Կարախանյանը. պետք է ենթադրել, որ երկրորդ հուշարձանի թիվը՝ :ՌԻԶ: կասկածելի է։

են էջմիածնում, ագուցված Գայանեի վանքի արևմուտքից շինված սրահի հարավային պատի մեջ՝ ներքուստ:

Ինչպես հայտնի է, այդ վանքի հիմնական նորոգումները և դրան զուգընթաց այս սրահի շինությունը տեղի է ունեցել 1688 թ., Եղիազար կաթողիկոսի ջանքերով: Սրահի ներսը ձևավորելու համար օգտագործել են հին խաչքարեր, թվով չորսը, որոնցից երկուսը ագուցված են հյուսիսային պատի մեջ և ինչպես Սարգիս կազմող բաժնում տեսանք, դրանք ավելի հին են, դրանցից մեկը, որի կազմողը Սարգիսն է՝ թվագրված է ՉԵ=1256 թ.: Հարավային պատի ձևավորման համար օգտագործվել են արվեստով և չափերով իրար նման մի զույգ այլ խաչքարեր, որոնք կերտել է Քիրամ կազմողը: Դրանցից արևմտյանի քիվին և խորանի վերին երկու կողմերի հորիզոնական շրջանակների մեջ տեղավորված արձանագրության համեմատ, խաչքարը շինված է ի բարեխոսություն Ավագ խաթունին, 1599 թվականին՝ Քիրամի ձեռքով, իսկ արևելյանի քիվին գրված մեկ տողանի արձանագրության համաձայն՝ ի բարեխոսություն Մարգարին: Ամենայն հավանականությամբ, այս խաչքարերը շինված են նույն թվականին, զույգ ամուսինների համար: Խաչքարերի նախնական տեղն անհայտ է, բայց անշուշտ, Գայանեի վանքի մոտակայքում պետք է կանգնած լինեին, որովհետև նրանք, իրենց առաջ եկած քիվերի առկայությամբ բնորոշ են առանձնակի կանգնած խաչքարերի տիպին:

ԺԵ. Ինչպես նախորդ, նույնպես և այս անգամ Քիրամ կազմողը երկար չի մնացել Արարատյան դաշտում: Հավանաբար նրա ծննդավայրը Գեղարքունիքն է, որտեղ և նրա բնտանիքն է ու հիմնական բնակավայրը: 1599 թ. հետո կերտած նրա հուշարձանները հանդիպում են միայն Գեղարքունիքի գյուղերում: Այսպես՝ 1600 թ. կրող մի գերեզմանաքար գտնվում է Նոր Բայազետին մոտիկ Բատիկյան (Քյոսամահմադ) գյուղի եկեղեցու բակի արևելյան մասում՝ դրված Թումայի գերեզմանի վրա, և ստորագրված է Քիրամի կողմից:

ԺԶ. Նույն թվականին Քիրամի կազմած հուշարձանը նորից հանդես է գալիս Նորադուզում, իր ամենաբեղմնավոր գործունեության վայրում: Դա միջակ մեծության խաչքար է, նուրբ գծերով և գեղաքանդակ, կանգնած Ուլուխանի հիշատակին, ստորագրված և թվագրված՝ 1600:

ԺԷ. Ինչպես երևում է, այս անգամ Քիրամը երկար ժամանակով է մնացել Նորադուզում: Վերևում տեսանք, որ նա այստեղ խաչքարերի մի խումբ է շինել Առիպեկենց համար 1601 թ., իսկ 1602 թ. նա մի մեծ խումբ խաչքարեր է կազմել Սարգիսենց տոհմի համար: Նույն մեծ գերեզմանատան մեջ, չորս երկար քարերով նա շինել է մի ընդհանուր պատվանդան, որի վրա կանգնած են եղել վեց միջակ մեծության խաչքարեր, այժմ դրանցից չորսը իրենց տեղումն են, մեկն ընկած է պատվանդանի դիմաց, իսկ վեցերորդը կոտրած է: Ըստ իր սովորության այդ խմբից միայն մեկի վրա է Քիրամն իր ստորագրությունն ու թվականը նշել. մնացածների քիվերին միայն ննջեցյալների անունների պարզ հիշատակություններն են գրված. Քիրամի ստորագրությունն ու թվականը պարունակողը հետևյալն է.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՍԱՐԳԻՍԻՆ.
ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. Թվ.: ՌԾԱ: (1602):

Մնացածների վրա մեկական տող, որոնց մեջ հիշատակված են ԽՕՆՋԱՐ, ԳԱԵՀԻ, ԳՐԻԳՈՐ անունները և մեկի էլ անունը բոլորովին ջարդված:

ԺԸ. Քիրամի աշխատանքային հաջորդ վայրը Կարմիր (Ղուլալի) գյուղն է, Նոր Բայազետի հարավում, երեք կիլոմետր նրանից հեռու:

Այստեղ, գյուղի հարավային բլրի գերեզմանատան մեջ, պատվանդանից ընկած մի գեղաքանդակ խաչքար կա, որի քիվի արձանագրությունից պարզվում է, որ այն կանգնեցրած է ի հիշատակ Ուղուրին, իսկ խաչի խորանի վերին երկու կողմերին, հատուկ շրջանակի մեջ Քիրամի ստորագրությունն է և թվականը 1602:

ԺԹ. 1602 թ. Քիրամը կրկին մեկնել է Արարատյան դաշտ: Այս անգամ նրա աշխատանքի վայրը Աշտարակ գյուղն է. գյուղի հյուսիսային եզրին գտնվում է ընդարձակ գերեզմանատունը, որի հյուսիս-արևմտյան մասում ճարտարապետորեն ձևավորված մի եռաստիճան մեծ պատվանդանի վրա, իրար կից կանգնած են երեք խաչքար՝ մուգ դեղնավուն քարից: Երեքն էլ ունեն նեղ քիվեր՝ վր-

րան արձանագրություն, լայն ճակատներ, որոնց բոլորի կենտրոններում խաչեր, հյուսիսային կողմի շրջանակները զարդարված են երկատերևով, սիմետրիկ կերպով: Վերևի մասում կան վրադիր խաչեր, ապա՝ 4-ական ութ թևանի աստղեր, ներքևում՝ կրկին խաչեր: Կենտրոնական խաչը գտնվում է խորանի մեջ, ներքևում գեղեցիկ գունդ է. խորանի վերին մասի կողերին ռելեֆ տառերով գըրված է

Քիրամ կազմող

իսկ ներ քիվին նույնպես ռելեֆ տառերով՝ 2 տող.

ՍԲ ԽԱՉ ԲԱՐԷԽԱՒՍ Է. ԿԱՐԱՊԵՏ ԱՂԻՆ.

Միջին խաչքարի շրջանակները զարդարված են երկրաչափական զարդերով, իսկ տակին կան չորս խորաններ՝ միջին խաչեր: Կենտրոնական խաչը տեղավորված է քառանկյան շրջանակի մեջ. քիվին փորագրըված է

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ(ԻՍ) ՎԻՐ(Ա)ՊԻՆ, ՄԸԿԸՐՏՉԻՆ.

Հարավային շրջանակները վերին մասըում պատած են երկրաչափական զարդերով, տակերին մեկական խաչեր, ներքևը լայն տարածություն: Կենտրոնական խաչը փորված է խորանի մեջ, որի կորությունից դուրս, անկյուններում ռելեֆ տառերով գըրված է թվականը. Թվ. ․ՌԾԱ․ (1602), իսկ քիվին՝

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽ(Ա)ԻՍ ԳՈՒԼՓ(Ա)Շ(Ի)Ն, ՇԱՀՐԻՆ (նույնպես ռելեֆ տառերով)

Հուշարձանների այս խումբը, անկասկած, միևնույն գերդաստանի անդամների վրա է միևնույն ժամանակ Քիրամի կանգնած և շինված միաժամանակ Քիրամի ձեռքով:

Ի. Մատենադարանի բակի կամարակապ սրահներում ներկայումս դրված է Քիրամի ստեղծագործության մի նմուշ, որի նախնական տեղն անհայտ է: Խաչքարը տարիներ առաջ գտնվելիս է եղել գեղարվեստական ինստիտուտում, հետագայում հանձնվել է ժողովրդական ստեղծագործության տանը, ապա՝ Մատենադարանին:

Քիրամի արվեստի սովորական նմուշներից է այն, ներ քիվին գրված է. ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԱՐԻԱՆԻՆ—իսկ սրանկյուն խորանի երկու կողմի հարթությունների վրա վարպետի ստորագրությունն է ու թվականը

ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ
Թվ. ․ՌԾԳ․ (1604):

ԻԱ. Նոր Բայազետից երեք կիլոմետր հարավ գտնվում է Արծվաքար (Դշլաղ) գյուղը: Գյուղից 3—4 կիլոմետր հեռու լճափին, բարձրադիր դոդավորության վրա սփռված են գյուղատեղու ավերակներ, որոնց մեջ մեկ սրբատաշ կանգուն եկեղեցի կա[1] և մեկ ավերակ՝ շրջապատված գերեզմանատներով, իսկ գյուղատեղու արևելքում՝ գերեզմանատուն: Այստեղ ընկած է երկու մասի բաժանված մի խաչքար, որն ուրույն տեղ է գրավում Քիրամի արվեստի մեջ: Խաչերի երեսին, իրար կողքի, հավասար մեծությամբ ոչ թե մեկ, այլ երկու խորան է քանդակված: Խորանները կազմված են սյուներով, որոնք վերջանում են խոյակներով և վերջիններիս վրա՝ ճարտարապետորեն ձևավորված՝ հանդչող կամարներով: Երկու խորաններն իրարից բաժանող զույգ սյուներով կազմված շրջանակի վրա՝ վերից վար՝ գտնվում է Քիրամի ստորագրությունը: Արձանագրությունից պարզվում է, որ այն կանգնեցված է Վարդումի, Մարիամի և մեկ ուրիշի (անունը մնացած) հիշատակին: Շինված է.......1605 թ.:

ԻԲ. Այս թափառումներից հետո Քիրամի գործերին հանդիպում ենք կրկին Նորադուզ գյուղում: Մեծ եկեղեցու հարավում հետագայում շինված փոքրիկ գավթի արևելյան պատի հարավային անկյունում, արտաքուստ ագուցված է մի խաչքարի բեկոր: Նրա վերին մասի վրա մնացել է Քիրամի ստորագրությունը և թվականը՝ 1606:

ԻԳ. Քիրամի կողմից չթվագրված մի խաչքար գտնվում է նույն Նորադուզի մեծ գերեզմանատան մեջ, հյուսիսային կողմի մատուռի ետևում: Այն ընկած է պատվանդանից և օգտագործվել է ուրիշ գերեզմանի վրա: Դա մի փոքրիկ խաչքար է՝ կանգնեցված Հակոբ եպիսկոպոսի հիշատակին:

ԻԴ. Անթվական մի խաչքար էլ՝ Քիրամի ստորագրությամբ՝ ագուցված է Նոր Բայազետի ս. Կարապետ եկեղեցու պարսպի մեջ.

[1] Եկեղեցու արևելյան պատի 1231 թ. արձանագրության մեջ վայրը կոչվել է Ագարակ. այժմ այդ վայրը կոչվում է «Դոլակներ»:

մուտքից արևելք, դա մի փոքրիկ աշխատանք է՝ շինված Բաբեքի հիշատակին։

ԻՆ. Այս անհանգիստ արվեստագետի հաջորդ ստեղծագործությունները երևան են գալիս արդեն բոլորովին նոր միջավայրում՝ Շամշադինի շրջանի Բերդ գյուղի մոտ։ Այդ գյուղի մոտ է գտնվում «ս. Սարգսի խաչ» կոչվող գերեզմանատունը, ուր իրար կից կանգնած են հինգ խաչքար, որոնց ստորին մասերը ծածկված են թփերով և խոտով։ Դրանք շինված են մի գերդաստանի համար և միաժամանակ Քիրամի արվեստի ամենաբնորոշ օրինակներից են. նեղ քիվեր, լայն ճակատներ, շրջանակների երկրաչափական և նուրբ քանդակներ, խորանների ու քառակուսիների մեջ կենտրոնական խաչերով։ Խաչքարերը շինված են տեղական դեղնավուն փափուկ քարից, տեղացիների ասելով, «գոգյանի քարից», որի հանքերը գտնվում են Թովուզի շրջանի Նաջարլու գյուղի մոտ, Բերդից մոտ 10 կիլոմետր հեռու։ Բոլոր խաչքարերի քիվերի վրա երևում են արձանագրություններ՝ մամռակալած և ջարդոտված։ Մեր տեղեկատուն կարողացել է վերծանել միայն մեկի, բարեբախտաբար Քիրամի անունը և թվական ունեցող խաչքարի արձանագրությունները, դա շարքի ամենահարավայինն է, որի քիվին գրված է.

ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍԷ ԱԼԻԽԱՆԻՆ...

Կենտրոնական խորանի վերին մասի կողքերի երկու շրջանակներին գրված է.

ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. ԹՎ. ։ՌԾԹ։ (1610)

Այս հուշարձանների խումբը, ըստ մեր ունեցած նյութերի, ամենավերջինն է, որոնք թվագրված են. առաջին թվականը Երանոսում՝ 1551, և վերջինը Բերդ գյուղում՝ 1610 թ., այսինքն 60 տարվա եռանդուն գործունեության մի բեղմնավոր շրջան։

Քսանչորս ստորագրված և դրանից էլ ավելի չստորագրված, բայց անկասկած Քիրամի ստեղծագործությունների այս թվով չի սպառվում այս զարմանալի գործունյա արվեստագետի աշխատությունների ցանկը. Այն բոլոր վայրերում, ուր կան նրա աշխատությունները, և հատկապես Նորագուղում և Նոր Բայազետում մենք կարող էինք մատնացույց անել ևս մի երկու տասնյակ հուշարձաններ, որոնց և՛ քանդակների, և՛ արձանագրությունների դրոշմը կրում է Քիրամի արվեստի հետքերը, բայց գերադասում ենք այն թողնել հետագա արվեստաբաններին, որ պետք է զբաղվի Քիրամի արվեստի ուսումնասիրությամբ, իսկ Քիրամի արվեստն իր քանակով և որակով միանգամայն արժանի է նման ուսումնասիրության։

Քիրամ կազմողի արվեստի առանձնահատկությունները լրիվ պարզել հնարավոր է միայն արվեստագիտական վերլուծությունների ճանապարհով. սակայն անհրաժեշտ ենք համարում անել մի քանի ընդհանուր դիտողություններ։

1. Քիրամն այնքան բազմազան ձևեր ու մոտիվներ է գործածել իր կերտած հուշարձանների վրա, որոնք կանգնած են կողքկողքի և նույն տարվա ընթացքում շինված, որ եթե նրա ստորագրությունը դրոշմված չլիներ հուշարձանի վրա, դժվար կլիներ այն Քիրամի ձեռքի գործը համարել։ Այս զարմանալի վարպետը հետևել և օգտագործել է ոչ միայն իր ժամանակի, XVI դարի վերջերում տարածված քանդակների մոտիվներն ու կատարման ձևերը, այլև XII—XIII դարերինը։ Նորագյուղի գերեզմանատան յուրաքանչյուր տոհմական գերեզմանոցների վրա կանգնած 4—5 խաչքարերը երբեմն այնքան տարբեր են, կարծես թե տարբեր դարերի գործեր լինեն, միայն Քիրամի անվան հիշատակությունն ու թվականներն են համոզում, որ նրանք նույն ժամանակի և նույն վարպետի ստեղծագործություններ են։

2. Չնայած վերոհիշյալ ակնառու տարբերությանը, Քիրամի արվեստը իր դարի հարազատ ծնունդն է, նրա կերտած հուշարձանների մեծագույն մասը բարակ ու նուրբ գծերով քանդակված հյուսվածքազարդերն են, երկրաչափական էլեմենտը գերազանցում է, բուսականը՝ այնպես է ոճավորված, որ հազիվ է նշմարվում նրանց բնական ձևը։

3. Խաչի համար կամարը կամ սրանկյան խորանը գրեթե անբաժանելի մասն է Քիրամի խաչքարերի, նույնը և խաչի տակի գունդը, այս վարպետի ամենասիրած մասն է, որը և, կարծես, հատուկ սիրով և խնամքով է զարդարում։

[1] Այս հուշարձանների մասին տեղեկությունները, լուսանկարը և արձանագրությունների գծանկարները ստացել ենք ազգագրագետ Գ. Վարդումյանից, որին և հայտնում ենք շնորհակալություն. Ս. Բ.։

4. Խաչքարերի ճակատներին և գերեզմանաքարերի վրա Քիրամը հաճախ սրբապատկերներ և կենդանային պատկերներ է քանդակում։ Սրբապատկերներն ավելի հաջողված են, որովհետև դարերի ընթացքում ինչպես ըմբռնման, նույնպես և կատարման կանոնական սկզբունքներ էին մշակվել, իսկ կենդանային թեմաները նորություն էին և ամենից ավելի XVI դարում կիրառվող, հետևաբար թույլ զարգացած և Քիրամն այդ բնագավառում առանձին առավելության չի հասել։

5. Հուշարձանների արձանագրություններից երևում է, որ Քիրամը մեծ գրագիտությամբ չի փայլել։ Նրա գրչության արվեստը միապաղաղ է. տառերը միշտ անկյունավոր են, նեղ ու երկար, հատկապես Ք տառի վերին կլորությունը միշտ անկյունավոր և բերանը բաց, յ-ի նման։ Քիրամի գրչության ոճի լավագույն միջոցն է նրա չստորագրած հուշարձանները հայտնաբերելու համար։

6. Եթե Գեղարքունիքում Մելիսեթ կազմողը հիմնադիրն էր XVI դարի մանրաքանդակ ոճի, ապա վստահությամբ կարելի է ասել, որ նույն վայրում Քիրամը այդ ոճը կատարելության հասցրեց և դարձավ նրա գագաթը։

Քիրամի երկարատև ու արդյունավետ կյանքի և կերտած հուշարձանների վրա երևան եկող առանձնահատկությունների միջոցով հնարավոր է պարզաբանել միջնադարյան կազմող վարպետների կյանքի և աշխատանքի որոշ առանձնահատկություններ։

1. Միջնադարյան մասնագետ վարպետարվեստագետները ստիպված էին աշխատանք գտնելու համար թափառական կյանք վարել։ Հավանաբար ծագումով գեղարքունիքցի է Քիրամը, որը մի գյուղի սահմաններում չէր կարող մշտական աշխատանք գտնել, դրա համար էլ նա բազմաթիվ գյուղերում է աշխատել, հասել է մինչև Եղվարդ և Էջմիածին։ Բացի վերոհիշյալ պատճառից նրա շրջիկ կյանքին անշուշտ նպաստած կլիներ և նշանավոր վարպետի նրա համբավը։

2. Քիրամի կերտած հուշարձաններից մի քանիսի առանձնահատկությունները մատնացույց են անում, որ Քիրամն ամեն դեպքում միայն պատվերով չի աշխատել, այլև հուշարձաններ է պատրաստել վաճառելու համար։ Եթե սրան ավելացնենք և նրա ստորագրությունները կրող հուշարձանների անօրինակ մեծ թիվը, պիտի ենթադրենք, որ նա ունեցել է մեկից ավելի աշակերտներ։ Այն հանգամանքը, որ նրա կերտած հուշարձանների վրա միայն իր անվան հիշատակությունները կան, հնարավոր է բացատրել նրանով, որ նա շատ մեծ անուն է ունեցել, որը և խանգարել է նրա օգնական-աշակերտների անունների հիշատակությանը։ Սակայն Քիրամի կերտած հուշարձանների թե՛ քանդակազարդ մասերի և թե՛ արձանագրությունների գրչության մեջ հաճախ զգացվում է այլ ձեռքի ներկայությունը։

Համեմ. աղ. 64—83։ Ալբոմ, նկ. 80, 81, 82, 83, 84, 85, 86։

67. Անդոն էրէց գծող.—Բասարգեչարի շրջանի Ջարտիրի գյուղից դեպի հարավ-արևելք երկու կիլոմետր հեռու գետակի ափին, կան հին գյուղատեղի ավերակներ՝ փռված գետակի երկու ափերին։ Հարավային ափի ավերակներից վեր, բլրի վրա մնացել են այդ գյուղի գերեզմանատան մնացորդները, երկու խաչքար և մեկ տասնյակից ավելի օրորոցաձև տապանաքարեր, մեծ մասը կենդանային գեղեցիկ քանդակներով ծածկված. պահպանված մի քանի տապանաքարերից երկուսն ունեն թվականներ՝ ։Ռ։ և ։ՌԱ։

Խաչքարերից համեմատաբար մեծի արևմտյան երեսը ծածկված է գեղաքանդակ զարդերով, հարավային նեղ կողին, կանգնեցնողի արձանագրությունն է 12 տողով. խաչի տակ. մեկ տողով՝ կազմողինը.

Ես Ով(էս Ու)ուսս, գե(ղիս տռ)աջնորդ. Կամաւն աւ (նանկնեցի) խաչս բա(րեխաւս) Հաւր իմ (Միրին.) թվ. ։ՌԱ։=1552 Հիշեցէք գծող Անդոն էրէցս.

Խաչքարն ինքնին արդեն բարձր վարպետության նմուշ է, բայց հավանական է նաև, որ նույն տեղում եղած կենդանային շատ քանդակներ ունեցող տապանաքարերի որոշ մասն էլ Անտոն երեցի ձեռագործը լինին. բոլոր դեպքերում իր ժամանակի լավ վարպետներից է Անտոն երեցը[1]։

68. Սանվել կազմող.— Ս. Հռիփսիմե վանքի բակում (Էջմիածին), արևելյան

[1] Մենք այս վարպետներին (№ 58, 60) առանձնացնում ենք նախորդից, նկատի ունենալով նրանց ապրած վայրերի հեռավորությունը և պաշտոնի բերումով իրենց տեղին կապված լինելու հանգամանքները։

պարսպի տակ շարված են մի քանի խաչքարեր, որոնք հավաքված են զանազան տեղերից, մեծ մասամբ վանքի շրջապատի գերեզմանոցից։ Այդտեղ կա մի խաչքարի վերին մասը, որի քիվին պատվիրատուի և կազմողի հիշատակագրությունն է.

Ս(ուր)բ խաչս բարէխաւս է Մարգար[ին] կազմող Սանվել:

Այս հասարակ խաչքարն ունի արձանագրություն գրելու մի հետաքրքիր առանձնահատկություն, որն առայժմ ուրիշ տեղ չի նկատվել։ Արձանագրված ամբողջ քիվը պատած է.բարակ և զուգահեռ գծերով, որոնց վրա հետո տեղավորվել են արձանագրության տառերը՝ համաչափությունը պահպանելու համար։ Այդտեղ եղած խաչքարերի մեջ մի երկրորդն էլ կա, որի քիվը նույնպիսի զուգահեռ գծեր ունի, բայց ամբողջ արձանագրությունը սաստիկ ջարդոտված է։ Սակայն այդ վերջինի ճակատին բարեբախտաբար, մնացել է թվականը. ։ՌԱ։=1552։

Այս սև տուֆից շինված երկու խաչքարն, անշուշտ, միևնույն վարպետի՝ Սանվելի (Սամվել) ձեռագործներն են։

69. Սարգիս Երեց կազմող.— *Բասարգեչարի Ակունք (Ղըրխբուլաղ) գյուղից մոտ երեք կիլոմետր դեպի հարավ, լեռների գոգավորության մեջ, գտնվում են հին գյուղատեղի ավերակներ, որոնց միջև կա մի ավերակ եկեղեցի, շուրջը գեղեցիկ խաչքարեր և գերեզմանաքարեր։ Եկեղեցու մոտ, հյուսիսարևելյան կողմում, կանգնած է մի գեղեցիկ խաչքար, իր թվագրված ժամանակից շատ ավելի հին զարդաքանդակներին նմանեցրած քանդակներով։*

Այս խաչքարի առանձնահատկությունն այն է, որ նրա թիկունքը նույնպես զարդարված է շատ գեղեցիկ խաչերով ու խորաններով։ Թիկունքի վերին մասում խաչքարը կանգնեցնող Սարգսի հիշատակագրությունն է և թվականը, ապա երկու խորաններ՝ միջին խաչեր, հետո երեք ավելի մեծ խորաններ ու խաչեր, որոնց տակ մի մի ընդարձակ արձանագրություն, որտեղ Սարգիս երեց կազմողը հայտնում է, որ խաչքարը կազմել ու կանգնեցրել է իր և կնոջ՝ Մելիք Խաթունի հիշատակին. ապա իր չորս որդիների մահվան մասին և ապա յուրօրինակ մի փիլիսոփայություն, թե ամեն ցավից պետք է փախչել, որովհետև փործով ապացուցված է, որ փախչողներն ապրում են, իսկ նստածները (իմա՝ սպասողները) մեռնում։

Այս գյուղատեղը կոչվում է հին Ղըրխբուլաղ, կամ հին Գոմեր։

Խաչքարը շինված . . . . . 1552 թ..

Հավել. արձ. 84

70. Ակոբ Եկարող.—*Այս վարպետից մնում են երկու խաչքարեր, երկուսն էլ կոտրված, միայն վերին կեսերը։ Մնացած բեկորների քանդակները ցույց են տալիս նուրբ վարպետություն ու ճաշակ։ Երկու բեկորներն էլ գտնվում են Ազիզբեկովի շրջանի Առենի (Արփա) գյուղի կողքին գտնվող հին Արփա գյուղատեղում, եկեղեցու արևմուտքում. առաջին բեկորի կենտրոնական խորանի վերին կողմերում գրված է.*

Ակոբ Եկ(ար)ող. Թվ. ։ՌԸ։ (1559)

իսկ խորանը և ճակատը իրարից բաժանող շրջանակի վրա գրված է.

(Կ(ա)զ(մո)ղ Ակոբ.

Այս եկեղեցու շուրջը կան նույն թվականների և նույն ոճի խաչքարեր, առանց կազմողի հիշատակության. քանի որ Ակոբը այստեղ է աշխատել, պետք է կարծել, որ դրանց մի մասն էլ պետք է նրա ձեռագործը լինի։

71. Մանվել (կազմող).— *Կերտել է մի գեղեցիկ խաչքար, Միրզաբեկի պատվերով՝ ի հիշատակ իր կողակից Գուլաղի։ Կանգնած է Բասարգեչարի գյուղի եկեղեցու արևելյան պատի տակ, արտաքուստ։ Խաչքարի քիվին միայն Գուլաղի հիշատակությունն է, իսկ հյուսիսային կողին պատվիրատուի ավելի ընդարձակ արձանագրությունը։*

Կենտրոնական խաչի թևերի տակ գրված է թվականը և կազմողի միայն անունը՝ Մանվել։ Շինված է..... 1652 թ.։

Այստեղ կան ևս մի քանի ժամանակակից խաչքարեր՝ որոնք ըստ ոճի, հավանական է, որ Մանվելի ձեռագործը լինեն։

Հավել. արձ. 85

ՀԻՆ ՋՈՒՂԱ

Հին Ջուղայի գերեզմանատանը, ինչպես հայտնի է, պահպանվում են հարյուրավոր գեղաքանդակ խաչքարեր։ Սակայն մի դար

առաջ այնտեղ կանգնած են եղել հազարա-վոր այդպիսի խաչքարեր, որոնք ցարական իշխանության օրոք, երկաթուղի անցկացնե-լու ժամանակ բարբարոսաբար ոչնչացվել են։ Ջուղայի խաչքարերի արվեստն ունի ու-րույն ոճ։ Խաչքարերն այստեղ սովորականից ավելի նեղ են, խաչի բռնած կենտրոնական մասը ավելի խորն է փորված և վերջանում է սրածայր կամարով. ներքևի մասում երբեմն քանդակված են ձիավորներ։ Այժմ տեղում պահպանված խաչքարերը, որոնք փոքր թիվ են կազմում, պատկանում են մեծ մասամբ Հին Ջուղայի ծաղկման շրջանին՝ XVI դա-րին։ Արձանագրությունները տալիս են կազ-մողների երեք անուն, որոնք բոլորն էլ գոր-ծել են XVI դարի երկրորդ կեսից հետո։

72. **Հայրապետ կազմող**, որից մնացել են երկու խաչքար, երկուսի տակ էլ ստորագր-ված է կրճատ ձևով. մեկին՝ ԿԶՄՂ ՀՐՊՏ (կազմող Հայրապետ) և մյուսին՝ ԿԶՄՂ ՀՅՊ ՅՃ (կազմող Հայրապետ յիշեցէք), ա-ռաջինը կրում է 1571 և երկրորդը՝ 1586 թվականները[1]։

73. **Գրիգոր կազմող**, որից մնացել են հինգ խաչքար, երկուսը թվագրված են 1576 և 1591, մնացած երեքը անթվական։ Գրիգորը երկու անգամ ստորագրել է լրիվ՝ կազմող Գրիգոր ձևով (էջ 152—159), երկու անգամ սղումներով՝

ԿԶՄՂ ԳՐԻԳՐ ձևով և մեկ անգամ

ՎՐԴՏ ԳՐԳՐ (վարդապետ Գրիգոր, էջ 163—64)[2]։

74. **Խաչայէլ վարդապետ կազմող**, որից մնացել են երեք խաչքար. մեկը թվագրված 1575 (էջ 151—152), մնացած երկուսն ան-թվական են։

75. **Դավիթ նկարող**.—Քանդակել է երկու գեղեցիկ խաչքար, որոնք իրար կից կանգ-նած են Մարտունու շրջանի Լիճք (Գյոլ) գյու-ղի հարավում, բլրի վրա գտնվող Աստվածա-ծին եկեղեցու արևելյան պատի մոտ։ Հարա-վայինը կանգնեցված է Բարսեղի հիշատա-կին, թվագրված 1571, իսկ հյուսիսայինը՝ Մկրտչի՝ 1581։

Կազմողի ստորագրությունը գտնվում է վերջինիս թիկունքի վերին մասում։

Համեմ. արձ. 86։ Այբում, նկար 87, 88, 89

76. **Մելքոն կազմող**.—Այս վարպետի միայն մի փոքրիկ խաչքարն է առայժմ հայտ-նի, որն ագուցված է Հրազդանի շրջանի Վե-րին Ախտա գյուղամիջի Նորաշեն եկեղեցու արևմտյան պատի կենտրոնում, դրսից։ Պա-տի մեջ ագուցելու ժամանակ քիվը տաշել են, որով և կորել է կանգնեցնողների հիշա-տակությունը, բարեբախտաբար խորանի շուրջը պահպանվել է կազմողի անունն ու թվականը. ՄԵԼՔՈՆ ԿԱԶՄՈՂ ԹՎ. ։Ռի։..... 1571 թ.

77. **Ղարտաշ կազմող**.— Այս շնորհալի վարպետի ստորագրությունը կրող երեք խաչ-քարի ենք հանդիպում Ազիզբեկովի շրջանի Գնդեվանք վանքում։ Առաջինը ագուցված է եկեղեցու արևմտյան մուտքից վեր, խորշի մեջ, դա սպիտակավուն քարից կերտած մի շատ յուրօրինակ հուշարձան է. Ճակատը և շրջանակները բաժանված են կենտրոնում իրար հետ հյուսված-միացած 14 քառակու-սիների, որոնցից յուրաքանչյուրը տարբեր մոտիվների քանդակներով է զարդարված։ Կենտրոնում խորան է և քանդակազարդ խաչ. խաչի գլխին, խորանի կամարի տակ, թևա-տարած արծիվ, իսկ խաչի հորիզոնական թևերի տակ Աստվածածին՝ մանուկ Հիսուսը գրկին։ Սրա դիմաց Հովսեփն է, կամ առա-քյալներից մեկը՝ խաչը ձեռքին։ Ինչպես Մա-րիամը, այնպես էլ առաքյալը շրջապատված են կենդանակերպներով. խաչի ներքևում ձր-կան քանդակ է։ Հարավային շրջանակի երկ-րորդ քառակուսու մեջ (վերևից) թամբած ձի, սրա դիմաց հյուսիսում՝ մարդու գլուխ և ձեռները՝ մեկով բռնած կլոր բլիթ. Նույն

---

[1] *С. Тер-Аветисян*, Город Джуга, стр. 21.

[2] Մեր տեղեկությունները Հին Ջուղայի այս վար-պետ-կազմողների մասին վերցված են Ս. Տեր-Ավե-տիսյանի նշված աշխատության մեջ բերված արձա-նագրություններից։ Նույն աշխատության 125—126 էջերում հեղինակը երկու Գրիգոր և երկու Հայրապետ կազմողներ է ընդունում, որով կազմողնե-րի թիվը հինգ է ստացվում։ Բայց տարօրինակն այն է, որ բոլորին էլ հոգևորականներ է համարում, մինչ-դեռ արձանագրություններից պարզ երևում է, որ միայն Խաչայելն է ստորագրում ՎԴՏ ձևով, եթե այն էլ ճիշտ է արտագրված հեղինակի կողմից։ Վաճառա-կանական հարուստ միջավայրում, ինչպիսին էր Ջու-ղան, հոգևորականները նույնքան բարեկեցիկ կաղ-րեին, ինչպես խոջաները և հազիվ թե նրանք բարդոր-ծական արվեստով զբաղվեին, ինչպես պնդում է Ս. Տեր-Ավետիսյանը։

քառակուսու վերին անկյունում՝ մկրատ, որը նշան է պատկերատուի արհեստին: Պատվիրատուի անունը չկա. միայն խաչքարի ներքևի մասի կենտրոնում կազմողի հիշատակագրությունն է՝

Ես Ղարտաշս կազմե-
ցի խաչս
Թվ. :ՌԻԲ:[1] *1573*

Երկրորդը մի փոքր խաչքար է, նույնպես սպիտակավուն քարից, կոտրված երկու մասի: Շրջանակների վրա իրարից անջատ քառակուսիներ են՝ տարբեր զարդաքանդակներով. խորանի տակ արձանագրված է.

Ես Ղարտաշ-
ս կազմեցի ս(ուր)բ
խ(ա)չս: Թվ. :ՌԻԲ: (1573)

Ղարտաշ կազմողի ձեռագործ երրորդ խաչքարն այժմ ագուցված է վանքի հարավային պարսպի մեջ ներսի կողմից, դա մի փոքր խաչքար է, որի վրա նույնպես միայն կազմողի հիշատակագրությունն է.

Ս(ուր)բ խ(ա)չս կանգնեաւ ի փրկութի հո գոյ իմոյ ծնողաց իմոց. թվ.: :ՌԻԲ: 1573 թ. Ես Ղարտաշս կազմեցի Ս(ուր)բ խաչս:

Այս խաչքարին ագուցված են երեք փոքր խաչքար, որոնցից մեկը կանգնեցված է Մեսրոպի կողմից՝ 1573 թվականին, նույնպիսի սպիտակավուն քարից է և նույն ոճի: Անկասկած սա ևս Ղարտաշի ձեռագործն է:

Մեջ բերված բոլոր հուշարձանները կերտված են միևնույն տարում: Անշուշտ Ղարտաշ վարպետը նույն տեղում պիտի ավելի ապրած լինի և շատ ուրիշներն էլ կերտած: Ինչպես երևում է վերջին արձանագրության բովանդակությունից. այդ հուշարձանը ոչ միայն կազմել, այլև կանգնեցրել է Ղարտաշը իր և իր ծնողների հիշատակին, սա կարող է, թերևս ապացույց համարվել, որ նա հենց Գնդեվազ գյուղացի է:

78. Ներսես նկարող.— *Շինել է լավ ձևավորված մի տապանաքար, որի հարավային երեսին պատկերացված է թամբած ձի և սրա առջևից հետաքրքիր գլխարկով և երկար շորերով մի տղամարդ, որը բռնել է սանձից. ձիուց վեր նետ ու աղեղ և կապարճ՝ լիքը նետերով: Ձախ կողմում՝ գինու գավ, շամփուրով խորոված, գաթա և ափսեի մեջ լիքը ստեպղիններ: Այս ծաղկապատիկ նստած մարդ, ձեռները խաչած կրծքին: Տապանաքարի հյուսիսային երեսին չորս խորան և խաչեր: Արևմտյան ճակատին տապանաքարի տիրոջ՝ Դիվանի հիշատակագրությունն է ու թվականը, իսկ վարպետի ստորագրությունը տեղավորված է հարավային երեսին, տեսարաններից վեր, բարձրադիր շրջանակի մեջ. մեծ ու ուռուցիկ տառերով. ՆԵՐՍԷՍ ՆԿԱՐՈՂ:*

Տապանաքարը գտնվում է Մարտունու շրջանի Վերին Ղարանլուխ գյուղամիջի ս. Գևորգ եկեղեցու բակի գերեզմանատան մեջ, եկեղեցուց հարավ-արևմուտք. շինված է..... 1576 թ.:

Հավել. արձ. 87

79. 80. Առաքել և Մելիքսեթ կազմողներ.— *Այս երկու մեծարվեստ վարպետների միատեղ ստորագրությամբ մնացել են երկու խաչքարեր Նոր Բայազետի «Դարի գլուխ» կոչված գերեզմանատան մեջ:*

Զույգ խաչքարերը կանգնած են մի մեծ և բարձր պատվանդանի վրա. հյուսիսայինը բիչ ավելի մեծ է, ճակատի կենտրոնում սուրբի գլուխ է քանդակված, որի շուրջը պտըտվելով անցնում է քիվի վրա գրված արձանագրությունը, համաձայն որի խաչքարը կանգնեցրած է պարոն Աստվածատուրին ի պահպանություն: Կենտրոնական խորանի վերին երկու կողմերին, շրջանակների մեջ գրված է կազմողների անունները. յուրաքանչյուր կողմին մեկի անունը: Խաչքարի տակին գեղարանդակ գունդ է, վերջում թվականը...... 1577:

Երկրորդ խաչքարը կանգնեցված է պարոն Թաճումի հիշատակին, խորանի վերին երկու կողմերին ստորագրված զույգ վարպետների կողմից, առանց թվականի:

Միաժամանակ և նույն վարպետների ձեռքով շինված այս խաչքարերը քանդակագործական արվեստի գլուխ-գործոցներ են:

Հավել. արձ. 88, 89: Ալբոմ, նկ. 90:

81. Տրդատ կազմող բերատաշ.— *Շինել է մի խաչքար, որը կանգնած է եղել Նոր Բայազետի «Դարի գլուխ» կոչված գերեզմանատան մեջ, Կուլազի հիշատակին: Ստորագրության այս ձևը միակն է. շինվել է...... 1577 թ.:*

Հավել. արձ. 90

---

[1] Ալիշան, *Սիսական*, *196*, Ջալալեանց. *Բ*, *145*: Լալայեանց. *Ազգ. Հանդ.*, *XXVI*.

82. Վարդան կազմող.—*Այս վարպետից մի խաչքար է մնացել Վրաստանում, Շամշուլդե բերդից 7 կիլոմետր հեռու Սամղեթ գյուղի ս. Գեորգ մատուռի մոտ. քիվին գրված է.*

Սուրբ խաչս բարէխաւսէ Շահարբանին. Վարդան կազմողի. թվին :ՌԼԲ:[1] (1583):

83. Հարայպետ (Հայրապետ) կազմող.—*Աշտարակ գյուղի Կարմրավոր եկեղեցին տանող աստիճանների գլխին, բակի մուտքի մոտ, արտաքուստ, կանգնած է միջակ մեծության և արվեստի խաչքար, ճակատը և շրջանակները զարդարված են երկթել հյուսվածո քանդակներով: Քիվին և կենտրոնական խորանի վերին մասերում արձանագրված է.*

ՄԻ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՏՐ ՈՎՍԷՓԻՆ. ՀԱՐԱՅՊԵՏ ԿԱԶՄՈՂ. Թվ. :Ռխ: (1591)

• *Առաջին տողի բառերը գրված են սղումներով:*

84. Ուսէպ կազմող.—*Շինել է մի մեծ և գեղաքանդակ խաչքար՝ Մելիք Բարեքի պատվերով, ի հիշատակ վերջինիս որդի Մելքումի: Խաչքարը կանգնած է Նոր Բայազետի շրջանի Բաղիկյան (Քյոսա Մահմադ) գյուղամիջի ս. Գեորգ եկեղեցու բակում: Թվագրված չէ, բայց Մելիք Բարեքի անվան հիշատակությունից պարզ է, որ XVI դարի կեսերի գործ է:*

Արձանագրությունը գրված է քիվին, երկու տողով, իսկ կազմողը ստորագրել է խաչքարի միջին մասում, խաչի երկու կողմերի շրջանակների վրա.

Ես Մելիք Պարէք շինել տվի խ(ա)չս որդոյ ի(մ) Մէլքումին. Ուսէպ կ(ա)զմ(ո)ղ. ես չեմ (ա(ր)ժան:

85. Սարգիս կազմող.—*Աշտարակ գյուղի Կարմրավոր եկեղեցու բակում, եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյունի դիմաց կանգնած է դեղին տուֆից կերտված միջակ մեծության մի խաչքար: Քիվը նեղ է, ճակատը լայն ու գոգավոր, շրջանակները բաժանված են քառակուսիների և զարդարված հյուսվածո քանդակներով ու խաչերով: Արձանագրությունը գրված է քիվին, կենտրոնական խաչին և գնդի տակ.*

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՊԱՐՈՆ ԱՍԱԴԻՆԻՆ, ՊԱՐՈՆ ՂԱԼԻՆ./ ՍԱՐԳԻՍ ԿԱԶՄՈՂ:

Թվական չունի, բայց քանդակների և գրչության ոճը XVI դարի է: Խաչքարի բոլոր մասերը խիստ հողմահարված են:

86. Ջուշի կազմող.— *Անսովոր անունով այս վարպետի գործերին հանդիպեցինք միայն 1959 թվականին, Հրազդանի շրջանի Ներքին Քաղսի, Վերին Քաղսի և Վերին Ախտա գյուղերում:*

Այս երեք գյուղերում պահպանվել են յոթ տապանաքար, որոնք, անկասկած, նույն վարպետի ձեռագործներն են: Դրանցից միայն մեկի վրա գտնվեց վարպետի անվան հիշատակությունը, թվական՝ և ոչ մեկի վրա չկա: Սակայն այդ յոթ տապանաքարերի վրա եղած քանդակների բովանդակությունը և մանավանդ նրանց կատարման նույնությունը ոչ մի կասկած չեն հարուցում այդ խումբը նույն վարպետի, Ջուշի կազմողի, ձեռագործները համարելու:

Առայժմ հայտնի յոթ տապանաքարից հինգը գտնվում են Ներքին Քաղսի գյուղում, վեցերորդը՝ Վերին Քաղսի գյուղում, բայց տարված է նույնպես Ներքին Քաղսից, միայն յոթերորդը գտնվում է ավելի հեռու՝ Վերին Ախտա գյուղում և այն էլ ոչ իր նախնական տեղում: Այս երևույթը հիմք է տալիս ենթադրելու, որ Ջուշի կազմողի գործունեության հիմնական վայրը, թերևս և ծննդավայրը, Ներքին Քաղսի գյուղն է:

Ներքին Քաղսին փռված է Հրազդան գետի ափին, խորը ձորի մեջ: Գյուղի հին գերեզմանատունը տարածվել է գյուղի մեջ, քարափի գլխին գտնվող եկեղեցու շուրջը, հենց այստեղ էլ գտնվել են Ջուշի կազմողի շինած տապանաքարերից վեցը, որոնցից տեղում մնացել է միայն մեկը, մնացածներից չորսը վերջերս տարվել են նույն գյուղի նոր գերեզմանատունը, իսկ մեկը՝ Վերին Քաղսի գերեզմանատունը:

Ա. Ներքին Քաղսի գյուղի նոր գերեզմանատունը գտնվում է գյուղի արևմտյան եզրին, լեռան լանջին: Վարպետի անունը կրող տապանաքարը գտնվում է գերեզմանատան արևմտյան մասում. 1,40 մ երկարությամբ

---

1 Ջալալեանց, Բ, 95. *Թվականը միայն ՌԼԲ, որն ուղղում ենք ըստ Մելիքսեթ-Բեկի ձեռագիր աշխատության՝ «Վիրահայոց վիմական տարեգիր»:*

և 65 սմ բարձրությամբ օրորոցաձև տապանաքար է: Վերին երեսին, ամբողջ երկարությամբ քանդակված է հաստ օղերով շղթա, արևելյան և արևմտյան ճակատներին՝ խաչեր:

Հարավային երեսին պատկերված է հարսանիքի տեսարան, ուր մի շարքով կանգնած են՝ նախ մատռվակը՝ գինու կուժը աջ ձեռքին, ապա հարսն ու փեսան, վերջինս երկու ձեռքերով բռնած է հավիտենականության նշանը՝ կլոր շրջան, վրան շեղ գծեր, ապա նվագածուները՝ քանոնիստը և երկու լարանի սազ նվագողը, սրանցից հետո նորից գինու գավ: Դիմացներին երկար սեղան է, որի վրա կերակուրների փոխարեն զարդեր են պատկերված, իսկ մի ծայրին կլոր խարույկ, որի վրա խորովածի շամփուրն է, կեռ կոթով և վրան շամփրված մսի կտորներով:

Տապանաքարի հյուսիսային երեսին քանդակված է նախ մեծ էշ, պոչը ծռած մեջքին, որի վրա կանգնած են շնանման կենդանու և արծվի մարմինները միացած վզի մասում, որը վերջանում է մարդու գլխով, ապա թամբած ձի, որի սանձից կախված թոկից բռնել է մի պատանի, իսկ ձիու ոտների տակ՝ եղջերու: Վերին մասում ունի հետևյալ արձանագրությունը, երկու տողով.

1. ԵՍ ՂԱԶԱՐՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՔԱՐՍ (կանգնեցի խաչքարս) ԱՎԻՆՈՒԶ ՊԷԿԻՆ, ԼԱՐԳՈՒԼԻՆ.

2. ԵՍ ՋՈՒՋԻՍ ԿԱԶՄԻ ԽԱՉՔՍ.

Բ. Զույգ կազմողի երկրորդ տապանաքարը գտնվում է նախորդի մոտ, սա համեմատաբար փոքր է. հյուսիսային երեսին քանդակված է հարսնառի տեսարան. նախ հարսն է ձիու վրա նստած, որի սանձից բռնել է մի պատանի. ապա փեսան, նույնպես հեծյալ. սրա առաջ մի երեխա ձեռքին բռնած ունի կենաց ծառը՝ գլխին մեծ ծաղիկ, ապա զուռնաչին և դափ ածողն է:

Տապանաքարի վերին մասում գրված է.

ՍԲ խաչս բարեխաւս Սահակին

Գ. Երրորդը մի մեծ գերեզմանաքար է 1 մետր 10 սմ երկարությամբ. նախորդներից ոչ հեռու, հարավային կողին քանդակված է մի առասպելական կենդանի չորս ոտներով, մարմնի երկու ծայրերից երկար վզերը թեքվում են մեջքի վրա և գլուխները դեմ դիմաց իրար են նայում, սրա առաջ մի թևատարած արծիվ է, ապա թամբած ձի:

Հյուսիսային կողին՝ երկու զուռնաչի ծալապատիկ նստած, սրանց արանքում խորոված անելու տեսարան, ապա մի մարդ՝ ձեռներին գավ ու կերակրաման բռնած:

Դ. Միջակ մեծության գերեզմանաքար (1 մետր երկար. և 50 սմ. բարձր.) նախորդի կողքին դրված, հյուսիսային կողին հարսնառի տեսարան է՝ հարսն ու փեսան հեծյալ, դիմացները զուռնաչի և դափ նվագող: Հարավային կողի կենտրոնում խորոված անելու տեսարան՝ շուրջը երկու մարդ, ձեռներին գինու գավ և բլիթ. հարս ու փեսայից վեր գրված է.

ՍԲ ԽԱՉՍ ԲՐԽՍ ՄԱՐՈԹԻՆ[1]

Ե. Այս տապանաքարը մնացել է իր հին տեղում, գյուղամիջի եկեղեցու բակում. նրա չափերն են՝ երկարությունը 130 և բարձրությունը 65 սմ. հյուսիսային կողին մի հեծյալ է, առջևը գինու գավ և հացեր, ապա մի խոյ. վրան 3 տողով գրված է.

ՍԲ ԽՉ ԲՐԷ
ԽՍ ԱԼԷՔՍԱՆ-
ԻՆ ՌՎ ԿԴ ՌՂ

Զ. Սա մի մեծ գերեզմանաքար է (122×80), բերված Ներքին Քաղսիի եկեղեցու բակից և այժմ գտնվում է Վերին Քաղսիի գերեզմանատան մեջ, դրված ննջեցյալի վրա: Վրան մեծ օղակներով շղթա է, հարավային երեսը ծայրերից շրջանակավորված է երկու գլխանի վիշապներով, որոնց գլուխները թեքված են դեպի ներս, երախները բաց և երկար ականջներով: Սրանց արանքում որսի տեսարան է, երկու հեծյալ կանգնած են դեմ դիմաց, մեկը ձեռքին ունի հրացան և տապար, մյուսը՝ կեռ դաշույն: Ձիերի արանքում՝ ետևի ոտների վրա բարձրացած եղջերուի գլխին նստած է բազե: Հրացանավոր մարդու կողքին սափոր է, կանթով, ձիերից ներքև գավ և բլիթ ու վիշապ:

Տապանաքարի հյուսիսային երեսին վագրի և գոմեշի պայքար է պատկերված,

[1] Վերջին երկու գերեզմանաքարերը՝ Դ և Ե, տեղափոխված են վերջերս, դրված են նոր ննջեցյալների վրա կողք-կողքի՝ երկաթե ցանկապատով շրջափակված.

վագրը գամեշին ծունկի է բերել և երկու թաթերով բարձրացած, հոշոտում է նրա ուսը:

է. Ջուղի կազմողի չոթներորդ տապանաքարը, որն իր արվեստով բոլորի մեջ ամենալավն է, գտնվում է Վերին Ախտա գյուղում: Նախապես որտե՞ղ է այն գտնվելիս եղել, հայտնի չէ, այժմ ագուցված է գյուղամիջի Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային մասում և մասամբ էլ ծածկված է կից շինված փայտաշեն տնակով. բնականաբար միայն մի կողմն է տեսանելի, որտեղ մեծ ճոխությամբ քանդակված է հարսնառի տեսարան. վերի շարքի սկզբից հեծյալ փեսան է, ձեռին հավիտենականության նշանը, նրա ետևից հարսը՝ նույնպես հեծյալ (մի մասն է այժմ երևում), երկու ձիերի էլ սանձից բռնել են մեկական պատանի. փեսայի ձիու առաջ մի մարդ՝ սափորը ձեռին: Ներքևի շարքում նախ մի մարդ է, կենաց ծառը ձեռքին, ծառը մեծ ճյուղեր ունի, ծաղիկներ և արմատի տեղում երկարավուն գունդ. սրանից հետո նվագողներն են՝ զուռնաչի, դափ ածող և քանոն նվագող. սրանց արանքներում բաց տեղերում, հացի սեղանի փոխարեն՝ բաժակուռների մեջ գեղեցիկ զարդեր:

Այս մեծարվեստ հուշարձանի սկզբնական տեղը հավանաբար Վերին Ախտայի եկեղեցու բակն է, որովհետև այդ եկեղեցին շինել են XIX դարի վերջերին՝ հնի տեղում: Ներկա եկեղեցին շինված է սրբատաշ քարով, իսկ տապանաքարը եկեղեցու շինության ժամանակ ագուցվել է պատի մեջ:

Ջուղի կազմողի արվեստի բնորոշ գծերը հետևյալներն են.

1. Վերակենդանացրել է մեր ճարտարապետական հուշարձանների վրա գործածված և XIV դարից հետո մոռացված «Սելջուկյան» շղթա կոչվող օրնամենտը:

2. Տապանաքարերի վրա «կենաց ծառ» է քանդակում:

3. Նրա քանդակների ոճը խիստ ռեալիստական բնույթ ունի. գինու գավերը երկարավուն սափորներ են, հարսն ու փեսան թագերի փոխարեն գլխի սովորական հարդարանքներով են:

4. Քանդակները խիստ ուռուցիկ—ռելիեֆ են. մանրամասնությունները լավ մշակված, մարդկանց դեմքերը կլորավուն են և արտահայտիչ:

5. Սիրում է տապանաքարերի վրա առասպելական կենդանիներ քանդակել:

6. Բոլոր գրքերում ուսումնասիրությունների մեջ տապան—տապանաքար տերմինի փոխարեն խաչ—խաչքար տերմինն է գործածում գերեզմանաքար իմաստով:

Դժբախտաբար առայժմ հայտնաբերված այս չոթ հուշարձանից և ոչ մեկը թվագրված չէ: Բայց նկատի ունենալով նրա արվեստի բովանդակությունն ու տեխնիկան՝ վստահորեն կարելի է ասել, որ Ջուղի կազմողը XVI դարի վերջերի և XVII սկզբի արվեստագետ է:

ԺԷ դար

87. Ղուկաս կազմող.—Այս վարպետը շինել է մի խաչքար, որը կանգնած է Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղի գյուղամիջի գերեզմանատան մեջ:

Ղուկասի կազմածը մի պարզ խաչքար-հիշատակարան է, բավական հետաքրքիր ձևավորված: Խաչքարի քիվը մի նեղ շրջանակ է, որի երկու ծայրերին խաչեր են քանդակված, որոնց արանքում երկու թռչուններ (երևի աղավնիներ) հատիկներ են կտցում: Կենտրոնում խորան է ու խաչ, իսկ երկու կողմի լայն շրջանակների վերին մասերում խաչեր, մնացածում ընդարձակ արձանագրություն, ըստ որի Վահրամը և իր երեք եղբայրները կանգնեցրել են խաչքարը իրենց և ծնողների՝ Բայի և Փաշա բեկի ու իրենց որդիների հիշատակին:

Խաչքարի ներքևի մասում երկու տողով կազմողի ստորագրությունն է:

Շինված է...... 1606 թ.:

Հավել. արձ. 97: Ալբոմ, նկար 91:

88. Ոսէփ կազմող.—Այս վարպետի շինած գեղեցիկ խաչքարը կանգնած է Մարտունու շրջանի Լիճք (Գյոլ) գյուղի հարավային եզրի բլրի Ծաղկեվանք կոչվող եկեղեցու բակում: Խաչքարի ճակատին խաչելություն է քանդակված, ապա խորան և խաչ: Քիվին սկզբում մեկ տող է արձանագրվել, վրան մանրատառ՝ կանգնեցնողի անունը, որով ստեղծվել է բավական խառնաշփոթ բովանդակություն: Հնարավոր է որոշել, որ Հեստր խաչքարը կանգնեցրել է իր հոր Միկիրտիչի հիշատակին: Խորանի կենտրոնական մասի հյուսիսում կազմող Ոսեփի մանրատառ և արդեն մաշված հիշատակությունն է:

Շինված է .... 1607 թ.:

89. Ակոր նկարող.— *Այս վարպետի կերտած խաչքարը գտնվում է նախորդ Ոսեպ կազմողի խաչքարին կից՝ հյուսիսից: Ակորի կերտածը ունի վերևում ճակատ, որի վերին մասում, քարի բիվի գծերին համապատասխան կազմողի ստորագրությունն է՝ ուռուցիկ տառերով, ապա թիվը: Սրանց տակին ուղիղ գծով գրված է կանգնեցնողի բավական վնասված արձանագրությունը, որից հազիվ հասկացվում է, որ խաչքարը կանգնեցված է Մամի հիշատակին:*

Շինված է...... 1609 թ.:

Ալբոմ, նկ. 92:

90. Ավաք ուստա.—*Այս շնորհալի քարգործը շինել է երկու գեղեցիկ օրորոցաձև տապանաքար, որոնք գտնվում են Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղից մեկ կիլոմետր դեպի հարավ-արևմուտք գտնվող գերեզմանատան մեջ, եկեղեցու հյուսիսային կողմում: Գերեզմանաքարերը միատեսակ, օրորոցաձև են. հյուսիսայինը քիչ ավելի մեծ. նրա հյուսիսային կողին քանդակված է բովանդակալից կենցաղային տեսարան՝ թամբած ձի, սազ նվագող մի մարդ, պարող, ըլիթներ, երկու եղջերու և կրկին նվագող. հարավային կողին՝ չորս խորաններ՝ միջին խաչեր: Ընդարձակ արձանագրությունն սկսվում է մի տողով՝ հյուսիսից, և գոտիաձև շրջում բոլոր չորս կողմերով՝ վերին շրջանակներով, ըստ որի, Սարգսի որդի Ռստամի վրա է գրված քարը:*

Ուստա Ավագի ստորագրությունը գտնըվում է հյուսիսային կողին, առանձին տողով:

Շինված է...1609 թ.: Երկրորդ տապանաքարը նախորդին համարյա կից է հարավից. նույն ոճով է կատարված, միայն քիչ ավելի փոքր է. վրան գրված է հայատառ, բայց հավանաբար պարսկերեն արձանագրություն, որի մեջ որոշ են Մարտիրոս և Գրիգոր անունները: Թեև Ավագի ստորագրությունը չկա, բայց, անկասկած, նրա շինածն է: Ավագն առաջին քարգործ վարպետն է, որ իր համար ուստա տերմինն է գործածում:

Համել. արձ. 92

91. Վելաս կազմող.—*Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի հյուսիս-արևելյան կողմում, մոտ երկու կիլոմետր հեռու գյուղից, կիսավեր վիճակում կանգնած է մի մատուռ, որի արևելյան կողմում կան մի քանի խաչքարեր, իսկ արևմտյան կողմում տապանաքարեր: Մի փոքր օրորոցաձև և լավ շինված տապանաքարի հողմահարված արձանագրության մեջ պահպանվել է այս վարպետի անունը: Արձանագրության մեջ վերծանվում է Կրիկոր անունը, կազմող Վելաս և թվականը :ՌԿԲ:........1613:*

92. Մելիքսեր կազմող.—*Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն (Ն. Ադիաման) գյուղի նշանավոր Կոթա ս. Աստվածածին եկեղեցուց հարավ, բլուրների վրա, կա մի ընդարձակ գերեզմանատուն. սրա հյուսիս-արևմըտյան ծայրին իրար կողքի ընկած են երեք գեղաքանդակ խաչքար, միջանկյալը ամենագեղեցիկն է, չափազանց ճոխ, նուրբ ու վարպետ գծերով փորագրված, առանձնապես մեծ վարպետությամբ է քանդակված խաչի տակի դունդը:*

Քիվին գրված է պատվիրատուի արձանագրությունը, ճակատի կենտրոնի փոքրիկ խաչի կողքերին՝ թվականը, իսկ կենտրոնական խորանի վերի երկու կողքերին, շրջանակների մեջ, կազմողի հիշատակագրությունը: Քանի որ նման ձևով գրված թվականի խնդիրը գրականության մեջ շփոթություն է առաջացրել, հարկ ենք համարում բերել արձանագրությունն այնպես. ինչպես կա տեղում. Սր Նշանս Մարկոսին ազնական

Թ+ԿԲ

Մելիքսէր կ(ա)զմող.

Արձանագրության հրատարակիչներ Սմբատյանն ու Լալայանը այս թվականը վերծանել են 613, այսինքն միայն տասնավորն ու միավորն են նկատի ունեցել, որը հավասար է 62+551=613: Սմբատյանը հանդիպել է առանց հարյուրավորի գրության և տարակուսելով ասում է.

«Թե ինչ ԿԲ. և ԿԹ. թվականներ էին, չկարացինք իմանալ, ըստ որում գրվածների տառերը հազար տարվա տառերի նման չէին, այլ վերջին դարերի»[1]:

Այս հատվածի վերջին նախադասությունը մենք կարող ենք լրացնել հետևյալ կերպ,—

---

[1] Սմբատեանց, Գեղարքունի, էջ 531: Լալաեան. Ազգ. Հանդ., XVIII, 145, Գեղարքունի, 39, ախալմամբ Մելիքսեդեկ գրող, որն անիմաստ է:

ինչպես գրվածքների տառերը, այնպես էլ խաչքարի զարդաքանդակները վերջին դարի են։ Թվականի և գրչության ու զարդաքանդակների ոճի այս հազարամյա թվացող տարբերությունը հետևանք է վերծանողների սխալմունքի։ Նրանք չեն ըմբռնել, որ թվականության առաջին միացյալ տառանշանը իր մեջ պարունակում է ոչ թե երկու տառ՝ Թ և Վ, այլ երեք, այն է՝ Թ, Վ, Ռ. Թ-ի աջ կողմի հորիզոնական գիծը գրիչը համասար երկարություն անելով ձախ կողմի գծի հետ, նրան ավել է Ռ տառի ձև, ապա վերևում, ներսի կողմից Վ-ի վերին սահղն է ավելացրել, իսկ երկրորդ գծից Թ տառի հորիզոնական գիծը դուրս բերելով Ռ տառ է պատկերել։ Մեր հանդիպած բոլոր դեպքերում, միայն տասնավորով և միավորով գրված թվականներն այս կարգի են, նրանց հաբյուրավորը կամ հազարավորը թվ տառերի հետ միացած է գրված։

Մելիքսեթ կազմողի այս նշանավոր ձեռակերտը շինված է ոչ թե 613, այլ 1613 թվականին։

Այս հուշարձանի երկու կողմում ընկած են զույգ խաչքարեր, որոնք իրենց քանդակների ոճով և գրչությամբ անպատճառ Մելիքսեթի կազմածն են, թեև նրանց վրա վարպետի ստորագրությունը չկա։ Մեկը շինված է առաջին հուշարձանի արձանագրության մեջ հիշատակված Մարկոսի պատվերով ի հիշատակ իր հայր Թումին և մյուսը՝ Համբարձումին, թվագրված 1613։ Երրորդ խաչքարը շինել են ավել Մարկոսն ու Մաթոսը, կրկին իրենց ծնողների հիշատակին, վերջինս թվագրված չէ։

Միևնույն մարդու պատվերով շինված և նույն ժամանակի այս երեք հուշարձանը Մելիքսեթ կազմողի կերտածներն են։ Մելիքսեթն իր ժամանակի լավագույն վարպետներից մեկն է եղել։

93. Վանական երեց կազմող.— *Շինել է մի փոքր, բայց լավ ձևավորված օրորոցաձև տապանաքար, որը կանգնեցված է Մարտունու շրջանի Ներքին Ալուչալու գյուղի սահմաններում գտնվող՝ նշանավոր Մաքենյաց վանքի բակի գերեզմանատան մեջ։ Այն դըրված է կազմողի որդի Աստվածատուրի գերեզմանի վրա։*

Արձանագրությունը գտնվում է արևելյան ճակատին։ Շինված է.... 1622 թ.։

Հավել. արձ. 93

94. Միրզա կազմող.—*Բասարգեչարի Ծովակ (Ջաղալու) գյուղի արևմուտքում, բարձրության վրա, կա մի հին գերեզմանատուն, որը մինչև այժմ էլ օգտագործվում է այդ նպատակով։ Սրա արևելյան մասում պահպանված են 5 քարից իրար միացված պատվանդաններ, որոնց վրա ութ փոսեր կան՝ խաչքարերի համար։ Տեղում կանգուն է խաչքարերից մեկը միայն և մի բեկոր էլ ընկած։ Կանգնած խաչքարի ճակատի կենտրոնում մեծ և կողքերին փոքր խաչեր են քանդակված։ Քարի կենտրոնում իրար կից և ճարտարապետորեն ձևավորված խորաններ են՝ միջին խաչեր. շրջանակների վրա կան փոքր խաչեր, ներքևում՝ երկու փոքր խորան և սրանց կենտրոնում՝ գեղաքանդակ գունդ։ Քիվին և խորանների բաց տեղերում գրված արձանագրությունից պարզվում է, որ այն կանգնեցրել է Միրզան, իր և կնոջ հիշատակին. կազմողի ստորագրությունը դրված է խորանների տակ, ներքևի գնդի և փոքր խորանների գլխին։ Շինված է.........1628 թ.։*

Հավել. արձ. 94

95. Գրիգոր երեց կազմող.— *Շինել է մի խաչքար, որը գտնվում է Վրաստանի Սամծեվրիսի գյուղում. կանգնեցրած է ի հիշատակ Ասլանին և նրա ամուսին Լալփերուն... 1637 թ.։*

Հավել. արձ. 95

96. Անանիա կազմող.— *Բասարգեչարի շրջանի Դաշքենդ գյուղի եկեղեցուց փոքր ինչ հեռու, մի մեծ պատվանդանի վրա իրար կից, կանգնած են երեք սև քարե խաչքար. մեկը ավելի մեծ է և քիվին ու թիկունքին ունի արձանագրություն. քիվին գրված է միայն կանգնեցնող Առիպեկի հիշատակությունը և կազմողի անունը, իսկ թիկունքին ավելի ընդարձակ։ Շինված է.........1649 թ.։*

Մյուս երկու խաչքարը ևս շինված են նույն թվականին և նույն դերդաստանի անդամների հիշատակին։ Անշուշտ այս երեք խաչքարն էլ կազմող Անանիայի ձեռագործներն են.

Հավել. արձ. 96

97, 98. Ովանէս և Զաքարիա կազմողներ.— *Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի մեծ գերեզմանատան արևմտյան մասում երկու քարեր իրար պուցելով կազմել են մի մեծ պատվանդան, որի վրա կանգնած են զույգ խաչքարեր: Աչքի է ընկնում նրանց վրա քանդակված կենտրոնական մեծ խորանի ինքնուրույն ձևը. դրանց վերին մասը նեղանալով՝ բավական բարձրանում է, ապա կամարով պսակվում: Խաչքարերից հարավայինը կանգնեցրած է Քասպարի որդի Արևճանի հիշատակին, համաձայն քիվին գրված երկու տող արձանագրության:*

Կազմողների ստորագրությունը գտնվում է հարավային կողին, հետևյալ դասավորությամբ՝

ՈՎԱՆԷՍ
ԿԱԶՄՈՂ
ԶԱՔԱՐԱՅ

Շինված ....1651 թ.:

Հավել. արձ. 97

99, 100. Յովանէս և Ավանէս կազմողներ.—*Նախորդ խաչքարի հյուսիսային զույգը կանգնեցրած է տանուտեր Հակոբի հիշատակին. սրա վրա ևս երկու կազմողներ են ստորագրել. նրանց ստորագրությունը գտնըվում է խորանից հարավ. գրված է նախորդի ոճով.*

ՅՈՎԱՆԷ-
Ս ԿԱԶՄ
ՈՂ
ԱՎԱՆԷՍ.

Ըստ որում վերջին անունը մանրատառ է: Խաչքարը շինված է ....1653 թ.:

Հավել. արձ. 98

101. Ավանէս կազմող.— *Այս վարպետի ստորագրությամբ, բայց առանց թվականների, երկու խաչքարեր կան Նորադուզի մեծ գերեզմանատան մեջ: Դրանցից առաջինը գտնվում է գերեզմանատան հյուսիս-արևմտյան մասում: Մի մեծ պատվանդանի վրա կանգնած են եղել զույգ խաչքարեր, այժմ տեղումն է միայն մեկը, հյուսիսայինը, սա մի մեծ և հյուսվածո զարդերով գեղեցիկ խաչքար է, լայն ճակատով և կամարակապ խորանով: Լայն քիվին ունի երկու տող արձանագրություն, ըստ որի կանգնած է Ակոբի որդի տանուտեր Սարգսի հիշատակին: Խորանից վեր և նրա մեջ, հարավայինի վերին մասում՝ գտնվում է կազմողի ստորագրությունը. երկրորդ խաչքարը գտնվում է նույն գերեզմանատան հյուսիս-արևմտյան ծայրին, մի մեծ պատվանդանի վրա և ծավալով նույնպես մեծ. սա ևս հյուսվածո զարդերով գեղաքանդակ է, նման նախորդին. քիվի մեկ տող արձանագրությունը հաղորդում է, որ այն կանգնեցրած է Ովանես քահանայի հիշատակին: Կազմողի ստորագրությունը գտնվում է շրջանակի կենտրոնում և խաչի հարավային թևի տակ:*

Այս զույգ, չթվագրված խաչքարերը, իրենց ոճով, միևնույն մարդու ձեռքի գործ են. հավանական ենք համարում, որ այս կազմողը նախորդ, ընկերովի շինած խաչքարերի կազմող, Ավանեսն է, մի դեպքում նա իր հասուն աշակերտի կամ գործակցի՝ կամ հենց ինքն աշակերտ՝ իր վարպետի հետ է կազմել և միասին ստորագրել, իսկ այս երկու դեպքում՝ մենակ է կազմել խաչքարեր և մենակ էլ ստորագրել:

Ինչպես վերոհիշյալ հանգամանքները, նույնպես և խաչքարերի քանդակների ոճը նկատի ունենալով, այս հուշարձանները ժամանակակից ենք համարում նախորդների հետ, այն է XVI դարի կեսը:

Հավել. արձ. 99, 100

102. Տղատ կազմող.— *Այս շնորհալի արվեստագետից մնացել է միայն մի խաչքար՝ Սևանա կղզում: Այն դրված էր ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին հենած. նախնական տեղն անհայտ է, բայց անշուշտ հենց սկզբից կղզու մեջ պետք է լիներ:*

Սրանկյուն խորշի մեջ քանդակված է խաչելության տեսարանը, Հիսուսը մորուքով և բեղերով, թևերի տակ երկու դիմողներ, զույգ ձեռքերը վեր բարձրացրած: Սրանց տակ, շրջանակով բաժանված՝ գըրախտի տեսարանն է, որտեղ անտերև թփից կախված են խաղողի մեծ ողկույզներ, ապա Հիսուսը, խաչը ձախ ձեռին, աջով բարձրացնում է Ադամին և Եվային, որոնցից յուրաքանչյուրին մոտեցած են մի-մի գալարված վիշապներ:

Խաչքարի ճակատին ավետարանիչներն են, կենդանակերպով: Շրջանակները լայն են ու բաժանված քառակուսիների. հյուսիսայի-

նի վերին քառակուսու մեջ արդարության նժարն է, որի մի թաթը խիստ ցածր է հակված՝ միջին ունենալով անասնամարմին սատանային. երկրորդ քառակուսու մեջ երեք մորուքավոր գլխարաց և մերկ մարդիկ, մնացած 3 քառակուսիները զարդեր են: Հարավային շրջանակի վերին քառակուսու մեջ Աստվածածինն է, բարուրած Հիսուսը գրկին. երկրորդ քառակուսու մեջ երկու այծեր, մարդակերպ նստած; առջևի ոտները ծալած դեպի ցած և դունչ-դնչի: Երրորդ քառակուսու մեջ երեք թագազարդ և երկար ու ծալքավոր զգեստով մարդիկ, հավանաբար՝ կանայք: Մնացած երկու քառակուսիները նույնպես զարդեր են:

Խաչքարի լայն քիվը մեջտեղից գծված է և երկու տողով արձանագրված հետևյալը.

Ս(ուր)բ խ(ա)չ բարէխաւս Հ(ա)յրապետա, Հռէպէկայի. յիշեց(է՛ք) զՔս. Թվ :ՌՃԲ: (1653) Տրտատ Կ(ա)զ(մ)ող[1]:

Արձանագրության տառերը անարվեստ են, իսկ մնացած պատկերաքանդակներն ու զարդերը նուրբ և լավ կատարված:

Այս հուշարձանը իր բազմազան բովանդակությամբ և նուրբ արվեստով, սակավաթիվ խաչքարերի շարքին է պատկանում (ալբոմ, նկ. 93):

103. Ավանէս կազմող.— *Այս վարպետի ստորագրությամբ մնացել են երկու հուշարձան Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն (Ն. Ադիաման) գյուղում, մի խաչքար և մի տապանաքար. երկուսն էլ Կոթա ս. Աստվածածնից հարավ գտնվող բլրակների գերեզմանատան մեջ:*

Խաչքարը կանգնեցված է Բարսեղ քահանայի հիշատակին և ստորագրված է կազմողի կողմից[2]: Շինված է..... 1657 թ.: Տապանաքարի հյուսիսային կողմին քանդակված է դարաշրջանին հատուկ կենցաղային տեսարան. համաձայն արձանագրության այն դրված է Զորայպխանի շիրիմի վրա. տակին կազմողի ստորագրությունն է, անսովոր և հետաքրքիր.

1 Սմբատեան. Գեղարքունի, 394, Լալայեան. Ազգ. Հանդ., XVII, 83, Գեղարքունի, 33:

2 Այս խաչքարն այժմ կոտրված է, երեք բեկորները պատվանդանի մոտ են, արձանագրությունն էլ չարգրված է. տալիս ենք հին հրատարակությունների հիման վրա:

Քլտաղեցի
Ես Ավանէս կազմեցի.

Սա առաջին դեպքն է, երբ կազմողն իր ծննդավայրը հիշատակում է: Թեև հուշարձանը թվական չունի, բայց ոճով և մանավանդ կազմողների անունների նույնությունը ապացույց են, որ խաչքարին ժամանակակից պիտի լինի:

Համեմ. արձ. 101, 102

104. Ավանէս (կազմող).— *Մարտունու շրջանի Լիճք (Գյոլ) գյուղի հարավում, բլրի վրա գտնվող գերեզմանատան մեջ կա մի շատ մեծ տապանաքար (երկար. 1,68 մ, լայն. 0,60 մ և բարձր. 0,75 մ) վերևում երկաստիճան նեղացրած. հարավային կողին երկու շարք (վերև և ներքև) կենցաղային տեսարան է և գործիքներ ու զենքեր. այսպես՝ վերևի շարքի կենտրոնում զույգ պարողներ են. աջակողմյանը ձեռքին բռնած ունի գավ, ձախակողմյանը մի ձեռքը կռթնած մեջքին, իսկ աջով մյուս պարողի հետ բռնած ունեն կլոր իր. աջ անկյունում մի ննջեցյալ կին, կանգնած վիճակում և ձեռքերը խաչած կրծքին: Պարողի և սրա արանքում՝ հրացան, դաշույն և երկու ինչ-որ գործիքներ, ձախ անկյունում չորս ոտանի մի սեղան, տախտակաձև իր և երկու ինչ-որ գործիքներ: Ներքևի շարքում՝ թամբած ձի, որի դնչից բռնել է մյուս թևը կանթած մի մարդ, ձիու առաջ բլիթ. ապա մի մեծ սեղանի վրա երկու պնակ ուտելիքով և շուրջը հացեր: Հյուսիսային երեսին գործիքներ և իրեր, զուռնա նվագող և երկու պարողներ. սրանց առաջ ճաշասեղան՝ վրան կերակուրներ և հացեր: Արևմտյան ճակատին այծ և ուլիկ, գործիքներ, պարող և ճաշասեղան:*

Տապանաքարի երեսին կա հետևյալ արձանագրությունը.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՎԱՔԻ ՈՐԴԻ ԱՂԻՆ,
ՆԱԶԵՐԻՆ ԿՈՂԱԿԻՑ ԵՒ ՄՕՐՆ ՍՕԹԻՆ.
Թվ. ։ՌՃԷ։ (1658)

Նույն տեղում առանձին տողով և նախորդի հակառակ ուղղությամբ՝

ԵՍ ԱՎԱՆԷՍ ԽԶՆԱՎԱՐՑ[Ի ԿԱԶՄԵՑԻ]

Ծննդավայրի հիշատակումով այս երկրորդ կազմողի փաստը առիթ է տալիս կռահելու այս երևույթի պատճառները:

Նախորդ Ավանես կազմողը գործել էր Գետաշեն գյուղում, սա՝ Լիճքում, այս երկու գյուղերն իրար հարևաններ են. երկու կազմողների անունն էլ Ավանես է և նույն տարիների գործիչներ են: Թեև այժմ փաստ չունենք, բայց անկասկած է, որ որպես հայտնի քարգործներ հաճախ միևնույն տեղում էլ են աշխատելիս եղել. այս ամենը առիթ է տվել երկու վարպետներին իրենց ստորագրությունն այնպես դնել ձեռակերտների վրա, որ կարդացողը չշփոթի մեկին մյուս Ավանեսի հետ: Այս հետաքրքիր նրբույթի շնորհիվ էլ երևան են գալիս, մեզ համար արժեքավոր, այս երկու տեղանունները:

105, 106. Բաղտասար և Մելիքբէկ կազմողներ.—Այս վարպետների ստորագրությունը պահպանվել է մի գեղաքանդակ խաչքարի վրա, որը կանգնած է Բասարգեչարի շրջանի Ազքիլիսա գյուղում: Խաչքարի թիկունքին մի ընդարձակ արձանագրություն է փորագրված գեղեցիկ տառերով, իսկ ճակատին՝ կանգնեցնողի և վարպետների հիշատակություններն են ուռուցիկ տառերով:

Խաչքարը գտնվում է գյուղամիջում, կիսավեր եկեղեցուց 50 մետր դեպի արևելք 2—3 այլ խաչքարերի մոտ, հավանաբար հնում այստեղ եղել է մեծ գերեզմանատուն: Առաջներում եղել են այլ խաչքարեր ևս, նույն Արիստակես քահանայի պատվերով և հիշատակին կանգնեցրած, որոնք, անկասկած, այս վարպետների ձեռագործները կլինեին. պահպանված այս մեկ խաչքարն էլ՝ իր քանդակների և արձանագրությունների տառերի գեղեցկությամբ՝ ապացույց է վարպետների գերազանց հմտության:

Շինված է....... 1658 թ.

Հավել. արձ. 103, 104

107. Տէր Կիրակոս կազմող.— Ազիզբեկովի շրջանի Մարտիրոս գյուղի արևմտյան եզրին, բլրակների վրա կա մի գերեզմանատուն, որի կենտրոնական մասում է գտնվում երեք աստիճանով նեղացող մի տապանաքար, որա հյուսիսային երեսին քանդակված է կենցաղային տեսարան, իսկ հարավայինում՝ չորս տողից բաղկացած արձանագրություն, այժմ արդեն կիսեղծ. հասկացվում է միայն, որ գրված է Հասանի և Լալզարի շիրիմի վրա. ամբողջ է մնացել վերջում թվականը՝ 1612 և կազմողի անունը—տր Կիրակոս կազմող սորին.

108, 109. Մելիքբէկ և Պալասան կազմող.—Մարտունու շրջանի Վերին Ղարանլուխ գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու բակի գերեզմանատան կենտրոնում՝ միակտուր քարից երկաստիճան պատվանդանի վրա՝ կանգնած է բարձր արվեստով շինված մի խաչքար: Կենտրոնում խորան է, պսակված կամարով, խաչի տակին ճոխ քանդակներով գունդ. ճակատին սրբի գլուխ. թևին, խորանի գլխին, երկու շրջանակներին և հարավային կողին գրված է ընդարձակ արձանագրություն, ըստ որի եղբայրներ Վարդանը և Գրիգորը այս խաչքարը կանգնեցրել են իրենց հորեղբայր Զաքարի և նրա ամուսնու հիշատակին: Կազմողի ստորագրությունը գրված է խորանից հարավ ձգվող շրջանակի վրա, ներքևից վերև՝ մի տողով: Շինված է... 1665 թ.:

Մելիքբեկի ու Պալասանի ձեռակերտը ոչ միայն լավագույնն է իր շրջապատում գտնվող բազմաթիվ խաչքարերից, այլև իր ժամանակի լավագույն կոթողներից մեկը[1]: Ալբոմ, նկար 94:

Հավել. արձ. 105

110. Մելքոն կազմող.— Այս վարպետի կերտած մեծ և գեղեցիկ խաչքարը գտնվում է Ադրբեջանում, Գետաբեկից 7—8 կիլոմետր հեռու, Շամքոր գետի ձախ ափին Ջարեք անապատի մոտ՝ Հարանց մատուռի կողքին: Խաչքարը պատվիրել է Սարգիս վարդապետը իր, ծնողների և մահացած միաբանների հիշատակին: Պատվիրատուի ընդարձակ արձանագրության տակ կազմողի հիշատակարանն է.

Եւ որք ընթեռնուք, յիշեցէք ի Քրիստոս զՄելքոն կազմողս: Շինված է...... 1667 թ.:

Հավել. արձ. 106

111. Ովանէս կազմող.— Շինել է մի խաչքար, որը գտնվում է Մարտունու շրջանի

[1] Հավանաբար այս Մելիքբեկը նույնն է № 105—106-ի հետ. այն ժամանակ ստորագրել է որպես աշակերտ-վարպետացու՝ Բաղդասար կազմողի հետ, իսկ այժմ որպես վարպետ կազմող՝ իր աշակերտ-վարպետացու Պալասանի հետ:

վարդենիկ (Ներքին Գյոլալդարա) գյուղի հանդեպ, գետակի աջ ափին գտնվող «Իշխանի վանք» գերեզմանատան մեջ։ Խաչքարը ճակտոնով է և առաջին ունի տապանաքար՝ առանց արձանագրության։

Ս(ուր)բ խաչս բարեխաւս տ(է)ր Անտոնին. Ած. ողորմի. թվ. ։ՌՃԻ։ Ես անարժան Ովանէս կազմեցի.

Այս հարավային կողին՝ կրկին՝ ։ՌՃԻԵ։ (1676). երկու թվականների գոյությունն առաջացել է նրանից, որ առաջինը լրիվ չի տեղավորվել ճակատին, միայն մեկ, վերջին տառը՝ կողքին գրելն անհարմար է համարվել և այդ պատճառով էլ կրկնվել է լրիվ։

112. Վարդան կազմող.—*Այս վարպետի շինած խաչքարը գտնվում է Աղթամար կղզում. կանգնեցրել է Աղթամարի Թումա կաթողիկոսը. իր եղբայր պարոն Աշոտի հիշատակին։*

Խաչքարի վրա թվական չկա, բայց նկատի ունենալով Աշոտի պարոն տիտղոսը, հավանական ենք համարում, որ հիշատակված Թուման Աղթամարի Թովմա Ա. Ռշտունի կաթողիկոսն է, որը մոր կողմից ազնվական էր և գահակալել է 1681—1698 թվականներին[1]. Հետևաբար այս շրջանում էլ պիտի կանգնեցրած լինի խաչքարը։ Խաչքարի արձանագրությունը հետևյալն է.

Ես Թումայ, կաթողիկոս հայոց, կանգնեցի զխաչս առ ած. եղբաւրն իմոյ պարոն Աշոտին. և որք երկիր պագանէք յիշեցէք ի ՔՍ։ Զմեղապարտ Վարդանս, զկազմող սորա, յիշեցէք ի ՔՍ։

113. Սարգիս վարպետ.— *Ղրիմում մի խաչքար է քանդակել մահտեսի Հովհաննեսի պատվերով, հետագայում խաչքարը տեղափոխվել է Նոր Նախիջևան և ագուցվել ս. Գևորգ եկեղեցու հարավային մուտքի ձախ կողմում։ Այս խաչքարը ամենագեղեցիկն է շրջապատում եղածների համեմատությամբ։ Շինված է....... 1686 թ.։*

Կանգնեցնողի հիշատակագրությունից հետո ստորագրված է.

Ձեռամբ Սարգիս վարպետին։

Հավել. արձ. 107

114. Օհանէս կազմող.— *Այս վարպետի շինած միակ հայտնի խաչքարը գտնվում է Բասարգեչարի շրջանի Մեծ Ղարաղոյունլի գյուղում։ Այն կանգնած է գյուղամիջի բլրի գագաթին, որտեղ հնում եղել է գերեզմանատուն։ Խաչքարն իր դարաշրջանի լավագույն նմուշներից է, գեղեցիկ քանդակներով զարդարված է ոչ միայն արևմտյան, այլև արևելյան երեսը, որի կենտրոնում պատկերված է մեծ խաչ, իսկ շուրջն ընդարձակ արձանագրություն է փորագրված։ Խաչքարը կանգնեցրել են իրենց հոր՝ Տեր Սահակի և մոր հիշատակին՝ նրանց չորս զավակները 1698 թ.։*

Այս խաչքարի արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Սմբատյանը, խիստ աղճատված ձևով, ուր և Օհանեսի փոխարեն, կազմող է դարձել խաչքարի տերը՝ տեր Սահակը։ Այս նույն աղճատումներով մտել է նաև Լալայանի աշխատության մեջ[1]։

Հավել. արձ. 108

115. Գրիգոր կազմող,—*Այս վարպետի հիշատակագրությունը պահպանվել է Արցախի Դադի վանքի գլխավոր տաճարի արևմտյան մուտքի գլխին փորագրված փոքր խաչի մոտ, ուր գրված է.*

ՋՈՒՍՏԱ ՎԱՐԴԱՆԻ ՈՐԴԻ
ԳՐԻԳՈՐ ԿԱԶՄՈՂ ՍԲ ՆՇ-
ԱՆԻՍ ՅԻՇԵԼ ԱՂԱՉԵՄ Ի ՔՍ.

Պետք է ընդունել, որ հայր ու որդի այս վարպետները վանքում ընդհանրապես, և այս տաճարի վրա մասնավորապես, վերանորոգություններ են կատարել, որոնց ավարտումից հետո գրել են իրենց հիշատակագրությունը։

Անթվական այս արձանագրությունը՝ հնագրական տվյալներով՝ կարող է վերաբերել XVI—XVII դարերին։

116. Պողոս նկարող.— *Արցախի Դադի վանքի գլխավոր տաճարի արևմտյան պատին, մուտքից վեր քանդակված են երկու խաչ, որոնց արանքում գրված է.*

---

1 Աճառյան, *Անձնանունների բառարան*, Բ, 341—42։

1 Ե. Լալաեան, *Ազգ. Հանդես*, 19, 9—10, Մ. Սմբատեանց, *Գեղարքունի*, 597։

ՆԿԱՐՈՂ ՄԲ
ՆՇԱՆԱՑՍ
ՋՊՕՂՈՍ ՅԻՇԵՑԷՔ.

Այս վարպետն էլ պիտի մասնակցած լինի վերանորոգման աշխատանքներին XVI—XVII դարերում։

ԺԸ դար

117. Բաք կազմող.— *Կերտել է մի խաչքար և մի տապանաքար, որոնք գտնվում են Նորադուզի մեծ գերեզմանատանը։ Խաչքարը կանգնած է նեղ պատվանդանի վրա, մեծ է ու ինքնատիպ. ճակատին խաչելությունն է, առաքյալներ և կենդանակերպեր։ Կազմողի ստորագրությունը և թվականը գրված են կենտրոնական խորանի վերին մասում, իսկ շուրջը՝*

Բաք կազմող, Թվ. ։ՌՃԾԲ։—1703 թ., *պատվիրատուի անունը լավ չի վերծանվում։*

118. Ավանէս կազմող.— *Այս վարպետի ստորագրությամբ այժմ հայտնի են երեք հուշարձան. առաջինը մի խաչքար է, որը գտնվելիս է եղել Նոր Բայազետի շրջանի Արծվաքար (Ղշլաղ) գյուղից 4—5 կիլոմետր հեռու, ծովափի ավերակ գյուղատեղի մեջ. այժմ «Դոլակներ» է կոչվում։ Այն կանգնեցրել է Սարուխանը իր հոր հիշատակին..... 1705 թ.։*

Երկրորդ խաչքարը գտնվելիս է եղել Նոր Բայազետի «Դարի գլուխ» կոչված գերեզմանատան մեջ, որի վրա միայն թվականն ու կազմողի ստորագրությունն է եղել... 1706 թ.։ Ավանեսի կերտած հաջորդ հուշարձանները մի ամբողջ խումբ են, որոնք գտնվում են նույն «Դարի գլուխ» գերեզմանատան մեջ. այստեղ ս. Ստեփանոս մատուռի հյուսիսում մի մեծ պատվանդանի վրա կանգնած են զույգ խաչքար և դրանց դիմաց երկու մեծ տապանաքար։ Հուշարձանների այս խումբը պատկանում է մի տոհմի և շինված է մի վարպետի ձեռքով։ Արձանագրությունը սկսվում է հյուսիսային քիվից և վերջանում հարավայինի վրա։ Արձանագրություն կա նաև հյուսիսայինի հյուսիսային կողմին. սրանց բովանդակությունն այն է, որ Մուրատը խաչքարերը կանգնեցրել է Իսախանի, իր հայր Գրիգորի և մայր Սառա խաթունի հիշատակին։

Տապանաքարերից միայն մեկի վրա արձանագրություն կա Սառա խաթունի անվամբ, իսկ մյուսի հարավային կողին կենցաղային տեսարան, թամբած ձի, որի սանձից բռնել է մեկը; մեջտեղում երկու պարողներ, կացին, աղեղ, երաժշտական գործիքներ, տպա սազ նվագող, փող փչող և մատռվակ՝ գավը ձեռին։ Հյուսիսային խաչքարի վրա կա 1707 թ.։ Ավանես կազմողը արձանագրությունները քիվերի վրա գրել է ուռուցիկ տառերով, նույնկերպ և իր ստորագրությունը։

Հավել. արձ. 109, 110, 111

119. 120. Հուճան և Պաղի կազմողներ.— *Այս երկու վարպետների ստորագրությամբ մի մեծ և գեղաքանդակ խաչքար կա, որն ագուցված է այժմ Մարտունու շրջանի Լիճք (Գյոլ) գյուղի հարավում, բլրի վրայի եկեղեցու հյուսիսային մուտքի կողին, ներսից։ Խաչքարի ճակատին խաչելությունն է, թևերի տակ մի-մի մարդ, որոնք ձեռները դեպի խաչելյալն են բարձրացրել։ Կենտրոնական խաչի թևերի շուրջը ուռուցիկ տառերով գրված է Իմանի հիշատակին... 1706 թ.։*

Հավել. արձ. 112

121. Մարգար գրիչ.— *Կազմել է մի խաչքար Ղրիմում, որը հետագայում տեղափոխվել է Նոր Նախիջևան և ագուցվել 1783 թ. շինված ս. Լուսավորիչ եկեղեցու գավթի մուտքի ձախ կողմում։ Կանգնեցված է եղել պարոն Հովակիմի և սրա հարազատների հիշատակին. շինված է..... 1713 թ.։*

Հավել. արձ. 113

122. Բահրամ կազմող.— *Այս վարպետը շինել է Դավիթ բեկի զորավար Բորոս իշխանին վերաբերող տապանաքարը, որը գտնըվում է Ղափանի շրջանի Եղվարդ գյուղում, գյուղամիջի եկեղեցու բակի հարավում։ Գտնվելով անխնամ վիճակում, նրա վրա եղած և՛ քանդակները, և՛ մանավանդ, արձանագրությունը բոլորովին ջարդված են։ Հարավային երեսին եղել են ինչ-որ քանդակներ, իսկ դրանց վերևի շրջանակին հազիվ նշմարվում է*

Կազմող Բահրամ
Թվական ՌՃԳ. (1103)

Այս թվականը չի համապատասխանում Թորոսի մահվան ժամանակին, որն, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել 1724 թվականին։ Եթե իրոք տապանաքարը Թորոս իշխանինն է, ապա պետք է ենթադրել, որ գրիչը թվականի մեջ բաց է թողել տասնավոր Հ տառը. որով պիտի լիներ ՌՃՀԳ—1173+551=1724 թ.։

Գերեզմանաքարի հյուսիսային երեսին բավական որոշ երևում է կառաղի գամշակիվ։ Դրանից վերև գտնվող շրջանակի վրա եղած արձանագրությունը բոլորովին եղծված է։

123. Ներսես կազմող.— *Նորագյուղի մեծ գերեզմանատան հյուսիսային մասում է կանգնած այս վարպետի ձեռագործ խաչքարը։ Շատ լայն ճակատի կենտրոնում քանդակված է խաչելությունը, թևերի տակ երկու դիմողներ. սրա տակ կարճ խորան, ձևավոր և սրանկյուն գլխով։ Խաչքարի ստորին մասում հինգ փոքր և ճարտարապետական տեսք ունեցող խորաններ են, խաչքարի ամբողջ լայնությամբ։ Այս խորանների կիսաշրջան կամարները հանգչում են սյուների գլխի մեծ խոյակների վրա։ Շրջանակներն սկսվում են քիվի տակից և հասնում մինչև ստորին խորանների գլուխը, շատ լայն են և երկրաչափական բարդ մոտիվներով զարդարված։*

Քիվին, երկու տողով, կանգնեցնողի հետևյալ արձանագրությունն է.

Ս(ու)ր խաչս բարէխօսէ Սարգիս
Քօղվայի որդի Զէնալին.

իսկ կենտրոնական խորանի սրանկյուն կամարի երկու կողքերին՝

Ներսես կ(ա)զմ(ո)ղ
Թվ.։ ։ՌՃՂԴ։ (1745)։

Այրում, նկ. 95, 195

ԱՆԹՎԱԿԱՆ ԿԱԶՄՈՂՆԵՐ

124. Մխիթարիչ.—*Դսեղ գյուղի կենտրոնում գտնվում է գերեզմանատուն, ուր պատվանդանի վրա կանգնած է մի կոթող՝ չորս երեսն էլ քանդակներով զարդարված։ Պատվանդանի վրա փորագրված է ընդարձակ արձանագրություն, որը խիստ եղծված է, պարզ են Վահրամ, Գագիկ և Խորիշահ անունները։ Արձանագրությունը վերջանում է՝*

Տէր Աստուած ողորմի Մխիթարիչին[1].

Մխիթարիչն անշուշտ կոթողի շինողն ու արձանագրությունը քանդակողն է։

Հավանաբար X—XI դարերի գործ է։

125. Մուսես քահանա կազմող.—*Բագնայրից դուրս ընկած է մի մեծ խաչքար, որի թիկունքին գրված ընդարձակ արձանագրությունից պարզվում է, որ այն կազմել և կանգնեցրել է Մուսես քահանան ի հիշատակ իրեն և իր ծնողների։ Խաչքարը թվական չունի, բայց Բագնայրի բոլոր հուշարձանները կառուցվել են XI—XII դարերից ոչ ուշ, որը այս վայրի համար ծաղկման շրջան է եղել։ Պետք է ենթադրել, որ Մուսեսի կազմած խաչքարը ևս այս շրջանին է պատկանում։*

Հավել. արձ. 114

126. Շնավորիկ Բարգործ.— *Ախուրյանի շրջանի նշանավոր Մարմաշեն վանքի մոտ, բլրի վրա է գտնվում այս կազմողի ձեռագործ խաչքարը։ Արձանագրության բովանդակությունից երևում է, որ Շնավորիկը հենց իր հիշատակին է շինել ու կանգնեցրել խաչքարը։*

Շնավորիկ անունն, անշուշտ, Շնորհավոր անվան ժողովրդական բազմաթիվ այլաձևություններից մեկն է, ինչպես՝ Շնոհոր, Շնահառ, Շնոխոր, Շնոհորիկ և այլն։

Թեև արձանագրությունն անթվական է, բայց այդ անունը գործածվել է XIII դարից, իսկ Մարմաշենի հուշարձանների վրա այդ դարից ավելի ուշ թվականներ չկան, ուստի պետք է այս վարպետի ձեռագործը վերագրել XIII դարին։ Խաչքարի արձանագրությունը հետևյալն է.

ԶՇնաւորի(կ) Բարգործս յիշեցէք
ի Քրիստոս.

127. Հովհաննես կազմող.—*Այս վարպետի շինած խաչքարը գտնվում է Կարնո գավառի Սալնաձոր գյուղի գերեզմանատան մոտ. ըստ արձանագրության վարպետը այն կանգնեցրել է իր քրոջ հիշատակին, հավանաբար XIII դարում։*

[1] Լալայեան. *Ազգ. Հանդ.*, VII—VIII, 348։

Կազմօղ սորա զՅովհաննէս... ոչ եմ արժան... յիշեսջիք ի Քրիստոս զքեռն իմ զփոխեցեալն առ Քրիստոս[1]։

128. Գորգ.— *Ծինել է մի խաչքար, որը գտնվում է Կարնո գավառի Հնձուց գյուղում։ Այս խոշոր և գեղաքանդակ խաչքարի ներքևի մասում կազմողի ստորագրությունն է.*

Տէր Աստուած ողորմեա Գորգայ. ամէն.

իսկ երկու կողերին կանգնեցնողների հետաքրքիր արձանագրությունն է.

Տէր Աստուած ողորմեա աշխատողաց սորա Աստուածատր[ոյ]... պատոս... և Յակոբայ և մաւր նոցայ և քերց ի քում գալըստեանն ամէն[2]։

Հավանաբար XIII դարի գործ է։

129. Մգդեմ գծող.— *Ծինել է մի տափակ գերեզմանաքար, իր հոր Գրիգորի համար, որը գտնվում է Բասարգեչարի Մեծ Մազրա գյուղամիջի հին գերեզմանատանը՝ ամբողջովին հողի մեջ թաղված։*

Հավանաբար XIII դարի գործ է։

130. Մկրտիչ.— *Նոր Բայազետի շրջանի Արծվաքար (Ղշլաղ) գյուղից 3—4 կիլոմետր հեռու «Դոլակներ» կոչված վայրում կա հին գյուղատեղի, որն այդտեղ եղած փոքրիկ, սրբատաշ քարով շինված եկեղեցու XIII դարի արձանագրության մեջ անվանված է «Ագարակ»։ Այստեղ, այս եկեղեցու հյուսիսարևմտյան կողմում վերևից գլորված-ընկած մի գեղաքանդակ խաչքար կա, կոտրված երկու մասի. արձանագրության մնացորդներից պարզվում է, որ այն կանգնեցրել է Գրիգորը՝ իր ծնողների հիշատակին։ Խաչքարի տակին ծաղկագիր գրված մի անուն կա՝* Մկրտիչ։ *Սա անշուշտ կազմողի ստորագրությունն է։*

Հավանաբար XVI դարի գործ է։

131. Հայրապետ կազմող.— *Մարտունու շրջանային կենտրոնից 6—7 կիլոմետր հեռու, դեպի հարավ-արևելք, մի ձորի մեջ գտնվում են գյուղի ամառանոցն ու գոմերը։ Այդտեղ իրար մոտ գտնվում են երկու-երեք գյուղատեղու ավերակներ, որոնց մեջ կան նաև եկեղեցիների ավերակներ, շուրջը խաչքարեր և գերեզմանատներ։*

Եկեղեցու մոտ ընկած մի գեղաքանդակ խաչքարի թիկին գրված է.

Ես Հ(այ)րապէտս կա(զ)մեցի խաչս
Հ(աւ)ր իմ(ո)յ Մէլիքսէր[ին]։

Հավանաբար XVI դարի գործ է։

132. Սարգիս Գանձակեցի կազմող.— *Լոռվա Արդվի գյուղում կան երկու իրար կից փոքր մատուռներ, որոնցից մեկի մեջ կա մի արկղաձև դամբարան, վրան քարե կափարիչ։ Այդ դամբարանն ավանդաբար համարվում է Հովհան Օձնեցի իմաստասեր կաթողիկոսի գերեզմանը։*

Այս դամբարանը XIX դարի առաջին կեսում եղել է կիսաքանդ, Սարգիս եպիսկոպոս Ջալալյանցը հայտնում է, որ կիսաքաց գերեզմանի մեջ, ոսկորներին խառնված գտել է մարմարից շինված մի խաչ (խաչքար), որի վրա եղել է հետևյալ արձանագրությունը.

Մախտեսի Սարգիսս Գանձակեցի
Կազմեցի զայս խաչս[1]։

Օձնեցին ապրել է VIII դարի առաջին կեսում (+728), մինչդեռ մեջ բերված արձանագրության ոճը չի համապատասխանում այդ ժամանակի լեզվական առանձնահատկություններին, պետք է ենթադրել, որ խաչքարը պատահականորեն է ընկել կիսաբաց դամբարանի մեջ և հավանական է, որ այն XVI—XVII դարերի գործ լինի։

133. Աստվածատուր գործող.— *Մարտունու շրջանի Ն. Ալուչալու գյուղի մոտ է գտնըվում Վանևանի վանքը՝ 903 թ. շինված ճարտարապետական նշանավոր մի հուշարձան։ Վանքը գտնվում է ձորակի մեջ, որի արևելքում ձգվում են բարձր-պատանման քարաժայռեր, որոնց մեջ կան այրեր։ Այրերից մեկի մուտքի մոտ, ժայռի վրա քանդակված է խաչ և կողքին արձանագրված.*

Ած. ողոր(մի) Ա(ստու)ծատրոյ.
որ Այ. ողորմութեամբ այս խաչս
գործեալ Է.

[1] *И. Орбели,* Надписи Мармашена, Петроград, 1914, Սարգսեանց, *Տեղագրութ.*, էջ 79։
[2] Սարգսեանց. *անդ*, էջ 79։

[1] Ջալալեանց. *Բ*, 103—101։

Հավանաբար XVI դարի գործ է։

Լալ. Ազգ. հանդ., XIX, էջ 51։

134. Տր. Ակոբ կազմող.—Մարտունու շրջանի Երանոս գյուղի արևմտյան ծայրին գտնվում է կիսավեր մատուռ, որի բակում կան մի քանի խաչքարեր, դրանցից մեկի վրա պահպանվել է հետևյալ արձանագրությունը.

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՎԱՐ ՎԱՌԻՆ[1] ԽԱ-ԹՈՒՆԻՆ/ ԵՍ ՏՐ ԱԿՈԲ ԿԱԶՄԵՑԻ.

Այստեղ գտնվող 10 արձանագրություն ունեցող խաչքարերն էլ XVI դարի գործեր են, հետևաբար տր. Ակոբ կազմողին ևս նույն ժամանակին պետք է համարել։

135. Սահակ կազմող.—Ծնկել է մի տապանաքար Աբբա Լորի համար. գտնվում է Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղի արևմտյան կողմի հին գերեզմանատան մեջ։ Հետաքրքիր է, որ 6 տողանոց տապանագրից միայն վերջինը ծածկագիր է[1]։

136. Տրդատ կազմող.— Քանաքեռ գյուղի ս. Հակոբ եկեղեցու արևելյան պատի տակ է կանգնած այս վարպետի ձեռագործ խաչքարը։ Այն շինված է տեղական դեղնավուն տուֆից և զարդարված է քանդակներով. բովին մնացել է պատվիրատուի արձանագրությունը.

Սբ. խաչս բարեխաւս Մինախարունին:

Իսկ կենտրոնական խորանի ձախ կողմից հարթության վրա՝

Տրտատ կազմողս.

աջ հարթությունը մնացել է պարապ, ըստ երևույթին թվականը պիտի գրվեր, որն ինչ-որ պատճառով չի լրացված. քանդակների ոճը XVI—XVII դարերի է։

137. Աստվածատուր կազմող.—Պատմական Կոտայք գավառի (Աբովյանի շրջան) Ջրաբերի ավերակների մեջ այժմ միակ կանգուն մատուռի հյուսիսային պատի արտաքին երեսը XVII—XVIII դարերում ամբողջովին ծածկվել է արձանագրություններով և բազմաթիվ խաչերով, որոնցից շատերի մոտ կան հիշատակագրություններ։ Այս պատի արևմտյան անկյունի վերին մասում քանդակազարդ շրջանակների մեջ առնված մի խաչի մոտ գրված է նաև կազմողի ստորագրությունը, որը խնամքով կերտած, գեղեցիկ փակագիր է։ Նախ գրված է մեծատառ մի Ա, որի երկու ուղղահայաց սռնակների վրա լրացված են մյուս տառերը, իսկ գլխին երկգիծ ալիքաձև պատիվ։ Անվան տառերը հետևյալներն են. ԱԾՏՈՒՐ=Աստվածատուր. կազմող բառի տառերը գրված են կողքին և ավելի մանր են ԿԶՄՂ=կազմող։ Թվական չունի, բայց քանդակների ոճը համապատասխանում է XVII դարին։

138. Գրիգոր կազմող.—Այս վարպետի հիշատակությունը պահպանվել է Արցախի Դադի վանքի գլխավոր տաճարի արևմտյան մուտքի գլխին փորագրված փոքր խաչի մոտ, ուր գրված է.

ՋՈՒՍՏԱ ՎԱՐԴԱՆԻ ՈՐԴԻ
ԳՐԻԳՈՐ ԿԱԶՄՈՂ ՍԲ ՆՇ-
ԱՆԻՍ ՅԻՇԵԼ ԱՂԱՉԵՄ Ի ՔՍ.

Պետք է ընդունել, որ հայր ու որդի այս վարպետները վանքում ընդհանրապես, և այս տաճարի վրա մասնավորապես, վերանորոգություններ են կատարել, որոնց ավարտումից հետո գրել են իրենց հիշատակագրությունը։

Անթվական այս արձանագրությունը, հնագրական տվյալներով, կարող է վերաբերել XVI—XVII դարերին։

139. Պողոս նկարող.—Արցախի Դադի վանքի գլխավոր տաճարի արևմտյան պատին, մուտքից վերև քանդակված են երկու խաչեր, որոնց արանքում գրված է՝

ՆԿԱՐՈՂ ՍԲ
ՆՇԱՆԱՅՍ
ՋՊՕՂՈՍ ՅԻՇԵՑԷՔ.

Այս վարպետն ևս պիտի մասնակցած լինի վերանորոգման աշխատանքներին XVI—XVII դարերում։

* * *

Նախքան մեջ բերված ցախտակի քննությանն անցնելը, նշենք, որ մեր կազմած ցախտակում տեղ գտած քանդակազարդող վարպետների ընդհանուր թիվը՝ 139, ոչ մի կերպ չի կարելի սպառիչ համարել։ Այդ թիվն

[1] «Դիվան հայ վիմագրության», Բ, էջ 137, 404։

ՏԱԽՏԱԿ

Քանդակազարդող վարպետների, ըստ դարերի, հուշարձանների քանակի և տեսակի, սոցիալական պատկանելության և գործածած կոչումների

Դարեր	Բազալտ	Ֆելզիտ	Այլ	Աշխարհական	Հոգևորական	Գծող	Գործող	Կազմող	Հյուսող	Նկարող	Նկարիչ	Ճարտար	Հորինող	Գրիչ	Քանդակող	Վարպետ	Աշխատող	Ուստա	Առանց նշված կոչման
ԺԱ	1	—	1	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1
ԺԲ	8	8	—	8	—	1	1	1	1	—	—	—	—	—	—	—	—	—	2
ԺԳ	24	27	2	21	3	1	—	7	—	1	3	1	2	2	1	—	—	—	11
ԺԴ	4	2	2	2	2	—	—	—	—	2	1	—	—	—	—	—	—	—	1
ԺԵ	8	8	—	3	4	—	—	3	—	—	—	—	—	—	1	1	1	—	3
ԺԶ	41	107	24	33	7	1	—	63	—	—	9	—	—	—	1	1	—	—	2
ԺԷ	30	28	10	27	3	—	—	28	—	—	1	—	—	—	—	1	—	1	4
ԺԸ	7	8	4	7	—	—	—	8	—	—	—	—	—	1	—	—	—	—	3
Անթվ.	16	10	6	14	1	1	1	8	—	—	1	—	—	—	1	—	—	—	4
	139	199	49	117	22	4	2	118	1	3	16	1	2	3	4	3	1	1	31

արտահայտիչն է մեր ձեռքի տակ եղած առկա նյութերի միայն։

Բացի հազարավոր մանր ու խոշոր քանդակազարդ հուշարձաններից, որոնց վրա վարպետների անվան հիշատակությունները չկան, գոյություն ունեն և բազմաքանակ հուշարձաններ Հայաստանի տարբեր վայրերում, որոնց վրա հնարավոր է դեռևս հայտնաբերել վարպետների անուններ։

Մեր անհատական փորձը, վերջին տարիների ընթացքում, ցույց տվեց, որ արձանագրություն հավաքող նախկին հետազոտողները շատ քիչ ուշադրություն են դարձրել խաչքարերի վրա եղած արձանագրություններին։ Միայն շատ ակնառու, մեծ հուշարձանների նշանավոր կենտրոնում կանգնած խաչքարերն են արժանացել նրանց ուշադրությանը, բայց և այդպիսի դեպքերում էլ արձանագրությունների տակ, կամ կողքերի որևէ անկյունում գտնվող վարպետների անվան համեստ հիշատակությունները հաճախ աչքաթող են արվել։

Ավելորդ չենք համարում մեր ասածները հաստատելու համար նշել հետևյալ փաստը։ Այս աշխատությունը հիմնականում ավարտված էր դեռևս 1955 թվականին, երբ մեզ հայտնի էր քանդակազարդող վարպետների 67 անուն։ Վերջին տարիների մեր պրպտումները Հայաստանի մի մասում միայն այդ թիվը հասցրին 139-ի, գրեթե նախկինի կրկնապատիկը։ Այդ տարիների ընթացքում մենք շրջագայել ենք Գորիսի, Սիսիանի, Ղափանի, Ազիզբեկովի, Նոր Բայազետի, Մարտունու, Վեդիի և Լեռնային Ղարաբաղի շրջանները միայն, հիմնականում պատմական Սյունիքը։ Իսկ դեռ որքա՞ն տեղեր կան ստուգման կարոտ և ինչքա՞ն նոր անուններ անհայտության մեջ։

Քննելով մեր կազմած տախտակի սյունակների մեջ նշված թվերն ու կոչումները, կարելի է անել մի շարք դիտողություններ ու եզրակացություններ։

Նախ պարզ երևում է, որ քանդակազարդողների անուններն ամենից շատ պատկանում են XIII, XVI և XVII դարերին։ XIII դարը մեր ճարտարապետության համար ծաղկման մի նոր շրջան է եղել, առաջին կեսը համատարած Հայաստանի, իսկ երկրորդ կեսը՝ Սյունիքի և լեռնային այլ շրջանների համար։ Այդ պատճառով էլ, բնականաբար, մանր հուշարձաններ-խաչքարեր շատ են կանգնեցվել, որոնց վրա նաև վարպետների ստորագրություններն են մնացել։

Պատմական այլ պատճառների հետևանք է XVI—XVII դարերից մեծ թվով մեզ հասած վարպետների անունների փաստը։ Այդ դարաշրջանից մնացած հուշարձանների ճնշող մեծամասնությունը, որոնց վրա կան վարպետների ստորագրությունները, գտնվում են Հայաստանի լեռնային շրջաններում՝ Սյունիքում. Գեղարքունիքում, Արցախում և այլուր։ Պարսկա-տաճկական երկարատև

պատերազմներն այդ դարերում Հայաստանի դաշտային, և այդ երկու պետությունների սահմանակից վայրերն ավերածությունների էին ենթարկում, այդ պատճառով էլ շինարարական որևէ աշխատանք դառնում էր անհնար։ Լեռնային շրջաններում, որոնք, համեմատաբար, տնտեսական նպաստավոր պայմաններում էին գտնվում, հնարավոր էր մանր հուշարձաններ կառուցել։

139 վարպետների ստորագրությունները գտնվում են նրանց ձեռակերտ 246 հուշարձանների վրա, սակայն այս վերջին թիվը փաստորեն ավելի շատ է, որովհետև տախտակի մեջ մենք մտցրել ենք միայն վարպետների ստորագրություններ կրող հուշարձանների քանակը, իսկ յուրաքանչյուր վարպետի մասին հատվածում ցույց ենք տվել նաև նրա ձեռակերտ այլ հուշարձանները, որոնց վրա ստորագրություններ չկան։ Հիշենք թեկուզ վարպետ Քիրամի օրինակը, որի ստորագրած և չստորագրած հուշարձանների քանակը հիսունից ավել է։ Այսպիսով երբ հարյուրից ավելի հուշարձաններ գտնում են իրենց հեղինակներին և ստույգ թվագրվում, այս հանգամանքը, մեր կարծիքով, սույն բաժնի ամենակարևոր առավելությունն է և խոշոր չափով կօժանդակի հետագա ուսումնասիրողներին՝ մեր արվեստի այս բնագավառը հետազոտելիս։

Նշել էինք նախապես, որ մանր հուշարձանները, և հատկապես խաչքարերն են, որ պահել են ավելի մեծ քանակով վարպետների անուններ և իրոք տախտակի երրորդ և չորրորդ սյունակների հարաբերությունը ցույց է տալիս, որ վարպետների ստորագրությունը կրող 248 հուշարձաններից 199-ը խաչքարեր են և միայն 49-ը «այլք»։ Այս վերջինի մեջ մտնում են շենքերի առանձին մասերում տեղավորված պատկերաքանդակներ, զարդաքանդակներ, տապանաքարեր և այլն։ Այս երևույթը մենք բացատրել էինք նախօրոք. խաչքարը, լինելով անհատական ստեղծագործության արդյունք, կազմող վարպետներն ավելի մեծ իրավունք են համարել դրանց վրա հեղինակային ստորագրություն դնելու։ Հետևաբար ոչ մի կերպ չի կարելի այն սխալ եզրակացությանը հանգել, որ խաչքարեր կազմող վարպետները չեն մասնակցել ճարտարապետական մեծ հուշարձանների կերտման աշխատանքներին։

Խաչքարերի նպատակային նշանակությունը բացատրելիս տեսանք, թե որքան բազմազան նշանակություններով են կանգնեցվել նրանք, և որ մեծ տեղ են գրավում այն խաչքարերը, որոնք շինված են հատկապես շենքերի պատերի մեջ ագուցելու կամ մուտքերն ու այլ ակնառու տեղերը ինչպես ձևավորելու հաճախ նաև շենքերի կառուցողական արձանագրությունները նրանց վրա փորագրելու համար։ Սակայն մեծ թիվ կազմող և ճարտարապետության հետ սերտորեն կապված նման խաչքարերի վրա վարպետների ստորագրությունները շատ հազվադեպ են։ Այս երևույթի պատճառը հասկանալի է. շենքերի մաս հանդիսացող խաչքար կազմող վարպետը ոչ միայն այդ խաչքարն է կազմել, այլև աշխատել է որպես հմուտ քարգործ և շենքի այլ մասերի կառուցող կամ ձևավորող։ Այսպիսի դեպքում նա համարվելով «աշխատավոր» կոլեկտիվի մի անդամը, իրեն չի բաժանում այդ կոլեկտիվից և այդ, եթե միայն խաչքարի վրա իր ստորագրությունը դներ, կստացվեր, որ այլ մասերի իր աշխատանքից հրաժարվում էր, եթե ոչ նյութական, գոնե բարոյական առումով։

Ունենք բացառություն այդ ընդհանուր դրության. նաև սակավաթիվ դեպքեր, երբ ճարտարապետական շենքերի մաս կազմող խաչքարերի վրա ևս տեսնում ենք կազմողների ստորագրությունները. օրինակներից են Գեղարդավանքի գավթում կանգնած խաչքարերի վրա Տիմոթի և Մխիթարի ստորագրությունները, Դեղձնուտի վանքում՝ Պավղոսի և Քառասի ստորագրությունները, Թասա վարպետի ստորագրությունը Շամշադինի շրջանի Վառագա վանքում և այլն։

Սակայն խաչքարեր կազմող արվեստագետների կապը ճարտարապետության հետ դրանով միայն չի սահմանվում. մեր աշխատության «Ճարտարապետներ» և «Քանդակագործ վարպետներ» բաժիններում մեջ են բերված մի շարք օրինակներ ու փաստեր, երբ կազմող վարպետները մասնակցել են և նույնիսկ կառուցել ամբողջ շենքեր. օրինակ Շնորհավոր աղբար քահանան, «Կարնո քաղաքացի Սարգիսը», Սիրանես վարդապետը և ուրիշներ։

Ճարտարապետների և քարգործ վարպետների՝ մեր աշխատության մեջ հայտնաբերված՝ 200-ից ավելի անունների առկայության

դեպքում քանդակազարդողների կապի խնդիրը ճարտարապետական հուշարձանների կերտման գործին, դառնում է հատուկ և շատ կարևոր մի միջոց մեծ և փոքր հուշարձանների թվականները որոշելու այն դեպքերում, երբ այլ կարգի փաստեր չկան։ այդ խնդրի վերաբերյալ և կամ ճշգրտելու այդպիսիները, երբ դրանք շատ որոշ չեն։ Քանի որ յուրաքանչյուր արվեստագետին նվիրված բաժնում մենք աշխատել ենք նրա կերտած բոլոր հայտնի հուշարձանների տեսակները ճշգրտել և պարզել նրանց ժամանակի ու կայերի խնդիրները. դրանք բազմաթիվ են, այդ պատճառով էլ առանձին օրինակներ այդ մասին չենք բերում այստեղ։

Մինչև այժմ մեր ասածները քանդակազարդող վարպետների կապի մասին ճարտարապետության հետ վերաբերում էին այն դարաշրջաններին, երբ ճարտարապետական մեծ հուշարձաններից—շենքերից բացի երևվան եկան նաև քանդակազարդված փոքր հուշարձաններ՝ խաչքարեր, այսինքն IX—XVII դարերին (թեև աշխատության մեջ քանդակազարդող վարպետների անուններ հանդես են գալիս միայն XI դարերից), բայց մինչև այդ, երբ խաչքարերի կուլտուրան արվեստի հատուկ ճյուղ չէր դարձել, քանդակազարդող վարպետները կապված էին միմիայն ճարտարապետության հետ։

Հայաստանի ճարտարապետական հնագույն կոթողները, դեռևս Գառնիի նշանավոր, նախաքրիստոնեական տաճարից սկսած, ծածկված են զարդաքանդակների ճոխ նմուշներով. և՛ V դարի բազիլիկ շենքերը, և՛ VII դարի փառավոր կոթողներն իրենց վրա կրում են զարդաքանդակների սքանչելի նմուշներ։ Այս շրջանում քանդակազարդող վարպետը շենքեր կառուցող կոլեկտիվի անբաժան և կարևոր անդամն էր։ Այդ դարաշրջաններում է հենց առաջ եկել նաև խաչքարի այն տիպը, որը շինվում էր հատկապես շենքերի պատերի մեջ ագուցելու համար. հիշենք, օրինակ՝ էջմիածնի տաճարի հյուսիսային պատին ագուցված խաչքարը, Աղցի դամբարանում գտնվողը և այլն[1]։

Իր ակունքներով ճարտարապետության հետ սերտորեն կապված լինելով՝ քարգործ-քանդակազարդող վարպետը հետագա՝ IX—XVII դարերում էլ մնում է ճարտարապետական կառուցումների էական գործոններից մեկը. սակայն, հատկապես խաչքարերի արվեստի լայն տարածման և ինքնուրույն բնագավառ դառնալու ժամանակներում՝ XII դարից հետո, խաչքարեր կազմող վարպետները դառնում են այդ բնագավառի մասնագետներ։

Հատկապես XIII դարում խաչքարեր կանգնեցնելու սովորությունը մեծ ծավալ է ստանում և հաճախ այնպիսի վայրերում, որտեղ ճարտարապետական մեծ շենքեր չեն շինվել այս շրջանում. բնականաբար այսպիսի դեպքերում խաչքարեր շինող վարպետները դառնում են ինքնուրույն արվեստագետներ. և եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ կան վայրեր, որում հարյուրավոր խաչքարեր իրար կողքի են կանգնած և ժամանակով էլ իրար մոտ շինված, պարզ կդառնա, որ դրանց վարպետները հատուկ մասնագետներ են։ Այդպիսի վայրերից հիշենք Գեղարքունիքի Նորադուզ, Գետաշեն (Ադիաման), Լիճք (Գյոլ) գյուղերը, Հին Ջուղան և ուրիշներ։

Խաչքարեր և այլ մանր հուշարձաններ կերտելու վարպետությունը առանձին մասնագիտություն դառնալու լավագույն ապացույցն է նաև այն, որ XII դարից սկսած այդ վարպետների համար ստեղծվում է իրենց մասնագիտությունը բնորոշող հատուկ կոչում—կազմող, որը XIII դարում դուրս է մղում նախկին բոլոր կոչումները։

Մեր կազմած տախտակի հաջորդ 4 և 5 սյունակները պարզում են քանդակազարդող վարպետների սոցիալական պատկանելության խնդիրը. 139 վարպետից 117-ը աշխարհական են և միայն 22-ը հոգևորական։ Ինչպես հայտնի է, հին պատմական և բանասիրական աշխատություններում հաճախ այն կարծիքն է հայտնվել, որ հոգևորականները միջին դարերում զբաղվել են նաև աշխատանքային գործունեությամբ (Մ. Սմբատյանց, Գ. Հովսեփյան և ուրիշներ)։ Տախտակի թվերը պերճախոս կերպով հերքում են այդ ոչ գիտական պնդումները։

Մեր աշխատության «Ճարտարապետներ» բաժնում տեղ գտած 78 անուններից միայն մեկն է հոգևորական՝ Սամեհան աբեղան, իսկ քարգործ վարպետների 120-ից՝ 18-ը, այսպիսով, 198 վարպետից միայն 19-ն են հո-

[1] Պայմանականորեն ենք սրանց խաչքար անվանում, որովհետև «խաչքար» տերմինը կապված է առանձնակի կանգնած կոթող-խաչքարերի հետ։

գեղարվեստի, մի չնչին թիվ, որի մասին դեռ պետք է հետևյալ վերապահումներն անենք.

Ա. Այն հոգևորականները, որոնք քարգործ արվեստով են զբաղվել, անշուշտ, իրենց այդ մասնագիտությունը ձեռք են բերել դեռևս աշխարհական եղած ժամանակ, և ապա, ինչ-ինչ պատճառներով հոգևորական դառնալով՝ երբեմնակի զբաղվել են իրենց հին արվեստով։

Բ. Քանդակազարդող այդ հոգևորականները իրենց ձեռակերտների վրա ավելի նկարիչ և նկարող կոչումներն են գործածել (Սարգիս վարդապետ նկարիչ՝ ԺԴ դար, Հովհաննես եպիսկոպոս նկարող՝ ԺԶ դ. և այլն)։ Ինչպես գործածված կոչումը, այնպես էլ նրանց ձեռակերտների մեծ մասը, որ պատկերաքանդակներ են, մատնացույց են անում մի կարևոր հանգամանք։ Հայտնի է, որ եկեղեցական-կանոնական օրենքներով կրոնական շենքերի հատակագծային աշխատանքները պետք է հաստատեր և ընդուներ միայն եպիսկոպոսը, ըստ երևույթին կրոնական շենքերի վրա քանդակվող սրբապատկերների գծագրման համար ևս այդպիսի կանոնական սովորություն է եղել։ Քանդակազարդող վարպետների այն 22 անունները, որոնք գրանցվում են մեր աշխատության մեջ, մեծ մասամբ կապված են կամ շենքերի սրբապատկերների հետ, կամ այնպիսի խաչքարերի և այլ հուշարձանների, որոնց վրա քանդակներից բացի նաև սրբապատկերներ կան։ Այս հանգամանքը կարող է հիմք ծառայել ենթադրելու, որ հոգևորականը միայն նկարել և գծագրել է ներկի միջոցով քանդակվող պատկերները՝ կանոնական սկզբունքներով, իսկ այլ վարպետ-քարգործ փորագրել է այն, այսինքն «սև» աշխատանքն է կատարել. ինչպես ապացույց կարելի է նշել «Հավելված» № 35 արձանագրության բովանդակությունը, որտեղ Մելիք Համզեն ասում է. «Ետու կազմել տապանս և նկարել զխաչս», իսկ նկարող Գրիգորիս եպիսկոպոսն ավելացնում է. «Ես Գրիգորէս եպիսկոպոս նկարեցի զխաչս ի խնդրո Փիրհամզին». այստեղ պատվիրատուն որոշակի տարբերում է երկու տեսակի աշխատանք՝ կազմել և նկարել, իսկ եպիսկոպոսն էլ իր հերթին իրեն միայն նկարող է անվանում։ Այս հուշարձանը, որի նկարագրությունը իր տեղում տվել ենք, ունի այն առանձնահատկությունը, որ խաչքարը և տապանաքարը շինված են մի մեծ միակտուր քարից, հետևաբար պետք է դիտել որպես մեկ ամբողջություն, մեկ հուշարձան, որի վրա աշխատել են երկու մարդ, նկարող և կազմող. հենց այդ նկարողի՝ եպիսկոպոս Գրիգորեսի աշխատանքը եղել է խաչքարի ճակատին սրբապատկերների և իշխանական նշան արծվի քանդակի գծագրումն ու ձևավորումը, որոնց քանդակելու աշխատանքը կատարել է կազմողը՝ մեկ ուրիշ վարպետ, որի անունը չի հիշատակված։

Տախտակի հաջորդ 14 սյունակների մեջ տրված են XI—XVIII դարերում քանդակազարդող վարպետների գործածած կոչումները՝ ըստ դարերի և քանակի։ Սյունակների թվերը պարզ ցույց են տալիս 13 զանազան կոչում։ Բայց որովհետև այդ վարպետների անունները գերազանցապես հայտնաբերվել են խաչքարերի վրա, իսկ խաչքարը շինողի համար XII դարից սկսած այդ աշխատանքը հատուկ և առանձնակի մասնագիտություն է դարձել, ուստի ստեղծվել և ամրապնդվել է կազմող կոչումը, այնպես որ կազմողների թիվը հասնում է 118-ի (մեկը կազմիչ ձևով)։

Վարպետ կոչումը, ճարտարապետ իմաստով, հազվադեպ երևան է գալիս, ինչպես տեսանք «Ճարտարապետներ» բաժնում ունեք 1301 թ. («Բուն ճարտարապետ» բաժին)։ Խաչքար շինողի համար, ըստ այս տախտակի, այն հանդես է գալիս միայն XV դարից, և միայն 3 դեպք ունենք։ Օտար, ուստա կոչումը նույնպես քիչ է գործածված, միայն մեկ դեպքում, այն էլ XVII դարում։ Այդ նույն ուստա կոչումը մեր ճարտարապետները ավելի շատ են գործածել՝ 14 անգամ, կրկին XVII դարից սկսած։

«ՀԱՎԵԼՎԱԾ»

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զհայր Սուփան կանգնող սուրբ նշանիս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս. :ՆԺԶ: (967) թուին շինեցաւ սրահս։

Ալիշան, Սիսական, 106։ Ազգ. Հանդ., XXVI, 13։

2. ...(ա)զգին Բագրատունեաց։ Ես՝ Վանենի, դուստր իշխանաց իշխանին Սարգսի, որդո Զաքարէի, կին Արտաշ Թագաւորի, որ կիսաւրէ վախճանեալ խաւարեցաւ զմեզ,

շինեցի զկամուրջս և կանգնեցի զխաչս յիշատակ նմա և մխիթար ինձ և ի կեանս ծնողաց և եղբարց իմոց, յիշեցէք ի ՔՍ. ՅՍ։

Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը*, 185։

3. Եւ ի ։ՈԻԷ։ (1178) թուին, ես Գրիգոր վարդապետ քուերորդի պատրոնացն՝ նոր շինեցի զայգիս եւ կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովաննիսի՝ վասն յիշատակի նորա եւ ինձ։ Որք երկրպագէք յիշեցէք ի Քս. Յս. եթէ ոք յետ մեր զայգիս հանէ յԱ(ստուա)ծածնէէն՝ նզոված է յԱստուծոյ եւ ի խաչէս։

Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը*, 188։

4. Ի ։ՈԽԹ։ (1200) թուականութիւնս ես Զաքարե ամիր սպասալար Հայոց և Վրաց, որդի Մեծին Սարգսի, առի զանառիկ ամրոցս զԱնբերդոյ յաղախնայծին (?) որդոյն Հաքարու, որ... յ ի սմա ի կառուստ քրիստոնէից և յաւէր եկեղեց... և ետու տանել ղնշ[անս]...

Գարեգին արքեպ. Հովսեփեան, *Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ*, Ա, Վաղարշապատ, 1928, էջ 8—9։

5. Ի թվին Հայոց ։ՈԿ։ (1211), ի թագաւորութեան Աղին, ի պարոնութեան Իւանէին ես Քաչաղաւրս շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս։

Ջալալեանց, Բ, 128. Սմբատեան, Գեղարքունի, 487։ Լալաեան, *Ազգ. Հանդ.*, XVIII, 120։

6. Անուամ(բ)ն Ա՟յ. ։ՈՀԵ։ (1226) թվիս, յիշխանութե(ա)ն Աթաբակին Իւանայ, Աւագին, Շահնշահի(ն), ես՝ Մեփարեւս, Խոշաքին սնո(ւ)ցածս, Նորաստո(ւ)ս կացո(ւ)ցի զխս։ Որժամ Աստուծո բարկութեն շարժեցաւ, Սուլտանն Խորասանա կոտորածս բազում արար. Մեփառեալս շինիս խաղակս, Հանի Փասիլս, շինեցի խաչս, կանգնեցի (ի) փրկութի(ւ)ն ինձ, ծնողաց իմոց՝ յեղբ մեզանիս, որք երկրպագեք (յիշեցէք)։

Արձանագրությունը մեր հուշատետրից է, եղած հրատարակություններում տրված է միայն սկզբի մասը, այն էլ թերի և սխալներով. համեմատել՝

Սմբատեան, Գեղարքունի, էջ 484, Լալաեան, *Ազգ. Հանդ.*, XVIII, 116։

7. Կամաւ բարերարին Ա՟յ. կանգնեցա(ւ) (ա)մենայփրկիչս ձեռա(մ)բ Դաւթի. յիշխանութի Տարսաիճին եւ որդոց իւր Լիպ(ա)րտի եւ Ջալալին ի սահմ[ան]ս հողոյ ե(ւ) ջրոյ ։Բ։ գեղ(ե)ր(ո)ց որ ի գլուխս կան վանացս... Շահապնահոլ եւ Սլծալնէ, Սալկուտն և Սէնեկն, Ախենից ճանապարհ ե(ւ) Ծամալին փոսն՝ ջուրն ուրբաթն ապ եւ գիշերն. Միջնատափին՝ շաբ(աթ եւ) կիր(ակին). զոր կո՟ր Գագրաճ եւ այլ տանուտէրաւք կարեցին։ Թվ. ։ՉԼԴ։ (1285)։

8. Ի թվականիս հայոց ։ՉԼԷ։ (1288), յիշխանութեան Պապաքին և Ամիր Հասանայ, ես Սարգիս և որդին իմ Պետրոս շինեցաք զաղբիւրս և կանգնեցաք զխաչս.

Ազգ. Հանդ., XII, 288։

9. Շնորհաւք սուրբ Երրորդութեան և ողորմութեամբ սուրբ Նշանիս, ես՝ տէր Յոհաննէս, նուաստ ծառայս ծառա՟ից Աստուծո՟յ, շինեցի զգրքատունս և սրահն նորին. ածի զպալատն, զլիճն, և ետու կաղմել զմեծածախ պահարանն Բրդաձորոյ սուրբ Նշանին. գնեցի զգեղն Բալայ և ընծայեցի սուրբ Նշանիս. կանգնեցի զխաչս վասն արեւշատութեան Աթաբէգ Ամիրսպասալար պարոն Սադունին և զաւակաց նորա և յիշատակ անանց ինձ և ծնողաց իմոց և եղբարց և հոգեւոր որդւոյ իմոյ Սարգսի վարդապետին. այլ և սահմանեցի ծաղկազարդին Երիցարարացն ։Բ։ ոսկիտակ էրէցն տալ. և միաբանքս ետուն մեկ զատկի ճրագալոյծն. զամէն եկեղեցիքս պատարագել. կատարիչքն աւրհնին։

Ջալալեանց, Ա, 70։

10. Ի թուին ։ՌԺԷ։ (1568) ես Սարգիս վարդապետ կրանաւոր, իմ եղբարաւքս կանգնեցաք զս(ուր)բ խաչս ի ճանապարհի, որ և զուգեցաք զայգիս իւր սնառովքն, որ մին կողմն վանքի մատուռի այգին, մին կողմն բոլոր մեծ այգին, յորոց մէջն մին կարմիր խաչ կայ. մին կոոմն Ժիլանքայ ջուրն է, որ իմ հայրենի ատին էր, տուի վախմն Հաղբատայ (սուր)բ Նշանին։ Ով խափանէ կամ խլել ջանայ՝ յիմոց կամ յաւտարաց, (սուր)բ Նշանի խոովանողին դա. և նզոված է յԱստուծո՟յ և ։ՅԺԸ։ (318) հայրապետացն. ամէն։

Երզնկեանց, *Հնախօս. տեղագրութ.*, 79։

11. ։ՅԼ։ (881) թվականութեանս Հայոց, ես Գրիգոր Ատրներսեհեան՝ Սիւնեաց եւ Աղուանից իշխան, կանգնեցի զսուրբ Նշանս աւգնական հաւատացելոց. որք երկրպագէք սուրբ խա(չ)իս Քսի. զիս յաղաւթս յիշեսջիք։

Ջալալեանց, Բ, 111։ Սմբատեան, Գեղարքունի, 607, Ալիշան, Սիսական, 72։ Լալայեան, Ազգ. Հանդ., XIX, 21։

12. Ի թուականութեան Հայոց ՆԽԵ (=996) ի թագաւորութեան Գագկայ ես Խաչիկ կանգնեցի սուրբ Քրիստափոր։

Լալայեան, Ազգ. Հանդ., XVIII, 117։

ԱՏՈՄ ԳՈՐԾՈՂ

13. Թվ(ին) ։ՈԴ։ ...Ես Մարգարիտ, դուստր Ոխտիկա, կանգնեցի զսուրբ նշանս ի փրկութիւն հոգւոյն Զարգմբերին և Զարտագունին, Մխիթարայ և Կանանին. որք յաղաւթս յիշէք և զԱտոմ, որ գործող էր խաչիս։

Բանանց

Լալայեան, Ազգ. Հանդ., V, 309։ Բարխուդարեանց, Արցախ, 292։

ԱՐՔԱ ԿԱԶՄՈՂ

14. Ի Թուին ՈԼԳ. կանգնեցաւ սուրբ Նըշանս ի բարեխաւսութիւն Թագուհեա, մաւր իմո, որք երկրպագէք յիշեսջիք Քս. Ողորմի Արքաի կազմողի։ ...1184 թ.։

Աշտարակ

ՄԱՐՏԻՐՈՍ ԿԱԶՄՈՂ

15. Կազմողս Մ[ա]րտիր-
ոս յիշեցէք ի Քս.
եւ ծնողսն իմ.
Եւ Ած զձեզ յիշէ.
Ի թվս ։ՈԿԲ։ Ես Ջեպուտ-
ս տէր Վաչին որդին, կան-
կնեցի զայս սբ Գրիգորս [եւ]
սբ. Սարգիս։ Քս. Ած ողո-
րմի իւր հոգոյն եւ (Հեր)-
քնազին, իւրեանց (ծ)-
նողացն։

Մանկուկ

ՀՈՎՆԵՍ ԳԾՈՂ

16. Ի ։ՈԿԳ։ (1214) թուի. այս խաչ կենսատու և նշան սիրոյ հաշտութեան առ մարդիկ. որք երկրպագէք զԱնձրև քահանա յիշեսջիք ի Քս. և զՅովնէս գծող։

Այլուր

Լալայեան, Ազգ. Հանդ., XXI, 98—99։

ԱԲՐԱՀԱՄ ԿՐՈՆԱՎՈՐ ԿԱԶՄՈՂ

17. Թ. ։ՈԿԹ։ (1220). Եւ ի թագաւորութիւնն Լաշին և ի պատրոնութիւնն մեծի... և զարգանալն Շահնշահի և Աւագին, և ի յիշխանութիւնն Վասակայ և որդոյ իւրոյ Բաբաքին։ Ես Գաչան Լաւնեցի կանգնեցի զխաչըս վասն հոգո իմո փրկութեան և ամուսնոյ իմոյ. ով կարդայք յիշեցէք ի Քս. Տր. Ած. ողորմի յիրում գալստեանն. ամէն։ Եւ յԱբրհամ կրաւնաւորս կազմողս յիշեցէք ի Քս. Տր. Ած. ողորմի։ ամէն։

Ծանոթ. Հրատարակիչը թվականը նշում է ։ՌԿԹ։, որն անշուշտ սխալ է, արձանագրության մեջ հիշատակվող անձինք XIII դարի գործիչներ են, ըստ այդմ էլ ուղղում ենք։ ։ՈԿԹ։ =1220։

Լալայեան, Ազգ. Հանդ., XVIII, 152, նույնի՝ Գեղարքունի, 46 (տեղագրություն)։

ՇԱՊՈՒՀ ԳՐԻՉ

18. Ի թուականին ։ՈՀԱ։ կանգնեցաւ խաչս. ով եղբարք զհոգևամեղս Առաքեալ յիշեսէք. տեսմաս գրիչս Շապուհ յիշէ ի Քս. և Աստուած զձեզ յիշեսցէ։

Եղյան

Քաջբերունի, «Փորձ», 1877—78, № 4, էջ 352, Ալիշան, Սիսական, էջ 129։

ԴԱՎԻԹ ԿԱԶՄՈՂ

19. Թ. ։ՈՀԱ։ Ես տ(էր) Յոհանէս առաջնորդ Սանահնիս էտու զԱծածնի ձորին այգին և զտնէրն և զայն հողն, որ ի վերի դեհին է՝ ի հիրատունս։ Որ խափանէ և հանէ՝ յերիս ս(ուր)բ ժողովոյն նզովեալ լիցին. ամէն։

զ Դւթ ։

Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 183։ Խաչքարի նկարը նույն տեղում, էջ 43։

ԵՂԲԱՅՐԻԿ ՆԿԱՐՈՂ

20 Ի ։ՈՀԱ։ թւ. Շնորհիւն Քի ի տերո(ւթ)եան Ածասեր աթաբակ Իւանէի և Շահնշահի և Աւագին ես եղբայրիկ(ս) (ծ)առայ տն իմոյ

Տիգրանայ, նորին ողորմութեամբն շի(ն)եցի զարձանս յիշատակ (ի) (ինձ) և ծնողաց և զաւակ(աց)ս։

Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, Записки Восточного отделения импер. русского археологического общества, т. VIII, вып. II, 1893, стр. 72–73.

ՏԷՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԶՄՈՂ

21. Արձանս այս վանմական՝ է Սոփեստրոսի տէրՍտեփանոսի, կազմեալ ի տէր Յովհաննիսէ, քուերորդւոյ իւրոյ ի թիւ ։ՈՀԳ։ յաղաւթս յիշեցէք վասն տեառն։

Հաղբատ

Լալաեան, *Ազգ. Հանդ., VII—VIII, 414։* Երզնկեանց, *Հնախօս. տեղագրութիւն, էջ 65։*

ԱԲԵԼ ԵՎ ՏԵՐ ԱՎԱԳ ԿԱԶՄՈՂՆԵՐ

22. Ի թվիս ։ՈՂԳ։ Ես Սարգիս քահանայ կանգնեցի զխաչս ի յիշատակ ինձ և որդոց իմոց Եպիփանայ, Եփրէմի և եղբարց Ոււնծ Ալէքսիոսի, Իգնատիոսի և հաւրեղբաւր իմոյ Ոհաննին. արդ որք երկրպագէք, յիշեսջիք զմեզ առ Քրիստոս։ զԱբէլ և տէր Աւագ կազմող խաչիս յիշեցէք ի տէր։

Նոր Կողբ

Բարխուդարեանց, *Արցախ, 385։*

ՎԱՀՐԱՄ ՅԻՇԵՑԷՔ

23. Ի թվ. ։ՉԼ։ Ողորմութեամբ Աստուծոյ, ես Տէրունս որդի Խալլին իմ աղբէրացովս կանգնեցի զխէչս յանուն Գրիգորոյ, որ զուր և դառն մահուամբ ի Քրիստոս փոխեցաւ, որ է պարծանաց և զմարդոյ եղբաւր մեր. որք երկրպագէք յաղաւթս յիշեցէք։ Վահրամ յիշեցէք։

Դսեղ

Լալաեան, *Ազգ. Հանդ., VII—VIII, 384—349, «Նոր դար», 1887, № 136։*

ՎԱՐԴԱՆ ՔԱՐԳՈՐԾ

24. Թվ. ։ՉԼԵ։ Կանկնեցաւ սբ. նշանս բար(ե)խաւս Սաւղբէկի եւ Դաւթ(ի), որդոց Մամիկանց Ուքանա, որ տղա աւրաւք մեռել եւ սուք անմխիթար ծնողացն էթող։ Վարդան քարգործի։

Վարդենիկ

ԽԱՉԱՏՈՒՐ ՆԿԱՐՈՂ

25. Տր ած ողորմեա Խաչատրոյ նկարողի սորա 1287։

Բազարան

Н. Я. Марр, Новые материалы по армянской эпиграфике, Записки Восточного отделения импер. русского археологического общества, т. VIII, вып. I—II, стр. 72—73.

ԽԱՉԱՏՈՒՐ

26. Որք երկրպագէք ասացէք վասն Քսն Տէր ած ողորմեա Խաչատրո։

Բազարան

Կոպէ. *Ազգ. Հանդ., Ա, էջ 46—47։*

ՍՄԲԱՏ ՊԱՏԱՆԻ

27. Ես Սանէս (թերևս Յովհանէս), կանգնեցի՝ զխաչս բարեխօսութիւն ինձ և եղբաւր մեր. ձեռամբ բարեմիտ պատանի Սմբատայ որդւոյ մեր, որք կարդաք յիշեցէք ի Քրիստոս թ. ։ՉԽ։

Գյուլլի դուզ

Ալիշան, *Սիսական, 141։*

ԳՐԻԳՈՐ ՇԻՆՈՂ

28. Ողորմեա ծառային քո Գրիգորի շինողի. ամէն. տէր Աստուած, Յիսուս Քրիստոս։ ։ՉԽՁ։ ամէն ողորմեա ծառային քո Յովհաննէսին, Գասպարին։

Տաթև

Ալիշան, *Սիսական, 79։*

ԳՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԱՇԽԱՏՈՂ

29. ։ՊԾԲ։ Այս արձան գերահրաշ կենսունակն... ածեալ արեամբ արարչին Յի. զոր կանգնեաց Խաչիկ ի վերայ գերեզմանի հաւրեղբաւրն (իւր) Պետրոսի, առաջնորդի սբ. ուխտիս, զոր տարաշխարհիկ եղեալ փոխեցաւ (ի տէր) և վասն ոսկերաց իւրոց պատուիրեաց. եղբայրն իւր Վարդան մեծաւ աշխատանօք բերեալ հանգուցին ընդ հովանեաւ սբ. Նշանիս. որք երկրպագէք զվերջացեալս ի բարեաց, զաշխատողս սորայ զԳորգ քահանայ յիշեսջիք ի Քր. և Ած. զձեզ (ողորմեա)։

Վարազ

Լալաեան, *Ազգ. Հանդ., XXI, 62—63։*

ՍԻՄԵՈՆ ՎԱՐԴԵՏ ՔԱՐԳՈՐԾ

30. Կանգնեցաւ սբ. Նշանս ի բարեխաւսութիւն պր. Սիմէոնին և հայրն պր. Սիրամիրին, մօրն մելիք խ(ա)թ(ուն)ին և կողակցին և զաւակացն: Թվ. ։ՊՁ։ (=1431 թ.)։ Ձեռագործ է Սիմէօն վարպետին: Յիշ(ատակ) է քարխանաճի Սիմէին: Յունվարի ։Ժէ։

Ն. Նախիջևան

Շահխաթունեանց, *Ազգ. Հանդ.*, VII—VIII, 51, Ջալալեանց, *Բ*, 466։

31. Սբ. Նշանքս բարեխաւս է Սիմէօն քահ(ա)նին և իր երեցկնոջն Էմին մել(ի)-ք(ի)ն և իւրեանց ծնողացն. Թվ. ՋԺԳ։ (=1464)։ Ձեռամբ ք(արգործ) Սիմէօնին։

Ն. Նախիջևան

Շահխաթունեանց, *Ազգ. Հանդ.*, VII—VIII, 59։ Ջալալեանց, Բ, 466 (*սխալմամբ գրել է՝ «Ձեռամբ Աւետիք արեղին»*)։

ԳՐԻԳՈՐ ԿԱԶՄՈՂ

32. Թվ. ։ՊՁԳ։ (Ես) հայոց կաթողիկոս տէր Զաք[ա]րիայ կարողութեամբն Աստուծոյ կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգւոյս իմոյ. որք երկրպագանէք յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս: ԶԳրիգոր կազմող սուրբ խաչիս յիշեցէք ի Քրիստոս։

Աղբամար

Փիր. Նոտարք, 103. Սարգսեանց. 278. *Ազգ. Հանդ. Ի*, 210. Սրվ. *Թորոս-Աղբար*, 415։

ԱՎԵՏԻՔ ԱԲԵՂԱ

33. Սուրբ նշանքս բարէխօսէ Սիմէօն քահանային և երիցկնոջն իւր Մելիքին, և իւրեանց ծնողացն: Թվ ։ՋԺ։ Ձեռամբ Աւետիք Աբեղային։

Ն. Նախիջևան

Ջալալեանց, *Բ*, 466։

ՀԱՅՐ ՀԱԿՈԲ

34. Յիշատակ է սուրբ Նշանս Ահարոն քահանային և Տօնիկին և Ներսէսին և կողակից Մարթա խաթունին և իւր որդւոյն Յովհանէսին: Թուին ։ՋԼ։ Ձեռամբ հայր Յակոբին։

Ն. Նախիջևան

Ջալալեանց, *Բ*, 465 (*թիվը սխալ՝ ։ՋԸ։*). *Ազգ. Հանդ.*, VII—VIII, 49—50 (*Ձեռամբ Հարակոբին*)։

Դ Ա Վ Ի Թ

35. Թվ. ։ՋԼ։ յանուն Աստուծոյ ես Մամնայս կանգնեցի զխաչս ի տէրութեան ժամանակի իմոյ յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամուսնոյն իմոյ Սիրունկայ և որդւոյ իմ Սարգիսայ և դստերն իմոյ Մամախաթունայ, Նփաղհաճայ, եղբաւրն Սիրունկայ. կանգնեցաւ խաչս բարեխաւսութեան հոգոց մերոց: Ով կարդայ այս Դաւիթս յիշեսցէ առ Աստուած...

Ղալաֆենդ

Բարխուդարեանց. *Արցախ*, 307։

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍ. ՆԿԱՐՈՂ

36. Ես Մ(էլի)ք Համզէս որդի... Ետու կազմել տապանս և նկարել զխաչս. որք կարդա:ք յի(շեցէք)։ (Ջ)ԾԴ։ Ես Գր(իգոր)էս եպ(իս)կոպ(ո)ս նկարեցի զխաչս ի խնդրո Փիրհամզին ի փրկութի. հոգո որդոյ իւրո Ջաւհրապին.

Կարմիր

Շահխաթունեանց, *Բ*, 537։ Սմբատեան, *Գեղարքունի*, 494—95։ Ալիշան, *Սիսական*, 50։ Լալաեան,. *Ազգ. Հանդ.*, 135։

ՄԿՐՏԻՉ ԵՎ ՎԱՐԴԻԿ ԿԱԶՄՈՂՆԵՐ

37. Թիվ. ։ՋԿԴ։ (1515)

Ես Պէկէշէ-	*Զմկրտ-*
ս կանկ(ն)եցո-	*իչ կազ-*
ւ ցի զխա(չ)ս փր-	*մողս իշ-*
կութի հ(ո)գո(յ)ն Գո-	*եցէք.*
գորին։	*զՎարդ-*
	իկս իշ-
	եցէք ի
	Քս։

Նորադուզ

ԱԿՈԲ ՆԿԱՐՈՂ

38. Կամաւն Այ. ես Էխանս, Բացխս, Ըռստամս, Միրզէս, եղբարքս միաբան, շինեցինք տապանս հաւր մեր Փիրնտարին, որ ։Է։ տարէն աւեր գեղս շնաց[1]. Թվ. ։ՋՂԸ։ (1549)։ Ակոբ։

Անգեղակոթ

---

[1] *Փոխանակ* շինեց, *գրված է* շնաց, *գուցե հնարավոր լինի* շէնացրեց *վերծանել, որն այստեղ նույն իմաստն ունի մասամբ*։

39. Ես Միրաղէս, Հէկալս կանկ(նե)ցի(նք) խ(ա)ձս[1]. թվ. ՌՂԸ: (1549) Ակոբ նկարող:
Անգեղակոր

ՄԱԹԵՈՍ ԵՐԵՑ ԿԱԶՄՈՂ

40. Ես Աթանէս կանկ(ն)եցի զխաչս յի-շա(տակ) ինձ, յաղգին իմ, հաւրն իմ. Միրանշին, Հերապետին, Խոցայդեղին, Ներսեսին, Ոսկանին, Վարդանին, Բարին, Գրիգորին, Սավին, Գլու(մ)շահին: Կազմողս Մաթէոս է-րէ(ց)ս.

Թվ. ՌՂ:
Մարտունի

ԻԳՆԱՏԻՈՍ ԵՎ ՀՈՎԱՆԵՍ ԿԱԶՄՈՂՆԵՐ

41. Ս(ուր)բ խ(ա)չս բար(է)խաւս Վէլա-թին եւ ծն(աւ)ղաց նորին Միրանշին եւ Եղի-սաբեթին: Թվ. ՌՃԶԴ:

Իգնատիոս Յովանէս կազմող
Նոր Բայազետ

42. Ս(ուր)բ խ(ա)չս բարէխաւս Մարտի-րոս քահանա[ին]: Յոհանէս կ(ա)զմ(ող)
Նորադուզ

ԱԿՈԲ ՆԿԱՐՈՂ, ԿԱԶՄՈՂ

43. Ս(ուր)բ, խ(ա)ձս[2] բարէխաւս Վէլու-մին. կազմող Ակոբ. Թվ. ՌՂԹ:
Վաղաշեն

44. Այս է հանգիստ Տրոմին, որ էր որդի Պ(ա)ր(ո)ն Միրզաջանին, եղբար պ(ա)-ր(ո)ն Մելիք պէկին, փոխեցաւ ի Ք(րիստո)ս. նորին ՌՂ: թվին: Ակոբ կ(ա)զ(մո)ղ:
Մեծ Մազրա

---

1 Խաչս բառը այստեղ էլ խաձս ձևով է գրված:

2 Ակոբ կազմողի այս վեց արձանագրությունների մեջ հինգ անգամ հանդիպող խաչս բառը չորս անգամ գրված է խաձս ձևով: Այս երևույթը XVI դարում շատ տարածված է Վայոց ձորում և Գեղարքունիքում: Դժվար է ենթադրել, որ պաշտամունքի հետ կապված և ամենօրյա գործածական մի այդպիսի բառ կարող էր հնչվել ոչ սովորական ձևով. մնում է ենթադրել, որ այդ տառերի գրչության շփոթությունն է տարածված եղել այդ վայրերում: Մեզ հայտնի են արձանագրություններ, որոնց թվականների մեջ ևս Զ-ն փոխարինված է Ձ-ի, որը վերջին տասով հաշվելիս ժամանակագրականորեն չի զուգադիպում նույն արձանագրության մեջ հիշատակված պատմական անձնավորությունների ապրած կենսագրական ժամանակների հետ: Տե՛ս «Ճնորհավոր վարդապետ» բաժինը:

45. Ես Մանվէլս կ(ա)նկ(նե)ցի խ(ա)ձս Բարսեղ ք(ա)հ(ա)ն(ա)յին Թվ. ՌՂԱ: զկ(ա)զ-մող Ակոբի:
Ն. Գետաշեն

Սմբատ. Գեղարք. 531. (սխալ վերծանմամբ՝ Բարեխավս Եղկոնին և ՌՂ: Լալայան, Ազգ. Հանդ., XVIII, 145 (նույն սխալներով):

46. Կամաւն Ա(ստուծո)յ. ես Գրգորս... կ(ա)նկ-(նե)ցինք խ(ա)ձս հա(ւ)րն. Ակոբ նկարողի
Ն. Գետաշեն

Սմբատեան, Գեղարքունի, 531 (կրճատ). Լալայան, Ազգ. Հանդ., XVIII, 145 (կրճատ).

47. Ես Էլաղես կանկն(ե)ցի խաչս հաւր Մելիք Միրզին: Թվ. ՌԽԴ:

Ակոբ նկ(ա)ր(ո)ղ:
Եղանոս

48. Ս(ուրբ) խ(ա)ձս բարէխաւս Շահովա-րին

Ակոբ
Վ. Ղարանլուղ

ԱԼԵՔ ԿԱԶՄՈՂ

49. Մանուելին ու Մանուսին, Մուքայե-լին քահանայ ին: Կամաւն Ա(ստուծո)յ Եղէկէլս կանկ-(նե)ցի խ(ա)չս ի փրկութի հոգոյ իմոյ եւ որդոցն իմոց: Զկազմող Ալէք թվ. ՌՂ:
Վարդենիկ

ՄԵԼԻՔՍԵԹ ԿԱԶՄՈՂ

50. Ս(ուր)բ խաչս բարե[խաւս... Այ... Մե(լի)քսէթ կազմող. թվ... ՌՂ:
Կարմիր

51. Ես Միրաք կանկ(ն)եցի խաչս Դաւլա-թին. Մելիքսէթ կազմող. թվ. ՌՂԵ:
Կարմիր

52. Ս(ուր)բ խաչս բա(րեխ)աւս Մէլիք աղային

Եւ իւր ծնաւղացն. թվ. ՌՂԸ: Մելիք-սէթ կազմող յի(շեցեք):
Կարմիր

53. Կամաւն Ա(ստուծո)յ Մէլիք Պարէքս, պարոն Մերհապս կա(ն)կնացուցի ս(ուր)բ խ(աչ)ս Տ(է)ր Բարսեղ(ին) Թվ. ՌՂԸ: (1549):

Մելէքսէթ կազմո[ղ]:
Սարուխան

54. Ս(ուր)բ խ(ա)չս բարեխաւս Եղիսայ-
բեթին.

Մելիքսէթ կազմող: Թվ. :ՌԴ:

Նորադուզ

55. Կամաւն Այ. ես Մելիք Բարէքս կանկ-
նեցի զխաչս վասն փրկութե. Հոգոյ իմոյ.
Մել(ի)քսէթ կազմող: Բարէքին է խ(ա)չս:

Նույնի թիկունքին.

Կամաւն Այ. [ես] Մելիք
[Բարէքս, եղ]բայր իմ
զՍ(տ)եփանոս քահանէն,
որդին իմ Գունկչայ բէկն,
հարն իմ Գունտուզ աղէն,
եկինք Գանձակա, շինեց-
ինք կարմու(ն)ճս, շինեցինք
շրջայպատս, կանկնեցինք
զխաչերս: Որք երկր-
պագէք յիշեցէք ի Քս:

Նորադուզ

Սմբատեան, Գեղարքունի, 484: Լալայեան, Ազգ. Հանդ., XVII, 118:

56. Ս(ուր)բ խաչս բարեխաւս ....փաշին:
Մ(ե)լիքսէթ կազմող յի(շեցէք): Թվ.
:ՌԺԶ: (1567).

Կարմիր

57. Ս(ուր)բ խաչս բարեխա(ւ)ս Գրիգորին
և կազմող Մէլի(ք)սէթ(ին): Թվ. :ՌԽԴ:

Նորադուզ

58. Խաչ(ս) բարէխա(ւ)ս Մարմոս ե-
պ(ի)սկապ(ո)սին. Մելիքսէթ կազմո(ղ):

Նոր Բայազետ

ՀՈՎԱՆԵՍ ԿԱԶՄՈՂ

59. Կամաւն Այ. ես տանուտէր Սարգիս
կանկ(ն)եցի խաչս բարէխաւս ի(նձ) Յովա-
նէս կազմ(ող) Թվ. :ՋՂԱ: (1542):

Լճաշադրյուր

60. Կամաւ Այ. և ողորմութ(եամբ) Քի.
Համազիզ աղէս կանկնեցի խ(ա)չս եղբաւրս
իմ Սարգիս աղին:

Թվականս Հայոց: :Ռ: (=1551) կազմող
Յովանէս:

Լճաշադրյուր

ՎԱՐԴԱՆ ԿԱԶՄՈՂ

61. Ես Վարդան[ն] Տոթս կազմե(ց)ի սբ
(խ)աչս խ(ա)չ(ա)տուրին. ով կ(ար)դ(ա) յի-
շէ ի Քի մոր իմոյ Ուլուխաթունին, իմոյ
տոստաղայ քվերն: Թվ. :ՋՂԴ:

Գյոզարաս

Ջալալեանց, Բ, 137—137. Ալիշան, Սիսական, 111,

62. Սբ. խաչս բարէխաւս կաեցա... և որ-
դոյն իւրոյ: Ես Վարդան կազ(մ)եցի Թվ. :ՋՃ:
(1551)

Գնդեվանք

ԱՆՏՈՆ ԵՐԵՑ ԿԱԶՄՈՂ

63. Ս(ուր)բ խ(ա)չս բարեխ(աւ)ս Ալդու-
նին:

Ած ողորմի տր Կերակոսին, Անդոն իրի-
ցին. խ(ա)չս կազմեցի: Թվ. ՋՂԹ: 1550 թ.:

Ա(յ)ս է հանգ(իստ) Մո(ւ)րատին
Սադիլմիշին.

Ես Մարիանս... . կա(ն)կնեցի զխաչս
իմ որդի Ալդունճանին:

Ջինջիրլու

ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ

64. Թվ. :Ռ: Ես էտիլխանս կանկնեցի սբ
խ(ա)չս եղբ(ա)ր Ակոբին: Ք(ի)րամ:

(Տեղ չլինելու պատճառով կոչումը չի
գրել):

Երանոս

65. Ս(ուր)բ խ(աչ)ս բարէխաւս Գրիգոր
աղին Թվ. :ՌԼ:

Ես Քիրամս խ(ա)չս կազմեցի:

Ն. Գետաշեն

Սմբատեան, Գեղարքունի, 531—32: Լալայեան, Ազգ. Հանդ., XVIII, 145 (երկու հրատարակիչներն էլ գրել են սխալ թիվ՝ ՌԻԴ=1575):

66. Սուրբ խ(աչ)ս բ(ա)րէխ(աւ)ս Մէլիք-
պէկին Թվ. :ՌԼԱ:

Քիրամ կազմող.

Նորադուզ

67. Ս(ուր)բ խաչս բ(ա)ր(է)խա(ւ)ս, Խա-
նում աղին.

Քիրամ կազմողս. ի Թվ. :ՌԼԱ:

Նորադուզ

68. Քիրամ կազմող, Աբին.
Թվ. :ՌԽ: (1591):

Եղվարդ

69. Խաչս բարեխաւս է Ճիլավ խանին.
Քիրամ կազմողս. Թվ. ։ՌԽԲ։
Երանոս

70. Ս(ուր)բ խաչս բարէխաւս
Քիրամ կազմող. Թվ. ։ՌԽԲ։
Նորադուզ

71. Ս(ուր)բ խաչս բարէխաւս է Մկրտչին.
Թվ. ։ՌԽԲ։ Քիրամ կազմող։
Ն. Գետաշեն-Իշխանագյուղ
Լալայեան, Ազգ. Հանդ., XVIII, 147։

72. (Սուր)բ խաչս բարէխաւ(ս է) Ծատուր[ին] Թվ. ։ՌԽԴ։
Քիրամ կազմող.
Նոր Բայազետ
Սմբատեան, Գեղարքունի, 458։

73. [Սու]րբ Նշանս բարէխաւս Հախնազարովին Թվ. ։ՌԽԵ։
[Քի]րամ կազմող։
Նոր Բայազետ
Սմբատեան, Գեղարքունի, 58։ Լալայեան, Ազգ. Հանդ., XVIII, 111։

74. [Սուրբ խ]աչս բարէխաւ(ս) Վարդուհին.
Քիրամ կազմող/Թվ. ։ՌԽՋ։
Նորադուզ

75. Ս(ուր)բ խաչս բարեխա(ս) Ատխաթէկին. Թվ. ։ՌԽԸ։
Քիրամ կազմող։
Նորադուզ

76. Ս(ուր)բ խաչս բարեխա(ս) Աւ(ա)գ խաթո(ւնին).
Քիրամ կազմող. Թվ. ։ՌԽԸ։
Էջմիածին—Գայանե

77. Այս է հա(ն)գիստ Նիկօղոսին, Թումաին. ս(ուր)բ խաչս բարեխա(ս) Սարգիսին եւ ննջեցելոց. Ս(ուր)բ խաչս բարեխա(ս) Ալանէսին. Թվ. ։ՌԽԹ։
Քիրամ։
Բատիկյան

78. (Սուրբ) խաչս բարէխա(ս) Ուլուխանի.
Քիրամ կազմող. Թվ. ։ՌԽԹ։ (1600)։
Նորադուզ

79. Ս(ուր)բ խաչս բարէխա(ւ)ս Ուզուրլու հոգ(ոյ)ն.
Քիրամ կազմող. Թվ. ։ՌԾԱ։
Կարմիր

80. Ս(ուր)բ խաչս բարէխա(ս) Վարդումին եւ Հող. . . . ցին, Մարիամին.
Քիրամ կազմող. Թվ. ։ՌԾԴ։
Արծվաքար-Զոլաքներ

81. Ս(ուր)բ խաչս բարեխա(ս) Ակոբ....
Քիրամ կազմող. Թվ. ։ՌԾԵ։
Նորադուզ

82. Ս(ուր)բ խաչս բարէխաւ(ս) Հակոբ Էպի(ս)կ(ոպոս)ին
Քիրամ կազմող։
Նորադուզ

83. [Սուրբ] խաչս բարէխաւս Բարէքին....
Քիրամ կազմող
Նոր Բայազետ

ՍԱՐԳԻՍ ԵՐԵՑ ԿԱԶՄՈՂ

84. Կամաւն ԱՅ. ես Սարգիսս կանգնեցար ս(ուր)բ խ(ա)չս Թիվ. ։ՌԱ։ 1552։
Ես Սարգիս էրէցս կազմեցի խ(ա)չս հոգոյ իմ և կողակցին իմոյ Մելիքխաթունին և ։Դ։ որդի իմ փոխեցան ի Քս. աւետարան(ի) հր(ամա)նք է ամեն ցաւէ փախացիկի պիտի, մահովն տեսանք փախացն ապրէց, նստածն մեռաւ. բաւ է իմաստից։
Սմբատեան, Գեղարքունի, 618. Լալայեան, Ազգ. Հանդ., XIX, 14. Երկու հրատարակիչներն էլ արձանագրության վերի երկու տողը բաց են թողել, ապա կազմեցի բառը կանգնեցի վերծանել, որով կարել է Սարգիս երեցի վարպետ լինելու հանգամանքը։
Ակունք

ՄԱՆՎԵԼ

85. Ած. ողորմի Գուլաղին. ամէն։
Ա(ստուծ)ավ մեր Միրզաբէկս կանկնեցաք խ(ա)չս փրկութի. հոգոյն Գուլաղին, էր մեր կողակից։ Թվ. ։Ռժ։ 1561. Մանվել։
Բասարգեչար

ԴԱՎԻԹ ՆԿԱՐՈՂ

86. Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւ)ս Մրկրտչին Թվ. ։ՌԼ։ Դաւիթ նկարող։
Լիճք

ՆԵՐՍԵՍ ՆԿԱՐՈՂ

87. Ա(յ)ս է հանգիստ Դիվանին. Թվ. ՌԻԵ: Ներսէս նկարող:

Վ. Ղարանլուխ

ԱՌԱՔԵԼ ԵՎ ՄԵԼԻՔՍԵԹ ԿԱԶՄՈՂՆԵՐ

88. Ս(ուր)բ նշանս ակրունական պահայ-պանէ պ(ա)ր(ո)ն Ա(ստու)ածատուրին: Յս. Քս. Տր. Ած.

Առաքե(լ) Մելիք(սէ)Թ. Թվ. ՌԻՋ:

Նոր Բայազետ

Սմբատեան, Գեղարքունի, 57 (առանց կազմողների անունների): Լալաեան, Ազգ. Հանդ., XVIII, 111 (առանց կազմողների անունների):

89. Ս(ուր)բ խաչս բարէխաւս է պ(ա)-ր(ո)ն Թաճումին Առաքել Մելիքսէթ կազ-(մող):

Նոր Բայազետ

Սմբատեան, Գեղարքունի, 58: Լալաեան, Ազգ. Հանդ., XVIII 112:

ՏՐԴԱՏ ԿԱԶՄՈՂ ԹԵՐԱՏԱՃ

90. Սուրբ խաչս բարեխաւս պարոն Կուլաղին. Թվին ՌԻՋ:

Տրդատ կազմողս Թերատաշ:

Նոր Բայազետ

Սմբատեան, Գեղարքունի, 58: Լալաեան, Ազգ. Հանդ., XVIII, 111,

ՂՈՒԿԱՍ ԿԱԶՄՈՂ

91. Թվին ՌԾԵ: Ես Վ(ա)րհ(ա)մս, Բայխ(ա)նս, Մ(է)լք(ու)մս, Գ(ա)լդէանս (դուցե Գուլաղէաս) կ(ա)նկն(եցա)ք ղխ(ա)չս՝ Բ(ա)ր(է)խ(աւ)ս մեզ եւ ծն(ող)աց մերոց Բ(ա)յին եւ կ(ո)ղ(ա)կցին. Փաշայ Բ(է)կում. եւ որդոցն Մէլք(ու)մին. եւ Գ(ա)սպ(ա)րին. յիշեցէք ի Քս:

ՋՂ(ու)կ(ա)ս կ(ա)զմողս յիշեցէք ի Քս.

Անգեղակոթ

ՈՒՍՏԱ ԱՎԱԳ

92. Այս է հանգիստ Առըստամ(ի) տղա Սարգիսա, Գիրեց(ին)ք Թվ(ա)կ(ա)նիս ՌԾԸ: էր, որ այս ս(ուր)բ խաչս փրկութի(ւ)ն հոգոյն ս(ո)ց(ա) Սարգիսա. Ռըստամ իմ հայր Սարգիս իմ մայր Թարվիզ... Ուստա Աւաք բազում աշխատեցի:

Արծվանիկ

ՎԱՆԱԿԱՆ ԵՐԵՑ ԿԱԶՄՈՂ

93. Թվ. ՌՀ: (1621): Ես Վանական է-ր(է)ցս կ(ա)զմեցի ս(ուր)բ խ(ա)չս որդոյն իմ Ա(ստուա)ծ(ա)տուրին:

Ն. Ալուչալու

ՄԻՐԶԱ ԿԱԶՄՈՂ

94. Ս(ուր)բ խաչս բարեխաւս Միրզին, իր կողայկիցին. Թվ. ՌՀԼ: որդի(ն) մեռավ.

Միրզա կազմող.

Մոլսկ

Լալաեան, Ազգ. Հանդ., XIX, 12 (խիստ աղճատված և կցկտուր):

ԳՐԻԳՈՐ ԵՐԵՑ ԿԱԶՄՈՂ

95. Սուրբ խաչս բար[ե]խաւս է Ասլանին Թվ. ՌՁՂ: կողակիցն իւր Լալփերավզիկ? [Գ]րի[գ]որ էրեց կ[ա]զմ[եա]ց.

Վրաստան

Լ. Մելիքսեթ-Բեկ. Վիրահայոց վիմական տարեգիր, № 136 (ձեռագիր աշխատություն):

ԱՆԱՆԻԱ ԿԱԶՄՈՂ

96. Ս(ուր)բ խ(ա)չս բարեխաւս Ատիպէկին. Անանիայ կազմող խ(ա)չիս. Թվ. ՌՂԸ:

Թիկունքին՝

Կ(ա)մ(ա)ւն Այ ես Պալիս կանգնեցի խաչերս յիշատակ հաւրն իմ Գոկին, որդոյն Ատիպէկին: Թվ. ՌՂԸ: (1649):

Դաշքենդ

Լալաեան, Ազգ. Հանդ., XIX, 17 (սխալմամբ թվականը նշում է 1559):

ՈՎԱՆԵՍ ԵՎ ԶԱՔԱՐԱ ԿԱԶՄՈՂՆԵՐ

97. Ս(ուր)բ խաչս բարէխաւս Քասպարի որդի Արեճանին, Թվ. ՌՃ: (1651)

Ովանէս կազմող Զաքարայ:

Նորադուզ

ՀՈՎԱՆԵՍ ԵՎ ԱՎԱՆԵՍ ԿԱԶՄՈՂՆԵՐ

98. Ս(ուր)բ խ(ա)չս բարէխաւս տանուտ(է)ր Յակոբին. Թվկ. ՌՃԲ: (1653)

Յովանէս կազմող Ավանէս:

Նորադուզ

ԱՎԱՆԵՍ ԿԱԶՄՈՂ

99. Ս(ուր)բ խաչս բարէխաւս Ակոբի որդի տանուտ(է)ր Սարգիսին.
Ավանէ(ս) կազ(մ)եց.

Նորադուզ

100. Ս(ուր)բ խ(աչ)ս բար(է)խ(աւ)ս Ովանէս ք(ա)հ(ա)ն(ա)յին։
Ավանէ(ս կազ(մ)եց.

Նորադուզ

ԱՎԱՆԵՍ ԿԱԶՄՈՂ

101. Սուրբ խաչս բարեխաւս Բարսեղ քահանային. Թվ. ։ՌՃՁ։
Ես Աւանէս կազմեցի։

Ն. Գետաշեն

Սմբատեան, *Գեղարքունի*, 532։ Լալաեան. *Ազգ. Հանդ.*, XVIII, 145։

102. Ս(ուր)բ խաչս բ(ա)րէխօս Զօրայպխանին. պ(ա)ր(ո)ն Նանս տուի կազմիլ. Քլտաղեցի։
Ես Ավանէս կազմեցի.

Ն. Գետաշեն

ԲԱՂԴԱՍԱՐ ԵՎ ՄԵԼԻՔԲԵԿ ԿԱԶՄՈՂՆԵՐ

Խաչքարի թիկունքին՝

103. Թվին ։Ռ։Ճ։Է։ էր (1658) ի կամակցութբն Այ եւ /հոգեբարձութբն Գրիգորի/ քաջ բարունոյ՝ հօր/եղբօր մերոյ, ես Նուաստ/ Ներսէս էրէցս եւ եղբայրս /իմ Պաղի, որդիք Արիստակէս քահանա/յին, որդոյ Թումա Քահանա:ի, որդո /պարոն Մելքոնին, Թոռին մեծին/ Ջահնշին, յուսով մեծաւ կա/նգնեցաք զսբ խաչս ի փրկու/թի հոգոյ հօրն մերոյ. /Որք հանդիպիք յիշեցէք) ի Քս։

Ճակատի շուրջը, ուռուցիկ տառերով

104. Այս արձան ներկ/եալ յարեամբն Փրկչին կանգնեալ վասն Արիստակէս/քահանաի հոգոյ փրկութե.
Յանարժան Բաղտասար Մելիք/պէկ կազմող։

Աղբիլիսա

Լալաեան, *Ազգ. Հանդ.*, XIX, 30. *սխալմամբ համարել է տարբեր խաչքարերի վրա գրված և երկու արձանագրություն։*

ՄԵԼԻՔԲԵԿ ԵՎ ՊԱԼԱՍԱՆ ԿԱԶՄՈՂՆԵՐ

105. Ս(ուր)բ խ(ա)չս բարեխօս Զաքարին եւ կենակցին։ Տր. Ած. Թվին հայոց ։ՌՃԺԴ։ (1665)։

Կամաւն Այ ես Վարդանս, եղբարն իմ Գրիգորն կանգնեցաք խ(ա)չս բարէխաւս հօրեղբօրն մերոյ Զաքարին եւ կողակցին Նանէրին։ Իշ(ե)ց(է)ք ի Քս. Թվ. ։ՌՃԺԴ։ (1665)։
Յիշեցէք անարժան Մելիքպէկ
Եւ Պալասան կազմող խաչիս։

Վ. Ղարանլուխ

Սմբատեան, *Գեղարքունի*, 538 (*սխալ հաշվով թվականը նշանակել է 1668*)։ Լալաեան, *Ազգ. Հանդ.*, XVIII, 152 (*միայն սկզբի մասը*)։

ՄԵԼՔՈՆ ԿԱԶՄՈՂ

106 ։ՌՃԺԶ (1667) ի հայրապետութեան տ(եառ)ն Պետրոսի կաթողիկոսին ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս կանգնեցի զխաչս ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմ տէր Յաւհաննէսին, Էղիսաբէթին և միաբանիցս, որք աստ կան հանգուցեալ և որք ընթեռնուք յիշեցէք ի Քրիստոս զՄելքոն կազմաւղս։

Չարեք անապատ (Ադրբեջան)

Ջալալեան, Ա., *166*։ Լալաեան, *Ազգ. Հանդ.*, V, 339,

ՍԱՐԳԻՍ ՎԱՐՊԵՏ

107. Կանգնեցաւ սբ. Նշանքս ի բարեխօսութիւն մ(ա)հդ(ե)սի Յովհաննիսին և կենակցին... Պիքային, որդոցն Գրիգորին, Ստեփանոսին և Մինասին. դստերացն՝ Խասպէքային և Պահարին և հաճի մօրն և Շիրին և ամենայն զարմիցն. Թուին ։ՃՌԼԵ։ (1686) Ձեռամբ Սարգիս վարպետին։

Ն. Նախիջևան

Լալաեան, *Ազգ. Հանդ.*, VII—VIII, 63։

ՕՀԱՆԵՍ ԿԱԶՄՈՂ

Թիկունքին՝

108. Շնորհիւն Այ /ես Թամրազս տր. Մ/ուսէս, Ալայպէկս, Ղարագուզս մի/ասան կանկնեցինք խա/չս բարեխոս տր Սհակ/ին՝ հօր մերո. եւ մար մ/եր Հմաին, Թոռ Նիրա:եյին. իշ/եցէք ի Քրիստոս.

ծ ա կ ա տ ի շ ու ր ջ ը, ո ւ ռ ո ւ ց ի կ տ ա ռ ե ր ո վ.

Սբ խաչ/ս բարէխոս տր Սհակին. ես Օ-հ/անէս կազմող. Թվ. ։ՌՃԽԷ։ 1698)։

Մեծ Ղարաղոյունլու
Սմբատեան, *Գեղարքունի*, 630։ Լալաեան, *Ազգ. Հանդ. XIX*, 20։

ԱՎԱՆԵՍ ԿԱԶՄՈՂ

109. Այս է հանգիստ Սահակին. Թվ. ։ՌՃԾԴ։
Ես Աւանէս կազմեցի, Ես Սարուխան կանգնեցի. Զախարում կազմել տվի.

Արծվաքար
Սմբատեան, *Գեղարքունի*, 198։

110. Թվ. ։ՌՃԾԷ։ Ավանէս կազմող։
Նոր Բայազետ
Սմբատեան, *Գեղարքունի*, 448։

ԱՎԱՆԵՍ ԿԱԶՄՈՂ

111. Կամաւ(ն) Այ. ես Մուրատս կանկնեցի ս(ուր)բ խաչս. բարէխաւս է Իսախանին Թվ. ։ՌՃԾԶ։ (1707) Ավանէս կազմող (յի)շե-ց(էք)։
Նոր Բայազետ

ՀՈԻՆԱՆ ԵՎ ՊԱՂԻ ԿԱԶՄՈՂՆԵՐ

112. Խաչս բարէխոս Իմանին Թվ. ։ՌՃԾԵ։ Եւ իշէք Յունանս, Պաղիս, կազմող խաչիս։
Լիճք

ՄԱՐԳԱՐ ԳՐԻՉ

113. Կանգնեցաւ սուրբ խաչս պարոն Յովակիմին և կենակցին Մարիամին և զաւակացն Մինասին, Խասպէքիին. և ծնողացն Աստուածատուրին և Նաղութին, և եղբարցն Լուսպարոնին, Խաչերեսին և Նիկողայոսին և Լուսեղինին և այլ զարմիցն. ձեռամբ Մարգար գրչի, Թուին ։ՌՃԿԲ։
Նոր Նախիջևան
Ջալալեանց, *Բ*, 466։ Շահազիզ. *Ազգ. Հանդ.*, *VII—VIII*, 51։

ՄՈԻՍԵՍ ՔԱՀԱՆԱ ԿԱԶՄՈՂ

114. [Շն]որհիւն Քի. ես
[Մո]ւսէս քահանա
[կազ]մեցի սբ. նշան-
[ս կան]կնեցի սա բար(ե)խ-
[աւս ա]ռ Քս. ինձ (եւ) ծնող-
[աց իմո]ց [ով եր]կրպագողք
[Քի որք] երկրպագէք
[սբ նշա]նիս. զՄուս-
[էս և զծն]ողսն իմ և զեղ-
[բայրս ըստ] հոգո և ըստ մ-
[արմնոյ յի]շեցէք ի Քս.
[Ած զձ]եզ յիշ[եսցէ]։
Բագնայր

K. J. Basmadjian, Des inscriptions Arméniennes d'Ani, de Bagnair et de Marmachen. Paris, 1931, *էջ 190։*

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՎԻՄԱԳԻՐ ԳՐԻՉՆԵՐ

Շատ չեն, համեմատաբար, այն վիմական արձանագրությունները, որոնց տակ կան փորագրողների անվան հիշատակություն-ստորագրությունները, բայց այդպիսի դեպքերի մեծ մասում անունից հետո կա նաև նրանց կոչումը՝ գրիչ[1]։

Ինչպես հայտնի է, վաղ պատմական շրջաններում բոլոր տեսակի գրությունները գրվում էին կարծր նյութերի վրա, Հայաստանում՝ գերազանցապես քարի և աղյուսի վրա։ Աղյուսի վրա գրում էին նրա դեռևս չթրծած ժամանակ, եղեգնե կամ մետաղե նուրբ գործիքներով, իսկ քարի վրա բացառապես մետաղե գործիքներով։ Այդ գրելու գործիքը կոչվում էր «գրիչ»։ Ժամանակի ընթացքում գրիչ անունը գործիքից անցավ նաև գրող վարպետին, այնպես որ թե գործիքը և թե գրողը միաժամանակ կոչվում էին գրիչ։

Գրիչ տերմինը գործածված է հայ մշակույթի հնագույն հիշատակարաններում, ս. գրքի թարգմանիչներն իսկ այդ անունով են կոչում գրելու գործիքը.

«Ո՛ տայր ինձ գրել զբանս իմ, եւ ճանել զնոսա ի մատեան յաւիտեան, գրչաւ երկաթաւ ի կապարի կամ ի վէմս բանդակեալ՝ առ ի վկայութիւն ապագայից[2]։

Հետագայում երևան եկան գրելու նոր նյութեր, մագաղաթն ու թուղթը, դրանց համապատասխան նաև գրելու նոր գործիքներ. ավելի նուրբ եղեգն ու հետո փետուրը, որը և գործ մղեց եղեգնին. բայց և այդ վերջին գործիքներն էլ հնի նման անվանվում էին գրիչ և դրանցով գրողները՝ գրիչներ։

Միջնադարի այն բոլոր վարպետները, որոնք փորագրել են քարերի վրա կամ գրչագրել մագաղաթի ու թղթի վրա, հիմնականում կոչվում են գրիչներ և եթե նրանք իրենց աշխատանքի մեջ, որևէ տեղ, ստորագրում են, ապա նրանց անվան կողքին, որպես որոշիչ, սովորաբար լինում է նաև գրիչ բառը։

Գրքեր արտագրողները ավելի հաճախ են ստորագրում և հիշատակագրում իրենց անունը, քան արձանագիրները, նախ, որ գիրքը ավելի ծավալուն և մեծ աշխատանք է, և արտագրողը ցանկանում է նրա մեջ պահպանել իր անունը, և, ապա, որ ավելի կարևոր պատճառ է, գրքերի նյութը՝ մագաղաթն ու թուղթը՝ հնարավորություն էին ընձեռում գրիչներին ստորագրությունից բացի (որն այդ համեստ ու անխոնջ մարդկանց համար քիչ նշանակություն ուներ) ընդարձակ հիշատակագրություններ անել մատյանների մեջ, կամ ավելի հաճախ նրա վերջում։ Մինչդեռ քարերի վրա արձանագրություն գրողների նյութը այդ հնարավորությունը չէր ընձեռում։ Այն տեղը, որ հատկացվում էր հիշատակարանի համար, շատ սահմանափակ էր, ի վերջո քարերի վրա փորագրելու տեխնիկան ավելի դժվար էր։ Այս պատճառներով էլ արձանագիր գրիչը, յուրաքանչյուր դեպքում մի կարճ նախադասությամբ, իսկ ավելի հաճախ ստորագրության ձևով, հազիվ է կարողանում իր անունը դնել արձանագրության տակ։

1 *Գրիչների մեր հետագա ցուցակում բացի այդ ուղղակի կոչումից նշանակված են և փոքրաթիվ այլ կոչումներ։*

2 Յոբ, *ԺԹ*, 23 և 24։

Գրի գործածությունը պատմական Հայաստանում հազարամյակների պատմություն ունի, միաժամանակ գրի հնագույն նմուշները հենց քարերի վրա գրվածներն են։

Եթե չհաշվենք դեռևս նախնադարյան հասարակության ժամանակներից ժայռերի վրա մնացած զանազան ձևերի «գրերի» նմուշները, ապա մեր երկրում կանոնավոր գրերի գործածության հնությունը հասնում է մինչև IX դարը՝ նախքան մեր թվականությունը։ Դրանք բոլորին ծանոթ ուրարտական սեպաձև արձանագրություններն են, գրված մեծամեծ ժայռերի, շինությունների քարե պատերի, հատկապես այդ նպատակով շինված-կանգնեցրած քարե կոթողների, թրծած կավե աղ ուսի, ամանեղենի և մետաղե իրերի վրա։ Ուրարտական հայտնաբերված արձանագրությունների թիվը հարյուրների է հասնում, բայց դրանց փորագրող վարպետներից ոչ մեկի անունը մենք չգիտենք։

Վաղ հայկական պետականության շրջանում, մինչև մեր թվականության հինգերորդ դարի սկիզբը Հայաստանում գործածության մեջ են եղել արամեերեն, պարսկերեն, հունարեն և հռոմեական գիրը. այդ բոլորից մեզ են հասել գրության նմուշներ, որոնք գրված են եղել քարերի կամ մետաղների վրա, բայց դրանց մեջ էլ ոչ մի անգամ փորագրիչ վարպետի կամ գրչի անուն երևան չի գալիս։

Հայկական գիր և գրականություն ստեղծվելուց հետո միայն, այն էլ դարեր հետո, գրքեր արտագրողների, ինչպես և արձանագրություններ փորագրողների մեջ սովորություն է դառնում իրենց անունը հիշատակել։

Մենք կխոսենք միայն այն փորագրող կամ «գրիչ» վարպետների մասին, որոնք իրենց անունն են թողել, մեծ մասամբ եղել են նաև քարտաշ վարպետներ, որոնք կարող էին արձանագրություններ փորագրելուց բացի կատարել նաև քանդակագործական այլ աշխատանքներ։ Այդ կապը շատ լավ երևում է. օրինակ, խաչքարերի վրա, որտեղ քանդակագործ վարպետը թե ընդհանուր խաչքարն է քանդակազարդում-կերտում և թե պատվիրված արձանագրությունը փորագրում և վերջում էլ իրեն է հիշատակում։ Ճարտարապետական շենքերի վրա էլ պատահում են օրինակներ, երբ քանդակագործը հենց այն քանդակազարդ մասի վրա է իր անունը գրում, որն իր ձեռքով է կերտվել։ Եղած տեղեկությունների հիման վրա, թեև այդ կապը միշտ և լրիվ պարզել առայժմ անհնարին է, բայց տեսականորեն դա անվիճելի է, որովհետև մինչև այժմ էլ եթե հարկ է լինում ճարտարապետական շենքերի վրա որևէ արձանագրություն փորագրել, ապա այդ աշխատանքը կատարում են այն քարտաշ-քանդակագործ վարպետները, որոնք մեծ մասամբ մասնակցում են նաև ընդհանուր աշխատանքներին։ Անգամ մեր օրերում, գյուղական վայրերում կարելի է հանդիպել նույնիսկ անգրագետ քարտաշ վարպետների, որոնք իրենց ընդունած պատվեր գերեզմանաքարի վրա նաև պատվիրատուի կազմած արձանագրությունն են քանդակում[1]։

ՑԱՆԿ

ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈՐԱԳՐՈՂ ԳՐԻՉՆԵՐԻ

Է—Ժ դարեր

1. Սամեղ ծառա Քրիստոսի — *փորագրել է կաթողիկոս Եզրի արձանագրությունը Ավանում[2] . . . . . 633 թ.։*
2. Վահան Քահանա գծող — *փորագրել է Գագիկ Ա.-ի հրաման-արձանագրությունը Մրենի կոռի բարձման առթիվ. Մրեն[3] . . . . 992 թ.։*

   և հայր Մարկոսի նվիրատվական արձանագրությունը. Բագարանի եկեղեցու պատին . . . . . 1034 թ.։

ԺԱ դար

3. Բենէ գրիչ *(գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ Բենէ) — փորագրել է Կատրանիդե թագուհու շինարարական արձանագրությունը Անիի կաթողիկե եկեղեցու հյուսիսային պատին[4] . . . 1012 թ.։*

---

1 *1954 թ. ամռանը Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում հանդիպեցինք մի գերեզմանաքար տաշողի, որն արդեն ավարտել էր քարի ընդհանուր աշխատանքները և արձանագրությունն էր փորագրում՝ անճոռնի տառասխալներով. մեր դիտողության առթիվ նա ցույց տվեց մի թղթի կտոր, որի վրա պատվիրատուի կողմից գրված բնագիրը նույն սխալներն ուներ. ինքը քարգործը հասակավոր մարդ էր և բոլորովին անգրագետ։*

2 Կ. Ղաֆադարյան, *Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 10։*

3 Սարգսեանց, *197, 202։* Ալիշան, *Շիրակ, 139, «Այրարատ», 66։*

4 Սարգսեանց, *118,* Շահխաթունեանց, *594։* Ալիշան, *Շիրակ, 67։*

4. Գրիգոր Վահրամ պիտանի — փորագրել է Գր. Մագիստրոսի շինարարական արձանագրությունը Հավուց Թառում[1] . . . . 1013 թ.։

5. Գրեգոր գրիչ (Ես Գրեգոր գրեցի) — Սիսիան գ. ուղի «Սիսի վանք» եկեղեցու հարավային պատին փորագրել է արևի ժամացույց և տակին գրել հիշատակարան[2]։

6. Գևորգ գրիչ — փորագրել է Ապլղարիբ մարզպանի արձանագրությունը ս. Փրկիչ եկեղեցու հյուսիսային պատին — Անիում[3] . . . . . . 1035 թ.։

7. Թովմա գրիչ (Թովմայի է Գ.) — փորագրել է Սմբատ Շահնշահի նվիրատվական մեծ արձանագրությունը Հոռոմոսի վանքի արևմտյան պատին[4] . . . 1036 թ.։

8. Ծառայիկ գրիչ (Ծառայիկս յաղաւթս յիշեցէք) — փորագրեալ է Գր. Մագիստրոսի քույր և Սարգսի ամուսին տիկնաց տիկնոջ արձանագրությունը Տեկորի հարկը բարձելու մասին, Տեկոր[5]. . 1042 թ.։

9. Թէոդորոս, գրիչ և նկարիչ, որդի Քրիստափոր քարգործի, Քեսուն գավառի Մախթլըն գյուղացի, ապրել է Եգիպտոսում և գրել է մի արձանագրություն ղպտիական Դէյր-էլ, Աբյադ վանքում, Սոհակ քաղաքի մոտ[6] . . . . . 1074—1120 թ.։

ԺԲ դար

10. Խաչատուր գրիչ (Ես խաչատուր գրեցի) — փորագրել է կարճ հիշատակարան Խուշոնի «Հաղթական մուտքի» աշտարակի վրա[7] . . . . 1102 թ.։

11. Սարգիս գրիչ — փորագրել է Մխիթարի նվիրատվական արձանագրությունը Արտավազա վանքում (Հրազդանի շրջ.)[1] . . . . 1161 թ.։

Հովսեփ գրիչ (զՅովսէփ յիշեա ի տէր) — փորագրել է Սարգիս կրոնավորի նվիրատվական արձանագրությունը Հառիճում[2] . . . . . . 1198 թ.։

— Փորագրել է տեր Քրիստափոր և Գամաղիել վարդապետների կանոնը՝ մահացած վանականների կտակի մասին Բագնայրի եկեղեցու պատին[3] . . 1235 թ.։

ԺԳ դար

12. Մանասէ գրիչ — փորագրել է Ավագ տիկնոջ նվիրատվական արձանագրությունը Բագնայրի ս. Ածածին եկեղեցու պատի վրա[4] . . . . 1207 թ.։

13. Ռայբիկ գրիչ — փորագրել է Մրվանի արձանագրությունը Բագնայրում[5] . . . . 1210 թ.։

14. Մարգարե գրիչ — փորագրել է տեր Գրիգորի կանոն-արձանագրությունը մահացած հոգևորականների հիշատակին կատարվելիք պատարագների մասին, Բագնայրի ս. Ածածին եկեղեցու պատին[6] . . . . . 1215 թ.։

15. Իսրայել գրիչ (ստորագրել է ԻՂ ԳՁ) — փորագրել է Տիգրան Հոնենցի մեծ արձանագրությունը՝ ս. Գրիգորի հարավային պատի վրա, եկեղեցու շինության, տված նվերների և կալվածների մասին, Անի[7] . . . . 1215 թ.։

---

1 Շահխաթունեանց 575։ Ալիշան, Այրարատ, 354։ Մառ, МАК, XIII, 241։

2 Միանգամայն պայմանական ենք դնում այստեղ. բանն այն է, որ հրատարակիչները մի քանի իրար մոտ արձանագրություններ միացրել են, որոնցից մեկն ունի ՆԿԶ։ թվականը։ Իրականության մեջ Գրիգորի գրածը դրանց հետ կապ չունի, առանձին է և գրված է հունարեն տառերով, միայն Ց-ն հայերեն, այսպես... ЄСГРЄГОРГРЕՑ.

Ալիշան, Սիսական, 214։ Լալայեան, Ազգ. Հանդ., Գ, 188։

3 Ջալալեանց, Բ, 8։ Սարգսեանց. 121։ Ալիշան, Շիրակ, 82։ Բասմաջեան, № 13։

4 Ալիշան, Շիրակ, 31։

5 Սարգսեանց, 207։ Ալիշան, Շիրակ, 135։

6 Աճառյան. Անձն. բառ., Բ. 301։ «Տաթև», 1927, էջ 171։

7 Ալիշան. Շիրակ. 18։

---

1 Սմբատեանց, Գեղարքունի, 365։ Լալայեան, Ազգ. Հանդ., XXIII, 135 (թիվը նշել է 1201)։

2 Սարգսեանց, 149, Ալիշան, Շիրակ, 22. արձանագրությունը թվական չունի, բայց նրա մեջ հիշատակված Սարգիս կրոնավորը և Մխիթար վանահայրը մի այլ արձանագրության մեջ հիշված են որպես շրանցը կառուցողներ՝ 1198 թ., որը և դնում ենք պայմանականորեն։ Համեմատիր նաև Աճառյան, Անձ. բառ., Գ, 530։

3 Սարգսեանց. 183։ Ալիշան, Շիրակ, 118։ Բասմաջեան, Հայերեն արձանագրութիւնք, № 174. Փարիս, 1931։

4 Ալիշան. Շիրակ, 122. Բասմաջեան, № 73։

5 Բասմաջեան, № 155։

6 Սարգսեանց. 183։ Ալիշան, Շիրակ, 118։ Բասմաջեան, № 160։

7 Սարգսեանց. 128։ Ալիշան, Շիրակ, 78։ Բասմաջեան. № 40։

— Փորագրել է Խավրասի որդի Սասնայի արձանագրությունը Բագնայրի վանքին նվիրած կալվածների մասին՝ ս. Գրիգոր եկեղեցու պատին, ստորագրել է ԻՆՀ ԳՐԻՉ[1] . . . . 1266 թ.։

— Փորագրել է Անիի տաղմաճինների (հարկահավաք) արձանագրությունը, քահանաների հարկի (բաժ) վերացման մասին, ս. Առաքելոցի գավթի արևելյան պատին, արտաքուստ, ստորագրել է ԻԷԼԳ[2] . . . . 1269 թ.։

— Փորագրել է Զաքարիա հեքիմ Բլ Հասանի կալվածների՝ Հոռոմոսի վանքին նվիրելու մասին արձանագրությունը . . . . 1273 թ.[3]։

— Ստորագրել է Մառի պեղած եկեղեցու հարավում գտնվող խաչքարերի պատվանդանի վրա, որոնք կամ նրա ձեռագործն են, կամ նրա ընտանիքի գերեզմանոցը[4]։

16. Սիմեոն գրիչ — փորագրել է իր հիշատակին մի արձանագրություն Անիի պարսպի բուրգի վրա. հավանաբար այդ բուրգը իր շինածն է . . . 1216 թ.[5]։

Եղբայրոս գրիչ — փորագրել է Վարդաճիժ Վարդյանցի նվիրատվական արձանագրությունը Հոռոմոսի վանքում[6] ...1218 թ.։

17. Խոցադեղ գրիչ—փորագրել է Շիրակավանում Աթաբեկ Իվանեի և Խոշաքի արձանագրությունը, Շիրակ գյուղի հարկերի վերացման մասին[7] . . 1228 թ.։

— Փորագրել է Հոռոմոսի վանքում հեճուբ Գրիգորի և նրա տոհմակիցների արձանագրություն-կանոնը՝ կաշառքով վանահայր նշանակելու դեմ[8] . . .1228 թ.։

18. Խաչատուր գրիչ — փորագրել է Ճուճայի որդի Քավիկի արձանագրությունը՝ Խծկոնքի վանքին այգի նվիրելու մասին[9] . . . . . . 1230 թ.։

19. Մկրտիչ գրիչ — փորագրել է Աթաբեկ Իվանե և Խոշաքի արձանագրությունը Շիրակավանում՝ հարկերը վերացնելու մասին[1] . . . . 1231 թ.։

20. Մխիթար գրիչ — փորագրել է Մամախաթունի միջոցներով և վարդպետ Աղբայրիկի ճարտարապետությամբ շինված Տեղերի հուշարձանների շինարարական արձանագրությունը[2] . . . 1232 թ.։

21. Գրիգոր և Դիմանոս աշխատողներ—փորագրել են Սամվել Անեցու թոռ՝ Աբրահամ երեցի՝ Խծկոնքի վանքին նվիրած կալվածների մասին արձանագրությունը[3] . . . . 1233 թ.։

22. Դավիթ գրիչ—(ստորագրել է ԴԹԳՐԻՉ)— փորագրել է Մանգտավագ Մշեցու նվիրատվական արձանագրությունը Բագնայրում[4] . . . . 1242 թ.։

23. Ստեփան գծող — փորագրել է Խաչենիսենց որդի Գրիգորի նվիրատվական արձանագրությունը, Շամշադինի շրջանի Առաքելոց վանքում[5] . . . 1245 թ.։

24. Սիմէոն գրիչ — փորագրել է Ապուղամրի (Գր. Մագիստրոսի որդու)՝ Կաղզուց գյուղի կեսը ս. Ածածնին նվիրելու մասին գրված արձանագրությունը Բագնայրում[6] . . . . . 1261 թ.։

— Փորագրել է Շարապշահի դուստր Թախիկի նվիրատվական արձանագրությունը Բագնայրում[7] . . . . . . 1262 թ.։

— Փորագրել է Գր. Մագիստրոսի որդի Ապուղամրի երկրորդ արձանագրությունը՝ Կաղզուց գյուղի կեսը Բագնայրի վանքին նվիրելու մասին[8] . . . 1262 թ.։

— Փորագրել է Գարեգույն երեցի՝ Բագնայ-

1 Սարգսեանց, 189։ Ալիշան, Շիրակ, 116։ Բասմաջեան, № 183։

2 Սարգսեանց, 133։ Ալիշան, Շիրակ, 62։

3 Սարգսեանց, 150։ Ալիշան, Շիրակ, 22։

4 *Н. Марр*, XI анийская археологическая кампания. П., 1913

5 Սարգսեանց, 112։ Ալիշան, Շիրակ, 41։ Բասմաջեան, № 47։

6 Սարգսեանց, 152։ Ալիշան, Շիրակ, 23։

7 Սարգսեանց, 170։ Ալիշան, Շիրակ, 10։

8 Սարգսեանց, 153։ Ալիշան, Շիրակ, 23։

9 Սարգսեանց, 210։ Ալիշան, Շիրակ, 128։

1 Սարգսեանց, 170։ Ալիշան, Շիրակ, 10։

2 Շահխաթունեանց, Բ, 68, Ալիշան, Այրարատ, 147։

3 Սարգսեանց, 211, Ալիշան, Շիրակ, 128։

4 Բասմաջեան, № 186 (թիվն անորոշ), Սարգսեանցը և Ալիշանը թիվն ունեն, բայց գրչի ստորագրությունը՝ ոչ. տե՛ս Սարգսեանց, 186. Ալիշան, Շիրակ, 122։

5 Բարխուդարեանց, Արցախ, 378, չունի գրչի ստորագրությունը, առնում ենք մեր ժողովածուից։ Տե՛ս նաև Կ. Ղաֆադարյան, Ավանի արձանագրություն..., էջ 11։

6 Բասմաջեան, № 177։ Սարգսեանցը և Ալիշանը գրիչ չունեն, տե՛ս Սարգսեանց, 186։ Ալիշան, Շիրակ, 119։

7 Բասմաջեան, № 178, այլ հրատարակիչներ գրիչ չունեն, տե՛ս Սարգսեանց, 178, Ալիշան, Շիրակ, 119։

8 Բասմաջեան, № 179։ Այլ հրատարակիչներ գրիչ չունեն։

րին նվիրաբերված՝ Նորավանքի գյուղին վերաբերող արձանագրությունը[1] . . . . 1262 թ.։

— Փորագրել է Սասնայի որդի Խավառաղի՝ Աշնակ գյուղի կալվածները Բագնայրին նվիրելու մասին արձանագրությունը (վերծանվել է Սիմեոն պառող, հավանաբար սխալ՝ Սիմեոն գրող պիտի լինի)[2] . . . . 1266 թ.։

— Փորագրել է Վարհամի դուստր Մամուկաթէի՝ Հոռոմոսի վանքին նվիրած կալվածների մասին արձանագրությունը[3] . . . . 1266 թ.։

25. Մխիթարիչ երէց գրող — փորագրել է Քանաքեռում կանգնած կոթողի վրայի կալվածագիրը այգու վաճառման մասին, ստորագրել է երկու անգամ. ա) Մխիթարիչ երեց, որ գծիրս գրեցի և բ) գրողս զՄխիթարիչս յիշեցէք. նշանակված է և երկու թվական[4] 1265 և 1266 թ.։

26. Մխիթար գրիչ — փորագրել է Անիի մոտի Կարմիր վանքի շինարարական արձանագրությունը, Ուքան Քարիմադինի և Պապքան Վախրադինի անունից[5] . . . . 1271 թ.։

27. Հուսէփ գրիչ — փորագրել է միայն իր ստորագրությունը Անիի՝ Զաքարեի բուրգի մի քարի վրա[6] . . . . . 1274 թ.։

28. Տիրացու գրիչ — փորագրել է Մխիթար Այրիվանեցու՝ Գեղարդի վանքից վերևի ժայռաժեռ մատուռի պատի մեծ արձանագրությունը[7]։

— Փորագրել է Վեդիի շրջանի Ջինջիրլու ստուրի մոտ Իվանե Աթաբեկի դուստր Գոնցայի և իր ամուսին Զալալի կառուցած Սուխտակավոր Աստվածածին կոչվող եկեղեցու շինարարական արձանագրությունը, ներսի հարավային պատի վրա[1] . . . . 1301 թ.։

— Փորագրել է նույն տեղում եկեղեցու շինության վերակացու և վանահայր Կիրակոս վարդապետի գործունեության և նվերների մասին գրված արձանագրությունը[2] . . . . , . . . 1301 թ.։

— Փորագրել է իր և եկեղեցու կառուցմանը մասնակցած մեկենասների, ճարտարապետի ու գործակալ Կիրակոս վարդապետի անունների կրճատ հիշատակությունները՝ նույն եկեղեցու գմբեթի չորս լուսամուտների կողքերին, արտաքուստ[3]։

29. Սարգիս գրիչ — փորագրել է Զաքարյանների մեծ արձանագրությունը Գառնի գյուղի հարկերի վերացման մասին։ Այդ քարն այժմ ընկած է, բայց այն մի մասն է եղել հեթանոսական տաճարի և գտնվում է նրա մոտ. արձանագրությունը գեղատառ է և գարաշրջանի գրչության յավագույն նմուշ. գրված է . . : 1291 թվ.։

— Փորագրել է Վեդիի շրջանի Ղարաբաղլար գյուղի մոտ կիսավեր եկեղեցու վրա, Տարսայիճ Օրբելյանի անունը կրող մի արձանագրություն[4] . . . 1291 թ.։

30. Սարգիս գրիչ — փորագրել է Անիի մոտ ժայռափոր եկեղեցու շինարարական արձանագրությունը, մեկենասներ Քուրդի և իր կենակից Սթեի անունից[5]։ . . . . 1291 թ.։

31. Վարհամ գրիչ (գրել է ՎԱՐ ՀԱՄ) — փորագրել է Հռիփսիմեի ներսում, Շահնշահի և Աղբուղայի արձանագրությունը[6]։ . . . . 1296 թ.։

ԺԴ դար

32. Սիմէոն գրիչ — փորագրել է Վահրամի դուստր Մամուկի նվիրատվական արձանագրությունը Հոռոմոսի վանքին կալվածներ նվիրելու մասին . . 1308 թ.։

---

1 Սարգսեանց, 187։ Ալիշան, Շիրակ, 120։ Բասմաջեան, № 180։

2 Ջալալեանց, Բ. 40, Սարգսեան, 189։ Ալիշան, Շիրակ. 116. Բասմաջեան, № 181։

3 Սարգսեանց. 157, Ալիշան, Շիրակ, 26։

4 Շահխաթունեանց, Բ, 159։ Ալիշան. Այրարատ, 297—98։ Սմբատեան, Գեղարքունի, 207. «Բանասէր», 1903, էջ 32։

5 Ալիշան, Շիրակ, 170։ Բասմաջեան, № 70 (Մխիթարիչ գրիչ)։

6 Առնում ենք ակադ. Հ. Օրբելու ձեռագիր՝ «Անիի արձանագրությունները» ժողովածուից, № 16։

7 Գարեգին Հովսեփեան. Այրիվանեցու նորագյուտ արձանագրությունը։

1 Г. Овсепян Христианский Восток, II, вып. II, 1913, стр. 236.

2 Մեր ժողովածուից։

3 Մեր ժողովածուից։

4 Բասմաջեան, № 71. անունները և թվականը աղավաղված, ուղղում ենք ըստ ակադ. Օրբելու ձեռագիր՝ «Անիի արձանագրությունները» ժողովածուի։

5 Գ. վարդ. Հովսեփյան, Կամրջաձև կաթողիկեի մի նոր արձանագրություն, «Արարատ», 1898, 442։

6 Մխիթարեանց Աբ., Ճանապարհորդութիւն յԱնի, Կ. Պոլիս, 1865, էջ 34։

33. Գր(իգո)ր գրիչ—*փորագրել է Գնդեվանքի նորոգումների մասին գրված արձանագրությունը եկեղեցու ներսում*[1] . . . . *1309 թ.:*

34. Տեր Ղազար գրիչ — *փորագրել է Արցախի Ծղնասար վանքում մի արձանագրություն*[2] . . . . *1311 թ.:*

35. Պառող գրիչ — *փորագրել է Աթաբակ Շահնշահի ամուսին Խուանդեսի արձանագրությունը կովերի, էշերի և այլ հարկերի վերացման մասին. Անի, Առաքելոց եկեղեցի*[3] . . . . *1320. թ.:*

36. Բուքարամ գրիչ — *փորագրել է երկու կարճ հիշատակություններ Անիում. Փրկիչ եկեղեցու գավթի պատուհանների շրջանակներին*[4] . . . . . . *1342 թ.:*

37. Երեմիա գրիչ—*փորագրել է Ամիր Ջեսի արձանագրությունը Բջնիում*[5] . . . . *1358 թ.:*

Հետագա դարեր

38. Սահակ աբեղա գրիչ — *փորագրել է իր հիշատակարանը Վեդիի շրջանի Ղարաբաղլար գյուղի կիսավեր եկեղեցու բեմի քիվի վրա*[6] . . . . *1590 թ.:*

39. Նավասարդ գրիչ — *փորագրել է իր կարճ հիշատակարանը Վեդիի շրջանի Ջինջիրլուի մոտի վանքի ներսում*[7] ......*1593 թ.:*

40. Հակոբ գրիչ — *փորագրել է մի արձանագրություն Երևանի կաթողիկե հուշարձանի վրա*[8] . . . . *1609 թ.,*

41. Ալեքսան գրիչ — *փորագրել է Մուղնիի հուշարձանի շինարարական արձանագրությունը, մեկենաս պարոն Վարդանի անունից* . . . . *1670 թ.:*

— *Նույնտեղ ևս մի ընդարձակ արձանագրություն, որի տակ ստորագրել է Ալեքսան, քարտուղար Հայոց*[9] . . . *1671 թ.:*

42. Մարկոս գրիչ — *փորագրել է Կարբի գյու-*

1 *Մեր հուշատետրից, այլ հրատարակություններում բաց է թողնված գրչի հիշատակությունն ու թվականը, տե՛ս* Ալիշան, *Սիսական, 106:*

2 *«Ազգ. Հանդ.», XII, 345:*

3 Սարգսեանց, *131.* Ալիշան, *Շիրակ, 62:* Ջալալեան, *Բ, 11:*

4 Բասմաջեան, *№ 90, 91:*

5 Շահխաթունեանց, *Բ, 183:* Ալիշան, *Այրարատ, 237:* Սմբատեանց, *Գեղարքունի, 322:*

6 *Մեր ժողովածուից:*

7 *Մեր ժողովածուից:*

8 Կ. Ղաֆադարյան, *Երևանի կաթողիկե:*

9 Ալիշան. *Այրարատ, 184:* Շահխաթունեանց *Բ, 93:*

ղի եկեղեցու շինարարական արձանագրությունը[1] . . . . . . *1691 թ.:*

43. Ատիս գրիչ — *փորագրել է Նորագավիթ գյուղի գերեզմանատան մատուռի շինարարական արձանագրությունը, Միրզայի որդի Ալեքսանի անունից*[2] . . . . *1714 թ.:*

44. Մեղիդուբ Երեց գրիչ — *փորագրել է Արցախի Ղարաբուլաղ եկեղեցու շինարարական արձանագրությունը, որը գտնվում է մուտքի բարավորի վրա*[3] . . *1716 թ.:*

45. Մարտիրոս գրիչ — *փորագրել է իր կարճ հիշատակությունը Անիի մոտի Ղըզղալայի հուշարձանի վրա*[4] . . . *1735 թ.:*

46. Կոստանդ գրիչ — *փորագրել է իր կարճ հիշատակարանը Ջինջիրլուի հուշարձանի պատին*[5] . . . . *1745 թ.:*

Անթվական գրիչներ

47. Խաչատուր հայր գրիչ — *փորագրել է Լոռվա Իգահատ գյուղի հուշարձանի վրա մի արձանագրություն:*

48. Գեորգ վայեցի գրիչ—*փորագրել է Հոռոմոսավանքում մի նվիրատվական արձանագրություն, հավանաբար XIII դարի:*

Ռուբեն գրիչ — *փորագրել է Հոռոմոսավանքում մի արձանագրություն, հավանաբար XIII դարի:*

49. Ստեփե գրիչ — *փորագրել է Նոր Բայազետի շրջանի Մուխան գյուղում մի արձանագրություն:*

* * *

Մեր կազմած գրիչների այս ցուցակը, որ պարունակում է 62 անուն, լրիվ լինել չի կարող, քանի որ վիմական արձանագրությունները էլ լրիվ չեն հավաքված: Այն կազմված է հրատարակված և մասամբ էլ մեր ձեռքի տակ եղած անտիպ հավաքածուի հիման վրա:

Նայելով այս ցուցակին ժամանակագրական տեսակետից՝ նկատվում է, որ նա մո-

1 Ալիշան, *Այրարատ, 180:* Շահխաթունեանց, *Բ, 117:*

2 Շահխաթունեանց, Բ *239:* Սմբատեանց, *Գեղարքունի, 485:*

3 *«Ազգ. Հանդ.», V 333:*

4 Բասմաջեան, *№ 96:*

5 *Մեր ժողովածուից:*

տավորապես արտահայտում է այն գրությունը, ինչ որ մեր ճարտարապետության և մանավանդ գրչության արվեստի զարգացմանն է հատուկ։

IV—V դարերում ճարտարապետական արվեստը սկսում է ուժեղ թափով զարգանալ, ստեղծվում են գիր ու գրականություն, բայց այդ դարերից մեզ հասած գրչության նմուշներ-մատյաններ բացակայում են, մեր ցուցակի մեջ ևս այդ դարերից գրիչների անուններ չկան։ VII դարում ճարտարապետությունը հասնում է զարգացման բարձր աստիճանի։ Այդ դարերից ունենք սակավաթիվ վիմական արձանագրություններ և մեկ գրչի անուն՝ Սամեղ, որը փորագրել է Երևանի մոտ Ավան գյուղում, հայտնի եկեղեցու երկլեզվյան, հայ-հունարեն արձանագրությունը։ VIII դարը եղել է արաբական ավերածությունների շրջան, ուր ոչինչ գրեթե չի կառուցվել, միայն իններորդ դարից է սկսվում շինարարական մասնակի գործունեություն, սակայն այդ դարից գրիչներ չունենք։ Տասներորդ դարից սկսվում է ծավալուն շինարարությունը և ահա Շիրակում, որտեղ շինարարությունը և կուլտուրական կյանքը ավելի եռուն էր, երևան են գալիս երկու գրիչների անուններ։ XI դարը այդ նույն Շիրակում ծաղկման շրջան է եղել կուլտուրայի բոլոր բնագավառների համար և այդ դարից հայտնի յոթ գրիչներից չորսը Շիրակից են։ Ինչպես Բագրատունյան Անին էր կուլտուրայի օջախը, որտեղից այն տարածվում էր Հայաստանի այլ վայրերը, այնպես էլ գրիչների կուլտուրան ծավալվում է այնտեղից։ Այդ դարից մի գրիչ երևան է գալիս Հավուց Թառ վանքում (Կոտայքի շրջան), Գառնիի և Գեղարդի մոտ և երկրորդը՝ Սիսիանում։

XII դարը աղքատ է, գրիչների երեք անուն ունենք, որոնցից երկուսը դարձյալ Շիրակից։

XIII դարը կուլտուրայի և մասնավորապես ճարտարապետության նոր զարգացման շրջան է։ Մեր հուշարձանները՝ այդ դարաշրջանում կառուցված, ամենամեծ թիվն են կազմում, վիմական արձանագրություններ գրելն էլ դառնում է ընդունված սովորություն։ Այդ պատճառով էլ գրիչների ամենամեծ թիվն այդ դարին է պատկանում (մեր ցուցակում 27 անուն)։ Բայց մի բան նկատելի է, որ նրանց մեծագույն մասը դարձյալ Շիրակն է տալիս։ Այդ դարում, Հայաստանի բոլոր ծայրամասերում էլ մեծ շենքեր են կառուցվել և բոլոր վայրերում էլ արձանագրությունների մեծ թիվ կա, համենայն դեպս Շիրակից ոչ պակաս՝ իրենց քանակով. բայց գրչի կողմից իր անունն ստորագրելու կուլտուրան դեռևս այլ վայրերում շատ տարածված չէ։

XIV դարի յոթ գրիչներից չորսը նույնպես Շիրակից են։ XV և հետագա դարերից հայտնի 17 գրիչներից և ոչ մեկը Շիրակից չեն։

Զարմանալին այն է, սակայն և նշանակալից, որ հենց սկզբից ևեթ գրիչների անուններ միայն Արևելյան Հայաստանում են երևան գալիս. Արևմտյան Հայաստանը մինչև վերջ էլ ոչ մի գրչի անուն չի տալիս։

Ըստ վայրի ամենաշատ անուններ տալիս է Անին՝ 8, Հոռոմոսը՝ 7, և Բագնայրը նույնպես 7. միաժամանակ կան գրիչներ, որոնք տարբեր վայրերում են թողել իրենց անունը։

Անիում երեք անգամ հիշատակված ունենք Իսրայել գրիչ. դրանցից առաջինի հիշատակությունը 1215 թվականից, Տիգրան Հոնենցի մեծ արձանագրության տակ՝ ս. Գրիգոր եկեղեցու շինարարության վերաբերյալ[1]. երկրորդ հիշատակությունը 1263 թվականից Անիի տաղմաճինների արձանագրության տակ[2] և երրորդ անգամ 1912 թվականին Մառի պեղումների հետևանքով բացված մեծ եկեղեցու հարավային կողմում, խաչքարերի պատվանդանների վրա։ Վերջինս թեև թվական չունի, բայց Մառը այն համարում է XIII դարի երկրորդ կեսի և 1263 թ. հիշված Իսրայելի և նրա ընտանիքի անդամների գերեզմանների վրա կանգնեցրած խաչքարերի պատվանդան[3]։

---

[1] Սարգսեանց, 128, Շիրակ, 78. Վիմական տարեգիր, 59։

[2] Սարգսեանց, 133, Շիրակ, 62, Վիմական տարեգիր, 106։

[3] *Н. Марр.* XI анийская археологическая кампания, II, 1913, стр. 42.

Մառը այստեղ երևի նկատի ունենալով Իսրայել գրչի ստորագրությունները կրող երկու արձանագրությունների օրենսդրական բնույթը, ենթադրում է գրիչների մի տեսակ նոտարի կամ նման մի պաշտոնյա լինելու հանգամանքը, որի ստորագրությունը պետք է հաստատի հրովարտակ-արձանագրությունը, որքան էլ հետաքրքիր է այս դիտողությունը, բայց ճիշտ համարվել չի կարող, որովհետև գրիչների ստորագրությունները հանդես են գալիս չափազանց հասարակ

Այս նույն Իսրայելն է անշուշտ, որի անունը հիշատակված է 1266 թ. Բագնայրում Խաչատուր նվիրատվական արձանագրության տակ[1] և Հոռոմոսում 1273 թ. Բլ Հասան հեքիմի արձանագրության տակ[2]: Որ տարբեր տեղերում հիշված Իսրայել գրիչը նույն անձնավորությունն է, այդ ապացուցում է նաև նրա ստորագրության ոճը. Անիում նա ստորագրել է ԻՍՐԼԳ, Բագնայրում ԻՍԼ գրիչ ձևով, միայն Հոռոմոսում՝ լրիվ Իսրայել, առանց գրիչ կոչումի. նկատի ունենալով, որ գրիչների անունների ոճման ձևերը շատ քիչ են, այս դեպքում այն գրչի նույնության ընշան կարող է համարվել:

XIII դարի երկրորդ կեսից ունենք և Սիմեոն գրիչ, որի ստորագրությունները մնացել են Բագնայրում 4 անգամ. 1262 թվականից, Խաչատուրի[3] և Գարեգոյն երեցի ուսյուց նվիրատվական արձանագրությունների տակ[4] և մեկ անգամ Հոռոմոսում՝ 1266 թ. Մամուկաթիի նվիրատվական արձանագրության տակ[5]: Նույն դարում նաև Խոցադեղ գրիչը ստորագրել է և՛ Հոռոմոսում, և՛ Շիրակավանում:

Նույն գրչի տարբեր վայրերում աշխատած լինելու հանգամանքն, անշուշտ, նշան է այն բանի, որ նրանք իրենց գործին մասնագետ մարդիկ էին և այդ պատճառով էլ վարձվում և աշխատում էին տարբեր տեղերում, իրենց հիմնական մասնագիտությամբ:

Այս երևույթը չի կարելի բացատրել գրիչների խիստ հազվագյուտ կամ տեղացի լինելու հանգամանքներով, որովհետև նույն տեղում ժամանակով իրար շատ մոտ մի քանի գրիչների հիշատակությունները նույնպես սովորական երևույթ են. օր. Բագնայրում՝ 1202—1215 թթ. հիշատակված կան երեք գրիչներ, Հովսեփ, Մանասե և Մարգարե, իսկ 1262—1266 թվականներին Սիմեոն և Իսրայել գրիչները, Հոռոմոսում՝ 1218—1228 թթ. Եղրայրոս և Խոցադեղ գրիչները, իսկ 1266—1273 թթ. Սիմեոն և Իսրայել գրիչները: Նույնիսկ այնպիսի ոչ շատ նշանավոր տեղում, ինչպես Նորադուզ գյուղն է Նոր Բայազետի շրջանում, 1714 թ. հիշատակված են երկու գրիչներ՝ Սարգիս և Մեղիդուբ:

Գրիչների արվեստի քննությունը մեր նյութից դուրս է հարկավ, սակայն մի երկու խոսքով ասենք, որ վիմագիր գրիչները իրենց արվեստի մեջ դարագլուխ կազմող երկու էտապներ են ունեցել:

Մինչև VII դարը եղած վիմական արձանագրությունները իրենց գրչության ոճով մեծ նմանություն ունեն մատյանների գրի արվեստին և այս վերջինիս տեղափոխությունն է նոր նյութի, քարի վրա: VII դարում ստեղծվում է քարի գրչության ինքնուրույն և չափազանց գեղեցիկ ու մոնումենտալ ոճ: VII դարի գրիչ վարպետները ոչ միայն հանձնարարված բնագրի մեքենայական փորագրողներ են հուշարձանների պատերին, այլև այդ դարաշրջանում բարձր աստիճանի հասած ճարտարապետական հուշարձանների ընդհանուր ոճին ու նրանց ինքնատիպ զարդաքանդակներին համապատասխան խոշորատառ, գեղեցիկ և մոնումենտալ տեսք ունեցող տառաձևեր են ստեղծում, ըստ որում արձանագրություններն էլ մեծ մասամբ փորագրվում են շենքերի վերին մասում, մի տողով, գոտու նման օղակելով շենքը 2—3 կողմից: Արձանագրությունն իր գեղեցիկ տառաձևերով համընկնում է ճարտարապետական ընդհանուր մտահղացման և զարդաքանդակների մոնումենտալ ոճին և տեղադրվելով գոտիաձև՝ իր բովանդակությունից բացի, դառնում է զարդաքանդակի բնույթ կրող օրգանական անհրաժեշտ մաս հուշարձանի վրա:

Վաղ շրջանի թե՛ շինարարական և թե՛ այլ բնույթի այն արձանագրությունները, որոնք գրվել են շենքի կառուցման ընթացքում, կամ անմիջապես հետո՝ թե՛ իրենց տեղադրությամբ և թե՛ ձևավորումով միաժամանակ զարդաքանդակի դեր են կատարում, ըստ երևույթին դրանք կատարվել են կառուցող ճարտարապետի հսկողությամբ և ձևավորումով: Ինչպես ճարտարապետությունը, այնպես էլ վիմագրչության արվեստը VII

բնույթի արձանագրությունների տակ էլ, կամ ընդհակառակը՝ շատ հրամանագիր-օրենսդրական արձանագրություններ կան, որոնց տակ գրչի հիշատակություն չկա:

1 Սարգսեանց, 189. Շիրակ 116:

2 Սարգսեանց, 150. Շիրակ 22:

3 Այստեղ նա ստորագրել է մի անծանոթ ձևով «Սիմէոն պտրող», «պտռող» բառն ըստ Աճառյանի պետք է փորագրիչ հասկանալ. տե՛ս Անձ. բառ., Դ, 501:

4 Սարգսեանց, 187, 189, Շիրակ, 116, 120. Ջալալեանց, Բ, 40:

5 Սարգսեանց, 157. Շիրակ, 109:

դարում իրենց բարձրագույն զարգացմանը հասան, սերտորեն կապված իրար հետ, լրացնելով իրար։

XII—XIII դարերը վիմագրչության արվեստի երկրորդ և նոր ծաղկման էտապն է։ Այս շրջանում, ինչպես ճարտարապետությունը, նույնպես և զարդաքանդակներն ու վիմագրչությունը նախկին մոնումենտալության փոխարեն մշակում են ավելի մանր և նուրբ գծերի արվեստ. տառաձևերը նեղանում են, արձանագրությունների միատող, գոտիաձև տեղադրումը շենքի վրա վերանում է, տառերի միացումները դառնում են սովորական։ Արձանագրություն գրելու սովորությունը դառնում է մասսայական, որի հետևանքով երևան են գալիս բազմաթիվ գրիչներ։ Այդ նոր ոճի մեջ հանդես են գալիս գրիչներ, որոնք գեղագրության փայլուն գագաթներ են։

Վիմագրչությունը մատյանների գրչության ոճի հետ համեմատած ունի մի առանձնահատկություն։ Մատյանների մեջ հատուկ ուշադրություն է դարձվում վերնագրերի և սկզբնատառերի շքեղ գեղեցկության վրա, իսկ վիմագրչության մեջ, եթե արհեստավոր վարպետի գործ է իհարկե, ամբողջ տեքստը միատեսակ գեղագիր ու խնամքով է փորագրվում, սկզբնատառերը տարբերվում են մի քիչ մեծությամբ և մի երկու գծազարդով, այն էլ ոչ միշտ։

ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ԳՐՉԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Որքան էլ հետաքրքիր է արձանագրություններ գրելու տեխնիկան, նույնքան էլ այն առայժմ միանգամայն անբավարար է ուսումնասիրված։ Մինչև այժմ արձանագրություններ հավաքողները ուշք չեն դարձրել այդ խնդրի վրա։ Որպեսզի հնարավոր լինի պարզել այդ խնդիրը, պետք է որ ուշադիր դիտվի ու նկարագրվի ոչ միայն ամբողջ արձանագրությունը, այլև նրա առանձին տառերը և մանավանդ նուրբ գործիքների միջոցով չափումներ կատարվեն, այդպիսի աշխատանք գրեթե չի արված, բացառությամբ ակադ. Հ. Օրբելու հրատարակած մի քանի արձանագրությունների (օր. Բագրևանդի ս. Հովհաննու 639 թ. արձանագրությունը)։ Իսկ առանց դրան, նույնիսկ սովորական աչքով դիտումները կարող են խաբուսիկ լինել։ Այդ պատճառով էլ մենք կբավականանանք մի քանի ընդհանուր դիտողություններ և առանձին փաստեր թվարկելով։

Գրվելիք արձանագրության բնագիրն, անշուշտ, տրվում էր գրչին՝ պատրաստի վիճակում և նշվում այն տեղը, ուր պիտի գրվեր արձանագրությունը։ Գրիչը սովորաբար իր գործին վարժ մարդ էր լինում և աչքաչափով կարողանում էր որոշել բնագրի բռնելիք տարածության ծավալը և տողաչափը։ Այդ տարածությունը նա առաջին հերթին տողում էր քանոնով՝ ներկելով, կամ ավելի հաճախ երկաթե սրածայր գործիքով խազում, տողերի միջի տարածությունը որոշում էր տառերի բարձրությունը միայն, որովհետև արձանագրության տառերը մեր այժմյան գլխագրերն էին և արձանագրության մեջ միահավասար բարձրություն ունեին, այդ պատճառով էլ նրանք ամբողջովին պարփակվում էին գծած տարածության մեջ. հաջորդ տողն առաջինից անջատվում էր նեղ, միջտողային տարածությամբ։

Այս հիմնական ձևն անխուսափելի էր և բոլոր դեպքերում կիրառվում էր։ Դրանից հետո արդեն գրիչներն ըստ իրենց վարժության և ունակության գործը շարունակում էին բոլորովին ազատ կերպով։ Ամենամեծ թիվ են կազմում այն արձանագրությունները, երբ տողերի մեջ գրիչն արդեն ազատ կերպով, առանց նախնական գծագրման, սկսում է գրել։ Բայց կան բազմաթիվ օրինակներ, երբ պարզ երևում է, որ փորագրելուց առաջ նախ կարմրադեղով (կարմիր ներկ. գործ էր ածվում նաև սև ներկ) գրված է և հետո միայն փորագրված մետաղե գրչով։ Կան շատ արձանագրություններ, երբ տառը փորելուց հետո նրա վերևի կամ ներքևի ծայրերում մնացել են դեռևս ներկի հետքերը։ Կան նույնիսկ արձանագրություններ, որոնց մի մասը փորագրված է, բայց մյուս մասը ինչ-ինչ պատճառներով մնացել է միայն ներկով արված. և վերջապես կան այնպիսիները, որ մնացել են միայն ներկով գրված (Կեչառիս, Գոշավանք և այլ տեղեր)։ Հնարավոր է, որ որոշ դեպքերում գործածված լինի նաև տրաֆարետ և հատկապես XI դարից հետո, երբ արձանագրություններ գրելը շատ մասսայա-

կան դարձավ, այդ խնդիրը պետք է արդեն նույն արձանագրության տառերի նուրբ չափումների միջոցով պարզել, որը, ինչպես ասացինք, չի կատարված։ Բայց եթե անգամ տրաֆարետը (կաղապար) գոյություն չի ունեցել, ան կարող էր գործադրվել այն դեպքերում, երբ արձանագրության վայրը պատերի հարթ տարածություններն են եղել և անշուշտ յուրաքանչյուր տառաձեն առանձին-առանձին պետք է կտրված լիներ։

Արձանագրությունների ճնշող մեծամասնությունը փորագիր է, շատ հազվադեպ են ուռուցիկ տառերով գրվածները։ Այդպիսի մի քանի դեպքեր կան միայն հուշարձանների պատերին, դրանք շատ կարճ, գրեթե մի նախադասությամբ հիշատակարաններ են (Նորավանք, Հառիճ) և ծաղկագիր, որ իրենց ոճով հիշեցնում են մատյանների գրչության արվեստը և շենքի վրա էլ զարդաքանդակի տեղում են տեղադրվում (քիվ, պսակ) և նրա դերը կատարում. հաճախ խաչքարերի վրա են հանդիպում և սովորաբար միայն կազմողների ստորագրությունների մեջ, որով այս վերջիններն իրենց վարպետությունն են ուզում շեշտել։

Գրչության տեխնիկայի վերաբերյալ այս ընդհանուր դիտողությունները գրականության մեջ հանդիպում են. բայց այս տարի մենք հանդիպեցինք այդ ասպարեզում մի նոր երևույթի ևս։

Վաղարշապատում, Հռիփսիմեի վանքի բակում, պատի տակ շարված են բազմաթիվ խաչքարեր. դրանցից երկուսը, որոնք հավանաբար նույն կազմողի գործեր են, ունեն հետևյալ գրչագրական առանձնահատկությունները։ Սովորականի պես այդ խաչքարերի ճակատը պսակվում է նեղ քիվով, որոնց վրա փորագրված են մեկական տող արձանագրություններ։ Որովհետև քիվը վերևից և ներքևից, կառուցման հետևանքով ունի բնական եզրեր, այդ պատճառով էլ գծելու կարիքը վերանում է. դրա փոխարեն ամբողջ տարածությունը գծված է այժմ վերից վար ուղղահայաց, իրար շատ մոտիկ խազերով և առանց քանոնի օգնության, այդ խազերն արդեն ոչ թե տառերի բարձրությունները, այլ նրանց բացվածքները — լայնությունները կանոնավորելու համար են։ Մեր հաշվումները պարզեցին, որ 6 այդպիսի ուղղահայաց խազեր բռնում են չորս սանտիմետր տարածություն։

Չնայած այս բոլոր տեխնիկական միջոցառումներին, այնուամենայնիվ այդ խաչքարերի վրայի տառերը շատ հեռու են լավագույն համարվելուց։

Այդ խաչքարերից մեկի վրա կա կազմողի անունը Սանվել, իսկ մյուսի վրա թվականը՝ ՌԱ=1552 թ.։

Շատ կարևոր է նաև արձանագիր գրչի վարձատրության խնդիրը։ Ինչպես հայտնի է, ձեռագիր մատյանների գրիչների ստացած վարձատրության և նրա չափի վերաբերյալ բավականին փաստեր կան նշված հիշատակարաններում։ Վիմական արձանագիր գրիչների վերաբերյալ նման փաստեր չկան. մեզ հայտնի է մի դեպք միայն, որի մասին կարծիք է հայտնվել, որ իբր խոսքը վերաբերում է գրչին վարձատրելու չափին, բայց մեզ թվում է, որ ճիշտ չէ։ Այդ արձանագրությունը գտնվում է Կեչառիսի վանքի գավթի հյուսիսային պատին ներքուստ և ունի հետևյալ բովանդակությունը.

1. Կամաւն այ ես Սարգիս եւ ամուսին իմ Ջամալ միայրանեցաք սբ. ուխտս Կեչառուաց եւ

2. առաջնորդք սորա հաստատեցին Գ. աւր պատարագ ի տարին Բ. ինձ Ա. ամուսնոյ իմոյ

3. Գրոյս ընձա Կ. դահեկան, կատարիչքն աւրհնին այ[1]։

Բանասեր Գ. Հովսեփյանն այս արձանագրության առթիվ գրել է. «...ոմն Սարգսի արձանագրությունը, որով յուր կնոջ Ջամալի հետ միաբանակցում է Կեչառիսի ուխտին, իսկ առաջնորդները հաստատում են երեք օր պատարագ իրեն և մեկը իր ամուսնոյն. «Գրոյս ընձա կ. դահեկան» ավելացրած է վերջում, որ գրելու վարձատրությունն է»[2]։

Մի երկու փաստական անճշտություններ. ըստ արձանագրության՝ նվիրատուներին տրված է ընդամենը 3 պատարագ, որոնցից երկուսը Սարգսին և մեկը նրա ամուսնին Ջամալին, իսկ ըստ Գ. Հովսեփյանի ստացվում է չորս՝ երեքը Սարգսին և մեկը Ջամալին, որը ճիշտ չէ։ Գ. Հովսեփյանը գրում

---

[1] Արձանագրությունը տալիս ենք մեր վերծանությամբ։

[2] Խաղբակեանք, Բ, 17, նաև Գ. Հավելված, Ա, 47։

է, որ 60 դահեկան հիշատակող նախադասությունը ավելացրած է արձանագրության վերջում, որը նույնպես ճիշտ չէ, այդ նախադասությունից հետո, ինչպես հստակ երևում է արձանագրությունից, կա դեռևս մի ամբողջ նախադասություն ևս. «Կատարիչքն աւրհնին յաստուծոյ»։

Այս ճշտումներից հետո պետք է ասել, որ 60 դահեկանը XIII դարի համար փոքր գումար չէր։ Այդ դարաշրջանի հարյուրավոր արձանագրությունների համեմատական ուսումնասիրությունը պարզել է, որ տարեկան պատարագի սովորական գինը մոտավորապես 20 դահեկան էր[1]։ Այս արձանագրության մեջ հենց երեք պատարագ է վաճառվել և 60 դահեկան ստացվել։ Անկարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր տարի կատարվող պատարագների գնի չափով կարող էր վարձատրվել 3 տողանոց մի արձանագրություն գրող գրիչը։ Անսովոր է մի քիչ միայն գրության ձևը, որը և առիթ է տվել այդ սխալ կարծիքին, սովորաբար արձանագրությունների մեջ ասվում է՝ օր. տվեցի 60 դահեկան և հաստատեցին երեք պատարագ. բայց և շեղումների շատ դեպքեր կան այդ սովորական ոճից։

Որքան էլ անցանկալի է, բայց պետք է ընդունենք, որ այս դեպքում, այդ 60 դահեկանը միայն երեք պատարագների սովորական գինն է, տրված վանքին և ոչ թե գրչին

---

1 Թ. Ավդալբեգյան, *Մի գաղանիք վիմական արձանագրությունների մասին*, «Տեղեկագիր» գիտ. և արվեստի ինստիտուտի, № 1, 1926, և Ս. Բարխուդարյան, *Դիտողություններ Երևանի կաթողիկե եկեղեցու արձանագրությունների մասին*, «Տեղեկագիր» ԳԱ-ի, № 5, 1947։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՔԱՐՏԱՇ, ՈՐՄՆԱԴԻՐ ԵՒ ԱՅԼ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Ճարտարապետներից ու քանդակագործ վարպետներից բացի, մեր միջնադարյան կոթողների շինարարության վրա աշխատել են բազմաթիվ ուրիշ կարգի վարպետներ ևս, որմնադիրներ, քարտաշներ, տաղձագործներ, քարհատներ, կիր մշակողներ և այլն, ապա սրանց կողքին սևագործ բանվորների մի մեծ բանակ, որն իր ուսերի վրա է կրել աշխատանքների ծանր բեռը, բայց մնացել է հավիտյան անհայտության մեջ։ Միջնադարյան որևէ կոթող դիտելիս, մարդ միայն զգալ կարող է, թե ինչպիսի վիթխարի մարդկային ուժ է գործադրվել այդ շինարարության վրա, տեխնիկայի այդ ցածր աստիճանի զարգացման պայմաններում։

Շինվել են ոչ միայն առանձնակի հուշարձաններ, այլև քաղաքներ, գյուղեր, բերդեր, հսկա ջրանցքներ և այլն. այդ բոլորը գերազանցապես մարդկային ուժի առավելագույն լարման և ամենապարզ տեխնիկական միջոցներով։

Ըստ տեղեկությունների, Գագիկ Արծրունին Աղթամար կղզում կատարած իր մեծամեծ շինարարությունների ժամանակ օգտագործել է իր բանակը, 6150 վարձու արհեստավորներ, 1500 աշակերտներ, 900 քար կտրողներ, 3000 օժանդակ աշխատավորներ, 400 ղեկավարներ և 7 նավ. շինարարության համար քարեր են բերվել հեռավոր տեղից, Բաղեշի Կոտոմ գյուղից։

Շինարարությունների այդ մեծ բանակները ոչ կարող էին և ոչ էլ հնարավորություն ունեին իրենց բաղկացուցիչ անդամների անունները որևէ կերպ հաղորդել ապագային։

Շինարար այդ մեծ կոլեկտիվները նման են շարքային զինվորների հսկայական բանակին, որն իր արյունով է ճակատամարտը շահում, բայց հաղթանակի դափնեպսակը դրվում է հրամանատարի գլխին, այդ հրամանատարը ներկա դեպքում ճարտարապետն է, և ապա շինարարության պատվիրատուն և տերը՝ աշխարհիկ և հոգևորական ֆեոդալը։

Շինարարական աշխատանքների հասարակական և տեխնիկական-մասնագիտական բաժանումների հետևանքով՝ վարպետների այն խմբերը կամ անհատները, որոնք սերտորեն կապված են եղել որևէ կառուցվող շենքի ձևավորման աշխատանքների հետ, որոշ դեպքերում աշխատել են իրենց կոլեկտիվը հիշեցնող կարճ արձանագրություններ գրել շենքերի պատերին, սկսած XIII դարից։

Այս հակիրճ հիշատակագրությունները հանդիպում են երկու ձևով, նախ՝ շինարարական ընդհանուր բնույթ կրող արձանագրությունների մեջ, մեկենասների և պատվիրատուների հիշատակությունից հետո, արձանագրության վերջում, ինչպես օրինակ, Անիի պարիսպների վրա, Գևորգի որդի Սարգսի արձանագրության վերջում.

...Ընդ նմին և զաշխատողս յիշեցէք.

կամ՝ Գոշավանքում երկու անգամ.

Տէր աստուած ողորմեա խաչատուր վար-

դպետին և Բարսղին, շինողաց եկեղեցւոյս. եւ ամենայն աշխատողացն ի սմա. թուին :ՉԴ: (=1255).

և մի ուրիշ, ավելի ընդարձակ արձանագրության մեջ նույնպես վերջում.

...յիշման արժանի արարէք զամենայն աշխատեալսն ի սմա (1291 թ.):

Սակայն ավելի սրտառուչ և գեղեցիկ են առանձնակի գրված և միմիայն «աշխատավորներին» հիշատակող հակիրճ արձանագրությունները: Այս ձևի լավագույն նմուշը գտնվում է Հաղբատավանքում: Հաղբատավանքի գլխավոր եկեղեցին շինել է Զաքարե ամիրսպասալարը, նրա արևելյան պատին արտաքուստ, վերին մասում, տեղավորված են Զաքարեի և Իվանեի քանդակները, որոնց ձեռքերին եղել է եկեղեցու կաղապարը. այս գեղեցիկ պատկերաքանդակից ոչ հեռու շնորհալի վարպետները ձևավորել են ուռուցիկ շրջանակ, որի մեջ նույնպես ուռուցիկ և ծաղկագիր տառերով մի տողով գրել են.

Աշխատաւորաց եկեղեցւոյս աստուած ողորմեսցի. ամէն:

Բացի վարպետների հիշատակության այս կոլեկտիվ ձևից, դեռևս յոթերորդ դարից սկսած գոյություն ունի մի այլ սովորություն ևս. դա հուշարձանի որևէ նշանավոր մասում վարպետի լոկ անվան հիշատակության ձևն է: Սակայն նախքան այդ մասին խոսելը պետք է մեր հուշարձանների վրա հանդիպող՝ լոկ անունների հիշատակությունների վերաբերյալ մի խնդիր պարզել:

Հուշարձանների պատերի, հատկապես դրսի երեսներին գրեթե ամենուր հանդիպում են բազմաթիվ անուններ փորագրված և կամ խաչեր՝ ու նրանց մոտ կարճ հիշատակություններ, ինչպես օրինակ, «Սարգիս յիշեցէք» կամ «Խաչս Մարտիրոսին է»: Սրանք մեծ մասամբ շենքերի արտաքին պատերի վրա են և միայն մարդաչափ բարձր. եկեղեցիներ այցելող մարդիկ կամ ուխտավորները հաճախ հենց իրենց ձեռքով, որևէ սուր մետաղի ծայրով խազմզել են իրենց անունները, այնպես ինչպես այժմ էլ, շատ մարդիկ անում են նույնը ոչ միայն շենքերի, այլև ժայռաբեկորների և ծառերի վրա անգամ: Իսկ այն դեպքերում, երբ հատարակ խաչ է դծված տատի վրա և հակիրճ հիշատակագրություն գրված, հավանաբար հատուկ վճարով հոգևորականները այդպիսի իրավունք են ծախել ցանկացողներին:

Այս կարգի հիշատակագրությունները և անունները հարկավ ոչ մի առնչություն չունեն շենքի կառուցմանը մասնակցած վարպետների հետ:

Բայց կան դեպքեր, երբ պատերի շատ բարձր մասերում, հաճախ նաև շենքի ներսի կողմից, մի որևէ ձևավորված մասի վրա փորագրված է լինում մի անուն. այսպիսի դեպքերն իհարկե միմիայն շինարար վարպետների հետ են կապվում, և այն էլ շինարարության ընթացքում գրված, որովհետև ոչ ոք չէր թույլ տա, որ պատահական մարդիկ սատիճանների միջոցով բարձրանային, մանավանդ շենքերի ներսում, ու իրենց անունները գրեին պատերի վրա:

Այս ձևով գրված վարպետների անունները երևան են գալիս շատ հնուց, VII դարից. Ճարտարապետ Թոդոսակ բաժնում տեսանք. որ Թոդոսակի անունից բացի Աթենի հուշարձանի ղանաղան կարևոր մասերի վրա գըրված են Ահարոն, Գիորգ, Սամսոն և Գրիգոր անունները՝ լրիվ ձևով և սալա նրանց անունների սկզբնատառերը պատերի զանազան մասերի քարերի վրա: Զվարթնոցի վարպետների քանդակներից միայն Ճարտարապետ Յոհանի գլխին է ամբողջ մնացել անունը, բայց այդ քանդակներից ոմանց գլխին ևս նշմարվում են ջարդված տառերի մնացորդներ, որոնք անշուշտ նույն ոճով պիտի անունների մնացորդներ լինեն, իսկ այդ քանդակների թիվը 32 պետք է լիներ, հետևաբար 31 անուններ ջարդատվել-կորել են:

1892 թ. պեղումների շնորհիվ Անիում բացված ս. Գրիգոր փոքրիկ եկեղեցու մի որմնասյան խոյակի վրա գրված է Գրիգոր անունը:

Նույն Անիում Աղջկաբերդի եկեղեցու հյուսիսային պատին գրված է Մխիթարիչ անունը:

Որոտնավանքի գլխավոր՝ ս. Կարապետ կենտրոնագմբեթ եկեղեցու (շինված 1007 թ.) հարավային պատի ճակատոր պսակված է եղել սովորականի նման մի մեծ գնդով. դրա վրա գրված է միայն մի անուն—Մարտիրոս. (այժմ ընկած է փլատակների մեջ):

Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի ս. Աստվածածին եռահարկ եկեղեցու (XIV

կար) վերին հարկի հարավային պատի վրա կա միջնորմով երկու մասի բաժանված և գեղեցկորեն ձևավորված պատուհան, դրա միջնորմին նույնպես գրված է մի անուն միայն—Շահիկ վարդապետ:

Շենքի նման տեղերում գրված անունները, անկասկած, վերաբերում են շինության մեջ կարևոր դեր կատարած վարպետներին, որոնցից ոմանք կարող են նաև գլխավոր ճարտարապետները լինել:

ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Բացի վերոհիշյալից գոյություն ունի վարպետների հիշատակության մի ուրիշ ձև ևս, որը թեև անուններ հայտնաբերելու համար գրեթե պիտանի չէ, բայց իր էությամբ, բավականին շատ տարածված լինելու և ուրիշ առանձնահատկությունների շնորհիվ կարող է թե՛ վարպետների և թե՛ ճարտարապետական կոթողների ուսումնասիրության բնագավառում որոշակի նշանակություն ունենալ: Դրանք այսպես կոչված «վարպետների նշաններն» են, որոնք հանդիպում են VI—X դարերի շենքերի պատերին, երեսապատման քարերի վրա:

«Վարպետների նշանները» կարելի է բաժանել երկու հիմնական խմբի. առանձին տառանշաններ և գծերից բաղկացած երկրաչափական ձևեր:

Այդ նշաններն իրենց առանձնակի և անհամաչափ դասավորության պատճառով չեն կարող դիտվել որպես զարդաքանդակ. ընդհակառակը՝ նույնիսկ վնասում են պատերի գեղարվեստական տեսքին:

Հայ ճարտարապետության պատմությանը նվիրված բազմաթիվ մեծ և փոքր աշխատությունների մեջ տարբեր հուշարձանների վրա գտնվող այդպիսի նշաններից հիշատակված են 100-ից ավելի:

Ճարտարապետության պատմության ընդհանուր աշխատությունների մեջ վարպետների այդպիսի առանձնակի նշանները դիտված են ճարտարապետական հին հուշարձաններ ունեցող ուրիշ երկրներում ևս (Պարսկաստան, Սիրիա և այլն):

Թե՛ ընդհանուր և թե՛ հայկական ճարտարապետության պատմությանը նվիրված աշխատություններում միահամուռ այն կարծիքն է արտահայտված, որ այդ նշանները քարերի վրա դնում էին քարտաշ և որմնադիր վարպետները, իրենց կատարած աշխատանքի չափը որոշելու և ըստ այնմ էլ վարձատրություն ստանալու համար:

Ճարտարապետության պատմաբան Ա. Լ. Յակոբսոնը այդ կարծիքը հաստատող մի հետաքրքիր մատենագրական հիշատակություն է մեջ բերել՝ հայկական ճարտարապետությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ, առնված Գրիգոր Նյուսացու աշխատությունից (IV դարի վերջ), որտեղ հիշատակված է, թե վարպետների հետ կնքվում են պայմանագրեր և խորանարդ մետր մշակված քարի համար վճարվում է մեկ սոլիդ:

Վարպետների նշանների մասին եղած այս բացատրությունները կարելի է ճիշտ համարել միայն ընդհանուր առմամբ, բայց իր մանրամասնությունների մեջ, հատկապես նրանցով վարպետների աշխատանքի քանակի որոշման և ըստ այնմ վարձատրելու չափի պարզաբանման խնդիրը դեռևս մնում է խիստ անորոշ. որքան էլ ցանկալի ու հետաքրքիր լինի այդ բացատրությունը, սակայն այժմ դրա հիման վրա ոչ մի կոնկրետ հաշվարկում անելու հնարավորություն չկա, թերևս հազարամյակներ մեզնից առաջ գոյություն ունեցող հաշվառման այդ ձևի վերաբերյալ մեր անգիտության պատճառով: Բայց կան նաև հետևյալ անհարիր հանգամանքները.

Ա. Ժամանակի այն հատվածում, այսինքն IV—XI դարերում, երբ հիմնականում ճարտարապետական շենքերի վրա երևան են գալիս վարպետների նշանները, գոնե Հայաստանում, ոչ բոլոր շենքերի վրա կան նման նշաններ:

Բ. Այն շենքերի վրա, որտեղ կան այդ նշանները, նշաններ չունեցող քարերի թիվը մնացյալների համեմատությամբ անհամեմատ շատ է. ի ցուցադրումն այդ փաստի բերենք մի հուշարձանի նկարագրությունն այդ տեսանկյունով: Սիսիանի շրջկենտրոնում գտնվող Սյունի վանքը, որը VI դարի վերջի և VII դարի սկզբի շենք է համարվում մոտավորապես, հիմքից սկսած մինչև գմբեթը մնացել է կանգուն. Նորոգումներ և կարկատաններ կան իհարկե, գրեթե բոլոր պատերի մեջ և մեծ մասամբ արտաքուստ: Այդ հուշարձանի վրա՝ համեմատությամբ այլ հուշարձանների՝ վարպետների նշաններով նշված

քարերի թիվը հասնում է 296-ի։ Այդ թիվը բաշխված է հետևյալ կերպ. հյուսիսային պատի վրա 75, արևելյան պատի՝ 43, հարավային պատի՝ 42, արևմտյան պատի՝ 17. գմբեթի քարերի վրա՝ 25 և շենքի ներսից, երեսպատման քարերի վրա՝ 94։ Ընդունում ենք, որ նորոգման ենթարկված և փոխված քարերի վրա եղած բավական նշաններ կորել են, հաշվի ենք առնում նաև, որ պատերի վերին մասերում կարող էին լինել նշաններ, որոնք մեր աչքից վրիպել են հատկապես շենքի ներսի մասում՝ մթության պատճառով, առատորեն դրանք 200-ի հասցնելով՝ ամբողջը կդառնա կլոր հաշվով 500 նշանագրված քար։ Բայց քանի՞ այդպիսի 500 քարերից է բաղկացած ամբողջ շենքը, հետևաբար մնում է անհասկանալի, թե նշաններ չունեցող քարերի համար ինչպիսի եղանակով պետք է հաշվառք կատարվեր։

Մինչև այժմ ոչ մի շենքի վրա նկատված չէ նշանագրված և աննշան քարերի դասավորության մեջ որևէ օրինաչափություն կամ սահմանազատող ծիր։ Բերենք կրկին Թևր Սյունի վանքից. մեր հիշատակած 296 նշանները այդ վայրում պատկանում են 39 խմբի, այսինքն՝ 37 նշան է ընդամենը, որոնց կրկնությունները տալիս է 296 ընդհանուր թիվը։ Այդ 39 նշաններից 19-ը հայերեն տառեր են և 18-ը զանազան գծային և երկրաչափական ձևերի նշաններ, որոնցից 2—3-ը կարելի է նմանեցնել հունարեն տառերի։

Նախ նշենք, որ այդ 39 նշաններից յուրաքանչյուրը կրկնվել է տարբեր քանակով, 1-ից մինչև 47 անգամ. կրկնության ամենաքիչ թիվը պատկանում է հայերեն Ա և Ն գրերի միացումից կազմած նշանին, մեկ անգամ, և անջատ Ա՝ երկու անգամ, ամենաշատ կրկնվածը հայերեն Ս տառի նշանն է — 47 անգամ, ապա Թ· տառանշանը՝ 44 անգամ։

Ամենաշատ գործածված Ս տառանշանը տեղաբաշխված է հետևյալ կերպ. հարավային պատին՝ 5 անգամ, արևմտյան՝ 3, հյուսիսային՝ 6, արևելյան՝ 7, ներսում՝ 18, հարավ-արևելյան խորան (ներսից)՝ 7, հյուսիս-արևմտյան խորան (ներսից)՝ 1։

Շատ գործածվածներից է նաև հայերեն Գ· տառանշանը, որը բաշխված է հետևյալ կերպ. հարավային պատին՝ 5 անգամ, արևմտյան՝ 4, հյուսիսային՝ 12, արևելյան՝ 5, գմբեթի վրա՝ 2, հիմքի երրորդ աստիճանի վրա՝ 3, ներսում՝ 8, ընդամենը 39 անգամ։

Ինչպես այս երկու, նույնպես և մնացած բոլոր 35 նշանները ցրված են շենքի բոլոր մասերի քարերի վրա խառնիխուռն, երբեմն կից քարերի վրա մի քանի տարբեր նշաններ, այնպես, որ հնարավոր չէ պատի մի որոշ տարածություն առանձնացնել և որևէ նշան գործածող վարպետի հատկացնել՝ նրան վերագրելու համար այդ տարածության մեջ շարված նաև այն քարերը, որոնք նշաններ չունեն։

Վարպետների նշանների այս խառնաշփոթ տեղադրությունը տեղիք է տալիս հետևյալ խորհրդածություններին. այսպես, եթե ընդունենք, որ այդ նշաններից յուրաքանչյուրը պատկանում է մեկ վարպետի և այն արված է աշխատանքի և վարձատրության չափը որոշելու համար, միթե արժե՞ր, որ այն վարպետները, որոնք մեկից մինչև չորս-հինգ քար էին տաշել, այդպիսի բարդ մեթոդի դիմեին վարձատրության մի չնչին քանակ որոշելու համար նախ՝ և ապա, ո՞ւմ հաշվին գրել հսկայական մեծամասնություն կազմող նշան չունեցող քարերը։

Դրությունը չի փոխվի, եթե նշանները ոչ թե մեկ անհատ վարպետի, այլ վարպետների մի խմբի, այսօրվա տերմինով՝ բրիգադի վերագրենք։

Ամփոփելով մեր ասածները վարպետների նշանների մասին, կարելի է որպես եզրակացություն հաստատել, որ դրանց մասին արտահայտված կարծիքի առաջին մասը, այն, որ նրանք վարպետների նշաններ են՝ ճիշտ է, որովհետև այդ նշանները փորագրվել են մշակված քարերի վրա այն ժամանակ, երբ դեռ պատի մեջ շարված չեն եղել, դրա ապացույցներն են նախ, նշաններ ունեցող քարերի և՛ կողքից, և՛ գլխիվայր շարվածքը պատերի մեջ, որը տեղի չէր ունենա անշուշտ, եթե շարվելուց հետո մեկը գրելու լիներ. երկրորդ՝ նշան ունեցող քարերը հանդիպում են շենքի ամենաստորին մասից սկսած մինչև գմբեթի վերին մասը։

Ինչ վերաբերում է այն կարծիքին, թե այդ նշանները հաշվառման և վարձատրության նպատակով են արված՝ այդ խնդիրը առայժմ մնում է անլուծելի։

Վարպետների նշաններն անշուշտ ավելի ընդարձակ բովանդակություն ունեն քան լոկ

փառասիրական դրդումով փորագրված լինել, բայց, դժբախտաբար, մենք առայժմ ի վիճակի չենք նրանց լեզուն հասկանալու. այդ բանին խանգարում են նախ և առաջ հուշարձանների քանդված լինելու և կամ, կանգունների պատերի վրա հետագայում կատարված նորոգումների հետևանքով նշաններ ունեցող քարերի տեղաշարժումներն ու իսպառ վերացումը, բայց այնուհանդերձ պետք է նշել նաև նշանների հավաքման գործի մինչև այժմ կիրառվող մեթոդի անճշտությունը, դա այն է, որ սովորաբար նշում են այս կամ այն նշանի գոյությունը հուշարձանների պատերին կամ ընկած քարերի վրա: Կարծում ենք, որ ավելի լուրջ ու կատարյալ հավաքման ձև գործադրելու դեպքում հնարավոր կլինի որևէ կարգ հայտնաբերել նրանց դասավորության մեջ, հետևաբար և նրանց լեզուն հասկանալ: Այդպիսի մի մեթոդ լիներ թերևս այն, որ կանգուն շենքերի պատերի ճիշտ քարտեզը գծվեր, բոլոր քարերի ստույգ տեղադրությամբ և ապա՝ նշաններ ունեցող քարերին, հենց քարտեզի վրա գրվեր համապատասխան նշանը: Պատի տեսքի այդ փոքրացած պատկերը թերթի վրա՝ գուցե հնարավորություն տար որևէ կարգ գտնել:

Անկախ այս բոլորից, վարպետների այդ նշաններն ունեն մի շարք այլ նշանակություններ ևս, կապված թե՛ ճարտարապետության և թե՛ ընդհանուր կուլտուր-պատմական այլ խնդիրների հետ:

Դիտված է, որ վարպետների նույն նշանները հանդիպում են նույն ժամանակներում կառուցված և իրարից մոտ կամ հեռու տարբեր հուշարձանների վրա[1]: Այս երևույթը առանց ավելորդ չափազանցությունների ընդունվելու դեպքում, կարող է ոչ միայն վարպետների, այլև նրանց խմբերի և աշխատանքի կազմակերպության վերաբերյալ որոշ պարզաբանումների բանալի ծառայել:

Զգույշ մոտեցման դեպքում, կարող է վարպետների նույն նշանների առկայությունը երկու տարբեր շենքերի վրա, երբեմն նըպաստել այդ շենքերից թվական չունեցողի ժամանակագրությունը որոշելու խնդրին. հարկավ, եթե դրան չեն խանգարում ոճական կամ այլ կարգի խիստ տարբերություններ, որովհետև նույն նշանը—տառ կամ գծային, կարող է մի այլ վարպետ էլ գործածել թե նույն և թե մանավանդ իրարից հեռու ժամանակներում. անհավանական չէ, որ նույն երկրաչափական նշանը ժառանգաբար գործածեր որդի վարպետն, իր հորից հետո:

Վարպետների նշանները կարող են երբեմն որևէ շենքի կենսագրությունը ճշտելու համար կարևոր նշանակություն ունենալ. օրինակ, Սյունի վանքի մեր արդեն հիշատակված Գ. տառանշանը գտնվում է և՛ եռաստիճան հիմքի քարերի, և՛ բոլոր պատերի ու գմբեթի քարերի վրա. այլ փաստերի բացակայության դեպքում միայն այս երևույթը բավական կլիներ ապացուցելու համար շենքի հիմնական մասերի նույն ժամանակի գործ լինելու հանգամանքը:

Նշեցինք, որ վարպետների նշանները երկու հիմնական խմբի են բաժանվում՝ տառային և զանազան երկրաչափական: Տառերը հավանաբար վարպետների անունների սկզբնատառերն են, դրա համար երբեմն փաստեր էլ են հանդիպում. օրինակ «Ճարտարապետ Թորոսակ» բաժնում տեսանք, որ որպես վարպետի նշաններ են գործածված Ա և Գ տառերը, նույն շենքի բեմի մասում կան լրիվ գրված՝ Ահարոն և Գիորգ անունները: Սյունի վանքում որպես վարպետի նշան է գործածված Ա. տառը (17 անգամ), նույն հուշարձանի հարավ-արևելյան խորանի ներսի հյուսիսային պատի վրա կա հետևյալ փակագիրը


, որը պետք է Արդար վերծանել և հավանաբար Ա նշանը գործածող վարպետի անունն է:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև երկրաչափական և գծային նշանները: Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք նման են հունարեն այբուբենի տառերին, բայց ավելի շատ են այնպիսիները, որոնք կարող են համեմատվել մեր ձեռագիր մատյաններից հայտնի «նշանագրերի» և նույնիսկ հայ գրերից ժամանակով ավելի հին, զանազան վայրերից հայտնի անծանոթ գրերի կամ նշանների հետ: Հատկապես այս

---

[1] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին, էջ 100—101. Թորամանյան, Նյութեր..., Ա, 269, 162, 173. Վ. Հարությունյան, Դվինի V—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 18, նույնի՝ По поводу датировки храма в Аруче, „Сборник трудов Ереван. политехнического института", № 2, 1946, стр. 29.

խնդրի համար վարպետների նշանների լրիվ հավաքումը խիստ կարևոր է և կարող է էական նշանակություն ունենալ։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Մեծամեծ շինարարությունների, ինչպես և առանձնակի մեծ հուշարձանների կերտման ընթացքում, միաժամանակ աշխատում էին հազարավոր սևագործ բանվորներ և մասնագետներ. սակայն մեր պատմական աղբյուրներում կառուցող մարդկանց այդ բանակի հասարակական կազմի, ինչպես նաև նրբին կազմակերպման հարցերի մասին շատ կցկտուր և անբավարար տեղեկություններ են պահպանվել։

Տեսանք, որ Մ. Խորենացին[1] Շամիրամին վերագրվող Վան քաղաքի և նրա շրջապատի շինարարության ընթացքի նկարագրության մեջ հիշատակում է, որ հավաքվել էին 42 հազար սևագործ բանվորներ (անարուեստից գործաւորաց) և 6 հազար մասնագետ արհեստավորներ (արուեստաւոր գործաւորաց), ընդամենը 48 հազար մարդ. իսկ Թ. Արծրունին հաղորդում է, որ Աղթամար կղզում կատարված աշխատանքների համար Գագիկ թագավորը հավաքել էր 10 հազարից ավելի «արուեստաւորք բազումք, որք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ»[2], որոնց հետ նաև իր բանակի անթիվ զինվորները։ Այս տեղեկություններից դժվար չէ կռահել, որ նման մեծամեծ շինարարությունների վրա թագավորներն ու նախարարները հավաքագրում էին իրենց տիրույթներից ճորտ գյուղացիներին, որոնք կազմում էին ամենամեծ թիվը և աշխատում ձրի, իրենց զորքերից որոշ մասեր, որոնք նույնպես ձրիաբար էին աշխատում և ապա բազմաթիվ «արվեստավոր»— մասնագետ վարպետներ, որոնց մի մասը վարձու աշխատողներ էին։ Այն հանգամանքը, որ աղբյուրներն այդպիսի դեպքերում հիշատակում են շինարարության տերերի ծախսած անթիվ գանձերի մասին, հասկանալի կդառնա, եթե նկատի ունենանք մի կողմից շինարարության վրա մարդկային ուժից բացի ծախսվող նյութերի գնումները, որոնք ամեն տիրույթում չկային անշուշտ, և ապա միջնադարի և նույնիսկ մինչև XIX դարի վերջերին էլ հատուկ սովորությունը, երբ ամեն տեսակ աշխատողները կերակրվում էին ձեռնարկատիրոջ հաշվին, բոլոր աշխատանքների ընթացքում։

Մեծամեծ և համեմատաբար փոքր շինարարությունների կազմակերպման գործի հասարակական պատկերը լրիվ չի լինի, առանց նկատի առնելու մի կարևոր հանգամանք ևս, որը գոնե Հայաստանի պայմաններում խիստ տարածված է եղել և խոշոր նշանակություն է ունեցել։ Մեր խոսքը վերաբերում է բոլոր տեսակի հասարակական նշանակություն ունեցող շինարարությունների և կառուցումների մեջ ժողովրդի կողմից ներդրված կամավոր և սիրահոժար օժանդակությանը, որի մասին պատմական աղբյուրներում համեմատաբար քիչ, բայց արձանագրություններում բազմաթիվ տեղեկություններ կան։

Հայ ժողովրդի մեջ հնագույն դարերից սկսած մինչև այժմ էլ մնացել է մի լավագույն սովորություն՝ ընդհանուր և օգտակար նշանակություն ունեցող ձեռնարկների ու կառուցումների մեջ կամավոր կերպով իր լուման մուծել։ Մինչև վերջերս էլ գյուղական վայրերում կամուրջների, աղբյուրների, եկեղեցիների, ճանապարհների և նման բազմաթիվ, հասարակական նշանակություն ունեցող կառուցումների, եթե նույնիսկ նրանց ձեռնարկողն ու մեկենասը լինում էր որևէ անհատ՝ ժողովուրդը սրտաբաց ու լայնորեն օժանդակում էր, ամեն մարդ իր բարոյական պարտքն էր համարում իր ունեցած նյութով, իր սայլով նպաստել գործի հաջողությանը։ Նույնիսկ անհատական տուն շինող գյուղացին վստահ է, որ բարեկամներից բացի, նաև մոտիկ ու հեռու հարևանները հոժարակամ կօժանդակեն իրեն։

Ժողովրդական այս գեղեցիկ սովորությունն արձանագրված ենք տեսնում դեռևս Ագաթանգեղոսի կողմից. պատմիչը հետևյալ կերպ է նկարագրում Հռիփսիմյան կույսերի նահատակության վայրերում վկայարաններ շինելու ընթացքը.

«...Եւ ամենայն բազմութեան մարդկանն լուեալ զայն՝ իւրաքանչիւր ընթացեալ պատրաստել զնիւթսն։ Եւ կուտէին ի հրամայեալ տեղիսն ոմն վէմ, ոմն քար, ոմն աղիւս, ոմն

---

1 Մ. Խորենացի, Պատմություն, էջ 51։

2 Թ. Արծրունի, Պատմություն, էջ 294։

մաչը փայտն, պատրաստէին խնդալից փութով և մեծաւ երկիւղիւ»[1]:

Հայտնի է, թե միջին դարերում որքան մեծ դեր են կատարել բերդերն ու ամրությունները հայրենի երկրի և ժողովրդի պաշտպանության գործում, արտաքին նվաճողների դեմ մղված պայքարի ընթացքում. բերդաշինարարությունը դիտվել է որպես հայրենասիրական գործ և վայելել է ժողովրդի համակրությունը: Անիի պարիսպների և բրգերի վրա պահպանվել են 22 արձանագրություն, որոնց բովանդակությունից պարզվում է, որ պարիսպի առանձին տեղամասեր և բրգերը շինվել են տարբեր մարդկանց ծախսով, դրանց մեջ են ինչպես իշխանների, մեծատունների, նույնպես և սովորական քաղաքացիների անունները: Հիշատակության արժանի է, որ այդ հայրենասիրական գործի մեջ անմասն չեն մնացել նաև կանայք. պարսպի մի հատվածը շինվել է պարոն Շահնշահի և իր կին Զազայի կողմից, բրգերից մեկը շինել է Շանուշը (կենակից Խեչերեսին), մի ուրիշը՝ Մամախաթունը:

Ի ։ՈԿԸ։ ԹՎԻՆ (1219) ՇՆՈՐՀԻՒՆ
ՔՐԻՍՏՈՍԻ ԵՍ ՄԱՄԱԽԱԹՈՒՆՍ ԴՈՒՍՏՐ
ԽԷՉԵՐԵՍԻՆ ԼԱՒՌԵՑՈ ԱՆԺԱՄ Ի ՔՐԻՍՏՈՍ
ԳՆԱՑԻ. ՅԻՄ ՀԱՒՐՆ Ի ՀԱԼԱԼ ԴՐԱՄԷՆ
ՈՐ ԻՆՁ ՏՈՒԵԱԼ ԷՐ, ԱՆՅԻՇԱՏԱԿ ԷԻ,
ՇԻՆԵՑԻ ԶԲՈՒՐՋՆՍ, ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԱՌ
ՔՐԻՍՏՈՍ: ԱՐԴ ԱՂԱՉԵՄ ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ
ՄԵԶ ԹՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈ-
ՍԷ[2]

Իսկ Կարսի բերդի շինարարությանը մասնակցել է ամբողջ ժողովուրդը, բերում ենք մեկը այդ հիշատակագրություններից:

Ի ԹՎԻՍ ։ՈՁԳ։ =(1234)
ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ. ԵՒ ՈՂՈՐՄՈ-
ՒԹԵԱՄԲ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՄԵՐՈ ԸՌՈ-
ԻՍՈՒԴԱՆԱՅ ՄԵՔ ԿԱՐ-
ՈՒՑ ՔՐԻՍՏՈՆԱՅՔՍ ՄԵ-
Ծ ԵՒ ՓՈՔՐ ՇԻՆԵՑԱՔ Զ-
ԲՐՋՆԵՐՍ. ՅԻՇԱՏԱԿ Մ-
ԵՁ ԵՒ ՊԱՏՐՈՆԻՆ ՄԵՐՈՅ[3]:

1 Ագաթանգեղոս, Պատմութիւն, էջ 392—394:

2 Աանում ենք ակադ. Հ. Օրբելու ձեռագիր աշխատությունից, սխալաշատ հրատարակությունները տե՛ս Հ. Սարգսեանց, Տեղագրութիւն, էջ 111, Ալիշան, Շիրակ, էջ 43:

3 Հ. Սարգսեանց, Անդ. 104, Ալիշան, Շիրակ, 85: И. Орбели, Христ. Восток, V, II, 1917.

Անչափ շատ են արձանագրական տեղեկությունները նաև եկեղեցիների շինություններին մասնակցած, նրա առանձին մասերը իրենց ծախսով կառուցած մարդկանց անունները՝ հին ժամանակներից սկսած մինչև վերջին դարերը: Հիշենք միայն մի քանի փաստեր. Սանահնի վանքի ճարտարապետական նշանավոր կոթողներից է Ամենափրկիչ կոչվող եկեղեցու արևմուտքից կառուցված գավիթը, որ շինվել է Հովհաննես առաջնորդի նախաձեռնությամբ և Ամիր Քրդի ու Գրիգոր վարդապետ Տուտեորդու օժանդակությամբ 1181 թվականին: Գավթի ներսի թաղակիր չորս հոյակապ սյուներից յուրաքանչյուրը շինվել է մի իշխանուհու ծախսով. դրանցից երեքը կառուցել են Կյուրիկե Գ. Բագրատունի աղջ'կներ Մարիամը, Բավրինան, Ռուսուդանը և չորրորդը՝ սրանց մայր՝ Թամարի հորաքույր Ռուսուդանը: Սյուներից յուրաքանչյուրի վրա գրված է համապատասխան բովանդակությամբ արձանագրություն[1]:

Դիլիջանից 2—3 կիլոմետր դեպի հյուսիս գտնվում է Ջուխտակ վանքը՝ շինված XIII դարի սկզբին: Ներսի խորաններից երկուսը շինվել են տարբեր մարդկանց ծախսով, որոնց հիշատակին և գրվել են համապատասխան արձանագրություններ. այսպես՝ հյուսիսային խորանի մուտքի գլխին.

Ի ԹՎ. ՇԾԶ=(1107). Ես Մայրացեալս շինեցի զխորանս ի հալալ արդեանց իմոց և առաջնորդք սորա ետուն ի տարումն.. ժամ տեառնընդառաջին. խափանողքն դատին ի տեառնէ:

Հարավային խորանի մուտքի գլխին.

Յայսմ խորանի ։Ա. ժամ ի տարնի առուր Սարգսին՝ Սարգսին արասցեն, զի նորա արդեամբք շինեցաւ խորանս. ով զժամս խափանէ՝ դատի և տեառնէ[2]:

Մի վերջին փաստով բավականանանք. Մարտունու շրջանի Զարագյուղ գյուղի մոտ է գտնվում Մաստրուց անապատ կոչվող հին վանքը. XVII դարի սկզբին վանքում կատարվել են մեծ նորոգություններ, այդ առթիվ գրված արձանագրություններից մեկն ունի հետևյալ բովանդակությունը.

1 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, էջ 27 և արձանագրություններ № 28, 29, 31:

2 Մ. Բարխուդարեանց, Արցախ, 262—263:

ՅԻՇԵՑԷՔ ՔՍ. զԹաբէն, որ սայլն շնորհեց վասն Տարի կրելոյն... ԹՎ. :ՌԾ:=1601)[1]:

* * *

Ավելի սակավ ու աննշան են մեզ հասած տեղեկությունները շինարարությունների վրա հավաքագրված մեծ թիվ կազմող բանվոր և արհեստավոր մասսայի ներքին կազմակերպության վերաբերյալ։

«Միջնադարյան ճարտարապետներ» բաժնում տեսանք, որ Խորենացին Շամիրամին վերագրվող Վան քաղաքի և շրջապատի շինարարության աշխատանքներում հավաքագրված 48 հազար աշխատավորներին բաժանել էր երկու խմբի «անարուեստից գործաւորաց», որոնց թիվը 42 հազար է և «արուեստաւոր-գործաւորաց», որոնց թիվը վեց հազար էր, ըստ որում այս վերջիններս, ըստ պատմագրի, արհեստավորներ են եղել՝ փայտի, քարի, պղնձի և երկաթի։ Սակայն այդ բոլորը բաժանված են եղել դասերի կամ խմբերի. «Հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել», որոնց գլխավորներ են կարգվում ընտրագույն վարպետներ,— «ի վերայ իւրաքանչիւր դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել»։ Վերջին հաշվով ստացվում է, ըստ պատմագրի, որ 48 հազարանոց շինարարների բանակը բաժանվել էր դասերի, արդի իմաստով՝ բրիգադների, որոնց յուրաքանչյուրի վրա նշանակվել են հմուտ վարպետներ, մեր իմաստով բրիգադիրներ։ Շինարարների համար գծված այս պատկերը տեսականորեն ճիշտ է և մոտավորապես նման մեր այսօրվա գործնական աշխատանքների մեջ կիրառվող նույն ձևերին։

Պատմահոր նկարագրած այս դասդասումը եթե փոխադրենք հատկապես ճարտարապետական կոթողների կառուցման աշխատանքների մեջ, էական փոփոխություն չի ենթարկվի։ Այստեղ պետք է կազմակերպվեն միայն այն դասերը՝ բրիգադները, որոնք անհրաժեշտ են կառուցման տեխնիկայի համար. այստեղ պետք է լինեն քարհատների, որմնադիրների, քարտաշների, կրագործների, ժողովրդի բանվորների և այլ խմբեր՝ դասեր, որոնցից յուրաքանչյուրին պետք է ղեկավարի հմուտ վարպետ-բրիգադիրը։ Հատկապես ճարտարապետական կառույցների համար մեր մատենագրության և վիմական արձանագրությունների մեջ հիշատակված կա մի պաշտոն ևս, դա շինարարական աշխատանքների ղեկավարի կամ ղեկավարողների պաշտոնն է, որը մի քանի անուններով է հանդես գալիս. այսպես, Սեբեոսը նկարագրելով ս. Գրիգոր եկեղեցու շինությունը Դվինում՝ ասում է. «Ժողովեաց ճարտարապետս քարի և կացոյց ի վերա նոցա հաւատարիմ գործակալս»[1]։

Ղևոնդ պատմիչը Կարնո բերդի շինության առթիվ հիշատակում է. «Կացուցանէր գործավարս ի վերա գործոյն»[2]։

Մ. Կաղանկատուացին այդ նույն պաշտոնի համար գործ է ածում երեք անուն, գործունեայս, գործակալս և հրամանատարս[3]։ Այդ պաշտոնի ավելի պարզ պատկերը գծված է Ս. Օրբելյանի մոտ. նկարագրելով Սյունյաց տիկնոջ որոշումը՝ Գնդեվանքը շինելու համար, պատմագիրը ավելացնում է.

«Սոյա յարուցեալ տիկնոջն եւ ածել վաղվաղակի արուեստաւորս ի ճարտար քարտաշաց և սկիզբն առնէ շինուածոյն՝ կացուցեալ ի վերայ վանացն երեցն զՀայր Սարգիս, և գործակալ զԵղիշա երեց և նկարիչ. և յանձնէ զնա Տեառն Յակոբայ մեծաւ հոգաբարձութեամբ ի կատարումն ածել»[4]։

Հիշատակված երեք անուններից հայր Սարգիսը նշանակվել է վանահայր, Եղիշե երեցն ու նկարիչը շինարարական աշխատանքների ղեկավար, իսկ վերջինը՝ Հակոբը՝ Սյունյաց եպիսկոպոսն է (918—958), որի վրա պարտականություն է դրվել հսկել շինարարության ընթացքին։ Նկարիչ Եղիշե երեցի գեթ բացահայտող մի արձանագրություն էլ, հենց իր անունից գրված, մնացել է վանքի գլխավոր եկեղեցու հարավային պատի արևմտյան անկյունում, երեսպատման մի քարի վրա, 10 տողով.

---

1 Այս արձանագրությունը հրատարակված չէ, առնում ենք մեր «Օրագրից»։

---

1 Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 65։

2 Ղևոնդայ վարդապետի Պատմութիւն, էջ 134։ Պետերբուրգ, 1887։

3 Մովսէսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 45, 89։

4 Ս. Օրբելեան, Պատմութիւն, գլուխ Ծ։

:ՅՁ: =(931) Թ(ՎԱ)Կ(ԱՆ)ԻՍ ԵՍ Ե/ՂԻՇԱ Ի :Ձ: ԿԱ/ՐԳԷՍ ԱՌԱ/Ջ ԱՐԱՐԻ ԱՌ/ԱՋՆՈՐԴՈԻ/ԹԵԱՄԲ ՍԱՐ/ԳԻՍ ՔԱՀԱՆԱՒ. ՈՐ ԿԱՐԴԱ/Ք ՏՐ ՈՂՈՐՄ/Է ԱՍԱՑԵՔ[1]։

Իսկ առաջնորդ Սարգիս քահանայի անվան հիշատակումով մի փոքրիկ արձանագրություն գտնվում է նույն եկեղեցու արևմբտյան պատի վերին մասում, 4 տող.

ԽԱՉՍ ՍԱՐ/ԳԻՍ ԱՌԱՋ/ՆՈՐԴԻ ԵԿԵ/ՂԵՑՈՅՍ Է[2].

Եղիշե քահանայի համար պետք է ավելացնենք, որ խղուր չէ Ստ. Օրբելյանը նրան գործակալ լինելուց բացի նաև նկարիչ անվանում։ Գնդեվանքի գլխավոր եկեղեցու ներսը, հենց շինության ընթացքում գաջով ու կրով ծեփված է եղել և որմնանկարներով զարդարված. պատմագիրը հիշատակում է՝ «կանգնէ զտունն Աստուծոյ և նկարակերտ յօրինուածօք զարդարէն զառաստաղս և զորմունս նորա»[3]։ *Որմնանկարների մնացորդները մինչև այժմ էլ կան տեղում։*

Շինարարական աշխատանքների ղեկավար այդ գործակալների մասին բազմաթիվ ցուցումներ կան նաև վիմական արձանագրությունների մեջ։ Հաճախ հանդիպող «շինեցի զեկեղեցիս ի ձեռն» *դարձվածքը երբեմն վերաբերում է ճարտարապետին, բայց այն դեպքերում, երբ նշված անձնավորությունը հոգևորական է և մանավանդ առաջնորդ՝ ապա այն անպայման աշխատանքների ընդհանուր ղեկավար և կազմակերպիչ գործակալն է։ Այս խնդիրը պարզաբանող ամենացայտուն օրինակը տեսանք* «Բուռ վարպետ» *բաժնում։ 1301 թվականին շինված այդ հուշարձանը կառուցել է Բուռ ճարտարապետը, որի հատուկ արձանագրությունը և անվան առանձին հիշատակումները պահպանվել են։ Շինարարական մեծ արձանագրության մեջ մեկենաս Գոնցան հայտարարում է.*

«...Շինեցի անուամբ սպիտակաւոր Աստուածնին, ի ձեռն բստ հոգոյ որդոյ մեր Կիրակոս վարդապետին»*. իսկ իր կողմից գրած արձանագրության մեջ Կիրակոս վարդապետն ավելացնում է.* «Ես Կիրակոս վարդապետ Գետկեցի, անձամբ և ընչիւ աշխատեցա ի շինութիւն վանացս և եկեղեցոյս»։

Այս օրինակի մեջ ճարտարապետի և գործակալի դերն ու նշանակությունը միանգամայն պարզ է հայտնաբերվում։ Գործակալները շինարարական աշխատանքների ընդհանուր կազմակերպիչներն են՝ բանվորներ հավաքագրող, նրանց աշխատանքներին հետևող, սնունդը կազմակերպող և հաշվառք կատարողներ են, իսկ ճարտարապետները շենքի նախագծողը և բուն կառուցման ղեկավարներն ու պատասխանատուն, շենքի տեխնիկական ու գեղարվեստական մասի հեղինակը։

* * *

Պատմական աղբյուրներում մի քանի հուշարձանների շինարարության նկարագրությունն այն ձևով է տրված, որ կարծեք թե աշխարհիկ և հոգևոր անվանի մարդիկ ճարտարապետներ են եղել. այսպես օրինակ, Աղթամար կղզում կատարված մեծամեծ շինարարության նկարագրության մեջ Թ. Արծրունին ունի հետևյալ հատվածը.

«Յայնժամ և իւր իսկ արքայի (Գագիկ) ամենիմաստ հասողութեամբն հանդերձ բազում արուեստաւորօք զլար ճարտարութեան ի ձեռն առեալ գծել, միանգամայն և գծագրել նշանակել *առ ստորոտովն լերին, որ է գագաթն կղզոյն, զտեղիս դրոսացուցանողս վայելչաւորս, ըստ արժանի կայենից արքայական իւրոցն հանգստեան ձգելով պարսպունս, յարդարելով զփողոցս և դարս դարս դարաստանաց և գահս ըստ գահից տէրութեանց և բուրաստանս և պարտէզս բուրաստանաց և ծաղկոցաց որոշեալ հովիտս. զորս վաղվաղակի ածեալ ի կատարումն հասուցանէ զամենայնն»*[1]։

Իսկ Հոփսիմյանց վկայարանների շինության առթիվ Լուսավորչի մասին հետևյալն է պատմում նրա կենսագիրը.

«Եւ ինքն սուրբն Գրիգորիոս զլար ճարտարութեան շինողացն ի ձեռն առեալ՝ զեբանելեացն վկայարան հանգստարանացն դհիմունս յօրինէր»[2]։

---

[1] *Արձանագրությունը մեր վերծանմամբ է. Թերի և խայններով վերծանումները համեմատիր՝* Քաջբերունի. *«Փորձ», 1877—78, № 4։* Ալիշան, *Սիսական, 106։*

[2] *Ինչպես նախորդը։*

[3] Ս. Օրբելեան, *Պատմութիւն, գլուխ Ծ։*

[1] Թ. Արծրունի, *Պատմութիւն, դպրութ. Դ, գլուխ Է։*

[2] Ագաթանգեղոս. *Անդ, 393։*

Անշուշտ այս հատվածների մեջ դեր է խաղում պատմիչների՝ իրենց սիրած հերոսներին ճարտասանորեն ևս փառաբանելու միտումը, սակայն խնդիրն ունի այլ նշանակություն ևս, որը բացահայտելու համար ավելի հարմար է առանձնացնել աշխարհիկ իշխանի և հոգևոր պետի դերերը շինարարության ղեկավարման ընթացքում։

Սեփականատիրության պայմաններում յուրաքանչյուր անհատ իր շինել տված տան կամ այլ շենքի տեղադրության, ծավալի և ընդարձակության խնդիրները, կապված իր միջոցների, հնարավորությունների և ճաշակի հետ՝ նախօրոք թելադրում և հրահանգում է շենքի իսկական հատակագիծը կազմող և կառուցող ճարտարապետին։ Մի այդպիսի օրինակ բերված է այս աշխատության «Միջնադարյան ճարտարապետներ» ընդհանուր բաժնում։ Այնտեղ տեսանք, որ XIII դարում, Անիի հայտնի դրամատեր ու կալվածատեր Սահմադինի գործակատար Սամդինը պարծանքով հիշատակում է, որ իրենց նախկին տերերից Մրենում գնել է հողամաս և «առանց վարդպետի (ճարտարապետի) ձևեցի ու հիմն ձգեցի դարպասիս ու դրախտիս»․ Ներկա դեպքում սեփականատիրոջ լիազոր գործակալն է նույն դերը կատարել։

Եթե մի շենքի համար այդպես է, ապա պարզ է, որ ձեռներեց արքա Գագիկը միանգամից քաղաք շինելու ընթացքում, որը, միաժամանակ, ռազմական կարևոր նշանակություն ուներ, Վանա լճի ջրերով շրջապատված փոքր տարածության վրա ինքը պետք է ծրագրեր ու հարմարեցներ բերդ-քաղաքի զանազան մասերի դասավորությունը։ Ներկա դեպքում ևս ռազմիկ արքան ոչ թե ճարտարապետ է, այլ իր ռազմա-քաղաքական նպատակների ու ճաշակի համեմատ տեղանքի ընտրության և նրա վրա ցանկացած կառուցումների դասավորության հրամայողն ու թելադրողն է։

Բոլորովին այլ ծագում և նշանակություն է ունեցել հոգևոր պետերի դերը կրոնական շենքերի կառուցման գործում։ Հայ եկեղեցու առաջին պետն, ինչպես հայտնի է, եղել է Գրիգոր Լուսավորիչը և առաջին եկեղեցու— վկայարանի հիմնադրման առթիվ է, ինչպես տեսանք վերևում, Ագաթանգեղոսի նկարագրությունը։ Երբ Լուսավորիչը հիմնադրում էր քրիստոնեական առաջին եկեղեցին, Հայաստանի ճարտարապետներից ոչ մեկը դեռևս ծանոթ չէր նոր կրոնի եկեղեցու ո՛չ աշխարհագրական կողմերի վերաբերյալ նրա ունեցած դասավորությանը, ո՛չ ծիսական կարգի համապատասխան նրա բաժանմունքներին, և ո՛չ էլ ընդհանուր տեսքին։ Միակ մարդը, որ Սիրիայում և այլուր իր մանկությունից տեսել և ուսումնասիրել էր այդ բոլորը, և հատուկ այն նպատակով, որ Հայաստանում գործադրեր՝ դա հենց ինքը Գրիգոր Լուսավորիչն էր, և բնական է, որ առաջին շենքի վերաբերյալ բծախնդիր մանրամասնությամբ պետք է ցուցումներ տար և անձամբ ղեկավարեր շինությունը, որովհետև այն օրինակ էր ծառայելու հետագա ծավալուն շինարարության համար։ Ամենակարևորն այդ նոր շենքի կառուցման մեջ նրա հատակագծի և բաժանմունքների դասավորության խնդիրը պետք է լիներ և Ագաթանգեղոսի վկայությունից էլ երևում է, որ Լուսավորիչը ճարտարապետության լարը վերցնելով — «զերանելեացն վկայարան հանգստարանացն զհիմունս յօրինէր»։

Կրոնական հասկացողությունները շատ պահպանողական են, նրանք սրբագործվում են սովորությամբ և հարատևում։ Այն, որ հայ եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորիչն ինքն է առաջին հայ եկեղեցու հիմքերը գծել և այդ դեպքն արձանագրվել է նրա կենսագիր Ագաթանգեղոսի կողմից, պարզ է, որ այդ երևույթը պետք է սրբագործվեր և օրենքի ուժ ստանար հետագայի համար։ Հին ժամանակներից սկսած յուրաքանչյուր եկեղեցու հիմքը ծրագրելու իրավունքը պատկանել է շրջանի եպիսկոպոսին և քորեպիսկոպոսին, կամ եպիսկոպոսի հրամանով՝ պերևտուտին (այցելու հովիվ—գործակալ), հակառակ դեպքում նույնիսկ քանդվում էր հիմքը[1]։

Այս երևույթը իր վերջնական կանոնական ձևակերպումով մուտք է գործել Գոշի «Դատաստանագրքի» մեջ, որը և բերում ենք ամբողջովին։

«Զհիմունս եկեղեցւոյ եպիսկոպոսն միայն իշխեսցէ ծրագրել ուղղափառութեամբ, կամ քորեպիսկոպոս և կամ պերետուտն հրամանաւ եպիսկոպոսին։ Ապա թէ առանց եպիսկոպոսի կամ քորեպիսկո-

---

[1] Ն. Մելիք Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, Ա գիրք, Շուշի, 1903, էջ 483։

պոսին որ յանդգնեսցի՝ քակել զայն հիմունսն հրամայեցաք. ապա թէ թողցի երկրորդումն սահմանք կարգեսցեն, և այնպէս կարգ եկեղեցւոյ լինին անըստգտանելի. և եթէ ի պատահմունս հայիցի եպիսկոպոս և ի գեղջն և ոչ քակեսցէ, երկրորդել հրամայէ զկարգն, և այդ այդոցիկ դատաստան է հաստատուն»[1]:

Սկզբնական շրջանում գիտակցաբար կամ անգիտակցաբար զգալով հեթանոսական տաճարի էլեմենտների մուտքի վտանգը քրիստոնեական եկեղեցու կառուցվածքի մեջ, եկեղեցու հայրերը Լուսավորչից սկսած՝ հսկողություն են սահմանել նորաշեն եկեղեցու հատակագծի և մասերի դասավորության վրա, որը հետագայում Լուսավորչի հեղինակության և սովորույթի պահպանողականության շնորհիվ՝ ստացել է օրենքի ուժ և ձևակերպվելով մտել է կանոնագրքերի մեջ:

Ինչպես իր՝ Լուսավորչի, նույնպես և, ըստ կանոնների, եպիսկոպոսի գործն, ուրեմն, ոչ թե ճարտարապետությունն է, իր իսկական առումով, այլ շենքի տեղի ընտրությունը, հատկապես հիմքերի ճիշտ դասավորությունը՝ ըստ աշխարհագրական կողմերի, և բեմի, խորանների ու այլ մասերի կանոնական ձևով դասավորումը:

Այսպիսով, թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր պետերի դերերը շինարարության ղեկավարման ընթացքում մնում են պատվիրատու տիրոջ ընդհանուր թելադրանքների ու հրահանգների սահմաններում և առնչություն չունեն ճարտարապետի իսկական ստեղծագործական աշխատանքների հետ:

Մեր միջնադարյան մշակույթի մեջ ամենափայլուն տեղերից մեկը գրավող ճարտարապետության ստեղծագործողները ժողովրդի ծոցից ելած տաղանդավոր ճարտարապետ-վարպետներն են, որոնք քանդակազարդող, քարտաշ, որմնադիր, արձանագիր, գրիչ և այլ վարպետների հմուտ աշխատակցությամբ կերտել են հայ ժողովրդի մշակութային պարծանք հանդիսացող ճարտարապետական հոյակապ կոթողները, որոնք մեր ժողովրդի ստեղծագործ մտքի և մեր միջնադարյան տաղանդավոր վարպետների փառքի դափնեպսակներն են:

---

[1] Մխիթար Գոշ. Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 141—142, հրատարակություն Վահան ծ. վարդապետի Բաստամեանց:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Նկ. 1. Զվարթնոց տաճարի վերակազմությունն ըստ Թ. Թորամանյանի։
Գործ՝ ճարտարապետ Յոնանի։

Նկ. 2. Զվարթնոց տաճարի բեկորներ. երկու զարդաշարերի քանդակներ։



Նկ. 3. Աղթամարի ս. Խաչ տաճարը: Գործ՝ ճարտարապետ Մանվելի:

Նկ. 4. Աղթամարի ս. Խաչ տաճարի քանդակներից:

Նկ. 5. Կարմիր վանք. եկեղեցի: Գործ՝ Սամենան ճարտարապետի:



Նկ. 6. Արգինա տաճարի մնացորդները: Գործ՝ Տրդատ ճարտարապետի:



Նկ. 7. Անի. Մայր տաճարը։ Գործ՝ Տրդատ ճարտարապետի։



Նկ. 8. Անի. Մայր տաճարի խորշն ու պսակը։ Գործ՝ ճարտարապետ Տրդատի

Նկ. 9. Նորադուզ. ս. Գրիգոր եկեղեցի։ Գործ՝ Խաչատուր քարգործի։



Նկ. 10. Գոշավանք. ընդհանուր տեսքը։

Նկ. 11. Գոշավանք. ս. Լուսավորիչ։ Գործ՝ Մխիթար Հյուսնի։



Նկ. 12. Ծաղկաձոր. Կաթողիկե եկեղեցի։ Գործ՝ Վեցիկ վարդպետի։

Նկ. 13. Ծաղկաձոր. Վեցիկ վարդպետի հուշարձանը։

Նկ. 14. Տեղեր. Հուշարձանի ընդհանուր տեսքը։ Գործ՝ Աղբայրիկ վարպետի։

Նկ. 15. Տեղեր. եկեղեցի։ Գործ՝ Աղբայրիկ վարպետի։



Նկ. 16. Կարսի բերդի պարիսպները. քանդված 1878 թ.։

Նկ. 17. Երնջատափ. հուշարձանների ընդհանուր տեսքը: Գործ՝ Յովհաննես վարդապետի



Նկ. 12. Հաղարծին, սեղանատան տեսքը հարավ-արևմուտքից: Գործ՝ Մինաս վարդապետի:



Նկ. 13. Հաղարծին. սեղանատան ներսը: Գործ՝ Մինաս վարդապետի:



Նկ. 20. Հրազդան. Հուշարձանի տեսքը հյուսիս-արևելքից։ Գործ՝ Մխիթար և Շնորհավոր քարգործների։



Նկ. 21. Հրազդան. Հուշարձանի արևմտյան ճակատը։ Գործ՝ Մխիթար և Շնորհավոր քարգործների։



Նկ. 22. Ախտա. հուշարձանի արևմտյան կողմի ճակատը, աջում՝ հեղինակների ստորագրությունը։



Նկ. 23. Մարախրոս գյուղ. գյուղի հիմնադրման հուշարձանը։ Գործ՝ Շնորհավորի։



Նկ. 24. Արատես. Գավթի խաչավորված կամարները։
Գործ՝ Սիրանես վարդապետի։

Նկ. 25. Նորավանք. Սմբատ Օրբելյանի տապանատան մուտքը։
Գործ՝ Սիրանես վարդապետի։

Նկ. 26. Սմբատ և Էլիկում Օրբելյանների գերեզմանաքարերը Սիրանեսի կերտած տապանատան մեջ։

Նկ. 27. Նորավանք. Սիրանեսի կերտած տապանատունը հյուսիսից և նրա շինության ու Սիրանեսին տրված վարձատրության արձանագրությունը։



Նկ. 28. «Խաչին խութ». Սիրանեսին տրված կալվածքում կանգնած նրա հարազատների հուշարձանները։

Նկ. 29. «Խաչին խութ». Սիրանեսին տրված հողամասի կալվածագիրը։

Նկ. 30. Նորավանք. Մոմիկ վարդպետի կերտած խաչքարը։



Նկ. 31. Նույն խաչքարի ստորին մասի արձանագրությունը Մոմիկի ստորագրությամբ։



Նկ. 32. Նորավանք. Մոմիկ վարդպետի կերտած խաչքարը (ձախից). գավթի մեջ։

Նկ. 33. Մոմիկ վարդպետի կերտած բազմահարկ հուշարձանը Նորավանքում (այժմյան տեսքը)։



Նկ. 34. Նորավանք. Մոմիկ վարդպետի կերտած բազմահարկ հուշարձանի Բ. հարկի ճակատը։

Նկ. 35. Մոմիկ վարդպետի հիշատակին կանգնեցրած խաչքարը Նորավանքում։



Նկ. 36. Գեղարդավանք. ժայռափոր հուշարձանի ներսը։
Գործ՝ Գալձակ վարդպետի։



Նկ. 37. Գեղարդավանք. ժայռափոր հուշարձանի ներսը։
Գործ՝ Գալձակ վարդպետի։

Նկ. 38. Բնունիս. Գրգորիկ վարդապետի կերտած հուշարձանը։



Նկ. 39. Բնունիս. Գրգորիկ վարդապետի հիշատակագրությունը։

Նկ. 40. Ջինչիրլու. Բուռ վարպետի կերտած հուշարձանների խումբը

Նկ. 41. Մողնի եկեղեցի։ Գործ՝ Սահակ և Մուրատ ճարտարապետների։

Նկ. 42. Դարաբաս, կամուրջ Որոտանի վրա։ Գործ՝ ուստա Հայրապետի։

Նկ. 43. Նույն կամուրջի շինարարական արձանագրությունը, ուստա Հայրապետի ստորագրությամբ։

Նկ. 44. Շամիրամ գյուղ. մենհիր (մենաքար)։

Նկ. 45. Ձկնակերպ վիշապ. Իմիրզեկում (Գեղամա լեռներ)։



Նկ. 46. Ուրարտական սեպագիր կոթող (Վան)։

Նկ. 47. Տուտեորդու խաչքարը Սանահնում։

Նկ. 48. Արտաշիսյան սահմանաքար Ծակքար գյուղից (Դեղարքունիք)։

Նկ. 49. Քառակող կոթող (Հառիճ)։



Նկ. 50, 51. Քառակող կոթողի երկու երեսները (Ագարակ)։

Նկ. 52. Խաչքար Մեծ Մազրա գյուղում՝ 881 թ.։

Նկ. 53. Խաչքար Տեկորում՝ 964 թ.։

Նկ. 54. Խաչքար Նորադուզից՝ 996 թ.։

Նկ. 55. Ամիրսպասալար Զաքարեի հաղթության հուշարձանը (այժմ Իսարլու գյուղում) 1200 թ.։



Նկ. 56. Անի. Սարգսի ձևավորած մուտքը (վերակազմություն Թ. Թորամանյանի)։

Նկ. 57. Նույն մուտքի աստղաձև քարերից մեկը՝ Սարգսի ստորագրությամբ։



Նկ. 58. Սանահին. Տուտեորդու խաչքարը։ Գործ՝ Մխիթար և Ավետիս կազմողների, 1184 թ.։

Նկ. 59. Գեղարդավանք։ Գործ՝ Տիմոթ և Մխիթար կազմողների, 1212 թ.։

Նկ. 60. Մանկուք։ Գործ՝ Մարտիրոս կազմողի, 1213 թ.։

Նկ. 61. Դսեղ։ Գործ՝ Վա՛հրամի. 1281 թ.։

Նկ. 62. Վարդենիկ։ Գործ՝ Վարդան քարգործի, 1286 թ.։

Նկ. 63. Գոշավանք։ Գործ՝ Պավղոսի, 1291 թ.։



Նկ. 64. Գոշավանք։ Գործ՝ Պավղոսի, 1291 թ.։

Նկ. 65. Ջինջիրլու։ Գործ՝ Սարգիս վարդապետ նկարչի, 1301 թ.։

Նկ. 66. Նոր Բայազետ։ Գործ՝ Իգնատիոս և Հովհաննես կազմողների, 1535 թ.։

Նկ. 67. Աղխաման։ Գործ՝ Ակոր կազմողի, 1542 թ.։

Նկ. 68. Երանոս։ Գործ՝ Ակոր կազմողի, 1575 թ.։

Նկ. 69. Վերին Ղարանլուխ։ Գործ՝ Ակոբ նկարողի։

Նկ. 70. Վարդենիկ։ Գործ՝ Ալեք կազմողի, 1541 թ.։

Նկ. 71, 72, Նորատուս։ Գործեր՝ Մելիքսեթ կազմողի, 1541—1595 թթ.։

Նկ. 73. Նոր Բայազետ։ Գործ՝ Մելիքսեթ կազմողի։



Նկ. 74. Նորադուզ։ Գործ՝ Մելիքսեթ կազմողի, 1595 թ.։



Նկ. 75, 76. Լանջաղբյուր։ Գործ՝ Հովաննես կազմողի, 1542—1551 թթ.։

Նկ. 77. Դյագարաս։ Գործ՝ Վարդան կազմողի, 1549 թ.։



Նկ. 78. Գնդեվանք։ Գործ՝ Վարդան կազմողի, 1551 թ.։

Նկ. 79. Բայադեռ: Գործ՝ Սիմեոն կազմողի, 1554 թ.:



Նկ. 80. Նորադուզ: Գործ՝ Քիրամ կազմողի, 1597 թ.:



Նկ. 81. Եղվարդ։ Գործ՝ Քիրամ կազմողի, 1591 թ.։

Նկ. 82. Նորադուզ։ Գործեր՝ Քիրամ կազմողի, 1582 թ.։

Նկ. 83. Արզնի։ Գործ՝ Քիրամ կազմողի, 1599 թ.։



Նկ. 84. Նորադուզ։ Գործեր՝ Քիրամ կազմողի, 1599 թ.։

Նկ. 85. Նորադուզ։ Գործեր՝ Քիրամ կազմողի։



Նկ. 86. Նորադուզ։ Գերեզմանատան ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից։



Նկ. 87. Հին Ջուղա. խաչքար, ձախից՝ բազմավաստակ Արամ Վրույրը

Նկ. 88. Հին Ջուղա. գերեզմանատան մի անկյունը։



Նկ. 89. Հին Ջուղա. գերեզմանատան ընդհանուր տեսքը (Լուսանկ. Արամ Վրույրի, 1912 թ.)։



Նկ. 90. Նոր-Բայազետ։ Գործ՝ Առաքել և Մելիքսեթ կազմող-ների, 1577 թ.։



Նկ. 91. Ջնգեղակոթ։ Գործ՝ Ղուկաս կազմողի, 1606 թ.։



Նկ. 92. Լիճք։ Գործ՝ Ակոբ կազմողի, 1609 թ.։

Նկ. 93. Սևանա կղզի։ Գործ՝ Տրդատ կազմողի, 1653 թ.։



Նկ. 94. Վերին Ղարանլուխ։ Գործ՝ Մելիքսեթ և Պալատան կազմողների, 1665 թ.։



Նկ. 95. Նորատուս։ Գործ՝ Ներսես կազմողի, 1745 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Միջնադարյան ճարտարապետներ . . . 13
Ճարտարապետի կոչման հարցը . . . 14
Վարդապետ բառի նոր ձևի և բովանդակության գործածությունը . . . 18
Վարդպետ=ճարտարապետը մատենագրության մեջ . . . 20
Ճարտարապետների անվան հիշատակության ձևերը արձանագրությունների մեջ . . . 22

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ճարտարապետներ . . . 26

Է դար

1. *Իսրայել Գոռաղձեցի (639)* . . . 26
2. *Յոհան ճարտարապետ (644—651)* . . . 27
3. *Ճարտարապետ Թոդոսակ և նրա օգնականները (VII դ.)* . . . 29

Ժ դար

4. *Մանուել ճարտարապետ (908—921)* . . . 30
5. *Սամեհան ճարտարապետ (985)* . . . 34
6. *Ճարտարապետ Տրդատ (X—XI դ.)* . . . 35
7. *Խաչատուր քարգործ (X դ.)* . . . 38

ԺԲ դար

8. *Հովհաննես (ճարտարապետ) (1152)* . . . 41
9. *Ժամհայր շինող (1187)* . . . 41
10,11. *Մխիթար հյուսն և Հովհաննես (1188—1208)* . . . 43

ԺԳ դար

12. *Զունդիկ ճարտարապետ (1206)* . . . 46
13. *Վեցիկ վարդպետ (1212)* . . . 46
14. *Աղբայրիկ վարդպետ (1213—1232)* . . . 51
15, 16, 17. *Ընձակ, Գազան և Ոլու (1244)* . . . 55
18. *Յօհանէս վարդպետ (1244)* . . . 57
19. *Մինաս վարդպետ (1248)* . . . 57
20. *Անանուն վարդպետ (1259)* . . . 58
21, 22. *Մխիթար և Շնորհավոր աղբար քարգործ (1263—1282)* . . . 60
23. *Սիրանես վարդպետ (1270—1275)* . . . 62
24. *Շահեր վարդպետ (1271)* . . . 75
25. *Ցրեր վարդպետ Կարնո քաղաքացի (1277)* . . . 76
26. *Մխիթար վարդպետ (1277)* . . . 78
27. *Մոմիկ վարդպետ (1282—1321)* . . . 78

28. Դալձագ վարդպետ (XIII դ.) 86
29. Գրիգորիկ վարդպետ (1286—1291) 89
30, 31. Զաքիոս և Գրիգոր (1291) 93
32. Հերհերցի վարդպետ (1296) 93
33. Աշոտ շինող (XIII դ.) 97
34,35. Խաչենիկ Անեցի և Շահեն վարդպետներ (XIII դ.) 97
36. Ովաննէս բարգործ (XIII դ.) 101

ԺԴ դար

37. Վարպետ Բուտ (1301) 101
38. Կիրակոս (1334) 103

ԺԵ դար

39, 40. Մեծոփա վանքի ճարտարապետները (1402—1409) 104
41, 42. Ս. Հակոբա վանքը վերանորոգող ճարտարապետներ (XV դ.) . . 105
43. Ներսամատ վարպետ (1433—1443) 106
44. Յիսայ վարպետ (1499) 107

ԺԷ դար

45. Գրիգոր ուստա (1629) 108
46. Մուսէս ուստա (1634) 108
47. Գրիգոր ուստա (1639) 108
48. Գրիգոր ուստա (1642) 109
49, 50. Դավիթ և Հովհաննես ուստաներ (1644—1667) 109
51. Տիրատուր Մեյմար (1648) 111
52. Սուլեյման ուստա (1650) 111
53. Նավասարդ Ատնչեցի (1651) 111
54—57. Սարգիս ուստա և աշակերտներ (1652) 112
58. Ազիզ վարպետ (1654) 112
59. Շահնազար ուստա (1661) 113
60. Գրիգոր Մեմար (1663) 113
61. Սարգիս ուստա (1664) 113
62, 63. Սահակ Հիզանեցի և Մուրադ ճարտարապետներ (1664—1669) . . 114
64. Գաբրիել ուստա (1675) 114
65. Հայրապետ ուստա (1675) 114
66. Դանիել ուստա (1683) 115
67. Հակոբ (1695) 115
68. Թումա վարպետ (XVII դ.) 115

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Քանդակազարդող վարպետներ 121
Խաչքարերի ծագումը 122
Խաչքարեր կանգնեցնելու նպատակները 129
Խաչքարերի զարգացումը 134
Խաչքարերի հիմնական նկարագիրը 137

Կազմողներ

ԺԱ դար

1. Սարգիս 139

ԺԲ դար

2. Հեռու գծող (1123, 1141) 140
3. Գեորգ Ճոնակ (1144) 140
4. Աստմ գործող (1155) 140

5. Վարդ (1173) . . . 140
6. Արքա կազմող (1184) . . . 140
7, 8. Մխիթար կազմիչ և Ավետիս (1187) . . . 141
9. Թ ա ա ր (1198) . . . 141

ԺԳ դար

10, 11. Տիմոթ և Մխիթար հորինողներ (1213) . . . 141
12. Մարտիրոս կազմող (1213) . . . 141
13. Յովնէս գծող (Յովհաննէս) (1214) . . . 141
14. Աբրեհամ կրոնավոր կազմող (1220) . . . 142
15. Շապուհ գրիչ (1222) . . . 142
16. Դավիթ (1222) . . . 142
17. Եղբայրիկ նկարող, շինող (1222) . . . 142
18. Տէր Հովհաննէս կազմող (1224) . . . 142
19, 20. Աբել և Տէր Ավագ կազմողներ (1243) . . . 143
21. Մխիթարիչ գրիչ և նկարիչ (1244) . . . 143
22. Ղեսատուր կազմող (1254) . . . 143
23. Սարգիս կազմող (1256) . . . 143
24, 25. Պավղոս և Քաղար (1275) . . . 143
26. Վահրամ (1281) . . . 145
27. Վարդան քարգործ (1286) . . . 145
28. Խաչատուր նկարող (1287) . . . 145
29. Պավղոս (1291) . . . 145
30. Սմբատ պատանի (1291) . . . 146
31. Գրիգոր շինող (1297) . . . 146
32, 33. Սարգիս Կարնո քաղաքացի և Յովհաննէս աշակերտ (XIII դ.) . . . 146

ԺԴ դար

34. Սարգիս վարդապետ նկարիչ (1301) . . . 146
35. Հովսէփ նկարիչ (1317) . . . 147
36. Աբլ Հասան (1375) . . . 147
37. Վարդ քահանա նկարող (1387) . . . 147

ԺԵ դար

38. Գորգ քահանա աշխատող (1403) . . . 147
39. Սիմէոն վարպետ, քարգործ (1431, 1466; . . . 147
40. Գրիգոր կազմող (1434) . . . 148
41. Զաքար կազմող (1448) . . . 148
42. Շմավոն եպիսկոպոս կազմող (1451) . . . 148
43. Ավետիք աբեղա (1461) . . . 148
44. Հակոբ հայր (1481) . . . 148
45. Դավիթ (1481) . . . 148

ԺԶ դար

46. Հովհաննես եպիսկոպոս նկարող (1501) . . . 148
47. Տէր Մանվէլ քարգործ (1501) . . . 149
48. Գրիգորէս եպիսկոպոս նկարող (1505) . . . 149
49, 50. Մկրտիչ և Վարդիկ կազմողներ (1515) . . . 149
51. Աղապէկ (1521) . . . 149
52. Դավիթ (1528) . . . 150
53. Ակոբ նկարող (1526—49) . . . 150
54. Մաթէոս երեց կազմող (1531) . . . 151

55, 56. Իգնատիոս և Հովանէս կազմողներ (1535) 152
57. Պախշալիշ կամ Պախշալիչ կազմող (1539) 152
58. Ակոբ նկարող, կազմող (1540—75) 152
59. Ալէք կազմող (1514) 154
60. Մելիքսեթ կազմող (1541—95) 155
61. Յովանէս կազմող (1542—51) 157
62. Վարդան կազմող (1549—83) 157
63. Մխիթար կազմող (1549) 158
64. Անտոն երեց կազմող (1550) 159
65. Սիմէոն կազմող (1551) 159
66. Քիրամ կազմող (1551—1606) 160
67. Անգոն էրէց գծող (1552) 167
68. Սանվէլ կազմող (1552) 167
69. Սարգիս երեց կազմող (1552) 168
70. Ակոբ նկարող (1559) 168
71. Մանվել (կազմող) (1561) 168
72. Հայրապետ կազմող (1571—86) 169
73. Գրիգոր կազմող (1576—91) 169
74. Իսրայէլ վրդ. կազմող (1575) 169
75. Դավիթ նկարող (1571—81) 169
76. Մելքոն կազմող (1571) 169
77. Ղարաաշ կազմող (1573) 169
78. Ներսես նկարող (1576) 170
79, 80. Առաքել և Մելիքսեթ կազմողներ (1577) 179
81. Տրդատ կազմող թերատաշ (1577) 170
82. Վարդան կազմող (1583) 171
83. Հարայպետ (Հայրապետ) կազմող (1527) 171
84. Ոսկէպ կազմող (XVI դ.) 171
85. Սարգիս կազմող (XVI դ.) 171
86. Զուշի կազմող (XVI—XVII դդ.) 171

ԺԷ դար

87. Ղուկաս կազմող (1606) 173
88. Ոսկէպ կազմող (1607) 173
89. Ակոբ նկարող (1609) 174
90. Ավաք ուստա (1609) 174
91. Վելաս կազմող (1613) 174
92. Մելիքսեթ կազմող (1613) 174
93. Վանական երէց կազմող (1621) 175
94. Միրզա կազմող (1628) 175
95. Գրիգոր երեց կազմող (1637) 175
96. Անանիա կազմող (1649) 175
97, 98. Ովանէս և Զաքարիա կազմողներ (1651) 176
99, 100. Յովանէս և Ավանէս կազմողներ (1653) 176
101. Ավանէս կազմող (XVII դ.) 176
102. Տրդատ կազմող (1653) 176
103. Ավանէս կազմող (1657) 177
104. Ավանէս կազմող (1658) 177
105, 106. Բաղտասար և Մելիքսէկ կազմողներ (1658) 178
107. Տէր Կիրակոս կազմող (1662) 178
108, 109. Մելիքսէկ և Պալասան կազմողներ (1665) 178
110. Մելքոն կազմող (1667) 178
111. Ովանէս կազմող (1676) 178
112. Վարդան կազմող (1651—98) 179
113. Սարգիս վարպետ (1686) 179
114. Օհանէս կազմող (1698) 179
115. Գրիգոր կազմող (XVI—XVII դդ.) 179
116. Պողոս նկարող (XVI—XVII դդ.) 179

ԺԸ դար

117. Բաբ կազմող (1703) 180
118. Ավանէս կազմող (1705—1707) 180
119, 120. Հունան և Պաղի կազմողներ (1706) 180
121. Մարգար գրիչ (1713) 180
122. Բարրաս կազմող (1724) 180
123. Ներսես կազմող (1745) 181

Անթվական կազմողներ

124. Մխիթարիչ 181
125. Մուսես քահանա կազմող 181
126. Շնավորիկ բարգործ 181
127. Հովհաննես կազմող 181
128. Գորգ 182
129. Մզդեմ գծող 182
130. Մկրտիչ 182
131. Հայրապետ կազմող 182
132. Սարգիս Գանձակեցի կազմող 182
133. Աստվածատուր գործող 182
134. Տէր Ակոբ կազմող 183
135. Սահակ կազմող 183
136. Տրդատ կազմող 183
137. Աստվածատուր կազմող 183
138. Գրիգոր կազմող 183
139. Պողոս նկարող 183

«Հավելված», կազմողների անունները կրող արձանագրություններ 187

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Վիմագիր գրիչներ 198
Ցանկ վիմական արձանագրությունների փորագրող գրիչների 199
Վիմագրության տեխնիկան և գրչի վարպետության խնդիրը 206

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Քարտաշ, որմնագիր և այլ վարպետներ 209
Վարպետների նշանները 211
Շինարարության մի քանի կազմակերպչական հարցեր 214
Լուսանկարներ 221

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՍԵԴՐԱԿ ԳԵՎՈՐԳԻ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

СЕДРАК ГЕВОРКОВИЧ БАРХУДАРЯН

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ ԵՎ ՔԱՐԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Տպագրվում է
Հայկական ՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի
գիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ Մ. Գ. ՄԱԶՄԱՆՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
Լուսանկարները՝ Ա. ՎՐՈՒՅՐԻ
Նկարչական ձևավորումը՝ Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ
Տեխն. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎՖ 07234 Պատվեր 12 Հրատ. 2078 ԽՀԽ 731 Տիրաժ 1500

Հանձնված է արտադրության 14/I 1963 թ., ստորագրված է տպագրության 29/XI 1963 թ.։
Տպագր. 24 մամ., հրատ. 24, 34 մամ., թուղթ 60×92 1/8
Գինը կազմով 1 ռ. 76 կ.։

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության 24։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0066956

ЦЕНА
А III
А2034